

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

ԵՐԹՆԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

ԹՈՐՈՒԹՅՈՒ
2014

Ա	Ժ	Ճ	Խ
Բ	Ի	Մ	Ս
Գ	Լ	Յ	Վ
Դ	Խ	Ն	Տ
Ե	Ծ	Շ	Ր
Ջ	Կ	Ո	Յ
Է	Հ	Չ	Ի
Ը	Ձ	Պ	Փ
Թ	Ղ	Ջ	Բ
	Օ	Ֆ	

ՁՕՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ,
ԵՒ ՀԱՅ ԱԶԳԻ ՅԱԽԵՐԺՈՒԹԵԱՆ

Krikor Hotoyan

YOTNERORT HANKERVAN

Printed and bound in Canada by:

THE RELIABLE PRINTER

Zohrab Sarkissian
Unit 6 - 366 Bloor St. East,
Toronto, ON M4W 1H4
Canada
T: 416 792-9394
F: 416 733- 9001
Email: info@thereliableprinter.com
www.thereliableprinter.com

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

**ԵՕԹՆԵՐՈՐԴ
ՀԱՆԳՐՈՒՄՆ**

ԹՈՐՈՆԹՕ
2014



Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Նայրապետ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս
Գրիգոր Նորոյեանը կը պարուէ
Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանով
1 Նոկտեմբեր 2005-ին



Այս հապորդին մեկենասությունը
սիրով սրանձնեցին աղջիկս՝
Անի Նոթոյեան-Ժոլի
ամուսինը՝ Մայքըլ Ժոլի
և թոռներս՝
Քրիստափորը և Սյրեփան-Արմենը:

Նազար շնորհակալություն իրենց ազգային և
ծնողասէր ոգիին:

ԳՐԻԳՈՐ ՆՈԹՈՅԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

- Սրտագին շնորհակալություն թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բազմաշրնորի եւ ժրաջան հովիւ, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին, որ իմ պատմուածքներուն մեծամասնութիւնը հրատարակեց եկեղեցւոյ «Շողակաթ» ամսագրին մէջ եւ յառաջաբանով արժէքաւորեց հեղինակը եւ գիրքերուն բովանդակութիւնը:
- Իմ հրատարակած ընդհանրապէս բոլոր գիրքերու կողքերը արուեստագէտի տաղանդով գեղեցկացուցած իմ սիրելի եւ անկեղծ ընկերոջս Յակոբ ճանպագեանին:
- Սոյն գիրքիս տպագրութիւնը խղճով, ընկերական եւ բարեկամական մօտեցումով եւ ճաշակով կատարող ընկեր Զօհրապ Սարգիսեանին:
- Սոյն գիրքիս գրաշարունը եւ էջադրունը կատարող համեստ եւ խոնարհ հայորդի Պր. Եփրեմ Թորքեանին:
- Իմ հրատարակած եօթը գիրքերուս վեցին հովանաւոր (մեկեւեմաս) դուստրիս եւ ընտանիքին՝ Անի Հոթոյեան-Ժուլիին, իր ամուսնոյն՝ Մայքըլ Ժուլիին եւ թոռներուս՝ Քրիստափորին եւ Ստեփան-Արմէնին:
- Գրական աշխատանքներս միշտ քաջալերող եւ գնահատող սիրելի կնոջս՝ Շաքէին եւ անդրանիկ զաւկիս՝ Անդրանիկին:
- Գրական աշխատանքներս ընդհանրապէս անհատոյց մեքենագրող Տիկին Սիւզի Գալթակեանին:
- Հրատարակած գիրքերս եւ յօդուածներս գնահատող եւ տարածող արժանաւոր եկեղեցական, գիրքերու հեղինակ՝ Արժանապատիւ Տէր Արմէն Աւագ Քինյ. Իշխանեանին:
- «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքիս շնորհահանդէսին ներկայացնող գրող-պատմաբան Պր. Յակոբ Ալթունեանին:
- Սփիւռքէն.– Պէյրուսի «Դիտակ» ամսագրի խմբագրա-

պետ Տօթթ. Ալմ Ռազուպեանին, բանաստեղծ Յակոբ Մանուկեանին, Պոլսոյ «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռուպեր Ռատտեճեանին, Հալէպի «Արեւելք» եւ Պոսթընի «Հայրենիք» օրաթերթի եւ շաբաթաթերթի խմբագիր հանգուցեալներ Մինաս Թէօլէօլեանին եւ Գէորգ Տօնապետեանին, Լոս Անճելըսի «Նոր Կեանք»ի խմբագրապետ եւ հրատարակիչ Գրիգոր Շէնեանին, Սոնթօրէալի Առաջնորդարանի «Լոյս» ամսագրի խմբագիր գրող Բարզէն Թոփճեանին, Հալէպի «Գանձասար» թերթի խմբագրին եւ մանաւանդ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Շահան Սրբ. Եպիսկոպոս Սարգիսեանին, «Ազգակ»ի խմբագիրներուն, եւ այլ հրատարակութիւններու պատասխանատուներուն, որոնք հրատարակեցին իմ գրութիւններս, նաեւ «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագիրներուն, գրող եւ հեղինակ Սիմոն Սիմոնեանին եւ Գէորգ Աճէմեանին, Լոս Անճելըսէն՝ Արմէն Տոնոյեանին, Սամուէլ Սկրտիչեանին, Վանգուվըրէն՝ գրող-գիտնական Կարպիս Արմէնին:

Հայաստանէն.— Գրողներու Սիութեան թերթին՝ «Գրական Թերթ»ին, «Նոր Դար» ամսագրի խմբագիր Աբգար Ափինեանին, «Հայոց Աշխարհ» թերթին, պատմաբան-բանաստեղծ Սասուն Գրիգորեանին, հանգուցեալ Լեւոն Անանեանին, բանաստեղծներ՝ Գեներալ Մայր Սամուէլ Սաֆարեանին, Դոկտ. Փրոֆ. բանաստեղծ Թաթուլ Մանասէրեանին, Փրոֆ. Գնդապետ Արմենակ Մանուկեանին, բանաստեղծներ Յովիկ Հովէյեանին, Մետաքսէին եւ իր դստեր՝ Լիլիթին, Ռուզան Ասատուրեանին, բանաստեղծ եւ արձակագիր Հրաչէայ Մաթեւոսեանին, եւ բոլոր անոնց, որոնք զիրքերս գրախօսեցին, եւ հաղորդակցութեան զանազան միջոցներով զնահատեցին, եւ բոլոր անոնց, որոնք բանաստեղծութիւններս եղանակաւորեցին եւ տարածեցին:

• Վերջին գլխաւոր շնորհակալութիւններս մանաւանդ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանին, որուն Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ 12 տարի հոգեւոր հովիւի պաշտօնի ստանձման ընթացքին միշտ եղած ենք գործակից եւ հոգեկից, արժանանալով իր քաջալերութեան եւ զնահատանքին:

ՆԵՂԻՆԱԿԻՆ ԿՈՂՄԷ

Փառք կու տամ Աստուծոյ եւ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին, որ ինծի առողջութիւն եւ կեանք ընծայեց, որպէսզի Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Կաթողիկոսին 2014 տարին «Տարեցներու Տարի» յայտարարելուն առիթով, որպէս շուրջ 86 տարեկան տարեց մը, կարենամ հրատարակել եօթներորդ գիրքս՝ «Եօթներորդ Հանգրուան» խորագրով, որ կը բաղկանայ բարոյալից պատմուածքներէ, ազգային հարցեր շօշափող յօդուածներէ, հայ կարգ մը բանաստեղծներու կեանքն ու գրականութիւնը ցուցանող ուսումնասիրութիւններէ, բանաստեղծութիւններէ, մահագրութիւններէ եւ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքիս հրատարակութեան առթիւ ստացուած վկայութիւններէ, գնահատագիրներէ, նամակներէ, ինչպէս նաեւ զանազան թերթերու մէջ հրատարակուած գրախօսականներէ եւ այլ գրութիւններէ:

Թէեւ մանկութիւն չունենալով պատանեկան տարիքէ սկսեալ, սիրած եմ հետելիլ հայ գրականութեան եւ այդ տարիքին որպէս սիրող գրած եմ բանաստեղծութիւններ, պատմուածքներ, յօդուածներ եւ թղթակցութիւններ, որոնցմէ մաս մը այդ օրերուն պահած եմ որպէս յիշատակ, եւ երբեք մտքէս չէր անցած հատորով հրատարակել գանոնք, յատկապէս նիւթական միջոցներու չգոյութեան պատճառով: Սակայն, միշտ, այդ տարիներուն, երբ որպէս գրաշար կ'աշխատէի Հալէպի «Սեւան», «Արեւելք», «Նախիրի», «Սուրիա» եւ «Շիրագ» տպարաններուն մէջ, հրատարակուած բանաստեղծութիւններս կ'արտասանուէին բեմերէն՝ բազմաթիւ գաղութներու մէջ կազմակերպուած ազգային ձեռնարկներուն, իսկ յօդուածներս՝ կը տպուէին օրաթերթերու, շաբաթաթերթերու, պարբերաթերթերու՝ Սփիւռքի եւ Հայաստանի մամուլին մէջ: Գնահատանք եւ քաջալերութիւն միշտ կար, սակայն՝ աղքատին խրատողներ շատ կ'ըլլան, բայց նիւթական տուողներ՝ քիչ:

Որպես ուսուցիչ, գրաշար, տպագրիչ, գրող, յօդուածագիր, անուսնանալու եւ ընտանիք կազմելու դժուարութիւն ունէի: Այդ աշխատանքներէն որոշեցի հեռանալ եւ Ֆրանսայէն վկայուելով որպէս ելեկտրագէտ ասպարէզ մտայ, սակայն չկրցայ հեռանալ հայ գրականութենէն: Գանատա հաստատուելով, շնորհիւ ընկերներուս, ընտանիքիս անդամներուն եւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հովիւներուն քաջալերութեան եւ օժանդակութեան հրատարակեցի այլազան բովանդակութեամբ եօթը գիրքեր, որոնցմէ ոմանք երկրորդական եւ երրորդական տպագրութեան արժանացած են եւ կը փնտրուին:

Տարիքս 87-ի կը մօտենայ, փառք քեզ Աստուած, պիտի շարունակեմ գրել մինչեւ Աստուծոյ կողմէ ինձի շնորհուած կեանքը:



ԵՕԹՆԵՐՈՐԴ ՆԱՆԳՐՈՒՄՆԸ

Եօթներորդ անգամ ըլլալով կ'ողջունուինք Գրիգոր Հոթոյեանին կողմէ որպէս բարի, ազնիւ, խաղաղասէր, հայրենասէր, գրասէր ու մանաւանդ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հաւատարիմ զաւակ:

Գրիգոր Հոթոյեանը մեզի կը յիշեցնէ անցեալ դարու կէսերուն ապրած ա'յն հերոսները մեր կեանքին, որոնք կը բնութագրուէին որպէս խոնարհներ:

Գրիգոր Հոթոյեանը իր պարզունակ բնութեամբ, ազգային եւ եկեղեցական իր բարի եւ հոգիով ըմբռնուած հասկացողութեամբ, հաճելի ներկայութիւն մըն է մեր կեանքին մէջ, որովհետեւ բարկութեան մէջ անգամ քաղցրութիւն ունի, բարկանալ չգիտնալուն համար:

Գրիգոր Հոթոյեանը իր պարզունակութեամբ յարգանք պարտադրող բարի մարդ է. առանց յետին հաշիւներու եւ նպատակներու, առանց ուրիշը թերագնահատելու, միշտ բարին տեսնելու, դրականը արժեւորելու եւ մեր կեանքին մէջ դրական երեւոյթներով հպարտացող ազնիւ հոգի է:

Թէ մեր կեանքին ցաւերը զինք կը նեղե՞ն. անկասկա՛ծ. որովհետեւ եթէ այդ պահուն իր աչքերուն նայիք, հոն ալեկոծ ծով կայ:

Թէ ազգին դժբախտութիւնները, ցաւերը զինք կը վշտացընե՞ն. անկասկա՛ծ. այդ պահուն նայեցէք իր դէմքին, ճարահատ եղնիկի մը ոստոստումը ունի:



Թէ այսօրուան մեր կեանքի վերիվայրումները զինք կը խեղազարե՞ն. անտարակո՛յս. այդ պահուն նայեցէք իր ձեռքերուն, պիտի տեսնէք բացուած երկու ամբի, որոնց մէջ միայն մէկ սիրտ կայ: Սիրտ մը, որ հայութեան սիրտն է, սիրտ մը, որուն երակներէն կ'անցնի մեր դարաւոր սուրբերու, վկաներու, նահատակներու եւ հերոսներու արիւնը:

Պարոն Հոթոյեան իր այս հատորով մեզի կը ներկայանայ դարձեալ բարոյական արժէքներով, քրիստոնէական սկզբունքով եւ ազգային արժանապատուութեամբ գեղուն սրտով մը, որովհետեւ, Գրիգոր Հոթոյեան, կը նշանակէ՝ բարոյական արժէքներով եւ սկզբունքներով առլցուն խորհուրդ:

Խորհուրդ է Պարոն Հոթոյեանը իր նուիրումի զգացումներով, որոնց գագաթը ազգը, հայրենիքն ու մայրենի Եկեղեցին են: Իր շուրջ 85 եւ աւելի տարիներու կեանքի ճանապարհորդութիւնը պայքար մըն է ի խնդիր բարոյական ճշմարտութիւններու:

Ճանապարհ մը, որուն եզրին շողացող ճաճանչները իր երկնաբեր լոյսին պատճառ կը դառնան, որպէսզի մենք՝ զինք ճանչցողներս, յարգենք ու մեծարենք զայն, որպէս կենդանի յուշարձան, անցեալէն եկող ու անցեալի յուշերը մեզի բերող:

Հոթոյեանին հերոսները չմեռնող հերոսներ են: Անոնք չեն մեռնիր, որովհետեւ Հոթոյեան չ'ուզեր որ անոնք մեռնին, ընդհակառակը, Հոթոյեանին համար անցեալը եւ անցեալի պարունակին մէջ ապրող մեր ժողովուրդի հերոսները մնալուն սրբութիւններն են մեր կեանքին:

Գրիգոր Հոթոյեանը գրագէտ չէ:

Գրիգոր Հոթոյեանը հպարտ սրտով լեցուն աշակերտն է Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթեւ Հայրապետին, Սուրբ Նարեկացիին, Սուրբ Ծնորհալիին, ի՛ր իսկ բառերով Սուրբ Զարեհ Սքանչելիին եւ բոլոր անոնց, որոնք պայքարեցան ի խնդիր հայ ժողովուրդի յաւիտենականութեան եւ գոյապահպանման:

Գրիգոր Հոթոյեան գրագէտ չէ:

Գրիգոր Հոթոյեանը հայ դպրութեան եւ գրագիտութեան մեծ հերոս է, որովհետեւ իրեն համար հայ մնալու, հայօրէն ապրելու եւ հայօրէն մեռնելու հպարտութիւնը հայ գրականութեան եւ գրչութեան զգլխիչ սէրն է:

Գրիգոր Հոթոյեանը գրագէտ ըլլալու ալ պէտք չունէր եւ չունի, որովհետեւ իրեն համար գրելը ո՛չ ջանք է եւ ո՛չ ճիգ, այլ՝

մղում, ճշմարտութեան փնտռտուք, յաւիտենականութեան թափանցում, եւ այս բոլորէն ետք ի՞նչ փոյթ թէ ծիտերն հատիկները կ'աւարեն, տեղը Աստուած պիտի մարգարիտ սերմանէ:

Մարգարիտը մեր կեանքին Գրիգոր Հոթոյեանն է: Աստուած ի՛նք սերմանեց Գրիգոր Հոթոյեանը, որպէսզի մանաւանդ Թորոնթահայ կեանքի հայելին իրմով շողարձակուի հայոց պատմութեան էջերուն մէջ:

Հետեւաբար, համբուրելով մեր սիրելի Հոթոյեանին ձեռքերը, կը շնորհաւորեմ պատուական հերոսը մեր համայնքին, անոր մաղթելով առողջ կեանք եւ երջանիկ ծերութեան օրեր:

Սիրելի ընթերցողներ.

Կարգացէ՛ք այս գիրքը, հոն դուք ձեզ պիտի տեսնէք ձեր պատկերը, ձեր նմանատիպը, ձեր հոգին, ձեր միտքն ու զգացումը:

Կարգացէ՛ք այս գիրքը, որովհետեւ այս գիրքը արդիւնք է ալեկոծ սրտի մը խաղաղ նաւարկութեան աւարտին:

Կարգացէ՛ք այս գիրքը, որովհետեւ այս գիրքը մեր անցեալի վերջին մոհիկաններու բուրմունքը կը բերէ մեզի, մոհիկաններ, որոնք մանկութիւն չունեցան, երազային Հալէպի թաղերուն մէջ մեծցան աղքատիկ, բայց միշտ հայու արժանապատուութեամբ:

Կարգացէ՛ք այս գիրքը, որովհետեւ հաճոյք է զայն կարգաւը:

Միշտ սիրով եւ աղօթարար՝

ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԲԱՐԵԳՈՐԾ ՊԱՅՏԱՐԸ

Յիսուս էջի վրայ նստած Երուսաղէմ կ'երթար:

Ճամբորդութիւնը փառաւոր էր, բայց էջը կը կաղար, որովհետեւ խեղճ անասունը քարոտ տեղերէն անցնելու ժամանակ մէկ ոտքին պայտը կորսնցուցած էր:

Կացութեան տեղեակ ըլլալով, Յիսուս շատ շփոթուած էր, տեսնելով որ գրաստը կաղալով կը քալէր եւ տեղ-տեղ կը սպառնար զինք ցած նետելու:

Բայց յանկարծ, ժողովուրդին մէջէն պայտար մը դուրս գալով մօտեցաւ Յիսուսին եւ արագութեամբ կռացաւ, բարձրացուց գրաստին ցաւող, անպայտ ոտքը եւ մի քանի վայրկեանի մէջ մեծ վարպետութեամբ պայտեց ոտքը: Քրիստոս ուրախացաւ եւ ժպտաց ուրախութեամբ եւ ըսաւ պայտարին.

— Յարգելի պայտար, այս բարութեանդ համար խնդրէ ինչ որ կամենաս եւ ցանկութիւնդ կը կատարուի:

Կ'ըսուի, որ Յիսուսին աներեւութապէս ընկերակցող հրեշտակներէն մէկը պայտարի ականջին մօտենալով կը փսփսայ, ըսելով, որ երկնային արքայութիւն խնդրէ: Սակայն, մարդը իտիալիստ մէկը չէր. բացասական կերպով գլուխը շարժեց եւ Քրիստոսին ըսաւ.

— Տէ՛ր, ես պայտար մըն եմ, տոպրակ մը եւ աթոռ մը ունիմ եւ տանս կողքին ընկուզենի մը: Կը ցանկամ, որ աթոռիս վրայ նստողը, տոպրակիս մէջ մտնողը եւ ընկուզենիին վրայ ելլողը չկարողանան ելլել, դուրս գալ եւ իջնել, մինչեւ որ անունովդ չհրամայեմ անոնց:

Յիսուս ժպտաց, օրհնեց պայտարը եւ ըսաւ.

— Թող կատարուի քու ցանկութիւնդ:

*
*
*

Բարեգործ պայտարը երկար տարիներ ապրեցաւ իր խրճիթին մէջ՝ ընկուզենիի ստուերին տակ, հանգիստ ու ապահով. թէեւ մինակ էր, ունեցածն ալ աթոռ մը եւ տոպրակ մը ու գործիքներ, բայց եկամուտը լաւ էր եւ կ'ապրէր երջանիկ կեանք մը:

Այդպիսի ուրախ օրերէն մէկը երբ ան իր խրճիթին դրան մօտ նստած երեկոյեան զեփիււրը կը վայելէր, երբ տեսաւ հեռուէն իրեն մօտեցող Հոգէառ հրեշտակը, սիրտը թունդ ելաւ.

սկսաւ դողալ եւ կը մտածէր թէ ինչպէ՞ս կրնայ ազատուիլ եկող անկոչ հիւրէն:

Բայց անկոչ հրեշտակը մօտեցաւ, ողջունեց, ժպտաց եւ ըսաւ.

— Դէ՛հ, պայտա՛ր, բաւական ապրեցար, ելիր, վերջին աղօթքդ կատարէ, որովհետեւ հոգիդ տանելու եկած եմ:

— Օ՛հ, իմ հրեշտա՛կ, — հառաչեց պայտարը, — միթէ՞ այդպէս շուտով հարկ է որ կեանքս թողում: Ես դեռ ապրելու ցանկութիւն ունիմ: Նայի՛ր չորս կողմը, ինչպէս լաւ է այս բոլորը՝ բնութիւնն ու հովը, լեռներն ու դաշտերը...:

— Այո, խօսք չունիմ, — ըսաւ հրեշտակը, — բայց ինչ կրնամ ընել պայտար, ճակատագիրդ այդ է, պէտք է հոգիդ տաս:

Պայտարը տեսաւ, որ ո՛չ խնդրանքը, ո՛չ ալ սրտաբուխ բանաստեղծական խօսքերը ոեւէ ազդեցողութիւն չգործեցին հրեշտակին վրայ, պահ մը տխուր մտածեց, յետոյ մէկէ՛ն մտաբերեց օգտուիլ Յիսուսի տուած շնորհներէն:

— Լաւ ուրեմն, հրեշտա՛կ, — ըսաւ պայտարը քաղաքավարութեամբ, — հրամմէ՛, նստի՛ր այս աթոռին վրայ, մինչեւ ես աղօթքս կատարեմ:

Հրեշտակը յոգնած էր, նստաւ աթոռին վրայ:

Հրեշտակը նստածին պէս զգաց, որ բռնուած էր: Ճիգ գործեց ելլելու, գօրաւոր շարժումներ ըրաւ, բայց զարմանքով տեսաւ, որ ջանքերն ի գուր էին եւ ինք լաւապէս բռնուած էր:

— Այս ի՞նչ է, պայտար, ի սէր Աստուծոյ, — գոչեց սարսափած հրեշտակը, — ես դամուած եմ կարծես, ազատէ՛ զիս...:

— Էհէ՛, պարո՛ն հրեշտակ, ազատե՞մ քեզ, — ծիծաղեցաւ պայտարը, — ի՞նչ ընեմ, որ այդպէս եղաւ, ճակատագիրդ այդ էր...:

Հրեշտակը աղաչեց, խնդրեց, պաղատեցաւ եւ վերջիվերջոյ, հոգին պայտարին ձգելու գնով ազատուեցաւ ու սոսկումով շտապեց երկինք:

Պայտարը ազատուած էր: Ազատ շունչ քաշեց եւ օրհնեց այն վայրկեանը, երբ մտածած էր Յիսուսի էջին ոտքը պայտեկ:

*
*
*

Մինչ այդ, հոգէառ հրեշտակը ճանապարհին խնդիրը մեծցնելով ամէնքին պատմեց պայտարին ըրածը եւ երկինք հասած, գունաթափ կեցաւ Աստուծոյ առաջ:

Աստուած խնդաց, խիստ զարմացաւ, բայց իրաւունք չտրուաւ ուժ գործադրելու:

— Եթէ կարող էք, — ըսաւ Աստուած, — խորամանկութեամբ հոգին առէք, գործ դնելով հնարքներ, բայց երբե՛ք՝ ուժ:

Եւ այն ժամանակ դժոխքի չար ոգիներու խումբ մը, խորամանկ խումբ մը, հրաման խնդրեց երթալ պայտարին հոգին առնելու, պայմանաւ, որ այդ հոգին դժոխք տարուէր:

— Շատ լաւ, — հրամայեց Աստուած, — եթէ կարողացաք առանց ուժի անոր հոգին հանել, թող ձեր բաժինը ըլլայ:

Հոգէառ հրեշտակին մեկնելէն շրջան մը ետք, պայտարը տեսաւ, որ խումբ մը սեւ, այլանդակ ոգիներ, իրարու գլուխներուն վրայէն ցատքելով դէպի իր կողմը կու գային:

— Հօ՛, հօ՛... — մտածեց ան, — այժմ դեւերը կու գան, Յիսուսի պայտարը թող ես չըլլամ, եթէ հրեշտակին խաբելէն յետոյ, ասոնց գլխուն ալ խաղ մը չխաղամ:

Եւ պայտարը կեղծաւոր, խոնարհ, աղերսական կերպարանք ստանալով շտապեց դիմաւորել սեւ ոգիները:

— Ա՛յ դուն անամօթ, աներե՛ս պայտար, — հեռուէն խօսեցաւ խմբապետը, — ինչպէ՞ս կը համարձակիս հոգիդ ամուր բռնել եւ հոգէառ հրեշտակը խաբել... դէհ, այժմ Աստուծմէ հրաման է, որ այդ խորամանկ հոգիդ մեր ձեռքը յանձնես...: Տղանե՛ր, — դարձաւ ան իր հետեւորդներուն, — հեռո՛ւ կեցէք այդ աթոռէն եւ տեսնենք ինչպէ՛ս իր հոգին չի տար:

Այդ ճառէն յետոյ, սեւ ոգիները խրճիթ լեցուեցան, պայտարը շրջապատեցին, ճիչ ու աղմուկով պայտարին հոգին պահանջեցին:

Պայտարը թէեւ սկիզբը շատ վախցաւ, բայց երբ դեւերու ճիչը երկար տեւեց, սրտապնդուեցաւ ու գոչեց.

— Քիչ մը ցա՛ծ խօսեցէք, պարո՛ն դժոխք, ականջս խլացաւ...: Ի՞նչ է ձեր ըսածը, հոգի՞ս կ'ուզէք: Շատ լաւ, խօսք չունիմ, սակայն դուք ինչո՞վ կարող էք հաստատել որ Աստուծոյ կողմէ ուղարկուած եւ ոչ ինքնագլուխ եկողներ էք:

— Ասոր նայեցէք, — աղաղակեց մէկը, — կը համարձակուի կասկածիլ, կ'ուզէ մեզ ալ խաբել:

— Բոլորովին ո՛չ, — ըսաւ պայտարը, — եթէ դուք հաստատէք, որ Աստուած է ձեզ ղրկած, հրամայեցէ՛ք հոգիս ձեզի տամ:

— Ինչպէ՞ս հաստատենք, անմի՛տ, — հարցուց խմբապետը, — երթանք քեզի վկայակա՞ն բերենք:

— Բայց ո՛չ, շատ հեշտովթեամբ կրնաք հաստատել. ես տոպրակ մը ունիմ, ահա տեսէ՛ք, եթէ բոլորդ կարողանաք փոքրանալ, առանց ձեռք, ոտք, կամ գլուխ դուրս ձգելու տեղաւորուիք տոպրակին մէջ, այդ ինծի համար ապացոյց կ'ըլլայ, որ Աստուած ձեզ զրկած է, ապա թէ ոչ՝ կորսուեցէ՛ք զացէք եւ Աստուծոյ անունը թող ոչնչացնէ ձեզ, — ըսաւ պայտարը, ձեռքերը մէջքին դրաւ եւ հպարտօրէն սպասեց:

— Տղաք, այս մարդը տխմար մըն է, — ճշաց խմբապետը, — ի՞նչ կայ աւելի դիւրին մեզի համար, քան՝ փոքրանալը: Մենք չե՞նք միթէ, որ տասնեակներով կը տեղաւորուինք մարդոց սրտերուն մէջ եւ կ'ապրինք այնտեղ...: Դէ՛հ, եկէք այս տխմարին ցոյց տանք մեր ուժը:

Ու մտաւ տոպրակը: Միւսներն ալ հետեւեցան անոր: Այլեւս ո՛չ մէկ ձեռք, ոտք կամ գլուխ դուրս չմնաց:

— Հը՞, տեսա՞ր, ձայնեց խմբապետը տոպրակին մէջէն:

— Տեսայ, — քրքջաց պայտարը:

Յետոյ մեծ մուրճն առաւ եւ փառաւոր կերպով սկսաւ ջարդել անոնց կողերը:

Դեւերը ճշացին, ճիգ թափեցին դուրս ելլելու տոպրակէն, բայց իզուր, բռնուած էին եւ լաւ բռնուած:

Աղաչեցին, լացին, հառաչեցին եւ խնդրեցին, բայց պայտարը այնքա՛ն ծեծեց զանոնք, մինչեւ որ թեւերը յոգնեցան:

— Զգէ՛ մեզ, — կը գոչէին դեւերը, — ձգէ՛ որ երթանք, հոգիդ քեզի թող մնայ, չենք ուզեր այդ անիծած հոգիդ, տանինք որ դժոխքը տակնուվրա՞յ ընէ...:

Այն ժամանակ, պայտարը յանուն Յիսուսի արձակեց զանոնք եւ դեւերը լեղապատառ, ճիչով եւ աղմուկով, այնպէ՛ս շուտով կծիկը դրին, որ պայտարի քրքիջն անգամ չլսեցին:

Պայտարը ազատուած էր այս երկրորդ փորձանքէն ալ: Ազատ շունչ քաշեց եւ նորէն օրհնեց այն վայրկեանը, երբ մտածած էր Յիսուսի էջը պայտել:

Եւ երկար ատեն ո՛չ երկնքի եւ ո՛չ ալ դժոխքի պատգամաւորներէն մէկը սիրտ առաւ երրորդ փորձ կատարելու եւ պայտարին հոգին առնելու գալ:

Սակայն, օր մը, դժոխքի ամէնախորամանկ դեւ մը, լաւ խորհելէ յետոյ, հրաման խնդրեց Աստուծմէ փորձ մը եւս ընել եւ պայտարին հոգին առնելու երթալ:

Հրամանը ստացաւ: Կեղծութեան դիմեց, հրեշտակի կերպարանք առաւ եւ իջաւ պայտարին մօտ:

Պայտարը հասկցաւ, որ այս անգամ շատ խորամանկ եւ յանդուգն դեւի մը հետ գործ ունի, որովհետեւ եկուորը ո՛չ աթոռին կը մօտենար, ո՛չ ալ տոպրակին եւ ո՛չ ալ խրճիթէն ներս կ'ուզէր մտնել:

— Հոգիդ տուր, — կը կրկնէր ան յամառութեամբ եւ մնացած էր դուրսը կեցած:

Պայտարը հրաւիրեց հոգեառը նստելու, խրճիթ մտնելու, բայց դեւը ժպտալով գլուխը թօթուեց.

— Ո՛չ, — ըսաւ դեւը, — զիս չես կրնար խաբել. հոգիդ տուր եւ վերջակէտ դնենք բոլոր խորամանկութիւններուդ:

Պայտարը քիչ մը մտածեց, յետոյ ցոյց տալով, որ այլեւս ճար չունի, ճանճրացածի եւ յուսահատածի նման ըսաւ.

— Այլ ինչ ընեմ, պարո՛ն հրեշտակ, քեզ խաբել կարելի չէ, հոգիս առ տար: Բայց թոյլ տուր ինծի վերջին անգամ մը աղօթել. յետոյ, գիտե՞ս, ես շատ վախկոտ եմ, թոյլ տուր ինծի ծունկի գալ այս ընկուզենիին տակ եւ երբ ես վերջին խօսքս ալ ըսեմ, ելիր ծառին վրայ եւ այնտեղէն հոգիս առ ու տար:

Ու սկսաւ այնպէս լալ ու հեկեկալ, որ խորամանկ դեւը ուրախացաւ, թէ յաղթած է: Ելաւ ընկուզենիին վրան, նստեցաւ եւ սպասեց:

Բայց հագիւ թէ նստած էր, զգաց, որ խաբուած էր: Որքան աշխատեցաւ ծառէն վար իջնել, անկարելի եղաւ:

Չաղաչեց այլեւս, ծուեցաւ դէպի պայտարը եւ ըսաւ.

— Զիս խաբեցիր, պայտա՛ր, հոգիդ քեզի թող մնայ, միեւնոյնն է, դուն զիս ընդմիշտ ոչնչացուցիր, որովհետեւ իմ կեանքիս ամբողջ տեւողութեան երբեք չէի խաբուեր այսպէս: Թող տուր, որ երթամ:

Ահա այդպէս... հպարտացաւ պայտարը: Յանուն Քրիստոսի գնա՛ եւ պատմէ՛ ընկերներուդ, որ հեշտ բան չէ Քրիստոսի պայտարին հոգին հանելը...:

Եւ ոգին յուսահատ ելաւ եւ կաղնիկաղ հեռացաւ:

Իսկ պայտարը հպարտ, այլեւս ապահով կեանքը սկսաւ վայելել եւ բոլոր հոգեառներու վրայ ծիծաղիլ...:

ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

Հին դարերէն ի վեր, աշխարհի բոլոր երկիրներու մէջ գոյութիւն ունեցած են մուրացկաններ, որոնք կը բաժնուին զանազան խումբերու: Գոյութիւն ունին եւ ունեցած են մուրացկաններ, որոնք արդարացուցիչ պատճառներով, աշխատելու ուժ եւ կարողութիւն չունենալով, եկամուտի ունէ աղբիւր չունենալով, որպէսզի իր եւ իր ընտանիքին ապրուստը ապահովելու համար ստիպուած են դիմելու մուրացկանութեան, քաղաքի եւ գիւղերու մարդաշատ կեդրոններու մէջ գտնուող անձերու եւ անցորդներու դիմելով, տրտմագին աղաչանքով, նիւթական օգնութիւն խնդրելով եւ աղօթելով ու շնորհակալութիւն յայտնելով նուիրատու անձերուն, բայց երբեմն, անցորդներէն կարգ մը անխիղճներ, ունէ ողորմութիւն չընելէ զատ, կը յանդգնէին խայտառակել այդ խեղճ եւ իրական մուրացկաններուն, ըսելով, որ փոխանակ մուրացկանութիւն ընելու, երթան պարկեշտօրէն աշխատին եւ իրենց ապրուստը ճարեն, առանց գիտնալու անոնց մուրացիկ ըլլալու արդարացուցիչ եւ իրական պատճառները:

Իսկ կան մուրացիկներ, որոնք անդամակցելով մուրացկանութիւն ընող ընկերակցութեան մը, մասնագէտ մուրացկաններ կը դառնան, իրենք զիրենք կոյր, ոտքէ եւ թեւէ զուրկ ներկայացնելով, քաղաքի կարեւոր կեդրոնները շրջելով կը դիմէին մարդոց, խնդրելով խղճալ իրենց խղճալի վիճակին եւ օգնել իրենց: Այս մարդիկը այր, կին եւ երեխայ, միշտ հագուած կ'ըլլային հնամաշ հագուստներ եւ կօշիկներ, որպէսզի մարդիկ կօշիկներ եւ հագուստներ նուիրէին իրենց:

Այսպիսի մուրացկաններ, արհեստավարժ մուրացկաններ, երեկոյեան, իրենց հաւաքած դրամները կը փոխանցէին խումբը կազմակերպող արհեստապետին, անկէ ստանալով իր հաւաքած դրամին հարիւրէ 10-ը:

Շատ դժուար էր ճանչնալ իրական, աղքատ, եւ աշխատելու անկարող մուրացկանները եւ արհեստավարժ մուրացկանները, եւ բարի մարդիկ, առանց գիտնալու մուրացիկին կեանքին եւ անցեալին իրականութիւնը, բարիք գործելու գիտակցութեամբ կ'օգնէին այս տեսակաւոր մուրացկաններուն, հետեւելով աւետարանական «Լաւ է տալը, քան՝ առնելը» խօսքին:

Սակայն, գոյութիւն ունին կարգ մը մուրացկան-աղքատ-

ներ, որոնք սովորութիւն ըրած են ամէն շարաթօր մը այցելելու բարեսէր եւ հաւատացեալ քրիստոնեայ տուն մը կամ խանութ մը, ուր կարծելով իրենց իրաւունքն ըլլար, կը ստանային իրենց յատկացուած ողորմութիւն մը՝ ընդհանրապէս նիւթական գումար մը:

Հակառակ տարիներու ընթացքին նման մուրացկաններու ստացած ողորմութիւններուն, եթէ պատահէր, որ մէկ անգամ ինչ-ինչ արդարացի պատճառներով չառնէին իրենց «իրաւունքը», բարեսէր ընտանիքին եւ խանութպանին հասցէին հայհոյելով՝ կը հեռանային հերթականօրէն ստացած ողորմութիւնը ստացած չըլլալուն համար:

Իսկ կարգ մը իսկական աղքատ մուրացիկներ, ոեւէ անձէ ողորմութիւն ստանալով երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն կը յայտնէին եւ կ'աղօթէին ողորմութիւն տուողներուն առողջութեան եւ երջանկութեան համար:

Իմ ծննդավայրը, Սուրիոյ Հալէպ քաղաքի հայահոծ Նոր Գիւղ շրջանին մէջ, իմ մանկութեան տարիներուն ականատես կը դառնայի Նոր Գիւղի թաղերուն մէջ վխտացող մուրացկաններու, որոնք ցնցոտիներ հագած թրքախօս թիւրքմանական ցեղին պատկանող գնչուներ էին: Այդ տարիներուն, Նոր Գիւղի հայութեան մեծամասնութիւնը Կիլիկիայէն աքսորուած կամ գաղթած թրքախօս հայերէ կը բաղկանար, եւ որպէս հաւատաւոր քրիստոնեաներ, առանց նկատի առնելու իրենց դուռը զարնող մուրացկաններու ազգային պատկանելիութիւնը, սիրայօժար կ'օգնէին անոնց նիւթականներով եւ ուտեստեղէններով, արժանանալով անոնց սրտագին շնորհակալութեան:

Հոս պէտք է ընդգծել, որ այդ օրերուն, Հալէպի հայ ժողովուրդը, տարագրուելով իր հազարամեայ բնակավայրերէն, տառապանքով, չարչարանքով, անօթի-ծարաւ, ապաստանած էր սուրիական զանազան քաղաքներուն մէջ, սրտաբաց ընդունուելով սուրիացի արաբ ժողովուրդէն, եւ իր ապրելու ու գոյատեւելու կրանիթեայ կամքով տուն-տեղ եղած էր եւ բնածին աշխատասիրութեամբ կազմած ընտանիքը ու աշխատանք, ապահովելով ընտանիքին ապրուստը եւ զաւակներուն կրթութիւնը:

Այս կացութեան մէջ, հակառակ իրենց տնտեսական դժուարին վիճակին, հայոց Մեծ Եղեռնէն հրաշքով ազատուած հայ ժողովուրդի այս խլեակները, պահած ըլլալով հայկական տոհ-

մային սովորութիւնները, կ'օգնէին իրենց դուռը բաղխող մուրացկաններուն:

Ամէնօրեայ մուրացկաններէն մէկը, որ իր զիմագիծով եւ հագուստով կը գատորոշուէր թիւրքմէն գնչու մուրացկաններէն, Նոր Գիւղի չորրորդ թաղամասին ծայրը գտնուող մենաւոր տան մը դուռը գարկաւ:

Տիկին Ալիս դուռը բացաւ: Մուրացկանը ներս մտաւ, բարեւ տուաւ կնոջը եւ աթոռին վրայ նստաւ ուժասպառ:

— Բանի մը պէտք ունի՞ս, — հարցուց բարեսիրտ կինը:

— Ծարաւ եմ, — մեղմաձայն պատասխանեց մուրացկանը:

Կինը սոթտեց թեւերը, պաղ ջուր քաշեց բակին մէջ գտնուող ջրհորէն եւ մուրացկանին տուաւ սափորը:

Մուրացկանը սափորը մօտեցուց շրթունքներուն ու խմեց երկար ու առատ: Յուզուած մնաց աթոռին վրայ նստած:

Երբ խմեց վերջացուց, կնոջ յանձնեց սափորը եւ շնորհակալ եղաւ:

— Ուրիշ բանի մը պէտք ունի՞ս, — հարցուց տիկին Ալիս:

— Անօթի եմ, — պատասխանեց մուրացկանը:

Բարեսէր կինը խոհանոց մտաւ եւ հաց, պանիր եւ սեխ բերաւ:

Մուրացկանը ախորժակով կերաւ եւ շնորհակալութիւն յայտնեց, սակայն դուրս չելաւ տունէն:

Տանտիկինը օրուան պատշաճ թուգ, խաղող եւ ձմերուկ ալ բերաւ: Մուրացկանը կրցած չափով անոնցմէ ալ կերաւ, կշտացաւ: Կրկին շնորհակալութիւն յայտնեց հրամցուած բացառիկ եւ ախորժելի կերակուրներուն համար:

— Ուրիշ բանի պէտք ունի՞ս, — հարցուց բարեսէր կինը:

— Կեանքիս մէջ կին չեմ համբուրած, համբոյր մը ողորմէ ինծի, — ամչնալով ըսաւ մուրացկանը:

Բարեպաշտ կինը առանձին էր: Ամուսինը գործի գացած էր: Ան միշտ հաւատարիմ եղած էր ամուսինին եւ ոչ մէկ օտարի չէր արտօնած իր անձին մօտենալու: Երկար մտածեց, նայեցաւ մուրացկանին լուսաճաճանչ դէմքին, գթաց եւ անոր երկնցուց իր այսր՝ ամօթխածութենէն կարմրելով:

Մուրացկանը, շրթունքներուն ծայրովն իսկ չդպչելով անոր, գգուչութեամբ մօտեցաւ տանտիրուհիին ականջին եւ փսփսաց մեղմաձայն.

— Կին, դուն այս գթութեան գործերովդ երկինքի արքայու-

Թեան դուռները կը բանաս քու առջեւ, — ըսաւ եւ լուսապայծառ
ամպի մը պէս աներեւութացաւ:

Տանտիկինը շատ զարմացաւ, փնտռելով մուրացկանը, որ
աներեւութացած էր: Եւ այն եզրակացութեան եկաւ, որ աներե-
ւութացող մուրացկանը սուրբ անձ մըն էր:

Սակայն, ան Քրիստոսն էր:

Աստուծոյ խաչեալ Որդին, որ խաչելութենէն երեք օր վերջ
յարութիւն առաւ: Սակայն միշտ, այսպէս մուրացիկի կերպա-
րանքով, ողորմելի ցնցոտիներով ծածկուած, աշխարհի վրայ
չըջելու կ'ելլէր, տեսնելու եւ հանդիպելու համար ճշմարիտ քր-
իստոնեաներուն, շարունակելով իր լոյսով լուսաւորելու խա-
ւարեալ կեանքով ապրող մարդկութիւնը:



ԱՂՔԱՏԸ ԱՂՔԱՏԻՆ ՕԳՆԵԼՈՎ ՀԱՐՍՏԱՑԱԲ

Սալամ ընտանիքը բարեկեցիկ եւ ապահով կեանք մը ունէր ու կ'ապրէր Պաղտատի արուարձաններէն արդիական կառուցուածքով ու պարտէզով տունի մը մէջ, երջանիկ իրենց եկամուտով, եւ որեւէ դժուարութիւն չունէր իրենց երկու զաւակներուն՝ Իլիասին եւ Լենային սնունդին եւ դպրոցական ծախսերուն հասնելու համար:

Տէր եւ Տիկին ձէմիլ եւ ձորճէթ Սալամ իրենց ամուսնութեան 12-րդ տարեդարձը կը տօնէին ճոխ սեղանի մը շուրջ. հեռատեսիլէն լսեցին ցաւալի եւ ցնցիչ լուր մը: Ամերիկեան բանակները անակնկալօրէն յարձակում սկսած էին գործել Իրաքի մայրաքաղաք Պաղտատի եւ այլ զինուորական կեդրոններու վրայ, վերջ տալու համար Իրաքի միահեծան ղեկավար՝ Սատտամ Հիւսէյնի իշխանութեան:

Ամերիկեան բանակներու յարձակումէն քանի մը օր վերջ, Պրն. ձէմիլ, որ պետական պաշտօնեայ էր, որոշեց ապահով ուղի մը գտնել եւ իր գործատեղին հասնիլ, բայց ապարդիւն. բոլոր թաղերը գրաւուած էին զինուորներով, հակաօդային թնդանօթներով եւ հրասայրերով: Զինուորական յատուկ ոստիկաններ արգելք կը հանդիսանային քաղաքացիներու երթեւեկութեան: Մահ եւ սարսափ կը տիրապետէր Պաղտատի բոլոր փողոցներուն վրայ եւ մարդիկ իրենց տուններուն մէջ պատսպարուած, կը ջանային խուսափիլ օդէն եւ ցամաքէն արձակուող ումբերէն եւ տեսակաւոր փամփուշտներէն:

Օրերը, շաբաթները կ'անցնէին պատերազմական մթնոլորտի մէջ: Ամերիկեան բանակները մտած էին Պաղտատ, պարտութեան մատնելով Սատտամ Հիւսէյնի բանակները: Երկրին մէջ կը տիրէր անիշխանութիւն: Սատտամ Հիւսէյնը չսիրող մարդիկ հաւաքուած էին բռնակալին արձանին շուրջ եւ կարգ մը գործիքներ օգտագործելով վար առած էին արձանը եւ վայրագօրէն կը կոխկռտէին:

Երկրին մէջ յառաջ եկած էր գործազրկութիւն: Մարդիկ կը վախնային իրենց գործատեղիները բանալ: Սղութիւնը գլուխը առած գացած էր: Թէեւ կարգ մը հարուստներ իրենց կարողութիւններով կրնային դիմանալ ստեղծուած սղութեան եւ իրենց

գործերուն, բայց միջին եւ գործաւոր դասակարգին կեանքը շատ դժուարացած էր, հասնելով անօթի մնալու եւ պառկելու աստիճանին:

Պրն. Ճէմիլ իր պաշտօնը կորսնցնելէ ետք, եւ իր խնայած գումարները ծախսելէ ետք, ստիպուած կ'ըլլայ գործ փնտռել, որեւէ գործ, որպէսզի ընտանիքը անօթի չմնայ: Օրերով դիմեց գործատէրերուն, ճաշարաններուն, առաջարկելով ընել ամէն տեսակի աշխատանք, միայն կարենար իր ընտանիքին հացը ապահովել, սակայն ապարդիւն: Առաջարկեց ձրի աշխատիլ, առանց դրամական ռոճիկի, միայն իր եւ իր ընտանիքին սնունդի հաշւոյն, բայց, ուր որ կ'երթար կ'ըսէին, որ գործաւորի պէտք չունին, քանի որ բաւարար յաճախորդ չունին:

Ճէմիլ յուզուած եւ յոգնած երեկոյեան տուն եկաւ, ուտելիքի պարապ պայուսակներով, որոնց յուսահատօրէն կը նայէին գաւակները:

Ձաւակները անօթի էին, կը փաթթուէին իրենց ծնողներուն, աղաչելով որ իրենց հաց տան ուտելու, որովհետեւ չեն կրցած անօթի քնանալ:

Պատիկներուն մայրը՝ Ճորճէթ, միշտ կը մխիթարէր իր գաւակները, անոնց յոյս ներշնչելով, որ իրենց հայրը շուտով գործ կը գտնէ եւ իրենք ուտելու ճոխ ուտելիքներ կ'ունենան, իսկ դառնալով իր ամուսինին կը խնդրէր, որ քանի որ հոս գործ չի կրնար գտնել, իրենց պապենական գիւղը փոխադրուին, հոն գոնէ ազգականները կրնային նիւթապէս օգնել, միեւնոյն ատեն կրնային օգտուիլ պարտէզներու կանաչեղէններէն:

Ամուսինը միշտ կը մերժէր իր կնոջ առաջարկը, պատճառաբանելով, որ Պաղտատի պէս խոշոր քաղաքի մէջ գործ չէր կըրնար գտնել, ինչպէ՞ս փոքրիկ գիւղի մէջ կրնայ գործ գտնել կամ ազգականներու օգնութեան վրայ յոյս դնել:

Տունին մէջ իրենց ունեցած ձաւարի, բրինձի եւ տուփեղէններու պաշարները վերջանալու վրայ էին: Օրերը կը թաւալէին եւ անօթութիւնը կը սպառնար իրենց կեանքին:

Գործ գտնելու յոյս չէր մնացած: Որպէս անմիջական լուծում, Տիկին Ճորճէթ, պատէն կախուած պարսկական գորգը իջեցուց, ծալեց եւ տուաւ ամուսինին, որպէսզի ծախէ, փրկուելու համար անմիջական անօթութեան ճիրաններէն:

Ամուսինը նախ մերժեց տունին զարդը եղող գորգը ծախելու կնոջ առաջարկը, սակայն, աղքատութիւնը եւ մանաւանդ

անօթութիւնը ու գաւակներուն լացը մտաբերելով, ծալուած գորգը առնելով, արցունքոտ աչքերով դուրս ելաւ:

Ճէմիլ գորգը շալկած քայլամուր, հարցնելով գտաւ գորգավաճառի մը խանութը եւ ստիպուած ծախեց իր արժէքին քառորդ գինով, ուրախանալով, որ գոյացած գումարով պիտի կարենան շրջան մը ապրիլ, մինչ այդ հաւանաբար գործ մը գտնէ:

Տուն դարձի ճանապարհին մտածեց կարգ մը ուտելիքներ գնել, ուրախացնելու համար իր գաւակները: Իր ճանչցած նպարավաճառին խանութը հասնելով գնումներու կը պատրաստուէր, ծերունի մարդ մը իրեն մօտեցաւ եւ յուզումով ու լալով խնդրեց իրեն ողորմութիւն մը տալ, պատճառաբանելով, որ քանի մը օրէ ի վեր ինքը եւ իր ընտանիքին անդամները բան մը չեն կերած, եւ ընտանեօք աշխատելու ալ կարողութիւն չունին:

Ճէմիլ շատ ցաւեցաւ մուրացկանին վիճակէն եւ յուզուեցաւ անոր եւ անոր ընտանիքին կացութիւնը լսելով, սակայն, նոյն ատեն յիշեց, որ իր ընտանիքին անդամներն ալ անօթի են եւ կարօտ սնունդի եւ ինքը տակաւին գործ չէ կրցած գտնել իր ընտանիքին ապրուստը հոգալու համար: Երկար մտածեց, ուզեց օգնել ծեր մուրացկանին, միեւնոյն ատեն երեւակայեց առանց գորգին դրամին տուն վերադառնալու մասին եւ իր կնոջ տալիք պատճառաբանութեան եւ արդարացումին հետեւանքներուն մասին: Վերջապէս որոշեց ծախուած գորգին դրամը տալ անօթի մարդուն, մտիկ ընելով իր խղճի ձայնին, որ կ'ըսէր.

— Օգնէ՛ այս խեղճ մարդուն:

Եւ ծախուած գորգին դրամը ամբողջութեամբ տուաւ անօգնական եւ անօթի մուրացկանին, այն խոր գիտակցութեամբ, որ այդ դրամով կը փրկէ մահամերձ ընտանիք մը:

Մուրացկանը դրամը առաւ եւ շնորհակալութիւն յայտնելէ ետք աղօթեց, ու յուզումնալից խօսքերով ըսաւ.

— Աստուած քեզի ինձի տուածիդ հարիւրապատիկը տայ, կեանքդ ըլլայ բարեյաջող, որովհետեւ դուն խղճամիտ եւ մարդասէր ու հաւատացեալ անձ մըն ես:

Ճէմիլ տխուր էր գորգին դրամը աղքատին նուիրած ըլլալուն համար, մոռնալով իր ընտանիքին կացութիւնը, միեւնոյն ատեն հոգեպէս ուրախ՝ իրմէ աւելի աղքատ՝ աղքատի մը նիւթապէս օգնած ըլլալուն համար:

Տուն հասաւ պարապ ձեռքերով: Իր կնոջ եւ գաւակներուն նայեցաւ, որոնք իրենց մօրը մօտակայ պարտէզէն հաւաքած

բանջարեղէններով պատրաստուած կերակուր մը կ'ուտէին առանց հացի:

Կինը զարմանքով հարցուց, թէ՛

— Ի՞նչ եղաւ գորգը, եւ եթէ ծախուեցաւ, ինչո՞ւ ուտելիքներ չես բերած:

Ճէմիլ պատմեց եղելութիւնը եւ լալով պատմեց աղքատին եւ անոր ընտանիքին կացութեան մասին, համոզելով կնոջը, որ ինք բարեգործութիւն մը ըրած է իր կրօնական հաւատքին եւ խղճին անսալով:

Տիկին ճորճէթ թէեւ նեղուեցաւ, որ իր ամուսինը գորգը ծախելով չէ կրցած իրենց ուտելիք բերել, սակայն, մարդկային եւ կրօնական հասկացողութեամբ ներողաբար մօտեցաւ ամուսինին արարքին, եւ տունին պահարանէն իր մետաքսեայ գլխածածկոցը, որ եկեղեցի դացած ատեն կը գործածէր, ամուսինին տուաւ որպէսզի ծախէ եւ ընտանիքին ուտելիքներ բերէ:

Ճէմիլ մետաքսեայ գլխածածկոցը տարաւ բազմաթիւ վաճառատուներ ներկայացուց, սակայն դժբախտաբար գնող չգրտաւ: Վերջապէս, յոգնած խանութ-խանութ պտրտելէ, որոշեց տուն վերադառնալ:

Ճամբան հանդիպեցաւ կառքով ձուկ ծախողի մը, որ յաճախորդ կը փնտռէր կառքին վրայ մնացած երկու ձուկերը ծախելու համար: Ճէմիլ ուզեց այդ ձուկերը գնել, սակայն դրամ չունէր գնելու համար: Մօտեցաւ ձուկ ծախողին եւ ըսաւ, որ ինք կ'ուզէ երկու ձուկերը ունենալ, սակայն դրամ չունի, եւ առաջարկեց կնոջը տուած մետաքսեայ գլխածածկոցը տալ ձուկերու փոխարէն:

Ձուկ ծախողը նախ չուզեց ձուկերը տալ գլխածածկոցի փոխարէն, սակայն, Ճէմիլին գլխածածկոցի արժէքի գնահատումներէն ու աղաչանքներէն տարուելով ու տեղի տալով, համաձայն եղաւ ձուկերը տալ գիշերային բացառիկ յաճախորդին:

Ճէմիլ ձուկերը շալկած ուրախ գուարթ տուն հասաւ, ուր իր ընտանիքին անդամները անհամբեր իր գալուստը կը սպասէին, եւ տեսնելով ձուկերը ուրախացան, որ այդ օր փառաւոր ճաշ մը պիտի ունենան:

Տիկին ճորճէթ ձուկերը առաւ, որպէսզի տապկէ: Երբ ձուկերը սկսաւ մաքրել եւ փորը ճեղքել, դանակը զարնուեցաւ կարծր առարկայի մը: Ձուկը ամուսինին քով բերաւ եւ ձուկին փորին մէջ գտան ապակիի նմանող երկու սանթիմ մեծութեամբ

առարկայ մը: Էրիկ-կնիկ ելած առարկան մաքրեցին զարմանալով անոր բացառիկ փայլունութեան: Տիկին ձորճէթ ամուսինին ըսաւ, որ առտու ձուկին փորէն գտնուած առարկան տանի եւ ոսկերիչի մը ցոյց տայ, հասկնալու համար անոր բաղադրութիւնը:

Ոսկերիչը, որ նաեւ աղամանդագործ էր, խոշորացոյցով քննեց եւ ըսաւ.

— Այո, շատ սուղնոց աղամանդ մըն է: Ես այս գնելու կարողութիւն չունիմ, որովհետեւ միլիոններ կ'արժէ: Ունիմ աղամանդագործ բարեկամ մը, անոր ցուցնենք, թերեւս ան կը գնէ:

Աղամանդը ծախուեցաւ երկու միլիոն իրաքեան տինարի:

Ճէմիլ եւ կինը խոշոր պայուսակ մը լեցուցին այդ գումարով: Տունին կահ կարասիները նորոգեցին, թէլէվիզիոն գնեցին, նոր հագուստեղէններ, անձնական ինքնաշարժ եւ նոր ապրելակերպ:

Շրջան մը ետք, գիշեր մը իրենց տան դուռը զարնուեցաւ, բացին, նոյն աղքատ մուրացկանը՝ որուն տուած էր գորգը ծախելով ունեցած դրամը: Ճէմիլ ճանչցաւ աղքատը եւ ներս մըտնելով տրցակ մը դրամ առաւ տալու համար աղքատին, յիսուն հազար իրաքեան ոսկիի գումար մը: Սակայն, աղքատը հեռացած էր: Վազեց զէպի փողոց, գտաւ աղքատը, որ այդ պահուն լուսաւորուած անձ մըն էր՝ Քրիստոսի նմանութեամբ:

Ճէմիլ զգաց կատարուած հրաշքը, ծունկի գալով խոնարհեցաւ աղքատի տեսքով գինք հարստացուցած Յիսուսին, որ ձեռքը դնելով Ճէմիլի գլխուն ըսաւ.

— Երբ ինձի տուիր քու բոլոր ունեցածդ, ես քեզի համար աղօթեցի, որ Աստուած քեզի տայ ինձի տուածիդ հարիւրապատիկը: Ահաւասիկ ատիկա կատարուեցաւ աւելիով:

ԱՊՏԻԼ ԱՂԱՅԻ ԴՐԱԽՏԸ

«Կարմիր Սար»ի ստորոտը, պարսկական քաղաքի մը մօտ կը բնակէր Ապտիլ Աղան: Ան շրջանին տէրն ու տիրականն էր:

Ահրիմանը անոր տուած էր բոլոր չարութիւնները. վերցուցած էր անոր խիղճը եւ չար ոգիները մինչեւ երեկոյ անոր ականջին կը շնչային այնպիսի չարութիւններ, որոնցմէ նոյնիսկ դեւերը կը սոսկային շատ անգամ:

Ապտիլ Աղան հարուստ էր թագաւորի պէս: Անոր պալատը աշխարհի ամէնագեղեցիկ շէնքն էր: Զինք կը գովաբանէին երգիչները: Անոր պալատի գեղեցկութիւններէն յաճախ իր «Երժենք» գիրքի երեսները կը լեցնէր Մանի նկարիչը: Անոր ճիւղերը արաբական նոյսեր էին, տաւարները հաշուել կարելի չէր: Տունը ու տեղը եւ ամբարները այնքան լեցուն էին, որ շատ անգամ աւելորդ եւ փտած պաշարները դուրս կը թափէին պալատէն:

Եւ օր մը եղաւ, որ հեռու Հնդկաստանէն «Կարմիր Սար»երու մօտ եկաւ տարվիչ մը եւ նստաւ Ապտիլ Աղայի դրան առաջ, սպասելով, որ իր բաժինը տան եւ խնդրեց պալատին տէրը տեսնել:

Ապտիլ Աղան կը գտնուէր իր հարեմին մէջ եւ ծիծաղեցաւ, երբ իրեն ըսին, որ տարվիչ մը եկած է եւ կ'ուզէ զինք տեսնել: Հրամայեց, որ տարվիչը ներս կանչեն, մտածելով անոր երգել-պարել տալ, հարեմին մէջ գուարճանալ եւ գուարճացնել իր կիները:

Եւ եկաւ տարվիչը, պատմեց Հնդկաստանի մասին, նկարագրեց արջառներու փառքը, անոնց գուարճութիւնները, երգեց աղօթքներ եւ սկսաւ վայրենի պար մը:

Ապտիլ Աղան շատ խնդաց, շատ ուրախացաւ եւ գուարճացաւ, հրամայեց տարվիչը կերակրել եւ յետոյ անոր ըսաւ.

— Տարվիչ պապա, դուն շատ երկիրներ տեսած ես, առածը կ'ըսէ որ «Շատ ապրողը չի կրնար ամէն բան գիտնալ, այլ՝ շատ երկիրներ տեսնողները»: Եկո՛ւր, քեզի իմ պալատս ցոյց տամ, տեսնե՞ք պիտի հաւնի՞ս:

Եւ տարաւ տարվիչը իր հետ, ցոյց տուաւ հայելապատ պատերով, գեղեցիկ ծաղիկներով եւ գոյնգոյն քարերով յատակուած սրահները, ցոյց տուաւ իր թաւշապատ օթոցներով դիվանխանէն, շքեղ պատկերներով զարդարուած բալխանան,

առաջնորդեց իր հարեմին ներսը, ցոյց տուաւ իր կիները, տարաւ գոմը, հիացնելով իր տաւարներու քանակութիւններով եւ գեղեցիկ նժոյգներով: Յոյց տուաւ ցորենով եւ արմտիքներով լեցուած հսկայական ամբարները, անհամար կարասներով լեցուն մառանը, յետոյ տարաւ պարտէզը, որ ցոյց տար այդ աւագաններով պերճ այգին, ուր անհամար էին հովանաւորող շոճիներ, պտղատու ծառեր, ձուկերով լեցուն շատրուաններ եւ երփնեւրանգ ծաղիկներով անուշահոտ ծաղկանոցներ:

Տարվիշը տեսաւ բոլորը, սառնութեամբ նայեցաւ պարտէզին, կանգ առաւ Ապտիւլ Աղայի առաջ, նայեցաւ անոր հեգնական ժպիտով եւ ըսաւ.

— Ապտիւլ, որդիս, այս բոլորը լաւ են, ամբարդ լեցուն է, հուրի-փերիներ են կիներդ, շքեղ է պարտէզդ եւ պերճ՝ պալատդ: Այս բոլորին կէսը չունի հնդկական մահարագան, բայց եկուր հետս, քեզի քանի մը հարցում պիտի տամ:

Յետոյ արագութեամբ Ապտիւլը տարաւ պարտէզի ցանկապատին մօտ, ցոյց տուաւ դուրսի, ոչ շատ հեռու երեւցող տուներու աւերակները եւ հարցուց.

— Ի՞նչ են ասոնք:

— Ա՛խ, ասոնք... խնդալով ըսաւ Ապտիւլը, ասոնք այն տուներն են, որ ես քանդել տուի, որովհետեւ մտադիր եմ պարտէզս այդ կողմէն լայնցնել:

— Ի՞նչ եղան այս տուներուն բնակիչները:

— Վ՛ուստեցի, — ըսաւ Աղան, — այդ հողերը իմ սեփականութիւնս են, վ՛ուստեցի այդ բնակիչները հեռու:

— Ո՞ւր գացին:

— Չեմ գիտեր:

— Լաւ ուրեմն, — ըսաւ տարվիշը: — Ես գիտեմ: Երէկ կ'անցնէի գետի մը ափէն, տեսայ խումբ մը խեղճ մարդիկ, որոնք մերկ, քաղցած եւ կեղտոտ էին: Անոնցմէ երեք հոգի ցուրտէն մեռած էին, երկուքը՝ անօթութենէն կը մեռնէին, եւ միւսներն ալ խենթացածի պէս վրաս թափուեցան եւ խլեցին իմ մօտս գտնուող հացերը: Քաղցած էին սոված գայլերու պէս:

— Ա՛խ, — ծիծաղելով գոչեց Ապտիւլը, — Ի՞նչ գողեր են ասոնք գիտե՞ս:

Տարվիշը տարաւ Աղան պարտէզէն դուրս, ցոյց տուաւ հեռուէն երեւցող գիւղերը եւ հարցուց.

— Քո՞ւկդ են այս գիւղերը:

— Այո, իմս են, ինձի կը պատկանին:

— Ես անցայ այդ տեղերէն, — ըսաւ տարվիշը դառնու-
թեամբ, — գիւղերուն մէջ դեռ մի քանի կող եւ 3-4 ոչխար մնա-
ցած է:

— Իրա՞ւ, — բացագանչեց Ապտիւլ Աղան: — Ուրեմն վերա-
կացուս պիտի ուղարկեմ, որ երթայ եւ այդ գիւղացիներէն հարկ
ժողվէ:

— Այո, — աւելցուց տարվիշը, — յայտնէ վերակացուիդ, որ
կար գիւղերուն մէջ մէկը, որ կտոր մը հոր հաց ունէր կրծելու:

Յետոյ, տարվիշը լռութեամբ գնաց դէպի աւագանը, մտա-
ծեց խորապէս եւ ըսաւ.

— Ապտի՛ւլ, պալատդ եւ պարտէզդ լաւ են, պակաս է ամէ-
նագլխաւորը: Այդտեղ (ան ցոյց տուաւ գիւղերը) դրախտ պիտի
չինես եւ այն ժամանակ դուն միակ անձը կ'ըլլաս որ կ'ունենաս
պալատ մը, կեանք մը դրախտային այս աշխարհի վրայ, որոնց-
մէ գուրկ է Հնդկաստանի ամէնամեծ մահարագանն իսկ:

Ըսաւ, օրհնեց Ապտիւլը, կտոր մը հաց դրաւ կողքի տոպ-
րակին մէջ եւ առանց ետեւ նայելու հեռացաւ պալատէն եւ այդ
երկրէն:

Ապտիւլ Աղան երկար մտածեց, թէ ի՞նչ ըսաւ տարվիշը.
մի՞թէ այս երկրին վրան ալ կարելի է դրախտ շինել:

Հրամայեց կանչել իր ծերունի դաստիարակը, անոր պատ-
մեց տարվիշին ըսածը, հրամայեց շուտով ձի հեծնել, վագել
տարվիշին ետեւէն եւ հարցնել իր կողմէն, թէ այդ «դրախտ»ը
ինչպէ՞ս պէտք է շինել:

Լալէն (դաստիարակը) ձի հեծաւ, գնաց տարվիշին ետեւէն,
հասաւ անոր եւ յայտնեց Ապտիւլ Աղային ըսածը:

Տարվիշը ժպտաց, ձեռքն առաւ իր փոշոտ գաւագանը, կե-
ցաւ Լալէին առջեւ եւ երգեց.

— Որդի, անհաց սեղան չե՞ս տեսած: Կանանց, մարդկանց եւ
մանուկներու արցունք չե՞ս տեսած:

Երգեց, յետոյ խոր ակնարկ մը ձգեց ծերունիին վրայ եւ հե-
ռացաւ:

Ծառան այդ խօսքերը միտքը պահեց, աճապարանքով եկաւ
տիրոջը մօտ եւ լսածը պատմեց անոր:

Ապտիւլը նախ զարմացաւ, իսկ յետոյ ծիծաղեցաւ:

— Խենթ է այդ տարվիշը, ըսաւ ան. — իսկ ես արդէն մտածե-
ցի, թէ «դրախտ»ը ինչպէ՛ս պէտք է շինել:

Եւ ան ձեռնարկեց «դրախտ»ը շինելու գործին:

Քանզել տուաւ գիւղացիներու բոլոր տուները, դուրս դրաւ զանոնք իրենց չուլ-փալասին հետ, թողուց թացօթեայ, անձրեւի եւ ձիւնի տակ, ուր սկսան մեռնիլ: Խլեց անոնց հողերը, զիրենք ալ մտրակելով բերաւ եւ ձրիապէս աշխատցնել տուաւ, որպէսզի մեծ եւ շքեղ պարտէզ մը շինել տայ, դրախտի նման գեղեցկացնելով այդ պարտէզը:

Այդ հողերուն վրայ շինել տուաւ պալատներ, շատրուաններ, ծառուղիներ, տնկել տուաւ հագուազիւտ բոյսեր, անմահական անուշահոտ ծաղկանոցներ...: Եւ ժողովուրդը հաւաքուած այդ պարտէզին շուրջը կը մեռնէր գոչելով՝ «հաց, հաց...»:

Անցան ամիսներ, «դրախտ»ը սկսած էր վերջանալ: Ժողովուրդին կէսը մահացած էր, իսկ կէսին ձայնը կտրուած էր «հաց» պոռալով:

Վերջապէս, գեղեցիկ օր մը, Ապտիւլ Աղան իր բարեկամներուն եւ կիներուն հետ եկաւ մտնելու պարտէզը, ուր պատրաստըւած էր խնձոք մը՝ գիրիներով եւ համեղ կերակուրներով:

Ան եկաւ պարտէզին մօտ, հրամայեց մտրակելով հեռու քչել «հաց» պոռացող ամբոխը եւ ոտքը կոխեց իր այն պարտէզի շեմքին վրայ, որ շաղախուած էր ժողովուրդի արիւնով:

Եւ հազիւ թէ ան կ'ուզէր ներս մտնել, յանկարծ մթնցաւ երկինքը եւ սկսան սաստիկ որոտումներ, աղաղակներ եւ թրնդիւն...:

Ամէն ինչ իրար խառնուեցաւ:

Եւ երբ մշուշը ցրուեցաւ, ի՛նչ ահռելի տեսարան, հողին հետ հաւասարուած էին Ապտիւլի պալատը, պարտէզն ու «դրախտ» կոչուող այգին ու պարտէզը:

Ոչ մէկ հետք մնացած էր այդ բոլոր արիւնաշաղախ պերճուածութիւններէն:

Քարերով լեցուն ընդարձակ դաշտ մը միայն գոյացած էր անոնց տեղը եւ այդ դաշտը շրջապատած էր զարմացած ժողովուրդը:

Անյայտացած էին Ապտիւլ Աղան եւ անոր հարեմը, ծառաները, համհարզը եւ իր բոլոր բարեկամները:

Այդպէս պատժեց Յազգամը (իրենց աստուածը) Ապտիւլին, իսկ ժողովուրդը վարեց այդ հողերը, ցորեն ցանեց, տուներ շինեց եւ սկսաւ խաղաղութեամբ բնակիլ հոն:

Եւ երբ անցան օրերը, նոյն տարվիչը եկաւ անցնելու այդ կողմերէն: Ամէն ինչ տեսաւ, ծիծաղեցաւ եւ ըսաւ.

— Ապտիւլը դրախտ շինելու փոխարէն դժոխք մը շինեց, որուն կրակին մէջ այրուեցաւ ինքը, իսկ երբ մեռաւ, այն ժամանակ միայն գոյացաւ դրախտը:

Ժողովուրդը տնկեց սիւն մը, գամեց տախտակ մը սիւնին վրայ, ուր գրուած էր.—

Դրախտը ոչ թէ Ապտիւլը շինեց,
Որ ժողովուրդին կոտորեց,
Այլ՝ անոր Յազդանը շինեց,
Որ ժողովուրդը Ապտիւլէն ազատեց:



ՃԱՐՊԻԿ ՀՆԱԿԱՐԿԱՏԸ

Կը պատմուի, որ ժամանակին, Պարսկաստանի արքաները կը սիրէին գիշերով ծպտուած դուրս ելլել, միշտ ժողովուրդի բազմութեան մէջ մտնել, անոնց ցաւերը քննելու, իմանալու ու կեանքը անձամբ տեսնել:

Պարսկաստանի արքաներէն Շահ-Աբասը, շաբաթը քանի մը գիշեր, երբեմն վաճառականի հագուստով, երբեմն՝ ուխտաւորի եւ կամ օտարականի, ծառայի մը ընկերակցութեամբ, երբեմն՝ առանձին, կը պտըտէր փողոց եւ պագար, կը լսէր ամէն խօսակցութիւն, գանգատ ու վշտեր եւ յաճախ ժողովուրդը կը լսէր, որ այս կամ այն դատաւորը, խանն ու իշխանաւորը յանկարծ կը պատժուէին, առանց իմանալու թէ ո՞վ գանոնք մատնեց կամ ո՞վ բողոքեց:

Երեկոյ մը, այդպէս, մեծ արքան մինակը դուրս ելաւ: Հագած էր բարեպաշտ ու թափառական տէրվիշի հագուստ, մագերը գզգզած, ճաշամանը կախած, տապարը ձեռքին եւ մտաւ Սպահանի պագարը:

Խանութները արդէն գոցուած էին: Գիշերային պահակները կծկուած էին ձէթի աղօտ ճրագներու կողքին եւ ծանր կը նընջէին: Շահ-Աբաս երկար պտըտեցաւ, գննեց ամէն բան եւ երբ խանութի մը առջեւէն կ'անցնէր, նկատեց որ ներսը լոյս կար:

Հետաքրքրուեցաւ, կանգ առաւ, աչքը դրան ճեղքին դրաւ եւ ահա ինչ տեսաւ:

Հնակարկատի խանութ մըն էր ան: Խեղճուկ, ողորմելի անկիւն մը: Հազիւ քանի մը հին ու մին կօշիկ կար, քանի մը ժանգոտ գործիք, կտրուած, հնամաշ կարպետ, որուն վրայ նստած էր աղքատ հնակարկատը, առջեւը ունենալով սեղան մը, որուն վրայ գտնուող կերակուրն ու խմիչքը կրկնապատիկ գին ունէին, քան ամբողջ խանութին եղած-չեղածը:

Շահը զարմացաւ:

— Այս ի՞նչ գաղտնիք է, — մտածեց ան, — որտեղէ՞ն է այս հնակարկատին այս շքեղ ճաշը:

Ու վճռեց իմանալ: Տապարով բաղխեց խանութին դուռը եւ որպէս տէրվիշ՝ սկսաւ երգել.

— Ես՝ Հազրաթը Ալի, տէրվիշ եմ ես, ո՞վ հաւատացեալ, բա՛ց դուռը եւ տո՛ւր տէրվիշին բաժինը:

— Հեռացի՛ր, տէրվի՛չ, — գոչեց ներսէն հնակարկատը, — ոչինչ ունիմ քեզի տալու:

— Կը ստես, Միւսլի՛ման, առջեւդ կերակուր կայ, տուր տէրվիչին բաժինը:

Ան այնքա՛ն երգեց, այնքա՛ն պահանջեց, որ հնակարկատը ստիպուած, քրթմնջելով, իր մտքով գրողին ուղարկելով բոլոր տէրվիչները, դուռը բացաւ:

— Ի՞նչ կ'ուզես մա՛րդ, — գոչեց հնակարկատը, — ինչո՞ւ չես թողուր որ հանգիստ հաց ուտեմ:

— Անուշ ըլլայ, — ըսաւ Շահը տէրվիչի շեշտով, — միայն թէ ե՛ս ալ անօթի եմ, թող մասնակցիմ այդ չքեղ ճաշին:

— Լաւ, — ըսաւ հնակարկատը, — ներս մտիր եւ հաց կեր. միայն կ'երդնում մարգարէի երկար մօրուքով եւ սուրբ Ալիի զօրեղ բազուկով, որ եթէ որեւէ հարցով ձանձրացնես զիս, իսկոյն դուրս կը դնեմ քեզ:

Շահը լուռթեամբ ներս մտաւ, նստաւ սեղանին առջեւը, բայց ձեռք չտուաւ ոչ մէկ բանի:

— Կե՛ր, տէրվիչ աղա:

— Ո՛չ, երբեք, — ըսաւ Շահը, — չեմ կրնար ուտել ես այն սեղանէն, որուն որտեղէն եկած ըլլալը չեմ գիտեր: Դուն խեղճ հնակարկատ ես, ունեցածդ ոչինչ է, որտեղէ՞ն ես ձեռք բերեր այսպիսի լաւ ճաշ:

— Դո՛ւրս, դո՛ւրս, իսկոյ՛ն դուրս ելի՛ր, երդմնագանց տէրվիչ, խօսք չտուի՞ր որ հարցում չպիտի տաս:

— Ե՞ս, — ժպտաց Շահը, — ե՞րբ քեզի խօսք տուի: Վկա՛յ մարգարէն՝ դուրս ալ չեմ ելլեր մինչեւ որ հարցիս չպատասխանես:

Հնակարկատը տեսաւ, որ ուրիշ ճար չկայ, քիչ մը մրթմըրթաց, քիչ մը հայհոյեց, բայց յետոյ ըսաւ.

— Լա՛ւ, ի՞նչ կայ այստեղ ծածուկ կամ հրաշք: Ամբողջ օրը կը գործեմ եւ շա՛տ լաւ կը գործեմ, իսկ երեկոյեան, ես մինակ մարդ եմ, կը սիրեմ լաւ ճաշ. ինչ որ շահիմ, բոլորը ճաշի կուտամ, ամէն երեկոյ նոյն ճաշը ունիմ:

Հնակարկատին պարզ խօսքերը Շահը շատ զուարճացուցին:

— Դուն խնայող չես, Միւսլիման, — ըսաւ. — իսկ եթէ հիւանդանաս կամ գործ չունենա՞ս:

— Թէ հիւանդանամ, ուտելու պէտք չկայ, Աստուած ողոր-

մած է: Թէ գործ չունենամ, ուրիշ գործ կ'ընեմ. ուտել շատ կը սիրեմ, լա՛ւ որկոր ունիմ:

Շահը ծիծաղեցաւ:

— Իսկ եթէ... — ըսաւ ան, — վաղը Շահը յանկարծ արգելէ հնակարկատութեան արհեստը, ի՞նչ կ'ընես այն ժամանակ:

— Բերանդ բարո՛վ բաց, է՛, աղա տէրվիշ. Շահը ինչո՞ւ պիտի արգելէ խեղճ մարդոց գործելու եւ լաւ ուտելու:

— Ո՞վ գիտէ, Շահ է, արգելեց եւ վերջ: Ի՞նչ կրնաս ընել:

Հնակարկատը գլուխը քերեց, յետոյ ծիծաղեցաւ եւ ըսաւ.

— Շատ գուարճալի մարդ ես դուն, տէրվիշ. էհ, եթէ Շահը հնակարկատութիւնը արգելէ, Աստուած ողորմած է, քաղցած չենք մնար:

Միւս օրը, յիբաւի, Շահ-Աբաս հրաման արձակեց, որ հնակարկատութեան գործը լիովին արգելուի եւ որ ոչ ոք համարձակի այդ գործով զբաղիլ:

Շահ էր, արգելեց գնաց, ո՞վ կրնար ըսել ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

Ապա, երբ մթնած էր, Շահը կրկին տէրվիշի հագուստ հագած, տապարը ձեռքն առաւ եւ գնաց պազար:

Կրկին բաւական պտրտեցաւ եւ երբ մօտեցաւ հնակարկատի խանութին ու ներս նայեցաւ դուռի ձեղքէն, սաստիկ զարմացաւ: Հնակարկատը կրկին ուրախ-գուարթ, երէկուան նման առջեւը փառաւոր ճաշ դրած, ուտելով, խմելով կը գեղգեղէր, կ'երգէր:

— Այս ի՞նչ բան է, — մտածեց Շահը. — պէտք է իմանալ, որ այժմ որտեղէ՞ն գտած է ճաշը: — Եւ դուռը բաղխեց:

— Եա՛ Ալի Հազրաթ... ո՞վ հաւատացեալ, բա՛ց դուռդ եւ տուր տէրվիշին բաժինը:

— Գնա՛, կորի՛ր, չարամի՛տ տէրվիշ, — գոչեց ներսէն հնակարկատը: — Դուն չարագուշակ մարդ ես, հեռացի՛ր, քանի դեռ չեմ բարկացեր, ոչինչ ունիմ քեզի տալու:

— Կը ստես, Միւսլիման, առջեւդ ճոխ կերակուրներ ունիս, տո՛ւր տէրվիշին բաժինը:

Հնակարկատը դուռը չբացաւ: Շահը յամառեցաւ, երեսը պնդացուց, խնդրեց, համոզեց եւ վերջապէս մտաւ: Բայց կրկին հաց չկերաւ եւ նոյն հարցումը ուղղեց.

— Խեղճ հնակարկատ ես, Շահն ալ այդ արհեստը այսօր արգելեց, ըսէ՛ ինձի, Միւսլիման, որտեղէ՞ն քեզի այս փառաւոր ճաշը, չըլլայ որ գողութեամբ սկսար զբաղուիլ:

— Լուէ՛, տէրվիշ աղա, — գոչեց հնակարկատը, — ինծի Ահմէտ կ'ըսեն, լաւ հօր որդի եմ եւ կեանքիս ընթացքին երբեք չեմ սըտած, ոչ ալ գողութիւն ըրած:

— Բացատրէ՛ ուրեմն, իմ բարի Ահմէտ:

— Դուն աներես ես, ո՛վ աղա տէրվիշ, — բարկացաւ հնակարկատը. — չեմ գիտեր ինչպէս վարուիլ հետդ, բայց ես կռուիլ չեմ սիրեր, ոչ ալ բարկանալ, ուրեմն, իմացիր: Շահը պատրաստըլած է ամարանոց երթալ, անոր համար Շահի ծառաները այսօր փողոց ու պազար իջած, որքան ջորի կը տեսնէին, մտրակելով պազար կը տանէին, որ Շահի բեռները կրեն: Եթէ ջորեպանը քիչ մը կաշառք տար, անոր ջորիներուն չէին դպչեր: Ես ալ այդ տեսայ, իսկոյն Քերրաշիի (պետական պաշտօնեայ) նշան մը գտայ, եւ փակցուցի գլխարկիս: Հայրիկէս սուր մը մնացած էր՝ կապեցի կողքիս, փողոցները իջայ, ջորիներ գտայ, շատ աղմկեցի, շատ սպառնացի, կաշառքներ առի եւ այնքան, որ պէտք էր իմ ճաշիս համար:

— Ճարպի՛կ ես, Ահմէտ, բայց չես մտածեր, որ Շահը կրնայ իմանալ եւ այդ ալ արգիլել, ի՞նչ կ'ընես այն ժամանակ այդ մեծ որկորիդ հետ:

— Կրկին բերանդ չար բացիր տէրվիշ. եթէ արգիլէ, Աստուած ողորմած է, քաղցած չե՛նք մնար:

Միւս օրը Շահը դարձեալ հրամայեց, որ արգիլուի ջորիներ հաւաքելը: Օրը երբ մթնած էր, դարձեալ տէրվիշի հագուստը հագած, եկաւ եւ կեցաւ Ահմէտի խանութին առջեւ:

Ճեղքէն ներս նայեցաւ եւ այս անգամ կատարեալ ապշեցաւ, տեսնելով որ հնակարկատը նորէն ուրախ-գուարթ, երէկուան պէս փառաւոր ճաշ մը առած, նստած, սկսած էր ուտել:

— Աստուած վկայ, որ այս հնակարկատը կախարդ եղած է անպայման, չեմ գիտեր այս ճաշը որտեղէ՞ն գտած է:

Եւ դուռը բաղխեց:

— Եա՛ Հասրաթ Ալի, ո՛վ Միւսլիման, բաց դուռը եւ այս անգամ ալ տուր տէրվիշին բաժինը:

Հնակարկատը ճանչցաւ տէրվիշին ձայնը, իսկոյն վեր թըռաւ, հին կօշիկ մը գտաւ, շտապեց դէպի դուռը եւ գոչեց.

— Կորի՛ր, հեռացի՛ր, դժոխքի որդի, հերիք չէ՞ր, որ բերանէդ չար խօսքեր ելան եւ բոլորը կատարուեցան: Գնա՛, այլեւս ո՛չ մէկ փշուր հաց ունիմ քեզի տալու:

— Կը ստե՛ս, Ահմէտ, — ըսաւ Շահը, — սեղանին վրայ լաւ կերակուրներ կան, տուր տէրվիշին բաժինը:

Ու այնքա՛ն բաղխեց, այնքա՛ն երգեց, այնքա՛ն աղաչեց, որ հնակարկատը, իսկապէս ո՛չ անգուլթ եւ ո՛չ ալ չար մարդ, դուռը բացաւ, տէրվիշին ներս մտցուց:

Շահը դա՛րձեալ հացին ձեռք չտուաւ:

— Այս ի՞նչ է Ահմէտ, — ըսաւ Շահը, — դուն խեղճ հնակարկատ մըն ես, Շահն ալ այդ արհեստը արգելեց, խորամանկութեան դիմեցիր, ֆերրաշ եղար, Շահը այդ ալ արգելեց, հիմա ըսէ ինձի, որտեղէ՞ն է այս ճաշը, չըլլա՞յ որ մուրացկանութեամբ կը զբաղուիս:

— Լսէ՛, տէրվիշ աղա, — զայրացաւ Ահմէտը, — ես մեծ հօրս որդին եմ, թէեւ աղքատ կը մեռնիմ, բայց ձեռք չեմ բանար: Իմ այս ճաշը լսէ՛ թէ ինչպէ՞ս գտած եմ: Հայրս հին եւ ժանգոտ սուր մը ունէր, բայց լաւ տեսակի, տարի պազար, երկաթը ծախեցի, կոթն ալ որպէս յիշատակ պահեցի, ես անոր դրամով այս ճաշը առի:

— Բայց չէ՞ որ սուրդ ահա այստեղ է:

— Այո՛, բայց երկաթին տեղը փայտ դնել տուի: Ահա՛ գաղտնիքը:

Շահը կուշտ ծիծաղեցաւ: Արդէն ան Ահմէտը սկսած էր սիրել եւ հաւնիլ:

Եւ բան մը չըսաւ, կերաւ, խմեց, երգեց ու օրհնեց եւ բարեկամաբար Ահմէտին բաժնուեցաւ:

Երրորդ օրը, Շահ-Աբաս, իր գահին վրայ նստելով հրամայեց երթալ եւ փնտռել քաղաքին մէջ որքան ֆերրաշներ կան, կամ նոյնիսկ մէկ օր ֆերրաշութիւն ընողներ կան, ժողվել եւ իր առաջ բերել իրենց հագուստներով եւ սուրերով:

Ու գացին նախարարները: Երեկոյեան դէմ երկար շարք մը ֆերրաշներ եկան եւ կեցան Շահին առջեւ:

Շահ-Աբաս նայեցաւ: Ահմէտն ալ անոնց մէջ էր իր փայտէ սուրով, որ պատեանի մէջն էր անշուշտ:

Եւ Շահը մտածեց նորէն զուարճանալ: Ու երբ Ղուրանը երկար կարդաց, յանկարծ գլուխը բարձրացուց, խստութեամբ նայեցաւ բոլորին, նայեցաւ Ահմէտին, դէմքը խիստ կնճռոտեց ու ըսաւ.

— Դո՛ւն, անունդ ի՞նչ է:

— Ահմէտ, քեզ ծառայ:

— Լաւ ուրեմն, Ահմէ՛տ, կողքիդ ընկերը հանգիստ չէ կանգնած, հանէ՛ սուրդ եւ կտրէ՛ անոր գլուխը:

Սարսափը տիրեց ամէնքին: Ահմէտ շփոթուեցաւ, սաստիկ գունատուեցաւ:

— Ձերդ մեծութիւն, — գոչեց ան ուժգին եւ քիչ մը ծաղրական, — ընկերս ահա շատ հանգիստ է կեցած, մի՛ հրամայեք ինծի անմեղ արիւն թափելու:

— Ինչո՞ւ, — որոտաց Շահը, — դուն կը համարձակիս հրամանս չկատարել: Շո՛ւտ, հանէ սուրդ եւ անոր գլուխը կտրէ:

Շահը միտքով կը զուարճանար, տեսնելով Ահմէտի շփոթութիւնը: Բայց հաշուի առած չէր Ահմէտի ճարպիկութիւնը:

Հնակարկատը երկրպագեց Շահին, փորձեց աղաչել, խընդրել, համոզել եւ այդ աւելի կը զուարճացնէր ինքնակալը:

— Կտրէ՛, — գոռաց Շահը, — կտրէ՛, թէ չէ քու գլուխդ կը կտրեն:

Ահմէտ տեսաւ, որ ուրիշ ճար չկայ: Ջխայտառակուելու համար շո՛ւտ հնարք մը գտաւ: Աչքերը երկինք բարձրացուց, աղօթեց ու գոչեց բարձրաձայն.

— Ո՛վ դուն արդար Աստուած եւ մեծ մարգարէ, կը տեսնէք, որ այստեղ կը ստիպեն ինծի անիրաւ բան ընելու: Եթէ ընկերս անմեղ է, թող սուրս պատեանին մէջ իսկոյն փայտ դառնայ:

Եւ մեծ ուժով սուրը դուրս քաշեց: Ամէնքը ապշեցան՝ սուրը փայտ դարձած էր:

Արքան այնքան ծիծաղեցաւ, շատ զուարճացաւ, հրամայեց իսկոյն Ահմէտին դատաւորի պաշտօն տալ եւ ըսաւ անոր.

— Ահմէտ, այժմ դատաւոր ես, յիշէ՛ փայտէ սուրդ եւ ամէն անգամ երբ կասկածի մէջ ըլլաս յանցաւորին համար, աղօթէ Աստուծոյ այնպէս, ինչպէս այժմ աղօթեցիր:

Կ'ըսուի թէ, Ահմէտը, մինչեւ իր խոր ծերութիւնը փայտէ սուրը միայն իր վրայ ունէր եւ երբեք չպատահեցաւ, որ փայտը երկաթի փոխէր, կամ նոյնիսկ ջարդէր:

Իսկ երբ մեռաւ, փայտէ սուրը հետը գերեզման դրին եւ պարսիկ յայտնի բանաստեղծ մը հետեւեալ տողերը արձանագրեց անոր շիրիմին վրայ.—

«Հանգիստ քեզ, արդա՛ր, բարի՛ դատաւոր,
Թէեւ մեծ որկոր ունէիր, խել՛ք՝ հնակարկատի,
Բայց կշիռդ հաւասար էր եւ սուրդ՝ փայտի...»:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, ՔԵՉ ԿԸ ՍՊԱՍԵՆՔ

Մարդկային արդարութիւնը հազարաւոր տարիներէ ի վեր յաճախ կը կորսուէր, փախչելով անարդարութեան ճիրաններէն: Եւ խոլսափելով զինք ծիւրող, պատէ ի պատ զարնող, լլկող անձերէն: Յաճախ կը փախչէր լեռները, պահուելով աշխարհիս հեռաւոր անկիւնները: Բայց ամէն անգամ, այսպէս կամ այնպէս կը յաջողուէին գտնել զայն, բռնել, վանդակի կամ անտուկի մէջ դնել, իրենց ուզածին պէս գործածել եւ անխղճօրէն չարչարել:

Վերջին անգամ սակայն, չես գիտեր ի՞նչ հնարքով, Արդարութեան յաջողուեցաւ բացառիկ վարպետութեամբ անհետանալ եւ այնքան լաւ պահուելու եցաւ, որ մարդիկ աղօթքով, ճարպիկութեամբ, ուժով կամ ոսկիով իսկ անկարող եղան գտնել զայն:

Սկսաւ մեծ իրարանցում: Առանց արդարութեան դժուար էր ապրիլ, մանաւանդ, որ անոր անհետանալովը կը բազմանային անմարդկային արարքներ եւ շատ աղտոտութիւններ, ինչպէս՝ կեղծաւորութիւն, անիրաւութիւն, խաբէութիւն, արիւնահեղութիւն, գազանութիւն, մարդասպանութիւն եւ ցեղասպանութիւն, զորոնք արդարօրէն կը դիմակազերծէր եւ պատիժի կ'ենթարկէր Արդարութիւնը:

Սոյն կացութեան ի տես, Արդարութիւնը փնտրելու ձեռնարկեց պատերազմիկ ազնուական մը: Շատ զօրք հաւաքեց, գունդ կազմեց եւ երդում ըրաւ, որ Արդարութիւնը ո՞ր ծակը մտած ըլլայ, պիտի հանէր, ձեռքն ու ոտքը կապած պիտի ստիպէր, որ իր նախախնամական եւ մարդկային պաշտօնը շարունակէ կատարել:

Այս պատերազմիկ ազնուականը, այդ պատճառով իսկ, ոտնակոխ ըրաւ գիւղ ու քաղաք, արիւն սփռելով դաշտ ու ձոր, ջարդեց, քանդեց եւ աւերեց ամէն ինչ, շարունակելով իր վայրագութիւնները, յոլսալով բռնել Արդարութիւնը:

Արդարութիւնը գտնելու համար ճանապարհ ինկաւ շատ հարուստ մեծատուն մը: Ոսկի եւ արծաթ, զարդ ու զարդարանք տեղաւորեց ուղտերու վրայ եւ վստահելով իր հարստութեան,

տունէն դուրս ելաւ, իր հետ ունենալով նաեւ քանի մը սիրուն կիներ, թիկնապահներ եւ ծառաներ:

— Կը տեսնէ՛ք, — կը պնդէր ան, — Արդարութիւնը ոսկիովս պիտի գնեմ, կիներով պիտի հրապուրեմ եւ սնտուկիս մէջ դրած՝ ժողովուրդիս պիտի ներկայացնեմ:

Ահա այսպէս, զինուորականութիւնը եւ հարստութիւնը գացին Արդարութիւնը որոնելու: Եւ տակաւին կ'երթան...:

Այժմ տեսնենք, թէ ո՞վ էր այն երրորդ անձը, որ խեղճուկրակ, ցնցոտիներ հագած, ճակատը վիշտերով խորախոր ակօսած, մտածեց ելլել Արդարութիւնը փնտռելու:

Ըսենք ազնուականը զէնք ու զրահ ունէր, հարուստը՝ ոսկի եւ արծաթ, իսկ սա երրորդ անձը ի՞նչ ունէր, ինչո՞վ պիտի գրտնէր Արդարութիւնը, թշուառ եւ աղքատ անձ մըն էր ան: Որպէս ընծայ ունէր չնչին սրուակ մը, որ ամուր կերպով սեղմած էր կուրծքին եւ յամառութեամբ ճանապարհ ինկած էր: Բանն այն է, որ սրուակը լեցուցած էր չլսուած հեղուկով մը՝ Որբէն՝ արցունք մը, ինկողէն՝ հառաչ մը, Գործաւորէն՝ դառն քրտինք:

Մէկ խօսքով, վշտերու եւ ցաւերու արցունքներէն մէկական կաթիլ ժողված եւ լեցուցած էր, շիշը պինդ փակած էր եւ կը կարծէր, որ տարածը անպայման պիտի գրաւէր Արդարութեան ուշադրութիւնը:

Եւ քալելու սկսած էր անցնելով մեծ-մեծ քաղաքներէն, խուլ հեռաւոր քաղաքներէն, կը քալէր անխոնջ, ձորերէն կ'իջնէր, լեռներէն վեր կ'ելլէր, ամէն քայլափոխին կանգ առնելով բարձր ձայնով կը կանչէր.

— Ո՛ւր ես, Արդարութիւն:

Արդարութիւն չկար: Ո՛չ կ'երեւէր, ո՛չ ալ ձայն կը հանէր:

Անօթի-ծարաւ, յոգնած, տրտում-տխուր, թափառեցաւ խեղճ մարդը, սրտին վրայ սեղմած թանկարժէք սրուակը, որուն մէջի հեղուկը սկսած էր եռալ եւ տաքնալ:

Արդարութիւնը սակայն չխղճաց անոր ալ: Ո՛չ երեւաց, ո՛չ ալ իր գոյութիւնը յայտնեց:

Վերջապէս, երբ յուսաբեկ եւ ուժասպառ հասած էր լերան կատարին, նստաւ ծառի մը վրայ եւ սկսաւ մտածել, թէ իզուր էր Արդարութիւն որոնելը, բան մը, որ ան նոյնիսկ թշուառէն կը խուսափէր:

Եւ երբ այդպէս մտածեց, բարկացած հանեց ծոցի սրուակը ու զարկաւ ծառին:

— Գնա՛ ոչնչացի՛ր, — գոչեց ան, — ի դուր են բոլոր վիշտերն ու արցունքները: Արդարութիւնը թշուառին չի սիրեր:

Բայց հագիւ թէ սրուակը փշրուած էր, լսուեցաւ ահեղ որոտում մը: Հոսած արցունքներէն թանձր ծուխ բարձրացաւ, փրփրած, ոլորուեցաւ եւ անոր մէջէն ահաբեկ թշուառին առաջ դուրս ցցուեցաւ ահեղ հսկայ մը:

Թշուառ անձը սարսափահար ինկաւ երեսի վրայ:

— Ելի՛ր, — կանչեց հսկան մեծածայն, — ելի՛ր եւ մի՛ վախնար:

— Ո՞վ ես դուն, ահեղ ոգի, — հարցուց թշուառը:

— Ե՞ս, — գոչեց հսկան բարձրածայն: — Ես բողոքն եմ, որ ծնայ այն թափած արցունքներէն եւ որ աշխարհ պիտի բերեմ անյայտացած Արդարութիւնը ու նայիր...:

Ապա, արշալոյսի կարմրորակ լոյսի մէջ ցցուեցաւ հսկայի վեհ հասակը, դարձած դէպի բարձրութիւնները, ուր սկսած էր փոթորիկ մը եւ ուր գետինն ամբողջ կը դողար դղրդիւնով:

Եւ հեռուն, հսկայի պարզած ձեռքի կողմը, կոյտ մը մաքուր ամպերու բարձունքէն, երեւան եկաւ թաքնուած Արդարութիւնը, խորունկ, տխուր հայեացքով, առանց կշիռքի, առանց մեծ սուրի, որոնք նկարուած կ'ըլլային Արդարութիւնը խորհրդանշող դիցուհիով՝ աչքերը կապած, մէկ ձեռքով սուր եւ միւս ձեռքով կշիռք բռնած:

— Ե՛կ Արդարութիւն, — կանչեց Բողոքը. — ես ծնած եմ եւ իմ ձայնը թող քեզի համար կշիռք եւ սուր դառնայ: Ե՛կ Արդարութիւն:

Բայց Արդարութիւնն անշարժ ու տխուր նայեցաւ անոր, նայեցաւ թշուառին եւ ըսաւ.

— Դեռ ո՛չ... դեռ դուն փոքր ես, գնա՛ քայէ, կուտակէ արցունք, կուտակէ վիշտեր, մեծցիր ովկիանի նման, կատաղէ որպէս հեղեղատ եւ այն ժամանակ միայն ես կու գամ իմ սուրով, իմ կշիռքով:

Ապա, ամպը սահեցաւ եւ Արդարութիւնը նորէն անհետացաւ իր անմատչելի բարձրութեան մէջ...:

Այդ օրուընէ ի վեր, պատերազմիկ զօրեղը արիւնի մէջ կ'որոնէ Արդարութիւնը, հարուստը՝ ոսկիի, եւ թշուառը, անզօրը՝ նստած իր վիշտերուն մօտ, արցունքներով կը մեծցնէ Բողոքը, որ ան վերակոչէ աշխարհի մէջ կորսուած Արդարութիւնը:

Հայ ժողովուրդը, պատմական օրերէն ի վեր, մանաւանդ

Հայոց Յեղասպանութեան թուականէն ի վեր, փնտռելու ելած է Արդարութիւնը, որպէսզի ան գայ իր կշիռքով եւ սուրով տէր կանգնի հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն եւ որպէս բողոք հայ ժողովուրդի ձայնը լսելի դարձնէ միջազգային դատարաններուն եւ Արդարութեան ատեաններուն, վերջ դնելով հզօր պետութիւններու ճնշումներուն եւ արիւնահեղութիւններուն հայ ժողովուրդին եւ տկար ժողովուրդներուն վրայ:

Արդարութի՛ւն, քեզ կը սպասենք, մեր բողոքի ցոյցերով եւ պահանջատիրական անխախտ կամքով:



ԽՈՇՈՐ ԿՂՊԱՆՔԸ

Թեհրան բնակող պարսիկ նկարիչ Ալի Խտըրը, մեռնելէ առաջ ծրագրեց լաւ բան մը նկարել եւ յետոյ մեռնիլ:

Այս մտքով ալ ան սկսաւ ճամբորդութիւններ կատարել եւ նկարի նիւթ որոնել: Ան կ'ուզէր գտնել նոր, ցանկալի եւ տարօրինակ նիւթ մը, որ զարմանցնէ նկարչական ասպարէզով զբաղող նկարիչները եւ արուեստասէրները:

Մտաւ խոր ձորեր, պրպտեց իւրաքանչիւր խուլ անկիւն, մագլցեցաւ լեռներն ի վեր, աչքի տակ առաւ շատ տեսարաններ, բայց նկատի առնելով որ շատ տեսարաններ տեսած էր, նկարիչի իր աչքերէն ոչինչ չէր խուսափած, այդ պատճառով չէր կրնար գտնել առարկայ մը, տեսարան մը, որ ըլլար նորութիւն մը եւ գրգռէր իր ցանկութիւնը:

Եւ մեր արուեստագէտ նկարիչը տխուր էր: Անտառի ոգին, լեռներու հուրինները եւ ծովի ձուկ-կանայք նոյնիսկ անկարող եղան նկարիչին նիւթ տալ, նիւթ թելադրել: Ի գուր ան անվհատութեամբ ոտքի տակ առած էր բազմաթիւ երկիրներ եւ զինք հմայող ոչինչ գտած էր:

Եւ ան կը տխրէր եւ կը յուսահատէր:

Այսպէս սրտաբեկ ան կը թափառէր Շիրագի դաշտերու եւ լեռներու մէջ, երբ հասաւ գերեզմանատուն մը: Մտաւ այնտեղ, ուր բացառիկ շիրիմ մը նկատեց եւ կանգնեցաւ հոն:

Մեծ շէնք էր այդ շիրիմը՝ բարձր պատերով: Բայց ինչ որ զարմացուց նկարիչը, այն խոշոր կղպանքն էր, որ դրուած էր շիրիմին փակուած դրան վրայ:

Դրան ճակատին ալ արաբական տառերով գրուած էր.— «Մտիր այստեղ եւ կը գտնես ինչ որ կը փնտռես անդադար»:

Մեծ նկարիչը զայրացած բացազանչեց.

— Ո՞ր տխմարն է արդեօք գրած այս տողերը: Միթէ գերեզմանի մէջ է միայն, որ մարդ կարող է գտնել իր որոնածը:

Յետոյ ծիծաղելով ըսաւ.

— Այս անպայման մեռնողի մը խօսքն է: Չկարողանալով ապրիլ, կամեցած էր մահը ցանկալի դարձնել, — ու մէջքը դարձուց հեռանալու:

Բայց ստիպուած միտքէն չէր կրնար հեռացնել վերոյիշեալ գրութիւնը:

Քանի մը վայրկեան մտածելէ ետք, քանի մը քայլ մօտեցաւ դէպի խոշոր կղզանքը, նայեցաւ կղզանքին եւ ըսաւ.

— Զարմանալի է, ինչո՞ւ գոցած են շիրիմին դուռը, եւ յետոյ, ի՞նչ մտքով դրան վրայ դրած են այսպիսի մեծ կղզանք, որ միայն բանտերու ու գանձարաններու դուռներուն վրայ կը դրուին:

Եւ ան նորէն վեր նայեցաւ ու կարդաց.— «Մտիր այստեղ եւ կը գտնես ինչ որ կը փնտռես անդադար»:

— Մտնենք, — մտածեց ան, — գուցէ իրապէս նոր բան կայ թաքնուած այդ խոշոր կղզանքի ետեւը: Թշուառութի՞ւն կամ գիտութի՞ւն արդեօք, թէ՞ գանձ կամ իշխանութիւն...:

Շարժեց կղզանքը, շատ ծանր էր: Մեծ քար մը վերցուց եւ սկսաւ զարնել կղզանքին, փորձելով կոտրել զայն: Հետաքրքրուածութիւնը հետզհետէ նկարիչին ուժ կու տար:

Երկար չարչարուեցաւ եւ երեկոյեան վերջապէս կղզանքը բացուեցաւ, առիթ տալով ազատօրէն մտնելու ներս:

Յոգնած եւ չարչարուած նկարիչը քարը ձեռքէն ձգեց, քայլ մը առաւ, ներս մտաւ ու զարմանքի մեծ աղաղակ մը արձակեց: Բացուածքէն կ'երեւէին Շիրազի տուները եւ հիանալի պարտէզներն ու այգիները:

Շիրիմը միայն երեք պատ ունէր: Ետեւի պատը չէր շինուած: Իսկ շիրիմին ներքին տեսքը եւ փոշին կ'ապացուցանէր, որ այնտեղ առաջին ոտք կոխողը նկարիչն էր, շիրիմին կղզանքը դրուելէ ետք:

Ինչպէ՛ս... ինչո՞ւ այս այլանդակ շինութիւնը...:

Շինել չէնք մը միայն երեք պատով: Ետեւի պատին տեղը բաց ձգել եւ ապա դրան վրայ մեծ կղզանք մը դնել: Ինչո՞ւ:

— Լաւ ծաղրուեցայ, — ճակատը կնճռտեց արուեստագէտ նկարիչը, — եւ սակայն դրան ճակատին գրուածը չկատարուեցաւ, որովհետեւ փնտռածս ահա չեմ գտներ:

Հագիւ թէ այսպէս մտածած էր, երբ աչքին զարկաւ պատին վրայ քանդակուած հետեւեալ երեք տողերը, ուր գրուած էր.—

«Ամէն ինչ նոր է աշխարհիս վրայ, սակայն ոչինչ նոր չէ:

«Զեռք բերելու դժուարութիւնը՝ առարկան ցանկալի՛ կը դարձնէ:

«Անգամ մը ձեռք բերուած՝ ան կը դառնայ սովորական...»:

Նկարիչը ընկղմեցաւ մտածութեան մէջ. այդ տողերը շատ խիստ ազդեցին իր վրայ:

Գտած էր իր փնտռածը, բայց չէր գտած, որովհետեւ եթէ
գտնէր՝ փնտռածը այդ չէր ըլլար:

Ուրեմն կը փնտռէր այնպիսի բան մը, որ պիտի չգտնէր:

Սկսած էր հասկնալ եղելութիւնը:

Դուրս եկաւ շիրիմէն, գնաց տուն, ձեռքն առաւ վրձինը եւ
նստաւ կտաւի առջեւը:

Նկարեց շիրիմը երեք պատով, ետեւի բացուածքով: Նկարեց
դուռը եւ անոր վրայ տեղաւորեց խոշոր երկաթեայ կղպանքը:
Յետոյ, փոխանակ գրեւու շիրիմի վրայի խօսքերը, գրեց հետեւ-
եալը.—

«Ցանկալի առարկան կը նմանի այս շիրիմին, երեւ պա-
տով, ետեւի բացուածքով եւ դրան վրայ դրուած խոշոր կղպան-
քով»:



ՈՒԺԻ ՆԵՐՇՆՉՍԱՆ ԱՂԲԻՒՐԸ

Կը պատմուի, որ ժամանակին Հնդկաստանի մէջ Թագաւոր մը կար, որ շատ կը սիրէր մեծ շէնքեր ունենալ եւ այդ նպատակով բարձր վճարումով ճարտարապետներ կը հրաւիրէր, անոնց Թելադրելով իր փափաքը՝ շինել այնպիսի ոճով եւ գեղեցկութեամբ շէնքեր, որ պատիւ բերէր իր Թագաւորութեան եւ հիացում՝ քաղաքը այցելող զբօսաշրջիկներուն:

Թագաւորը շատ կը սիրէր շինել տալ նաեւ պալատներ, մըզկիթներ, կրօնական Մատրասաներ, աշտարակներ, բուրգեր եւ պարտէզներ, եւ ընդհանրապէս կ'երթար դիտելու գործաւորներուն աշխատանքը, քաջալերել, նուէրներ տալ անոնց, ժամերով կենալ եւ անոնց գործը զննել:

Օր մըն ալ, երբ վեզիրներուն հետ մէկ կողմ կեցած կը դիտէր, թէ ինչպէ՞ս գործաւորները խոշոր քարերը շալկած ու կըքուած, քրտնաթոր կը բարձրանային շէնքի աստիճաններէն վեր, նկատեց որ գործաւորներէն մէկը առանց օգնութեան խոշոր քարերը առանձին շալկած, ուրախ ու զուարթ, երգելով ու եռանդով շէնք կը բարձրանար, առանց յոգնութեան նշաններ ցոյց տալու:

Հուժկու եւ հսկայ մը չէր այդ աշխատաւորը, սակայն, անդին, ուրիշ աշխատաւորներ կը տնքային ծանր բեռան տակ: Իսկ հուժկու գործաւորներ հագիւ կը շարժէին, տխուր ու մռայլ եւ դանդաղ քայլերով շէնք կը բարձրանային:

Իսկ միւս աշխատաւորը, արագութեամբ ու դիւրութեամբ, քարը շալկելով, զուարթ երգ մը հնչեցնելով ու ժպիտը դէմքին՝ դէպի վեր կ'ելլէր:

Թագաւորը այս բոլորը տեսնելով շատ զարմացաւ: Ո՞վ էր այդ մարդը, որ կը կատարէր բացառիկ աշխատանք, ամէնամեծ քարերը կը շալկէր, երգը միշտ լսելի, առանց դանգատի եւ հաւաչի կ'աշխատէր անընդհատ:

Թագաւորը կը բաղդատէր այս բացառիկ գործաւորին մարմինը միւս գործաւորներու մարմիններուն հետ եւ անոնց աշխատանքներուն հետ, չէր կրնար այս գաղտնիքը լուծել: Թագաւորը կը մտածէր, թէ այս ծանր գործը աշխատողին ուժը ուրկէ՞ կրնայ գալ, երբ իրմէ շատ հսկայ եւ հուժկու գործաւորները անոր գործը չեն կրնար կատարել, իսկ հասարակ մարմնով եւ կարողութեամբ միւս գործաւորը առանց յոգնութեան, զուար-

Թուլթեամբ եւ ուրախութեամբ իր գործը կը կատարէր: Ուրկէ՞ կու գար իրեն այս բացառիկ ուժը, գուարթուլթիւնը եւ դիմաց-կունուլթիւնը: Ուրկէ՞ կու գար անոր տկար մարմնին ուժ տուող եւ տոկուն դարձնող եւ շատ քաջերէն, լայնալանջերէն աւելի գործունեայ, աւելի աշխոյժ ու կտրիճ դարձնողը:

— Խօսի՛ր, ո՛վ վեզիր, — դարձաւ թագաւորը իր վեզիրին: — Բացատրէ տեսնենք, ի՞նչն է պատճառը այս գործաւորին ուժին, գուարթուլթեան եւ տոկունութեան իսկուլթիւնն ու գաղտնիքը: Ի՞նչն է որ միւս, այդ բոլոր հուժկու մարդիկ կը տնքան, կը հա-ռաչեն աւելի թեթեւ, մանր գործերէն, աւելի փոքր քարեր շալ-կելէն, իսկ այս գործաւորը՝ երեւոյթով այնքա՛ն թուլակազմ, այնքա՛ն ողորմելի, սակայն միշտ զօրաւոր, տոկուն, միշտ ու-րախ-գուարթ եւ միշտ արագաշարժ:

Վեզիրը լռեց, շատ խոր մտածեց եւ չկարողացաւ ճշգրիտ պատասխան մը տալ:

— Խօսեցէ՛ք եւ դուք, իմ խորհրդականնե՛ր, — հարցուց թա-գաւորը իր միւս վեզիրներուն, — ձեզմէ ով որ լուծէ այս գաղտ-նիքը, կ'ըլլայ իմ սիրելին եւ իմ մտերիմը:

Բայց ո՞վ կրնայ ըսել այն՝ ինչ որ միայն Աստուած գիտէր եւ ինքը՝ գործաւորը:

— Տէր իմ, — խօսեցաւ վեզիր մը, — հրամայէ այդ գործաւո-րին աւելի ծանր գործ տալ, տեսնենք ան նոյնպէս կ'երգէ՞ աշ-խատելու ատեն եւ այդպէս ուրախ՝ քարեր կը կրէ՞: Թերեւս ան աւելի շատ ուժեղ է, քան ինչպէս որ կ'երեւայ:

Ու թագաւորը հրամայեց, որ քարեղէն սիւնի մը պատուան-դանը զօրաւոր գործաւորը թող կանգնեցնէ:

Գործաւորը մօտեցաւ, նայեցաւ խոշոր քարին եւ հզօր ու մեծ Աստուծոյ անունը կանչեց, ժպտաց, կուացաւ եւ շարժումով մը գլորեց պատուանդանը սիւնին ստորոտը, յետոյ սրբեց քրտնաթոր դէմքը եւ ինչպէս միշտ, երգելով բարձրացուց եւ դրաւ սիւնին տակ:

Բոլորը ապշած էին: Թագաւորը եւ վեզիրները խորհրդակ-ցեցան եւ եկան այն եզրակացութեան, որ բան մը գոյուլթիւն ունէր, որով օժտուած էր հասարակ գործաւորը, այդպիսի ծանր պատուանդան մը առանց դժուարութեան դնելու սիւնին տակ:

Ապշած թագաւորը իր մօտ կանչեց քաջ եւ զօրաւոր գործա-ւորը, դրամ տուաւ, գովեց եւ ապա հարցուց.

— Ուժդ ուրկէ՞ է, կտրիճ գործաւոր:

— Չեմ գիտեր, տէր արքայ, — ժպտալով պատասխանեց կրտսերի՞ գործաւորը: — Ես այնքան գիտեմ, որ երջանիկ եմ, որեւէ վիշտ չունիմ, կը գործեմ ուրախութեամբ եւ կ'ապրիմ ուրախ...:

Արքան այս խօսքերէն բան մը չհասկցաւ ու հրամայեց իր վեզիրներու խորհուրդին ժողովել, մտածել, փնտռել եւ գտնել գործաւորին ուժին գաղտնիքը եւ անոնց հինգ օր պայմանաժամ տուաւ գաղտնիքը բացայայտելու:

Մինչ կը խորհէին պետութեան վեզիրները, վեզիրներէն ալեւոր վեզիր մը, որ լսած էր գործաւորին տուած պատասխանները, հրաման խնդրեց հեռանալ, մինչեւ երեկոյ Հասանի (այդ էր գործաւորին անունը) գործը դիտելէն ետք մօտեցաւ անոր, ապա ընկերացաւ եւ ուզեց ըլլալ անոր տունը:

— Տէր իմ, — ըսաւ Հասան, — ես աղքատ մարդ մըն եմ, խրճիթ մը ունիմ: Կը վայելէ՞ որ դուն այդ խրճիթը մտնես եւ իմ խեղճուկ եւ չոր ընթրիքիս մասնակցիս:

— Հոգ չէ իմ որդի, ես կ'ուզեմ տեսնել խրճիթդ ու կիւնդ, գաւազնդ եւ կենցաղդ, կ'ուզեմ տեսնել թէ իրա՞ւ վիշտ չունիս եւ երջանիկ ես, իրա՞ւ միշտ զուարթ ես եւ ուրախութեամբ կ'երգես:

Հասան, ստիպուած, ծերունի վեզիրը իր տունը տարաւ: Երբ ներս կը մտնէին, դրան առջեւ երեւաց չքնաղ, երիտասարդ կին մը, որ սիրալիբ ժպտը դէմքին, հրեշտականման մանուկ մը գիրկին՝ ընդառաջ եկաւ, գրկեց ամուսինը, անկեղծ սիրով համբուրեց, գիրկը տուաւ մանուկը, յետոյ միշտ զուարթ, ներս հըրամցուց ամուսինին եւ հիւր վեզիրին, ընթրիքը պատրաստեց եւ սքանչելի խնամքով եւ սիրով կերակրեց, գգուեց իր ամուսինը, որ ծերունի վեզիրը իր ամբողջ կեանքին ընթացքին այդպիսի յարգանք եւ սէր չէր տեսած եւ շատ յուզուեցաւ:

Երբ մեծ գուարճութեամբ եւ գոհունակութեամբ ընթրեցին, Հասան գրկեց մանուկը, անոր հետ խաղեր սարքեց, գինք զըւարճացուց, իսկ մանուկը, իր անմեղ եւ գուարթ ծիծաղով խրճիթը լեցուց, վեզիրին դիւթեց: Հասանին կինը, այդ սիրող, պաշտող, չքնաղ, յոգնած ամուսինին այնքան գորովով, այնքան ջերմ սիրով կը զբաղեցնէր, որ ալեւոր վեզիրը գմայլած գոչեց.

— Վկայ է Աստուած, վկայ՝ Մարգարէն, որ այսքան պատուական ու սիրող կին ես երբե՛ք չեմ տեսած:

— Եւ այնքան իր կինը սիրող եւ պաշտող ամուսին ալ, — ալեւցուց կինը՝ գլուխը ամուսինին կրծքին վրայ դրած: — Ամու-

սինս զիս շատ կը սիրէ, մենք երջանիկ ենք, գոհ ենք մեր կեանքէն եւ որեւէ դժգոհութիւն չունինք: Աշխարհի անիրաւութիւնները մեր դռնէն ներս չեն մտներ վախնալով սիրոյ էութենէն, համերաշխութենէն: Յաւերը կը խուսափին, վիշտերը կը հալածուին: Մեր բժիշկը սէրն է, մեր փրկիչը սէրն է...:

— Ո՛վ կին, վկայ է Աստուած, — ըսաւ վեզիրը, — վկայ Անոր Մարգարէն, որ դուն իրաւունք ունիս. չկայ աւելի մեծ բժիշկ, չկայ մեծ քաջալերիչ՝ քան սէրը, անկեղծ ու վառ, մշտատեւ սէրը, որ իր ժպիտով հերոս կը շինէ, քարեր կը փշրէ, արգելքները կը ջարդէ եւ անոր առջեւ աշխարհը անգոր է, ցաւը թզուկ մը...: Իրաւունք ունիս, յարգելի կին: Ես այժմ հասկցայ թէ մարդուդ ուժը ուրկէ՛ էր: Ուժը սիրոյ ծնունդ է եւ սէրն է միակ այն մեծ ուժը, որ կարող է լեռներ շարժել, աշխարհը փոխել, բոլոր անիրաւութիւնները անգոր դարձնել եւ ամէն մէկ փուշ՝ վարդի փոխանակել...:

Ալեւոր վեզիրը իր տպաւորութիւնները հաղորդելէ ետք, հեռացած ելաւ, գնաց եւ ամէն բան պատմեց հզօր արքային:

Արքան զարմացաւ եւ չհաւատաց: Չէր տեսած երբեք անկեղծ սէր, որովհետեւ երբեք չէր սիրուած, այլ միշտ վախ ազդած էր: Չէր հասկնար եւ ըմբռներ նման ուժի մը գոյութիւնը, որովհետեւ զինք երբեք չէին սիրեր, այլ՝ միշտ շողոքորթած են:

— Խելքդ կորսնցուցած ես, տխմա՛ր ծերունի, — գոչեց արքան, — մի՞թէ կը կարծես, որ Հասանին ուժը այդ փոխադարձ սիրոյ հետեւանքով է: Ո՛վ է աւելի սիրուած՝ քան ես, չէ՞ որ այս ժողովուրդը կը խոնարհի ակնարկիս առաջ, չէ՞ որ ես ալ կանայք ունիմ եւ շատ որդիներ: Մի՞թէ պիտի ըսես, որ անոնցմէ ոչ մէկը զիս չի սիրեր:

Ծերունի վեզիրը խոնարհեցաւ, իր կեանքէն վախնալով եւ խոնարհութեամբ լուռ կեցաւ:

— Գնա՛, գնա՛, — արհամարհանքով հեռացուց ծեր վեզիրին արքան, — դուն երազող ես, դուն ծերացած ես... եւ կը տեսնես, որ սխալուած ես: Ահա ես կը հրամայեմ, որ այդ կնոջը եւ անոր որդիին հարէմս քաշես. կինը եթէ ըսածիդ պէս գեղեցիկ է, ինձի կը պահեմ եւ պիտի տեսնես, որ այդպիսով ոչինչ չի պակսիր Հասանի ուժէն: Ու հրամայեց:

Հինգ ձիաւորներ իսկոյն Հասանի տունը շրջապատեցին, դուռը կոտրեցին, ներս մտան գիշերով, ամէն բան տակնուվրայ ըրին եւ Հասանի կինն ու գաւակը հարէմ տարին:

Միւս օրը, առաւօտեան, արքան կանգնած էր նոյն շէնքին մօտ, երբ Հասանը տխուր եւ արտասուլաթոր աշխատանքի եկաւ:

Արքան եւ վեզիրները ժողվուած անոր կը սպասէին: Հասան գործի սկսաւ: Կռացաւ մեծ քար մը շարժելու տեղէն, չկարողացաւ, փորձեց աւելի փոքրը, բայց թեւերը կարկամած էին, ծունկերը ծալուեցան, փոքր քարն իսկ տեղէն չարժել չկարողացաւ:

Ու ան բարձրացաւ, յուսահատաբար ձեռքերը դէպի վար իջեցուց, յետոյ դետին կծկուեցաւ եւ աղիողորմ ու սրտապատառ՝ հառաչեց ու ըսաւ.

— Ա՛հ, ալ ուժ չմնաց...:



ԱՊԵՐԱԽՏ ՉԱԻԱԿԸ

1958-ին, անակնկալօրէն սկսան Լիբանանի ամբողջ տարածքին, այդ օրերու Լիբանանի նախագահ Քամիլ Շամունի վարչակարգին դէմ ըմբոստական շարժումները, որոնք վերածուեցան զինեալ ապստամբութեան, իսլամական ծայրայեղ ուժերու կողմէ:

Պատերազմական այդ շրջանին մենք կը բնակէինք Թրիփոլի քաղաքի Ռիատ Սոլհ թաղամասին մէջ, իսկ քենեկալիս՝ Սարգիս Կոնճեանի ընտանիքը մեր տունէն շուրջ 200 մետր դէպի հարաւ, Հ. Յ. Դաշնակցութեան ակումբին մօտ:

Թէեւ ապստամբութեան եւ ռմբակոծութիւններուն ֆիզիքական վնասներուն չէինք ենթարկուեր, սակայն, երկուստեք արձակուած ռմբակոծութիւններու եւ հրաձգութիւններու ճայները ահ ու սարսափ կը տարածէին ամէնուրեք, արգելք դառնալով զիշերները մեր հանգիստ քնանալուն:

Թրիփոլի կռիւները տեղի կ'ունենային քաղաքին հիւսիսը, Պապ Թիպպանէ կոչուող իսլամական շրջանէն, դէպի քաղաքի կեդրոն թէլի շրջանէն մինչեւ քաղաքի մուտքի Պահասս կեդրոնի հասնող ճամբուն վրայ հաստատուած զինուորական մարտկոցներուն վրայ, պատճառ դառնալով վախի, սարսափի եւ բազմաթիւ քաղաքացիներու մահուան, վիրաւորուելուն եւ շէնքերու քանդումին:

Երբեմն կը պատահէր, որ քանի մը ժամ հանդարտութիւն տիրէ եւ ռմբակոծումները դադրին, այդ պարագային քենեկալս մտահոգ կ'ըսէր, թէ խաղաղութիւնը խորհրդաւոր է եւ կը սպասուի, որ շուտով ռմբակոծումները աւելի սաստկութեամբ պիտի սկսին:

Եւ այս պայմաններուն մէջ, զրկուած բազմաթիւ կենսասրնունդներէն, ձեւով մը կ'ապրէինք, միշտ յուսալով, որ այս վիճակը եւ Լիբանանի ժողովուրդին տառապանքը վերջ կը գտնէ օր մը եւ սպասուած խաղաղութիւնը եւ հասկացողութիւնը կը տիրէ անպայման, վերջ տալով անպատուաբեր կռիւներուն:

Բայց ես ստիպուած էի աշխատիլ, ապրելու եւ ապրեցնելու համար ընտանիքս, ամէն առտու, մութնուրուսուն, անտեսելով պատահելիք վտանգները, առաւօտեան աղօթքս արտասանելով, թէլ հրապարակէն փոքր հանրակառքը առնելով կ'երթայի Թրիփոլիէն շուրջ 20 քիլոմետր դէպի Պէյրութ գացող ճամբուն վրայ

Շեքքա գիւղաքաղաքի կրաղիւսի գործարանը, ուր ստանձնած էի ելեկտրական բաժնի պատասխանատուութիւնը:

Երեկոյեան, նոյն ձեւով տուն կու գայի, երբեմն կրակոցնե-րու տարափին տակ, միշտ խաչակնքելով եւ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը արտասանելով:

Այն ատեն միակ գաւակս՝ Անդրանիկը, չորս տարեկան, կա-րօտով գիրկս կը նետուէր եւ մոռցնել կու տար օրուան յոգնու-թիւններս:

Թրիփոլի մեր տան մօտիկ կը բնակէր այրի կին մը, որուն որպէս անուն կը կոչէին Ըմ Իլիաս, բուն անունը չէինք գիտեր:

Ես եւ կինս՝ Շաքէն, Հալէպ ծնած եւ մեծցած ըլլալով, լաւ ա-րաբերէն կը խօսէինք եւ այդ պատճառով տիկին Ըմ Իլիաս, իր ազատ ժամերուն, մեզի կ'այցելէր, մանչս՝ Անդրանիկը սիրելու եւ կեանքի փոփոխութիւն ունենալու համար:

Մեզի տուած այցելութիւններուն ընթացքին տիրութեամբ ու ցաւով կը պատմէր իր ամուսնին երիտասարդ տարիքին մահ-ուընէ ետք իր ապրած ու անցուցած տառապագին օրերուն մա-սին, իր գաւակին՝ տասը տարեկան էտմոնին հոգ տանելու, հոգա-լով մանաւանդ անոր դպրոցական ծախսերը:

Ամուսինէն ժառանգած փոքր գումարը երկու տարիէն ըս-պառած էր եւ ինք ստիպուած հարուստներու տուները ծառայե-լով, անոնց լուացքները լուալով ձեւով մը ապրած էր, ծառայած տուներու տանտիրուհիներու կարգ մը տեղի-անտեղի քննա-դատութիւններուն եւ վիրաւորական խօսքերուն դիմանալով:

Ըմ Իլիաս այս բոլորը լալով կը պատմէր, աւելցնելով, որ իր միակ որդիին ապրուստին եւ ուսումին համար որոշած էր ամէն տեսակ դժուարութիւններու դիմադրել, նոյնիսկ մերժելով իր ձեռքը խնդրող բազմաթիւ թեկնածուները, որոնք պատրաստ էին զինք փրկելու այրի կնոջ վիճակէն, հոգալով նաեւ իր գաւ-ակին՝ էտմոնին ուսանողական ծախսերը:

Ըմ Իլիաս հպարտօրէն միշտ մերժած էր նման առաջարկներ, շարունակելով իր ծառայական ծանր գործերը, միշտ յոյս ունե-նալով, որ իր մանչը կը մեծնայ, համալսարան կ'աւարտէ, կ'ա-մուսնանայ եւ տէր կը կանգնի իր յոգնաբեկ եւ ծերունի մօրը, գնահատելով մօրը մայրական բացառիկ գոհողութիւնները՝ ծննդեան օրէն սկսեալ մինչեւ իր ուսման աւարտը:

Ըմ Իլիաս «Անդրանիկը կարօտցայ» ըսելով մեզի կու գար: Միասին հայկական սուրճ կը խմէինք եւ այդ միջոցին կը սկսէր

պատմել իր հանգուցեալ ամուսինին հետ ապրած շուրջ տասը տարիներու երջանիկ օրերէն եւ անոր ունեցած քաղցկեղ (քանսէր) հիւանդութեան ճիրաններուն մէջ ունեցած ցաւերուն հետեւանքով անտանելի տառապանքներուն մասին:

Մենք կ'ուզէինք մեր կարողութեան չափով մխիթարել զինք, իրեն պատմելով նման անբախտութիւն ունեցող կարգ մը մարդոց կեանքէն, սակայն անկարելի կ'ըլլար թեթեւցնել անոր ունեցած խոր վիշտը, պատճառաբանելով որ իր տղան վստահաբար ներկայիս մեծցած է եւ հաւանաբար յաճախ զինք կ'այցելէ եւ կը հոգայ իր ծախսերը:

Իր տղուն մասին գրեթէ չէր խօսած: Մեր անդրադարձը տրդուն մասին, նոր յուզումի եւ լացի դուռ բացաւ եւ հետեւեալը պատմեց.—

«Ամուսինիս մեռնելէն վերջ, ինչպէս նախապէս պատմած եմ, մեր խնայողական գումարներուն սպառումէն ետք, ստիպուած հարուստ ընտանիքներու տուներուն ծառայելով ապրեցանք, մինչեւ զաւակս աւարտեց Թրիփոլիի Փրանսական երկրորդական վարժարանը: Տղաս կ'ուզէր իր ուսումը շարունակել եւ համալսարանական կրթութիւն ստանալ: Սակայն համալսարանական ուսումը մեծ ծախսերու ու թոշակի կը նայէր: Ջաւակս՝ էտմոնը կ'ուզէր իր ուսումը շարունակել Ֆրանսա, Փարիզի Փրանսական բժշկական համալսարանին մէջ: Ի՞նչ կրնայի ընել. չունէինք ոեւէ ազգական կամ բարեկամ՝ նման բարեգործութիւն ընելու յանձնարարութիւն ստանձնող: Ջաւակս կը պնդէր, կը խնդրէր, կ'աղաչէր որ անպայման միջոցներ գտնեմ զինք Ֆրանսա զրկելու եւ համալսարան արձանագրուելու համար:

Երկար մտածելէ եւ տղուս հետ խորհրդակցելէ ետք, ստիպուած, մեր սեփական տունը ծախելու որոշում առինք:

Տունս ծախու դնելէս ետք, տուներու եւ կալուածներու առեւտուրով զբաղող Ապուլ Հապիպը, մի քանի յաճախորդ բերելէ վերջ, յաջողեցաւ մեր պահանջած գումարով ծախել մեր տունը, տունը պարպելու մէկ ամսուան պայմանաժամով: Ջաւակս իր բոլոր ծախսերը հոգալու պէտք եղած գումարին տիրանալով մեկնեցաւ Փարիզ եւ արձանագրուեցաւ Սորպոն համալսարանի Բժշկական Ակադեմիան:

Տունս ծախելէ եւ պարպելէ ետք, ներկայ բնակած տունս վարձեցի, ապրելով առանձին, շարունակելով որպէս սպասուհի

ծառայել Հարուստներու տունները: Բարեբախտաբար ձեզի Հետ ծանօթացայ եւ դուք եղաք զիս մխիթարողը: Մանաւանդ Անդրանիկը սիրելով զաւկիս կարօտը կ'առնեմ, միեւնոյն ատեն շատ շնորհակալ եմ ձեր Հիւրասիրութեան եւ յաճախակի անկեղծ ընդունելութեան համար:

Հիմա պիտի հարցնէք ի՞նչ եղաւ զաւկիս՝ էտմոնին ուսումը:

Ուրեմն, մինչեւ իր համալսարանը աւարտելը եւ բժշկական վկայական ստանալը, ծախած տունիս փոխարժէքը եղող գումարը սպառեցաւ եւ իրեն նիւթապէս օգնելու անկարողութեան մատնուեցայ, իսկ իմ աշխատավարձով հազիւ կարող էի տանս վարձքը վճարել ու տնային եւ այլ ծախսերուս հասնիլ:

էտմոն Ֆրանսա մնալով, որպէս բժիշկ աշխատեցաւ քանի մը տարի: Տարին մէկ-երկու նամակ կը ղրկէր ինծի, հարցնելով առողջութեանս մասին: Օր մըն ալ իր ղրկած նամակներէն մէկուն մէջ կը տեղեկացնէր, որ ամուսնացած է Ֆրանսացի օրիորդի մը հետ եւ որոշ գումար մը խնայելէ ետք, կը ծրագրէ Թրիփոլի վերադառնալ եւ բժշկական աշխատատեղի մը վարձելով Թրիփոլի մէջ աշխատիլ:

Դժբախտաբար, իր նամակներուն մէջ «Մայրիկ, քեզ շատ կարօտցած եմ» խօսքի եւ զգացումի չեմ հանդիպած, մանաւանդ Ֆրանսուհիին հետ ամուսնանալէն ետք:

Օր մըն ալ լսեցի, որ Թրիփոլի եկած է, տուն եւ բժշկական աշխատասենեակ վարձած է առանց ինծի տեսնուելու կամ ինծի այցելելու:

Կարօտցած էի զաւակս, կ'ուզէի անպայման զինք տեսնել: Անհամբեր դառնալով, որոշեցի իր բժշկական աշխատանոցը երթալ:

Հասցէն գտնելով մտայ զրասենեակ: Կարգ մը հիւանդներ նստած կարգի կը սպասէին: Կարգը եկաւ ինծի: Քարտուղարուհիին մօտեցայ եւ ըսի, որ ես բժիշկին մայրն եմ եւ կ'ուզեմ զինք տեսնել: Քարտուղարուհին «վայրկեան մը» ըսելով բժիշկին քննութեան սնեակը մտաւ եւ վերադարձին ըսաւ.

— Բժիշկը շատ զբաղած է եւ չի կրնար քեզ ընդունիլ, դուն հոս անգամն ալ մի՛ գար, ինք քեզի պիտի հանդիպի:

Այս խօսքին վրայ ուշաթափեցայ եւ երբ արթնցայ, ինք-զինքս գտայ պառկած մահճակալիս մէջ: Ներկաներէն մէկը զիս ճանչնալով օգնած էր ինծի որպէսզի տուն հասնիմ»:

Ըմ Իլիաս, իր մէկ հատիկ տղուն, ամուսինին մահուընէն ետք, մինչեւ բժշկական համալսարան աւարտելը, ամէն տեսակ գոհոգութիւն յանձն առնելով, աշխատելով, սեփական տունը ծախելով, մայրական անբացատրելի նուիրումով օգնած է անոր հասնելու համար իր նպատակին: Իսկ զաւակը, այդ բոլոր գոհաբերութիւններու փոխարէն, չէ ուզած տարիներէ ի վեր չտեսած, անոր բոլոր մայրական անձնագոհութիւնները վայելած զաւակ, չէ ուզած տեսնել իր մայրը, որ իր երիտասարդ տարիքին այրի մնալով, մերժած էր ամուսնական բազմաթիւ առաջարկներ, որպէսզի իր զաւակը խորթ հօր ձեռքին տակ չմեծնայ եւ պատիւ բերէ իր մօր եւ ընտանիքին:

Աշխարհի մէջ մօր մը սէրէն աւելի խոր եւ անկեղծ սէր գոյութիւն չունի, բայց ապերախտ զաւակները կ'ուրանան այդ մաքուր սէրը, արժանի դառնալով Աստուածային նգովքին:



ԴՐԱՄԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶՆԻԻ ԶԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Տէր եւ Տիկին Աֆիֆ եւ Մատլէն Իպրահիմ կը բնակէին Հալէպի Ազիզիէ թաղամասի արդիական շէնքի մը երրորդ յարկին վրայ գտնուող ընդարձակ, ամէն յարմարութիւններով օժտուած տունի մը մէջ:

Պր. Աֆիֆ Իպրահիմ կերպասեղէնի խանութ մը ունէր Հալէպի ներսի գոց շուկային մէջ եւ գործը յաջող կ'ընթանար, որովհետեւ անկեղծութիւն եւ յարգանք ցոյց կու տար իր յաճախորդներուն ու սիրուած էր անոնց կողմէ:

Տէր եւ տիկին Աֆիֆ եւ Մատլէն Իպրահիմ ուշ ամուսնացած ըլլալով ունեցած էին մանչ զաւակ մը եւ կոչած Անթուան, որ իրենց աչքի լոյսն էր եւ բացառիկ ուշադրութեամբ եւ հոգածութեամբ կը հետեւէին անոր կեանքին եւ ուսումին, ամէն ջանք եւ զոհողութիւն ի գործ կը դնէին, որպէսզի ան լաւագոյն նիշերով աւարտէ դպրոցական շրջանը ապա՝ համալսարանը, արժանանալու համար շինարարական ճարտարապետի վկայականին:

Տարիները թաւալեցան, Անթուան բարձր նիշերով աւարտեց Հալէպի Համալսարանը եւ շինարարական մեծ ընկերութեան մը մէջ գործ գտաւ՝ ի մեծ ուրախութիւն իր ծնողքին եւ հարազատներուն:

Անթուանին ծնողքը ժամանակը եկած համարելով, կը փափաքէին իրենց զաւակը կանուխէն ամուսնացնել եւ թոռնիկներու տէր ըլլալ, այդ պատճառով, երբ առիթը ներկայանար, կը խնդրէին իրենց տղայէն, որպէսզի ամուսնութեան մասին մտածէ՝ իրեն յարմար աղջիկ մը գտնելով:

Անոնք իրենց փափաքը եւ մտահոգութիւնը յայտնեցին Դամասկոս ապրող Աֆիֆի եղբօր եւ ընտանիքին, ունենալու համար անոնց կարծիքը եւ գաղափարը այս առաջարկին մասին, անոնցմէ խնդրելով նաեւ, եթէ յարմար, պատուաւոր եւ յայտնի ընտանիքի մը աղջիկը կը ճանչնան իրենց շրջապատին մէջ, գրենք տեղեակ պահեն:

Անթուանին Դամասկոսի հօրեղբայրը՝ Սելիմ եւ նանուկը՝ Ժանէթ, ուրախութեամբ ընդունեցին իրենց եղած խնդրանքը եւ

ուշի-ուշով սկսան փնտռել իրենց շրջապատին մէջ գտնուող աղջիկներուն մէջ գեղեցիկ եւ իրենց յարմար աղջիկ մը, որ նաեւ համաձայնի ապրիլ Հալէպ, իր եղբօր ընտանիքին հետ:

Շրջան մը ետք, Պր. Աֆիֆ եւ տիկինը՝ Մատլէն, Դամասկոսէն դրական պատասխան ստանալով, շատ ուրախացան: Գտնուած էր Դամասկոսի անուանի ընտանիքներէն Պր. Ճորճ Հաննայի աղջիկը՝ Ճորճէթը, որ շատ ազնիւ ու զարգացած աղջիկ մըն էր եւ շատ յարմար՝ իրենց ընտանիքին, ղրկելով նաեւ հարսընցուին գունաւոր նկարը:

Անթուան եւ իր ծնողքը հաւնած ըլլալով աղջիկը, Դամասկոս մեկնեցան եւ Աֆիֆին եղբօր ընտանիքին հետ աղջիկտեսի գացին:

Պատշաճ խօսակցութիւններէն եւ հիւրասիրութենէն ետք, Պր. Աֆիֆ պաշտօնապէս Պր. Սելիմին աղջկան՝ Ճորճէթին ձեռքը խնդրեց իր գաւկին՝ Անթուանին համար:

Խնամիները երկուստեք զիրար ճանչնալու պատեհութիւն ունեցած էին, եւ, երկար խորհրդակցութիւններէ ետք, համաձայնած նշանտուքի եւ պսակի արարողութիւններու մասին:

Անթուանին եւ Ճորճէթին ամուսնութիւնը տեղի ունեցաւ Դամասկոսի յոյն-օրթոտոքսներու մայր եկեղեցիին մէջ, ներկայութեամբ մեծ թիւով երկուստեք ազգականներու եւ բարեկամներու:

Նորապսակ ամուլը՝ Անթուան եւ Ճորճէթ, շրջան մը փոխադարձ սիրով եւ հասկացողութեամբ ուրախ օրեր ապրեցան: Ուրախ էին նաեւ Անթուանին ծնողները, տեսնելով որ նորապսակ ամուլը կը սիրեն զիրար եւ երջանիկ են, մանաւանդ ապրելով իրենց հետ, անհուն ուրախութիւն կը պատճառէին իրենց, կարօտով սպասելով թոռնիկի մը ծնունդը:

Սակայն պատահեցաւ անսպասելին. Անթուանին աշխատած ճարտարապետական ընկերութիւնը գործերու տկարութեան հետեւանքով սնանկացաւ եւ շատերու կարգին՝ Անթուանն ալ կորսնցուց իր պաշտօնը, ստանալով իր աշխատած տարիներուն հատուցումը:

Շրջան մը անգործ մնալէ ետք, որպէս օգնական աշխատեցաւ հօրը վաճառատան մէջ, սակայն, իր ուսումին եւ նկարագրին անյարմար գտնելով այս գործը, ստիպուած երկրաչափական կարգ մը ընկերութիւններու դիմումներ ներկայացուց, բայց՝ ապարդիւն:

Հալէպի շրջանին մէջ իրեն յարմար գործ չգտնելով, Անթոնուան դիմեց իր աներոջ, Դամասկոս, խնդրելով, որ իրեն յարմար գործ մը գտնէ Դամասկոսի մէջ, այն յոյսով, որ մայրաքաղաքին մէջ միշտ շինարարութիւններ գոյութիւն կրնան ունենալ:

Անթոնուանին դամասկոսցի կնոջ բախտէն, որ միշտ կ'ուզէր իր ծնողքին մօտ ըլլալ, Անթոնուանին աները հեռաձայնեց, որ շրնորհիւ իր բարեկամներուն կրցած է իրեն յարմար գործ մը գտնել եւ յանձնարարեց, որ կարելի արագութեամբ Դամասկոս գալ եւ ստանձնէ իր նոր պաշտօնը, քանի որ նախկին պաշտօնեան իր գործէն հրաժարած է եւ ընկերութիւնը դժուարութեան մէջ է:

Անթոնուան ուրախութեամբ ընդունեց Դամասկոսէն եկած առաջարկը եւ շուտով մեկնեցաւ Դամասկոս, ստանձնելով իր պաշտօնը, շնորհակալութիւն յայտնելով իր աներոջ եւ զոքանչին:

Անթոնուան իր գործէն եւ նոր աշխատանքի միջավայրէն գոհ մնացած ըլլալով, իր կիներն ու զաւակները՝ մանչ մը եւ աղջիկ մը, Դամասկոս բերել տուաւ, բակով տուն մը վարձեց եւ տեղաւորուեցաւ Դամասկոսի Պապ Թումա Թաղամասին մէջ, որ շատ մօտ էր իր հօրեղբօր եւ աներոջ ընտանիքներուն տուններուն:

Տարիներ անցան: Չաւակները բաւական մեծցան եւ դպրոցին մէջ գնահատելի ընթացքով բարձր նիշերով տուն կու գային: Իր գործն ալ լաւ էր: Ամէն տարի ամսականի յաւելում կ'ունենար եւ ընտանեօք երջանիկ կեանք մը կ'ապրէին: Սակայն, դժբախտ օր մը, Անթոնուան մօրը ըրած հեռաձայնով լսեց, որ Հալէպ ապրող իր հայրը ինքնաշարժի արկածով շատ ծանր վիրաւորուելով եւ շուրջ ամիս մը հիւանդանոցին մէջ բուժուելէ ետք, կարելի չէ եղած անոր կեանքը փրկել, առանձին ձգելով իր մայրը՝ Տիկին Մատլէնը:

Անթոնուան, առ ի պարտականութիւն, Դամասկոսէն Հալէպ մեկնող առաջին հանրակառքով Հալէպ հասած է եւ ներկայ եղած իր հօր՝ Աֆիֆի Թաղման արարողութիւններուն: Հալէպի մէջ երկու օր մնաց եւ կարգ մը բարեկամներու եւ ծանօթներու ցաւակցութիւնները ընդունելէ ետք, վերադարձաւ Դամասկոս եւ շարունակեց իր բնական կեանքը:

Անթոնուան ու Պր. Աֆիֆին եղբայրը՝ Սելիմ, Դամասկոսի մէջ շրջան մը սգաւորի կերպարանք ցոյց տուին ծանօթներուն, քանի մը անգամ ալ հեռաձայնով հետաքրքրուած են իրենց հօր եւ

եղբօր մահուընէ ետք իրենց մօր եւ եղբօր կնոջ ապրուստով եւ կեանքով:

Անոնց հեռաձայնային խօսակցութեան գլխաւոր նպատակը Տիկին Մատլէնին առողջութիւնը չէր. կ'ուզէին իմանալ, որ Տիկին Մատլէն Պր. Աֆիֆին խանութր եւ իրենց բնակած տունը քանի՞ ոսկիի ծախած է, Պր. Աֆիֆ մեռնելէ առաջ կտակ ըրա՞ծ է, իրենց հաշիւը եղա՞ծ է կտակին մէջ, սպասելով, որ կտակէն իրենց բաժինը շուտով կը հասնի իրենց նօտարին միջոցով, որուն պարտականութիւն տրուած էր կտակին գործադրութեան հսկել արդարօրէն:

Տիկին Մատլէն Հալէպի մէջ կ'ապրէր բարւոք վիճակով, նիւթական որեւէ դժուարութիւն չունէր, ամուսինը իր կտակով բաւական մեծ գումար մը յատկացուցած էր իր անուներին, որով, մինչեւ իր մահը ոչ մէկ բանի կարօտ չէր կրնար ըլլալ:

Սակայն, կարօտը իր գաւկիին եւ իր թոռնիկներուն, օրէ-օր կը մաշեցնէր գինքը: Վերջապէս այս կարօտալի կացութեան վերջ դնելու համար դիմեց իր տղուն եւ տագրոջ ընտանիքներուն, որ ինք կ'ուզէ Դամասկոս գալ եւ ապրիլ իրենց հետ:

Տիկին Մատլէն անհամբերութեամբ կը սպասէ իր դիմումին դրական պատասխանին, իր թոռները տեսնելու, անոնց հետ ապրելու կարօտին վերջ դնելու համար: Հալէպի մէջ առանձին ապրելով, իր թոռներուն նկարները դիտելով չէր կշտանար, միակ լուծումը այս կեանքին եւ կարօտին Դամասկոս փոխադրուելն էր: Եւ, հակառակ իր դրական սպասումներուն ու յոյսին, իր տղայէն եւ մանչէն նամակ մը ստացաւ, ուր կը յայտնուէր, որ իրենք չէին կրնար ընդունիլ գինք, իրենց տուններուն անյարմարութեան պատճառաւ: Իրենց ունեցած երկու ննջասենեակներով տունները հագիւ իրենց կը բաւէին, ներողութիւն խնդրելով այս պատճառաբանութեան համար:

Տիկին Մատլէն Դամասկոսէն ստացած անհրապոյր եւ անվայել վերոյիշեալ պատճառաբանեալ պատասխանը ստանալով շատ յուզուեցաւ եւ հիւանդացաւ:

Շատ յանդուգն որոշում մը կ'առնէ: Իր փաստաբանին միջոցաւ Դամասկոսի հռչակաւոր եւ լաւագոյն հիւանդանոցին մէջ մնալու եւ բուժուելու կարգադրութիւն կ'ընէ եւ Հալէպի իր բոլոր գործերը եւ կալուածները փաստաբանին միջոցաւ իր անուներին դարձնելէ ետք, փաստաբանին միջոցաւ կը մեկնի Դամասկոս եւ իր ապահոված սենեակին մէջ կը տեղաւորուի, լուր

տալով իր տղուն եւ տագրոջ, որպէսզի գան եւ զինք տեսնեն, տալով անոնց հիւանդանոցին անունն ու սենեակին թիւը:

Այս անակնկալ եւ անախորժ լուրը առնելով, Տիկին Մատլէնին տղան, կինը, զաւակները, ինչպէս նաեւ իր տագրը, կինը եւ զաւակները հիւանդանոց կու գան հիւանդը տեսնելու: Ճամբան մտահոգութեամբ կը մտածեն, որ այս սուղնոց հիւանդանոցի ծախսերը ո՞վ պիտի վճարէ: Հիւանդանոցէն ելլելէ ետք ո՞ւր պիտի պառկի:

Տիկին Մատլէն իր թոռները կը կանչէ, գանոնք կարօտով կը համբուրէ եւ անոնց կը նուիրէ իրենց յարմար խաղալիքներ եւ հագուստեղէններ:

Անթուան եւ Սելիմ նաեւ կը ստանան նուէրներ, ինչպէս նաեւ՝ իրենց կիները եւ զաւակները:

Տիկին Մատլէն անոնց մտահոգութիւններուն կ'անդրադառնայ, թէ հիւանդանոցին ծախսերը ո՞վ պիտի վճարէ, կ'ըսէ.

— Երբեք մի՛ մտահոգուիք, մահճակալիս քով նստողը իմ նօտարս է եւ ան արդէն իսկ վճարած է հիւանդանոցի ծախսերը:

Անթուան եւ Սելիմ տեսնելով եղած կարգադրութիւնները, կը կարծեն, որ իրենք ալ բաժին կընան ունենալ Պր. Աֆիֆին ձգած կտակին մէջ:

Տիկին Մատլէն, ապա, նօտարին ներկայութեան պաշտօնապէս կը յայտարարէ.

— Հոս նայեցէք, ես եւ ամուսինս տարիներով չարչարուեցանք, գիշեր-ցերեկ աշխատեցանք եւ պատկառելի հարստութեան տէր եղանք: Դուք օր մը մեզմով, ապա, ամուսինիս արկածով մեռնելէն ետք իմ կեանքով չհետաքրքրուեցաք, գիտնալու համար, որ մենք ինչպէ՞ս կ'ապրինք, բանի մը պէտք ունի՞նք: Ձեզի հետ ապրելու դիմումիս ժխտական պատասխան տուիք, որպէս մայր եւ եղբօր կին, հարազատի վերաբերմունք եւ հոգածութիւն ցոյց չտուիք, իմ ամուսինս այս բոլորը գիտնալով իր կտակը ըրած էր իմ անունիս՝ խանութը, տունը եւ կանխիկ 40 միլիոն սուրիական ոսկի: Թոռնիկներու ուսումը՝ մինչեւ համալսարանէն մասնագիտական ուսում ստանալուն պիտի վճարեմ, որովհետեւ անոնք անմեղ մանուկներ են եւ պէտք ունին սիրոյ եւ հոգածութեան:

Մինչ այդ, Անթուան եւ Սելիմ իրենց կիներով կ'առաջարկեն, որ հիւանդանոցէն ելլելէն ետք իրենց տունը մնայ եւ իրենց

հետ ապրի, յուսալով, որ Տիկին Մատլէն իրենց ալ բաժին մը կը վերապահէ եղած կտակի գումարներէն:

Սակայն Տիկին Մատլէն կ'ըսէ.

— Դուք արժանի չէք նման վերաբերմունքի, որովհետեւ դուք մոռցաք մեր բարութիւնները եւ օգնութիւնները ձեզի: Մանաւանդ դուն, Անթուան, մենք՝ ես եւ հայրդ, որպէս ծնողք, մինչեւ քու համալսարանէն վկայուիլդ եւ ամուսնանալդ հոգ տարինք քեզի, վճարելով բոլոր ծախսերդ: Դուք ապերախտ եղաք եւ արժանի չէք մեր հարազատի վերաբերումին: Ինծի վրատահուած հարստութիւնը պիտի յատկացնեմ որբերուն, անոնց ուսումին, բարեգործական հաստատութիւններուն, առաջնորդարանին եւ Սուրբիոյ մեր եկեղեցիներուն, որպէսզի ապագայ սերունդները ըլլան բարեխիղճ, երախտագէտ եւ հաւատացեալ քրիստոնեաներ:



ՉՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մանկութենէս շատ կը սիրէի ձուկ ուտել, սակայն, դժբախտաբար, տարին մէկ անգամ, Աստուածայայտնութեան՝ Սուրբ Ծննդեան տօնին առիթով, մեր տօնական սեղանը կը ճոխանար Սեւ Զուկով, որուն մորթը կեղուելէն ետք կը տապկուէր եւ կ'ուտուէր բացառիկ խորոժակով: Հալէպի մէջ զանազան կանաչեղէններ, պտուղներ, մածուն եւ պանրեղէններ, մսեղէններ, համեմներ եւ մանաւանդ ձկնեղէններ կը ծախուէին ձիտէյտէ կոչուող շուկային մէջ: Հայրս, ինչպէս նաեւ բազմաթիւ հայ ընտանիքներ, անպայման իրենց Ս. Ծննդեան սեղանները կը զարդարէին Սեւ Զուկով: Սակայն, ձըսըր Շուղուրի մօտ գտնուող լիճը, պետական այլ ծրագիրներու գործածուելու նպատակով, չորցուեցաւ եւ մենք զրկուեցանք այդ համեղ ձուկը ուտելէն, որովհետեւ Սեւ Զուկը կը բուծանուէր այդ լիճին մէջ:

1952-ին, երբ նշանուեցայ Օրդ. Շաքէ Տէրտէրեանի հետ, անոր հայրը, որ կը կոչուէր Շօֆէր Վարդան, բեռնակառք ինքնաշարժով կ'աշխատէր Հալէպ-Լաթաքիա գիծին վրայ եւ առնուազն շաբաթը մէկ անգամ Լաթաքիայէն կը բերէր զանազան տեսակի ձուկեր՝ գլխաւորութեամբ Սուլթան Իպրահիմ տեսակի, եւ այդ ձուկերը մաքրելու գործը կը ստանձնէին նշանածս, ապա՝ կ'ինս եւ իր քոյրը՝ Նուարդը ու տապկուելէ ետք փառաւորապէս կ'ուտէինք:

Տարիներ ետք, համով-հոտով ձուկ ուտելու բախտը ինծի ժպտեցաւ, այս անգամ իմ եւ Շաքէին ամուսնութեան կնքամայր Մարգրիտ Զօրիկեանը երբ ամուսննացաւ Արշակ Տանակէօզեանի հետ:

Արշակ ամէն շաբաթ ձկնորսութեան կ'երթար եւ կը վերադառնար տեսակաւոր ձուկերով: Մեր պսակի կնքամայրը՝ Մարգրիտ, այդ ձուկերը կը մաքրէր, մէկ մասը փուռին մէջ կ'եփէր, մնացեալը կը տապկէր եւ ես, բախտաւորս, ամէն շաբաթ այդ համով-հոտով ձուկերը, չիյ ֆեօֆթայով եւ գաւաթ մը օղիով հաճելի ընթրիք մը կ'անցընէինք, եւ այս՝ մինչեւ 1975՝ Գանատա հաստատուիլս:

*
*
*

Հալէպի «Էլ Շարք» («Արեւելք») գարեջուրի գործարանին գարեջուրը շիշերու մէջ լեցնելու բաժնին մեքենական պատաս-

խանատունն էր արմատներով հռոմկլացի Սարգիս Հինտոյեանը, բարձրահասակ (իրեն հետ քալելու կը զգուշանայի), ամրակազմ, քաջ, յանդուգն, ընկերասէր եւ ազնիւ հայորդի մը, որ շատ կը սիրէր որսորդութիւնը, մանաւանդ՝ ձկնորսութիւնը:

Գարեջուրի գործարանի Մալթերի (խաշուած, չորցած գարի) բաժնին չորրորդ յարկին մէջ թակարդ մը լարած էր եւ օրական 50-60 եւ աւելի ճնճղուկներ կու գային գարի ուտելու եւ հոն, թակարդին մէջի գարիները ուտելու համար թակարդ մտնելով, կը բանտարկուէին: Մեր ընկեր Սարգիսը այդ բանտարկեալ ճնճղուկները հաւաքելով, գործարանի իրեն յատուկ գրասենեակ-ճաշարանին մէջ կը փետէր, կը մաքրէր եւ կը տապկէր, ապա մեզ հրաւիրելով կը ճաշակէինք այդ համեղ ճնճղուկները:

Ինչպէս ըսի, մեր գործընկեր Սարգիսը միշտ ձկնորսութեան կ'երթար եւ բերած ձուկերէն մեզի ալ բաժին կը հանէր:

Օր մը, գործարանի մեքենական բաժնի պատասխանատու Յակոբ Ասատուրեան, խմորումի բաժնի պատասխանատու Գրիգոր ժամկոչեան, ելեկտրական բաժնի պատասխանատու Գրիգոր Հոթոյեան եւ գարեջուրի շիշերու լեցուելու բաժնի պատասխանատու Սարգիս Հինտոյեան, Սարգիսին սենեակին մէջ համեղ ճնճղուկներ ուտելէ ետք, երբ խօսակցութեան նիւթ դարձաւ ձուկ ուտելու եւ ձուկ որսալու մասին, Սարգիս առաջարկեց օթօ մը վարձել եւ միասին ձկնորսութեան երթալ Հալէպի հիւսիս-արեւելքը, Պապ գիւղաքաղաքէն անցնելով եւ Մումպուճ գիւղաքաղաքին մօտ գտնուող Սաճուր գետը, ուր առատ եւ համեղ ձուկեր ազատօրէն կը լողան այդ գետին մէջ:

Դէպի Սաճուր երթալու թուական որոշուեցաւ Յունիս 1965-ը:

Երբ երթալու օրը որոշուեցաւ, օթօ մը վարձեցինք, ապահովեցինք բարձր մը, ձուկերը տապկելու սան մը, սալաքացուներ (լեմոն, լոլիկ, վարունգ, ազատքեղ, համեմներ), անշուշտ լողալու լողագգեստ եւ շիշ մը օղի:

Արեւը ծագելուն հետ ճամբայ ելանք՝ երգելով, խնդալով եւ աղօթելով, վայելելով բնութեան գեղեցկութիւնները:

Հասանք Պապ գիւղաքաղաքը: Անօթեցած էինք: Խանութէ մը գնեցինք խմորեղէն, քահֆէ եւ սահլապ: Թեթեւ եւ հաճելի նախաճաշէ մը ետք, երեսնիս խաչակնքելով ճամբայ ելանք, շարունակելով հաճելի խօսակցութիւնները եւ մեզ սպասող ձուկերու տեսակները երագելով:

Փոքր գիւղի մը քովէն երբ կ'անցնէինք, մեր օթոյին մօտեցաւ արաբ պատանի մը, մեզի հրամցնելով Բանարիկով (տՀաս եւ թթու սալոր) լեցուն գամբիւղ մը: Պահանջուած փոխարժէքը վճարելէ ետք, շարունակեցինք մեր ճամբան:

Ճանարիկ ուտել կը սիրէի: Անհամբերութեամբ սկսայ ուտել կէս թթու, բայց համեղ սալորները, չդիմանալով անոնց հաճելի տեսքին եւ գեղեցկութեան:

Վերջապէս հասանք գետեզերք եւ մեր առարկաները գետեզելէ եւ լողագգեստները հագուելէ ետք պատրաստուեցանք գետ իջնելու, սպասելով Սարգիսին ձեռքին գտնուող տիւնամիթին (վառօղ), որուն կրակ տալով գետը պիտի նետէր Սարգիսը: Սարգիս թէեւ գիտէր, որ ձուկ բռնելու համար տիւնամիթ գործածելը պետականօրէն արգելուած է եւ հրամանին չենթարկուողները ենթակայ են պատիժի, սակայն Սարգիս վախ չունէր եւ կը պատրաստուէր տիւնամիթը նետելու:

Գետեզերքը, մեր գտնուած տեղէն ջուրի հոսանքին հակառակ ուղղութեամբ քալելով ձեռքի տիւնամիթին կրակ տուաւ եւ գետը նետեց: Զօրաւոր պայթումին յաջորդեց հարիւրաւոր ձուկերու կռնակի վրայ պառկած դէպի ջուրին երեսը գալը: Տղաքը սկսան հաւաքել անշունչ դէպի իրենց եկող ձուկերը:

Գետին մէջ, մինչեւ մէջքս ջուրով ծածկուած, կը փորձէի գետի հոսանքն ի վար եկող ձուկերը բռնել, երբ ստամոքսի ահուելի սրտխառնուք զգացի եւ գլխու պտոյտ: Կը փորձէի հաւասարակչուութիւնս պահել, սակայն՝ ապարդիւն: Ուժերս հաւաքելով յառաջացայ դէպի գետեզերք եւ գետին ինկայ: Ընկերներս մեծ քանակութեամբ տեսակաւոր ձուկեր բռնած ըլլալով գետէն դուրս ելան, մտահոգուելով իմ առողջութեամբ:

Ճամբան խմած առիւապս եւ կերած սալորները ստամոքսիս մէջ իրարու հակառակ գալով, գետի ջուրին պաղութեան հանդիպելով, ինծի սրտխառնուք եւ գլխապտոյտ պատճառած էին:

Որոշ ատեն պառկած մնացի, պայքարելով զիս անհանգըստացնող ցաւերուն դէմ: Տղաքը բարորդ վառեցին եւ սկսան ձուկերը տապկել: Սալաթան պատրաստուելէ ետք, օղիի շիշը բացին եւ սկսան ուտել-խմել:

Ընկերներուս ստիպումով փորձեցի մասնակցիլ կերուխումին, սակայն անկարելի եղաւ պատառ մը բերանս դնել, վախնալով, որ կրնամ կրկին փսխել եւ աւելի անհանգստանալ:

Ուրախութեամբ ծրագրուած ընկերական ձկնորսութիւնը

ինձի համար ցաւալի վերջաւորութիւն ունեցաւ եւ ընկերներուս ալ տխրութիւն պատճառեց:

* * *

Գետեզերքին թարմ ձուկ ուտելու եւ բնութեան գեղեցկութիւնը վայելելու երազը խանգարուելէ ետք, մեր առարկաները հաւաքեցինք եւ ինքնաշարժին մէջ դնելէ ետք վերադարձի ճամբան բռնեցինք:

Մեր վերադարձը մինչեւ Պապ շատ լաւ անցաւ: Տղաքը իջան եւ Պապի շուկայէն ծխախոտ գնեցին եւ ինքնաշարժի վարիչին քառորդ ժամ հանգստութիւն տալէ ետք, շարունակեցինք մեր ճամբորդութիւնը:

Մեր բոլորին տրամադրութիւնը սկսած էր բարելաւուիլ իմ հանգստութեանս պատճառով եւ յանկարծ մեր ինքնաշարժը անհաճոյ ձայներ հանելով կեցաւ: Զորի մը մէջ էինք, ինքնաշարժը կը մերժէր բարձրանալ գառիվերէն եւ հագիւ երկու քայլ բարձրացած՝ կը մարէր:

Ինքնաշարժին վարիչը ամէն անգամ կը բանար մոթորին կափարիչը, բաներ մը կը խառնէր եւ կափարիչը գոցելով կը փորձէր ինքնաշարժը աշխատցնել, սակայն մոթորը կը մերժէր աշխատիլ:

Սկսած էինք մտահոգուիլ: Գրեթէ երթեւեկութիւն չունեցող ձորին մէջ ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը, եթէ մեր ինքնաշարժը չաշխատի եւ հոն գիշերելու անապահով վայր մը ըլլալը երեւակայելով, վախը մտած էր մեր սիրտերուն մէջ:

Ինքնաշարժը 1950-ի Շեվրօլէ մակնիշով բաւական յոգնած ինքնաշարժ մըն էր, վարձուած էր գարեջուրի մեր ընկերութեան գործաւորներէն Իլիաս անունով անձի մը կողմէ, որ ձկնորսութիւնը շատ կը սիրէր եւ համաձայնած էր ինքնաշարժ մը վարձել եւ մեզի ընկերակցիլ, մեզ տանիլ-բերելու համար Սաճուրի որսորդութեան:

Մեր ինքնաշարժի վարիչ Իլիասի աշխատանքները ինքնաշարժը աշխատցնելու համար որեւէ յաջողութիւն չունեցան: Իլիաս ջղային նօպաներ կ'անցընէր, մանաւանդ մեր կատարած դիտողութիւններուն չգիմանալով, կատաղի եւ անհանդուրժող երեւոյթ մը կը ներկայացնէր՝ անյուսութեան տագնապներ ապրելով:

Իլիաս իր միջոցներով արդիւնքի մը չհասնելով, սկսաւ հայհոյել: Նախ իր բախտին, ինքնաշարժի տիրոջ եւ, մեղայ-մեղայ Աստուծոյ, Քրիստոսին:

Մեր դիտողութիւնները եւ բարկութիւնը փոխանցելով Իլիասին, ըսինք իրեն.

— Ամօթ չէ՞ քեզի որպէս քրիստոնեայ անձ Աստուծոյ եւ Քրիստոսի կը հայհոյես, որոնք ի՞նչ կապ ունին ինքնաշարժին չաշխատելուն հետ: Չե՞ս կարծեր որ Աստուած եւ Յիսուս լսելով այս հայհոյանքներդ կրնան քեզ պատժել եւ պատճառ դառնալ, որ քու հայհոյանքներուդ հետեւանքով այս անապատային ձորին մէջ վայրի կենդանիներու կեր դառնանք: Շո՛ւտ, գղջուճներկայացուր եւ ծունկի գալով աղօթէ, որ քեզի օգնութեան հասնին եւ ինքնաշարժը աշխատցնելու քու ջանքերդ արդիւնաւորուին:

Իլիաս ազդուելով մեր խօսքերէն եւ վախնալով Աստուածային պատիժէն, ծունկի եկաւ եւ լալագին աղօթեց, գղջալով իր կատարած հայհոյանքներուն համար:

Եւ Աստուածային հրաշքով ինքնաշարժը աշխատեցաւ, երբ Իլիաս վերջին փորձ մը կը կատարէր, քարայիւրաթէօրը մաքրելէ ետք:

Ընկերներուս այնքան սիրած ձկնորսութիւնը արկածախընդրական ելք մը ունենալէ ետք, ապահով վերադարձով վերջ գտաւ, ես ալ առողջապահական դաս մը սորվեցայ, որպէսզի այսուհետեւ սահլէպ խմելէ ետք չհամարձակիմ թթու սալոր ուտել եւ մանաւանդ՝ ուտելով գետի պաղ ջուրերուն մէջ ձկնորսութեամբ չգրադիմ, լեղի եւ ցաւալի հետեւանքներու չհանդիպելու համար:

ՀԱԶԱՐԱՆ ՊԼՊՈՒԼ ՍՈՒՄԱԿԸ ԵՐԳԵԼՈՎ ԿԸ ԲՈՒԺԷ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿԱՅՍՐԸ

Կը պատմուի, որ Չինաստանի Սանկ կայսերական տան 13-րդ կայսրն էր Նինկ-Սանկ, որ ծնած է 19 Սեպտեմբեր, 1168 թուականին եւ մեռած՝ 17 Սեպտեմբեր 1224-ին, 56 տարեկանին: Ան կայսերական գահին վրայ կը մնայ 1194-էն մինչեւ իր մահը՝ 1224: Իր գերեզմանին վրայ գրուած է «Խաղաղ Տիրապետող»:

Արդարադատ եւ խաղաղասէր կայսրը՝ Նինկ-Սանկ անակընկալօրէն կը հիւանդանայ: Կայսերական բժիշկները չինական բժշկութեամբ եւ դեղերով կը փորձեն բժշկել կայսրը, սակայն դժբախտաբար չեն յաջողիր, խոր տխրութիւն եւ մտահոգութիւն պատճառելով կայսրին եւ իր ժողովուրդին:

Չինացի տարեց զինուորական մը, մասնագիտութեամբ բժշկագիտութեան դասախօս, լսելով կայսրին հիւանդութեան մասին, կը փութայ կայսերական պալատ եւ ինքզինք ներկայացընելով կ'ուզէ կայսրը տեսնել եւ տեղեկանալ բժիշկներու կատարած բժշկական ճիգերուն մասին:

Ակադեմիկոս բժիշկ զինուորականը, քննելէ վերջ կայսրը, նախարարները ժողովի կը հրաւիրէ, անոնց բացատրելով կայսրին ունեցած հիւանդութեան պատճառը, կայսրին եւ նախարարներուն առաջարկելով կայսրին բուժուելու հազուագիւտ դեղը:

Կայսրը, կայսրին հարազատները եւ նախարարները մասնագէտ բժիշկէն կը խնդրեն իրենց տալ անունը կայսրը բուժող դեղին, որպէսզի շուտով բերեն, որպէսզի կայսրը շուտով բուժուի:

Բժշկապետ Չինկ-Չանկ կ'ըսէ.

— «Հազարան Պլպուլ» սոխակը առասպելական թռչուն մըն է, որ կը գտնուի Փոքր Ասիոյ, հայկական Քէօթահա (Կուտինա) փոքր գիւղին մէջ, եւ պահուած է անմատչելի տեղ մը: Անոր տիրանալու համար զայն բռնող հերոսը կ'ենթարկուի ծանր փորձութիւններու, յաղթահարելով զանազան դժուարութիւններ: «Հազարան Պլպուլ»ը բնութեան զարթօնքի հրաշագործ

ուժ ունի, գեղեցկութեան, արդարութեան ու ներդաշնակութեան խորհրդանիշ: Անոր երգով կը վերակենդանանան անէծքով եւ կախարդանքով պատուհասուած եւ հիւանդացած նշանաւոր անձնաւորութիւններ: Եթէ ձեր մէջ կը գտնուի կայսրը եւ հայրենիքը սիրող հերոս մը, որ ամէն տեսակ դժուարութիւններու դիմադրել յանձն առնելով այդ սոխակը հոս բերէ, առիթ տալով, որ ան ապրումով եւ զգացումով երգէ, կայսրը կ'առողջանայ: Ահա դեղատոմսը կայսրին:

Կայսրին զօրապետներէն մէկը, իր օգնականներով յանձն կ'առնէ բերել «Հազարան Պլպուլ»ը, առողջացնելու համար իրենց սիրելի կայսրը:

Զօրապետը իր օգնականներով, ուտելիքներու պաշարներով եւ նիւթական միջոցներով ճամբայ կ'իյնայ ու ցամաքային դժուարանցանելի ճամբաներով, յաղթահարելով կլիմայական պայմանները, Կիլիկիոյ հայկական թագաւորութեան իշխաններու օգնութեամբ կը գտնեն «Հազարան Պլպուլ»ը եւ կրկին մեծ դժուարութիւններով կը բերեն Չինաստան եւ կը տեղաւորեն կայսերական պալատին՝ կայսրին ննջասենեակին մէջ, ոսկեայ վանդակին մէջ դնելով եւ հոգ տանելով անոր առողջութեան, որպէսզի ուրախութեամբ երգէ:

Եւ ի՜նչ հրաշք: Կայսրը «Հազարան Պլպուլ»ի երգերը ունկընդբելով, օրէ-օր կը սկսի առողջանալ եւ վերագտնել իր նախկին առողջութիւնը, նիւթական եւ բարոյական պատիւներով գնահատելով բժշկապետ զինուորականը եւ սոխակը բերող զինուորական հրամանատարը:

Սոխակը իր երգերով կը բուժէ Չինաստանի կայսեր անբուժելի կարծուած հիւանդութիւնը:

*
*
*

Նոյնպէս կը պատմուի, որ ժամանակին, Արեւմտեան Հայաստանի գիւղերէն մէկուն մէջ կը պատահի հետեւեալը:

Երկու դրացիներու տարեկից ընկերներ, գրեթէ ամէն օր դպրոցէն գալէ ետք իրարու հետ կը խաղան զանազան խաղեր: Սակայն օր մը, խաղի արդիւնքով յաղթողին իրաւունքը չընդունող ընկերներէն մէկը կը հայհոյէ ընկերոջ հօրը, պատճառ դառնալով կռիւի եւ ծեծուըրտութի: Մայրերը դուրսի աղմուկը լսելով դուրս կ'ելլեն եւ իրարմէ կը բաժնեն կռուողները, սա-

կայն, ընկերներէն մէկը վիրաւորուած ըլլալով, երեկոյեան հայրերը տուն գալով կը տեղեկանան կռիւի մասին: Վիրաւոր տղուն հայրը դուրս կ'ելլէ եւ կը սկսի հայհոյել դրացի տղուն հօրը, որ չի կրնար կրթել իր զաւակը:

Երկու դրացիներու զիրար ամբաստանելը եւ հայհոյանքները խնդիրը կը մեծցնեն դրացիներուն միջեւ:

Յաջորդ օր, հայրերէն մէկը, որ անտառագործ է, գործի կ'երթայ: Իսկ միւսը՝ վիրաւոր տղուն հայրը, վրէժխնդիր, գործի չ'երթար: Տունէն գաղտնաբար կացինը առնելով կ'ուղղուի անտառ, դրացիէն վրէժ լուծելու, նոյնիսկ սպաննելու համար: Երբ անտառ կը հասնի, հեռուէն կը տեսնէ դրացին, որ տխուր երգ մը կ'երգէ եւ կը նուագէ:

Վրէժխնդիր դրացին երգի եւ նուագի ունկնդրութեամբ կը յուզուի, կը զղջայ իր որոշումին համար եւ գալով դրացիին վզին կը փաթթուի, ներողութիւն խնդրելով երէկուան իրենց ամօթալի կռիւին համար: Երկու դրացիներ երգի եւ նուագի ազդեցութեան տակ կը հաշտուին:

Երեկոյեան տուն գալով, կը տեսնեն, որ երէկուան կռուող տղաքը կրկին իրարու հետ մտերմաբար կը խաղան:

* * *

Մարդկային ամէնէն անհրաժեշտ եւ անփոխարինելի սրնունդն է երգը, որուն հիմքը բանաստեղծական խօսքն է եւ որ խտացումն է եւ ճառագայթացումը մարդկային ապրումներուն, իմացական լոյսին, ներքին գեղեցկութիւններուն եւ արտաքին աշխարհին հետ ունեցած առնչութիւններուն: Բանաստեղծութեան եւ երաժշտութեան միասնական արժէքը անչափելի է եւ մնայուն, ո՛չ միայն իրենց թելադրութեան համար, այլ՝ որովհետեւ անկողոպտելի են անոնք եւ անառիկ: Մարդէ-մարդ նետուած կամուրջ եւ յարաբերութիւն եւ միութիւն, հետեւաբար, գորութեամբ ապահով առհաւատչեայ: Եւ ուրախութիւն է հաստատել, որ մենք՝ հայերս, այդ ուժը բնագրաբար զգացող եւ իմացական նժարներուն մէջ կշռուած առաջին ժողովուրդներէն եղած ենք:

Երաժշտութիւնը գեղարուեստի բարձր եւ ազնուագոյն մէկ ճիւղն է, որուն ամբողջ բնոյթը հոգեկան է: Իսկ երգը՝ գերազանցօրէն հոգիի ապրում է եւ իր հմայքը՝ սպաւորիչ:

Երգիչը ձայնի ճամբով ինքզինքին կը փոխանցէ ներքին յուզումը, բաւարարելու համար իր ներսէն եկող ձայնական մրմունջները՝ հոգիին տրամադրութեան համաձայն, ինչպէս լիճին կամ ծովուն ալիքները կ'ալեկոծին, այնպէս ալ երգիչի ձայնէն երանգները իր ապրումները կը փոխանցեն ունկնդիրներուն, որոնք ազդուելով անոր զգայնութենէն, իրենք եւս հոգեպէս կը տարուբերին:

Ներանձնական ապրումներ, զգայնութիւններ, ամբողջովին առանձնացած, չորս կողմի ամէն ինչէ ինքն իր մէջ գոց, միայն զգալով, ապրելով ինքդ-քեզի հետ, առանց դուրսէն որեւէ ինչի, տենչի, կանչի, տեսքի զգացողութեան, էութեանդ հետ ամբողջացած ինքդ քեզ կազմող ինչ որ ունիս մաքուր, անբիծ աշխարհին մէջ, ուր դուրսէն եկած բան գոյութիւն չունենայ, այլ՝ ըլլայ միայն քու ներաշխարհիդ եւ ըլլաս դուն ինչ որ ես: Խորհիս, զգաս, ապրիս քեզի համար, քեզմէ յառաջանայ ապրում-զգայնութիւն: Մտածես քեզի յատուկ խոհեր, նոյնիսկ ցաւ, հրճուանք, հոգեկան վերացման եւ զգայնութիւններու նուրբ տրցակներ՝ խորհող մարդուն հոգեմտաւոր ամբողջ պաշարը:

Մեր հոգիները զբաղեցնող, յուզող ուրախ կամ տխուր ամէն ազդակ՝ ներքին թէ արտաքին, կարճ կամ երկարատեւ, տեսանելիէն վեր մեր մէջ ապրումներ կ'առաջացնեն, ինչպէս նաեւ կը ստեղծեն ոգեկան տարբեր աշխարհ փոխանցող վիճակներ, որոնք գեղարուեստի ճամբով մեզի կը բերեն ճաշակ, մարդկային վեհանձնութիւն, խոյանքի յաղթանակը, սարսափի, զոհողութեան, սիրոյ, յաւերժական խորհուրդներու այլազան երեւոյթներ՝ հոգեվիճակներ ամբողջութեամբ մեզ ցնցող, սովորականէն դուրս պահեր արթնցնող, մեր մէջ հոգեկան ուժ ստեղծող, որոնց ծնունդ տուող ազդակը գեղարուեստն է, որ ուղղակի մարդու սրտին կը խօսի, կ'ազնուացնէ մեր հոգին, մեզ կը վերացնէ՝ մեզի նոր կեանք տալով, մեր շուրջը նոր փայլք սփռելով, եւ ո՛չ անպարարական իմաստով հմայել, այլ՝ ապրումին ընկալման զգայնութեան գերագոյն վայելքով, ինչպէս հերկուած արտերուն գարնանային անձրեւէն յագեցումը, ինչպէս ծարաւակոծ սրտերուն պապակը անցընող աղբիւրի ջուրին, ինչպէս տապէն խոնջած ճամբորդներուն զովացումը ծառերու խիտ շուքէն:

Մարդու ձայնաշխարհի հեշտահունչ եւ սրտայոյզ նուրբ երանգներուն՝ զգայնութեան եւ ապրումի ճամբով, սրտերուն

եւ հոգիներուն տիրապետող վարպետ երգիչներ իրենց ունկընդերներուն կու տան գերերջանիկ ապրումի պահեր՝ յատկապէս մարդկային, հայրենասիրական, պարային, հրճուանքի, ցասումի, անձնազոհութեան ու մանաւանդ սիրոյ խորունկ եւ զգայուն կայծակնային, յորդահոսուն եւ որոտալի պոռթկումներով՝ ջրվիժումի ժայթքերով, բայց գեղարուեստական բարձրորակ, վերացնող եւ նուրբ ճաշակով:

Հայ երգն ու երաժշտութիւնը միշտ մաս կազմած են Հայ ժողովուրդի կեանքին: Հայ երգի եւ երաժշտութեան աշխարհահռչակ անուններ հայ անունը պանծացուցած են ամէնուրեք, իրենց հեղինակած եւ յօրինած երգերով եւ երաժշտութեամբ:

*
*
*

Երգ սիրեցէ՛ք կեանքից, գինուց, ամէն բանից աւելի,
Երգն է միակ բալասանը անդնդախոր ցաւերի,
Երգ հիւսեցէ՛ք, առանց երգի վիշտն աշխարհ է ցաւերի:

ՍԱՐՄԷՆ

*
*
*

Երգագուրկ մարդն է գագան,
Լոկ չար մարդը երգ չունի.
Քանի որ երգն էլ կեանք է,
Ու կեանքն էլ երգ է յաւէտ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

*
*
*

Հայ երգը զուլալ աղբիւր կենսայորդ,
Զայնեբանգներով յաւերժահնչիւն,
Յեղային զարթօնք, ազգահաւաքում,
Հայրենական հող, հայրենի կարօտ:

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Առանց երգի եւ երաժշտութեան, կեանքը անհամ է եւ ունայն:

ԹՈՐՈՆԹՈՅԷՆ ԵՐԵՒԱՆ, ԳՈՐԻՍ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

1991-ին Հայաստանի վերանկախացումը եւ Համայնավար վարչաձեւի փլուզումը առիթ ընծայեցին, որպէսզի հայրենիքս տեսնելու եւ հոն ապրող Սասունէն Մեծ Եղեռնին ապաստանած եւ հաստատուած հօրս կողմէ մեր հարազատները տեսնելու ու անոնց ծանօթանալու անհուն կարօտով, որոշեցի Հայաստան մեկնիլ եւ տասնեակ տարիներ առաջ կատարած ուխտս իրագործել:

KLM օդանաւով Թորոնթոյէն մեկնեցայ 5 Սեպտեմբեր 1997-ին: Ամսթերտամ հասայ տեղական ժամով 7:45-ին: 9 ժամ Ամսթերտամի օդակայանին մէջ թափառելէ ետք, երեկոյեան ժամը 5:30-ին, հայկական TU154-BU օդանաւով Երեւան հասանք գիշերը ժամը 12-ին: Այդ գիշեր ինծի դիմաւորութեան եկած Անդրանիկ Մելքոնեանի տունը պառկեցայ, որուն Թորոնթօ գտնուող աներորդիին զրկած դեղերը եւ նուէրները յանձնեցի:

6 Սեպտեմբերի առաւօտ իմ հարազատներու տուները փնտռեցի, որոնց հասցէները ունէի: Հօրս հօրեղբօրորդիին՝ Մերուժանին տունը գտանք, սակայն ինքը հոն չէր: Հեռաձայնով գտանք հօրս միւս հօրեղբօրորդիին՝ Ժորայեանց տունը եւ հոն մնացի այդ գիշեր եւ յաջորդ օր Անդրանիկ Մելքոնեանին տունէն պայտուակներս բերինք եւ ես հոն մնացի մէկ ամիս, իր եղբօր՝ Դաւիթին եւ միւս ազգականներու կողմէ հնարաւորութիւն ունեցայ տեսնելու Երեւանի տեսարժան վայրերը, այցելեցի Գրողներու Միութեան կեդրոնը, տեսակցեցայ այդ օրերու վարչութեան նախագահ մեծանուն արձակագիր Հրանդ Մաթեւոսեանի եւ այլ գրողներու հետ:

Մէկ ամսուան Երեւանի եւ այլ քաղաքներու եւ գիւղերու մէջ իմ ազգականներու հետ տեսակցութիւններս, կարօտակէզ հանդիպումներս մեր ծնողներու Սասունի կեանքին եւ յիշատակներուն մասին գրելը ընդարձակ տպաւորութիւններ եւ ըզզացումներ արձանագրել կը պահանջէ: Նպատակս այս գրութեամբ յիշատակել իմ հօրս հօրեղբօրորդիին երկու զաւակներուն՝ Դաւիթին եւ Ժորային հետ Երեւանէն Գորիս եւ Արցախ մեր ուղեւորութեան մասին պիտի ըլլայ:

27 Սեպտեմբեր 1997, Համաձայն մեր Համաձայնութեան, առաւօտեան ժամը 10-ին Դաւիթը եկաւ, իսկ ժորան եկաւ ժամը 11-ին: Նախաճաշէն ետք ճամբայ ելանք դէպի Արցախ-Ղարաբաղ, որ 1988-էն ի վեր ազրպէյճանական յարձակումներուն դէմ պաշտպանուելէ եւ յաղթելէ ետք իր անկախութիւնը յայտարարած էր՝ որպէս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն:

Հաճելի ճամբորդութիւնը սկսաւ աղօթքով, Հայկական երգերով եւ երաժշտութեամբ: Հերթականօրէն անցանք Արտաշատի շրջանի Երասխ եւ Արմաշ գիւղերէն: Ճամբան կեցանք եւ մեր յարգանքը մատուցանեցինք Հանճարեղ բանաստեղծ Պարոյր Սեւակի գերեզմանին, որ 17 Յունիս 1971-ին, Համայնավար վարչաձեւի ոճրագործներ, ինքնաշարժի արկած կազմակերպելով սպաննեցին տաղանդաւոր բանաստեղծը: «Յղիցի լոյս եւ եղաւ խաւար» արձանագրուած է անոր գերեզմանին վրայ:

Ապա մուտք գործեցինք Վայոց Ձորի մարզը, անցնելով Եղէզնաձոր, Սեւակաւան, Ելփին, Նորավանք, Աղաւնաձոր, Արփի, Գետափ, Մալիշքա, Վայք, Զառիթափ, Կարմրաշէն, Հերէն գիւղերէն:

Սիւնիքի մարզը, Սիւնեաց լեռներով, թէեւ լերկ, սակայն այնքան գեղեցիկ եւ տպաւորիչ է: Սիւնիքի մուտքի յուշակոթողին մօտ նկարուեցանք: Հոն, Որոտան գետի լայնածաւալ մասը հիանալի էր: Շարունակեցինք մեր երթը Սառնականք, Սպանդարեան, Վաղոտնի, Հարժիս, Հալիձոր. եւ ապա՝ շարունակեցինք մեր ճամբան դժուարանցանելի լեռնային ճամբաներով, սքանչելի տեսարանները վայելելով, բարձրացանք Տաթեւի վանքը: Ինչպէս չսքանչանալ Հայ ժողովուրդի հաւատքի զօրութեան, որ յանդգնած է բարձրաբերձ լեռներու բարձունքին վրայ բարձրացնել այս հրաշալի վանքը: Հինաւուրց մենաստանը Սիւնեաց աշխարհի, իր պատմական յիշատակարաններով, իր շարժական սիւնով, իր բնական աննման տեսարաններով: Տաթեւի ձորը, ուր մի քանի գետերու միացումով Որոտան գետի աւազանին հետ կը կազմուի ընդարձակ ու վիթխարի ձոր, կանաչ անտառներով պատած:

Կը պատմուի, որ մոնկոլական ծնունդով Լենկթիմուր, ասիական բազմաթիւ երկիրներ գրաւելէ ետք կը հասնի Հայաստան՝ Արաքսի ափը: Դեռ գետը չանցած, անոր կը ներկայանայ Միհրի անունով հայ իշխան մը, եւ փոխան մեծ գումարի կը ներկայանայ Լենկթիմուրին եւ կ'առաջարկէ իր ծառայութիւնը

անոր: Թիմոուրի հարցին, թէ ինչո՞վ կ'ուզէ ան ծառայել իրեն, իշխանը կը պատասխանէ.

— Քանի գիւղի բարձունքին գտնուող զանգը կայ, դուն չես կրնար այս երկիրը գրաւել: Գիւղացիները թշնամին երբ հեռուէն կը տեսնեն, այդ զանգը կը զարնեն եւ ժողովուրդը լսելով զանգի դողանջները, կը համախմբուի եւ կը պատերազմի թշնամիին դէմ:

Լենկթիմուր քիչ մը մտածելէ ետք կ'ըսէ.

— Գնա՛, այդ զանգը վառէ, փճացուր: Այդ բարութեանդ դիմաց ես քեզի ոսկի եւ իշխանութիւն կու տամ:

Դաւաճանը իրեն նման քանի մը համախոհներու հետ կ'երթայ եւ խարոյկ վառելով զանգակին տակ, կը կտրէ զանգակին ձայնը:

Լենկթիմուր զօրքով կ'անցնի Արաքս գետը: Վանահայրը իմանալով Լենկթիմուրի զօրքին յարձակման լուրը, կը կանչէ զանգակահարը եւ կը կարգադրէ շտապ զանգահարել: Զանգահարը որքան կը փորձէ, զանգէն ձայն չ'ելլեր: Զանգահարը կը վազէ վանահօր մօտ եւ կ'ըսէ.

— Լենկթիմուրը գիշերով եկած է եւ գրաւած է ամբողջ երկիրը:

Գիւղացիները զարմանքով իրարու կը հարցնեն.

— Բայց ինչո՞ւ չզանգահարեցին:

Ոմանք կը պատասխանեն.

— Զանգը գո՛ւր է, զանգը գո՛ւր է...:

Այդ դէպքէն վերջ, գաւառի անունը կը մնայ «Զանգեգուր»:

Լենկթիմուր որոշած է հիմնայատակ կործանել Տաթեւի վանքը եւ արմատախիլ ընել անոր մօտ գտնուող շարժական գաւազան սիւնը: Անոր համար, ան կը հրամայէ իր հրոսակներուն լծել 10 գոյգ գոմէշ, գութանի շղթայով կապել սիւնին եւ քաշել: Երբ գոմէշները կը սկսին քաշել, շղթան կը կտրուի եւ գոմէշները կ'իյնան ձորը: Լենկթիմուր եղածը տեսնելով կը հեռանայ Տաթեւէն:

Զանգեգուրի լեռները ունին 120 քիլօմետր երկարութիւն եւ մինչեւ 3000 մետր եւ ակելի բարձրութիւն: Զանգեգուրի լեռներէն սկիզբ կ'առնեն բազմաթիւ գետեր, որոնք տեղ-տեղ յառաջացուցած են խոր ձորակներ եւ կիրճեր: Հոսող ջուրերը, քայքայելով ապառաժները, որոշ տեղերու մէջ գոյացուցած են սա-

հանքներ եւ գեղեցիկ ջրվէժներ, ինչպիսին է օրինակ Շաքէի ջրվէժը: Զանգեզուրի լեռներու բնորոշ առանձնայատկութիւնն են հողմնահարուածներն խիստ այլափոխուած բարձունքներու ձեւեր, որոնց գագաթային մասը ունի անառիկ, վայրի տեսք:

Դժուարանցանելի կատարներով աչքառու է լեռնաշղթային յատկապէս հարաւային մասը: Այստեղ կը գտնուին անոր ամէնէն բարձր գագաթները՝ Սալվարդ, Շահապանք, Երնջակ, Նահապետ, Կապուտջուղ եւայլն: Կապուտջուղը ունի 3906 մետր բարձրութիւն: Մեղրիի մօտերը Զանգեզուրի լեռնաշղթան դէպի Արաքսի կիրճը կ'իջնէ գառիթափ լանջերով, որոնք կ'ապշեցնեն իրենց տարօրինակ ձեւերով եւ խայտաբղէտ գոյներով: Հարաւի Զանգեզուրի լեռները մասամբ ծածկուած են լայնատերեւ անտառներով, ուր կ'աճին վայրի պտղատու ծառեր:

Մէկ ժամ տեւեց Տաթեւէն էջքը դէպի Որոտանի եզերքը՝ խիտ մշուշի ներքեւ, մէկ ժամ ալ վերելք՝ քարքարոտ արահետներով Գորիսի ճանապարհին հասնելու համար:

Գորիս մտնելով կանգ առինք բաւական ընդարձակ պանդոկի մը առջեւ եւ առաջարկեցինք Դաւիթին, որ պանդոկ բարձրանայ: Դաւիթ կը պատրաստուէր ինքնաշարժը ապահով տեղ մը դնել, այդ պահուն, շուրջ 70 տարեկան անձ մը մեզի մօտեցաւ եւ առաջարկեց իր մօտակայ տունը գիշերել յարմար վարձքով: Մարդը ազնուօրէն ըսաւ.

— Եթէ հաւնիք՝ կը մնաք, այլապէս պանդոկը հոն է:

Գացինք: Իսկապէս մաքուր տուն էր: Երեք մահճակալներով, մաքուր սաւաններով: Երկուքը առանձին սենեակի մը մէջ, երրորդը՝ առանձին: Դաւիթն ու ժորան սակարկեցին: Մարդը անձ գլուխ 1000 դրամ ուզեց: Մերինները երեքիս 2500 դրամ առաջարկեցին: Համաձայնեցան: Մեր պայուսակները բերինք եւ տեղաւորուեցանք:

Մարդուն անունը Անուշաւան Հայրապետեան էր, կնկան անունը՝ Փնջիկ: Տունին հասցէն՝ Մովսէս Խորենացի փողոց, համար 57, հեռաձայն՝ 2-06-37:

Ամէն պարագայի, Դաւիթը գնաց եւ պանդոկի գիներուն ծանօթացաւ: Իրենց որպէս հայաստանցի օրը 4500 դրամ, իսկ ինձի, որպէս արտասահմանցի՝ 12.500 դրամ: Ուրեմն, Պր. Հայրապետեանի տան պայմանները աւելի գոհացուցիչ էին:

Պր. Հայրապետեանին տունը երկու յարկէ կը բաղկանար:

Առաջին յարկին վրայ գոյութիւն ունէին երկու սենեակ, խոհանոց եւ լուսացարան, իսկ երկրորդ յարկին վրայ՝ մեզի տրամադրուած երկու ննջասենեակները եւ փոքրիկ սենեակ մը: Երբ մենք եկանք, տիկին Փնջիկ վառարանին վրայ գետնախնձորով կերակուր կ'եփէր: Մեզի հետ շուտ մը մտերմացան եւ ստիպեցին որ միասին ընթրենք: Որպէսզի մեր մասնակցութիւնը արդարացնենք, ժորան պանդոկէն խորոված բերաւ եւ բոլորս միասին հաճոյքով ընթրեցինք, ապա խմիչքով, թէյով եւ սուրճով հիւրասիրուեցանք:

Պր. Հայրապետեան եւ տիկին Փնջիկ գորիսեան բարբառով խօսեցան Հայաստանի քաղաքական եւ տնտեսական կացութեան մասին եւ իրենց կեանքի դժուարութիւններուն մասին: Անոնք ունեցած են չորս աղջիկներ, որոնք հարս գացած են շրջանի գիւղերը: Պր. Հայրապետեան կենդանիներու (անասուններու) բժիշկ եղած է խորհրդային տարիներուն, սակայն, տարիքի բերմամբ հանգստեան կոչուած էր եւ ստիպուած իր տան ննջասենեակները վարձու տալով իրենց ապրուստը ապահովել:

Այդ գիշեր, 27 Սեպտեմբեր 1997, զարմանալիօրէն օդը ցուրտ էր: Անկողին մտայ, սկսայ դողալ: Կամաց-կամաց անկողինը տաքցուցի եւ քնացայ:

Կիրակի, 28 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 8-ին արթնացանք, Հայրապետեանները մեզի համար նախաճաշ պատրաստած էին: Պատրաստուեցանք մեկնելու: Ես, Դաւիթին եւ Ժորային բացակայութենէն օգտուելով, մեզի օգնող Հայրապետեաններուն մօտեցայ եւ իրենց տուի երեք հազար դրամ, թելադրելով, որ աւելի վճարածս մերիներուն չըսեն:

Մենք շատ գոհ մնացինք այս բացառիկ պանդոկէն եւ տիրոջ հարազատի սպասարկութիւններէն: Իրենք ալ գոհ էին մեզմէ:

— Այդ պատճառով, որեւէ ատեն եթէ Գորիս գաք, — ըսաւ Պր. Անուշաւանը, — մեր տունը պատրաստ է ձեզ ընդունելու եւ որպէս հարազատ հիւրասիրելու:

Բաժնուեցանք հիւրասէր եւ ազնիւ այս հայ տունէն եւ ճամբայ ելանք դէպի Արցախ-Ղարաբաղ, անցնելով Հարթաղէն, Խնձորեսկ եւ այլ գիւղերու մօտէն եւ լեռնային դժուարանցանելի եւ նորոգուող ճամբաներէն հտք, անցանք Քարաշէն գիւղէն, Աղաւնոց գետէն եւ հասանք Բերդաձոր գիւղը, ուր ազա-

տագրական ծանր կռիւներ տեղի ունեցած են: Անցնելով Քաշաթաղ-Լաջին շրջանէն, շարունակեցինք մեր ճամբան: Նկատեցինք, որ Բերդաձորն ու Քաշաթաղը ազատագրուելէ ետք հայերով բնակուած են, թէեւ տուներուն մեծ մասը կիսաքանդ եւ անմարդաբնակ էր:

Մինչեւ Քարինտակ եւ Շուշի անցանք լեռնային ճամբաներով: «Հայաստան Հիմնադրամ»ի կողմէ կառուցուող Գորիս-Ստեփանակերտ ճամբան կը շինուէր բլուրներու եւ լեռներու կողերը քանդելով, արդիական մեքենաներով լայնցնելով նախկին արահետները եւ արդէն իսկ կարգ մը հատուածներ ասֆալթապատուած եւ արդիական օրէնքներով գործածուելի սկսած էին: Ճամբան, ստիպուած, բլուրները քանդող թրաքթէօրներու աշխատանքին պատճառով, սպասեցինք որ բացուի, որպէսզի շարունակենք մեր ճամբան:

Հասնելով Շուշի, հանդիպեցանք կիսաքանդ եւ հրդեհուած տուներու, որոնց ազրպէյճանցի տէրերը անբնակելի ըլլալով հեռացած էին քաղաքէն:

Հայերը գրաւելով պատմական Շուշին, սկսած են վերանորոգութեան աշխատանքները, առաջին հերթին Ղազանճոց եկեղեցին, որ որպէս զինամթերանոց գործածուած էր ազրպէյճանցիներու կողմէ, ինչպէս նաեւ թաղային ճամբաներ եւ տուներ, ուր հայերը սկսած էին բնակութիւն հաստատել, դպրոց բանալով հայ աշակերտութեան համար:

Շուշիէն ետք շարունակեցինք մեր ճամբան: Հասանք Ստեփանակերտ, ապա, շարունակեցինք մեր ճամբան դէպի Աղդամ՝ ազրպէյճանական քանդուած քաղաքը, ուր քանդուած տուներու բակերուն մէջ գտնուող նուռի թուփերէն քանի մը տհաս նուռեր փրցուցի եւ հետս թորոնթօ բերի որպէս յիշատակ:

Ինչպէ՞ս չգնահատել ղարաբաղեան ազատամարտիկներու հերոսութիւնն ու քաջութիւնը, որոնք ամբողջ քաղաք մը քանի մը ժամուան ընթացքին գրաւած են:

Երբ Աղդամէն կը վերադառնայինք, ականատես եղանք Աղդամի քանդուած տուներէն յատուկ ինքնաշարժերով բեռցրուած տնային քարերու, որպէսզի գործածուին Ստեփանակերտի պատերազմէն քանդուած տուներու վերաշինման: Ճամբան հայ ոստիկաններու հանդիպեցանք, որոնց հետ նկարուեցանք:

Աղդամէն ետք մեր ճամբան շարունակեցինք դէպի Գանձասարի Ս. Յովհաննէս եկեղեցին, անցնելով փոսերով եւ կիսա-

քանդ ճամբաներով, շնորհիւ հօրեղբօրորդի Դաւիթին վարպետութեան եւ համբերութեան:

Ճամբան երբ ես կը սքանչանայի Ղարաբաղի հրաշալի գեղեցկութեան, բլուրներու եւ լեռներու կանաչապատ տեսքին հայրենակարօտ բացագանչութիւններով, Դաւիթ այս անգամ չկրցաւ համբերել եւ ըսաւ.

— Աղբար Գրիգոր, դուն այս բոլոր գեղեցկութիւնները տեսնելով, վայելելով, «Օ՛խաշ» կ'ըսես, առանց բան մը ուտելու, բայց մեր փորը կը մռմռայ, անօթեցանք:

Դէպի Գանձասար ճամբուն վրայ, ականատես եղանք պատերազմէն մնացած քանդուած հրասայլերու, զինուորական փոխադրամիջոցներու եւ այլ զինուորական պիտոյքներու: Անցանք Յովսէփաւան, Դաշդուլաղ, Այդիզէն, Կիջան, Վանք գիւղերէն: Վերջապէս հասանք լեռնագագաթին վրայ գտնուող Ս. Յովհաննէս եկեղեցին:

Եկեղեցին մտանք, աղօթեցինք, մոմ վառեցինք, ապա ծանօթացանք եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Յովհաննէս Քահանայ Յովհաննէսեանի հետ, որ աւարտած է Ս. Էջմիածնի Դպրեվանքը: Երիտասարդ քահանայ մը, որ ուզեց հիւրասիրել մեզ, բայց մենք մերժեցինք:

Ս. Յովհաննէս եկեղեցին շինուած է 1216 թուին: 1992-ին ազերիները ուբակոծած են վանքը, պատճառ դառնալով քանդուամներու: Մէկ հոգի սպաննուած է եւ երկու հոգի վիրաւորուած: Վերաշինութեան աշխատանքները կը շարունակուին: Հոն գերեզմաններ կային: Յուշակոթող մը տեսանք, որուն տակը գրուած էր «Աստ հանգչի Ներսէս Հասանճալենց» անունով մարդու մը անունը:

Ս. Յովհաննէս եկեղեցին աշխատունակ է եւ Վանք գիւղի ժողովուրդը միշտ ներկայ կ'ըլլայ պատարագներուն եւ ժամերգութիւններուն: Իրապէս գնահատելի է Վանք գիւղի ժողովուրդին կրօնասիրութիւնը:

Երեկոյեան ժամը 5:30-ին Ստեփանակերտ վերադարձանք:

Ստեփանակերտի կեդրոնական հրապարակին վրայ գտնուող գեղեցկատեսիլ, խորհրդային տարիներուն շինուած պանդոկէն մէկ սենեակ երկու մահճակալով վարձեցինք օրը 2600 դրամով, ես եւ ժորան գիշերեցինք այդ պանդոկին մէջ, իսկ Դաւիթը մեկնեցաւ իր բարեկամին տունը, որուն հետ ցորեն եւ ալիւր հայթայթելու առեւտրական կապ ունէր:

Պանդոկին ներքնայարկը գտնուող ճաշարանին մէջ խորոված ապսպրեցինք: Մեր դրամով շատ աժան ընթրիք մը ճաշակեցինք եւ ժամը 9-ին ելանք մեզի տրամադրուած սենեակը, ձայնաւոր մահճակալով: Իսկ լուացարանը՝ հինցած եւ ժանգոտած խողովակներով եւ ծորակներով, ձեռով մը մեր պէտքերը գոհացուց:

Առաւօտեան ժամը 7-ին արթնցանք: Պատշգամ ելլելով Ստեփանակերտի առաւօտը դիմաւորեցինք, դիտելով գործի գացող ստեփանակերտցիները: Ժորան սուրճ պատրաստեց: Դաւիթն ալ եկաւ: Ես եւ ժորան արտաքին նախարարութիւն գացինք, որպէսզի թոյլտուութիւն ստանամ կարգ մը տեսարժան վայրեր նկարելու: Պաշտօնեան մեր ինքնութիւնը ճշդելէ ետք, արտօնութիւն տուաւ: Դուրսը կեցած էինք, եկաւ Դաւիթին բարեկամը՝ Արկաղի Հայրապետեան: Դաւիթ զիս ներկայացուց Արկաղիին, ընդգծելով մեր ազգականական կապը:

Պանդոկին հետ մեր հաշուետուութենէն եւ վճարումէն ետք, ճամբայ ելանք դէպի Շուշի: Այցելեցինք «Արամ Մանուկեան» վարժարանը եւ հանդիպում ունեցանք տնօրէն Պր. Յովիկ Մուսայէլեանին եւ ուսուցչական կազմին հետ: Յովիկ Մուսայէլեան բանաստեղծ է եւ տարիներ առաջ, Շուշի այցելող թորոնթոցի մը հետ, ինծի մակագրուած իր բանաստեղծութիւններու գիրքը ինծի նուիրած էր: Խումբով նկարուեցանք, հիւրասիրուեցանք քոնեակով եւ տուրմով (չոքոլաթ): Այն ատեն Շուշիի «Արամ Մանուկեան» դպրոցը ունէր 190 աշակերտ: Նկարուեցանք աշակերտներուն հետ:

Այս այցելութեամբ Յովիկ Մուսայէլեանի հետ մեր բարեկամութիւնը աւելի սերտացաւ: Ան մեզ ճաշի հրաւիրեց, սակայն ժամանակի սղութեան պատճառով չկրցանք գոհացում տալ իր փափաքին: Իմ բանաստեղծութիւններուս առաջին գիրքը՝ «Սիրտը Ափին Մէջ» մակագրելով իրեն նուիրեցի, ինչպէս նաեւ Ղարաբաղի մասին գրած բանաստեղծութիւններուս երգի վերածուած քաւէքը: Շատ շնորհակալ եղաւ:

Շուշիէն լեռնային ճամբաներով ճամբայ ելանք, վերադառնալու համար անկախ Հայաստանի մայրաքաղաք Երեւան:

Ճամբան անօթութիւն զգալով կեցանք «Արմէն Խոհանոց» ճաշարանին առջեւ: Խորովածի ապսպրանքէ ետք, տեղ գրաւեցինք մեզի յատկացուած սեղանին շուրջ: Դաւիթ ապսպրած էր նաեւ օղի: Սկսանք ուտել եւ կենացներ արտասանել: Ճաշարա-

նին տէրը մեզի մօտեցաւ եւ հարցուց, եթէ ուրիշ բանի պէտք ունինք: Դաւիթ ըսաւ.

— Մենք Ղարաբաղ այցելութեան եկանք Ղարաբաղը ծանօթացնելու համար մեր հօրեղբօրորդիին, որ Գանատայէն որպէս ուխտաւոր եկած է Հայաստան եւ Ղարաբաղ:

Մարդը ինծի դարձաւ եւ բարի գալուստ մաղթեց եւ մեկնեցաւ: Վերադարձաւ իր հետ բերելով շիշ մը Ղարաբաղեան թուփի օղի՝ ի պատիւ գանատացի ուխտաւորին:

Բացինք շիշը: Գաւաթները լեցուցինք: Հօրեղբօրորդիներս օղին ջուրի պէս խմեցին բարի գալուստի եւ առողջութեան կենացներով, իսկ ես, իմ կարգին բարեմաղթութիւններս արտայայտելէ ետք, հագիւ ումպ մը առի թուփի օղիէն, կոկորդս կարծես կրակ ինկաւ, չկրցայ շարունակել եւ գաւաթը տեղը դրի: Դաւիթն ու Ժորան շարունակեցին խմել: Վարժութեան հարց...:

Երեկոյեան տուն հասանք յոգնած եւ ցնցուած յատկապէս ճամբաներու փոսերէն, բայց, գոնէ ես, ամբողջ սրտով եւ միտքով գոհացած, ակնատես ըլլալով հազարաւոր հայրենասէր հերոսներու նահատակութեամբ ազատագրուած Արցախ-Ղարաբաղի ազերիներու կողմէ բռնագրաւուած հողերուն, ուրախութեամբ կարգալով Ղարաբաղի կառավարական շէնքին ճակտին արձանագրուած անմահ բանաստեղծ Եղիշէ Չարենցի հետեւեալ պատգամը.—

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

ՀԱԼԷՊԻ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ

Սասունի եօթը հիմնական շրջաններու՝ Խուլթ-Բռնաշէնի, Մոտկանի, Փսանքի, Խուլթ-Խիանքի, Տալլորիկի, Շատախի եւ Սասունի հայաբնակ 300-է աւելի գիւղերէն բազմաթիւ սասունցիներ, տասնըհինգերորդ դարէն սկսեալ, իրենց տնտեսական կացութիւնը բարելաւելու համար, որպէս պանդուխտ կու գային Սուրիա, յատկապէս Հալէպ քաղաքը եւ շրջանները, ինչպէս նաեւ՝ Կիլիկիոյ Այնթապ, Քիլիս եւ շրջանները:

Որպէս պէճաբ եկողները դրամ չինելով կը վերադառնային Սասուն, սակայն, անոնցմէ ոմանք, Հայաստանի կարգ մը քաղաքներէն եւ գիւղերէն եկած հայորդիներուն հետ համայնք ստեղծելով կը մնային Հալէպի մէջ, ընդհանուր եւ հաւաքական միջոցներով կը ձեռնարկէին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Քառասուն Մանկանց Եկեղեցիին շինութեան:

Դարերու ընթացքին հայ համայնքի թիւը կը բազմանար նոր եկողներով եւ ամուսնութիւններով, որոնք աշխատելով տուն-տեղ կ'ըլլային եւ կ'օգնէին Սասուն ապրող իրենց ընտանիքներուն եւ հարազատներուն:

19-րդ դարու երկրորդ կիսուն, թրքական եւ քրտական անտանելի ճնշումներու, թշնամութիւններու, անարդարութիւններու, արիւնահեղութիւններու եւ արհաւիրքներու հետեւանքով Սասունի մէջ կը ստեղծուին դիմադրական եւ պաշտպանողական հայդուկային խումբեր, ղեկավարութեամբ Բռնաշէնի Կուռթիբ գիւղը 1863-ին ծնած Արաբոյի (իսկական անունով Առաքել), որ ժողովուրդի պատուի, իրաւունքներու ու ազատութեան համար պայքարի ծանր, փշոտ ու վտանգներով լեցուն ուղին նախընտրեց, գնաց Հալէպ, մշակ դարձաւ եւ վաստակած դրամով հրացան գնեց եւ վերադառնալով կազմակերպեց խումբ մը, որ կը կռուէր քրտական աշիրաթներու եւ թրքական ճնշող բանակներու դէմ:

Գէորդ Չաւուշ (Սարհատ) ծնած է Փսանք գաւառի Մկթենք գիւղը: Ան եւս միացաւ Արաբոյի խումբին, կռուելու համար հայ ժողովուրդի պատուին եւ ազատութեան համար, սակայն դրամ չունէր հրացան գնելու համար: Գէորդ որոշեց Արաբոյի օրինակով Հալէպ երթալ, դրամ չահիլ եւ հրացան գնել: Անոր ընկերացաւ Գալչոյի Մանուկը եւ 1889-ի Սեպտեմբերին երկու ընկեր ճամբայ ելան դէպի Հալէպ: Տիգրանակերտի մէջ միացան

առեւտրական կարաւանի մը: Հալէպ հասնելով, հարցուփորձ ընելով գտան հայկական եկեղեցին: Հալէպի մէջ շատ պանդուխտ հայեր, սասունցիներ կ'աշխատէին: Անոնց մէջ կային մկրթենքցիներ, որոնք Գէորգին եւ Գալչոյի Մանուկին ապաստան տուին:

Առաջին անգամ Սասունէն ոտքը դուրս դրած Գէորգի համար Հալէպը այլ աշխարհ էր, իր շինութիւններու անծանօթ ոճով, անծանօթ տարազ կրող բազմութիւններու եռուզեռով, շուկաներու աղմուկով, մզկիթներու կանչերով:

Գէորգը սկիզբը աշխատեցաւ սասունցիի մը ջաղացքին մէջ, ապա՝ հացի փուռի մը մէջ:

Այդ փուռը կը գտնուի Պապ էլ-Նասր ներսի շուկայ մուտքին, գոր ինծի ցոյց տուաւ հանգուցեալ հայրս, Տալուրիկ գաւառի Սպաղանք գիւղէն, Ֆետայի Գալէին հօրեղբորորդին եւ Մակարին սանուկը:

Վեց ամիս աշխատելէ ետք, իր հաւաքած չնչին գումարին աւելցնելով հարազատներու եւ հայրենակիցներու հաւաքած դրամները (անոնք Գէորգի հայրենասիրական նպատակները գիտէին եւ օր առաջ կ'ուզէին որ Գէորգ հասնի Սասուն, ուր անոր ներկայութիւնը օգի պէս անհրաժեշտ էր), Գէորգը հրացան գնեց եւ իր հայրենակիցներուն շնորհակալութիւն յայտնելէ վերջ ըսաւ.

— Հէ՛յ Մարաթուկ, քու զօրութեանը մատաղ, ինծի կամք եւ ոյժ տուր մինչեւ կեանքիս վերջը, Արաբոյի նման իմ այս «Արաբոյով» խփել թշնամիներուն եւ դաւաճաններուն, պաշտպանելու թշուառները եւ զրկուածները:

Այդ օրուընէ Գէորգ իր հրացանը կնքեց «Արաբօ» անունով:

Սասունցի պանդուխտներ Սուրիա եւ Կիլիկիա գալով կըրցան իրենց եւ իրենց ընտանիքներուն ապրուստը ապահովել ընդհանրապէս ջաղացպանութեամբ եւ փռապանութեամբ, քանի որ բոլորն ալ գիւղացիներ էին, ընդհանրապէս անուս եւ արհեստ չունեցող անձեր:

Հալէպի փուռերուն մեծամասնութիւնը սասունցիներուն կը պատկանէր եւ այդ պատճառով, Ս. Ծնունդի եւ Ս. Զատիկի առիթով երբ փուռերը գոց կը մնային, ժողովուրդը տուններուն մէջ

լաւաշ հաց կը պատրաստէր, որպէսզի երեք օր հաց ունենան: Իսկ արաբները «փուռ կ'երթամ» ըսելու տեղ կ'ըսէին «Անառայիի էնտ սուսանի» (ես սասունցիի կ'երթամ): Փուռ եւ սասունցի հոմանիշ դարձած էին:

Ուրեմն, ինչպէս ըսի, Եղեռնէն ետք Հալէպ կայք հաստատած գրեթէ բոլոր սասունցիները կա՛մ Ջղացպան էին, կամ փռապան: Եւ եթէ սասունցի մը վաճառականութիւն ընելու եւ առեւտրական գործ մը բանալ համարձակէր, շատ շուտով կը ձախողէր, որովհետեւ առեւտրականի ճարպիկութիւն, դիւանագիտութիւն եւ խաբեբայութիւն ըսուածները չէին գիտեր եւ չէին փորձած:

Գիւղացի հայրս Կիլիկիոյ շրջանին մէջ Ջղացպանութիւն ըրած է, Նոր Գիւղի մէջ (Հալէպ) շինած իր տունին մէկ սենեակը խանութի վերածելով մասվաճառութիւն փորձած է, չէ յաջողած: Յրանսական բանակը երբ Սուրիան կը գրաւէ, անոնց անուշեղէն (մուշապապֆ) շինելով ծախած է, չէ յաջողած: Թան շինելով Հալէպի կեդրոնին մէջ (Պապ էլ-Ֆարաճ) ծախած է, չէ յաջողած: Ամերիկայէն գործածուած ժաքէթներ ուսին վրայ դրնելով Հալէպի ներսի շուկաներուն մէջ շրջագայելով ծախած է, երբեմն ալ իր երեք զաւակները հետը ունենալով, տեղ չէ հասած: Նոր Գիւղի տունը ծախելով Ազէզ գիւղաքաղաքին մէջ ամերիկեան գործածուած հագուստներ ծախելու խանութ մը վարձելով գործի լծուած է, ինքզինք առեւտրական կարծելով՝ չէ յաջողած, որովհետեւ ուրիշ առեւտրական արաբ մը հինգ ոսկի ֆրուղ տալով խանութը առած է: Իսկ ինք շահ ըրաւ կարծելով թաղին մէջ ուրիշ խանութ մը վարձած է՝ չէ յաջողած, որովհետեւ իր յաճախորդները երբ իր նախկին խանութը կու գան եւ զինք կը փնտռեն, հինգ ոսկիով խանութը առնող արաբը կ'ըսէ.

— Այդ մարդը խանութը ծախեց եւ Հալէպ գնաց:

Հայրս անգործ մնալով կը ստիպուի իրապէս Հալէպ երթալ եւ այս անգամ Ուրբաթ եւ Կիրակի օրերուն տեղի ունեցող պազարներուն պասքա բանալով շրջան մը իր ունեցածը կամացկամաց կը կորսնցնէ եւ կը վերադառնայ ուսին վրայ կրկին ժաքէթ ծախելու:

Հալէպի մէջ սասունցիները յաճախ գանազան սրճարաններու մէջ մտերիմ հաւաքոյթներ կ'ունենային, մինչեւ որ բացուեցաւ Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Միութեան ահումբը, ուր տաման եւ թղթախաղը զիրենք զբաղ կը պահէր,

քանի բաւական տարիք առնելով ծանր գործ աշխատելու կարողութիւն չունէին:

Անշուշտ իրենց խօսակցութիւնները ընդհանրապէս իրենց հայրենի երկրին՝ Սասունի իրենց ապրած կեանքին մասին կ'ըլլային, եւ մանաւանդ հերոս Ֆետայիներու մղած ազատագրական եւ պաշտպանողական կռիւներուն եւ մարտերուն մասին:

Հալէպի մէջ ապրող սասունցիներուն մէջ արհեստով բացառութիւն կը կազմէր Սասունի Սեմալ գիւղէն Լեւոն Շառոյեանը, որ Հալէպի ձիտէյտէ թաղամասի ոսկերիչներու շարքին հնակարկատի խանութ ունէր, ուր գրեթէ ամէն օր կարգ մը սասունցիներ հոն կը հաւաքուէին, զիրար տեսնելու, վիճաբանելու, իրենց անցեալը յիշելու՝ երազելով Սասունի դաշտերն ու այգիները, լեռներն ու ձորերը:

Այդ հաւաքոյթներուն հօրս հետ ներկայ գտնուեցայ, թէեւ հազիւ 12 տարեկան էի եւ ուշադրութեամբ մտիկ կ'ընէի ներկաներուն խօսակցութիւնները, որոնք ընդհանրապէս կ'ընդգրկէին Սասունի աշխարհագրական դիրքը եւ կորսուած հայրենիքի կարօտը:

Հայրենասիրական արտայայտութիւններու կարգին կարօտով կը յիշէին Սասունի կանաչազարդ եւ մէկը միւսին զուգահեռ խոյացած լեռները եւ լեռնաթեւերը: Ասոնց կատարներէն մինչեւ ստորոտները ամէն քայլափոխին կը հոսէին առատ աղբիւրներ: Լեռներու որոշ մասերը ծածկուած են անտառներով եւ մացառուտներով: Սասունը ծածկուած կ'ըլլար կաղնիի, կաղամախիի, ուռենիի, հողենիի, թխկիի, կէչիի, նորգենիի, ալուճի, քարճինի, եղուիթի, դառինջի, շլորի, մասրենիի, բղնջի, մրկիթի, փշատենիի, ընկուզենիի եւ ուրիշ տասնեակ տեսակի պտղատու եւ անպտուղ ծառերով ու թուփերով: Սասնոյ սարերը հարուստ են նաեւ բանջարով՝ ինչպէս՝ խանէն, կանկառ, խաւրձիլ, քեղ, բեժոկ, թթուաշ, ժախ, նուրիկ, մանդակ: Սասնոյ նշանաւոր լեռներն են՝ Անդոկ, Կեքին, Ծովասար, Մարաթուկ, Գրգուռ:

Սասունի մասին իր զգացումները բանաստեղծութեամբ արտայայտած է սասունցի մտաւորական, 1948 թուականի Սուրիոյ Լաթաքիա քաղաքի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Հմայեակ Քահանայ Երէցեանը եւ այդ օրերուն Սասնոյ Հայրենակցական Միութեան «Սասուն» տարեգիրքին մէջ լոյս տեսած էր, եւ ես սեմալցի Լեւոնին հնակարկատի խանութին մէջ հաւաքուած հայրենակից-

ներուս արտասանեցի, որովհետեւ Հալէպի սասունցիները Հայերէն գրել-կարդալ չէին գիտեր: Հայերէն գրել-կարդալ գիտցողներ էին սասունցի Տէր Մկրտիչ Աւագ Քահանայ Մուրատեանը եւ Հայրս՝ Ղազար (Խարզօ) Հոթոյեանը, որոնք ուսանած էին Մուշի Ս. Կարապետ վանքին մէջ, անշուշտ տարագրութենէն շատ առաջ:

Կու տամ բանաստեղծութիւնը.—

ՊԱՇՏԵԼԻ ՍԱՍՈՒՆԻՍ

Կեանքիս արփին դէպ՝ արեւմուտ կը հակի,
Պարմանի եմ ես սակայն,
Զի, հին արեւդ՝ իմ ամէն մէկ երակի
Մէջ կը պահէ հուրն արեան:

Տարիները՝ գըլխուս ձիւն են, ձիւն դիզէր,
Բայց հասակս է ուղղաձիգ,
Մէջս են կանգուն քու վեհ լեռներդ հողմաբեր,
Ուր կը շքնչեն մեր նախնիք:

Իմ ակնոցս է քու ջուրդ, Սասուն, ջուրդ գուլալ,
Ու կը տեսնեմ լոկ անով,
Իմ մանկական դէմքիս խամրած վարդն դարձեալ,
Եւ ժրպիտներս հոգեթով:

Պարզ, անշուք է այսօր ահա՝ սրբեմն իմ,
Բայց զարդարուած զիս կը զգամ,
Երագներովս ամէն գիշեր կը հագնիմ
Բիւր ծաղիկներ անթառամ:

Խաչի համեստ պաշտօնեայ եմ թէպէտեւ,
Բայց բուրվառիս ճշմարիտ.
Խունկըն եղաւ բարկ վառօդը, որ՝ յարատեւ՝
Ամպերն կազմեց երկնփիղ:

Պատարագիս՝ ես յիշած եմ անդադար
Ծուռ-Դաւիթներդ շանթարկու,

Որ տանարիդ դարձան պաշտպան դարե դար՝
Ընդդէմ բի՛ւր ոսոխներու:

Ու յիշած եմ դարուս անմահ Գէորգներդ,
Մակար, Գալէն եւ Մուշեղ,
Վեղարաւոր քաջըն Պետրոս վարդապետ,
Ամէն մէկը վե՛հ, ահե՛ղ:

Հաղորդուած եմ, Սասո՛ւն, հողովդ արիւնթոր,
Ու սրբացած է հոգիս,
Երանի՛ թէ սուրբ քարերէդ մէկ կտոր
Օր մը դրուէր շիրիմիս:

*
*
*

Սասունցիներու դէպի Հալէպ հոսքը հինգ դարերու պատմութիւն ունի, որոնք ընդհանրապէս եկած են դրամ վաստակելու եւ իրենց ընտանիքներուն եւ հարազատներուն օժանդակելու, որոնք ապրուստի դժուարութիւններ ունին, ապրելով Օսմանեան պետութեան կրօնամոլ հովանիին տակ եւ քիւրտերու վայրագութիւնները եւ դժուարութիւնները դիմագրաւելով:

Հալէպի մէջ ընդհանրապէս եղած են փռապաններ եւ Հալէպէն դուրս գիւղական շրջաններու մէջ՝ ջաղացպաններ:

Հայոց Մեծ Եղեռնէն վերջ, Սասունէն հեռացած սասունցիները, տարիներու ընթացքին տարիքի բերմամբ հանգստեան կոչուելով, ինչպէս նախապէս ըսի, միշտ իրարու մօտ կու գային եւ Սասունի կարօտով եւ օր մը կրկին տեսնելու յոյսով կ'ապրէին:

Հայրս տասնեակ արհեստներ փորձելէ ետք, միացաւ սասունցի արմատներով քեռայրիս, որ փուռ մը ունէր Հալէպի Սիւլէյմանիէ թաղի դէպի քաղաք վերելքին աջ կողմի առաջին թաղին մէջ, որուն մէջ ես ալ աշխատելու բաժին ունեցայ յաճախորդներուն ծառայելով:

Հալէպ քաղաքը մինչեւ 20-րդ դարու սկիզբները ունէր Քուէյք անունով գետ մը, որ Թուրքիայէն գալով կ'անցնէր Հալէպէն, ճամբուն վրայ աշխատեցնելով ջաղացքներ, որուն ջուրերէն կ'օգտուէին գետեզերքի պարտէզները, սակայն, թուրքերը ինչ-ինչ պատճառներով գետին ջուրերը օգտագործեցին Թուր-

քիոյ մէջ, եւ այդ պատճառով քիչ քանակութեամբ ջուր կը հասնէր Հալէպ: Գետին ջուրերով աշխատող ջաղացքները անգործածելի դարձան, իսկ ամրան շրջանին, գետեզերքի պարտէզներուն գործածելու համար հազիւ առուի մը քանակութեամբ ջուր կը հոսէր:

Պարտիզպանները որպէսզի եկած ջուրերէն լիովին օգտուէին, մաքրել կու տային պարտէզներու մէջէն անցնող գետակին ցեխերը, որպէսզի եկող ջուրերը արագ հոսին:

Հայրս, պալիսի ժաքէթ ծախած ատեն ծանօթացած ըլլալով քանի մը պարտիզպաններու, անոնց հետ համաձայնութիւն կնքած էր մաքրելու աշխատանքը ստանձնելու սասունցի իր հայրենակիցներով, որոնք թէեւ հանգստեան կոչուած էին, սակայն աշխատելու կարողութիւն ունէին: Անոնցմէ շուրջ 10 հոգի, ամէն ամառ հօրս ղեկավարութեամբ կը մաքրէին գետակի ցեխերը, օրական չորս ոսկի աշխատավարձքով:

Այդ տարիներուն, ես, հազիւ 10-12 տարեկան, չար եւ արկածախնդիր ընկերներով՝ հօրս աշխատանքի միջավայրին մէջ գտնուող ծառերուն վրայ կ'ելլէինք, ծիրանի ծառերը կը մաքրէինք եւ շատ լաւ կը յիշեմ Այն Այնթէլի մօտերը գտնուող աւերակ (չաշխատող) ջաղացքին մօտ գտնուող ճերմակ եւ սեւ թուրթի ծառերուն վրայ հասունցած թութերը կ'ուտէինք եւ տուն ալ կը տանէինք, երբեմն հալածուելով պարտիզպաններէն:

Անշուշտ հայրս եւ իր հետ աշխատող սասունցիները կէսօրուան ճաշին իրենց բարբառով կը յիշէին իրենց անցեալը եւ կարօտով կ'երգէին հայրենասիրական երգեր, ինչպէս Գէորգ Չառուշի երգերը, «Սուլուխի կռիւ»ի երգը, «Զայն մը հնչեց»ը, «Սերոբի եւ Սօսէին երգը», «Սերոբ փաշայի երգը», եւ այլն:

Եւ այսպէս տարիներու թաւալումով Սասուն ծնած, ապրած եւ վայելած սասունցի մեր հայրերը Սասունէն հեռու, օտար հողերու մէջ թաղուեցան, Սասուն վերադառնալու կարօտը իրենց սրտին, մեզի կտակելով Սասունը ազատագրելու սրբազան պարտականութիւնը:

Սասունի կարօտը, հրգիր երթալու հնարաւորութիւնը եւ փափաքը, ծնունդ տուին Հայաստանի մէջ ժողովրդային երգի մը՝ «Քելէ, լաօ», այրող զգացմունքով, խորքի ու մեղեդիի ներդաշնակութեամբ, որ ցաւագին պատմութեան մը տարողութիւնը ունի:

Ահա այդ սրտամորմոք երգը.—

ՔԵԼԷ, ԼԱՕ

Քելէ՛, Լաօ, քելէ՛ երթանք մըր էրգիր,
Երթանք ըն ձոր, քաղինք մատաղ խաւածիլ,
Քաղինք, քաղինք, էնինք մըզի դեղ ու ճար,
Քելէ՛, Լաօ, քելէ՛ երթանք մըր էրգիր:

Ամէն թփին կ'իջնի քաղցրիկ մանանայ,
Մէկ-մէկ փշուր ուտինք, մըր սիրտ հովանայ,
Սասնայ էրգիր մըր աչու ու դէմ ծովանայ,
Քելէ՛, Լաօ, քելէ՛ երթանք մըր էրգիր...

Հոն արոսներ կտուց-կտցի կը երգին,
Ծիծեռնակներ թելիկ-թելիկ կը ծափին,
Քարեր առանց մըզի արցունք կը թափին,
Քելէ՛, Լաօ, քելէ՛ երթանք մըր էրգիր:

Մըր հէր էնտեղ, մըր մէր էնտեղ կը ծաղկին,
Անուշ գիլան, մըմուռ ձէնով կը կակչին,
Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր,
Էլի՛, Լաօ, քելէ՛ երթանք մըր էրգիր...

* * *

Մեր բազմադարեան բանահիւսական արուեստին մէջ մեծ ժողովրդականութիւն գտած է այս երգը: Սակայն շատ պարզ է, որ այս անանուն հեղինակը սասունցի է, Սասունի լեռնաշխարհին մէջ ծնած, այդ աշխարհի սքանչելի լեռներուն, դաշտերուն, ձորերուն եւ ջուրերուն պատկերներն ու կարօտը աչքերուն մէջ, այդ կորսնցուցած աշխարհի ցաւով ապրող եւ տոչորող սասունցի մը, որ իր սրտին մէջ ամբարուած յուզմունքը կ'արտայայտէ բանաստեղծութեամբ, չգտնելով ուրիշ ճանապարհ Սասուն՝ իր ծննդավայրը վերադառնալու:

Այս սքանչելի երգէն ազդուած, ամենայն հայոց կին բանաստեղծ Սիլվա Կապուտիկեանը հետեւեալ բացատրողական եւ բովանդակալից բանաստեղծութիւնը գրած է, բանաստեղծական արուեստով յագեցած եւ հայրենասիրական զգացումով աւլցուն.—

ՔԵԼԷ, ԼԱՕ

Գիշեր-ցերեկ նոյն երգն է իմ ունկերում,
Զայնի տեղակ ծուխ է ելնում այդ երգից.
Ու ծխի մէջ կակծում է մի ծերուկ՝
«Քելէ՛, լաօ, քելէ՛ էրթանք մըր էրգիր»:

Արնոտել է ոտքը նամբից քարքարոտ,
Մանգաղն ուսած, գաղթի մախաղը մէջքին,
Դեռ քայլում է սարով՝ ձորով, աշխարհով՝
«Քելէ՛, լաօ, քելէ՛ էրթանք մըր էրգիր»:

Աչքերի մէջ յամառ մի ուխտ ու հարցում,
Ու մի գարմանք, խեղճ մի գարմանք անմեկին,
Հարցնում է իրեն, բախտին, Աստըծուն՝
«Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Իր ի՞նչ գործն է, թէ կայ սահման ու կայ վէճ,
Իր ի՞նչ գործն է, թէ կան ոռւմբեր ու հրթիռ,
Հողի, հոգու միամիտ կանչն է իր մէջ՝
«Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Իմա՞լ կ'եղնի, ինքը՝ այստեղ, հողն այնտեղ,
Արտը կղծել, սպասում է իր ձեռքին,
Ինչպէ՞ս թողնենք տունն ու ջաղացը՝ անտէր,
«Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Ինչպէ՞ս խեղդենք սեւ խոռվքը Սասնայ տան,
Ինչպէ՞ս մարենք այսֆան կարօտ, վառք ու կիրք,
Այսֆան երազ ինչպէ՞ս թաղենք գետնի տակ,
«Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Թէ աշխարհում արդարութիւն կայ վերուստ,
Ու թէ հաշտ են Աստուած, երկիր ու երկինք,
Պիտի փլուի՛ ամէն պատնէշ, ամէն սուտ,
Պիտի երթա՛նք, պիտի երթա՛նք մեր երկիր...:

* * *

Հայրս, Սասուն գաւառի Տալւորիկ շրջանի Սպաղանք գիւղը ծնած Ղազար (Խարզօ) Հոթոյեան, Ֆետայիներ Մակարի, Գալէի, Ակէի ազգականը եւ գործակիցը Սասնոյ ազատագրական եւ ինքնապաշտպանական կռիւներու ընթացքին, Սասունէն հեռանալով՝

Հայր իմ սիրասուն,
Քու ծննդավայրէդ հեռու ապրելով,
Շատ տառապեցար,
Հայոց եղեռնի մահուան դարպասէն,
Թուրք գազաններու եաթաղաններէն
Քաջագուն սրտով միշտ ազատեցար,
Եւ հաստատուեցար քաղաքը Հալպայ,
Ուր ապրեցար քու ծննդավայր Սասնոյ կարօտով,
Յուսալով ընդմիշտ օր մը անպայման
Վերադառնալու ու տէր կանգնելու քու պապեական
Տունին ու դաշտին:
Սակայն երագդ անկատար մնաց,
Տարիները արագ սահեցան.
Սասունցիական կարօտը սրտիդ կեանքէն հեռացար,
Եւ որպէս կտակ դուն փոխանցեցիր քու գաւակներուդ
Հայրենակարօտ սէրդ անսահման Սասնոյ աշխարհին,
Եւ պայքարով ազատագրելու հողը հայրենի,
Ու տէր կանգնելու մեր պապեական հողին ու ջուրին,
Գերեզմաններուն ընտանեկան:

ԼԻԲԱՆԱՆԻ ՔՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆԷՆ
ՀՕՐՍ ՀԵՏ ՀԱՍԱՆՔ ՍԱՄՆՈՅ
ԼԻՃԵՐԸ ԵՒ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏԵՐ՝
ՍԱԿԱՐԻ, ԳԱԼԷԻ, ԳԵՈՐԳԻ
ԱՉԱՏԱԳՐԱԿԱՆ
ՍԱՐՏՆՉՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԿԵԱՆՔԻՆ

«Սիմանթերի Նասիոնալ»ը (Կրաղիլսի Ազգային Հաստատություն) կը գտնուի Լիբանանի Թրիփոլի քաղաքէն շուրջ 20-25 քիլոմետր հեռավորութեան, Շէքքա գիւղաքաղաքին մօտ, Պէյրուս տանող ճամբուն աջին, որուն ելեկտրական բաժնի պատասխանատուութիւնը ստանձնած էր կրտսեր եղբայրս՝ Յովհաննէսը 1957-ին եւ ընտանեօք հաստատուած Թրիփոլի քաղաքին մէջ:

Ես, «Արեւելք» թերթին հրատարակութեան թուականէն ի վեր՝ 1947-էն սկսեալ գրաշարական պաշտօն ստանձնած էի, ապա, աշխատանքի անցած էի բանաստեղծ Անդրանիկ Ծառուկեանի Նայիրի տպարանը, ուր կը հրատարակուէր «Նայիրի» ամսագիրը, կը տպուէին դասագիրքեր, զանազան հրատարակութիւններ եւ առեւտրական գործեր:

1949-ին, Անդրանիկ Ծառուկեանը եւ «Նայիրի»ն Պէյրուս փոխադրուելէ ետք, Նայիրի տպարանը ծախուեցաւ եւ նոր տէրը զիս պահեց, շարունակելու համար գրաշարական գործս նոյն տպարանէն հրատարակուող Յովհաննէս Եազըճեանի «Սուրիա» օրաթերթին մէջ: Ապա, Նայիրի տպարանէն դժգոհ մնալով, ստանձնեցի բանաստեղծ Անդրանիկ Նաճարեանի «Շիրազ» տպարանի գրաշարական պատասխանատուութիւնը:

1950-51 տարեշրջանին, Հալէպի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Զարեհ Արք. Փայասլեանի կարգադրութեամբ տնօրէնութեան պաշտօնը ստանձնեցի Ռազգայի Ազգային Վարժարանին:

Իմ ունեցած պաշտօնները թէեւ որպէս ուսուցչի, գրագէտի եւ գրողի ինծի հոգեկան խոր գոհունակութիւն կ'ընծայէին, որոնք պատանեկան տարիքէս սկսեալ միշտ երազս եղած են, բայց ապագային ամուսնանալու եւ ընտանիք կազմելու հա-

մար, անբաւարար նիւթական եկամուտ ունենալով կը մտածէի ուրիշ ասպարէզի մը հետեւիլ, որպէսզի կարողանամ ընտանիքս լաւ պայմաններով ապրեցնել:

Այդ ծրագիրս յաջողցնելու համար Յրանսայէն նամակագրութեամբ հետեւեցայ ելեկտրագէտի դասընթացներու եւ ստացայ «Էլեքթրո-թեքնիսիէն»ի վկայական:

Յովհաննէս եղբայրս, որ ստանձնած էր Լիբանանի «Սիմանթերի Նասիոնալ» կրողիւսի հաստատութեան ելեկտրական բաժնի պատասխանատուութիւնը, ինծի հրաւէր ղրկեց, որպէսզի Թրիփոլի գամ եւ ստանձնեմ ելեկտրականութեան բաժնի պատասխանատուի օգնականի պաշտօնը:

Համոզուեցայ եւ 28 Յունուար 1958-ին Թրիփոլի հասայ եւ ստանձնեցի նիւթական մեծ առաւելութիւններով եւ յարգալից պաշտօնով գործը:

Թրիփոլի հաստատուելով միշտ նամակներով եւ հեռաձայնային հաղորդակցութեամբ կապ կը պահէի Հալէպի Կիրակնօրեայ Դպրոցներու Կեդրոն բաժնի վարչութեան հետ, եւ, որպէս տեսուչ, թելադրութիւններս չէի զլանար անոնց: Կիրակնօրեայ դպրոցը կը գտնուէր Սալիպէ, Հայկազեան Վարժարանի մանկապարտէզի երկու սրահներուն մէջ, մօտ 400 աշակերտներով եւ 60 ուսուցչական կազմով: Իսկ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան շրջանին, աշակերտութեան թիւը կը հասնէր մօտաւորապէս 600-ի, որոնք կու գային Նոր Տարուան առթիւ աշակերտներուն բաշխուող նուէրներէն օգտուելու համար: Այդ նպատակով եկող աշակերտներուն մենք սիրով տեղ կու տայինք, այն յոյսով, որ այդպիսի աշակերտներ իրենց ստացած նուէրներու կարգին իրենց հետ կը տանէին հոն սորվեցուած բարոյալից պատմութիւններ, աղօթքներ, շարականներ եւ քրիստոնէական գիտելիքներ ու հայոց պատմութենէն դրուագներ:

Սկիզբը շատ ուրախ էի: Մինչեւ Հալէպէն ընտանիքիս Թրիփոլի գալը, կը բնակէի եղբօրս տունը եւ միասին գործի կ'երթայինք եւ կու գայինք: Ընտանիքս՝ կիսնս եւ մանչս՝ Անդրանիկը Թրիփոլի հասան 1958 Մարտին: Մինչ այդ տուն վարձած էի քենեկալիս տան մօտէն, որպէսզի կիսնս առանձնութիւն չզգայ:

Օրերու ընթացքին ես մաս կազմեցի Թրիփոլիի Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէութեան (Հալէպէն փոխանցագիրս բերած էի), իսկ կիսնս՝ Լիբանանահայ Օգնութեան Խաչի Թրիփոլիի մասնաճիւղին, ստանձնելով արժուիկներու խումբին պատասխանատուութիւնը:

Ուրախ էինք: Անդրանիկը եւ քենիիս աղջիկը հայկական դպրոց կը յաճախէին, մենք ալ կամաց-կամաց վարժուեցանք եւ ծանօթացանք Թրիփոլիի կեանքին ու գաղութի անդամներուն:

Կուսակցութեան տարեկան ընդհանուր ժողովին ընտրուեցայ կոմիտէի անդամ, ապա՝ քարտուղար եւ երիտասարդականի պատասխանատու: Այդ բոլորը սիրով կ'ընէի, որովհետեւ կը հաւատայի Դաշնակցութեան գաղափարաբանութեան եւ մեծցած էի այդ միջոցներուն մէջ, աշակերտած ըլլալով Սահակեան Վարժարան, մաս կազմած Վարանդեան Պատանեկան Միութեան եւ միշտ ունկնդրած հօրս Սասնոյ Տալուրիկի շրջանի Սպաղանք գիւղը ծնած-մեծցած նշանաւոր ֆետայիներ Մակարի, Գալէի, Ակէի ազգականը եւ օգնականը եղող Ղազար (Խարզօ) Հոթոյեանի պատմումները Սասնոյ յեղափոխական շարժումներու մասին, աւելցնելով, որ ազգային հերոս Անդրանիկ իրեն լողալ սորվեցուցած է Մեղրագետին մէջ:

Թրիփոլիի մէջ մեր կեանքը խաղաղութեամբ եւ համերաշխութեամբ կը շարունակուէր, որ խանգարուեցաւ 1958-ին Լիբանանի նախագահ Շամունի դէմ սկսուած ցոյցերով եւ ապրտամբուլիներով՝ Պէյրութի եւ Թրիփոլիի մէջ, դժուարացնելով հայ ժողովուրդի խաղաղ կեանքը:

Թրիփոլիի մէջ, բանակը եւ յեղափոխականները գիշեր-ցերեկ զիրար ռմբակոծելով, խանգարած էին բնակչութեան խաղաղ կեանքը եւ այդ վայրագութիւններուն զոհ կ'երթային բազմաթիւ անմեղ քաղաքացիներ: Իսկ ես, ամէն օր առաւօտեան Շէքքա գացող մինի-պասով գործի կ'երթայի եւ երեկոյեան կու գայի արձակուած փամփոռներու տարափին տակ, աղօթելով, որ ապահով տուն հասնիմ:

Ուտելիքի չգոյութենէն (հաց, միս, կանաչեղէն, եւայլն) տառապելով վերջապէս հասանք տարեվերջին եւ կռուողները բազմաթիւ զոհեր տալէ վերջ հասան խաղաղութեան եւ Լիբանանը գտաւ իր բնական կեանքը:

1959-ին, նախ աներս՝ կնոջս հայրը, շապին-գարահիսարցի վարդան Տէրտէրեան եկաւ Թրիփոլի՝ կարօտցած իր աղջիկները եւ թոռները: Աներոջս հետ պտոյտներ եւ ուրախ օրեր անցուցինք մեր եւ քենեկալիս տունը, անշուշտ սրտամօտ հիւրերու ներկայութեամբ:

Աներս՝ Վարդանը, ապահովուած մեր կեանքէն եւ երկրին մէջ տիրող ապահովութենէն, վերադարձաւ Հալէպ:

Մեր կարօտին չդիմանալով, 1959-ի ամառը Թրիփոլի եկաւ այս անգամ հայրս. ան ալ կարօտցած էր իմ եւ եղբօրս՝ Յովհաննէսին զաւակները, եւ, երկար ատեն տառապելով Լիբանանի մէջ տեղի ունեցող քաղաքացիական կռիւներու արձագանգներէն, եկած էր աչքովը տեսնելու մեզ:

Իմ եւ եղբօրս գործատեղին՝ «Սիմենթերի Նասիոնալ» ընկերութիւնը 24 ժամ կ'աշխատէր, ուր երեք հերթերով, ամէն մէկ հերթ ութը ժամ, կրաղիւս կ'արտադրէր, գործ հայթայթելով հարիւրաւոր գործաւորներու եւ պաշտօնեաներու:

Մեր բաժանմունքին մէջ կ'աշխատէին քսանէ աւելի գործաւորներ, որոնցմէ մէկ մասը ելեկտրական հարցերով կը զբաղէր եւ միւս մասը ելեկտրական ֆիուզներու (ելեկտրական գիծը ապահովող, որ որոշուած ամփէրէն աւելի ֆուրան գալուն՝ կը կտրէր եկող հոսանքը) տուփեր շինողներ, որոնք կը գործածուէին նոր սարքաւորումներ (թապլօներ) հաստատելու համար:

Մեր գործաւորներուն մեծ մասը կու գար Լիբանանի Քուրա կոչուող շրջանէն, որուն ձիթենիի ծառերը աշխարհի ամէնէն տարածուն շրջաններէն կը համարուի: Քուրայի բնակչութիւնը դարերէ ի վեր այլ արտադրութիւններու կարգին կ'ապրի ձիթախիւղի արտադրութեամբ: Շրջանը կը բաղկանայ 52 գիւղերէ: Քուրայի մայրաքաղաքն է Ամիուն գիւղաքաղաքը՝ 15.000 բնակչութեամբ: Տէտտէհ գիւղը Քուրայի ամէնէն գեղեցիկ գիւղերէն մէկն է եւ կը կոչուի աշխարհի դրախտը: Քուրայի շրջանը 173 քառ. քլմ. է, ընդհանուր 70 հազար բնակչութեամբ՝ սիւննի իսլամներ եւ մարոնիթներ:

Քուրայէն եկող գործաւորները, որպէսզի իրենց լաւ աչքով նայինք, նիւթական յաւելումներ ապահովենք իրենց, եղբօրս եւ ինծի տարեկան 2-3 թիթեղ մաքուր ձիթախիւղ կը բերէին նուէր եւ փոխարժէքը չէին առներ, հակառակ մեր պնդումներուն:

Նոյնպէս մեր գործաւորներէն ծովեզերեայ Անֆէի բնակիչ մը օր մը իրենց տունը հրաւիրեց ձուկ ուտելու: Երբեք չեմ մոռնար 70-75 սմ. մեծութեամբ փուռի մէջ եփուած ձուկը, զարդարուած տեսակաւոր համեմներով, բացառիկ համով մեր ձկընկերութիւնը, որուն համը անմոռանալի կը մնայ կեանքիս ընթացքին, որուն հետ կրնան մրցիլ Հալէպ մեր կեցութեան ընթացքին ընկեր Արշակ Տանակէօղեանի տունը ամէն Շաբաթ իրիկուն ընկեր Արշակին ձկնորսութեամբ բերուած եւ մեր ամուսնութեան կնքամայր Արշակին կնոջ՝ Մարգրիտ Զօրիկեան-Տանակէօղեանի կողմէ պատրաստուած ձուկերը:

Մեր գործաւորներէն Իլիաս Եոսէֆ, որ կը բնակէր հիւսիսային Լիբանանի Քուրա շրջանի մայրաքաղաք Ամիուն գիւղաքաղաքին մէջ, Յուլիս 1959-ի Կիրակի մը մեզ հրաւիրեց իրենց տունը ճաշի եւ երախտագիտական ընդունելութեան:

Այդ օրերուն հայրս Հալէպէն եկած էր Թրիփոլի, կարօտցած ըլլալով իմ եւ եղբօրս ընտանիքները եւ թոռները:

Հօրս գոյութիւնը մեծ հարց եղաւ. գործաւոր Իլիասին հրաւէրը ընդունի՞լ, թէ՛ ոչ: Ճաշի հրաւէրին դրական պատասխան տալով, ստիպուած հայրս Թրիփոլի՝ մեր տունները պիտի ձգէինք, որ յարմար չէինք գտներ, իսկ հետերնիս տանիլը՝ նոյնպէս անյարմար: Վերջապէս որոշեցինք մեզի հետ տանիլ, մեր որոշումին տեղեակ պահելով հիւրընկալը, որ շատ ուրախացաւ մեր որոշումին համար:

Իլիաս Եոսէֆենց ընտանիքը բացառիկ ընդունելութիւն մը կազմակերպած էր մեզի համար, պատրաստած ըլլալով լիբանանեան որակաւոր ճաշատեսակներ, տեսակաւոր խմիչքներ եւ պտուղներու տեսակներ:

Ճաշէն ետք Իլիաս Եոսէֆ փափաքեցաւ Քուրայի շրջանը ծանօթացման համար օթոյով եւ քալելով պտոյտի ելլել: Մենք սիրով ընդունեցինք առաջարկը, անոր մէջ մեր կերածները ձեւով մը մարսելու գաղափարը գտնելով:

Քուրայի շրջանը մեծամասնութեամբ բնակուած էր յոյնօրթոտոքս բնակչութեամբ, գոյութիւն ունէին նաեւ կաթոլիկ մարոնիթներ, սիւննի, շիա եւ ալաւի համայնքներ:

Իլիաս մեզ պտըտցուց Քֆար Հազիր, Պշմըզզին, Պսարմա, Քուսպա, Քֆար Աաքքա, Քֆար Սարուն, Այն Աաքրին, Ռաշտիպպին, Պզիզա եւ այլ գիւղեր, սքանչելի տեսարաններ, կանաչութիւններով եւ բնական զուլալ աղբիւրներով շրջապատուած եւ մանաւանդ հիւրասէր բնակչութեամբ:

Կարգ մը գիւղերու միջեւ քալելով կը հանդիպէինք զուլալ եւ սառնորակ աղբիւրներու եւ անոնց ջուրերը խմելով արագ մարսողութիւն կ'ունենայինք եւ ուտելու ախորժակ:

Սասունցի հայրս մեր հիացումը եւ զարմացումը լսելով, ըսաւ.

— Լիբանանի այս գեղեցկութիւնը եւ աղբիւրներու գոյութիւնը լեռնային այս շրջաններուն մէջ տեսնելով, արդեօք ի՞նչ պիտի զգայիք տեսնելով Սասունի լեռներուն գեղեցկութիւնը եւ ամէն քայլափոխի հանդիպելով սառնային աղբիւրներու, ո-

րոնց նմանը չէք կրնար գտնել աշխարհի որեւէ երկրի մէջ: Սակայն, դժբախտաբար այդ դրախտային երկրին գեղեցկութիւնները, կլիման, անմահական աղբիւրներու ջուրերը այսօր կը վայելեն քոչուոր եւ վայրենի քիւրտերը, վայելելով թուրք ցեղասպան կառավարութեան հովանաւորութիւնը, — լալու աստիճան յուզմունքով արտասանեց հայրս, թելադրելով եւ մաղթելով, որ մեր նոր սերունդները միշտ կը յիշեն իրենց արմատները եւ հայրենասիրական անջնջելի զգացումներով կ'ազատագրեն հայ ժողովուրդի 7000 տարուան հայրենիքը մարդգազաններու տիրապետութենէն, ժառանգած ըլլալով Սասունցի Դաւիթի յեղափոխական եւ անձնուէր ոգին: — Սիրելի գաւազներս, մենք Սասուն ծնած ու մեծցած, թուրքին եւ քիւրտին վայրագութենէն եւ Օսմանեան պետութեան կազմած ծրագրով՝ հայ ժողովուրդը ոչնչացնելու ցեղասպանութեամբ, օգտուելով Առաջին Համաշխարհային Պատերազմի պատեհութենէն, կըրցանք ինքնապաշտպանութեան կռիւներով մեր հողին վրայ նահատակուիլ մեծ մասամբ, մնացեալ ժողովուրդը հայ Ֆետայիներու առաջնորդութեամբ ցրուեցաւ արեւելեան Հայաստան, Ռուսիա, արաբական եւ եւրոպական երկիրներ, մեր սրտին մէջ վառ պահելով Սասնոյ մեր տունները, գիւղերը, քաղաքները եւ սրբութիւնները, որպէսզի ձեր Մայր Հայրենիքը ճանչնաք եւ տէր ըլլաք անոր հայկականութեան: Այս անբաղձալի երկրին եւ անոր բնակչութեան եւ Ֆետայական շարժումներուն մասին ձեզի կը պատմեմ տուն հասնելէ ետք:

Ամիռունին եւ շրջակայքի գիւղերուն շուրջ ինքնաշարժով եւ քայլելով պտրտելէ ետք, յոգնած, վերադարձանք Իլիասենց բնակարանը եւ թեթեւ ընթրիքէ մը ետք, շնորհակալութիւն յայտնելով վերադարձանք Թրիփոլիի մեր տունները:

Հայրս այս այցելութենէն եւ պտոյտէն խանդավառուած, սուրճ մը իմելէ ետք սկսաւ պատմել իր գիտցածները, լսածները եւ տեսածները Սասունի մասին, անշուշտ միշտ շեշտը դնելով իրենց գիւղին՝ Սպաղանքին, իր ազգականներուն եւ անոնց ազգասիրական եւ հերոսական շարժումներուն եւ կռիւներուն վրայ:

Սասունը կը գտնուի Թուրքիոյ հարաւ-արեւելքը, Պիթլիսի վիլայէթի Մուշի գաւառը, Մուշ քաղաքէն դէպի հարաւ, Տաւրոսեան լեռնաշղթային վրայ: Սասունը բաժնուած էր եօթը հիմնական շրջանի՝ Խութ-Բունաշէն, Մոտկան, Փսանք, Խուլբ-Խիանք, Տալուրիկ, Շատախ, Սասուն:

ԽՈՒԹ.— Խուլթի շրջանին մէջ կային 50 գիւղեր, որոնցմէ ամէնամեծը 100 տունէն աւելի չէր: Այդ գիւղերէն հայաբնակներն էին Բլականք, Դաշտամիր, Զօրավա, Դաշտադէմ, Կեանք, Ընկուզիկ, Կոստ, Շենիսա, Ագրակ, Փիջոնք, Լոռնաձոր, Թաղվու, Թաղավանք, Գիլոնք, Ռաբաթ, Սալաբոստ, Բաբնթաղ, Հաւարք, Գործվարք, Պարծղենք եւ Շէն: Մնացածները քրտաբնակ գիւղեր էին, որոնց մէջ խառն կ'ապրէին նաեւ հատուկենտ հայ ընտանիքներ:

ՄՈՏԿԱՆ.— Մոտկանի շրջանը իր աշխարհագրական դիրքով շատ նման է Խուլթին, միայն քիչ մը լեռնոտ է: Մոտկանի կլիման բարեխառն է, ունի բաւականաչափ վարելահողեր, ինչպէս նաեւ բազմաթիւ պտղատու ծառեր: Ծառապտուղը շօշափելի արդիւնք կու տար մոտկանցիներուն, մասնաւորապէս ընկոյզը: Մոտկանի 60-70 գիւղերէն հայաբնակ էին Մրձի, Քաշաղ, Մզուկ, Հայթաղ, Աշըպներ, Կըրբ, Սըլնդ, Պոկնուտ, Մըրցանք, Շէն, Կրխու, Ալնցոփ, Մեծ-Զոր, Տանձի, Վերին Գեղ, Սարինք, Աղտէք, Մարմանտ, Կնձօ եւ Նիջ, իսկ մնացածները քիւրտն ու հայր խառն կ'ապրէին:

ՓՍԱՆՔ.— Հարաւէն Մոտկանին սահմանակից է Փսանք գաւառը: Փսանքի մէկ մասը նոյնպէս բնակուած էր քիւրտերով, իսկ միւս մասը՝ զուտ հայաբնակ էր, բաղկացած 140 գիւղերէ՝ Փսանք, Թաթունք, Կոռէնկէս, Քաղոենք, Մկթենք, Զանդուս, Քրիսթաղ, Զրնտիկ, Խնձորիկ, Թալնոր, Բալոյինք, Կոմք, Փշուտ եւ Միջգեղ:


ԽԻԱՆՔ.— Խիանքի ազգաբնակչութեան գիւղերն էին՝ Հեղին, Իշխանաձոր, Արսրկ, Արտրկունք, Սեւիթ, Սաղտուն, Ընկուզնակ, Փարգա, Ահարոնք, Գեղրվան, Բերմ, Ընձքար եւ Բաջի:

ՏԱԼԻՈՐԻԿ.— Տալոորիկը անառիկ լեռներու աշխարհ մըն է, որուն 11 գիւղերը կամ ինչպէս իրենք կ'անուանէին՝ «11 թաղամասեր», կը կոչուէին՝ Փուրխ, Դվալենք, Հոսնուտ, Հոսներ, Հարթք, Սպաղանք, Եղկարտ, Հլողինք, Արթխու, Խլհովիտ եւ Արգիկ:

Այս գիւղերու բնակիչները բացառապէս հայեր էին, Սասունի «Երկաթէ Մարդիկ»ը՝ յամառ, խրոխտ եւ տաքարիւն: Ժամանակին տալոորիկցիները իրենց լեռներուն մէջ գտած էին երկաթի հանքեր:

ՇԱՏԱԽ.— Շատախի անառիկ լեռներուն եւ խրոխտ հովիտ-

ՄԱՍՈՒՆ



ներուն մէջ կը գտնուէին 10 հայկական գիւղեր՝ Քոփ, Գարմաւ, Իրիցանք, Տապիկ, Շուշնամերկ, Գեղաշէն, Շենիկ, Սեմալ, Ալ-եանցիք եւ Գելեգուզան:

Շատախն ու Տալւորիկը գտնուելով քրտական միջավայրէն դուրս, չէին հանդուրժեր հպատակութիւն եւ ստրկութիւն: Այս հանգամանքը առանձին մոլուցք յառաջ կը բերէր քիւրտ ցեղապետերու մէջ, ուստի եւ զինուած ընդհարումներն անպակաս էին Շատախ-Տալւորիկի հայ լեռնականներու եւ քիւրտերու միջեւ:

ՍԱՍՈՒՆ.— Վերոյիշեալ գաւառակներու կեդրոնը, Ծովասար, Մարաթուկ լեռներու միջեւ կը գտնուէր Սասունը, անոր քաղաքն ու «Դաւթի Բերդը»: Բերդի պարիսպները եւ սենեակներու կիսակործան պատերը կանգուն էին մինչեւ մեր ժամանակները: Կանգուն էին դարպասներէն ներս մտնող դրան կողքերը եւ ճակատի սրբատաշ մեծ քարերը: Բերդին մէջտեղը կար աղբիւր մը, որ դիմացի սարէն խողովակներով բերուած էր:

Սասունը ունի կանաչազարդ եւ մէկը միւսին զուգահեռ խոյացած լեռներ ու լեռնաթեւեր: Անոնց կատարներէն մինչեւ ստորոտները ամէն քայլափոխին կը հոսէին առատ ջուրեր: Ամառուայ քոչւորութեան համար կան բազմաթիւ արօտավայրեր, լեռներու որոշ մասերը ծածկուած են անտառներով ու մացառուտներով: Սասունը ծածկուած է կաղնիի, կաղամախիի, ուռենիի, հողենիի, թխկիի, կէչիի, նորգենիի, ալուճի, քարծինի, եղևիթի, դառինջի, շլորի, մասրենիի, բղնջի, մրկիթի, փշատենիի, ընկուզենիի եւ այլ տեսակի պտղատու եւ անպտուղ ծառերով ու թուփերով: Սասունի սարերը հարուստ են նաեւ բանջարով, ինչպէս օրինակ՝ խանեն, կանձառ, խաւրժիլ, քեղ, բեժոկ, եւայլն: Իսկ թարմ եփելու եւ ձմեռուայ պաշար պատրաստելու համար՝ օղի (շրէշ), սպիտկուկ, փնկայ, մանդակ, սունկ, ժախ, կմուկ, խաշմ, զգու, եւայլն: Վայրի պտուղներն էին՝ արուճ, քարճին, դառինջ, մասուր, բղինջ, շլոր, մորեմուկ, եւայլն:

Կայ նաեւ կաղպին (մանանայ): Կաղպին կ'իջնէր 4-5 տարին անգամ մը՝ Յուլիսին, երբ կ'իջնէր մուլթը, անձրեւտ ցօղի նման երկինքէն կը թափուէր կաղպինը: Լուսաբացին հողը, քարը, կանաչը, ամէն ինչ ծածկուած կ'ըլլար մեղրանման թանձրը հիւթով: Կաղպին կ'իջնէր բացառապէս կաղնիի տերեւներու եւ գագի փշերուն վրայ: Ուրիշ կանաչութենէ ստացուած կաղպինը խիստ դառն կ'ըլլար, ուստի՝ անգործածելի:

Սասունի անառիկ լեռներու դիրքը կը նպաստէր սասունցիներու ինքնապաշտպանութեան: Սասունը հեշտութեամբ չէր պարտուեր: Սասունցին պէտք եղած ատեն կրնար երկար ժամանակ պատսպարուիլ քարայրներու մէջ ու թշնամին չէր կրնար մօտենալ: Իսկ կռուի միջոցին, թշնամին կը դիմաւորէին քարերու տարափներով: Այս միջոցը սասունցիները կը գործածէին նոյնիսկ թրքական թնդանօթներու դէմ:

Սասունի 207 գիւղերուն մէջ հայ գիւղացի ժողովուրդը թրքական եւ քրտական տիրապետութեան տակ կ'ապրէր անտանելի կեանք մը: Գիւղացիներուն ստացած բերքին կէսը կառավարական հարկահաւաքները կը տանէին, մէկ քառորդը՝ գիւղի աղան եւ մնացածը կը մնար գիւղացիներուն:

Քիւրտերն ու չերքէզները ոչ միայն կը յափշտակէին հայերու հողերը, այլեւ անոնց կը պարտադրէին այդ հողերուն համար հարկ վճարել:

1890 թիւի Սեպտեմբեր 12-ին, Քարաբերդ հասաւ Պոլիսէն զրկուած հետեւեալ հեռագիրը.— «Այդտեղի լրտեսներուն տըրուող աշխատավարձը անմիջապէս թեմերէթէ տուրքերուն վրայ թող աւելցուի, չըլլայ թէ կառավարական դրամարկդէն վճարուի, քանի որ լրտեսները հայերու համար են, հարկ է, որ անոնց աշխատավարձն ալ հայերը վճարեն»:

Երբ գիւղացիները չկարողանային վճարել իրենց պարտադրուած հարկերը, հարկահաւաքները չէին վարաներ գործադրել այն բոլոր պատիժները, տանջանքները, գազանային եւ անմարդկային ձեւերով եւ միջոցներով:

1890-էն ետք սահմուկեցուցիչ դարձան քաղաքական հալածանքները, բռնութիւններն ու ցեղասպանութեան կիրքերը: Սուլթանը իր հայաջինջ քաղաքականութեան հարուածային ոյժ դարձուց նաեւ վաչկատուն քիւրտերը...:

Թրքական եւ քրտական անհանդուրժելի քաղաքականութեան եւ հայ ժողովուրդի ապրելակերպին, պատիւին եւ տնտեսական կացութեան դէմ կիրարկուող դաժանութիւններուն ու ստրկային կեանքին դէմ պայքարեքու համար ստեղծուեցան հայկական պաշտպանողական եւ զինեալ խումբեր:

Այդ ֆետայական խումբերու ղեկավարներն էին Արաբօ, Սերոբ Փաշա, Գէորգ Չաւուշ եւ ուրիշներ:

Արաբօն Սասունի հայդուկային շարժման ռահվիրան էր, ժողովրդական վրիժառուներու անդրանիկ խումբի կազմակեր-

պիչն ու ղեկավարը: Անոր իսկական անունն էր Առաքել: Ծնած էր Բոնաշէնի Կոռնթեր գիւղը 1863 թուականին: Ուսանած էր Առաքելոց Վանք ուսումնարանը: Փայլուն ընդունակութիւններու տէր էր: Անոր կը սպասէր կրօնական ծառայութիւնը, բայց Առաքելը ընտրեց կեանքի այլ ուղի՝ ժողովուրդի պատուի, իրաւունքներու ու ազատութեան համար պայքարի ծանր, փշոտ ու վտանգներով լեցուն ուղին: Ան հրաժարեցաւ կրօնական կոչումներէն, հեռացաւ վանքէն ու վերցուց պանդուխտի ցուպը: Գնաց Հալէպ, մշակ դարձաւ, վաստակած դրամներով հրացան գնեց եւ վերադառնալով կազմակերպեց խումբ մը, որ կը կռուէր քրտական աշիրաթներու ու թրքական ճնշողներու դէմ: Սկիզբը երեք հոգի էին: Իր հետ էին Դերգեվանքցի Մխօն եւ Ալիզըռնանցի Լեւոնը: Յետագային խումբը նոր անդամներ ընդունեց՝ Գէորգ Չաւուշ, Գալչոյի Մանուկ, Գոմերցի Յովիկ, Բերդակի Ներսօ, Ահրոնքցի Ադամ, Ղարսեցի Հագէ:

Արաբոյի հայդուկային խումբի գործողութիւններու ձեւն էր՝ արագ, յանկարծակի ու աներեւոյթ: Ան անընդհատ կռիւներու մէջ էր: Ժամանակակիցներէն մէկուն արտայայտութեամբ՝ «Առաւօտեան զինք կարելի է տեսնել Մուշ քաղաքի մօտակայքը, իսկ երեկոյեան ան արդէն Մարաթուկի գագաթն էր»:

Արաբօն բոլոր խեղճերու, հարստահարուածներու, թըշուառներու պաշտպանն էր, անկախ անոնց ազգութիւններէն: 1885-1889-ին «Արաբօն որպէս աւազակապետ կը գործէր», այսինքն անոր գործունէութեան ձեւերը վերցուած էին այդ տարիներուն Օսմանեան Կայսրութեան տարածքին գործող բազմաթիւ հրոսակախումբերու ձեւերէն: 1889-1890-ին ան վճռականապէս սահմանազատուեցաւ այդ մեթոտներէն ու որդեգրեց պայքարի յեղափոխական միջոցներ:

Արաբոյի անունը շուտով կը տարածուի ամբողջ Սասունի մէջ: Ո՛չ միայն հայերը, այլ մասամբ նաեւ քիւրտերը կը միանան անոր: Սկիզբը, ան հայերու եւ քիւրտերու հետ կը վարուէր այնպէս, ինչպէս քիւրտ թողներուն, որ իր հպատակները կը պաշտպանէր ուրիշներու յարձակումներէն: Արաբօն եւ իր խումբի անդամները, քրտական հագուստներով ծպտուած, կը շրջէին Սասունի եւ Տարօնի գիւղերը, թուրքերէն գէնքեր բռնագրաւելով կը զինուէին: Անոր ստեղծած այս աւանդոյթը որդեգրեցին յետագայ բոլոր հայդուկային խումբերն ու հայդուկները:

Ֆետայի Գալէն Հօրս Հօրեղբօրորդին էր, իսկ Մակարը՝ Հօրս ազգականը եւ կնքահայրը: Սպաղանցի բոլոր ֆետայիները իրարու ազգական էին, որոնցմէ նշանաւոր էին Ակէն, Կարօն, Աղէն ու Աղօն:

Սասունի ինքնապաշտպանական կոիւններուն մասնակցած են Հարիւրաւոր անձնագոհ ֆետայիներ: Այդ օրերուն Հօրս Հետ մեր խօսակցութեան եւ խորհրդակցութեան նիւթը Հօրս ծննդավայր Սպաղանք գիւղի ֆետայիներուն՝ Գալէի եւ Մակարի մասին էին, որոնց որպէս ազգական մօտ եղած էր Հայրս եւ պատանի տարիքին մասնակցած ինքնապաշտպանական կոիւններուն: Անոնց անձին, նկարագրին եւ յեղափոխական կոիւններուն մասին Հայրս բազմաթիւ առիթներով Հպարտութեամբ պատմած է, սակայն ես անոնց մասին Հայդուկապետ Ռուբէն Տէր Մինասեանի գրած յուշերէն կ'արտագրեմ անոնց մասին իր յուշերը:

Գալէն հասարակ մահկանացու չէր: Ան Գէորգի եւ Մակարի անմիջական աջակիցն ու անբաժան զինակիցը եղած էր ամբողջ 25 տարի:

Գալէն Տալուրիկի Սպաղանաց գիւղէն էր, խոր անդունդներու մէջ ինկած, աշխարհէն կտրուած այդ փոքրիկ գիւղը 24 տունէ կը բաղկանար: Փոքրիկ Սպաղանքը իր երկաթէ լեռներու նման ստեղծած է շարք մը պողպատէ մարդիկ, մռայլ ու անվեհեր, սառն ու արի, ֆարսիրտ, բայց արդարամիտ: Ամբողջ գիւղը կարելի էր մէկ սերունդ, մէկ գերդաստան համարել:

Գալէն ազգակից էր հռչակաւոր Մակարին, Ակոյիս եւ նրման ֆաջերու: Դեռ մանուկ հասակէն սովորած էր խէնչալ կապել եւ Տէրսիմի շէշխանա հրացանը գործածել: Ան 1893-ին աչքի զարնող կուուող է: 1893-1905-ի Սասնոյ ապստամբութեան եւ խմբական կոիւններուն Գալէն կը դառնայ անբաժան զինակիցը իր քեռի Մակարին, որ Տալուրիկի եւ Գեալու կոիւններու սիւնն էր: 1896-1900 թուականներուն Գալէն կը դառնայ Գէորգի ամենամօտիկ գործակիցը: 1900-էն մինչեւ 1907, մինչեւ իր մահը, Գալէն եղաւ բոլոր կոիւններու հոգին: Ան մասնակցեցաւ Սասնոյ բոլոր կոիւններուն եւ Սասունը ճնշուելէն ետքն ալ բնաւ դուրս չեկաւ Սասունէն, եւ Մակարի ղեկավարութեան տակ մնաց այնտեղ, դիմադրելով անասելի դժուարութիւններու եւ վտանգներու:

Գալէն հետաքրքիր էր ոչ միայն իբր հին զինուոր, հին աշխատող եւ արկածներ ունեցող, այլ իբր բնաւորութիւն, իբր տի-

պար ֆաշուքեան: Ան դէմքով ու մարմնով ալ աչքառու էր, մի-
ջահասակէն փոքր, թիկնեղ, ամուր, թուխ դէմքով, սեւ աչքերով:
Մոռալ էր առհասարակ եւ բնաւ չէր մտածեր, որ մսէ եւ ոսկորէ
շինուած մարդ է ան, աւելի շատ երկաթէ արձանի կը նմանէր,
ահարկու եւ տարօրինակ: Անոր դիմագիծը քիչ կը շարուէր,
կննիո չկար երեսին վրայ, բայց աչքերն ու ծնօտը այնպիսի
կենդանութիւն կու տային դէմքին, որ այդ արձանը վնիո ու
կամք կ'արտայայտէր, անբեկանելի, անխորտակելի:

Մենք Գալէն կ'անուանէինք «Դանդաղ Գալէ»․ ան բնաւ չէր
վիրաւորուեր այս մակդիրէն, այլ կը պատասխանէր, «Դանդաղ
շարժուի, երկար շարժուի, ով շուտ ֆալէ ռէխին կու գայ»: Ան
ունէր միատեսակ, յամրաֆայլ շարժումներ, դանդաղ եւ յարա-
տեւ: Անոր հաստատ, ուղիղ եւ յամր շարժումները չէր կարելի
փոխել ոչ իսկ թնդանօթի գոռոցով: Եթէ ռումբ մը կամ գնդակ
մը իյնար իր առջեւ կամ իր ամենասիրելի ընկերը զարնուէր
կողքին, այդ սառն արձանային մարդը ոչ դէմքը կը փոխէր, ոչ
շարժումները, այլ՝ քի մէջէն «ըհը» մը կ'ընէր եւ իր գործը կը
շարունակէր: Երբ իր շուրջ ոգեւորութիւն կամ խունայ ստեղ-
ծուէր, ան աւելի անտարբեր կը դառնար եւ դանդաղօրէն ծխա-
խոտը հանելով գլանիկ մը կը փաթթէր, յետոյ հանգիստ կ'ը-
սէր.— «Շատ միք թրովըտա, հանգիստ մնացէք»: Այսֆան էր իր
յուզումը:

Այս բնաւորութեան համար Մակար գինք կ'անուանէր
«խոզ Գալէ», իսկ մենք յաճախ կը կոչէինք «գոմէշ», իսկապէս
ալ գոմէշի նման էր. Գալէի նստած դիրքը յաճախ կը հերկուէր
ռումբի եւ գնդակի ակօսներով, իր մարմնի վրայէն արիւնը կը
հոսէր, ընկերները վիրաւոր կամ սպաննուած, իր շուրջ կը թա-
ւալին, բայց ան անվրդով է ու հանգիստ, կարծես ոչինչ կայ,
միայն քի մէջէն կը մրթմրթայ, գլանիկ կը ֆաշէ եւ իր մահա-
բեր հրացանով ուղղակի կը հնձէ, ինկածով չի հետաքրքրուիր,
նոր գոհ կը փնտտէ:

Ես իմ կեանքը Գալէին եմ պարտական, — կը պատմէ Ռու-
բէն, — անոր հնարամտութեան: Ես եւ Գալէն միմեկի Շէյխլան
գեղն ենք. ցերեկ է, տանիքի ծայրը նստած ենք: Գիւղացիք, մեծ
ու փոքր, մեր շուրջն են: Գալէն լուռ կը ծխէ, ես ալ գիւղական
գործերը կը կարգադրեմ:

Ան հեռադիտակով կը նայի հանդարտ եւ յետոյ դիտակը
ինծի տալով կ'ըսէ, որ նայիմ հեռուն. երկու ֆիլօմեթր անդին

գօրֆն է, որ կու գայ դէպի Շէյխլան: Գիւղացիք կը նկատեն եւ կը սարսափին: Ժամանակ չկայ, որովհետեւ ձիաւոր գօրֆը շատ մօտ է: Ես շուարած եմ ու քարացած կը մնամ: Գալէն ծխախոտը բերանը, ինծի կը նայի, որ կարգադրութիւն ընեմ: Գիւղացիք մէկիկ-մէկիկ կը հեռանան եւ կը պահուին իրենց տուները, միայն Շէյխլանի Պետրոսը կը մնայ, որ կ'առաջարկէ ինծի «պահուիլ գիւղի մէջ»: Գալէն կը պատասխանէ.— «Ձէ, այդ չի լինի, ամնիաթ (վստահութիւն) չկայ, որ ձեզի ծեծեն, մեզի մատնէք»: Գալէն իրաւունք ունէր: Գիւղը ամբողջ, կին ու երախայ, մեզ տեսած էին, կրնային չարչարանքի տակ մեր տեղը ըսել: Ես կ'ըսեմ Գալէին.— «Մեզի նամբայ մը կայ, միայն կըռուիմք»: «Ձէ, — կը պատասխանէ Գալէն, — կը սպաննուիմք, գեղն ալ ձեռքիցը կու տանք, մենք պիտի դեռ ապրինք»: Այսպէս հաւատով ըսաւ «պիտի ապրինք»ը, որ դարձայ իրեն եւ յարեցի.— «Դէ, կարգադրէ դուն ինծի խմբապետ, ես քեզի զինուոր»:

Գալէն լուռ ելաւ ոտքի, հանեց զէնքերը, ինծի ալ պատուիրեց զինաթափուիլ, զէնքերը տուաւ Շէյխլանի Պետրոսին եւ պատուիրեց տանիլ պահել Մուրախ գետի ափին, ճիշդ գետի կղզիին դիմաց: Երկու կուլար առինք վրանիս, արդէն ծակ արախչիները ծածկեցինք մեր գլուխները եւ հանգիստ, Գալէի քայլերով ուղղուեցանք դէպի դաշտը արածուող նախիրը: Աչքերս ուղղած եմ գոմէշներուն, կարծես անոնք պիտի փրկեն մեզ: Զօրֆը արդէն հասած էր գիւղը: Մենք ալ արդէն հասած ենք փրկարար նախիրին: Հովիւը աչքերը չոսած մեզի կը մօտենայ, Գալէն կը նստի եւ կը պատուիրէ անոր շորերը հանել, ինք կը հագուի եւ կ'ըսէ.— «Հովիւը ես եմ, դուն ալ Գալէն ես: Հաշտ մնա՛, լեզուն ծոծրակէդ կը հանեմ»:

Հովիւը գնաց: Զիաւորները կու գան դէպի նախիրը: Շատուոր չեն, միայն 10 հոգի: Կը կենան մեզմէ քիչ մը հեռու եւ երեսները կը դարձնեն դէպի գիւղ: Շէյխլանի նամբաները գոցուեր են: «Հէյ, շանորդի, հոս եկէք», կը կանչէ ենթասպան: «Դուն մնա՛», կ'ըսէ Գալէն ինծի եւ ինք կը յառաջանայ դէպի ձիաւորները: Կը մօտենայ ենթասպային, կը բռնէ անոր ձիուն սանձը եւ լեզուանի մարդ դարձած կը պատմէ՛:

«Հէ՛յ, հայվան», կը կանչէ Գալէն ինծի: Իմ բախտէս ցուլ մը ինկաւ կովու մը ետեւէն: Ես օգտուեցայ առիթէն եւ ինկայ ցուլի ետեւէն, որպէսզի խանգարեմ անոր հանոյքը: Նպատակս էր չլսելու տալ ենթասպայի հրամանը երթալու իրեն մօտ:

«Հայվան», կրկնեց Գալէն, «չե՞ս լսեր, բուղան (ցուլ) թող, գնա՛ գիւղն աղ բեր»: Երբ երրորդ անգամ «հայվան» լսեցի, ուղղունեցայ դէպի գիւղ: Գալէն մօտեցաւ ինձի, բարձր հայիոյեց եւ կամաց մը ըսաւ.— «Էջ, չդառնաս»:

Եւ ի՞նչպէս պիտի մտնէի գիւղ աղ բերելու համար, անհնար էր, զօրքը պաշարած էր ու կը խուզարկէր: Կը մտնեմ առու մը եւ կը նստիմ: Մինչ մէկ կողմէ գիւղը կը խուզարկեն, միւս կողմէ Գալէն երինջ մը կը մորթէ եւ ձիաւորներու խուրջինները կը լեցնէ մսի կտորներ: Գալէն համոզեր է մորթել երինջ, որպէսզի ինք ալ միս կարենայ ուտել եւ կը զբաղեցնէ զանոնք խորովածի գայթակղութեամբ:

Փողը հնչեց, զօրքը հաւաքուած էր գիւղին մէջ, ձիաւորներն ալ գացին: Գալէն ցուպը ձեռքը բարձր կը կանչէ.— «Մօսօ, Մօսօ»: Ես գլուխս հանեցի փոսէն: «Նախիրը բռնէ գետի ափ», հրամայեց: Նախիրը կը բռնէր դէպի գետափ: Կ'որոնենք մեր պահուած հրացանները եւ տիկերը: «Գետը պիտի անցնիս եւ կղզին երթաս», կը դառնայ ինձի Գալէն: Սարսափելի է այս պատուէրը: Լողալ չէի գիտեր, ի՞նչպէս պիտի անցնիմ: Տիկ մը կ'ուռեցնեմ եւ թելիս տակ կ'առնեմ, գոմէջ մըն ալ առջեւս կը խառնեմ եւ կը մտնեմ ջուրը, կը պլլուիմ գոմէջի պոչին եւ անհնարին նեղութիւններէ ետք կը հասնիմ կղզի:

Քիչ վերջ Գալէն կու գայ հրացաններով: Ան թէեւ ծիծաղիլ չէր գիտեր, բայց դէմքէն կ'երեւայ որ ուրախ է.— «Մէկապետ էի, երկապետ եղայ», կ'ըսէ: Կ'ուզէ ըսել, որ այդ օրը ինքն էր հրամանատարը: Եւ իրաւունք ունէր: Ան ազատած էր թէ զինքը, թէ զիս, եւ թէ՛ գիւղը, իր երկապետութեամբ: Գալէն չէր մոռցած երինջի միսէն բերել իրեն հետ, անօթի էինք, ուստի հում-հում կերանք, աղ չունէինք, Գալէն նկատեց.— «Մաշքը բուկոյ է, աղը բերողը պիտի ըլլայիր»: Ծիծաղեցանք եւ ախորժակով թարմ միսը գազանի նման լափեցինք:

Գալէն քնացաւ երեկոյեան, երբ մութը իջաւ, անցանք Խէպ-եանի կողը: Շէյխլանի գիւղացիները չէին գիտեր, թէ մենք ո՞ր էինք կորսուած: Զկարծէք թէ Գալէն նման պատահարները բանի մը տեղ կը դնէր: Ան անցածը անցած կը համարէր եւ կը լռէր, իսկ գալիքի մասին կը մտածէր ու կը սպասէր: Այսպէս օրինակ՝ այս դէպքի մասին ոչ ոք չէր գիտեր: Գալէն ոչինչ կը պատմէր: Երբ շաբաթներ յետոյ առասպելներ հիւսուեցան եւ ընկերներ ու գիւղացիներ ինձի հարց կու տային պատահածի

մասին, ես ըսի, որ Գալէին հարցնեն, քանի որ «ան խմբապետ է եղած այդ օրը»: «Բան չունի՞ս, Գալէն խօսք մենք իմա՞լ քաղենք, դուն պիտի պատմես»: Երբ ես պնդեցի «Գալէ, պատմէ՛ երկապետութիւնդ», «Վագ մնա՛ ինձմէ, եկաւ ու անցաւ» պատասխանեց ու սկսաւ ծխել:

Եւ իսկապէս ալ Գալէն «մէկապետ» էր, ինչպէս ինք կը սիրէր ըսել: Մեծ էր բոլորէն իր հոգու, կամֆի կարողութեամբ, բայց ամբողջ մեծութիւնը իր մէջ էր ամփոփուած: Եւ թէ ան ըլլար քիչ մը անհամեստ, քիչ մը փառասէր, կը դառնար առաջինը Մշոյ աշխարհին մէջ: Ի գուր չէ, որ Գեորգ Զաւուշ կ'ըսէր յաճախ.— «Եթէ ես ունենայի Գալէի քաջութիւնը եւ մտածողութիւնը, առանց կատակի, Սուլթան Համիտին թախտից վար բեռելը քանի մը շաքթուան գործ պիտի դառնար»:

*
*
*

Սուլուխի կռիւը կը հանդիսանայ հայ յեղափոխական շարժումի ամէնէն նշանակալից դէպքերէն մէկը: Սուլուխի կռիւին գոհ գացին մեր նորագոյն պատմութեան ժողովրդական մեծագոյն հերոսներէն Գեորգ Զաւուշն ու Գալէն, 27 Մայիս 1907-ին:

ՄԱԿԱՐ ՍՊԱՂԱՆՑԻ

Թուրքերը Մուշ քաղաքին մէջ իրենց յաղթանակը կը սօնէին, իսկ հայերը իրենց մեծ կորուստը կը սգային: Սերոբի սպանութիւնը յուսալքութեան դողով պատած էր Սասունի եւ Տարօնի ժողովուրդը: Թուրք հրամանատարները եւ քիւրտ ցեղապետերը կ'աճապարէին օգտուիլ ստեղծուած կացութենէն:

1899 թիւի Նոյեմբերին թրքական զօրամաս մը եւ քիւրտ Պշարա Խալիլի աշիրէթութիւնը յարձակում կը գործեն Սպաղանք գիւղին վրայ: Անոնց դէմ դիրք կը գրաւէ Մակարը իր խումբով, դիրքեր գրաւելով ժայռերու ծերպերուն վրայ, կրակի տակ առնելով յարձակող թշնամին, տալով անոնց 10 սպանուած: Խալիլը հարկադրուած կը նահանջէ եւ կ'անցնի Սասնոյ գետի միւս ափը: Խալիլը օգնական ուժեր ստանալով կը վերսկսի իր յարձակումը, բայց չի յաջողիր գետը անցնիլ: Խալիլը հարկադրուած կը հեռանայ շրջանէն:

Մակարը Սպաղանք գիւղի իշխանն էր, միաժամանակ գիւ-

ղի գրինուած շոկատի ղեկավարը, Սասունի Հայդուկային շարժման հիմնադիրներէն մէկը: Աժդահայ արտաքինով, բարձրահասակ, թիկնեղ, խոշոր գլխով ու մեծ աչքերով, դանդաղ, բայց հաստատուն ու վճռական շարժումներով: Տորք Անգեղի կերպարանքով այս առնական սասունցին օժտուած էր լեռնցիի բնորոշ բնաւորութեան գծերով: Ան նրբակերտ էր եւ փխրուն սիրտ ունէր, բայց առանձին դէպքերու ժամանակ անոր դաժանութիւնը սահման չէր ճանչնար: Անվախ ու քաջ մարդ էր, չէր յապաղեր մեն-մենակ թշնամիի վաշտերուն դիմադրելու: Խիստ բարքերու ու բարձր պահանջկոտութեան տէր էր, իշխանական կեցուածք ունէր, եւ վա՛յ անոր, ով Մակարի գայրոյթին արժանանար: Պարզամիտ էր եւ անյիշաչար, «չէ»-ն երեսին ըսող էր եւ զուրկ՝ խորամանկութենէ եւ երեսպաշտութենէ:

Ըմբոստ Հայդուկ էր, ամէն մէկուն չէր ենթարկուեր: Բոլոր հարցերու ընթացքին ան ունէր իր սեփական կարծիքը եւ հայդուկային շարժման մէջ ինքնավար եւ անկախ կեցուածք ունէր: Մարտական գործողութիւններու ժամանակ բացառիկ կարգապահ ու պարտաճանաչ էր:

Հայդուկային տեւական անցեալն ու մեծ վաստակը, շիտակութիւնն ու քաջութիւնը, բարութիւնն ու նուիրուածութիւնը Մակարը դարձուցած էին Հայդուկային շարժման ամէնահեղինակաւոր ղեկավարներէն ու երիտասարդներէն մէկը:

Ահա թէ ինչու թրքական իշխանութիւնները ամէն կերպ կ'աշխատէին Մակարին ձեռք բերել եւ ոչնչացնել անոր մարտական ամրոցը՝ Սպաղանք գիւղը:

Պշարա Խալիլ Մակարը եւ Գալէն ոչնչացնելու համար թրքական զօրքով կը պաշարէ Սպաղանք գիւղը: Գիւղացիները կը պատսպարուին Ս. Մարուգէ ձգնաւոր եկեղեցւոյ մէջ: Սակայն, չկարենալով քանդել եկեղեցին, քարիւղ թափելով կ'այրէ եկեղեցին, որուն մէջ գտնուողները ամբողջութեամբ կը մեռնին:

Մեռնողներուն մէջ կը գտնուէր նաեւ Մակարի ընտանիքը, որուն համար Մակար կ'ուզէ վրէժ լուծել Պշարա Խալիլէն:

Շուտով Անդրանիկին ու Գէորգին լուր կը բերեն, որ Խալիլը Մուշ քաղաքը կը գտնուի, որպէսզի կառավարութենէն ստանայ իր ծառայութեան վարձքը եւ յաջորդ օրը, վաղ առաւօտեան, բարձրանալու էր Շեկօ ցեղի նստավայրը: Սերոբը սպաննելուն համար Խալիլին Սուլթանը կոչում շնորհած էր եւ պարգեւատրած պատուոյ նշանով: Ան նուէր ստացած էր նաեւ Ալվառինջ գիւղէն առնուող տասնորդ հարկը:

Խալիլի ճանապարհը կ'անցնէր Մառիկի կիրճով: 25 հայ-
դուկներ Անդրանիկի, Գէորգի, Մակարի ու Գալէի հետ կը շար-
ժըւին դէպի կիրճը ու դարան կը մտնեն: 1900 թիւի Նոյեմբեր
ամիսն էր, կը պատմէ Անդրանիկը.— «Ըսի, որչափ կարելի է,
պէտք է աշխատիլ Խալիլին ողջ բռնել, որպէսզի հարցաքննենք
զինք, թէ մինչեւ այժմ հայերէն ովքե՞ր եղած են իր լրտեսնե-
րը»:

Միջօրէին առաջինը կը մտնէ թալանուած գոյքի եւ ապ-
րանքներու քարաւանը, ապա՝ կ'երեւայ ինքը՝ Խալիլը, շրջա-
պատուած 40 զինեալ հեծեալներու խումբով: Դարան մտնողնե-
րը թոյլ կու տան, որ քարաւանը անցնի, ապա՝ կրակ կը բանան
այն ժամանակ երբ հեծեալ խումբը կը հաւասարուի իրեն: Առա-
ջին համազարկին հեծեալներու մեծ մասը գետին կը տապալուի:
Կը սպաննուի նաեւ Խալիլի ձին: Խալիլը վար կ'իյնայ, բայց ոտ-
քը կը մնայ ասպանդակին մէջ: Հայդուկները վրայ կը հասնին,
Խալիլին ստքի կեցնելով կը խուզարկեն: Կը գտնեն 13 հայ լըր-
տեսներու անունները պարունակող փաստաթուղթը եւ ապա
Խալիլի գլուխը կը կտրեն եւ կը դնեն պարկի մը մէջ եւ կը շար-
ժըւին դէպի Գելի:

Այսպէս կը լուծուի Սպաղանքի Ս. Մարուգէ ձգնաւոր եկե-
ղեցին այրող եւ հոն ապաստանած գիւղացիներու վրէժը:

1894-96 թիւերու զանգուածային կոտորածներէն յետոյ,
թրքական վանտալիզմի առաջին ամէնամեծ գոհը դարձաւ Սա-
սունի Սպաղանք գիւղը: Այդ 30-35 տուն ունեցող փոքրիկ գիւ-
ղին վրայ յարձակումը տեղի ունեցաւ 1900 թիւի Յուլիսի 3-ին:
Գիշերը Խալիլ Փաշայի, Քոռ Սլոյի, Ալի Փաշայի աւագակա-
խումբերը, չորս աշիրաթութիւն (մօտ հազար քիւրտ) եւ մի քա-
նի վաշտ ոստիկաններ ու զինուորներ, կը շրջապատեն գիւղը:
Քոռ Սլօն 500 քիւրտերու հետ դիրք կը գրաւէ Կելիէկուզանի եւ
Տալուրիկի միջեւ ու կը կտրէ Սպաղանքի կապը աշխարհի հետ:

Արշալոյսին կը հնչէ յարձակման փողը, եւ քիւրտերն ու
թուրքերը կը մտնեն Սպաղանք: Աղմուկին վրայ հայերը տու-
ներէն դուրս կ'ելլեն, բայց ով ոտքը շեմէն դուրս կը հանէ, գըն-
դակահար կ'իյնայ: Կիները երեխաներուն հետ զօրքին ընդա-
ռաջ կ'երթան կարծելով, թէ կը խնայեն, բայց բոլորը թրահատ
կ'ընեն, չխնայելով նոյնիսկ օրօրոցի երեխաներուն: Ամբողջ
գիւղէն կը փրկուին 7 հոգի, որոնցմէ հինգը Մակարի գլխաւո-
րութեամբ կը ճեղքէ թշնամիին օղակը եւ շրջապատումէն դուրս

կու գան, իսկ երկուքը կրիներ էին, որոնք գետը նետուեցան եւ քարերուն կառչելով կարողացան միւս ափը հասնիլ: Գիւղը թալանուեցաւ եւ հրդեհուեցաւ: Այս հրէշաւոր ոճրագործութիւնը աշխարհի աչքէն թաքցնելու համար Սպաղանքը երկար ժամանակ շրջապատման մէջ կը պահուէր: Որոշ ժամանակ անց Խալիլն ու Հիւսէյնը ոստիկաններու հետ կը վերադառնան Սպաղանք, հորերը կը քանդեն եւ դիակներ հանելով կ'այրեն:

Մակարի հայդուկային կեանքին մասին կ'անդրադառնան Ռուբէն Տէր Մինասեան, Հայաստանէն մատենագիրներ Ս. Կ. Պօղոսեան եւ Կ. Ս. Պօղոսեան «Ինձ Բահ Տուէք» գիրքին մէջ, 1990-ին տպուած երեւան:

Սպաղանք գիւղը միշտ եղած է հայ աչքառու եւ ղեկավար ֆետայիներու կեդրոնն ու հաւաքավայրը, Մակարի, Գալէի, Հակէի, Կարոյի, Աղոյի եւ սպաղանցի բազմաթիւ ֆետայիներու ծննդավայրը:

Այդ ֆետայիներու կարգին, Սպաղանք գիւղին մէջ տեղի ունեցող ժողովներուն միշտ ներկայ կը գտնուէր Անդրանիկ Փաշան, որ Մեղրագետին մէջ հօրս լողալ սորվեցուցած է, եւ թէեւ տակաւին պատանի, իրեն զէնք տուած:

Հայրս յաճախ պատմած է իր մասնակցած կամ լսած ֆետայական մարտնչումներուն մասին:

Հոս կ'ուզեմ անդրադառնալ Սուլուխի կռիւին մասին, ուր նահատակուեցան հայ ազատագրական ճակատամարտերու անվեհեր քաջեր Գէորգն ու Գալէն:

Սասունի հայդուկներու կռիւներու գլխաւոր սկզբունքն էր՝ ճակատամարտերու ժամանակ անընդմէջ տեղաշարժուիլ, բարձունքներու վրայ դիրքեր գրաւել՝ օգտագործելով լեռներու ծերպերը: Տեղահանքի միւս հնարաւորութիւններու ճիշդ օգտագործում՝ թշնամիին հարուածելու անոր համար անսպասելի կէտերու մէջ, անակնկալ տեղաշարժերու եւ հարուածներու միջոցով անցնելու թշնամիին թիկունքը:

Սուլուխը այլ էր: Ան կը գտնուէր Բիւրակնի լեռներու եւ Տարօնի դաշտի սահմանագծին: Գիւղի թիկունքին կը բարձրանային լեռները, աջ թեւին կը հոսէր փրփրաբաշ Արածանին, իսկ ձախ կողմը Խոփերու Դաշտի շարունակութիւնն էր:

Դիմացէն կու գար թշնամիին 3000 հոգիէ բաղկացած զօրաբանակ մը: Իսկ հայդուկները՝ Գէորգն ու ուրիշներ Սուլուխ եկած էին առանց ձիերու:

Գէորգը, պաշտպանական երեք գիծ ստեղծելով կը ձգտէր թշնամին ծուղակը ձգել եւ գիւղի փողոցներուն մէջ անոնց պատճառել մեծ կորուստներ: Եթէ թշնամին յաղթահարէր առաջին գիծի դիմադրութիւնը, կը մըտածէր, որ յաղթած է հայդուկներու գլխաւոր ուժերուն, որովհետեւ առաջին գիծին վրայ կը կռուէր անձամբ Գէորգ Չաուչը, հետեւաբար, ան, առաջին գիծը անցնելով, աւելի ինքնավստահ պէտք է գիւղ մըտնէր: Այստեղ ան կ'իյնար Սուլուխի մարտական ջոկատներու, ինչպէս նաեւ գիւղի միւս մասերուն դիրքեր բռնած հայդուկներու կրակին տակ: Այդ հնարաւորութիւն կու տար մինչեւ միջնալը դիմադրել եւ գիշերը հեռանալ Սուլուխէն: Գէորգ խստորէն պատուիրեց, որ առանց իր ազդանշանին ոչ ոք կրակէ: Թրքական վաշտերը կը մօտենային: Անոնք արդէն 100 մեթր հեռաւորութեան վրայ էին, իսկ հեծեալ զօրամասը սրարչաւ դընաց դէպի Ս. Գէորգ եկեղեցիին կողմը: Կը պայթի Գէորգի հրացանը: Բոլոր հայդուկները միաժամանակ կրակ կը բանան առաջ եկող թրքական վաշտերուն վրայ: Թուրքերու մէկ մասը ճանապարհէն դուրս կու գայ ու կը պատսպարուի փոսերու մէջ: Ոմանք շփոթած կը վազեն դէպի գիւղ ու կը թաքնուին պատերու տակ, իսկ հիմնական մասը ետ դառնալով կը հեռանայ, դուրս գալով մոսին հրացանի կրակի գօտիէն, դիրքեր գրաւելով:



Գէորգ Չաուչ

Օրուան երկրորդ կէսէն կը լսուի թրքական բանակի փողերու կանչը, եւ Քէօսէ Պինպաշին երկրորդ անգամ յարձակման հրաման կու տայ իր զօրաբանակին: Այս անգամ թուրքերը յառաջ կը շարժին ոչ թէ շարասիւններու, այլ՝ ցրուած մարտակար-



Գալէ

գով՝ վազք-փորսող սկըզ-բունքով: Կը սկսի կատաղի ճակատամարտը: Թուրքեր մեծ զոհեր կու տան, բայց յամառօրէն յառաջ կը շարժին: Քէօսէ Պինպաշին անձամբ կը ղեկավարէր յարձակումը: Ան արդէն Քիւլչուկի տան պատին տակ էր, երբ գետին տապալեցաւ: Թուրքերու մէկ մասը, անոր մարմինը վերցուցած, նահանջեց, իսկ միւսները յառաջ շարժեցան ու մըտան հայդուկներու դասաւորութեան մէջ:

Գէորգի աջ կողմը կը կռուէր Գալէն: Յանկարծ անոր հրացանը կրակելէ դադրեցաւ: Գէորգը դարձաւ դէպի Գալէն: Իր հայդուկային պատանեկութեան ընկերը՝ Գալէն ըս-

պաննուած էր: Ան յանձնարարեց Գալէն իջեցնել Քիւլչուկի ախոռը, իսկ ինքը շարունակեց կրակել: Բայց յանկարծ դադրեցաւ կրակելու նաեւ անոր հրացանը. զսպանակը փճացած էր: Ան ծունկը գետին իջեցուց եւ փորձեց կարգի բերել հրացանը, բայց այդ վայրկեանին, ինչպէս Ռուբէն գրած է, անցնելով Գէորգի «աջ թիկունքէն խրուած էր անոր ծունկին մէջ»: Գէորգը ձեւով մը կտուրէն վար իջաւ, մտաւ ախոռ եւ զիտակցութիւնը կորսնցուցած ինկաւ զոհուած ընկերոջ՝ Գալէի կողքին: Քիչ անց, թուրքերը գրակեցին Գէորգի զբաղեցուցած դիրքերը եւ Քիւլչուկի կտուրին վրայ կէս ժամէն աւելի կատաղի կռիւներ տեղի ունեցան, մինչեւ որ էլոյին յաջողուեցաւ իր խումբով ետ գրաւել այդ տունը եւ շարունակելով հետապնդել թշնամին, հասնիլ մինչեւ խճուղի: Գիւղ մտած թուրքերէն շատերը շրջապատուեցան եւ ոչնչացուեցան: Նահանջող թրքական զօրամա-

սերու ետեւէն Հայդուկները շարժեցան դէպի կամուրջի թաղի տուները եւ նոր դիրքեր գրաւեցին:

Թուրքերը փորձեցին հեծելագօրով անցնիլ գիւղի հարաւային մասը եւ թիկունքէն հարուածել հայդուկներուն: Սակայն հայդուկները հասկցան անոնց մտադրութիւնը եւ շեշտակի հարուածով ցրուեցին այդ հեծեալ ջոկատը:

Թշնամին աւելի քան 150 սպաննուած եւ շուրջ 250 վիրաւոր տալով, չկրցաւ գրաւել Սուլուխը: Թրքական հրամանատարութիւնը հարկադրուած եղաւ Մուշէն թնդանօթներ խնդրել:

* * *

Լիբանանի Քուրայի շրջանին մէջ հօրս հետ իմ ունեցած պտոյտները, սառնորակ աղբիւրները եւ դրախտային գեղեցկութիւնները եւ տեսարանները մեզ տարին Սասունի լիճերուն, լեռներուն, ձորերուն եւ մանաւանդ թուրք եւ քիւրտ պետութեան եւ աշիրաթապետերուն Սասնոյ հայութեան դէմ կատարած յարձակումներուն, եւ տիրապետութեան դէմ ազատագրական մարտնչումներով յայտնի հայդուկապետեր Մակարի, Գալէի, Գէորգի եւ բազմաթիւ հայ ֆետայիներու հերոսութեան եւ կեանքին, մեր սրտերուն մէջ վառ պահելով անոնց ազգասիրական եւ հայրենասիրական ոգին, փոխանցելով մեր նոր սերունդներուն, որպէսզի գիտական նոր միջոցներով ազատագրենք մեր կորսնցուցած հայրենի տարածքները:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԼԻՆ ՀԱՅ ԼԵՉՈՒՆ Է

Հայրենասիրութեան եւ ազգասիրութեան հասնող ճանապարհները անվիճելիօրէն կ'անցնին հայոց լեզուի ու պատմութեան գիտակցութիւններէն, այլապէս ժամանակի ընթացքին, վերոյիշեալ ինքնաճանաչողութեան եւ ազգապահպանման գէնքերու մոռացութեան եւ չգոյութեան պատճառով հայութիւնը կ'ենթարկուի ձուլումի եւ ուժացումի, մանաւանդ հայրենիքէն դուրս ապրող հայերուն համար:

Ուրեմն, միայն հայրենիքին մէջ ապրիլը հայ մնալու եւ հայ ապրելու հնարաւորութիւններ կրնան ստեղծել, իսկ անոնք որ ինչ-ինչ պատճառներով հայրենիքէն կը հեռանան, անոնք կամ անոնց զաւակներն ու թոռները տարիներու թաւալումով կը հեռանան նաեւ իրենց արմատներէն եւ լեզուէն:

Մեր մեծագոյն արձակագիրներէն Վարդգէս Պետրոսեան իր «Հայկական էսքիզներ» հատորի 41-րդ գլխուն մէջ կը պատմէ հայ լեզուի կարեւորութեան մասին հետեւեալը.—

Դեմքը գունաւոր էր, մագերը թափուած նակատին, ուսերուն: Եթէ համեմատութիւններ սիրէի, կ'ըսէի որ նման էր Պետրոս Աղամեանին, միայն գլուխը, որովհետեւ բարձրահասակ էր...: Եւ քանի որ այդ հանդիպումից մէկ շաբաթ առաջ, Սան Ֆրանսիսքոյում ես մի քանի ժամ անցկացրել էի հիփիների կղզում, պատանին թուաց նրանցից մէկը: Թէպէտ հայ-եացքն ուրիշ էր: Գունատութիւնը՝ ազնուական:

Մի քանի վայրկեան նա կանգնած էր ամպիոնի առաջ ու պիտի խօսէր:

Խօսեց:

Բառերը հայերէն էին, արտասանութիւնն՝ անգլիական, անուն ազգանունը՝ Հայկարամ Մսրրլեան, Լոնտոնից:

Խօսեց: Բառերը եկան, կաթկթեցին դահլիճի շոգ գետնին.—

«Հազար ինը հարիւր քառասուն վեցին մենք Պէյրութ կ'ապրէինք: Հայրս առաջին անգամ ըլլալով Հայաստան պիտի երթար: «Հայկարամ,— ըսաւ ինձ,— ի՞նչ բերեմ քեզ Հայաստանէն»: Հայաստանի բանալին բեր,— ըսի ես, որ հազիւ չորս տարեկան էի: Երբ հայրս ետ եկաւ, իսկոյն հարցրի՝ «Բերի՞ր»:

«Բերի՛»,— ըսաւ հայրս ու ինձ մեկնեց մեր ընտանեկան լուսանկարը, ուր ես էի, հայրս, մայրս: «Միւս կողմը նայէ»,— ըսաւ: Նայեցի, բան մը չհասկցայ, պզտիկ էի: Հայրս, նկարը առաւ ձեռքէս, կանգնեց սեղանիֆով, տեսակ մը հանդիսաւոր կեցուածքով: «Սիրելի Հայկարամ,— կարգաց,— Հայաստանի բանալին հայոց լեզուն է, սովորիր եւ Հայաստանի բոլոր դռները կը բացես»,— հայրս լռեց: Հիմա լաւ կը յիշեմ, կուլ տուաւ արցունքները ու հատ-հատ տառերով կարդաց այդ խօսքը գրողի անունը՝ Աւետիֆ Իսահակեան...:

Ես չորս տարեկան էի ու ատոր համար ըսի՝ «Բանալին ո՞ւր է»:

Ես չորս տարեկան էի ու յետոյ իմացայ, թէ ով եղած է Աւետիֆ Իսահակեանը: Իմացայ, որ Երեւանում հայրիկս անոր էր յայտնած իմ ցանկութիւնը եւ ան ալ իր ձեռքով գրած էր նկարին տակ այդ երկու տողը:

...Եւ ահա բերած եմ...»:

Ինչ ասաց յետոյ Հայկարամը, չեմ յիշում: Գուցէ գրածս էլ նրա բառերը չէին: Բայց պատմութիւնն արձանագրում եմ ժողովի ֆարտուղարի բարեխղճութեամբ, Վենետիկի Մալրի խօսքերով՝ ոչ աւելացրել եմ, ոչ պակասեցրել: Յիշում եմ, որ երեւանեան դահլիճը Հայկարամին ծափահարեց տաք ու յուզումնալից, որ իմ կողքի աղջիկը լաց է լինում, իսկ Հայկարամը կանգնած էր գունատ ու ազնուական, չգիտես յուզուած, շփոթուած, զարմացած, թէ՞ բոլորը միասին...:

Հայաստանի բանալին հայոց լեզուն է...:

Քսան հիմզ տարի առաջ, վարպետի գրած տողը ես արտագրում եմ այն հարիւր-հազարաւոր հայ տղաների ու աղջիկների համար, որ հիմա մեծանում են օտարութեան մէջ:

Արձակագիր Վարդգէս Պետրոսեան կրկին «Հայկական էսքիզներ» գիրքի 48-րդ գլխուն մէջ կը պատմէ Հայաստանէն արտագաղթած հայերու օտար երկիրներու մէջ ապրած կեանքին մասին: Կը գրէ.

Դեռ քանի՞ անգամ պիտի խելագարուի Կոմիտասը:

Այս միտքն իմ մէջ առաջին անգամ արթնացաւ մի քանի տարի առաջ: 1965-ի աշնանային մի օր, երբ ես նստած էի նրա գերեզմանի մօտ: Այդ օրը, առաւօտեան, Երեւանի բանկում հանդիպել էի մի հայ մարդու, որ երկու տարի Հայաստանում

ապրելուց յետոյ որոշել էր վերադառնալ Թուրքիա: «Կշտացանք ձեր երկրից»: Շարտեց իմ երեսին այդ մարդը, որ հիմա Սթամպուլի որեւէ թէյարանում երեսի մուգ, անուշաբոյր թէյ է մատուցում էֆենտիներին կամ երկաթուղային կայարանի ժը-խորի մէջ փայլեցնում է նրանց կօշիկները:

Վարդգէս Պետրոսեան կը գրէ.

Աւելի լաւ է երկու ուրիշ հայ աղջկայ մասին պատմել: Մէկը տասնեօթ տարեկան է, միւսը՝ տասնհինգ: Երկու տարի առաջ, հայրը, հակառակ աղջիկների կամֆին, նրանց Արգենտինա տարաւ: Երեսի երազներ էր տեսել հեռաւոր փետրի մասին: Բայց աղջիկներն այնուամենայնիւ, տուն դարձան: Անցեալ տարի, ձմրանը նրանք կարողացան համոզել իրենց հօրը որ թոյլ տայ Հայաստան գալ իբրեւ տուրիստ: Եկան աղջիկներն ու ասացին «Հայաստանէն զատ մենք ուրիշ տեղ չունինք»: Փըխրուն աղջիկները կարող էին նոյնիսկ դիւանագիտական միջադէպի առիթ դառնալ: Երեսանում նրանց փորձեցին համոզել, որ ետ գնան, ստանան իրենց հօր եւ այն երկրի համաձայնութիւնը: Բայց յամառ գտնուեցին նրանք: Մէկ շաբաթ նոյնիսկ հացադուլ արեցին, առանց թղթի ու թոյլտուութեամբ գնացին երեսանեան իրենց դպրոցը, դասի նստեցին, փոքր աղջիկը մի քանի օր մտել էր հօրեղբօր ներքնայարկը եւ դուրս չէր գալիս: «Ես այստեղ կը մնամ: Պուէնոս Այրէսը իմ հայրենիքն է»:

Նրանք նորից հաստատուեցին Երեսանում: Դպրոց եւ գրնում: Նրանց հայրը Հայաստան է:

Ես այս աղջիկների մասին եմ պատմում Կոմիտասին, լոռեցի Արշամ Փանոյեանին, գիւմրեցի Գրիշ Անտիկեանին, երեսանցի Սուրէն Արեղեանին եւ էլի ուրիշների մասին, որոնց տեսայ Ամերիկայի խելակորոյս ճանապարհներին: Այս մարդկանց կեանքը եւս մէկ ապացոյց է, որ նաեւ մեր դարի բոլոր բարիքները՝ ատոմաբեռնայ, սառնարան, կոնդեցիոն օդ, հազար ու մի ուրիշ բան մարդուն չեն դարձնում երջանիկ, եթէ նա որոշել է մարդ մնալ: Ու դրա համար՝ ամերիկեան ստանդարտ երջանկութեան պատերի մէջ, նրանք Հայաստան են փորձում յօրինել: Նրանցից մէկն, օրինակ, ինձ ցոյց տուեց իր Հայաստանը: Փոքր մի սենեակ էր: Մի պատը՝ Արարատ, միւսը՝ Զուարթնոց, երրորդը՝ Երեսան, ոչ թէ նկար, այլ հարթաֆանդակ, որ նա իր անվարժ ձեռքերով փորփրել էր քարէ պատերին, երկար տա-

րիների ընթացում: Եւ ապա՝ Հայաստանից այստեղ հասած գրքեր, նկարներ, վառուած լուցկիներ, ֆոնետալի շշեր, թաշկի-նակներ: «Երբ շատ տխուր եմ լինում, փակում եմ դուռը, իջեցնում վարագոյրները, որ Ամերիկան չերեւայ եւ... գնում եմ Հայաստան»:

Եւ հաւատում եմ, կը գայ օրը, եւ այս մարդիկ Հայաստան գնալու համար կը բարձրացնեն վարագոյրները, որովհետեւ նրանց պատուհանները կը բացուեն Արագածի վրայ:

Եւ Կոմիտասին պատմում եմ այս հայերի մասին եւ մահարձանի պղնձէ հայեացքը կարծես ժպիտովը շնչաւորում է: Յիշում եմ՝ 1968-ին, Փարիզում եւ չուզեցի տեսնել այն հոգեբուժարանը, որտեղ նրա տաւը չապրած տարիները մնացին՝ չուզեցի: Սուտ է: Կոմիտասը չի խելագարուել, եւ յանկարծ նրան տեսնում եմ Աշնակ գիւղում, սասունցիների կատաղի պարի մէջ՝ թաշկինակը ձեռքին, դէմքը ֆրոնսած ու լուսաւոր:

Դժբախտաբար, Հայաստանի վերանկախացման թուականէն՝ 21 Սեպտեմբեր 1991-էն սկսեալ, երբ բացուեցան Խորհրդային Միութեան սահմաններէն դուրս ելլելու դռները, մեծ թիւով հայեր, յատկապէս 1945-1947 թուականներուն Հայաստան ներգաղթածներ, Խորհրդային վարչակարգի «զբախտային կեանք»ի դաժանութիւնները կրելէ ետք, արտագաղթեցին Հայաստանէն, ազատ եւ բարեկեցիկ կեանք ունենալու համար Սփիւռքի զանազան երկիրներուն մէջ, իրենց սրտին մէջ խեղդելով հայրենասիրական եւ ազգասիրական զգացումները:

Հայաստանէն արտագաղթի պատճառները բազմաթիւ են. անգործութիւն, անարդարութիւն, անյուսուցիւն, եւ բարօր ապագայ ունենալու յոյս:

Անկախութեան առաջին տարիներուն, անգործութեան գլխաւոր պատճառը կարելի է նկատել Խորհրդային տնտեսական վարչակարգի փլուզումը եւ մանաւանդ Հայաստանի կառավարական աթոռներու տիրացած կարգ մը կուսակցութիւններու եւ անձերու կողմէ կատարուած կողոպուտները, որոնք առիթը օգտագործելով իւրացուցին Հայաստանի ճարտարարուեստական հաստատութիւնները եւ գործարանները՝ չնչին փոխարժէքով: Եւ փոխանակ այդ գործարանները աշխատցնելու եւ հազարաւոր գործաւորներու գործ հայթայթելու, գործարաններու մեքենաները երկաթի գինով ծախեցին Պարսկաստանի գործարարներու, անգործութեան մատնելով այդ գործաւոր-

ները: Անոնք աժան գիներով սեփականացուցին նաեւ բնակարաններ եւ հողատարածքներ: Պետական եւ ելեւմտական հաստատութիւններու ղեկավարները զարտուղի միջոցներով հարուստութիւն դիզեցին, անտեսելով գիւղական շրջանները, պատճառ դառնալով գիւղացիներու աղքատութեան եւ գիւղերու պարպումին: Հայաստանի մէջ տիրող անգործութիւնը եւ անարդարութիւնը դժբախտաբար կը շարունակուի ներկայիս, որուն հետեւանքով կը շարունակուի արտագաղթը, որ հասած է վտանգաւոր չափերու:

— Դէպի ներս՝ 754 հազար 371 հոգի:

— Դէպի դուրս՝ 821 հազար 644 հոգի:

Հաշուեկշիռ՝ 67 հազար 275 հոգի, որոնք գաղթած են եւ հաստատուած Ռուսիա, Մ. Նահանգներ, Եւրոպա եւ այլ երկիրներ:

Իսկ Ազգային Վիճակագրական Ծառայութիւնը կը տեղեկացնէ, որ 2011 թուականին Հայաստանէն գաղթած են 458 հազար 98 հոգի: Հայաստան ժամանած՝ 368 հազար 753 հոգի:

Հաշուեկշիռ՝ 89 հազար 345 հոգի, որոնք գաղթած են եւ չեն վերադարձած ապրելու՝ կեանքի ապահովութիւն չգտնելով Հայաստանի մէջ:

Մեր պատմութեան ընթացքին, միշտ, հազարաւոր հայեր գաղթած են օտար երկիրներ, եւ դարերու թաւալումով ձուլուած են իրենց բնակած երկիրներու ժողովուրդներուն մէջ, այդ ձեւով վտանգելով պատմական եւ արդի Հայաստանի գոյութիւնն ու բարգաւաճումը:

Կարգ մը ազգեր՝ իտալացիներ, ֆրանսացիներ, գերմանացիներ, սպանացիներ, հնդիկներ, թուրքեր, չինացիներ եւ այլ ազգեր, հազարներով, միլիոններով կը գաղթեն եւ կը հաստատուին Միացեալ Նահանգներ, Գանատա եւ Հարաւային Ամերիկայի երկիրները, սակայն անոնց գաղթելը իրենց մայր հայրենիքին վնաս չի պատճառեր, ընդհակառակն, անոնք իրենց մայր հայրենիքին արտագրութիւնները կը սպառեն իրենց հաստատուած երկիրներուն մէջ, օգտակար դառնալով իրենց հայրենիքի բարգաւաճումին:

Սակայն, Հայաստանի բնակչութեան պակսիլը ոչ միայն վնաս կը պատճառէ Հայաստանի ապահովութեան, տնտեսութեան եւ երկրի ապագային, այլ՝ ժողովուրդին: Հայաստանէն

հեռացող ամէն մէկ հայ օտար երկիր հաստատուելով, պատճառ կը դառնայ ձուլումի եւ ուծացումի, պակասցնելով իր արմատներուն կապուած հայերուն թիւը, տկարացնելով հայրենիքի բարգաւաճումն ու հզօրացումը, դիմադրելու համար դրացի երկիրներու սպառնալիքներուն եւ յոխորտանքներուն: Օսմանեան պետութեան տիրապետութեան տակ 600 տարիներ ապրած եւ տոկացող, ջարդերու եւ ցեղասպանութեան ենթարկուած, հայրենիք եւ սեփականութիւն կորսնցուցած, մահուան ճիրաններէն հրաշքով փրկուած հայու բեկորներ, 1915-ի աղէտէն ետք ապաստան գտնելով արաբական եւ այլ երկիրներու մէջ, դիմադրելով եւ պայքարելով իրենց գոյութեան սպառնալիքներուն դէմ, կրցան պահել իրենց ինքնութիւնը եւ յաղթահարել անօթի-ծարաւ ապրելու մղձաւանջը, մնացին հայ-քրիստոնեայ, պահելով իրենց ազգային եւ տոհմային սովորութիւններն ու ականդութիւնները, իրենց ազգային եւ հայրենասիրական զգացումները, փոխանցելով իրենց զաւակներուն եւ թոռներուն:

Սակայն ինչպէ՞ս բացատրել եւ արդարացնել Լոս Անճելըսի AMGA հեռատեսիլի հայկական կայանէն ամէն օր Լոս Անճելըսի ժամով ժամը 5:00-ին, «Ժամանակ» լրատուութեան հաղորդավար, Ն.Ա.Կ.-ի եւ Լեւոն Տէր Պետրոսեանի գործակալ Անահիտ Մարտիրոսեանի բարբաջանքները Հայաստանի մէջ ամէն օր կատարուող ոճիր-արկածներու մասին, ոչ մէկ դրական բան չտեսնելով Հայաստանի մէջ: Կոչ ուղղելով Հայաստանի ժողովուրդին ըմբոստանալու, ի հարկին, բրտութեամբ, փոխելու համար Հայաստանի վարչակարգը: Նոյնիսկ թելադրելով հայ ժողովուրդին, Սփիւռքի եւ Հայաստանի, որպէսզի չմասնակցին Համահայկական Հիմնադրամի հանգանակութիւններուն:

Նոյեմբեր 4-ին, Մ. Նահանգներու Գոհաբանական Տօնին առթիւ կազմակերպուած Համահայկական Հիմնադրամի հանգանակութեան արշաւի նախօրէին, Հայաստանէն փախած այս հայուհին, երբ կը դատապարտէր Հայաստանի ներկայ կացութիւնը եւ կոչ կ'ուղղէր ըմբոստանալու, եղան նաեւ հարց-պատասխաններ: Ներկաներէն հայ ազգային մը խօսք առաւ եւ ըսաւ.— «Փոխանակ այս երկրին մէջ պայքարելու, ինչո՞ւ Հայաստան երթալով հոն չէք պայքարիր»:

Հաղորդավար տիկինը պատասխանեց.— «Կ'երեւի այս պարոնը արեւմտահայ է», եւ աւելցուց.— «Մենք հոն ապրեցանք եւ

ճաշակեցինք Հայաստանի բարօրութիւնը: Եթէ դուք հայրենասէր էք, քիչ մըն ալ դուք գացէք եւ ապրեցէք հոն»:

Այդ «հայրենասէր» տիկինը հաւանաբար մոռցած է, որ արեւմտահայերը, Յեղասպանութենէն փրկուած հայերը, իրենց կամքով չհեռացան իրենց հազարամեայ տուներէն, քաղաքներէն եւ գիւղերէն: Օտար երկիրներ հաստատուելով հայ ոգիով եւ քրիստոնէական դաստիարակութեամբ զաւակներ հասցուցին, որոնք հազարներով ներգաղթեցին Հայաստան, փաստելով իրենց հայրենասիրութիւնը եւ շատեր քաւեցին այդ մեղքը: Ստալինեան վարչակարգի բարիքները վայելեցին Միպերիոյ սառնամանիքներուն մէջ: Իսկ աքսորուած, տարագրուած մեր հայրերն ու մեծ հայրերը արաբական, եւրոպական եւ ամերիկեան երկիրներու մէջ ամէն տեսակ գործ ընելով, իրենց կարողութեան չափով կ'օգնեն Հայաստանին, մասնակցելով Համահայկական Հիմնադրամի հանգանակութեան արշաւին եւ այլ միութիւններու եւ հաստատութիւններու կողմէ եղած հանգանակային արշաւներուն:

Տիկին Անահիտներու անպատուաբեր պայքարը կու գայ ցոյց տալու, որ նման պայքարներ եւ հեռատեսիլէն հաղորդումներ, Սփիւռքի մէջ, հայրենիքէ հեռու, սակայն հայրենիքի ցաւերով, ուրախութիւններով եւ յաղթանակներով ապրող հայերուն սրտին մէջ գոյութիւն ունեցող հայրենասիրութեան կը վնասէ: Լոս Անճելըսի մէջ կատարուած պայքարները՝ Հայաստանի մէջ բան մը չեն փոխեր: Միմիայն Հայաստանի ժողովուրդը, իր ընտրական քուէներուն տէրը ըլլալով, ձայնը չծախելով կրնայ ժողովրդավար, արդար եւ բարգաւաճ Հայաստան կերտել: Եւ այդ կ'ըլլայ միասնական ուժերով, որուն փաստն է Լոս Անճելըսի մէջ 4 Նոյեմբերին կատարուած Համահայկական Հիմնադրամի հանգանակութիւնը, որուն հայ հայրենասէր ուսանողներ, արուեստագէտներ, երեք ազգային կուսակցութիւններու ղեկավարներ մասնակցեցան եւ միասնական աշխատանքով հանգանակեցին 12 միլիոնէ աւելի գումար մը, խմելու ջուր հասցնելու համար Հայաստանի եւ Արցախի գիւղերու բնակիչներուն: Միշտ միասնական ուժերով յաղթած ենք եւ պիտի յաղթենք բոլոր թշնամիներուն:

Հայրենի տաղանդաւոր արձակագիր, արմատներով սասունցի բժիշկ Սարգիս Տօնոյեան, վերջերս հրատարակած «Չմեռնող Մրմունջներ» պատմուածքներու հատորի էջ 23-ին

վրայ, «Ջաղացպան Ղազար» պատմուհիներն մէջ, գիւղացի ջաղացպան Ղազար կ'ըսէ.— «Էսօր մեզ համար հարկաւոր է իրար մէջ-մէջքի տանք, ուժովնանք, թէ բոլորս միասին էլանք, մէջ-մէջքի տանք եւ ոչ մի ճեղք չթողեցինք թշնամու համար, էդ ժամից մեր ազգին յաղթող չի եղնի, էլի ոչ մի հարամ տունն աւերելու փորձ չի անի»:

Ժամանակն է որ մտիկ ընենք ջաղացպան Ղազարի խօսքին՝ որպէսզի միշտ յաղթական ըլլանք մեզմէ թիւով, բանակով եւ գէնքերով աւելի մեծ եւ հօր թշնամիներուն: Իսկ հայ ցեղակրօններու ուխտի հիմնադիր, հայկական կամաւորական վաշտի հրամանատար, Ջանգեղուրի ազատարար, բազմատաղանդ դաշնակցական ղեկավար Ջօրավար Նժդեհ կ'ըսէ.—

«Ես յանախ մտովի կ'այցելեմ մեր հին ու նորագոյն ռազմավայրերը, մեր պարտութեան եւ յաջողութեան պատճառներն ինձ համար պարզելու ցանկութեամբ: Ես գտել եմ որ այն բոլոր դէպքերում, երբ Ներսէս Մեծի նման մէկը «բարձրացել է լեռը», երբ մեր ցեղը լարել է իր բովանդակ ուժերը եւ չի տկարացել հոգով, մինչեւ որ տեղի կը տար թշնամին ու միշտ յաղթութեան դիցուհին իր ոսկէ մատներով պսակադրել է հայ գինուորի նակատը:

Իսկ երբ չգտնուէր պարթեւատեաց առաջնորդը, որ կարողանայ լարուած պահել ժողովրդի ուժերը, պարտութիւնն ու ամօքն են կրել հայ ուժերը, փաստ՝ Սարգարապատի, Բաշ Ապարանի, Ղարափիլիսայի նակատամարտները, ինչպէս նաեւ Ջանգեղուրի եւ Արցախի ազատագրումը»:

«ԼԱՒ Է ՄԱՐԴ ԻՐ
ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՉ ՉՈՐ ՀԱՅ ՈՒՏԷ՝
ՔԱՆ ՕՏԱՐ ԱՇԽԱՐՀԻ
ԹԱԳԱՒՈՐԸ ԸԼԼԱՅ»

Անձեւացիք գաւառ Մեծ Հայքի Վասպուրական նահանգի: Գրկած է արեւելեան Տիգրիսի ակունքներու լեռնոտ շրջանը: Աշշուրա-Բաբելոնական արձանագրութիւններու մէջ յիշատակուած է Անգի ձեւով: Պատկանած է Անձեւայիներու նախարարական տոհմին: 4-րդ դարէն եղած է առանձին եպիսկոպոսական թեմ:

Արաբ տիրապետութեան շրջանին՝ 8-9-րդ դար, իր դժուարամատոյց դիրքին շնորհիւ Անձեւացիք պահպանած է իր ինքնուրոյնութիւնը: 9-րդ դարի կէսէն մտած է Արծրունիներու իշխանութեան, ապա՝ թագաւորութեան կազմին մէջ: Նշանաւոր էին Անձեւացիք, Կանգաւար եւ Նորաբերդ ամրոցները, Ալաման, Լեկ, Անձաւկաց եւ Աղզի գիւղերը, նախաքրիստոնէական սրբավայր Դարբնացքարը կամ Ագուաւացքարը՝ Հոգեաց վանքը: Անձեւաձիք տարածքը հայաբնակ մնացած է մինչեւ 1915-ի Մեծ Եղեռնը: 20-րդ դարու սկիզբին այն կը համապատասխանէր Վանի նահանգի Նորդ գաւառակին: Ունէր 15 հայկական գիւղ:

**

Տաճատ Անձեւացի իշխանը ծնած է Քիրանի դաշտը, Դաբանդի մօտ, Վասպուրականի Անձեւացիք գաւառի իշխան Գրիգորի որդին, Անձեւացիներու տոհմէն: Ան արաբական նուաճողներու հալածանքներէն խուսափելով անցած է Բիւզանդիոն, ծառայած է բիւզանդական բանակին, աչքի ինկած է Պալքաններու մէջ մղուած պատերազմին, որուն ընթացքին, հասնելով զօրավարական բարձր պաշտօններու (ըստ Ղեւոնդ պատմիչի), ղեկավարած է 60 հազարնոց բանակ: 778-ի արաբա-բիւզանդական պատերազմի ժամանակ, Տաճատ Անձեւացի արաբներուն պարտութեան մատնած է Գերմանիկէ (Մարաշ) քաղաքի մօտ կայացած ճակատամարտի ընթացքին: Բիւզանդիոնի Լե-

ւոն Դ. կայսրի մահէն յետոյ, հրասթափուած Իրինէ կայսրուհիի վերաբերմունքէն, խալիֆայութեան հիւսիսային եւ արեւմըտեան տէրութիւններու կուսակալ Հարունի համաձայնութեամբ, ընտանիքին հետ վերադարձած է հայրենիք եւ կարգուած հայոց իշխան: 785 թուին, արաբ զօրքերու կազմին մէջ, խազարներու դէմ գլխաւորած է հայկական այրուձին:

Կը պատմուի, որ Տաճատ Անձեւացի իշխան, բիւզանդական բանակի որպէս հրամանատար, արաբական բանակներու հետ պատերազմի ընթացքին, իր բանակի գերին ինկած Պաղտատի թագաւորին որդին յանձնեց Պաղտատի թագաւորին եւ Պաղտատի թագաւորը առ ի վարձատրութիւն, մեծ հարստութիւն խոստացաւ հայոց իշխանին, եւ խնդրեց որ Պաղտատ մնայ, քանի ինք ձերացած է, եւ իր տղուն հետ կառավարէ երկիրը: Սակայն Տաճատ կը մերժէ իրեն առաջարկուած մեծ պաշտօնը եւ կը նախընտրէ հայրենիք վերադառնալ: Պաղտատի թագաւորը անթիւ հարստութիւն տալով ողջերթ կը մաղթէ Տաճատին.

— Լաւ է մարդ իր հայրենիքին մէջ չոր հաց ուտէ, քան օտար աշխարհի թագաւոր ըլլայ,— ըսած է Պաղտատի թագաւորը Անձեւացիներու իշխան Տաճատին, հայոց Սմբատ թագաւորի օրով, գնահատելով Տաճատի հայրենասիրութիւնը:

**

Հայոց պատմութեան պատուաբեր այդ շրջանէն ետք, շատ անգամներ անմիաբանութիւնը մեր տկարութեան եւ պարտութիւններու պատճառ դարձած է, որպէսզի կորսնցնենք մեր թագաւորութիւնը եւ պետականութիւնը: Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ պէտք եղած զինուորական ոյժ չկարենալով ստեղծել, դիմադրելու եւ պաշտպանուելու ամէն տեսակ թշնամիներու եւ գաղթարարներու յարձակումներէն: Պատմութեան մէջ կը յիշուին դաւաճանական արարքներ եւ մանաւանդ օրուան թագաւորին դէմ պայքարական դիրքեր: Ըմբոստացումներ, ինչպէս նաեւ նախարարական տուներու իրարու հանդէպ ունեցած ատելութիւններ եւ բախումներ, տկարացնելով հայրենիքի հզօրացումն ու պաշտպանութեան ուժը:

Դարերու ընթացքին, Հայաստանի զանազան քաղաքներէն եւ գիւղերէն հեռացած է հարիւր հազարներու հասնող բնակչութիւն, հաստատուելու համար Պոլիս եւ շրջակայքը, Թիֆլիս

եւ շրջակայքը, Պաքու եւ շրջակայքը, Ռուսիա, Լեհաստան, Ռումանիա, Պոլկարիա, Պարսկաստան, Արեւելքի զանազան երկիրներ:

Ժողովուրդը կը լքէր իր պապենական հողերը եւ տուները, երթալու եւ հաստատուելու համար ապահով երկիրներ եւ քաղաքներ, որպէսզի ազատուին բարբարոսներու եւ բռնակալներու տիրակալութիւններէն ու խժղժուլութիւններէն:

Հայրենասիրութիւնը կար, սակայն կը պակսէր միաբանութիւնը...:

Կորսնցուցինք Բագրատունիներու թագաւորութեան մայրաքաղաք Անին, եւ ժողովուրդը հեռացաւ եւ ապաստանեցաւ ընդհանրապէս Լեհաստան եւ եւրոպական այլ երկիրներ, որոնցմէ այսօր, անոնց մեծ մասը ձուլուեցաւ տեղացի ժողովուրդներու մէջ:

Անմիաբանութեան հետեւանքով բիւզանդացի ժողովուրդը կորսնցուց իր անկախութիւնը: Բիւզանդիոնը կործանեցաւ, որովհետեւ երբ Օսմանեան բանակները պաշարած էին Կոստանդնուպոլիսը, Բիւզանդիոնի քաղաքական եւ կրօնական ղեկավարութիւնը փոխանակ միաբանելու եւ պաշտպանելու մայրաքաղաքը, կը վիճաբանէին իրարու հետ, թէ ասեղի մը ծակէն քանի՞ հրեշտակ կրնայ անցնիլ:

Օսմանցիները գրաւեցին Պոլիսը 1453 Մայիս 29-ին, 52 օրուան պաշարումէ ետք, Սուլթան Մուհամմէտ Բ.-ի ղեկավարութեամբ: Իսկ Հայաստանը շուրջ 600 տարի գրաւուած մնաց Օսմանեան Կայսրութեան կողմէ, ենթակայ՝ թրքական եւ քրտական կեղեքումներու:

Յայտարարուեցաւ Համաշխարհային Առաջին Պատերազմը 1914-ին: Թուրքիան զինակցեցաւ Գերմանիոյ հետ, ընդդէմ Ճրանսայի, Անգլիոյ եւ Ռուսիոյ:

Թուրք պետական աւագանին, օգտուելով Համաշխարհային Պատերազմի անպատասխանատու առիթէն, գործադրութեան դրաւ նախապէս ծրագրուած եւ գործադրութեան սպասող Թուրքիոյ սահմաններուն մէջ ապրող հայութիւնը բնաջնջելու դաւը:

Դաշնակիցներու դաշնակից հայութիւնը, Թուրքիոյ մէջ ջարդերու եւ աքսորի ենթարկուելէ ետք, Ռուսաստանէն, եւրոպայէն եւ Ամերիկայէն զինուորագրուեցաւ դաշնակիցներու բանակներուն մէջ եւ մաս կազմեց պատերազմի զանազան ճա-

կատներուն մէջ մղուող կռիւներուն, յատկապէս յաղթական դուրս գալով Արարայի ճակատամարտէն՝ Պաղեստինի ճակատին վրայ:

1914-ին սկսած պատերազմը վերջ գտաւ դաշնակիցներու յաղթանակով: Սակայն, 1917-ին, Ռուսիոյ Համայնավար յեղափոխութեան պատճառով, ռուսական բանակները հեռացան Հայաստանէն, թրքական բանակին դէմ առանձին ձգելով հայկական բանակները, որոնք կազմուած էին Ռուսիոյ բանակներուն օգնող կամաւորական գունդերէն:

Տեղի ունեցան Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի ճակատամարտերը թուրքերուն դէմ: Յայտարարուեցաւ Հայաստանի անկախութիւնը՝ 28 Մայիս 1918-ին, որովհետեւ հայութիւնը ամբողջական ուժերով, մեծով, պզտիկով դէմ դրաւ թշնամիին կանոնաւոր բանակներուն:

Երկու տարի տեւող Հայաստանի անկախութիւնը վերջ գրտաւ, Հայաստանի եւ Համայնավար Ռուսիոյ ներկայացուցիչներու միջեւ կնքուած համաձայնագրութեամբ, որուն շնորհիւ Հայաստանի կառավարութիւնը կը փոխանցուէր Հայ-Համայնավար Յեղափոխական Խորհուրդին:

Հայաստանի Առաջին Հանրապետութեան՝ 28 Մայիս 1918-ի անկախութեան մասին, Հայաստանէն սասուկնցի արմատներով վաղամեռ տաղանդաւոր արձակագիր Մուշեղ Գալշոյեան իր «Ագռաւաքար» գիրքի (հրատարակուած 1991-ին, ստորագրուած տպագրութեան Փետրուար 1990-ին, յանձնուած շարուածքի 25 Սեպտեմբեր 1989-ին, տպաքանակ՝ 30.000), 362-363 էջերուն վրայ գրած է.—

«Եղաւ մի լաւ բան: Եթէ Դաշնակցական կուսակցութիւնը չկարողանար մի փոքրիկ հանրապետութիւն ստեղծել, պետութիւն՝ անկախ մի պետութիւն, որ գոյութիւն ունեցաւ երկու տարի կամ աւելի պակաս, մենք առանձին հանրապետութիւն կոչուելու իրաւունք չէինք ունենայ, մենք պիտի լինէինք մարզ, աւտոնոմ հանրապետութիւն: Սահմանադրութեամբ՝ միլիոնից պակաս ժողովուրդ ունեցողը առանձին հանրապետութիւն կոչուելու իրաւունք չէր ունենայ: Եթէ նա պետութիւն չէր, իսկ քանի որ կար այդ պետականութիւնը, մենք դարձանք առանձին հանրապետութիւն...»:

Համայնավար հովանաւորութեան տակ ապրած Հայաստանը, 1990-ին, Խորհրդային Միութեան փլուզումով, 21 Սեպտեմ-

բեր 1991-ին, Հայաստանի մէջ կատարուած հանրաքուէով, Հայաստանի ժողովուրդը յայտարարեց իր վերանկախացումը, եռագոյն դրօշով, օրհներգով, զինանշանով, բանակով, խորհրդարանով եւ կառավարութեան կազմութիւնով:

Նորանկախ պետութիւնը հանդիպեցաւ մեծ դժուարութիւններու: Դժուարին օրեր էին: Ժողովուրդը տաքնալու համար քաղաքի եւ անտառներու ծառերը կը կտրէր:

Ժողովուրդի միաբանութեան եւ կուսակցութիւններու գործակցութեան կարօտ ժողովուրդը, ցաւով տեղեակ կը դառնար դաժան սպանութիւններու՝ երկրի ղեկավարութեան կարգ մը անդամներուն:

Նորանկախ Հայաստանի բնակչութիւնը, յուսախաբ նորանկախ հայրենիքին տուած օրհնութիւններէն, օտար դեսպանատուններու դռները դիմելով կը հեռանար հայրենիքէն, ապրելու եւ ապագայ կերտելու յոյսով բարգաւաճ երկիրներու մէջ:

Իսկ ներկայիս, կրկին «Անիբալը դրանն է»:

Ներկայիս, ոչ միայն Անիբալը, այլ Անիբալներ՝ Թուրքիա, Ազրպէյճան, քիչ մըն ալ Վրաստան, պաշարած են Հայաստանը եւ կ'ուզեն խեղդամահ ընել զայն: Իսկ Թուրքիոյ երազը՝ բանալու համար թուրանական ճանապարհները՝ երբեք չի մեռնիր:

Բոլոր քաղաքակրթուած երկիրներու մէջ գոյութիւն ունին խորհրդարաններ, կազմուած պետական եւ ընդդիմադիր կուսակցութիւններով: Ընդդիմադիր կուսակցութիւնները խորհրդարանին մէջ կը քննադատեն կառավարութեան գործունէութիւնները եւ ոչ մէկ անգամ՝ փողոցային ցոյցերով եւ խափանարարութեամբ:

Առիթ պէտք է տրուի մեր թշնամիներուն որ երազեն Արցախն ու Հայաստանը նուաճելու: Առիթ տալով Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարին, որ հրաւիրէ հայերը ապրելու հարուստ ու ապահով Ազրպէյճանի հովանաւորութեան ներքեւ, փոխանակ ապրելու աղքատ եւ գործազուրկ Հայաստանի եւ Արցախի մէջ:

Հայաստանի նախագահ, կառավարութիւն, խորհրդարան, ընդդիմադիր կուսակցութիւններ միասնաբար, հայրենասիրական մաքուր եւ անկեղծ ոգիով պէտք է աշխատին զօրացնելու Հայաստանի տնտեսութիւնը, նոր աշխատատեղիներ բանալ եւ գործ հայթայթել ժողովուրդին, մասնաւոր, դիւրացուած օրէնքներով առիթ տալ, որ սփիւռքահայութիւնը քաջալերուի

Հայաստան եւ Արցախ գալով գործատեղիներ հիմնեն, արտագաղթին առաջըր առնելու համար:

Հայ ժողովուրդի տառապանքի երգիչ, բազմատաղանդ դերող եւ դիւանագէտ Աւետիս Ահարոնեան, 20 Մայիս 1930-ին, իր յորեկեանին առիթով, Փարիզի մէջ իր արտասանած սրտի խօսքի վերջաւորութեան (առանց վերջացնելու կ'իյնայ կաթուածահար եւ կը վախճանի 1948-ին), կ'ըսէ.—

«Ես հաւատում եմ հայ ժողովուրդ քո դարձին, ինչպէս հաւատում եմ, որ ամէն առաւօտ արշալոյսը կը բացուի: Հաւատում եմ, վասնզի կամրջընկեց Արաքսի ափերին, Մասիսի խորհրդաւոր հայեացքի տակ, մեր հայրենիքը կայ, որ մեր թրթրուացող հոգին է բռնել իր մայրական քնքոյշ ձեռքերի մէջ եւ ակնդէտ ու խռովայոյզ նայում՝ նայում է ճամբաներին:

«Եւ հեռու չէ այն օրը, երբ իր բազուկները տարածած, նա կ'ընդունի հեռաւոր հորիզոնների տակ յածող ու հեծող իր զաւակների կարօտակէզ բազմութիւնները եւ բիւրաւոր ձայներ կը թնդան Մայր Արաքսի ափերին:

«Արմենիա, Արմենիա, ո՛վ իմ հոգու յաւիտենական ապաստան, ո՛վ իմ պաշտելի հայրենիք»:

Աւետիս Ահարոնեան կը հաւատար հայ ժողովուրդի դարձին. մենք ալ կ'ուզենք հաւատալ, սակայն այս օրերուն, ինչ-ինչ պատճառներով, (արդար եւ անարդար), հայրենիքէն հեռացողներուն, Պաղտատի թագաւորին Տաճատ Անձեւացի իշխանին տուած մաղթանքը կը կրկնենք.— «Լաւ է մարդ իր հայրենիքին մէջ չոր հաց ուտէ, քան օտար աշխարհի թագաւոր ըլլայ»: Այս պարագային ես կ'ըսեմ.— «Օտար երկիրներու մէջ առատութեան մէջ ապրելով՝ անձը եւ ապրուստը կը շահիս, սակայն ազգութիւնդ, հաւատքդ, հոգիդ եւ զաւակներդ կը կորսընցնես»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հայաստանը, Արցախը եւ ընդհանրապէս համայն հայ ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան եւ անվտանգութեան որպէս երաշխիք երբե՛ք-երբե՛ք պէտք չէ վստահի օտար պետութիւններու կողմէ խոստացուած երաշխիքներու, որոնք կը տրուին՝ մղուած իրենց շահերէն եւ պէտք եղած ատեն մոռնալով իրենց խոստումները, կրնան նոյնիսկ մեր շահերուն ներհակ քաղաքականութիւն որդեգրել եւ մեզ առանձին ձգել: Վկայ մեր պատմութեան մէջ տեղի ունեցած նման բազմաթիւ դէպքեր:

Մեր հայրենիքին եւ ամբողջական հայութեան անվտանգութիւնը պաշտպանելու համար մեր պատմական թշնամիներու նպատակներուն եւ ծրագիրներուն դէմ, ի պահանջել հարկին մարդկային ուժով, գիտութեամբ, զարգացումով, մշակութիւնով, արուեստով, միաբանութեամբ եւ մանաւանդ զինուորական արուեստի գիտական ու արդիական արտադրութեամբ, կրնանք ոչ միայն դիմադրել, այլ նոյնիսկ յաղթել մեր թշնամիներուն, հակառակ անոնց մարդկային, թուական ու զինական արդիականութեան եւ նիւթական կարողութեան առաւելութիւններուն:

Մեր թշնամի պետութիւններու ղեկավարները իրենց յայտարարութիւններով կը սպառնան զինու գորութեամբ ազատագրել Ատրպէյճանի 1/5-րդ մասը, որ «գրաւուած» է Հայաստանի կողմէ:

13 Դեկտեմբեր 2011-ին Թուրքիոյ խորհրդարանի նախագահ Ճեմիլ Չիչէք հակազդեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի վերջին յայտարարութեան ու յայտնեց, որ Հայաստանի նախագահ Սարգսեան այն անձն է, որ անձամբ մաս կազմած է Խոջալուի մէջ ազերիներու դէմ գործուած սպանդներուն:

Չիչէք աւելցուցած է, որ «Թուրքիա ամէն տեսակ օժանդակութիւն պիտի ընէ, որպէսզի Ատրպէյճան կարենայ վերահաստատել իր հողային ամբողջականութիւնը: Մեր արտաքին քաղաքականութեան առաջնահերթ խնդիրներէն մէկն է, պաշտպանել Լեռնային Ղարաբաղի մէջ ատրպէյճանական իրաւունքները: Ղարաբաղի հարցը այն ամենակարեւոր խնդիրն է,

որ կը սպառնայ Կովկասի խաղաղութեան: Բոլոր պետութիւններն ու միջազգային կազմակերպութիւնները կը հրաւիրենք, որպէսզի Ղարաբաղի անիրաւ բռնագրաւումը վերջ գտնէ: Ասիկա անառարկելի պայման է Թուրքիա-Հայաստան յարաբերութիւններու բնականացման համար: Ատրպէյճանի հողամասերուն բռնագրաւումը անպայման պէտք է վերջ գտնէ», – ըսաւ Չիչէք:

Չիչէք ըսած է նաեւ, թէ Հայաստան Յեղասպանութեան պնդումներով շարունակ ամբաստանութիւններ կ'ընէ Թուրքիոյ հասցէին, մինչդեռ մօտիկ անցեալի մեծագոյն ցեղասպանութիւններէն մէկը աշխարհի աչքին կատարուած է 1992-ին՝ Խոջալուի մէջ:

Չիչէք կը մոռնայ Սումկայիթի, Շահումեանի, Գետաշէնի, Պաքուի, Գանձակի մէջ ատրպէյճանցիներու կողմէ կատարուած հայոց ջարդերը, ուր մեծ թիւով հայեր սպաննուեցան եւ հազարաւորներ փախստական դարձան:

Այս բոլոր ամբաստանութիւններէն ետք, զարմանալիօրէն Հայաստանի նախագահն ու կառավարութիւնը կը տատամսին Թուրքիոյ հետ կնքուած փրոթոքոլին վրայէն Հայաստանի արտաքին գործոց նախարարին ստորագրութիւնը քաշել: Փրոթոքոլ մը, ուր պաշտօնապէս կ'ուրացուի Հայոց Յեղասպանութիւնը:

Անօրեայ դարձան Ազրպէյճանի ղեկավարութեան հակահայ յայտարարութիւնները՝ վերագրաւելու հայերու կողմէ գրաւուած հողատարածքները, որոնք Խորհրդային Միութեան կազմութեան շրջանին, Սթալինի կողմէ տրուած էին Ազրպէյճանին:

Թուրքիան եւ Ազրպէյճանը իրենց ռազմական եւ նիւթական կարողութեան յենելով, գինու զօրութեամբ միշտ կը սպառնան վերագրաւելու Արցախի եւ հայկական բանակներու կողմէ ազատագրուած տարածքները: Մեզ արմատախիլ ընել ուզող մեր թշնամիները՝ Թուրքիա, Ազրպէյճան եւ քիչ մըն ալ Վրաստան, ժամանակ չեն կորսնցներ սպառնալիքներով եւ ի հարկին գինու զօրութեամբ իրենց ծրագիրները իրագործելու:

Մեր անվտանգութեան եւ պաշտպանութեան համար նախ շատ կարեւոր է ամբողջ հայութեան – Հայաստան, Արցախ, Սփիւռք – հաւաքական ուժով պատրաստ ըլլալու, դիմակայե-

լու մեր թշնամիներուն սպառնալիքները եւ ի հարկին անոնց զինուորական գործողութիւնները:

Այս տարի, Ազրպէյճանի եւ Հայաստանի անկախութեան 20-րդ տարեդարձներուն առիթով, ականատես եղանք երկու պետութիւններու զօրահանդէսներուն եւ ռազմային կարողութիւններուն:

Երեւանի Հանրապետութեան Հրապարակին վրայ, Հայաստանի վերանկախացման 20-րդ տարեդարձին առիթով տեղի ունեցած զօրահանդէսին ընթացքին ցուցադրուեցան հակաօդային ու հակա-հրթիռային պաշտպանութեան հրթիռային համակարգեր: Զօրահանդէսին ցուցադրուեցան նաեւ Հայաստանի ռազմա-արդիւնաբերական համակարգի արտադրած սարքերը, մասնաւորաբար՝ անօդաչու սարքերը:

Հայաստան առաջին անգամն ըլլալով ցուցադրեց յարձակողական կարգ մը զինատեսակներ, որոնք իրենց հեռահարութեամբ գրեթէ հասանելի են հակառակորդի բոլոր թիրախներուն: Աւելի ճիշդ՝ չկայ նշանակէտ մը, որուն համար անհասանելի ըլլան նշեալ զինատեսակները:

Հայաստանի պաշտպանութեան փոխ-նախարար Դաւիթ Տօնոյեան, ռուսական «Ռիա Նովոստի» լրատու գործակալութեան հարցազրոյց մը տալով յայտնեց, թէ Հայաստանի ռազմա-արդիւնաբերական համալիրը կը պատրաստուի միջազգային շուկայ հանելու իր արտադրած անօդաչու թռչող սարքերը:

«Հայաստանեան անօդաչու օդանաւերը, որոնց կարգին կ'արժէ մասնաւորաբար ընդգծել «Կոռնկ 25»-ը, յաջողութեամբ կը կիրարկուի հետախուզութեան մէջ, տեղեկութիւններ ձեռք բերելու համար, եւ մեր կարծիքով, մեր սարքերը միանգամայն մրցունակ են միջազգային շուկայէն ներս»,— ըսաւ փոխ-նախարարը:

Տօնոյեանի խօսքերով, Հայաստան մտադիր է միջազգային շուկայ հանել ռազմական այլ արտադրութիւն մը եւս: Ըստ Հայաստանի պաշտպանութեան փոխ-նախարարին, ռազմա-արդիւնաբերական համալիրի կարգ մը մշակումներ, ինչպէս «Տ-125»-ը եւ հրետանային հետախուզութեան «Օփթեք էլեկտրական» համակարգերը պիտի ներկայացուին գէնքերու միջազգային շուկային մէջ:

Բարեբախտաբար, Հայաստանի օդային տարածքը կը պաշտպանուի ահարկու «Տ-300» տիպի հրթիռային համակար-

գող, մինչեւ Սեւ Ծովու արեւմտեան ափերը: Հայ ժողովուրդի փառապանծ զաւակներ Արտեմ Միկոյեանի, Արտեմ Եոլեանի, Միքայէլ Պողոսեանի եւ այլոց շնորհակալ առաքելութիւնը եւ գիւտարարական արտադրութիւնները անփոխարինելի են Հայաստանի գոյատեւման համար: Այնպէս որ որեւէ արկածախրնդրութիւն, Ազրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ Հայաստանի թէ Արցախի դէմ, կրնայ շատ սուղ արժեք:

Ատրպէյճանի եւ Հայաստանի անկախութեան 20-ամեակին առիթով, երկու երկիրներուն մէջ տեղի ունեցած զինուած ուժերու զօրահանդէսին մասին, «Հորիզոն»-ի բացառիկին մէջ «Անկախութեան Քսանամեակը եւ Անկէ Ետք» յօդուածով վաստակաւոր լրագրող ընկեր Խաչիկ Տէր Ղուկասեան, հետեւեալ մեկնաբանութիւնը ըրաւ.—

«Քսանամեակի հանդիսութեանց ամենատպաւորիչ երեւոյթներէն մէկը, անկասկած՝ զինուած ուժերու զօրահանդէսն էր: Տպաւորիչ, բայց մանաւանդ՝ կարեւոր էր պատգամին համար: Յունիս 26-ին, Ատրպէյճան արդէն ցուցադրած էր իր ռազմական հզօրութիւնն ու ռազմատենչութիւնը: Այդ օրը, երկրի տիրող՝ նախագահ Ալիեւի ընդառաջ տողանցած էին 6000 բանակայիններ, 400 զինուորական մեքենաներ, 22 ռազմական օդանաւեր, շատ աւելի մեծ թիւով ուղղաթիռներ: Յուցադրուած էին երկրին մէջ արտադրուող 60 զինատեսակներ: Ի տես այս բոլորին, Ալիեւ իր խօսքին մէջ յայտարարած էր, թէ ատրպէյճանական բանակը այսօր պատրաստ է զինուորական որեւէ գործողութեան, ընդհուպ մինչեւ «երկրի տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու» եւ որպէս փաստ՝ բաղդատած երկրի պաշտպանութեան պիւտճէն՝ 3,2 միլիառ, որ կրկնապատիկն է Հայաստանի պետական ամբողջ պիւտճէին: Սեպտեմբեր 21-ին, Հայաստանի մէջ զինուորական տողանցքը հինգերորդն էր անկախութենէն ի վեր: Բաղդատած Ատրպէյճանի զինուորական ցուցադրութեան, Հայաստանի ռազմուժը քանակական իմաստով նուազ էր: Նչենք, օրինակի համար, Հանրապետութեան Հրապարակին վրայ տողանցեցին չորս հազար բանակայիններ, ի դէմս Ատրպէյճանի վեց հազարին: Սակայն, առաջին անգամն ըլլալով՝ Հայաստան ցուցադրեց նաեւ իր յարձակողական գէնքերն ու անոնց որակը, ի մասնաւորի՝ միջին հասողութեան հրթիռները: Պատգամը յստակ է, դէմ յանդիման Ատրպէյճանի սպառնալիքներուն, Հայաստան կարող է որեւէ լուրջ

յառաջխաղացքի համար շատ սուղ գին վճարել տալ ե՛լ Ատրը-պէյճանին, ե՛լ անոր քսակը լեցնողներուն, որոնք գինովցած Կասպեան նաֆթով, կ'անտեսեն Պաքուի կողմէ միջազգային ամէն պայմանագրի խախտումները: Խորքին մէջ, Հայաստանի գինուած ուժերու յարձակողական կարողութիւնը պատերազմի զսպիչ ամէնէն կարեւոր ազդակն է: Առանց անոր պաշտպանական ռազմավարութիւնը շատ ալ նշանակութիւն չունի՝ դէմ յանդիման Ատրպէյճանի գինուածի քանակական եւ թերեւս նաեւ որակական առաւելութեան: Քսանամեակի տողանցքը, հետեւաբար՝ պատասխան-պատգամ մըն էր ուղղուած թշնամիին եւ համայն աշխարհին՝ ցոյց տալու համար որ Հայաստան ոչ միայն տեղի չի տար Ատրպէյճանի սպառնալիքներուն՝ այլ նաեւ պատրաստ է պատերազմի պարագային, տարածաշրջանային անկայունութիւնը անկանխատեսելի մակարդակի հասցնելու իր ունեցած ռազմական միջոցներով»:

Հայաստանի անվտանգութիւնը պաշտպանող մարտավարական 120 քիլոմետր հեռահարութեամբ «TOCHKA» հրթիռային համակարգերը 9K72 (SKUD) մարտական հրթիռներ, որոնք ունին 300 քիլոմետր հեռահարութիւն եւ այլ բազմաթիւ հրթիռային տեսակներէն զատ Հայաստան կ'արտադրէ «Կոռնկ» առօրեայ հետախուզական ինքնաթիռները:

Հայաստանի արտադրած «Կոռնկ»-ը բացառիկ սարք մըն է, որ ստեղծուած է հայ մասնագէտներու կողմէ, որ ներկայիս կ'իրականացնէ հետախուզութիւնը եւ կրակի կառավարման խնդիրները: Ժամանակի ընթացքին կրնայ իրականացնել նաեւ այլ խնդիրներ:

Հայաստանի մասնագէտները ներկայիս կ'իրականացնեն նաեւ ռազմական նոր սարքեր ստեղծելու լայնածաւալ աշխատանք:

Վերոյիշեալ պատերազմական սարքերը կ'օգնեն Հայաստանի եւ Արցախի սահմանները պաշտպանելու մեր հարեւան թշնամիներուն սպառնալիքներու գործարքման միջոցին՝ յենելով Հայաստանի մէջ հաստատուած ռուսական ռազմակայանի օգնութեան եւ հայ գինուորի արիական ոգիին ու հայրենասիրութեան:

Սակայն, հայ ժողովուրդի ինքնութիւնը պաշտպանելու եւ Հայ Դատը արդարօրէն լուծելու ու Արեւմտեան Հայաստանը

ազատագրելու համար պետք ունինք հետեւեալ ծրագիրներու գործադրման.—

Ա.— Հայրենի պետութիւնը Հայաստանի մէջ ապրող հայ գիտնականներու, ինչպէս նաեւ Սփիւռք արտագաղթած կամ Սփիւռքի մէջ ծնած ու մեծցած բոլոր հայ գիտնականները հրաւիրել Հայաստան, անոնց վճարելով Ամերիկա կամ Եւրոպա ապրող գիտնականներուն եկամուտէն աւելին, որպէսզի անոնք ստեղծագործեն գիտական այնպիսի մարտական (յարձակողական կամ պաշտպանողական) նոր գէնքեր, որոնք սարսափ պատճառեն հայ ժողովուրդի թշնամիներուն եւ անոնք ստիպուին հայ ժողովուրդին վերադարձնել հայկական բոլոր հողատարածքները, հատուցանելով Հայոց Ցեղասպանութեան զոհ գացած շուրջ երկու միլիոն նահատակներու արեան գինը:

Բ.— Այս ծրագրին հասնելու համար, յատուկ թոշակ վճարել բոլոր այն ուսանողներուն, որոնք կ'ուզեն հետեւիլ արդիական գիտութիւններու, քաղաքական գիտութիւններու, ռազմական գիտութիւններու, պատմական գիտութիւններու, դիւանագիտական, փաստաբանութեան, լրագրութեան եւ հեռատեսիլային արուեստին, որոնք վերոյիշեալ մասնագիտութիւններու կաճառներէն վկայուելէ ետք, պարտաւորուած ըլլան ծառայել հայկական բանակին, Հայ Դատին եւ դիւանագիտական ասպարէզներուն, որպէսզի գիտութեան զանազան ոլորտներու իրենց մասնագիտութեան շնորհիւ, միջազգային վարկ եւ անուն ստեղծելով, իրագործեն որպէս հզօր ազգ՝ ապրելու մեր իրաւունքը:

Որպէսզի թիւով փոքր, բայց որակով մեծ ժողովուրդ մը ըլլանք, ունկնդրելով մեր 8 հազարամեայ պատմութեան պատգամները:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մահուան փաշած նետին հանդէպ,
Ամէն վահան անօգուտ է,
Արծաթի եւ ոսկու տուած
Շփեղուքիւնն անօգուտ է:
Աշխարհը որքան խոր զննեցի եւ տեսայ, թէ
Բարի գործէն զատ ամէն ինչ անօգուտ է:

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ

*Կեանքը բարօր ապրելու եւ ապրուստը ապահովելու պայ-
քարի ընթացքին, մարդիկ աշխատասիրութեամբ, իմաստու-
թեամբ եւ երբեմն բախտի օգնութեամբ կը յաջողին ոչ միայն
ինքնաբաւ դառնալ, այլ նաեւ՝ հարստանալ:*

*Հարստացողներէն կան մարդիկ, որոնք իրենց հարստութե-
նէն բաժին կը հանեն ազգային հաստատութիւններու եւ չքա-
ւոր ընտանիքներու, որոնք զանազան պատճառներով, յատկա-
պէս արկածներու, հիւանդութեան եւ ծերութեան պատճառնե-
րով, ապրուստի դժուարութիւն կ'ունենան ու ստիպուած կ'ըլ-
լան դիմելու բարեգործական հաստատութիւններու, ազգական-
ներու ու բարեկամներու, օգնութիւն խնդրելով անոնցմէ:*

*Չքաւոր պայմաններու մէջ ապրող եւ տառապող բազմա-
թիւ մարդիկ կան, որոնք համարձակութիւն կ'ունենան օգնու-
թիւն խնդրելու իրենց բարեկամներէն, ազգականներէն եւ բա-
րեգործական հաստատութիւններէն: Սակայն, գոյութիւն ունին
բազմաթիւ ընտանիքներ, որոնք կ'ամչնան, պատուախնդրու-
թիւն կը սեպեն օգնութեան ձեռք երկարել եւ անօրինական մի-
ջոցներ կիրարկելով իրենց ապրուստը հոգալ:*

*Կան նաեւ սուտ աղքատներ, որոնք իրենք զիրենք չքաւոր
ցոյց տալով օգնութիւն կը ստանան ազգային եւ եկեղեցական
զանազան հաստատութիւններէ:*

*Կեանքի վերոյիշեալ պայմաններէն, կացութիւններէն եւ
սկզբունքներէն մեկնելով, կ'ուզենք այսպիսիներուն ուշադ-
րութեան յանձնել հետեւեալը.—*

Եթէ մարդիկ սուտ կը խօսին եւ օգնութիւն կը խնդրեն՝ Աստուած կայ:

Եթէ մարդիկ ճշմարտախօս են եւ օգնութեան կարօտ են, օգնողներ կան: Կեանքի զանազան դժուարութիւններուն հետեւանքով աղքատութեան դուռը հասնողներուն օգնելու համար Մովսէս, Բ. Օրինաց Գիրքի 15-րդ գլուխ 7-11 համարներուն մէջ կը խօսի.—

«Քու Տէր Աստուծոյդ ֆեզի տուած երկրին մէջ, քու ֆաղափներէդ մէկուն մէջ, եթէ եղբայրներէդ մէկը աղքատ ըլլայ, խստասրտութիւն մի՛ ըներ ու աղքատ եղբօրդ ձեռքդ մի՛ գոցեր: Հապա անպատճառ ձեռքդ բաց անոր ու անոր կարօտութեանը բաւելու չափ անոր տո՛ւր: Զգոյշ կեցի՛ր, չըլլայ թէ սրտիդ մէջէն չար խորհուրդ մը անցընես ու եօթներորդ տարին, շնորհելու տարին, մօտ է՝ մտածելով՝ աղքատ եղբօրդ վրայ անգութ չափով նայիս ու անոր փոխ չտաս եւ ան ալ ֆեզի դէմ՝ Տիրոջը աղաղակէ ու դուն մեղքի տէր ըլլաս: Անպատճառ անոր տուր ու անոր տալու ատենդ սիրտդ թող չնեղուի, վասնզի Տէր Աստուծոյդ այս պատճառով քու բոլոր գործերուդ ու ձեռնարկներուդ մէջ ֆեզ պիտի օրհնէ: Որովհետեւ երկրին մէջէն աղքատ պակաս պիտի չըլլայ, անոր համար ֆեզի կը պատուիրեմ ու կ'ըսեմ. 'Քու երկրիդ մէջ եղած աղքատ ու չֆաւոր եղբօրդ ձեռքդ բաց ըլլայ'»:

Մովսէս իր վերոյիշեալ խօսքերով կը շեշտէ չքաւորութեան իրականութիւնը եւ անոր հետ ինչպէս վարուելու կերպը: Ան կը զգուշացնէ չորս տեսակի վտանգներէ.

1.— Կարծրացած սիրտ — ուրանալով աղքատներուն կարիքը:

2.— Գոցուած ձեռք — ազահութիւն ցոյց տալ աղքատին հանդէպ:

3.— Չար խորհուրդներ — երկմտիլ կամ մերժել դրամ փոխ տալ աղքատին, քանի որ պարտքերը ջնջելու տարին մօտ է:

4.— Դժկամութեան հոգի — դժգոհութեամբ տալ եւ փորձել գոհացնել կարիքները իրենց մէջ գտնուող աղքատներուն: Ժողովուրդը ոչ միայն կ'ազդարարուէր իրենց անձնասիրութեան համար, այլ՝ աւելի կարեւորը, անոնք կը քաջալերուէին որ ինքնաբերաբար ըլլան առատաձեռն:

Որպէս հաւատացեալներ, պէտք է մեր ձեռքերն ու սրտերը բանանք կարօտեալներուն հանդէպ:

Առատաձեռնութիւնը կը բխի սրտէն անոնց, որոնք Աստուծոյ շնորհքին փորձառութիւնը ունին եւ ունեցած են:

Սուտ խօսողները, ինքզինքնին չքաւոր ցոյց տուողները, ինչպէս նաեւ աղքատներուն երկարած ձեռքը անտեսողները Աստուծոյ դատաստանին օրը ո՞ւր պիտի փախչին եւ իրենք զիրենք պիտի արդարացնեն:

Մտածած էք այս մասին:



ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ԿԵԱՆՔԸ ՀԱՅՈՒՆ

Թիմուր Պէն Թարակէյ Պարլաս, տարբեր անուններով՝ Թիմուր Լենկ, Լենկ Թիմուր, Ամիր Թիմուր, Աքսաք Թիմուր, Թամէր Լան, Թամպուրլէն, 14-րդ դարաշրջանի աշխարհակալը, ծնած է 1336-ին, Թրանսաքսիանա, Քէշի մօտ, Իւզպէքիստանի Սամարղանտ քաղաքէն 50 մղոն դէպի հարաւ:

Լենկ Թիմուր կը սերէր մոնկոլ աշխարհակալ ձէնկիզ Խանէն: Անոր հայրը՝ Թարակէյ, եղած է Պարլաս ցեղախումբի պետը: Ան կրօնքով իսլամ էր: Որպէս արկածախնդիր-բռնակալ, ան հիմնադիրը եղած է Թիմուրիտ կայսրութեան (1370-1405):

Լենկ Թիմուր իր հսկայ բանակով եւ սուրով հիմնեց իր կայսրութիւնը, գրաւելով Սուրիան, Իրաքը, Քուէյթը, Իրանը, Արեւելեան Թուրքիան եւ իր երկաթեայ տիրապետութեան տակ առնելով Ղազախստանը, Աֆղանիստանը, Թուրքմէնիստանը, Իւզպէքիստանը, Քրկիզիստանը, Փաքիստանը եւ Հնդկաստանը, հասնելով մինչեւ Չինաստանի Քաշքար քաղաքը եւ Ռուսաստանի մայրաքաղաք՝ Մոսկուայի դռները:

Ան որպէս հերոս ճանչցուած է Միջին Ասիոյ ժողովուրդներէն եւ մինչեւ այսօր Արեւելեան Ասիոյ ժողովուրդները իրենց գաւակներուն անունները կը կոչեն Թէյմուր՝ աշխարհակալ:

Լենկ Թիմուր, իր աշխարհակալական պատերազմներու ընթացքին, իրեն հաւատարիմ մոնկոլ հազարաւոր ձիաւորներով գրաւած է վերոյիշեալ երկիրները, եւ, որպէս անգութ եւ ջարդարար անձ, սարսափ տարածած էր գրաւեալ երկիրներու ժողովուրդներուն մէջ:

Սուրիոյ մէջ մինչեւ այսօր կը պատմուի, որ Լենկ Թիմուրի բանակները երբ կը գրաւեն Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսը, Լենկ Թիմուր հրաման կու տայ իր բանակներուն, որ ազատօրէն կողոպտեն քաղաքի հարստութիւնները եւ բռնաբարեն կիները: Այդ իմաստով, դամասկոսցի բնակչութեան մէջ գտնուող անգութ եւ վայրենի անձերուն համար կ'ըսեն Թիմուր Լենկի ընկեցիկներ (Պանատիկ Թիմուր Լենկ):

Այս վայրագ եւ անգութ աշխարհակալը, Իրանը գրաւելէ ետք, իր ահաւոր բանակով կը մտնէ Արեւելեան Հայաստանի սահմաններէն ներս, իր ճամբուն ընթացքին ջարդելով, սպաննելով իր ուժերուն դիմադրողները եւ կողոպտելով բնակչու-

Թիւնը եւ կը հասնի Հայաստանի Իջեւանի շրջանին մէջ գտնու-
ւող Գօշավանքը: Լենկ Թիմուր կը գրաւէ վանքը եւ վանքի շքե-
ղութիւնը տեսնելով՝ նախանձով լեցուած կը հրամայէ անմիջա-
պէս քանդել վանքը: Ծառաները գործի անցնելով շուտով կը
համոզուին, որ վանքը շատ ամուր շինուած է եւ անկարելի է
քանդել, ուստի վանքին մէջ մեծ քանակութեամբ փայտ կը լե-
ցընեն եւ կ'այրեն: Հրդեհէն վանքը չի վնասուիր, այլ միայն
պատերը կը սեւնան:

Գօշավանքի (Նոր Գետիք) շրջափակին մէջ կը գտնուէին Ս.
Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Աստուածածին եկեղեցիները, որոնք
կառուցուած են 12-13-րդ դարերուն՝ սքանչելի ճարտարապե-
տութեամբ եւ վեհութեամբ:

Կը յիշատակուի, որ վանքին մէջ գոյութիւն ունեցած են
վարժարան, համալսարան եւ ճեմարան, ուր պահուած եւ ստեղ-
ծուած են բազմաթիւ ձեռագրեր, կրթուած եւ գործած են հայ
մշակոյթի նշանաւոր գործիչներ, Վանական Վարդապետը,
Կիրակոս Գանձակեցիին եւ ուրիշներ: Վանքը ունեցած է բազ-
մաթիւ կալուածներ, գիւղեր եւ վարելահողեր: Վանքային այս
համալիրը հիմնադրուած է Մխիթար Գօշի ջանքերով՝ 1237-
1241 թուականներուն:

Լենկ Թիմուր գրաւելով Գօշավանքը, վանքի կրօնաւորնե-
րէն եւ գիւղացիներէն կը պահանջէ պահուած ոսկիները, վանքի
հարստութիւնը: Կատարուող տանջանքները եւ չարչարանք-
ները որեւէ արդիւնք չեն տար, ոչ ոք չէր խոստովաներ եւ ըսեր
վանքի հարստութիւններուն տեղը:

Լենկ Թիմուրի խորհրդականներէն մէկը, որ երեւի լաւ գի-
տէր հայ մարդոց ուժն ու թուրութիւնը, խորհուրդ կու տայ զօ-
րավարին.

— Սիրելի՛ գօրավար, եթէ կ'ուզես յաջողութեան հասնիլ,
այրէ՛ վանքի գիրքերը եւ պիտի տեսնես՝ ինչպէս անոնց լեզու-
ները պիտի բացուին:

Հաւաքեցին, իրարու վրայ դիգեցին վանքի ձեռագիր մատ-
եանները, եւ այն է, շուտով կրակի պիտի տային, ժողովուրդը կը
փակէ կրակի ճանապարհը.

— Մի՛ այրէք, կ'ըսենք:

Եւ ըսին ոսկիներու եւ հարստութեան պահուած տեղը:

Ապշած է ազահ գօրավարը:

Բերին, գիրքերուն մօտ դիզեցին ոսկի, թանկարժէք քարեր եւ առարկաներ:

Լենկ Թիմուր ձեռքը առաւ ձեռագիր գիրք մը, թերթեց, նրկարները գեղեցիկ էին, սակայն փսոս, մագաղաթին վրայէն ոսկին անհնար էր հանել:

— Կարգա՛, ի՞նչ է գրուած, — Լենկ Թիմուր գիրքը մեկնեց քովը կեցած գիւղացիին:

Մարդը վերցուց մատեանը, զգոյշ, ինչպէս քնացող երեխայի մը, թերթեց, թերթեց...:

— Կարգալ չեմ գիտեր, գօրավար, — ըսաւ գիւղացին մեղաւորութեամբ:

Լենկ Թիմուր գիրքը խլեց անոր ձեռքէն, տուաւ մէկ ուրիշին, յետոյ երիտասարդին:

— Մենք կարգալ չենք գիտեր, գօրավար, վանականներուն ըսէ...:

— Մեր պատմութիւնն է, գօրավար, — տեղէն ոտքի կանգնելով ըսաւ վանահայրը: — Մեր պատմութիւնն է եւ մեր աղօթքը:

Լենկ Թիմուր նայեցաւ հաւաքուածներուն, նայեցաւ դիզուած գիրքերուն, յետոյ՝ ոսկիներուն, թանկարժէք քարերու կոյտերուն, եւ, կնճռտեցաւ ճակատը:

Հասկցա՞ւ արդեօք Լենկ Թիմուրը, թէ ո՞րն էր իրական հարստութիւնը:

Փրկուած այդ գիրքերէն շատերը ներկայիս կը գտնուին Հայաստանի Մատենադարանին մէջ, իսկ ո՞ւր են Լենկ Թիմուրի յափշտակած ոսկիները եւ թանկագին քարերը, հայ ժողովուրդէն յափշտակուած հարստութիւնները...:

Մեր նախահայրերը հայ գիրքերը նախընտրեցին ոսկիէն եւ թանկագին քարերէն: Սակայն, 1915-ի Մեծ Եղեռնի շրջանին, թուրքերու կողմէ կազմակերպուած հայ ժողովուրդին հանդէպ կատարուած Ցեղասպանութեան հետեւանքով, հազարամեայ մեր վանքերն ու եկեղեցիներէ կողոպտուեցան եւ մեր մշակութային եւ գրական հարստութիւնները յափշտակուեցան թուրքերու եւ քիւրտերու կողմէ:

Ամենայն հայոց բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեան, հայ գիրքին հանդէպ հայ մարդուն վերաբերումը կը պատկերացնէ սա գողտրիկ բառերով.—

Թէպէտեւ բախտն մեզ շատ հարուածեց,
Երկար դարերով, ահեղ հարուածով.

Թեպէտ էսպէս ցրուեց, տարածեց,
Ջրգեց հողէ-հող, փըռեց ծովէ-ծով:

Վկայ է սակայն բովանդակ երկիր,
Որ մենք կարեվէր ապրո՛ւմ ենք կրկին.
Եւ ուր հասնում է հայ գիրքն ու գիր,
Կենդանի է դեռ հայութեան ոգին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Երանաշնորհ Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Բ. (յետագային Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս), Անթրիխասի Մայրավանքի շրջափակին մէջ կազմակերպուած 1985-ին՝ ութերորդ Հայ Գիրքի Ցուցահանդէսին առթիւ կը գրէ:—

«Ցեղասպանութենէն ետք հայութեան վերապրումի շքեղ երեւոյթը շատ բան կը պարտի հայ գիրքին: Անապատի աւազին վրայ հայ մօր կմախացած ու դողդողացող մատերով գրուած ԱԲԳ-ի տեսիլքին խորհուրդէն լուսարձակուած իմաստը հայ գիրքին՝ կ'ուզեմ որ դառնայ մեր համայնական մօր՝ մեր մայր եկեղեցիին եւ մայրենի լեզուին կաթը մեր կեանքի առողջ սնուցումին եւ անումին համար՝ ի խնդիր մեր յաղթանակին, երբ վերաբնութեան ոգին այս տարի նորաթուխ եւ յորդառատ ժայթֆով կը շատրուանուի մեր կեանքի աւազանին մէջ, կ'ուզեմ որ հայ գիրքը ստանայ նոր փայլ եւ տայ նոր փայլ յատկապէս մեր սփիւռքեան տժգունող եւ լուսահատող կեանքին: Եթէ աւազներուն մէջ իր կեանքին վերջին շունչն աւանդող հայ մայրը իր յոյսին սլաքը ուղղեց հայ գիրքին, կը հաւատամ, որ Ս. Մեսրոպ, ծնող ազգին բնագոյական իմաստութիւնն էր, որ շարժում տուաւ իր անշարժացող մատներուն: Եւ այդ իմաստութիւնը պարզ է, բիւրե՛ղ՝ ցերեկուան լոյսին պէս եւ երկնքի կապոյտին նման ջինջ ու վնիտ: Առանց հայ գիրքին կը մեռնի հայը այսօր, ինչպէս կրնար մեռնիլ Ե. դարուն, եթէ Մեսրոպ իր «մաքուր արգանդ»ին մէջ երկնած չըլլար, գիրը որպէս ազգային ստեղծարար մեր ուժին բանալի եւ տագնապակած ու տառապահար մեր դարաւոր կեանքին վրայ՝ ի սպաս մեր հայկեան ինքնութեան եւ անկապտելի անկախութեան»:

Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմէ հայերէն գիրերու ստեղծումէն եւ հայերէն գիրերով գրուած գիրքերու հայ թարգմանիչներու եւ հայ հեղինակներու կողմէ հրատարակուելէ ետք, մինչեւ մեր

օրերը, հայ ժողովուրդը գոյատևեց, ոսկի է եւ թանկագին քարերէ աւելի գիտնալով արժէքը հայ գիրքին եւ հայ գրականութեան, իսկ ճենկիզ Խանի, Լենկ Թիմուրի նման աշխարհակալներ պատմութեան բեմէն անժառանգ կորսուեցան:

Պատմութեան բեմէն ջնջուեցան նաեւ բազմաթիւ հզօր ազգեր, որոնք գիրքի, գրականութեան եւ մշակոյթի արժէքը չը գիտցան:

Երկրի մը ուժը եւ կարողականութիւնը չի գնահատուիր իր բնակչութեան եւ բանականերուն թիւով: Առանց գիրքի եւ գրականութեան նման ազգեր չեն կրնար գոյատևել, ինչպէս որ չգոյատևեցին բազմաթիւ աշխարհակալ ազգեր:

Սիրենք, գուրգուրանք եւ արժեւորենք հայ գիրքը ոսկի է եւ նիւթական հարստութիւններէ աւելի, որովհետեւ նիւթական հարստութիւններ կ'ոչնչանան, կը հալին, կը կորսուին, սակայն հայ գիրքը յաւիտենական արժէք կը ներկայացնէ եւ կեանք կու տայ հայուն:



ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ՌՈՊԷՐ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ

*Մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ մշակոյթ, մէկ գրականու-
թիւն:*

*Վերոնշեալ բաղձալի լօզունգներուն վրայ ես կ'ուզեմ ա-
ւելցնել նաեւ՝ մէկ ուղղագրութիւն, որպէսզի բաժանումները
վերջ գտնեն եւ հայ ազգային միասնականութիւնը կատարեալ
ըլլայ, մանաւանդ Հայաստանի վերանկախացման պատմական
լոյսին տակ:*

*Ինչպէս ծանօթ է, 1922 Մարտ 4-ին, Հայաստանի Խորհրդ-
րային կառավարութեան հրամանագրով Հայաստանը անցաւ
Աբեղեանական նոր ուղղագրութեան, որուն հետեւանքով,
1500-է աւելի տարիներէ ի վեր գործածուող Մեսրոպեան ուղ-
ղագրութեան գործածութիւնը արգիլուեցաւ, հայ գրականու-
թեան զարգացման եւ տարածման արհեստական խաղը պատ մը
ստեղծելով հայ ժողովուրդի երկու հատուածներուն միջեւ:*

*Այդ հրամանագրին դէմ բողոքեցին Յովհաննէս Թուման-
եանը, Ալ. Շիրվանզադէն, Ն. Ակիւնեանը, Ա. Մէլէն, Ե. Օտեանը,
Ն. Մառը, Ն. Աղոնցը, Ա. Իսահակեանը, Հր. Աճառեանը, Յովհ.
Յովհաննէսեանը, Վահան Թէքէեանը եւ բազմաթիւ այլ գրա-
գէտներ եւ մտաւորականներ:*

*Յատկանշական է այն փաստը, որ ուղղագրական հրամա-
նագրէն երկու տարի անց, տեսնելով որ հայոց այբուբենը լա-
տինականով փոխարինելու իրենց ջանքերը արդիւնք չտուին,
լուսժողովոմ Պ. Մակինցեանը գրած է.— «Եթէ հայերէնի ուղղագ-
րութեան ռեֆորմին վիճակուած է սառել-մնալ կէս ճանապար-
հին, ապա այս դէպքում աւելի լաւ կը լինէր առանց այլեւայլի
դառնալ էլի հին ուղղագրութեան: Մենք կատարելապէս հա-
մոզուեցինք, որ ընդունուած ռեֆորմը մեզ անչատեց արտա-
սահմանի հայկական տարրերից: Հէնց այդ մի հանգամանքը
այնքան ծանրակշիռ է, որ հարկադրում է նոր ուղղագրութիւնը
վերացնել մէջտեղից»:*

Նոր ուղղագրութեան դէմ այնքան շատ էին չղաղրող բողոքները եւ ահագանգները, որ Խորհրդային Հայաստանի կառավարութեան յատուկ որոշումով լուսժողովումը, 1926-ին, ըստեղծեց ուղղագրական յանձնաժողով՝ քննելու դասական ուղղագրութեան որոշ տարրեր վերականգնելու հարցը: Յանձնաժողովը մէկուկէս տարի գործելէ ետք, յանձնաժողովի անդամներ Յ. Մանանդեան, Ստ. Մալխասեան, Լէօ, Գ. Ղափանցեան եւ այլ գրողներ եւ մասնագէտներ անընդունելի համարեցին նոր ուղղագրութիւնը: Անոնք այն կարծիքին էին, որ նոր ուղղագրութիւնը խաթարեց հայերէն հազարաւոր բառերու դարաւոր տեսքը: Մեր գրաւոր լեզուն ենթարկեց տասնեակ համանուններու (սէր-սեր, գէտ-գետ, յարկ-հարկ, յաջող-հաջող, եւայլն): Աղճատեց շատ բառերու ճիշդ արտայայտութիւնը, մեզ զրկեց հազարաւոր բառերու ծագման եւ զարգացման հետեւելու դիւրութենէն, պատճառ դարձաւ ուղղագրական սխալներու առատացման, լեզուն զրկեց միասնական եւ կուռ ուղղագրութենէն, աւելի մեծցնելով հայոց հին եւ նոր լեզուներու միջեւ եղած անըրպետը, մերձեցնելու փոխարէն իրարմէ՛ աւելի հեռացուց մեր գրական լեզուի զոյգ երակները:

Յանձնաժողովի եզրակացութիւններու հիման վրայ յիշեալ խաթարումները մասամբ մեղմելու նպատակով, 1940 թուին դասական ուղղագրութիւնը մասնակի վերականգնելու առաջին քայլը առնուեցաւ: Վերականգնուեցան «է-ե», «օ-ո»-ի ուղղագրութեան դասական կանոններու մէկ մասը, այբուբեն վերադարձուեցան «է» եւ «օ» նշանագրերը: 1940-ի նախագիծին գոյութիւն ունէր նաեւ «իւ»-ի վերականգնումը, սակայն այդ ձգուեցաւ յետագային:

Ներկայիս, դժբախտաբար, Հայաստանի մէջ տպուած դասագիրքեր, վէպեր, պատմուածքներ, բանաստեղծութիւններ, մասնագիտական, արհեստագիտական եւ այլ գիրքեր Աբեղեանական ուղղագրութեան պատճառով անհասկնալի, մանաւանդ դժուար ընթեռնելի դարձած են Սփիւռքի հայ ընթերցողներուն եւ ընդհանրապէս հայ աշակերտներուն, որոնք Սփիւռքի հայկական դպրոցներուն մէջ սորված ուղղագրութիւնը որդեգրած ըլլալով, դիւրութեամբ կը կարդան եւ կը հասկնան 1500 տարիէ ի վեր գրուած եւ հրատարակուած հայերէն մագաղաթները եւ գիրքերը, սակայն չեն կրնար դիւրութեամբ կարդալ եւ հասկընալ Աբեղեանական ուղղագրութեամբ տպուած գիրքերը, միեւ-

նոյն ատեն վախճալով, որ կարողալ փորձելու պարագային, իրենց սորված եւ գիտցած ուղղագրութիւնը կը շփոթեն, չկարենալով զատորոշել իրենց գիտցած ուղղագրութիւնը Աբեղեանականէն, ձեւով մը դժուարացնելով իրենց ուղղագրական կարողութիւնը:

Հոս կ'ուզեմ արտագրել վաստակաւոր գրող Անդրանիկ Սարեանի «Յիշատակի երկու խօսք Լեւոն Միրիջանեանի մասին» յօդուածէն («Նոր Կեանք», 2005).— «Ես չգիտեմ ինչն^օ բանաստեղծ Լեւոն Միրիջանեանին նմանեցրել եմ Մանուկ Աբեղեանի որդի՝ Մուշեղ Աբեղեանին, որը ահաւոր պատերազմին որպէս զինուոր, մահու արհաւիրքներից անցնելով, գերութեան վիճակագրեց նախ ամերիկեան բանակում, ապա Շքուկարթի գերիների նամբարում: Այնտեղ էլ ամուսնացաւ Տոֆ. Արտաշէս Աբեղեանի Ռուզան աղջկան հետ, ապա սկսեց գրել մի քանի թատերգութիւններ՝ Մեսրոպեան ուղղագրութեամբ: Ժամանակի ընթացքում տեղափոխուելով Լոս Անճելըս, ընտանիքով, իր գործերից մէկը՝ «Համբերդի Ծաղրածուն» տպագրել տուեց Մեսրոպեան ուղղագրութեամբ, երկրորդը՝ Երեւանում, «Խաւարման Գիշեր»ը՝ դարձեալ Մեսրոպեան ուղղագրութեամբ, 1996-ին, որպէս յիշատակի ձօն իր Շուշանիկ մօրը եւ հօրը՝ Մանուկ Աբեղեանին:

«Երբ հարց եմ տալիս նրան, թէ զաւակը նոր ուղղագրութեան հիմնադիր Մանուկ Աբեղեանին, արդեօ՞ք վիրաւորանք չի համարում հօր յիշատակին՝ իր գործերը հին ուղղագրութեամբ տպել տալով. փորձանքներ, գերութիւն եւ տարագրութեան դառն օրեր ապրած խօսուն-գրող մտաւորականի պատասխանը լինում է.— Հայրս խորթ ու անյարիւր ժամանակների խարանը կրելով պարտադրանք ունեցաւ թէ՛ հպատակութիւն ցոյց տալ եւ թէ կամակատարի դերում մտնել այն հաւատով, թէ եղածը ուշ կամ կանուխ ճշդել կը տայ հայ ժողովուրդը»:

Հայերէն լեզուի երկփեղկուած ուղղագրութիւնը հետեւանք է խորհրդային ազգերու ձուլումը հետապնդող վարչակարգին: Այդ մասին փաստացիօրէն կը գրէ Անդրանիկ Սարեանը.—

«Այո՛, լեզուական երկու ուղղագրական գործընթացը իրապէս երկու ազգութեան վերածեց մեր ժողովուրդին, ոչ թէ հայրենիքում, որտեղ ճիշդ է հրապարակային ինչ-որ հակամարտութիւն է տեղի ունենում: Քայց դա պարզապէս անուրանալի

երեւոյթ է դուրսի աշխարհում: Առաւելաբար այստեղ, Լոս Ան-
ճելըսի խոշոր հայ համայնքում, լեզուական բաժանումը եւ
խտրականութիւնը, բացէ ի բաց առկայ է մեզանում Հայաստա-
նէն գաղթած հսկայ զանգուածների եւ արտասահմանեան բա-
զում գաղթօճախներից այստեղ տուն ու կայք եւ ապաստան գը-
տած մի ուրիշ հարիւր հազարաւոր հայերի միջեւ:

Անշատումը խորն է, երկու զանգուածների միջեւ թէ՛ լեզ-
ուական եւ թէ տեղացիական պայմանների բերումով: Իրար
մերուելու գաղափարը ցանկութիւն է եւ իմ կարծիքով՝ ցանկու-
թիւն էլ կը մնայ, հակառակ այն տեւական բարձրացող կարգա-
խօսին՝ «Մէկ ազգ ենք, մէկ ժողովուրդ, մէկ եկեղեցի ու մէկ
հայրենիք»:

Ահռելի մի վիճակ է տիրում մեզանում երկնիւղ ուղղագ-
րական համակարգում: Արեղեանականի հետեւորդը (միշտ
բացառութիւնները յարգած) չեն կարողում Մեսրոպեանական
գիրք ու մամուլը, Մեսրոպեանականը՝ համարեա երբե՛ք Արեղ-
եանական գիր ու գրականութիւնը: Այսպիսով ճիշդ է Միրի-
ջանեանի բնորոշումը՝ թէ լեզուականօրէն մենք վաղուց ենք
երկու ազգութիւնների վերածուել»:

*2004 թուականին Երեւանի մէջ գումարուած Հայաստանի
Գրողներու Միութեան Համահայկական ժողովին մասնակցելու
բախտն ու պատիւը ունեցայ: Հայ գրողներու խումբը Օշական
գիւղի եկեղեցին թաղուած Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին
այցելութիւն տալէ ետք, ուղուեցաւ Ս. Էջմիածին: Այս առթիւ,
գրողներու խումբին մաս կազմող բանաստեղծ Լեւոն Միրի-
ջանեան Երեքշաբթի, 31 Օգոստոս 2004, Փարիզի «Յառաջ»
թերթին մէջ կը գրէ.՝*

«Քրիստոսի նման, Օշականի Սուրբն էլ իրաւունք ունի ա-
սելու.՝ «Եկայք առ իս, ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք
եւ ես հանգուցից գճեմ»:

Ահա եկել են նրանք՝ գրի, գրչութեան եւ հայ խօսքի վաս-
տակած ու բեռնաւոր մշակներ: Նրանք հերթով խոնարհուում են
Մեծ Ուսուցչի շիրիմին, երկիւղածօրէն համբուրում սրբալոյս
տապանաբարը եւ մէկական մեխակ թողնելով ինկառնոս մար-
մարին, դիմում դուրս՝ նոր ուժ ու աւիւն առած, նորովի հայա-
ցած:

Մէկ ժամ անց, խումբը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում է՝ Վե-
հարանում, Գարեգին Բ. Կաթողիկոսը բարի գալուստ է մաղ-

թում գրողների համաժողովի բոլոր մասնակիցներին, օրհնութեան խօսքեր ասում: Գանատարնակ բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանի հարցմանն ի պատասխան, Կաթողիկոսն անդրադառնում է նաեւ դասական ուղղագրութեան վերականգնման խնդրին: Նա ասում է, որ Ս. Էջմիածինը միշտ հաւատարիմ է Մեսրոպեան ուղղագրութեանը եւ ինքը, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, բնականաբար ուրախ կը լինի Մեսրոպեանի վերականգնման համար: Իր խօսքը աւելի ոգեւորում է բոլոր նրանց, ովքեր Մեսրոպեանի վերականգնման կողմնակից եւ ջատագով են եւ լուրջ յոյսեր են կապում գրողների ընթացիկ համաժողովի հետ:

Համաժողովն սկսում է մի քանի ժամ անց, Գրողների Տանը:

Ի հարկէ, պաշտօնական-արարողական խօսքերում ու ելույթներում ուղղագրութեան մասին որեւէ խօսք սպասելը միամըտութիւն է, մնում է յոյս կապել Հոթոյեանական ելույթների հետ, իսկ այդպիսի ելույթներ, թում էր պիտի լինեն:

Պէտք է ասել, որ մենք՝ հայաստանաբնակ Մեսրոպեանականներս, Սփիւռքի մեր հայրենակիցների նման, նոյնպէս «սքափ ենք նայում իրականութեանը» եւ, Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգնելու դէպքում, ոչ մի տագնապալի «մօտալուտ հետեւանքներ» չենք տեսնում. ընդհակառակը, մեր պատկերացմամբ, Մեսրոպեան ուղղագրութիւնը կը վերականգնուի Հայաստանի նախագահի հրամանագրով»:

Իբրեւ զասական ուղղագրութիւնը վերականգնելու 1940-ի որոշման յաջորդող քայլ, Ռաֆայէլ Իշխանեան, 1986-ին Երեւանի մէջ հրատարակուած իր «Մայրենին» գրքոյկին մէջ կ'առաջարկէ կատարել արդէ ուղղագրութեան հետեւեալ անհրաժեշտ փոփոխութիւնները.—

1.- *Վերականգնել «իւ»-ի գրութիւնը եւ «յու»-ի փոխարէն ամէնուրեք գրել «իւ», ինչպէս՝ ձիւն, իւրային, իւրացնել, եւայլն:*

2.- *Վերականգնել բառավերջի «է»-ն եւ բառավերջում «է» լսելիս, ամէնուրեք գրել «է», ինչպէս՝ որեւէ, որեւիցէ, նախօրէ, հիւլէ, եւայլն:*

3.- *Վերականգնել բառամէջի «ոյ»-ը («ույ»-ի փոխարէն) եւ գրել՝ գոյն, լոյս, բոյս, բոյր, եւայլն:*

4.- *Վերականգնել «եա»-ի գրութիւնը, եւ «յա»-ի փոխա-*

րէն ամէնուրեք գրել «եա», ինչպէս մատեան, Թումանեան, եարուս, ամեակ, եւայլն:

Ուստի, Պրն. Նախագահ, սոյն բաց նամակով ձեզի կը դիմեմ, որպէսզի Ձեր բարձր հեղինակութիւնը ի գործ դնելով, մէկ հրամանագրով վերադարձնէք Մեսրոպեան ուղղագրութիւնը, մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ մշակոյթ, մէկ գրականութիւն եւ մէկ ուղղագրութիւն ստեղծելու համար, որպէս գրական լեզուի հիմքը, օտարացման վտանգին դէմ միասնական ուժերով պայքարելու, փոխանակ իրարու հակադիր երկու մասի բաժնելու հայ ժողովուրդը:

Պրն. Նախագահ, ծանօթ ըլլալով Ձեր ազգասիրական եւ հայրենասիրական կեանքին եւ գործունէութեան, Արցախեան ազատագրական պատերազմին ձեր հերոսական խիզախումներուն, որպէս ղեկավար ձեր բաժինը բերելով Արցախի անկախութեան, ապա, որպէս Հայաստանի վարչապետ, ապա նախագահ, որպէս պետական լուրջ անձնաւորութիւն, վերջին տասը տարիներու ընթացքին փաստեցիք ձեր ղիւանագիտական եւ հայրենասիրական կարողութիւնները, փառք ու պատիւ ապահովելով թշնամիներով շրջապատուած Հայաստանի եւ Արցախի, բանակները օժտելով արդիական զէնքերով եւ պաշտպանողական սարքերով եւ բարձրացնելով ժողովուրդի կենսամակարդակը:

Պրն. Նախագահ, 2002 թուականին, Հայաստանի Հայ Գրողներու Առաջին Համաժողովին որպէս մասնակից, գրողներու պատուիրակութեան մը հետ յարգանքի այցելութիւն մը տուինք ձեզի, նախագահական պալատին մէջ:

Ներկայ գրողները կարգով իրենց հայրենասիրական սրտի խօսքերը արտասանեցին, ես ալ իմ կարգին խօսք առի եւ իմ սրտի խօսքս արտասանելէ ետք ձեզի ըսի.— «Պրն. Նախագահ, Ֆրանսայի կայսեր՝ Նափոլէոն Պոնափարթին հարցուցած են, թէ որմէ՞ կը վախնաս, կայսրը պատասխանած է՝ «Ես գօրավարներէ, պետական մարդոցմէ, գիտնականներէ, կրօնաւորներէ չեմ վախնար, կը վախնամ միայն գրողներէ եւ լրագրողներէ»:

Հիմա, Պրն. նախագահ, — ըսի, — դուք որմէ՞ կը վախնաք:

Պատասխանեցիք.— Ես մարդէ չեմ վախնար»:

12 Փետրուար 2008-ին, որպէս նախագահ ձեր պաշտօնավարութիւնը իր լրումին կը հասնի: Դուք որ մարդէ չէք վախնար (այդ փաստած էք), որպէսզի հայոց պատմութեան մէջ յիշուիք որպէս իրաւ քաջ, հայրենասէր եւ ազգասէր անձնաւորու-

Թիւն, կը խնդրեմ ձեզմէ, որ մէկ հրամանագրով ջնջէք համայնավար վարչակարգի վերջին մնացորդը, իրականացնելով «Մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ մշակոյթ եւ մէկ գրականութիւն» հայակերտ կարգախօսը:

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ



ԿՐԿԻՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

4 Մարտ 1922-ին, Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները հրամանագրով մը գործադրութենէ դադրեցուցին մեր դարաւոր Մեսրոպեան ուղղագրութիւնը եւ պարտադրեցին իրենց գաղափարական տեսակէտներուն համապատասխանող, յառաջիկային «Աբեղեանական» կոչուած ուղղագրութիւնը: Աշխարհաբարի գրական երկու ճիւղաւորումները՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն, ունեցան նաեւ ուղղագրական ճիւղաւորում՝ Մեսրոպեան ու Աբեղեանական, կամ՝ աւելի ուշ՝ Հայաստանեան, ինչ որ Հայաստանի ու Սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող բաժանումը բոլորովին խորացուց:

Տարիներ շարունակ Աբեղեանական այլանդակ ուղղագրութեան մասին եղած քննադատութիւնները կը շարունակուին: Երբ 1940-ի ձմրան դարձեալ վերատեսութեան կ'ենթարկուի արտառոց եւ ձախողած Աբեղեանական ուղղագրութիւնը, Հրաչեայ Աճառեանի, Ստեփան Մալխասեանի նման հեղինակութիւններ կողմնակից կ'ըլլան Մեսրոպեան ուղղագրութեան վերականգնման: Աբեղեանի ու Աճառեանի աշակերտած լեզուաբան Փրոֆ. Գուրգէն (Գրիգորեան) Սեւակ կը ներկայացնէ «միջին եզր» բարեփոխումներ Աբեղեանական ուղղագրութեան, ինչ որ լուստողկոմի Օգոստոս 23-ի որոշումով կը դրուի կիրարկման, որ մասամբ կը մեղմէ տարբերութիւնը, բայց երբեք չ'ըլլար վերջնական լուծում, չ'ապահովեր ազգային միասնականութիւնը:

Մեր հայրենի «պսակաւորները» Մեսրոպեան ուղղագրու-

Թեան վերականգնման արգելք հանդիսանալու համար կը դիմեն խեղաթիւրումներու, «Մեսրոպեան ուղղագրութիւնը գրաբարի ուղղագրութիւն է եւ գրաբարն ալ մեր օրերու խօսակցական լեզունն է»», «Մեսրոպեան ուղղագրութիւնը աւելի դժուարութիւններ ունի, ժողովուրդը անգրագէտ պիտի մնայ», «Մեսրոպեան ուղղագրութիւնը արեւմտահայերէնի լեզունն է» պատճառաբանելով:

Տաղանդաւոր եւ շնորհալի գրագէտ, Պոլսոյ «Մարմարա» օրաթերթի վաստակաւոր խմբագրապետ Պր. Ռոպէր Հատտէճեան, Երեւանի մէջ «Երկիր Մետրա»-ի թղթակից Արթիւր Կիրակոսեանի հետ հարցազրոյցին, Սեպտեմբեր 2011-ին կ'ըսէ.— «Արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը երկուքն ալ գեղեցիկ են, երկուքն ալ պարտաւոր են պահպանել եւ զարգացնել: Բայց, ուղղագրութիւնը պէտք է ըլլայ մէկ, հայ ժողովուրդը անպայման պէտք է վերադառնայ դասական ուղղագրութեան»:

Իսկ մեծանուն գրագէտ Վազգէն Շուշանեան, Մեսրոպ Արք. Աշճեանի կողմէ Երեւանի մէջ հրատարակուած իր օրագիրներու գիրքին մէջ, էջ 151, հետեւեալը կը գրէ.—

«Պատիկ լուր մը, որ մեծ հաճոյք կը պատճառէ ինձ, զուարթութեամբ տուն կը վերադառնամ, երբեմն ցատկելով ինքս ինձ վրայ, երջանկանալով: Ամերիկայի «Հայրենիք»էն է լուրը. Երեւանի մէջ բարեփոխած են ուղղագրութիւնը, վերահաստատած են գրեթէ բոլոր ձայնաւորներու նախկին արժէքները:

Հայոց լեզու, որքան կը սիրեմ քեզ: Ոչ մէկ աղջիկ երկրի վրայ կրնայ պարծենալ, թէ այնքան խանդաղատանք, այդքան գորով, այդքան աղապատանք ստացեր է ինձմէ: Հաւատարմութիւնը, որ կը գգամ քեզի հանդէպ աւելի զօրաւոր է, քան այս եղկելի կեանքը: Կ'ուզէի քեզ սիրել ու սորվիլ մինչեւ վերջին վայրկեանը, քո յետին շեշտերդ եւ քո յետին բառերդ, քո երաժշտութիւնդ ու քո գծած նամբադ՝ պատմութեան մէջ, դուն որ մեր աղօթքն ես ու մեր հաճոյքը, հայոց լեզու, կը սիրեմ քեզ»:

17 Մայիս 1922-ին, Յովհաննէս Թումանեան Հայաստանի լուսժողովուն գրած իր բողոքային նամակին մէջ կ'ըսէ.—

«Ես որպէս հայ գրող եւ Գրողների Միութեան նախագահը, գալիս եմ յայտնելու իմ զարմանքը եւ բողոքը էն վարմունքի դէմ, որ ունեցեր է Հայաստանի լուսժողովուրդը եւ կարեւոր խնդրում: Պր. Մ. Արեղեանը մի առաջարկ է արել ու դրել հրա-

պարակ: Շատ լաւ, բայց Հայաստանի լուստողկումը ո՞րտեղից է իմացել թէ ե՛լ Պր. Մ. Արեղեանը ե՛լ լուստողկումը անսխալական են, որ առանց ֆննութեան ենթարկելու առաջարկը հրամանագրում է ընդունել եւ միայն դրանով գրել եւ տպագրել: Պր. Արեղեանի առաջարկը ընդունելի՞ Է թէ՛ չէ՞ դա դեռ ֆննելի խնդիր է, հետեւաբար լուստողկումի հրամանը անընդունելի է, եւ եթէ էսպէս է, ապա նրան՝ լուստողկումին մնում է ուղղել իր արած սխալը, ետ վերցնել իր կարգադրութիւնը, խնդիրը համարել բաց եւ դնել ֆննութեան»:

Հայրենասէր բանաստեղծ Աւետիք Իսահակեանն ալ Վենետիկէն կը գրէր 12 Նոյեմբեր 1924-ին՝ Մարտիրոս Սարեանին, թէ ամէն բան լաւ է Հայաստանի մէջ, բացի նոր ուղղագրութեանէն, զոր պէտք է փոխել: Իսկ Ալ. Միասնիկեան, որ օրուան վարչապետն էր, 20 Դեկտեմբեր 1942-ին կը գրէր իր բարեկամ Սէրիկ Դաւիթեանին, թէ հին ուղղագրութեամբ կը շարունակէ իր նամակը, որովհետեւ դեռ եւս չէ կրցած վարժուել նոր ուղղագրութեան:

Այս բոլոր լեզուական աճպարարութիւններուն եւ ուղղագրական խաթարման մղիչ ուժը եղած է մանաւանդ Պօղոս Մակինցեանը, լուսաւորութեան գործավարը, որուն յետին նպատակը ոչ թէ «նոր» ուղղագրութեան ստեղծումն էր, այլ՝ Սահակ-Մեսրոպեան տառերը լքելով անցնիլ լատիներէն գիրերու:

1919-ին, Մոսկուայի մէջ տեղի ունեցած կրթական հարցերով զբաղող խորհրդակցական նիստերուն, Մակինցեան առաջարկած է բովանդակ Ռուսաստանի համար միատեսակ լատինական այբուբեն, որպէսզի ազգութիւնները միատեսակ գիր ունենան եւ զիրար դիւրաւ հասկնան: Սակայն, ռուս համայնավար գրողներ բացարձակապէս հակառակ արտայայտուած են այս անհեթեթ գաղափարին: Իսկ Մակինցեան այս անգամ դիմած է խորամանկութեան, առաջարկելով գոնէ հայերէն տառերը միայն լատին տառերով փոխարինելու:

Ճիշդ է, 1922-ի ռեֆորմը շատ դժգոհութիւն յառաջացուց Հայաստանի եւ մանաւանդ արտասահմանի հայութեան մէջ, բայց բոլոր բողոքներուն մէջ կային ե՛լ ռեֆորմը հիմնովին մերժողներ եւ անոր մէջ ինչ-ինչ փոփոխութիւններ առաջարկողներ: Ահա թէ ինչո՞ւ 20-30 թուականներուն ուղղագրութեան ռեֆորմը աւարտած չէր համարուեր, ժամանակ առ ժամանակ կը ստեղծուէին հարցը քննարկող յանձնաժողովներ:

Վերջապէս, 1940-ին, լեզուաբան Գուրգէն Սեւակի նախագիծով ընդունուեցան մասնակի բարեփոխումներ:

1922-ի ուղղագրութեան դէմ բողոքեցին Յովհաննէս Թումանեանը, Աւետիք Իսահակեանը, Հրաչեայ Աճառեանը, Ն. Ակինեանը, Ա. Մէյէն, Եր. Օտեանը, Ն. Մառը, Ն. Ադոնցը, Յովհաննէս Յովհաննէսեանը, Վահան Թէքէեանը եւ շատ-շատ ուրիշներ: Յատկանշական է այն փաստը, որ ուղղագրական հրամանագրէն երկու տարի ետք, տեսնելով, որ հայոց այբուբենը լատինականով փոխարինելու իր ջանքերը արդիւնք չտուին, լուսժողովոմ Պօղոս Մակինցեանը գրած է. — «Եթէ հայերէնի ուղղագրութեան ռեֆորմին վիճակուած է սառել-մնալ կէս ճանապարհին, ապա այս դէպքում աւելի լաւ կը լինէր առանց այլեւայլի դառնալ հին ուղղագրութեան: Մենք կատարելապէս համոզուեցինք, որ ընդունուած ռեֆորմը մեզ անջատեց արտասահմանի հայկական տարրերից: Հենց այս մի հանգամանքը այնքան ծանրակշիռ է, որ հարկադրում է նոր ուղղագրութիւնը վերացնել մէջտեղից»:

Նոր ուղղագրութեան դէմ այնքան շատ էին չղազրող բողոքներն ու ահազանգները, որ Նորհրդային Հայաստանի կառավարութեան յատուկ որոշումով լուսժողովոմը 1926-ին ստեղծեց ուղղագրական յանձնաժողով՝ քննելու դասական ուղղագրութեան որոշ տարրերը վերականգնելու հարցը: Յանձնաժողովը գործեց մօտ մէկուկէս տարի, գումարեց 25 նիստեր: Թէ՛ յանձնաժողովի անդամները (Յ. Մանանդեան, Ստ. Մալխասեան, Լէօ, Գ. Ղափանցեան եւ ուրիշներ) եւ թէ՛ հարցման ենթարկուած տասնեակ մասնագէտներ միաբերան անընդունելի համարեցին նոր ուղղագրութիւնը: Անոնք այն կարծիքին էին, որ նոր ուղղագրութիւնը խաթարեց հայերէն հազարաւոր բառերու դարաւոր տեսքը, մեր գրաւոր լեզուն բեռնաւորուեցաւ տասնեակ անիմաստ համանուններով (սէր-սեր, գէտ-գետ, յարկ-հարկ, յաջող-հաջող, եւ այլն), աղճատեց շատ բառերու ճիշդ արտասանութիւնը, մեզ զրկեց հազարաւոր բառերու ծագման ու զարգացման հետեւելու դիւրութենէն, պատճառ դարձաւ ուղղագրական սխալներու առատացման, լեզուն զրկեց միասնական եւ կոռ ուղղագրութենէն, աւելի մեծցուց հայոց հին եւ նոր լեզուներու միջեւ եղած անջրպետը, մօտեցնելու փոխարէն աւելի հեռացուց մեր գրական լեզուի գոյգ երակները, եւ այլն: Յանձնաժողովի եզրակացութիւններու հիման վրայ,

յիշեալ խաթարումները մասամբ մեղմելու նպատակով, 1940 թուին դասական ուղղագրութիւնը մասնակի վերականգնելու առաջին քայլը առնուեցաւ: Վերականգնուեցաւ «է-ե», «օ-ո»-ի ուղղագրութեան դասական կանոններու մէկ մասը, այբուբեն վերադարձուեցան «է» եւ «օ» նշանագրերը: 1940-ի նախագիծին մէջ կար նաեւ «իւ»-ի վերականգնումը, սակայն այն մնաց յետագային:

Պատերազմը եւ անոր յաջորդող դժուարին տարիները խանգարեցին շարունակել դասական ուղղագրութիւնը վերականգնելու յետագայ քայլերը: Ռ. Իշխանեանի կարծիքով, Մեսրոպեան ուղղագրութեան մասնակի վերականգնումէն անցած է 71 տարի, բայց այսօր, թէեւ մեծ ուշացումով, պէտք է կատարել դէպի դասական ուղղագրութեան յաջորդ քայլերը:

Ռ. Իշխանեան առաջարկած է կատարել արդի ուղղագրութեան հետեւեալ անհրաժեշտ փոփոխութիւնները.—

1.- Վերականգնել «իւ»-ի գրութիւնը եւ «յու»-ի փոխարէն ամէնուրեք գրել «իւ», ինչպէս՝ ձիւն, իւրային, իւրացնել, Յարութիւն, եւայլն:

2.- Վերականգնել բառավերջի «է»-ն եւ բառավերջում «է» ըսելով, ամէնուրեք գրել «է», ինչպէս՝ որեւէ, որեւիցէ, հիւլէ, բաւէ, Մելինէ, եւայլն:

3.- Վերականգնել բառամէջի «ոյ»-ը («ույ»-ի փոխարէն) եւ գրել՝ գոյն, լոյս, բոյր, եւայլն:

4.- Վերականգնել «եա»-ի գրութիւնը, եւ «յա»-ի փոխարէն ամէնուրեք գրել «եա», ինչպէս՝ մատեան, Թումանեան, ամեակ, մանեակ, եւայլն:

Ռաֆայէլ Իշխանեանի կարծիքով, վերականգնումներու կապակցութեամբ կատարուած բազմաթիւ փորձերը ցոյց տուած են, որ աշակերտները մէկ ժամուայ ընթացքին լիովին կ'իւրացնեն դասական ուղղագրութեան այս չորս վերականգնումները, իսկ ուսանողութիւնը, մամուլի պաշտօնեաներն ու սրբագրիչները, զարտուղութիւններէն զերծ, այս կանոնները կ'իւրացնեն անմիջապէս: Իսկ ամենակարեւորն այն է, որ այս չորս առաջարկները վերականգնելու շնորհիւ մեր ուղղագրութիւնը կը դառնայ կուռ եւ տրամաբանական, զգալիօրէն կը մերձենան Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի ուղղագրութիւնները եւ կը կատարուի քայլ մը եւս դէպի Մեսրոպեան ուղղագրութիւն:

Ինչպէս նախապէս գրած ենք, այսօր կրկին կը կրկնենք.—

Միասնական ուղղափառութիւնը առիթ կ'ընծայէ, որ Սփիւռքի մէջ տպուած գիրքերը դիւրութեամբ կարգան հայրենիքի ուսանողները եւ ընթերցասէրները, եւ Հայաստանի մէջ տպուած գիրքերը, թերթերը, մանկական եւ գրական, կարդացուին ընթացիկ ուսանողներուն եւ ընթերցասէրներուն կողմէ, առանց շուարեւու դպրոցներու մէջ իրենց սորված ուղղափառութիւններէն եւ քերականական օրէնքներէն, առիթ ընծայելով, որ տըպուած գիրքերն ու թերթերը բարձր տպագրանակ ունենան, իրականացնելով մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ լեզու եւ մէկ ուղղափառութիւն գաղափարը:

2004-ին, մաս կը կազմէի Հայաստանի Գրողներու Միութեան Համահայկական Երկրորդ Համաժողովին: Խոմբին մէջ գոյութիւն ունէին բազմաթիւ վաստակաւոր գրողներ Սփիւռքէն եւ Հայաստանէն, որոնց մէջ կը գտնուէր Լոս Անճելըսէն՝ գրող Օշին Քէշիշեանը: Օշինին ծանօթ էի Գրողներու Միութեան Համահայկական Առաջին Համաժողովէն, նաեւ՝ բանաստեղծ, հայոց Մեսրոպեան կամ դասական ուղղափառութեան վերականգնման նուիրեալ հաւատացող եւ պայքարող Լեւոն Միրիջանեան:

Լեւոն Միրիջանեան այդ օրուան եղելութիւններուն մասին բաց նամակով յօդուած մը գրած էր Փարիզի «Յառաջ» թերթի Երեքշաբթի, 31 Օգոստոս 2004-ի թիւին մէջ: Կ'ուզեմ, որ դարձեալ անդրադառնանք Օշինի եւ Լեւոնի խօսակցութեան՝ հայ լեզուի նոր ուղղափառութեան շուրջ իրենց կարծիքներուն եւ տեղի ունեցածներուն:

«Ի՛նչ երանութիւն՝ Օշական ուխտի գնալ աշխարհի չորս ծագերից հաւաքուած գրչակիցներիդ փարաւանով:

Յուլիսեան արեւը ոսկի է թափում զմրուխտէ այգիների վրայ, ներս թափանցում նաեւ հսկայական, երկյարկ «Իմարուս» լուսամուտների վարագոյրներից՝ հարկադրելով յանախակի դիմել ամէնափրկիչ թաշկինակի օգնութեանը:

Աւտոպուսը կարծես բաժանուած լինի երկու մասի՝ երգողների եւ չերգողների: Մեր երգող ընկերները, հալալ ֆրաիմֆի գնով, մի կատարեալ երգչախումբ են կազմել: Նրանց երգն էնպէս ներշնչուն, այնպէս յուզումնալի է, որ մի պահ թոււմ է՝ ոչ թէ սուրում ես ասֆալտապատ խնուղով, այլ գնում ես Մայր Գետի ափերով, աւանդաբար, ֆայլամուր, աւանդաբար փընտ-

ոելով կամ գնում ես ուրիշ-ուրիշ միջօրեականներով՝ ցանկանալով տեսնել այն երկիրը՝ որ քեզ «ետուր արեւ»...: Մեքենան սուրում է աչ ու ձախ սփռուած դրախտային ծիրանուտների միջով եւ երգը փարուում է կոմիտասեան ծիրանի ծառին...:

...Մենք՝ Օշինը եւ ես, չերգողների մասում ենք, կողմ-կողմ-
ֆի: Երեսուն տարուայ բարեկամներ ենք, խօսելու շատ բան կայ: Հերթը հասնում է ուղղագրութեանը եւ այդ կապակցութեամբ՝ նաեւ իմ յօդուածներին:

— Լոս Անջելեսի թերթերը յօդուածներդ կը տպեն ու կը տպեն «Յառաջ»էն առնելով:

— Հակառակ այստեղի թերթերի, — ասում եմ:

— Ատ՝ ուրիշ հարց: Հոս մթնոլորտը տարբեր է:

— Բայց խնդիրը համազգային է:

— Ամէն պարագայի՝ մթնոլորտի հարց ալ կայ:

— Եւ մինչեւ ե՞րբ պիտի լինի այդ մթնոլորտային հարցը...:

— Ը՛... կը խորհիմ թէ մինչեւ տասը տարի:

— Լո՞ւրջ ես ասում, — գրեթէ ոչ ում եմ ես:

— Այո՛, — եւ Օշինի դէմքին յայտնուում է նրան դէմքին բնորոշ Քէշիշեանական բարի, ներողամտութեամբ լի ժպիտը, որ ինքնըստիմեքան նշանակում է՝ այդպէ՛ս է, եղբայր, ես ի՞նչ կարող եմ անել...:

Անսպասելի պատասխանից ապշահար ու զայրացած՝ չգիտեմ ի՞նչ անել: Օշին անցած է բացատրութեան.

— Քու ըսածներդ ամէնքն ալ ուրիշ են: Ե՛ս ալ այդ կարծիքին եմ՝ Մեսրոպեան ուղղագրութիւնը պէ՛տք է վերականգնուի: Սակայն այդ խնդիրը Հայաստանի ամէնէն կարեւոր խնդիրներէն չէ: Այսօր Հայաստան աւելի կարեւոր խնդիրներ ունի:

— Որո՞նք են այդ խնդիրները:

— Նախ՝ ժողովուրդը պիտի պահել:

— Բայց ժողովուրդը պէտք է գրագէտ պահել:

— Այո՛, բայց ուղղագրութեան խնդիրը ժամանակի՛ պէտք ունի:

— Օշին, սիրելի՛ս, մենք առանց այն էլ շատ ենք ուշացել: Մեսրոպեան ուղղագրութիւնը վաղու՛ց պիտի վերականգնուած լինէր: Այլեւս սպասել չի կարելի: Ա՛յ մեր դիմացի նստարանին Փրոֆ. Սուրէն Դանիէլեանն է. հարցրո՛ւ, եւ նա քեզ կ'ասի, թէ Հայաստանում քանի՛-քանի՛ դպրոցների մէջ արդէն ուսուցանում են արեւմտահայերէնը, բնականաբար՝ Մեսրոպեան ուղ-

ղագրութեամբ, եւ թէ ինչպիսի՛ հանոյ՜նով են երեխաները սովորում իրենց մայրենի ուղղագրութիւնը:

— Գիտե՛մ, գիտե՛մ, բայց ատոնք մանուկի բաներ են: Մըք-նոյրտը տակաւին պատրաստ չէ:

— Այդ «մանուկների» թիւը հարիւրների է հասնում: Եւ ե-թէ այդքան «մանուկի» կայ, ընդհանուր ինչն^օւ չլինի:

— Այո՛, բայց չես գիտեր՝ ինչե՛ր կրնան ըլալ:

— Ինչե՞ր՝ գորօրինակ...:

Որպէս պատասխան, Օշին Քէշիշեանը, իր երեսնամեայ ա-նուղղելի բարեկամից սրտենդած, վեր է կենում եւ գնում ա-ռաջ՝ գրոյցի բռնուելով ուղղագրութեան ցաւից հեռու գրչա-կիցների հետ:

*
*
*

Քրիստոսի նման, Օշականի Սուրբն էլ իրաւունք ունի ասե-լու.— «Եկայ՛ք առ իս, ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից գձեգ»:

Ահա եկել են սրանք՝ գրի, գրչութեան եւ հայ խօսքի վա-տակած ու բեռնաւոր մշակները: Նրանք, հերթով, խոնարհուում են Մեծ Ուսուցչի շիրիմին, երկիւղածօրէն համբուրում սրբա-լոյս տապանաբար եւ մէկական մեխակ թողնելով խնկահոտ մարմարին, դիմում դուրս՝ նոր ուժ ու աւիւն առած, նորովի հայացած...:

Մէկ ժամ անց, խումբը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում է՝ Վե-հարանում, Գարեգին Բ. Կաթողիկոսը բարի գալուստ է մաղ-թում գրողների համաժողովի բոլոր մասնակիցներին, օրհնու-թեան խօսքեր ասում: Գանատարնակ բանաստեղծ Գրիգոր Հո-թոյեանի հարցմանն ի պատասխան, Կաթողիկոսն անդրադառ-նում է նաեւ դասական ուղղագրութեան վերականգնման խնդրին: Ասում է, որ Սուրբ Էջմիածինը միշտ հաւատարիմ է Մեսրոպեան ուղղագրութեան, եւ ինքը, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, բնականաբար, ուրախ կը լինի Մեսրոպեանի վե-րականգնման համար: Իր խօսքը աւելի ոգեւորում է բոլոր նը-րանց, ովքեր Մեսրոպեանի վերականգնման կողմնակից եւ ջա-տագով են եւ լուրջ յոյսեր են կապում գրողների ընթացիկ հա-մաժողովի հետ:

...Պէտք է ասել, որ մենք՝ հայաստանաբնակ Մեսրոպեա-

նականներս, Սփիւռֆի մեր հայրենակիցների նման, նոյնպէս «սքափ եմք նայում իրականութեանը» եւ, Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգնելու դէպքում, ոչ մի տագնապալի «մօտալուտ հետեւանգներ» չենք տեսնում: Ընդհակառակն, մեր պատկերացմամբ, Մեսրոպեան ուղղագրութիւնը կը վերականգնուի Հայաստանի նախագահի հրամանագրով, որից անմիջապէս յետոյ պետականօրէն կ'որոշուի անցման շրջան՝ մէկ կամ երկու տարուայ չափով, որի ընթացքում դասական եւ գործող ուղղագրութիւնները կարող են կիրառուել ըստ ցանկութեան: Անցման շրջանում մարդիկ կը ճանաչեն, կը սովորեն իրենց մայրենի ուղղագրութիւնը, կ'ընտելանան, կը վարժուեն նրան եւ կը սիրեն: Եւ այլեւս չի լինի ուղղագրութեան այս չարաղէտ խնդիրը, որը Կրեմլի հրամանով պարտադրուել է մեզ, եւ որն անհրաժեշտ է լուծել ժամ առաջ, որպէսզի սերունդները որքան կարելի է շուտ հայերէն գրելու իրաւունք ստանան, իրաւունք, որից զուրկ են ահա 82 տարի... աւելի երիշր՝ 92 տարի...»:

«Նոր Կեանք» շաբաթաթերթի 14 Փետրուար 2008-ի թիւով, «Բաց Նամակ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Ռոպէր Քոչարեանին» վերնագրով պահանջելու պէս խնդրեցի 4 Մարտ 1922-ին, Հայաստանի խորհրդային կառավարութեան հրամանագրով ընդունուած Աբեղեանական նոր ուղղագրութիւնը ջնջելով, պետական մէկ հրամանագրով վերադարձնէ Մեսրոպեան ուղղագրութիւնը, այն խոր հաւատքով, որ Հայաստանի նախագահն ալ մէկ հրամանագրով կրնայ վերականգնել Մեսրոպեան ուղղագրութիւնը, որպէսզի հայութիւնը «Մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ մշակոյթ, մէկ գրականութիւն եւ մէկ ուղղագրութիւն» ունենայ, բաժանումները վերջ գտնեն եւ հայ ազգային միասնականութիւնը կատարեալ ըլլայ, մանաւանդ Հայաստանի վերանկախացման պատմական լոյսին տակ:

Բաց նամակիս թուականէն վեց տարի անցաւ: Նախագահները փոխուեցան, Քոչարեանին յաջորդեց Սերժ Սարգսեանը: Հայաստանէն եւ Սփիւռքէն ուղարկուած բազմաթիւ նամակներ, դիմումներ, բացատրութիւններ գրուեցան եւ ղրկուեցան նորընտիր Նախագահ Սերժ Սարգսեանին, սակայն, դժբախտաբար ոչ թէ միայն արդարացուցիչ պատճառներ չհրատարակուեցան, այլ, դիմումները բարձի տակ դրուեցան, անտեսելով

Հայոց լեզուի 1500 տարուան տրամաբանական օրէնքներն ու իմաստները:

Աբեղեանական ուղղագրութեամբ ի՞նչպէս ընդունիլ եւ գրել «յաջողութիւն» բառը՝ «Հաջողութիւն» բառով. առաջինը՝ յաջողիլ գործի մէջ, երկրորդը՝ շունի գոռալ: Ի՞նչպէս գրել «սէր»՝ մայրական, զաւակի, հայրենիքի, եւայլն. «սէր»ը գրել «սեր»՝ ճշմարիտ հայերէնով կը նշանակէ կաթի սեր, շիճուկ:

Կարելի է բերել ոչ թէ հարիւրաւոր, այլ հազարաւոր բառեր, որոնք գրաւոր հայերէնէ այլակերպուած եւ իմաստազրկուած են, այն պարզ պատճառով, որ «ե»-ի եւ «է»-ի նման իրար միացուած են «հ»-ն եւ «յ»-ն, «ո»-ն եւ «օ»-ն, «ւ»-ն ու «վ»-ն: Աւերածութեան նոյնիսկ մօտաւոր պատկերը տալու դէպքերուատեն՝ հատորներ կը լեցուին:

Հիմա հասած է պահը ազգահաւաքի, միասնականութեան, միաբանութեան, մէկ ազգ, մէկ պետութիւն, մէկ եկեղեցի, մէկ ուղղագրութիւն ունենալու բաղձալի ժամանակը: Մենք պարտաւոր ենք փրկել կործանուած մեր գրաւոր հայերէն խօսքը: Մենք պարտաւոր ենք իմանալ, որ ոչ թէ բանաւոր, այլ գրաւոր խօսքով մշակոյթ կը ստեղծուի: Գրենք այնպէս, որ կարողանանք հասկնալ չնաչխարհիկ հայոց լեզուի ամէն մէկ արմատի, ածանցի, բանաստեղծական երեւոյթի իմաստն ու նշանակութիւնը:

Սոյն նոր գրութեամբ, նոր բաց նամակով, կը դիմեմ Հայաստանի Նախագահ Ն. Վ. Սերժ Սարգսեանին, Հայաստանի կառավարութեան, ակադեմիականներուն, Գրողներու Միութեան եւ հայերէն լեզուի իսկական կազմութիւնը եւ իմաստը հասկցող մտաւորականներուն, որ նախ կարդան առաջին բաց նամակս նախկին Նախագահ Ռոպէր Քոչարեանին ուղղուած, ապա՝ սոյն դիմումը եւ խնդրանքը, որպէսզի վերականգնուի հայոց լեզուի 1500 տարուան ուղղագրութիւնը, որպէսզի Հայաստանի եւ Սփիւռքի ուսանող հայ մանուկները կարենան ազատօրէն կարդալ հայերէն գիրքերը, թերթերը եւ այլազան հրատարակութիւնները, դպրոցներու մէջ իրենց սորված ուղղագրութիւնը չչփոթեն իրար, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ:

«Մեր միակ փրկութիւնը մեր հաւաքական ուժի մէջ է»:

ՀԱԼԷՊԻ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ԴԵՄԱՐԱՆԸ

Պատմութեան համար, Հալէպի Քարէն Եփփէ Դեմարանի հիմնադրութիւնը, կարեւորութիւնը, գործնական քայլերը եւ հիմնադրութեան առթիւ արտասանուած ճառերն ու արտայայտութիւնները իմ հրատարակած 7-րդ գիրքիս մէջ տպագրելով, օրաթերթերու ու շաբաթաթերթերու էջերէն գիրքի մը մէջ տեղադրելու ցանկութիւնս յառաջ կու գայ, որովհետեւ այդ բոլոր մտածումներուն եւ գործնական քայլերուն մասնակցած եմ պատանեկան տարիքիս, խորապէս զգալով, որ հայկական երկրորդական վարժարանի մը գոյութիւնը որքա՛ն կարեւոր էր հայ նորահաս սերունդին հայեցի բարձրագոյն դաստիարակութիւն տալու համար:

1940-41-ին, Սահակեան Ազգային Երկսեռ Վարժարանէն շրջանաւարտ ըլլալէ ետք, հայեցի ուսումս հայկական երկրորդական վարժարանէ մը ներս շարունակելու հնարաւորութիւն չունեցայ, նուազագոյն Ֆրանսական Լայիք Երկրորդական եւ Ամերիկեան Գոլէճ ուսանալու նիւթական միջոցները չունենալով, ստիպուած անգլիական բանակի ճաշարանին մէջ աման լուալու գործ մը գտայ: Ապա, զինուորագրուեցայ ֆրանսական բանակին:

Դեմարանի անունը այդ շրջանին «Քարէն Եփփէ Գոլէճ» էր, որ յետագային կոչուեցաւ «Քարէն Եփփէ Դեմարան»:

Յաջորդաբար պիտի կարդաք Անդրանիկ Ծառուկեանի «Ինչպէս հիմնուեցաւ Քարէն Եփփէ Դեմարանը» գրութիւնը, ապա՝ Տոքթ. Յ. Գասապեանի բանախօսութիւնը, Պրն. Եղուարդ Տասնապետեանի բանախօսութիւնը՝ յանուն «Քարէն Եփփէ Գոլէճ»ի ուսուցչութեան, ապա՝ Առաջնորդ Չարեհ Մըրբազանի Կիրակի օրուան քարոզը Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ՝ 26 Հոկտեմբեր 1947-ին, «Արեւելք»ի Կիրակի, 2 Նոյեմբեր 1947-ին լոյս տեսած խմբագրականը՝ «Յեղին Սիրտը» եւ «Նոր Կեանք»ի ԺԴ. տարի, թիւ 32, Յուլիս 23 1992-ին «Հայրենիք»ի խմբագիր Մինաս Թեօլեօլեանի պատմութեան համար գրած յօդուածը՝ «Հալէպի Ազգային Քա-

րէն Եփփէ Ճենաարանին գոյառումը, «Այրիանոց»ը՝ որ լուսոյ տաճար դարձաւ»:

Սակայն, ցաւալիօրէն, Հալէպի «լուսոյ տաճարները» այս օրերուն, Սուրիոյ քաղաքացիական եւ օտար ուժերու կողմէ երեք տարիներէ ի վեր տեղի ունեցող կռիւներու եւ ոմբակոծումներու հետեւանքով, Սուրիոյ զանազան քաղաքներու մէջ շէնքերը, մշակութային եւ կրթական հաստատութիւնները, եկեղեցիներն ու սօցիալները քանդուեցան եւ վնասուեցան, որոնց կարգին հայկական վարժարանները եւ բնակելի տունները, պատճառ դառնալով բազմահազար հայերու արտագաղթին Հայկական Մայր Գաղութն:

Աղօթեմք, որ շուտով վերջ գտնեն տեղի ունեցող արիւնալեղութիւնները եւ Սուրիա վերագտնէ իր նախկին բարգաւաճ կեանքը:



ԻՆՉՊԷՍ ՀԻՄՆՈՒԵՑԱԻ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՍԱՐԱՆԸ

— Շուտ եկուր, կարեւոր գործ ունիս այստեղ:

Զարեհ Սրբազանն է հեռաձայնողը Առաջնորդարանէն: Յայտնապէս լաւ տրամադրութեան մէջ ըլլալու է, ինչպէս կը հետեւցնեմ իր ձայնէն: Այնպէս գոհունակ կը հնչեն իր բառերը, որ կը մտածեմ թէ նորէն կատակի մը շուրջ կրնայ դառնալ «կարեւոր գործը»: Առաջին անգամը պիտի չըլլայ: Պատահած է որ նոյնքան կարեւոր գործով կանչէ, եւ պարզուի որ նարտի խաղով յաղթանակ մը տարած ըլլայ մէկուն վրայ, նախընտրաբար բժ. Տէր Ղազարեանը, եւ յաղթանակին պտուղը կազմող քեպապին մասնակցելու կոչուիմ: Հետեւաբար կը պատասխանեմ.

— Քեպապը հոս թող բերեն — Արեւելի խմբագրատունն եմ — եւ ձմերուկն ալ իմ վրաս:

— Քեպապի ձմերուկի խնդիր չէ, եկուր որ տեսնես, երկու սիրուն օրիորդներ կան այստեղ եւ կարծեմ քեպապէն նուազ հաճելի պիտի չըլլան քեզի համար. կատակը մէկ կողմ, շուտ եկուր:

Իմ տեղէս մինչեւ եկեղեցի քանի մը հարիւր քայլ է, կ'երթամ: Սրբազանին հաւաստիքը կէսով միայն ճիշդ էր: Իրաւ երկու օրիորդներ կան քովը, բայց շատ հեռու են սիրուն ըլլալէ: Քառասունը անց, չորրորդ, թողած երկու կիներ, իրենց տարիներուն վրայ բռնաւորուած նաեւ ակնոցներով: Բժիշկն ալ ներկայ է: Օրիորդները նստած են արձաններու պէս ձեռքերը ծունկերուն վրայ, պատկառոտ եւ լուռ: Բժիշկը գերմաներէն կը խօսի անոնց հետ:

Ահա կացութիւնը:

Այս օրիորդները եկած են Տանիմարքայէն որպէս ներկայացուցիչ Դանիոյ բարեսիրական ընկերութեան: Իրենց առաքելութիւնն է վաճառել միս Քարէն Եփփէի անունով Նոր Գիւղի մէջ գտնուող ընդարձակ հողամասը եւ տուները, որոնք ատեն մը որպէս այրիանոց ծառայելէ վերջ, այժմ բոլորովին պարապ կը մնան եւ բանի մը չեն ծառայեր: Ընկերութիւնը յարմար տեսած է ծախել այդ կալուածը եւ այս աղջիկները լիազօրուած են վաճառումը իրագործելու:

Միս Եփփէն Տանիմարքայի մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ ու կը մնայ տեսակ մը ազգային պարծանք, Ուրֆայի մէջ հայ որբերուն տարած խնամքին համար եւ տարիներով Հալէպի մէջ ալ շարունակած է մարդասիրական գործունէութիւնը, որբերէն ետք այրի կիներ հոգալով: Բայց հիմա որ այրիներ չկան եւ միս Եփփէն ալ մեռած է, իր անունով գնուած բայց ընկերութեան պատկանող հողը ծախու է: Ընկերութիւնը որոշած է դրամի վերածել այդ հողը եւ գործածել իր նպատակներուն:

Բայց մեր կողմէ առաջարկ մը եղած է օրիորդներուն եւ բժիշկն ալ, գերմաներէնի մէջ քաջավարժ, կ'աշխատի համոզել օրիորդները: Կ'ըսէ.

— Այս կալուածին վաճառումէն գումար մը պիտի գոյանայ, եւ գործածուի բարեսիրական ձեռնարկներու, ճիշդ է: Բայց այդ բոլորին մէջ ո՞ւր կը մնայ միս Քարէն Եփփէն, որ տասնամեակներ աշխատեցաւ հայ որբերուն եւ այրիներուն համար: Աւելի լաւ չէ՞ որ հողը մեզի մնայ, այնտեղ գոլէճ մը հիմնենք միս Եփփէին անունով եւ այդպէս անմահանայ իր յիշատակը:

Օրիորդները համոզուած են թէ մեր առաջարկը ընդունելի է, բայց իրենք լիազօրուած են միայն վաճառումի համար: Որպէսզի կարենան ընթացք տալ մեր դիմումին, պէտք է որ իրենց կեդրոնին հարցնեն եւ ըստ այնմ վարուին: Խնդիրը հասկնալէ ետք կ'ըսեմ Սրբազանին.

— Աղէկ, ես ի՞նչ գործ ունիմ այս ամէնուն հետ:

Լուրջ, գրեթէ խիստ ձայնով մը կ'ըսէ ինծի.

— Կերակուրը եփելու վրայ է, պաղ ջուր չխառնե՛ս: Օրիորդ-ները փափաքեցան բերդը տեսնել, պիտի ընկերանաս իրենց: Ամէն կերպ կ'ուզենք սիրաշահիլ, հասկցի՛ր:

— Բայց ես գերմաներէն չեմ գիտեր...

— Իրենք ֆրանսերէն գիտեն, կը հասկնան: Պիտի երթաք իմ մեքենայովս եւ բերդէն ետք կու գաք օթէլ Պարոն ուր ողջերթի ճաշկերոյթ մը կը տրուի ի պատիւ իրենց: Պէտք է որ ասոնք մեր պաշտպան փաստաբանները ըլլան իրենց կեդրոնին մօտ:

Լաւ խաղ մը ըրած ըլլալու գոհունակութիւնը ունի Սրբազանը: Ճար չկայ, պէտք է քանի մը ժամ կրել այս սիրուն օր-իորդները:

* * *

Նոյն գիշերը փառաւոր ճաշկերոյթ մը տրուեցաւ օրիորդ-ներուն: Հեռաւոր իր գիւղէն այս առիթով կանչուած էր Միսաք Մելքոնեանը, որ պատանի տարիքէն հոգեզաւակ եղած էր միս Եփփէին եւ օգնական լաւ ոյժ մըն էր մեր մղած շլացնելու յարձակողականին մէջ: Զուր չանցան այս սիրալիրութիւնները: Օրիորդներուն մեկնելէն հազիւ ամիս մը վերջ հեռագիր եկաւ թէ կեդրոնը համաձայն է մեր առաջարկին եւ կը խնդրեն որ պաշտօնական թուղթերը պատրաստուին, որպէսզի իրենց ներկայացուցիչը Հալէպ գալուն պէս ստորագրէ:

Այս անգամ շուէտացի պատուելի մըն էր եկողը, որ մէկ օրուան մէջ ձեւակերպութիւնները վերջացուց ու եկածին պէս մեկնեցաւ, մեզի յաջողութիւն մաղթելով:

Ուրեմն հողի խնդիրը վերջացաւ:

Ո՛չ, խնդիրը նոր սկսաւ:

Հողին մեզի ձգուելուն ուրախ լուրը տարածուած էր քաղաքին մէջ եւ ոմանց մօտ նոր ախորժակներ յայտնաբերած: Յանձին Հ.Մ.Ը.Մ.-ի ցկեանս ատենապետ, նախագահ եւ միութեան ամէն ինչը եղող Լուտեր Մասպանաճեանին, պահանջ դրուեցաւ որպէսզի այդ հողին վրայ դպրոցի տեղ... մարզարան մը շինուի, թենիսի դաշտով եւ լոգարանով: Կատակի մը բնոյթը կրող այս բաղձանքը լուրջի առնողներ գտնուեցան, եւ այն աստիճան որ յիշեալ Լուտերը համարձակի ներկայանալ Սրբազանին եւ պահանջ ներկայացնէ:

Ես ներկայ էի երբ Լուտերը եկաւ Սրբազանին մօտ: Ներկայ

էր նաեւ Վահէ Սէթեանը: Սրբազանը նախ լուրջի չառաւ, բայց տեսնելով որ Լուտերը կը խօսի հայ նոր սերունդին անունով, ջղայնացաւ եւ ըսաւ.

— Մենք ճեմարան պիտի բանանք քիւրտերո՞ւն համար: Դարձեալ հայ նոր սերունդն է որ պիտի օգտուի: Յետոյ ես խօսք տուած եմ տանիմարքացիներուն: Քարէն Եփփէի անունով ճեմարան մը պիտի շինուի:

Լուտերը գինաթափ չեղաւ, շարունակեց.

— Սրբազան, խօսքդ յարգուած կ'ըլլայ դարձեալ: Մենք մարզարանի մոտքին խոշոր տառերով կը գրենք միս Քարէն Եփփէի անունը:

Որուն վրայ Սրբազանը որոտաց.

— Իմ խօսքս բողոքական պատուելիի խօսք է, այլ հայ առաքելական եկեղեցւոյ եպիսկոպոսի խօսք, որ նաեւ այս թեմին Առաջնորդն է...

Ճիշդը ըսելով, մենք բոլորովին մոռցած էիք Լուտերին աւետարանական ըլլալը եւ ինքն ալ շատ կարեւորութիւն տուողը չէր, բայց Սրբազանին ակնարկութենէն վիրաւորուեցաւ եւ գրլուխը շարժելով մեկնեցաւ...

* * *

Հողը ունինք, վրան քանի մը լաւ պահուած սենեակներ ալ, նոյն տարուան նախակրթարանի շրջանաւարտներէն կազմուած առաջին դասարանն ալ պատրաստ է, բայց... դրամ չկայ: Ուսումնական խորհուրդ մը կազմած է Սրբազանը երեք հօգինոց — բժ. Յ. Գասապեան, Յարութիւն Չագրեան եւ Ծառուկեան: Առաջին ժողովին ըսաւ.

— Ձեր գլխաւոր նպատակը պիտի ըլլայ ձեմարանը ոտքի հանել: Քաղաքական ժողովն ալ շատ համաձայն է, առաջ քշելով նիւթական հոգը: Բայց ես որոշած եմ չնահանջել եւ անպայման այս տարի բանալ ձեմարանը...

Երեքս ալ համամիտ գտնուեցանք իրեն: Քսան հազար ոսկիի պիւտճէ մը կազմուեցաւ այդ տարուան համար: Մինաս թէօլէօլեանը կարգեցինք հայերէն լեզուի եւ հայագիտութեան ուսուցիչ: Օրիորդ Սիրուն Կիւրեղեանը Ֆրանսերէնի եւ մաթեմատիկի: Նամակով Օննիկ Սարգիսեանը հրաւիրեցինք որպէս տեսուչ եւ բանաստեղծ Ահարոնն ալ, Փարիզէն, որպէս գրաբարի մասնագէտ: Բայց դրամ... չկայ դեռ:

Ժողովէն դուրս խօսած էի Սրբազանին եւ համաձայն էր:

Կիպրոսէն պզտիկ Հանգանակութեան մը ձեռնարկել, միասին Կիպրոս երթալով (այնտեղ վարկս դեռ բարձր էր եւ ակումբին պատէն կախուած նկարս տակաւին վար առնուած չէր...):

Ժողովականները վաւերացուցին մեր ծրագիրը եւ Սրբազանին հետ Կիպրոս գացինք շաբաթով մը: Երկու հազար անգլիական ոսկի բերինք այնտեղէն, այսինքն ճիշդ ու ճիշդ մեզի պէտք եղած գումարը եւ Քարէն Եփփէ ձեմարանին առաջին տարին բոլորուեցաւ այդպէս...

Հիմա կը մտածեմ: Եթէ Զարեհ Սրբազանին վճռակամութիւնը չըլլար եւ ուրիշներու պէս տատամսէինք պիտոճէի տագնապով եւ յետաճգէինք գործը, թերեւս այսօր ձեմարանին տեղ ունենայինք թենիսի դաշտ մը եւ լոգարան մը, մէջը ջուրով կամ առանց ջուրի...

Չմոռնամ ըսելու, որ քանի մը տարի ետքն էր որ Ամերիկայէն հասաւ Միհրդատ Տիգրանեանը եւ իր անունը կրող շէնքը շինեց: Բարերար Միհրդատը հայրն էր Արշակ Տիգրանեանին: Բարեգործութիւնն ալ երեւի կը հպատակի ժառանգութեան օրէնքին...

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ



ՏՕՔԹ. 3. ԳԱՍԱՊԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

«Քարէն Եփփէ Գոլեն»ի բացման աշխարհիկ հանդիսութիւններու ընթացքին, Հալէպի Թեմին Ուսումնական Խորհուրդին կողմէ խօսք առաւ նաեւ Ատենապետ Տօքթ. Յ. Գասապեան, որուն բանախօսութիւնը կու տանք ստորեւ.—

Արտաքուստ անշուք շէնքի մը մէջ է որ կը սկսինք գործի: Ի՞նչ փոյթ: Ո՞ր հայ երկրորդական վարժարանը ասկէ աւելի պերճ ու շքեղ հաստատութեան մը մէջ է սկսած գործի: Հայուն շինարար ոգին եւ ազգային գիտակցութիւնն է անհրաժեշտ: Ու ես ապահով եմ, որ շուտով պիտի կարենանք այս համեստ վարժարանին տեղ վաղը բարձրացնել արդիական կրթարան մը:

Մեր առաջադրութիւնը կը խօսի ձեզի իր բովանդակ կարեւորութեամբը: — Ազգապահպանումի մեր ամէնէն ազդու գէնքն է կրթութիւնը, մա՛նաւանդ երկրորդական ուսումը, որ նախակրթարանի սեղաններէն իրենց տարրական ծանօթու-

Թիւններով հոս մուտք գործող հայ պատանիներէն ու պատանուհիներէն պիտի պատրաստէ վաղուան հայ մայրերն ու հայրերը: Մենք պիտի աշխատինք մեր բոլոր ճիգերով՝ կանգուն պահելու այս շէնքը, երբ մանաւանդ դանիացի մեր բարեկամներու նիւթական թէ բարոյական օժանդակութիւնը ունինք մեզի հետ: Ամէն տարի, Հալէպի մեր ազգային նախակրթարաններէն հարիւրաւոր տղաք, ընթացաւարտ, կը յաճախեն օտար վարժարաններ: Ինչո՞ւ չհաւաքել զանոնք տոհմիկ դաստիարակութեան այս դարբնոցին մէջ: Ինչո՞ւ թողուլ, որ անոնց մէջ շիջի հայութեան խոր, ճշմարիտ ըմբռնումը, երբ մանաւանդ պէտք ունինք անոնց՝ վաղուան մեր կեանքի պայքարին, մեր ազգապահպանման գործին մէջ:

Քառորդ դարէ աւելի է, որ ասպնջականութիւն գտած ենք հիւրընկալ այս պետութեան գրկին մէջ: Բայց Սուրիոյ նման հարիւր հազարաւոր հայութիւն համրող հոծ կեդրոնի մը մէջ, դժբախտաբար ցարդ չունեցանք հնարաւորութիւնը երկրորդական վարժարան մը հիմնելու: Մեր միտքը լարուած մնաց միշտ այս ուղղութեամբ, եւ սակայն մեր ծրագիրները քնացան դարակներու մէջ՝ համաշխարհային երկրորդ պատերազմին պատճառաւ: Այժմ կը տրուի մեզի պատեհութիւնը ծրագիրները գործի վերածելու: Հպարտ եմ յայտարարելու յանուն Հալէպի Ուսումն. Խորհուրդին, որ մեր Ազգ. Իշխանութիւնները նախաձեռնարկ կ'ըլլան այսօր այդ բարձրագոյն կրթարանի բացումին, այն հաստատ համոզումով, որ սկսուած գործը պիտի պըսակուի փայլուն ու անկորնչելի արդիւնքով:



ՄԻՆՉԵՒ ՈՐ ԲԱՅՈՒԻՆ ԻՐԱՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԴՌՆԵՐԸ...

Ամբողջական պատեկներ ընկ. Եղուարդ Տասնապետեանի բանախօսութեան, յանուն «Քարէն Եփփէ Գոլեմ»ի Ուսուցչութեան.—

*Սիրելի հանդիսականներ,
Չափազանցութի՞ւն մը պիտի ըլլար, եթէ ըսէինք թէ հալէ-*

պահայ հանրային կեանքի մէջ նոր անկիւնադարձ մըն է որ կը բացուի, Երկրորդական Վարժարանի ձեռնարկով:

Սուրբոյ նման հայութեամբ հոծ գաղութի մը մէջ, առաջին փորձն է՝ որուն կը ձեռնարկէ Հալէպի Թեմին Ուսումն. Խորհուրդը, այն հաստատ համոզումով որ գոհացում կու տայ կենսական անհրաժեշտութեան մը:

Նախակրթութիւնը երերուն եւ անապահով ուրուագիծը միայն կը պատրաստէ հայ մարդուն, մինչ համալսարանը զայն կը մասնագիտացնէ ո՛րեւէ ճիւղի մէջ՝ կեանքի ասպարէզին համար: Հայ մարդու տիպարը կը կերտուի երկրորդական ուսման շրջանին, ուր հայ տղան ու աղջիկը կը հակին հայ լեզուի գանձարաններուն ու Հայոց Պատմութեան լուսադրուագ էջերուն վրայ, անոնցմէ առնելով իրենց վաղուան դիմագծութիւնը, հոգին, նկարագիրը: Ասով պէտք է բացատրել օտարներու փարումը երկրորդական ուսման տարածման գործին: Ինչպէս կ'ըսէի, Սուրբոյ նման հայ գաղութի մը համար, կենսական կարեւորութիւն կը ներկայացնեն երկրորդական վարժարանները, եւ Հալէպ, առնելով այս առաջին քայլը, կու տայ ազդանշանը հանրային փրկարար նախաձեռնութեան մը:

Ահա թէ ինչո՛ւ կ'ըսէի, որ այս ձեռնարկով Հալէպի հայութիւնը անկիւնադարձ մը կը բանայ իր հանրային կեանքին մէջ. ահա թէ ինչո՛ւ կ'ըսէի, որ սա հաստատութիւնը ինձի կը ներկայանայ աննախընթաց արժէքով մը, կենսական իմաստով մը: Անոր դերը տրուած չէ գլուխ հանել ո՛րեւէ այլ օրգանի, — ո՛չ մեր մամուլին, ո՛չ մեր բեմին, ո՛չ մեր այլազան միութիւններուն: Անիկա այլեւս մշակութային գործունէութեան մը առանցքն է, որուն օժանդակներն են միայն բոլոր միւսները: Եթէ անիկա գաղափարական ոստանի մը միջնաբերդն է, մնացածները արտաքին պարիսպին մեծ ու պզտիկ աշտարակներն են միայն: Հոգեկան աշխարհի մը ամրոցն է անիկա, որուն պատերէն ներս պիտի չկրնայ թափանցել պզտոր հոսանքներու շունչը, որուն ներքին մթնոլորտը միշտ պիտի պահէ իր հայեցի մաքրութիւնը: Եթէ կ'ուզէք, դարբնո՛ց մըն է ան, ուր — բանաստեղծին բառերով — հայոց պատմութեան ոգիները իրենց երգը պիտի դարբնեն մատղաշ սրտերու սալին վրայ: Եթէ կ'ուզէք, արուեստանոց մը, ուր արուեստագէտ դաստիարակին կռանին տակ ինկած ոգեղէն նիւթերը պիտի հագնին մեր պատմութեան մեծ նահատակներուն կերպարանքները: Ու, հոնկէ, մեր այդ նահատակները, մարմնական վերափոխութեամբ մը նոր սերունդին

վրայ անձնաւորուած, դուրս պիտի նետուին անոր դերը տարածելու համար չորս պատերէն դուրս՝ մեր հանրային կեանքին վրայ, որպէսզի հոն գաղափարի նոր հերկեր, լոյսի նոր աղօսներ բացուին:

Անշուշտ դիւրին չէ կանգուն պահել այսքան համապարփակ ձեռնարկ մը, որ կը կարօտի անհուն գոհողութիւններու, — նիւթական թէ բարոյական: Բայց ես կը հաւատամ՝ թէ դանիացի մեծագի ու ազնուական զաւակներու կողքին, հալէպահայութիւնը եւս պիտի ձեռք կարկառէ նուիրական այս գործին: Մենք, որ այնքան անվերապահ կերպով օժանդակեցինք Սասունցի Դաւիթի, Կօշիկի Հանգանակութեան եւ Ներգաղթի Փոնտի նախաձեռնութիւններուն, կը գտնուինք դէմ յանդիման շատ աւելի փրկարար ու կենսական նախաձեռնութեան մը: Շրնորհապարտ ենք անշուշտ, որ Եփիէներու բարեխնամ ձեռքը հովանի կը տարածէ ուսման կարօտ խոստմնալից հայ պատանի-պատանուհիներու գլխուն վրայ: Բայց կը կարծեմ, թէ ժամանակն է, որպէսզի շատ աւելի մեծ ինքնագիտակցութեամբ մը, հալէպահայութիւնը բոլորով ալ ձեռնարկին շուրջ, կանգուն պահելու համար հայ կրթական շէնքը:

Հայրենակիցներ, անփոխարինելի դերի մը համար մեր ձեռքերով կանգնուած սա հաստատութիւնը պիտի չփլչի այլեւս: Սա պահուն բառերը ինձմէ կու գան մեր բոլորին անունով, սա պահուն ես կ'ապրիմ ներքին տրամաբանութիւնը Հալէպի հայութեան, կը զգամ վճռակամութիւնը անոնց՝ շէնքը միշտ ոտքի վրայ պահելու: Ու այս հաւատքին պրիսմակէն ես կը նայիմ սա շէնքին հիւղակային տեսքին, անիկա արդէն իսկ ինձի կ'երեւի իր վաղուան ամբողջ փարթամութեամբը պատկառելի: Դիտեցէ՛ք զայն, այս հաւատքին — ձե՛ր հաւատքին — պրիսմակէն ու անիկա ձեզի պիտի երեւի իր ներքին իսկութեան բոլոր ձեւերովը: Անիկա պիտի ըլլայ մշակոյթի տաճար մը, որուն կամարներուն շքեղութիւնը կը հանգչի ուսերուն վրայ աստուածակերպ մարդասիւններու՝ Սահակներու եւ Մեսրոպներու: Անիկա ձեզի պիտի երեւի անհուն սկիհի մը պէս, ուրկէ մեր նահատակներուն մարմինը պիտի բաշխուի նոր սերունդի մարդերուն, բայց որուն պարունակութիւնը պիտի չսպառի երբեք, ինչպէս բաժակինը Քրիստոսի պատարագին: Անիկա ձեզի պիտի ներկայանայ իբրեւ սի՛րտը ցեղին, ուրկէ անհամար երակներով մեր սրբազան մեռելներուն պայծառ արիւնը պիտի նետուի նոր

մարդերու հոգեկան անօթին: Սա շէ՛նքը, — հայոց պատմութիւն կոչուած արիւնոտ պատարագին խորա՛նն է անիկա:

Թող ուրեմն չկքի անոր առաստաղը, թող չփլչին անոր պատերը, թող չիյնան անոր դռները: Որքան ատեն որ մեր աշխարհագրական հայրենիքէն ներս, անոր զաւակները կը հալածուին իրենց պատմութեան դէպքերն ու դերը «իտէալականացուցած» ըլլալու մեղքով, որքան ատեն որ հայ մարդիկ կը բանադրուին իրենց պատմութեան ոսկեդարը յարգած ըլլալուն համար, որքան ատեն որ կը պարտադրուի «մարքսիստական» ակնոցներով դիտել մեր պատմութեան դէմքերն ու դէպքերը, թող կանգո՛ւն մնայ այս շէնքը:

Բայց թող կքի՛ անոր առաստաղը, թող փլչի՛ն անոր որմերը, թող իյնա՛ն անոր դռները, երբ բացուին մեր առջեւ իրաւ հայրենիքի մը դռները:



ԱՌԱՋՆՈՐԴ ԶԱՐԵՅ ՍՐԲԱԶԱՆԻ
ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ՔԱՐՈՉԸ ՆՈՐ ԳԻՒՂԻ ՄԷՁ,
ՕՐ. ՔԱՐԷՆ ԵՓՓԷԻ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Ահաւասիկ ամբողջական պատեմէնը այն հայաշունչ ֆարոգին, գոր խօսեցաւ Զարեհ Սրբազան, 26 Հոկտեմբերի Կիրակին, Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ, հայասէր մեծ բարերարուհի Օրիորդ Քարէն Եփփէի հոգեհանգստեան պատարագին.—

Բովանդակ քրիստոնեայ եկեղեցին, ու մասնաւորաբար հա՛յ եկեղեցին, կը տօնախմբեն այսօր յիշատակը պատմական մեծ դէպքի մը, որուն ականատես կ'ըլլար քրիստոնեայ աշխարհը, Յ. Ք. 327 թուականին:

Քրիստոսի խաչելութենէն վերջ, անոր եւ իր վարդապետութեան հակառակորդներու միա՛կ նպատակը եղաւ կորստեան դատապարտել բոլոր այն նիւթական փաստերը, որոնք կրնային Աստուածորդւոյն ու իր գաղափարական առաքելութեան հաւատարիմ ժողովրդեան համար սրբազան առարկաներ դառնալ: Ծիշդ այս պատճառաւ ալ, շղթայազերծուած պայքարը յանգե-

ցաւ ի վերջոյ Խաչափայտի գրաւման: Հրեաներու կողմէ անծանօթ վայրի մը մէջ թաղուեցաւ ան, ու Քրիստոսի խաչելութենէն վերջ, հրեաներու համար հաշուեյարդարի ենթարկուած եղաւ անոր անձը թէ գործը:

Ք. Ե. 327 թուականին, Կոստանդիանոս թագաւորի մայրը՝ Հեղինէ, քրիստոնէական անշէջ կրակով բոցավառ, թողուց Արեւմուտքի շղանքն ու փարթամութիւնը, ու եկաւ Արեւելք, Քրիստոսի Խաչափայտը գտնելու սրբազան առաջադրութեամբ: Երկիրներ ու ծովեր կտրեց, կուրծք տուաւ բազմապիսի դժուարութիւններու, եւ լծուեցաւ Խաչափայտի փնտռտուքին: — Զո՛ւր կ'անցնէին իր բոլոր աշխատանքները:


Մինչեւ որ Յուդա անուն երբայեցիէ մը իմացաւ, թէ՛ համաձայն անոր պապերու վկայութեանց, Ս. Խաչը թաղուած է աղբիւսներու տակ, ցոյց տրուած վայրի մը մէջ:

Հեղինէ մայր թագուհի, փութացնելու համար Խաչի փրկութեան գործը, ափերով ոսկի կը թափէր խնդրոյ առարկայ աղբիւսներուն վրայ: Մինչեւ որ վերցուեցան դարերու բոլոր աղբերը, եւ կարելի եղաւ գտնել Քրիստոսի եւ իր աջին ու ձախին խաչուած երկու աւագակներու խաչափայտերը:

Կը մնար ստուգել, թէ ո՞րն է Աստուածորդւոյն Խաչափայտը:

Եւ աւանդութիւնը կը պատմէ, թէ կարելի եղաւ ճշդել նաեւ այդ, երբ երեք խաչափայտերը յաջորդաբար բերին մեռեալի մը մարմնոյն մօտ, ու անոնցմէ մէկուն շփումով՝ յարութիւն առանջեցեալը:

Գտնուած էր Քրիստոսի Խաչը:



Զարեհ Սրբազան ձեմարանի պարտեզ-շրջափակին մէջ

Հեղինէ մայր թագուհիի աշխատանքներն ու գոհողութիւնները պսակուած էին յաջողութեամբ: Քրիստոնեայ աշխարհի համար բացուած էր նոր շրջան: Բարոյական բարձրագոյն ձգտումներու, լոյսի եւ ճշմարտութեան խորհրդանիշ խաչը՝ դարձաւ, յետ այդորիկ, համաժողովրդային յարգանքի եւ պաշտամունքի առարկայ:

Հանգիստութեան եզրեր կան Հեղինէ մայր թագուհիի եւ հայասէր Օրիորդ Քարէն Եփփէի գործերուն միջեւ: Ձեզմէ շատեր ծանօթացած են անձին թէ գործին դանիացի այդ մեծ կնոջ, որ թողուց Արեւմուտքի իր շքեղ ապրանքները, հարստութիւնն ու ընտանեկան շրջանակը, եւ եկաւ Արեւելք, փրկութեան ձեռք կարկառելու համար հալածական հայ ժողովուրդի հազարաւոր զաւակներուն: Ան իմացած էր, թէ հայ անունով ցեղ մը եւ հալածուած ժողովուրդ մը գոյութիւն ունի Արեւելքի մէջ, որ կարօտ է օգնութեան: Իմացած էր, թէ այդ ժողովուրդը խոստմանալից, ստեղծագործ մարդոց հաւաքականութիւն մըն է: Իմացած էր, թէ այդ ժողովուրդը ունէր անցեալ մը փառաւոր ու շքեղ, հին քաղաքակրթութիւն մը, ոսկեդրուագ պատմութիւն մը:

Եկաւ ան հեռաւոր Դանիայէն, մեր պատմութեան ամէնէն մոլթ օրերուն, երբ կը հալածէին մեզ բախտն ու ջարդարար թուրքը, երբ մեր բեկորները, աստանդական ու անտէր, ափ կ'առնէին ասպնջական այս երկրի դուռները, իրենց Ֆիզիքական գոյութիւնը, իրենց սրսփուն էութիւնը պատասպարելու համար: Ամբողջ երեսուն տարի, Օրիորդ Քարէն Եփփէ խառնուեցաւ մեր կեանքին, միսէն միս, ու ոսկորէն ոսկոր հա՛յ դարձաւ, շաղախուեցաւ մեր հանրային գործունէութեան, եւ օրէ օր աւելի խոր ու իրաւ ընտանութիւն մը զգաց իր եւ մեր միջեւ: Կրնամ ըսել, թէ զոհաբերեց ան իր կեանքը հայ ժողովուրդին համար, զոր կը նկատէր գերիվեր բոլոր ազգերէն, «քաղաքակրթութեան» դիմակի տակ մահ եւ սպանութիւն սփռող բոլոր ժողովուրդներէն:

Օտար ազանդի մը կը պատկանէր: Ո՛չ ոք կրնար երեւակայել, որ հարստութեան եւ փարթամութեան մէջ հասակ առած կին մը, որպիսին էր Ի՛նք, ո՛չ միայն պիտի չհետեւէր ծանօթ ազանդաւորներու միսիոնարական ուղեգծին՝ նիւթով շլացնելու համար ճակատագրէն հարուածեալ հայ կիներն ու մանուկները, որբերն ու անպատասպարները, այլեւ Լուսաւորչական եկեղեցիի զաւակ պիտի դառնար իր կարգին, փափաք յայտնելով որ Հայ

Առաքելական Եկեղեցիի ծէսով ամփոփուի իր մարմինը՝ իր յաւիտենական հանգստարանին մէջ:

Ու եղաւ այդպէս: Օրիորդ Քարէն Եփփէ եկաւ Դանիայէն Հալէպի անապատները, խառնուեցաւ բախտազուրկ հայութեան բեկորներուն, ու անոնց Ֆիզիքական թէ բարոյական գոյութեան համար գոհաբերեց իր կեանքը, մինչեւ վերջին շունչ: — Սրտի թագուհի մըն էր, որուն յիշատակը յաւերժացնելու համար մենք պիտի չգոհանանք տարուէ տարի հոգեհանգստեան պատարագի մը մատուցումով: Պիտի ուզենք, որ ան խառնուի հալէպահայութեան եւ հայ ժողովուրդի պատմութեան, կեանքին, յաւիտենապէս, դառնալով խորհրդանիշ մը սրտի եւ մտքի ազնուութեան, հոգեկան եւ բարոյական սկզբունքներու:

Այսօր, այս եկեղեցւոյ մերձ երբեմնի այրիանոցի դաշտին վրայ, մենք կը կատարենք բացումը «Քարէն Եփփէ Գոլեմ»ին: Երբեմնի որբախնամ հաստատութեան հողերուն վրայ, Հալէպի Ազգ. Իշխանութիւնները հիմը կը նետեն Երկրորդ. Վարժարանի մը: Զեզի ծանօթ է, թէ հալէպահայութիւնը ցարդ անգլիական, ամերիկեան եւ ֆրանսական բարձրագոյն կրթարաններ կը զըրկէր իր զաւակները, միջնակարգ ուսում տալու համար անոնց: Այդ հաստատութիւնները անշուշտ իրենց դերը կը կատարեն լրջութեամբ, ուսումնական երիտասարդներ, գիտական դէմքեր, մաթեմատիկոսներ եւ բժիշկներ կը պատրաստեն: Բայց չեն պատրաստեր ճշմարիտ եւ գիտակից հայ հանրային մարդը, որուն այնքա՛ն պէտք ունի այսօր գաղթահայութիւնը, ազգային իր գոյութիւնը անաղարտ ու ապահով պահելու համար հազարումէկ յորձանքներու, փոթորիկներու դէմ: Հայ ծնողներու վերայ կը ծանրանայ պարտականութիւնը գիտակցելու այն անփոխարինելի դերին, զոր կոչուած է կատարելու ՀԱՅ ԵՐԿՐՈՐԴ-ԴԱԿԱՆ ՎԱՐժԱՐԱՆ ՄԸ, վաղուան հայ մայրերն ու հայրերը պատրաստելու համար: Մենք կ'աշխատինք, մենք կը սպառենք մեր Ֆիզիքական էութիւնը՝ կեանքի մեր սահմանափակ բոլորակին վրայ: Օր մըն ալ կ'ենթարկուինք անխուսափելիին: Մեր գործը շարունակողներու պէտք ունինք, հանրային մեր կեանքը պէտք ունի նոր օժանդակներու, նոր սիւներու, նոր անհատականութիւններու, որոնք գիտակցին իրենց դերին, ազգապահպանութեան մեծ դատին:

Ուրախ եմ յայտարարելու, որ փրկարար այս նախաձեռնութեան մէջ ապահոված ենք օժանդակութիւնը ողբացեալ Օրիորդ

Քարէն Եփփէի ընտանեկան պարագաներուն, որոնք, իրենց կարգին՝ լծուած են տենդագին աշխատանքի, Դանիոյ մէջ, ապահովելու համար դանիացի ժողովուրդի նիւթական ու բարոյական լայն աջակցութիւնը: Վարժարանիս ընդարձակ հողը եւ ներկայիս գոյութիւն ունեցող միայարկ շէնքերը շուտով պաշտօնապէս կը փոխանցուին Ազգ. Առաջնորդարանիս: Յուսով ենք, որ շուտով ի վիճակի պիտի ըլլանք աւետելու, նաեւ, արդիական վարժարանի մը հիմնարկութեան լուրը: Քանի մը ամիս առաջ, հանգուցեալ Քարէն Եփփէի ներկայացուցիչներուն եւ մեր միջեւ տեղի ունեցած խօսակցութիւնները ապահով գրաւականներ են, տեսակ մը մուրհակ, որոնց ուժով մենք պիտի յաջողինք երկրորդական տիպար վարժարան մը ունենալ երբեմնի տխուր այրիանոցին տեղ: Խոստացուած է մեզի ամէն աջակցութիւն, նիւթական թէ բարոյական: Պիտի ունենանք դանիացի ուսուցչապետեր, արդիական ու կատարեալ աշխատանոցներ, քիմիական թէ գիտական ամէն կարգի փորձերու համար: Պիտի ունենանք, մէկ բառով, տիպար ձեւարան մը:

Եւ կը յուսամ, եւ կը կարծեմ, թէ այս նախաձեռնութեան պսակումով, նախախնամական դեր մը կատարած կ'ըլլանք հաւաքաբար:

Զարեհ Սրբազան վերջացուց իր քարոզը հրապարակային շնորհակալութիւն յայտնելով սուրիական բարեխնամ կառավարութեան, որ հայ կրթական գործի զարգացման կ'աջակցի նիւթական թէ բարոյական բոլոր կարելի օժանդակութիւններով: Յանուն սուրիահայութեան յայտնեց թէ երախտապարտ է հայ համայնքը երկրի ղեկավարութեան, ու արեւշատութիւն մաղթեց պետական աւագանիին:

ՊԱՏԱՐԱԳԷՆ ՎԵՐՋ

Հոգեհանգստեան պատարագէն վերջ, տեղի ունեցաւ բացումը Քարէն Եփփէ Գոլեճին:

Ձեմարանի բացման հաղիսութիւններէն վերջ, Ազգ. Իշխանութեանց ներկայացուցիչներ, Գոլեճի աշակերտութիւնը եւ ուսուցչութիւնը ուղղուեցաւ Ազգ. գերեզմանոց, ուր ծաղկեպսակ մը զետեղուեցաւ մեծ բարերարուհիի դամբարանին վրայ:

Այս այցելութենէն վերջ, Նոր Գիւղի Թաղական Խորհուրդին կողմէ հոգեհաշ մը տրուեցաւ Պր. Յ. Զագրեանի բնակա-

րանին մեջ, նախագահութեամբ Առաջնորդ Զարեհ Սրբազանի, եւ ի ներկայութեան Ազգ. Իշխանութեանց ներկայացուցիչներուն:

ՀՈԳԵՃԱՇ՝ ԱՅՐԻԱՆՈՑԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Քարէն Եփփէ հաստատութեան ներկայացուցիչ Պր. Կարշիկի կողմէ յատկացուած էր ոչխար մը, որուն զենումը կատարուեցաւ նախագահութեամբ Զարեհ Սրբազանի: Մորթուած ոչխարը յատկացուեցաւ այրիանոցի այրիներուն, որպէս հոգեմաշ, ողբացեալ մեծ հայասէր-բարեբարուհի Քարէն Եփփէի յիշատակին:



*Ճեմարանի Հիմնադրութեան առթիւ ոչխարի զենումը:
Հալէպի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Զարեհ Եպիսկ. Փայասլեան (կեդրոնը),
իր աջ կողմի քահանան՝ Տէր Աստուածատուր Քէնյ. Գասապեան,
Տէր Հայրին աջ կողմը միայն զլուխս կ'երեւի,
աւելի աջ՝ եկեղեցւոյ դպիր Խորէն Յակոբեան
(ապագային Թորգոմ Քէնյ. Յակոբեան),
անոր քովը՝ Գէորգ Սէրայտարեան (ապագային Քառասուն
Մանկանց Եկեղեցւոյ դպրապետ):
Առաջնորդ Սրբազանին ձախ կողմը՝ Տոքթ. Յ. Գասապեան,
անոր ետեւը՝ Տէր Կորիւն Քէնյ. Աղաճանեան,
Սրբազանին ձախ կողմը 4-րդ անձը՝ Պր. Կարշիկ (տանիմարքացի):*



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ»

Աւելի համապարփակ ու արդար հաստատում կարելի էէր ընել, կշռելու համար արժէքը փրկարար այն նախաձեռնութեան, որ ծրագրային իր փուլերէն անցած ու դարձած է, արդէն, գո՛րծ. «միս ու ոսկոր», ինչպէս պիտի ըսէր ժողովրդական իմաստութիւնը:

«Քարէն Եփփէ Գոլեմ»ի այն համեստ տնակը, որ երբեմնի «սուգ»աւանին վրայ կը բարձրանայ այսօր՝ իրրեւ լոյսի եւ խնդութեան սիւն մը, իր ներքին զարկով սի՛րտն է ցեղին, — ինչպէս այլաբանօրէն կը նկարէր օրուան բանախօսներէն Ընկ. Եղ. Տասնապետեան:

Կը պակսէր մեզի այդ տրոփումը, հակառակ անոր որ տարիներուն հետ կը դառնայինք ականատես ու լուռ վկայ՝ նախակրթարաններէ ընթացաւարտ հազարաւոր հայ պատանիներու եւ պատանուհիներու կորստեան, դէպի օտար երկրորդական վարժարաններ: Պայմանները միշտ դաժան եղան, ամէն անգամ որ ծրագիրն ու առաջադրութիւնները եկան սեղան: Նիւթական անկարելիութիւններ՝ մէկ կողմէ, շէնքի թէ միջոցներու չգոյութիւն՝ միւս կողմէ, մի՛շտ անկարելի դարձուցին մտածումը փոխել գործի, եւ, ինչպէս դիտել կու տար Պատ. Ուսումն. Խորհրդոյ Ատենապետ Տօթթ. Յ. Գասապեան, ճեմարանի մը համար պատրաստուած բոլոր ուսումնական ծրագիրները «կը քնանային» Առաջնորդարանի դարակներուն մէջ:

Անշուշտ արդիական եւ շքեղաշուք շէնքի մը մէջ չէ որ կը սկսինք, այժմ, աշխատանքի: Բայց չենք ալ գտնուիր երբեմնի ջլատիչ պայմաններուն տակ: Ընդարձակ հող մը դրուած է Ազգ. Իշխանութիւններու տրամադրութեան տակ, խոստումներ տրը-

ուած են՝ նիւթական թէ բարոյական օժանդակութիւններու, եւ, ինչ որ կենսականն է, հալէպահայութեան ստուար զանգուածներուն մօտ արթնցած է երկրորդական ուսման հանդէպ բարենշան շահագրգռութիւն մը: — «Բարձրագոյն կրթութեան ի՞նչ հարկ: Թող երթայ արհեստ սորվի»: Ա՛յս էր մտայնութիւնը՝ երէկ: Բայց տարիները բա՛ն մը փոխեցին. մասնաւորաբար մեր ներքին կեանքը դաստիարակիչ պայմաններու մէջ թաւալեցաւ, զգացինք հաւաքաբար՝ թէ Հայ Եկեղեցիէն, Հայ Գիրէն ու գիծէն, Հայ Վարժարանէն աւելի ամուր կռուան չունինք հայրենիքէն դուրս, ու հարկ է գուրգուրալ ինքնապաշտպանութեան այդ երեք զէնքերուն վրայ, որոնք «ապաւէն եւ յոյս կենաց են՝ Աւետարանին իսկ բնորոշումով: Հիմա տարբեր կը խօսին հայ մայրն ու հայ մարդը: — «Ես կորսուեք եմ. բան մը չկրցայ ըլլալ: Թերեւս տղաս մարդ ըլլայ: Թող երկրորդականն ալ աւարտէ, տեսնեմք»:

Եթէ մինչեւ այսօր չունեցանք Հալէպի Ազգ. Երկրորդական Վարժարանը, ժողովուրդը ոչինչով է մեղադրելի: Աղքատ եւ տնանկ էր ան, ու ձեռք մը անհրաժեշտ էր՝ զինք վեր բարձրացրնելու համար հողէն: — Դէպի լոյս: Այդ թիկունքն է որ ապահոված են այսօր Ուսումն. Խորհուրդ եւ Ազգ. Իշխանութիւններ, մէկ կողմէ դանիացի մեծ բարերարուհիի անմիջական պարագաներու նիւթական թէ բարոյական օժանդակութեան խոստումով, ու, միւս կողմէ՝ այն անխառն ապահովութեամբ՝ թէ Հալէպի եւ գաղութներու մէջ պիտի գտնուին մարդիկ, անհատ թէ կազմակերպութիւններ, որոնք պիտի ուզեն անշէջ պահել լոյսի այս նոր վառարանը:

Մենք վստահ ենք, օրինակ, թէ Մ. Նահանգներու մեր հայրենակիցները, որոնք ամէն առթիւ կը հասնին Սփիւռքի թէ հայրենիքի բազմապիսի կարիքներուն, որոնք միշտ պատրաստ են հիւանդին ցաւը ամոքելու եւ թշուառին անձկութիւնները փարատելու, պիտի չզլանան իրենց անվերապահ աջակցութիւնը Հալէպի Հայ Ճեմարանին: Ողորմութիւն չէ որ կ'ակնկալենք. այլ կ'արձանագրենք մեր խոր համոզումը՝ թէ հեռաւոր Ամերիկայի մէջ մարդիկ շատ աւելի լաւ կը գնահատեն երկրորդական վարժարանի մը կենսական անհրաժեշտութիւնը՝ Հալէպի նման հայութեամբ հոծ քաղաքի մը մէջ: Լիբանան, իր 60.000ի հայ բազմութեամբ, կանգուն կը պահէ լոյսի ուրիշ կեդրոն մը՝ Պէյրութի Հայ Ճեմարանը, որուն կը պարտինք այսօր Սուրիա-Լի-

բանանի հայ ուսուցչութեան մեծագոյն բաժինը: Ինչո՞ւ Սուրբիոյ 100.000\$ աւելի հայ բազմութիւնները եւս չունենան իրենց Հայ ձեւարանը՝ Հալէպի մէջ, ուր հարիւրաւոր տղաք կը կորսուին ամէն տարի, մեր հանրային կեանքին հետ խզելով ամէն կապ: Յեղին սրտին հետ խզելով ամէն հաղորդութիւն: Մենք գիտենք, թէ Մ. Նահանգներու եւ Հարաւ. Ամերիկայի մեր ազգ. կազմակերպութիւնները որքա՞ն կը գուրգուրան այս գաղութին վրայ. մանաւանդ ինչքա՞ն մեծ խանդավառութեամբ կը հետեւին մեր մշակութային ձեռնարկներուն: Այս ապահովութիւնը, ահաւասիկ, կը մղէ մեզ հաւատալու, թէ պիտի չուշանայ այդ խոր շահագրգռութեան նիւթական փաստը, շօշափելի վկայութիւնը:

Անշուշտ ամէն բան պիտի չակնկալենք օտարէն կամ հայ գաղութներէ: Հալէպահայութեան վրայ կը ծանրանայ մեծագոյն պարտականութիւնը՝ բոլորուելու գերազանցապէս ազգային այս գործին շուրջ, տեւաբար արիւն տալու ցեղին սրտին, որպէսզի կանոնաւոր ու բնականոն դառնայ անոր զարկը, ամէն մէկ տրոփի հետ արիւն տալու համար մեր հանրային կեանքին:

Մենք պիտի բաղձայինք, նոյնիսկ, որ մեր հայրենակիցները, Սուրիա, Լիբանան թէ այլուր, իրենց ուրախութեան, վշտի կամ խնդակցութեան վայրկեաններուն՝ յիշէին Հալէպի Հայ ձեւարանը, եւ իրենց նիւթական նուէրներով զօրավիգ կանգնէին կրթական այս մեծ գործին: «Փոնտ»երու առատութիւն մը ողողած է հրապարակը. Հալէպի Հայ ձեւարանն էր որ խորթ գաւակ պիտի նկատուէր: Ամէն մէկը իր դերը ունի մեր հանրային կեանքին մէջ, եւ մարդիկ սխալ խորհած պիտի ըլլային, եթէ թերագնահատէին իրենց չնչին նուիրատուութիւններու մեծ կարեւորութիւնը:

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
Խմբագիր

«Արեւելք» օրաթերթ
Բ. տարի, քիւ 114 (421)



ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հալէպի Ազգային Քարէն Եփփէ Դեմարանին Գոյառումը «ԱՅՐԻԱՆՈՑ»Ը՝ ՈՐ ԼՈՒՄՈՅ ՏԱՃԱՐ ԴԱՐՁԱԻ

Հալէպն ու Հալէպահայր իրենց ուրոյն պատմութիւնը ունին անշուշտ: Առաջինը պարունակն է, — ենթահոգով, իր դարերու պատմութեամբ եւ աւանդութիւններով:

Երկրորդը՝ այդ պարունակին մէջ ապրող հայութիւնն է, իր երկու թեւերով, անոնք որ Մեծ Եղեռնէն առաջ արդէն իսկ տուն-տեղ եղած են հոն, Օսմանեան կայսրութեան հալածանքներէն մագապուրծ, եւ անոնք որ Եղեռնի աղէտէն փրկուած՝ իրենց նոր բոյները շինած են, վերապրումի վճռակամութեամբ:

1944ին, երբ Պոլսէն կ'անցնէինք Հալէպ, 50 հազարէն աւելի հայեր կ'ապրէին Սուրիոյ 27 գօտիներուն մէջ (քաղաքներ եւ գաւառային գօտիներ) իրենց 41 վարժարաններով եւ 6550 աշակերտ-աշակերտուհիներով: Հարուստ էր մեր ժողովուրդը իր նոր բոյնին մէջ: Մեծամասնութիւն կը կազմէին միջակորեար եւ աղքատ դասերը: Բայց, եթէ ժողովուրդի գնահատութեան չափանիշը ազգային ինքնագիտակցութեան, գոյատեւումի եւ մշակութային զարգացման ոգին ու համապատասխան նուիրումն է՝ Հալէպահայութիւնը — յարաբերաբար ենթահոգային, ընկերային, աշխատանքային եւ տնտեսական պայմաններու — վերապրումի իր կամքին եւ ազգային արժանաւորութեան ձգտումին մէջ գաղութային մեր իրականութեան ամէնէն կենսունակ գօտիներէն մէկը պէտք էր նկատել:

1944էն առաջ ու մինչեւ 1960, Միջին Արեւելեան եւ Պալէստինեան հինգ հայաշատ երկիրներու մէջ ապրած եմ, ամիսներու եւ տարիներու տեւողութեամբ: Անոնք, բոլորն ալ, թուականային այդ շրջաններուն անհամեմատօրէն բարօր պայմաններու մէջ ապրած են, սփիւռքեան մեր կեանքի կենսունակ երկիրներն ու քաղաքները, ազգային-ընկերային-մշակութային-կենցաղային իրենց մակարդակով առողջ գօտիները եղած են: Հալէպը չեմ կրնար բազդատել անոնց հետ, բայց կրնամ ըսել որ հայուն աւանդութիւնները, բարոյական իմացումները, ընտանեկան բարքերը, ազգային արժէքներու հանդէպ յարգանքն ու նուիրումի տրամադրութիւնը զինք ինքնուրոյն գօտիի մը կը վերածեն: Հայկական գաւառին շունչը, միջնորոտը, պարզին

գեղեցկուժիւնը, խոնարհամտութեան եւ անձնուիրումի ամէնօրեայ յօժարակամութիւնը՝ զայն ինքնատիպ ու սրտամօտիկ կը դարձնեն:

1944-1946, հազիւ երկու տարուան համարկումի մեր շրջանը բոլորելէ ետք կենսունակ այս գաւառին մէջ, մեր անմիջական շրջապատին եւ յատկապէս կրթական-մշակութային մարզերու հետ շփումով կը հաստատէինք, որ շրջանի ազգային ժողովներուն ու մարմիններուն, առհասարակ ուսումնական-դաստիարակչական եւ մշակութային գործօններու համար առաջնահերթ նպատակադրում դարձած է հայ երկրորդական վարժարանի մը հաստատումը, — նախաձեռնութիւն՝ որ կը թելադրուէր «արիւն չկորսնցնելու» մտահոգութենէն: Նախակրթարանային դաստիարակութիւնը նախապատրաստական բաժինն է հայեցի կրթութեան. երբ չի յաջորդեր միջնակարգ կրթութիւնը՝ հինգ-վեց տարիներու ընթացքին մանուկին կամ պատանիին փոխանցուած նախատարերքը կրնայ «մաշիլ».

նոյնիսկ չքանալ:

Թուականային այդ շրջանի մեր քառասուն նախակրթարաններէն ընթացաւարտ աշակերտութեան առնուազն մէկ չորրորդը կը դիմէր ամերիկեան, Ֆրանսական եւ այլ օտար վարժարաններ եւ կամ Պէյրութի ձեմարանը: Իրողութիւն մը, որ աներկրորդելի կը դարձնէր հայ երկրորդական վարժարանի մը բացումը՝ շրջանի Ազգային Առաջնորդարանին, անոր ժողովներուն ու մարմիններուն հակակշռին տակ:

1944ի ամրան ու աշնան շրջանին, երբ Հալէպ կը հասնէինք, մտածումէն դէպի գործ քայլեր կ'առնուին արդէն՝ Զարեհ Եպիսկոպոսի, շրջանի Ուսումնական Խորհուրդին, Ազգային Իշխանութեան եւ յարակից բոլոր գործօններուն նախաձեռնութեամբ, որոնց կողքին նաե՛լ մեր բոլոր կազմակերպութիւնները: Ձեմարանի մը հաստատման առաջադրանքը եւ անոր յարակից աշխատանքներն ու ծրագրումները կը համադրուէին անշուշտ իրաւասու եւ ի գօրու Ուսումնական Խորհուրդի եւ Ազգային Վարչութեան հակակշռին տակ, բայց նախաձեռնութեան առարկայացումը կը կարօտէր ընդհանուր գորակոչի մը՝ ամէն բանէ առաջ իրատեսօրէն կշռելու անհրաժեշտ շէնքի մը նիւթական ապահովութեան յատուկ կարելիութիւնները:

Եթէ պատմութեան համար պէտք է արձանագրել գոնէ քանի մը անուն, իբրեւ յառաջապահներու ձեմարանի հաստատ-

ման նախաձեռնութեան մէջ, պիտի յիշատակենք, նախ, բոլորանուէր իրենց գործունէութեամբ մտածումը եւ տեսիլքը գործի վերածող չորս անուններ, — Հալէպի Առաջնորդ Զարեհ Եպիսկոպոս, շրջանի Ազգային Վարչութեան եւ Ուսումնական Խորհուրդի անդամներ Հրաչ Փափազեան, բժիշկ Յակոբ Գասապեան եւ Անդրանիկ Ծառուկեան:

Եւ որովհետեւ չորս հոգիներու նախաձեռնութեան եւ յառաջապահութեան իրագործումը կրնար անհետեւանք մնացած ըլլալ առանց այդ չորս անուններուն շուրջ բոլորանուէր գործող տասնամեակներով ժողովական դէմքերու, կազմակերպական գործօններու մէջ դրական անձնաւորութիւններու, այլ թէ կին ինքնանուէր աջակիցներու եւ ժողովրդային լայն խաւերու զոհաբերական ոգիին՝ պիտի հաստատենք առանց դոյզն իսկ վարանումի, որ ձեմարանը կ'առարկայանար հալէպահայութեան եւ իրենց ձեռնտու ժողովրդային լայն խաւերու անվերապահ նուիրումով, ազգային ինքնագիտակցութեան ոգիով, ինչպէս միշտ՝ հայ ժողովուրդի բոլոր պատմական իրագործումներուն մէջ:

Պատմութեան հանդէպ պատասխանատուութեան իմացումը կը հարկադրէ նաեւ արձանագրել, որ ձեմարանի մը հաստատման մտածումը կամ տեսիլքը գործի վերածուած տեսնելու շարժումը կրնար երազ ու բաղձանք մնացած ըլլալ, եթէ դանիացի հայապաշտը, ՕՐ. ՔԱՐԷՆ ԵՓՓԷ (որուն անունով այսօր իր 45րդ տարեդարձը կը բոլորէ այդ փրկարար հաստատութիւնը), յետ Եղեռնեան կեանքի սկզբնական դրուագներուն մէջ այդ տնակները եւ հողամասը յատկացուցած չըլլար մեր ժողովուրդին, իբրեւ պատսպարանի մը՝ այրիացած հայ կիներու համար:

Հոն, ուր յետ Եղեռնեան հալէպահայ կեանքի վերածնութեան լոյսը կը պլպլար երբեմնի դժբախտներու եւ «մնացորդաց» ի պատսպարաններուն մէջ՝ այսօր եւ քսանհինգ տարիներէ ի վեր հայ ժողովուրդի վերապրումի պայքարին յաղթանակն է որ կը ծածանի, ձեմարանական սերունդներուն նուաճումներով եւ դերակատարութեամբ՝ մերօրեայ հայ կեանքի ուսումնական, մշակութային եւ հանրային կեանքի մարզերուն մէջ:

Անցեալի «այրիանոց»ը լուսոյ տաճար է դարձած...:

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

«Հայրեցիկ»

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՐԻՓՈԼԻԻ ՄԷՁ

Փետրուարեան փառապանծ ապստամբութեան 38-րդ տարեդարձի տօնակատարութիւնը, ստուար բազմութեան մը ներկայութեան, տեղի ունեցաւ Կիրակի, 22 Փետրուար 1959, կէսօրէ վերջ ժամը 3-ին, «Նաւասարդ» Ակումբի սրահին մէջ:

Այս տօնակատարութեան նախագահելու հրաւիրուած էր Փետրուարեան Ապստամբութեան ղեկավար ղէմքերէն՝ ընկ. Կարօ Սասունի, իսկ բանախօսելու՝ ընկ. Մինաս Թէօլէօլեան:

Օրուան նախագահը իր բացման խօսքին մէջ ի միջի այլոց ըսաւ.—

«Փետրուարեան Ապստամբութիւնը պատմական իրադարձութիւն մըն է, Հայաստանի հողին վրայ՝ հայ ժողովուրդի գերագոյն մէկ ճիգով: Այդ տօնը կը պատկանի ամբողջ հայութեան, մանաւանդ նոր սերունդին:

«Այսօր, Փետր. 18-ի գաղափարը վառ կը մնայ Սփիւռքի եւ Հայաստանի մէջ: Հայ ժողովուրդը հաւատարիմ կը մնայ իր անկախութեան գաղափարին»:

Հոս, օրուան նախագահը հպանցիկ պատմականը ըրաւ Փետր. 18-ի նախորդող ղէպքերուն եւ մատնանշեց.—

«Հայաստանի խորհրդայնացումէն վերջ, բոլշեւիկները զրօքեցին իրենց խոստումը եւ վայրագօրէն ջարդեցին եւ բնատարկեցին հայ մտաւորականութիւնը եւ ղեկավարութիւնը: Կողոպտեցին հայ գիւղացիները եւ անշնչելի մթնոլորտ մը ըստեղծեցին Հայաստանի մէջ:

«Ամբողջ ժողովուրդ մը ոտքի ելաւ՝ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեան տակ: Քանի որ մահը կայ, լաւ է պատուաւոր մեռնիլ, քան՝ անպատիւ ապրիլ:

«Ի՞նչ կ'ուզէր հայ ժողովուրդը: Անոնք գիտէին, թէ ապրստամբութիւնը պարտութեամբ պիտի վերջանար, սակայն ցոյց տուին, որ իրենք ալ հոգի ունին: Թէ երբե՛ք չեն մոռնար իրենց անկախութիւնը:

«Փետր. 18-ով, հայ ժողովուրդը աւելի լաւ կ'ըմբռնէր թէ ի՞նչ է անկախութիւնը:

«Երբ հայ ժողովուրդը կը ճակատէր Սարդարապատ եւ Ղարաքիլիսայի ճակատներուն վրայ՝ չէր գիտեր թէ ինչ է անկախութիւնը, սեփական բանակը, դրօշակը: Բայց երկուքուկէս տարուան անկախութենէն վերջ, երբ ճաշակած էր այդ քաղցրութիւնները, չէր կրնար դիւրութեամբ հրաժարիլ անոնցմէ:

«Փետր. 18-ի նախօրեակին, Դաշնակցականը, Սոցեալ Դեմոկրատը, Սոցեալ Յեղափոխականը եւ Ռամկավարը, բոլորը մէկ ճակատ կազմեցին՝ խորտակելու համար ստրկութեան շղթան: Համաձայն էր նաեւ՝ էջմիածնայ Կաթողիկոսը:

«Այս ապստամբութենէն վերջ, ես տեսայ հայ ժողովուրդը, որ Քաջազնունիի ղեկավարութեամբ արտասուալից աչքերով Հայկ. Եռագոյնը կը համբուրէր, որ կրկին հրապարակներուն վրայ կը ծածանէր»:

Նախագահի բացման խօսքէն վերջ, Օր. Սօսի Բալեան ապրումով եւ գեղեցիկ առողջանութեամբ արտասանեց Գրիգոր Վարդգէսի Փետր. 18-ին նուիրուած «Հոն» քերթուածը:

Իսկ Տիկ. Երանուհի Ուղուրլեան իր գեղեցիկ ձայնով երգեց «Արագ»ը:

Ընկ. Սասունին հրաւիրեց օրուան բանախօսը, որ ամբողջ 45 վայրկեան խօսեցաւ Փետր. 18-ի հերոսական ապստամբութեան շուրջ՝ սրահի ստուար բազմութիւնը մագնիսացնելով: Կու տանք ընկ. Թէօլէօլեանի բանախօսութեան ամփոփումը.—

«Օրուան նախագահը շատ հպանցիկ անցաւ Փետր. 18-ը ղեկավարող դէմքերու վրայէն, որովհետեւ Դաշնակցական մարդը անձի պաշտամունքին դէմ է: Ան այդպէս շարժեցաւ, քանի որ իր մասին խօսիլ պէտք պիտի ըլլար: Ան ապստամբութեան ղեկավար դէմքերէն մէկն է:

«Հայ նոր սերունդը ամբողջական գաղափար չունի Փետր. 18-ի մասին եւ զայն ներկայացնելու համար՝ հարկ է նաեւ ներկայացնել ապստամբութիւնը կանխող դէմքերը: Նոր սերունդը առանձին չէ որ կը տօնէ Փետրուարեան Ապստամբութիւնը, 200 միլիոն հաշուող Միացեալ Նահանգները հրապարակաւ կը յայտարարեն եւ կ'իւրացնեն այդ գաղափարը, հայ ժողովուրդի փառքի եւ հերոսութեան այդ թուականը, Անկախութեան գաղափարը եւ զայն պահպանելու գիտակցութիւնը:

«ՄԱԿ-ի արխիւներուն մէջ արձանագրուած է հայ ժողովուրդի բռնկումը եւ ապստամբութիւնը բոլշեւիկեան բռնակալութեան դէմ: Հայ ժողովուրդը առաջինն է, որ ապստամբու-

Թեան դրօշ պարզած է սովետական իշխանութեան դէմ: Այս կէտն է, որ կ'ուզենք հոս մատնանշել»:

Յարգելի բանախօսը հոս պատմականը ըրաւ Փետր. 18-ը կանխող դէպքերուն եւ շեշտեց Փետրուարեան Ապստամբութեան դրդապատճառները: Ապա աւելցուց.—

«Այսօր ժողովուրդի մէկ հատուածը կ'ընտան իր կրաւորական բազմութիւն մը դարձած է: Անոնք սապէս կը մտածեն. եթէ կարելի չէ հզօր եւ մեծ պետութեան մը դէմ պայքարելով կամ կռուելով անկախութիւն ձեռք բերել, պէտք է երթալ, ծունկի գալ եւ անոր ձեռքը համբուրել: Սակայն մենք կ'ըսենք. հզօրին ստրուկ չենք դառնար: Եթէ այդ հոգեբանութիւնը տեղ գրաւած ըլլար մեր պապերուն մօտ, մենք այսօր ո՛չ Վարդանանց եւ ո՛չ Մայիս 28 ունեցած կ'ըլլայինք: Մեր բոլոր պարտութիւնները եւ զոհողութիւնները մենք յաղթանակ կը նկատենք եւ կը տօնենք այդ գիտակցութեամբ: Եւ այդ գիտակցութեամբ է, որ հայ ժողովուրդը Հայաստանի եւ Սփիւռքի մէջ կ'ապրի եւ կը ստեղծագործէ, երբ բազմամիլիոն ժողովուրդներ քարտէսէն ջնջուած են: Այդ ոգին էր, որ կերտեց Մայիս 28-ը եւ Փետր. 18-ը եւ պատրաստ է կերտելու նոր թուականներ Հայաստանի մէջ, ամէն մէկ հայ այդ ոգիով կ'ապրի: Իսկ եթէ հայ եռագոյնը այսօր չի փողփողիր, օր մը պիտի փողփողի կրկին:

«Անկախութեան ոգին չի մեռնիր հայ ժողովուրդի սրտին մէջ, նոյնիսկ եթէ ան ապրի ստրկութեան մէջ: 1937-ի մտաւորականութեան աքսորը եւ ջարդը այդ կ'ապացուցանէ: Համայնավար բանաստեղծ Եղիշէ Չարենցի մէկ քերթուածը կը հրատարակուէր Երեւանի մէջ, որ ունէր իր գաղտնիքը որ էր.— «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ոյժի մէջն է»:

«Իսկ Աղասի Խանճեան, որ սպաննուեցաւ Բերիայ կողմէ, օր մը, այդ շրջանի Հայաստանի կրթական նախարար Դրաստամատ Սիմոնեանին կ'ըսէր.— «Մի օր կը գայ, որ այս իշխանութիւնը կը տապալի, սակայն հայ ժողովուրդի մէջ միակ ոյժը Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ կրնայ ձեռք առնել իշխանութիւնը եւ ղեկավարել երկիրը»:

Սիւսանթոյի «Գաղափարին» քերթուածը արտասանեց Օր. Սեդա Թերճանեանը, մեծապէս յուզելով ներկաները:


Տիկ. Երանուհի Ուղուրլեան երգեց «Տես ինչ վարար ջուր եկաւ»:

Փակման խօսքը ըրաւ օրուան նախագահը եւ տօնակատարութիւնը վերջ գտաւ «Մշակ Բանուոր»ով:

Տօնակատարութենէն վերջ, տեղի ունեցաւ ընտանեկան խրախճանք. ստուար բազմութիւն մը փութացած էր գրաւելու սեղանները:

Տեղի ունեցան անակնկալներ, երգ, արտասանութիւն եւ տեւեց մինչեւ ժամը 12:

Շնորհաւորելի է հանդէսի եւ խրախճանքի կազմակերպութիւնը, որ յիշատակելի պիտի մնայ:



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԹՐԻՓՈԼԻԻ ՄԷՁ

Հ. Մ. Ը. Մ.-ի ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Շաբաթ, 13 Յունիս 1959, երեկոյեան ժամը 9-էն սկսեալ, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի կազմկերպած պարահանդէսը, Թրիփոլիի Պանդոկ Հաքիմի ընդարձակ սրահներուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-ի հաշուին յաջողութիւն մը արձանագրեց Հ.Մ.Ը.Մ.-ի պարահանդէսը, որուն ներկայ էր հայերէ եւ տեղացիներէ բաղկացեալ կոկիկ բազմութիւն մը:

Պարահանդէսը ստեղծեց ոգեւորիչ եւ մտերմիկ մթնոլորտ, տեղի ունեցան նաեւ անակնկալներ: Չէր քէզի պարով մեծ խանդավառութիւն ստեղծեց եղբ. Լեւոն Թաքաճեան:

Կը շնորհաւորենք պարահանդէսը կազմակերպող յանձնախումբը:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Դանիէլ Վարուժանի մասին դասախօսութիւն մը տեղի ունեցաւ Կիրակի, 21 Յունիս 1959, կէսօրէ վերջ ժամը 4-ին, Թրիփոլիի «Նաւասարդ» Ակումբին մէջ, կազմակերպուած Ակումբի լսարանական յանձնախումբին կողմէ:

Խօսեցաւ ընկ. Գրիգոր Հոթոյեան, որ 45 վայրկեան տեւող իր դասախօսութեամբ ներկայացուց անմահն Դանիէլ Վարուժանի կեանքն ու գործը:

Դանիէլ Վարուժանի քերթուածներէն արտասանեցին Օր. Յասմիկ Կոնճեան՝ «Զօն»ը, Օր. Թագուհի Թաւեան՝ «Կարօտի նամակ»ը, Օր. Արսինէ Նարկիզեան՝ «Պատուէր»ը, Օր. Սեդա Մարգարեան՝ «Յան»ը, Օր. Սոնա Պայրամեան՝ «Առկայծ ճրարագ»ը:

Կը շնորհաւորենք Լսարանական Յանձնախումբը եւ կը թելադրենք, որ յաճախ կազմակերպուին մշակութային նման հաւաքոյթներ:

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԸ

Նուպարեան Ազգ. Վարժարանի ամառային հանդէսը (նախակրթարան եւ մանկապարտէզ) տեղի ունեցաւ Կիրակի, 28

Յուլիս 1959, կէսօրէ ետք ժամը 5-ին, իտալացուց վարժարանի սրահին մէջ:

Հանդէսին բացումը կատարեց տնօրէն՝ ընկ. Սեդրակ Աֆարեան եւ կարդաց իր տեղեկագիրը:

Ապա տեղի ունեցան արտասանութիւններ, մեներգներ, հայկական պարեր եւ տրամախօսութիւն, մանկապարտէզի կողմէ, ինչպէս նաեւ խմբերգներ, արտասանութիւններ (հայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն), նախակրթարանի կողմէ:

Թաղականութեան ատենապետ Պր. Շահպազ Մելիքեան կարդաց վարժարանի հաշուական տեղեկագիրը:

Այս առիթով, թաղականութեան ատենապետը աւետեց, որ 15 օրէն Ազգ. Վարժարանի կառուցումը պիտի սկսի՝ իր սեփական հողին վրայ:

Ապա, տեղի ունեցաւ վկայականաց բաշխման հանդէսը: Նախակրթարանէն շրջանաւարտ եղան 4 աշակերտներ՝ Ռիթա Շամլեան, Սալբի Թաւլեան, Շուշան Քիւրքճեան եւ Հայկ Եսփոնճեան, իսկ մանկապարտէզէն՝ 10 աշակերտներ (վեց մանչ եւ չորս աղջիկ):

1957-58 տարեշրջանի շրջանաւարտները եւս վկայական ստացան այս հանդէսին, նկատելով որ անցեալ տարուան ծանօթ դէպքերու բերումով չէին ստացած: Անոնք են՝ Տիգրան Պայրամեան, Տիրան Խարմանտայեան, Վահէ Գոլյումճեան, Սարգիս Շաննաքեան, Վահէ Երէցեան, Ազատ Տիշոյեան եւ Անի Կարապետեան:

Թրիփոլիի հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Պարգեւ ՔՏ. Լաբաշեան՝ քանի մը խօսք ուղղեց ծնողներուն՝ օրուան նախագահի հանգամանքով, եւ շեշտեց հայ նոր սերունդի հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութիւնը:

Շրջանաւարտներու կողմէ հրաժեշտի խօսքը կարդաց Օր. Ռիթա Շամլեան: Ապա վարժարանի տնօրէնը տուաւ իր հուսկ բանքը:

Այս առիթով տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն մը, որ կազմակերպուած էր թաղականութեան կողմէ:

Կը շնորհաւորենք վարժարանի տնօրէնութիւնը եւ ուսուցչական կազմը, մանաւանդ մանկապարտիզպանուհի Օր. Ռոզա Շամմասեանը՝ մեզի ներկայացուած յաջող հանդէսին համար:

«Ազդակ» օրաթերթ, 1959

**ԵՐԳԵՀՈՆԱՅԻՆ
ԲԱՅԱՌԻԿ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՁ
ԴՊՐԵՎԱՆՔԻ 75-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ**

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Խաթակ Սրբ. Արք. Յակոբեանի, Հինգշաբթի, 28 Յուլիս 2005, երեկոյեան ժամը 8:30-ին, «Տիր Փարք Եոնայթըտ Չըրչ» եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ խողովակաւոր երգեհոնային (Pipe Organ) բացառիկ նուագահանդէս մը, նուիրուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Զարեհեան» Դպրեվանքի 75-ամեակին, որուն ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց Բաժանմունքի Վարիչ-Քարտուղար Գերշ. Տէր Նարեկ Սրբազան Եպիսկոպոս Ալեքսէմէզեան, Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերյարգելի Տէր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան, Գէմպրիճի Ս. Նշան Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Կոմիտաս Քհնյ. Փանոսեան, պաշտօնական հիւրեր եւ շուրջ 1.500 հայ եկեղեցական երաժշտութեան հանդէպ յատուկ սէր եւ պաշտամունք ունեցող ազգայիններ եւ օտար երաժշտասէրներ:

Երգեհոնահարն էր Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը: Հայր Սուրբը Կաթողիկոսարանի Դպրեվանքը աւարտելէ ետք, իր ուսումը շարունակած է Մ. Նահանգներու մէջ:

Հայր Սուրբը, ըստ իրեն, համեստ նուագահանդէսը ձօնած էր իր հոգեւոր հօր՝ Երանաշնորհ Տէր Զարեհ Սրբ. Արք. Ազնաւորեանին, «որուն շնորհիւ կրցած եմ ըլլալ ինչ որ եմ, եթէ եմ», արձանագրելով օրուան յայտագրին առաջին մասին սկիզբը:

Նուագահանդէսին բացման խօսքով հանդէս եկան Պրն. Գառնիկ Պուճուքեան (հայերէն), Օր. Թամար Փիլաւճեան (անգլերէն) եւ Պրն. Գրիգոր Աստուրեան (արաբերէն) ի պատիւ Լիբանանի եւ Սուրիոյ դեսպանատուներու ներկայացուցիչներուն:

Կազմակերպիչ յանձնախումբի ներկայացուցիչներէն Պրն. Գառնիկ Պուճուքեան, իր բացման խօսքով, ի միջի այլոց ըսաւ. —

«Մեծ հպարտութեամբ եւ ուրախութեամբ այսօր հաւաքուած եմք միասնաբար վայելելու Աստուծոյ շնորհքները, այս անգամ սակայն, երաժշտութեան նամբով:

Երաժշտութիւնը ազնուագոյն եւ ամէնէն մաքուր ճանապարհն է մարդը Աստուծոյ կապող: Անոր համար ալ, այսօր, երաժշտութեամբ պիտի բացուինք Աստուծոյ, Անոր հետ խօսելու եւ մեր անփակտելի կապը ամրացնելու:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 75-ամեակին նուիրուած այս նուագահանդէսին առիթով, յանուն կազմակերպիչ յանձնախումբին, անհուն երախտագիտութեամբ շնորհակալութիւն կը յայտնենք Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տէր Խաժակ Ս. Արք. Յակոբեանին եւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան, եւ բոլոր անոնց, որոնք գործօն աջակցութեամբ եւ նիւթական նուիրատուութեամբ օգնեցին նուագահանդէսի նպատակի յաջողութեան»:

Խոր լռութեան մէջ, նուագահանդէսը սկսաւ «Տէրունական Աղօթք»-ի նուագով (երաժշտութիւն՝ աւանդական, մշակում եւ դաշնաւորում՝ Կոմիտաս Վարդապետ), որուն յաջորդեց «Խորհուրդ խորին» շարականի նուագը (խօսք եւ երաժշտութիւն՝ Խաչատուր Տարօնցի, մշակում եւ դաշնաւորում՝ Կոմիտաս Վարդապետ):

Նուագուեցաւ «Հրաշափառ» շարականը (խօսք եւ երաժշտութիւն՝ Մովսէս Խորենացի, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան), որուն յաջորդեց «Թագաւոր Երկնաւոր» շարականի նուագը (խօսք եւ երաժշտութիւն՝ Խաչատուր Տարօնցի, մշակում եւ դաշնաւորում՝ Կոմիտաս Վարդապետ):

Այնուհետեւ, հերթականօրէն նուագուեցաւ «Սիրտ իմ սասանի» հոգեւոր երգը (խօսք եւ երաժշտութիւն՝ Մխիթար Այրիվանցի, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան):

«Յարեաւ Աստուած հրաշապէս» (խօսք եւ երաժշտութիւն՝ անանուն, մշակում եւ դաշնաւորում՝ Զարեհ Յպիսկ. Ազնաւորեան):

«Նոր Ծաղիկ» (խօսք եւ երաժշտութիւն՝ Ներսէս Շնորհալի Կաթողիկոս, մշակում եւ դաշնաւորում՝ Եղուարդ Յակոբեան):

«Հաւուսն, հաւուսն» առաջին տարբերակ (խօսք եւ երաժշտութիւն՝ Գրիգոր Նարեկացի, մշակում եւ դաշնաւորում՝ Ռոպերթ Աթայեան, երկրորդ տարբերակը մշակուած Եղուարդ Յակոբեանի կողմէ):

«Խնկի ծառին» (խօսք եւ երաժշտութիւն՝ անանուն, մշակում եւ դաշնաւորում՝ Եղուարդ Յակոբեան):

«Դարձ անձն իմ» ձօնուած Հայր Մեղրիկի հոգեւոր հօր՝ Տէր Զարեհ Ս. Արք. Ազնաւորեանին, (խօսք՝ Դաւիթ թագաւոր (Քրիստոսէ առաջ 1010-970, Սաղմոս 116.1-4, երաժշտութիւն՝ անանուն հեղինակ, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան):

«Ով է որպէս» (խօսք՝ Ս. Պատարագ, երաժշտութիւն՝ անյայտ հեղինակ, մշակում եւ դաշնաւորում՝ Կոմիտաս Վարդապետ):

«Սուրբ, Սուրբ» (խօսք՝ Ս. Պատարագ, Եսայի Մարգարէ, Քրիստոսէ առաջ 740-681, երաժշտութիւն՝ անյայտ հեղինակ, մշակում եւ դաշնաւորում՝ Կոմիտաս Վարդապետ):

«Յամենայնի» (երաժշտ.՝ անյայտ հեղինակ, մշակում եւ դաշնաւորում՝ Կոմիտաս Վարդապետ):

«Հոգի Աստուծոյ» (երաժշտութիւն՝ Սահակ Զորափորեցի Կաթողիկոս, մշակում եւ դաշնաւորում՝ Վարդան Սարգիսեան):

«Տէր, ողորմեա՛» (խօսք՝ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոս, երաժշտութիւն՝ աւանդական, մշակում եւ դաշնաւորում՝ Կոմիտաս Վարդապետ):

«Օրհնութիւն Սրբոյ Երրորդութեանն» Ա. եւ Բ. տարբերակները իրարու ընդելուզուած, (խօսք՝ Սուրբ Պատարագ, երաժշտութիւն՝ անյայտ հեղինակ, մշակում եւ դաշնաւորում՝ Մակար Եկմալեան):

«Ի ննջմանէդ արքայական» («Զօն՝ բոլոր անոնց, որոնք աղօթեցին ինձի համար, բայց հիմա չկան»՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, խօսք եւ երաժշտութիւն՝ Պաղտասար Դպիր, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան):

«Կոռնկ» (Հայր Սուրբը ձօնած է վաղամեռիկ եղբօրը՝ Միսաք Բարիքեանին, խօսք եւ երաժշտութիւն՝ աւանդական, մշակում եւ դաշնաւորում՝ Կոմիտաս Վարդապետ, երգեհոնային պատշաճեցում՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան):

Յայտագրի աւարտին, ներկայ ժողովուրդը յոտնկայս,

*խանդավառ ծափահարութիւններով իր գնահատանքը յայտնեց
Հայր Սուրբին:*

Հայր Սուրբը, կարգ մը շարականներու եւ մեղեդիներու ընկերացաւ երգեցողութեամբ, իսկ պարմանուհի Նաթալի Սորֆազլեան, հայկական տարազ հագած, իւրաքանչիւր կտորի աւարտին կը կարդար զանազան աղօթքներ, Սաղմոսներ եւ քերթուածներ:

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Խաժակ Ս. Արք. Յակոբեանի խօսքը կարդաց Գէմպրիճի Ս. Նշան Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Կոմիտաս ՔՀՆյ. Փանոսեան, անհանգստութեան պատճառով Սրբազանին անձամբ նուագահանդէսին չկարենալ գտնուելուն պատճառով:

Սրբազանը ի միջի այլոց կ'ըսէր.—

«Դպրեվանքի 75-ամեակին նուիրուած իր Հայրապետական Սրբատառ Կոնդակին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս յստակ ցանկութիւն կը յայտնէր հաստատել հիմնադրամ մը, ապահովելու համար Դպրեվանքի յառաջիկայ տարիներու առողջ եւ արդիւնալից գործունէութիւնը եւ այժմէական պայմաններու համապատասխանաբար՝ անոր առաքելութեան արդիականացումը:

Արդարեւ, անցնող 75 տարիներու ընթացքին, Կաթողիկոսարանը անփոխարինելի ներդրում ունեցած է սփիւռֆահայ մեր գաղութներու ազգային, հոգեւոր ու կրթական մարզերու մատակարարման եւ նուիրեալ ծառայողներու պատրաստութեան մէջ: Այսօր, ամէն ժամանակէ աւելի կարիքը կը զգացուի Դպրեվանքին առաքելութեան աշխուժացման եւ հզօրացման:

Այս մտահոգութիւններուն եւ ակնկալութեանց որպէս դոյզն, բայց սրտագին օժանդակութիւն՝ Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ու հոգաբարձութիւնը կազմակերպած են խողովակաերգեհոնի (Pipe Organ) նուագահանդէս մը՝ կատարողութեամբ շրջանի հոգեւոր հովիւ Գերապատիւ Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիֆեանին:

Թէեւ աւելորդ կը գտնեմ սիրելի Հայր Սուրբը ծանօթացրնելու կարիքը, սակայն, իրբեւ երէց եղբայր եւ գործակից, ուրախութեամբ կրնամ վկայել, որ Հայր Սուրբը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սրտագինս նուիրուած, շնորհաշատ ու եռանդարորբ, հոգեւորականի ընտիր հակումներով ու պայ-

ծառ գործունեութեամբ յատկանշուած միաբաններէն մէկն է, այլ խօսքով՝ Դպրեվանքի առաքելութեան եւ գործունեութեան հարազատ արտացոլումը: Իր բազմաթիւ կարողութիւններուն կարգին, Գերապատիւ Հայր Սուրբը կատարելագործուած պատրաստուածութեամբ երաժշտագէտ է եւ վստահ ենք, որ այս նուագահանդէսով ան պիտի արտայայտէ իր տաղանդին մէկ նոր երեսը:

Ինչպէս ծանօթ էք, սոյն ելոյթին գոյացած մուտքը ամբողջութեամբ պիտի տրամադրուի Դպրեվանքի հիմնադրամին»:

Իր սրտի խօսքով Հանդէս եկաւ Գերաշնորհ Տէր Նարեկ Ս. Եպիսկոպոս Ալեքէմէզեան, եւ անդրադառնալէ ետք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Վեհափառ Հայրապետին՝ Արամ Ա.-ի Սրբատառ Կոնդակին, 2005 թուականին տօնելու «Զարեհեան» Դպրեվանքի 75-ամեակը, Սրբազանը իր գոհունակութիւնը յայտնեց Հայր Մեղրիկի կողմէ ներկայացուած այս հոգեզմայլ եւ Աստուածահաճոյ երգահանդէսին համար, որուն նպատակը Հայ Եկեղեցւոյ շարականները եւ մեղեդիները հայ ժողովուրդին փոխանցել էր խողովակաւոր երգեհոնի նուագներով: Ապա դրուատեց այս առթիւ կատարուած նուիրատուութիւններու հաւաքման աշխատանքը:

Սրբազանը իր շնորհաւորութիւնները յայտնեց Հայր Մեղրիկին, Եկեղեցւոյ հոգաբարձութեան, կազմակերպիչ յանձնախումբին եւ բոլոր անոնց, որոնք օժանդակեցին այս բացառիկ նուագահանդէսի յաջողութեան:

Խօսք առաւ նաեւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Տիար Սարգիս Ղազարեան, որ ի միջի այլոց ըսաւ.՝

«Այսօր, դուք ներկայ եղաք եւ վայելեցիք իր տեսակին մէջ յատուկ եւ եզակի այս նուագահանդէսը, որ կազմակերպուած էր Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ եւ կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Գանատայի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տէր Խաժակ Ս. Արք. Յակոբեանի...:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.-ի Հայրապետական Կոնդակին ընդառաջելով, Եկեղեցւոյս հոգաբարձութիւնը, Դպրեվանքի հիմնադրութեան 75-ամեակին առթիւ ստեղծուած հիմնադրամին իր մասնակցութիւնը կը բերէ այս անդրանիկ ձեռնարկով, որուն հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի Դպրեվանքի հիմնադրամին»:

Այնուհետեւ, Տիրար Ղազարեան հոգաբարձութեան անու-
նով շնորհակալութիւն յայտնեց եկեղեցւոյս հոգեւոր հովիւին:

Շնորհակալութիւն յայտնեց Գերաշնորհ Տէր Նարեկ Ս. Ե-
պիսկոպոս Ալեէմէզգեանին, իր ներկայութեան եւ սրտի խորագ-
գաց խօսքերուն համար:

Շնորհակալութիւն յայտնեց նաեւ ձեռնարկը կազմակեր-
պող յանձնախումբին եւ օրուան յայտագիրը պարունակող
գրքոյկի տպագրութեան մեկենասներ Սազօ, Կրէկ եւ Մարիա
Հարմանտայեաններուն, ինչպէս նաեւ ներկայ ժողովուրդին,
որոնք հակառակ հեղձուցիչ տաքին, երկու ժամէ աւելի լրջու-
թեամբ հետեւած էին նուագահանդէսին:

Խօսք առաւ նաեւ եկեղեցւոյ հովիւը եւ իր խորին շնորհա-
կալութիւնները յայտնեց ներկայ ժողովուրդին, որոնք քաջալե-
րեցին այս հոգեշէն ձեռնարկը՝ իրենց ներկայութեամբ եւ նուր-
բատուութիւններով:

Ժողովուրդի ծափերուն ներքեւ, Հայր Սուրբը պատուըուե-
ցաւ ծաղկեփունջերով:

Կրկին, Հայր Սուրբին կողմէ նուագուած եւ ժողովուրդի
երգեցողութեան ընկերակցութեամբ «Հայր Մեր» (խօսք՝ Յի-
սուս Քրիստոս, երաժշտութիւն՝ աւանդական, մշակում եւ դաշ-
նաւորում՝ Մակար Եկմալեանի) աղօթքէն ետք, նուագահան-
դէսը փակուեցաւ ներկաներուն կողմէ երգուած «Կիլիկիա»-ով
(խօսք՝ Նահապետ Ռուսինեան, երաժշտութիւն՝ Մակար Եկմալ-
եան՝ աւանդական, մշակում եւ դաշնաւորում՝ Զարեհ Ս. Արք.
Ազնաւորեան եւ երգեհոնային պատշաճեցում՝ Մեղրիկ Ծ. Վրդ.
Բարիքեան):

Սոյն նուագահանդէսը երկար տարիներ պիտի մնայ Թո-
րոնթոյի հայ գաղութի յիշողութեան եւ գիտակցութեան մէջ,
որպէս եկեղեցական եւ կրօնական զարթօնքի արտայայտու-
թիւն եւ հաւատքի ու նուիրումի պանծացում:

Տեղին է յիշել, որ սոյն ձեռնարկին գոյացաւ ութսունվեց
հազար ութը տոյար եւ տասնեւինը սէնթ (\$86.008,19), որուն
հաշուական ընդհանուր պարտաւորութիւնը ստանձնած էր
յանձնախումբի անդամներէն Մարալ Գրիգորեանը:

Շնորհակալութիւն նաեւ բոլոր անոնց, որոնք ոչ մէկ ձեռ-
խնայեցին յաջողցնելու համար սոյն նուագահանդէսը:

Վարձքերնիդ կատար՛ել եւ հազար ապրի՛ք:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Խաթակ Ս. Արք. Յակոբեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 75-ամեակին եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսի գահակալութեան եւ օծման 10-ամեակին առիթով, Ուրբաթ, 29 Յուլիս 2005, երեկոյեան ժամը 8:30-ին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ՝ ԱՆԹԻԼԻԱՍ, ԱՄԱՅՈՒԹԵՆԷ՝ ԱՌԱՔԵԼՈՒԹԻԿՆ, ՈՐԲԱՆՈՅԷ՝ ԴՊՐԱՆՈՑ եւ ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ բովանդակութեամբ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 1930-ական թուականներէն սկսեալ կեանքը եւ առաքելութիւնը պատկերացնող նկարներու ցուցահանդէսը, որուն ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց Բաժանմունքի Վարիչ-Քարտուղար Գերաշնորհ Տէր Նարեկ Ս. Եպիսկոպոս Ալեքսեան, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւր եւ հոծ թիւով ազգայիններ:

Սոյն եզակի ցուցահանդէսի նախագահութիւնը սիրով ստանձնած էր Ս. Աստուածածին Եկեղեցւոյ բազմավաստակ Աւագ Սարկաւազ, դպրեվանքի Բարեշնորհ Մանուէլ Աւագ Սարկաւազ Շէհիրեանը:

Ցուցադրուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արուեստագէտ պատկերահան Մարգար Թումայեանի շուրջ 150 լուսանկարները:

Ցուցահանդէսի բացումը կատարեց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւր:

Իսոյք առաւ Գերշ. Տէր Նարեկ Ս. Եպիսկոպոս Ալեքսեան, որ իր խօսքով անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Կիլիկիոյ մայրաքաղաք Սիս փոխադրութենէն մինչեւ մեր օրերը, ընդգծելով 1930-ին Սահակ Կաթողիկոսին կողմէ հաստատուած Դպրեվանքին 75 տարիներու անցած ուղին եւ կատարած

ազգաշէն առաքելութիւնը, ազգին տալով հոգեւորականներ, դպրապետներ, ուսուցիչներ, մտաւորականներ եւ ազգային գործիչներ:

Սրբազանը այս առիթով արտայայտուեցաւ Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակին, ուր կ'առաջարկուէր Դպրեվանքի 75-ամեակին առիթով հիմնադրամ մը ստեղծել, Դպրեվանքի ապագայ գործունէութեան զօրացման եւ Դպրեվանքի բարգաւաճման համար:

Սրբազանը իր գնահատական խօսքը ուղղեց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան, որոնք անհուն նուիրումով յաջողեցան Թորոնթոյի մէջ պատշաճօրէն տօնել Դպրեվանքի 75-ամեակը եւ Վեհափառ Հայրապետի գահակալութեան եւ օծման 10-ամեակը:

Սօսք առաւ նաեւ ցուցահանդէսի նախագահ Բարեշնորհ Մանուէլ Աւագ Սարկաւագ Շէհիրեան եւ իր շնորհակալութիւնները յայտնեց Հայր Սուրբին եւ հոգաբարձութեան՝ իրեն տրուած այս պատիւին համար:

Ան անդրադարձաւ Դպրեվանքի իր աշակերտութեան եւ անկէ ստացած դաստիարակութեան, որ զինք մղած է ծառայելու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մանկութեան տարիներէն մինչեւ այսօր, աւելի քան 60 տարիներ, խոստանալով շարունակել իր ծառայութիւնը՝ քանի կ'ապրի եւ կը գործէ:

Ներկայ ժողովուրդը դիտելով Կաթողիկոսարանի եւ Վեհափառի սքանչելի նկարները, խորապէս ազդուած եւ գնահատելով լուսանկարիչ Պրն. Մարգար Թումայեանի արուեստը, շատեր գնեցին ցուցադրուած նկարներէն իրենց սրտին խօսողները:

ԴՊՐԵՎԱՆՔԻ

75-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

ՁՈՅԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը, օգտուելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց Բաժանմունքի Վարիչ-Քարտուղար Գերաշնորհ Տէր Նարեկ Ս. Եպիսկոպոս Ալեքսանդրեանի Թորոնթօ այցելութենէն, ներկայ գտնուելու համար Դպրեվանքի 75-ամեակին նուիրուած հանդիսութիւններուն, կազմակերպած էր զոյգ դասախօսութիւններ:

Առաջինը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 1 Օգոստոս 2005, երեկոյեան ժամը 7:30-ին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, նիւթ ունենալով «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը՝ 75 տարուան մարդակերտումի ծառայութեան պրիսմակէն դիտուած»:

Երկրորդը՝ երիտասարդութեան համար, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի, 1 Օգոստոս 2005, երեկոյեան ժամը 9:00-ին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, նիւթ ունենալով «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Միջ-Եկեղեցական շարժումը»:

Առաջին դասախօսութեան, որ տեւեց շուրջ մէկ ժամ, Սրբազանը իր խօսքով տուաւ պատմականը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի հաստատման, թուելով Դպրեվանքի տեսուչ սրբազաններու անունները եւ անոնց նուիրումը, պատրաստելու համար Հայ Եկեղեցւոյ ծառայող հոգեւորականներ, որոնց այնքան պէտք ունէր Հայ ժողովուրդը հայոց դէմ գործուած Յեղասպանութենէն ետք եւ այդ տարիներուն հայ եկեղեցականներու աքսորին եւ սպանութեան հետեւանքով:

Իսկ երկրորդ դասախօսութեամբ, Սրբազանը մանրամասն տեղեկութիւններ փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց Բաժանմունքի գործունէութենէն, եւ միջ-եկեղեցական կազմակերպութեան

հետապնդող նպատակներուն, կազմակերպութեան կառուց-
ուածքին եւ անդամակցութեան պայմաններուն ու վարչական
ընտրութիւններու ձեւին եւ ժամանակաշրջանին:

Զոյգ դասախօսութիւններու աւարտին եղան հարցումներ,
որոնց սպառիչ ձեւով պատասխանեց Սրբազանը:

Իսկապէս գովելի ուսումնասիրութեամբ եւ բովանդակու-
թեամբ պատրաստուած զոյգ դասախօսութիւնները, որպէս
դաստիարակիչ նիւթեր, գնահատանքով ընդունուեցան ներկա-
ներուն կողմէ:

Վարձքերնիդ կատար, Սրբազան Հայր:



ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Նախաձեռնութեամբ Թորոնթոյի «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէութեան եւ մասնակցութեամբ Հայ Կեդրոնի մէջ գործող կազմակերպութիւններու, միութիւններու եւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, Հայաստանի Մայրիսեան Անկախութեան 89-րդ տարեդարձին նուիրուած բացառիկ եւ աննախընթաց թատերական համերգը տեղի ունեցաւ Չորեքշաբթի 23, Հինգշաբթի 24, Ուրբաթ 25, Շաբաթ 26 Մայիս 2007, ժամը 4:00-ին եւ ժամը 8:30-ին, Հայ Երիտասարդական Կեդրոնի Համազգայինի թատերասրահին մէջ, որոնց ներկայ գտնուեցան պետական, պաշտօնական եւ եկեղեցական անձնաւորութիւններ ու ազգայիններ: Հինգ ելոյթներուն ներկայ գտնուեցան շուրջ 3.000 ազգայիններ:

Սոյն ձեռնարկի հասոյթը պիտի յատկացուի Հայ Դատի աշխատանքներուն, մասնաւորաբար Հայաստանի սահմանամերձ գիւղերու վերակառուցման:

Ձեռնարկներուն մուտքը ազատ ըլլալով, հրապարակուած տոմսերը շաբաթներ առաջ արդէն իսկ սպառած ըլլալով, կազմակերպիչ յանձնախումբը ստիպուեցաւ նախապէս որոշուած չորս ելոյթներուն աւելցնել ելոյթ մը եւս, Շաբաթ, 25 Մայիս, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, ի պատիւ մեր հայրենասէր ժողովուրդին: Կ'ուզենք յայտարարել, որ ժողովուրդը կատարուած ձեռնարկի նպատակներուն համար գնահատելի գումարներով մասնակցեցաւ, նուիրելով շուրջ \$150.000 տուար:

Չորեքշաբթի օրուան ելոյթը սկսաւ ժամը 8:30-ին: Ինչպէս կ'ըսեն, սրահին մէջ ասեղ նետելու տեղ չկար: Օրուան հանդիսավարներն էին Հ.Օ.Մ.-ի երկրորդական վարժարանի 12-րդ դասարանի աշակերտներ Թալին Մայրիսեան եւ Նարոտ Գապասազալ, որոնք անդրադարձան ձեռնարկի նպատակներուն, գրնահատելով ձեռնարկը պատրաստող Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Ջարեհ Ազնաւորեան» երէց եւ կրտսեր դպրաց դասերու անդամներն ու բեմ բարձրացող շուրջ 220 մեծ ու պզտիկ երգողներն ու դերասանները:

Այս առթիւ հրատարակուած էր 44 էջնոց գրքոյկ մը, ուր տեղ գտած էին «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէի եւ համերգի յանձնախումբի խօսքերը, եւ Հայր Սուրբին կողմէ պատրաստըւած հակիրճ ծանօթութիւններ՝ հայ յեղափոխական երգերու մասին:

Գրքոյկին մէջ համերգի յանձնախումբին կողմէ յիշուած էին անունները այն անձերուն եւ միութիւններուն, որոնք սիրայօժար ստանձնած էին համերգին հովանաւորութիւնը:

Երգչախումբի անդամներուն անունները՝ սոփրանօ, ալթօ, քոնթր-ալթօ, թէնոր եւ բամբ բաժանումներով տրուած էին: Ապա՝ երգերու մենակատարներու անունները:

Յեղափոխական Պետոյի դերը ստանձնած էր Յովիկ Սարկաւազ Թոզճեան, Յովիկի հարսնցուին դերը՝ Թամար Քէօշկէրեան, Պետոյին հօրը դերը՝ Յովսէփ Թունամեան, Պետոյին մօրը դերը՝ Նորա Սարգիսեան, Թամարին հօրը դերը՝ Մասիս Զաքարեան, Թամարին մօրը դերը՝ Մարալ Պէքարեան, խաչեղբօր դերը՝ Յակոբ Սարգիսեան, հարսնքոյրի դերը՝ Սալբի Պօյաճեան, Թալաաթ Փաշային դերը՝ Մկօ Զաքարեան, թուրք զինուորներու դերը՝ Յարութ Գասապեան, Գարէն Եղիազարեան, Վարանդ Թիթիզեան, Անդրանիկ Թէլեան, Լեւոն Մովսէսեան, Արմէն Պալիոզեան, Կրէկ Պէքարեան եւ Արման Սոլակեան:

Հայ ֆետայիներու դերերը ստանձնած էին Պերճ Աբրահամեան, Կարօ Արսլանեան, Սարօ Զէնեան, Արա Հասրըճեան, Տարօն Քէսկիւնեան եւ Ռաֆֆի Ֆրանքեան:

Հ.Մ.Ը.Մ.-ի մարտական արուեստի տղոց անունները, որոնք ամէն ձեռնարկի երկու հոգի չուաններով առաստաղէն վար սահեցան մեծ յաջողութեամբ՝ Հայկ Զաքարեան, Ճօ Զաարթար, Շանթ Հալլաճեան, Էնտրու Սաադի, Տիգրան Տարազճեան եւ Հրակ Քէրքէզեան:

Գէորգ Ե. Սուրէնեանց Կաթողիկոսի դերը ստանձնած էր Կարօ Սարկաւազ Սարգիսեան, Գարեգին Սրուանձտեանց Եպիսկոպոսի դերը՝ Յակոբ Կիսասարկաւազ Գասարճեան, Վարդապետներու դերը՝ Վահագ Եղոյեան եւ Փօլ Թունամեան:

Սարկաւազներու դերը՝ Ռաֆֆի Սարգիսեան եւ Անդրանիկ Տէր Պետրոսեան:

Կախեալ յեղափոխականներու դերը՝ Յարութ Գասապեան, Սարօ Զէնեան, Արա Հասրըճեան եւ Տարօն Քէսկիւնեան:

Խաչեալներու դերը՝ Ռաֆֆի Սարգիսեան եւ Ռաֆֆի Տէմիրճի:

Բեմի պատրաստութիւնը ստանձնած էին Պերճ Ղազարեան, Ժիրայր Մարգարեան, Հրաչ Տէմիրճեան, Տիգրան Տէրտէրեան, Խաչիկ Սարկաւազ Շաննազեան, Վահէ Կիսասարկաւազ Շաննազեան եւ Գօգօ Գարագաշեան:

Բեմայարդարումը ստանձնած էին Սալբի Սարգիսեան, Տիանա Պէհէսնիլեան, Պերճ Ղազարեան, Ժիրայր Մարգարեան, Էլիզ Յարութիւնեան, Հրաչ Տէմիրճեան, Գարէն Քիւփէլէան եւ Լիւսի Աւետեան:

Դիմայարդար՝ Շողիկ Մազեան:

Բեմին վրայ որոշ դեր ստանձնած էին երեխաներ Վահէ Գաբրիէլեան, Մելինա Գալթակեան, Գայիանէ Կուլտինկ, Բազէ Ղազարեան, Դուին Ղազարեան, Նանէ Ղազարեան, Գառնի Ղազարեան, Իզապէլ Յակոբեան, Շանթ Յովակիմեան եւ Ալիք Տէմիրճի:

Երաժշտական ձայնագրութիւն՝ (Studio Shant) Շանթ Սլէյման:

Երաժշտական ձայնագրութիւն թիւ 16 եւ 23 երգերու՝ (Studio Shirag) Շիրակ Թադոսեան:

Դաշնամուրով ընկերակցութիւն՝ Թալին Գըլըպոզեան:

Ջութակով ընկերակցութիւն՝ Սոնա Գալթակեան:

Կիթառով նուագակցութիւն՝ Շիրակ Թադոսեան:

Պատմողներ՝ Սիւզի Գալթակեան, Կարօ Սարկաւազ Սարգիսեան, Յովիկ Սարկաւազ Թոզճեան, Խաչիկ Սարկաւազ Շաննազեան, Վահէ Կիսասարկաւազ Շաննազեան, Արթիւր Կիսասարկաւազ Սէրգիս, Յովինէ Մնացականեան եւ Մեղեղի Մնացականեան:

Ձայնի եւ լոյսի սարքաւորում՝ Չարլզ Մքլաուտ եւ Ալեքս Մքլաուտ:

Բեմի պատասխանատու՝ Հայկ Ակոբեան:

Տարազներու պատրաստութիւն՝ Ալիս Զաքարեան, Սօսի Աթիկեան, Թորոս Թորոսեան, Անի Պէրէցեան եւ Տիանա Պէհէսնիլեան:

Համակարգչային աշխատանք եւ ծանուցում՝ Շահէ Ղազարեան:

Խօսնակներ՝ Քրիստին Գալստեան, Նարօտ Գապասազալ,

Փաթիլ Գոլանճեան, Թալին Մալիսեան, Ալեքսանդր Մքլաուս եւ Տաթեւիկ Շապոյեան:

Օրուան հանդիսավարներու խօսքերէն ետք, բեմը ներկայացուց Մոկաց գիւղի պազարը, ուր հայկական տոհմիկ տարազներով գիւղացիներ հաւաքուած էին, շատեր զիրար կը բարեւէին, կը գրկընդխառնուէին եւ գնումներ կ'ընէին:

Համերգի հեղինակը՝ Հայր Սուրբը գրած էր ձեռնարկի բովանդակութիւնը բացատրող բանաստեղծական բովանդակութեամբ եւ ազգային զգացումներով առլցուն բացատրութիւններ, որոնք կ'արտասանուէին պատմողներու կողմէ, բեմի փոփոխութիւններու եւ տեղի ունեցող տեսարաններու եւ կատարումներու շրջանին:

Այսպէս յաջորդաբար երգուեցան «Կարմիր Ֆրստան» երգը, քեսապցիներու եւ մուսա-լեռցիներու պարերգը, մենակատարներ՝ Վահէ Շաննագեան եւ Մարիա Չամիչեան, խօսք՝ Քեսապի եւ Մուսա Լեռան բազմաթիւ բարբառներով, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետի:

Մեծապէս գնահատելի էր հայկական խորանի մը բեմ բերելը՝ Աստուածածնի եւ Յիսուս Մանուկի նկարով: Իսկ պսակադիր եկեղեցականներ այնքա՛ն տպաւորիչ՝ եպիսկոպոս, վարդապետներ, սարկաւազներ կատարեցին Ս. Պսակի արարողութիւնը:

Երգուեցաւ «Խանին երգը» (Լուսին չկար), խօսք՝ ժողովրդային, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ: Բեմի լուսաւորումը կ'ընէին մոմերով՝ կարգ մը հարսնեւորներ:

Հարսնիքին երգուեցաւ «Հոյ ճանրմ ճանրմ» երգը, խօսք՝ ժողովրդային, երաժշտութիւն՝ ժողովրդային, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, մենակատարներ՝ Այլին Հերոսեան եւ Յակոբ Բորբոսեան:

Սուրբ Պսակի ընթացքին երգուեցաւ «Ուրախ լեր» շարականը, խօսք եւ երաժշտութիւն՝ Սահակ Զորափորեցի Կաթողիկոսին (7-րդ դար), դաշնաւորում՝ Զարեհ Եպիսկոպոս Ազնաւորեան:

Յանկարծ, թուրք վայրագ զինուորներու անակնկալ յարձակումով սպաննուեցան հարսը, բազմաթիւ գիւղացիներ, որոնք հարսնիքին ներկայ կը գտնուէին:

Որքան տպաւորիչ էին մեռելներուն վրայ լացողները: Ի պատիւ բեմի բոլոր դերասաններուն, կը վկայեմ, որ բոլորն ալ

իրենց դերերը յաջողութեամբ ներկայացուցին, կարծես իրական կու լային եւ կը յուզուէին:

Այդ միջոցին երգուեցան «Քահանայք» եւ «Ի վերին Երուսաղէմ» շարականները, խօսք՝ Ժամագիրք, երաժշտութիւն՝ անյայտ հեղինակ, դաշնաւորում՝ Վարդան Սարգիսեան եւ «Ողբ Ատանայի» (Կոտորածն անգութ) երգը, խօսք եւ երաժշտութիւն՝ հետեւցնելով բանաստեղծութեան իւրաքանչիւր տունի սկզբնատառերէն, կ'ենթադրուի որ հեղինակը Կարապետ անունով մէկն է, դաշնաւորում՝ Շանթ Սլէյման: Մենակատարներ՝ Այտա Աթիկեան, Տիգրանուհի Տէր Խաչատուրեան եւ Անայիս Օրջանեան:

Բեմին վրայ կը պատկերացուի թափառական Պետօն: Երգչախումբը կ'երգէ «Աքսորի երգը» (Հալածուած ենք), խօսք՝ աւանդական, երաժշտութիւն՝ ժողովրդական, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, մենակատարներ՝ Թալին Մազեան եւ Հուրի Մալճեան եւ «Ղարիպ Մշեցին» (Աղբէր) երգը, խօսք՝ Շուշանիկ Կուրղիյեան, երաժշտութիւն՝ աւանդական, որ երգեց Յովհաննէս Գրիգորեանը:

Ապա յաջորդաբար երգուեցան «Պարզիւր աղբիւր» երգը, խօսք՝ ժողովրդական, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, երգեց՝ Լենա Պէլլէրեան, եւ «Կեցցէ՛ Զէյթուն» երգը, խօսք՝ Յարութիւն Չափրեան (1844-1899), երաժշտութիւն՝ Տիգրան Չուխաճեան, դաշնաւորում՝ Մակար Եկմալեան:

«Կուունկ» երգը երգուեցաւ Լենա Պէլլէրեանի կողմէ, ջութակի ընկերակցութեամբ Սոնա Գալթակեանի, որուն յաջորդեց «Զայն մը հնչեց»ի երգեցողութիւնը, մենակատարներ՝ Կարօ Պէրէցեան եւ Շանթ Նաճարեան, խօսք՝ անյայտ հեղինակ, երաժշտութիւն՝ Մակար Եկմալեան, երաժշտական եղափոխութիւն՝ ժողովրդային, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ:

Ապա յաջորդաբար երգուեցան «Պանք Օթօման» երգը, խօսք՝ անյայտ հեղինակ, երաժշտութիւն՝ անյայտ հեղինակ, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, մենակատար՝ Վարդան Գաբրիէլեան, «Օտարութիւն» երգը, խօսք՝ ենթադրաբար Նիկոլ Աղբալեան, երաժշտութիւն՝ անյայտ հեղինակ, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, երգուեցաւ յուզումով, մենակատարներ՝ Անայիս Օրջանեան եւ Ռուբէն Պետրոսեան: Իսկ «Մարտիկի երգը» կամ «Կարօս» երգը (Թուչէի մտքով տուն), խօսք՝ Գեղամ Սարեան (1902-1976), երա-

ժըշտուլթիւն եւ դաշնաւորում՝ Աշոտ Սարեան (1906-1958), երգըւեցաւ մենակատարութեամբ Շիրակ Թադոսեանի:

«Պետոյի յիշատակին» (Գարահիսար) երգը, խօսք եւ երաժըշտուլթիւն՝ ժողովրդային, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, երգուեցաւ մենակատարութեամբ Այլին Հերոսեանի եւ Յակոբ Բորբոսեանի:

Համերգը շարունակուեցաւ «Հայ հերոսներու երգ»ով, խօսք եւ երաժըշտուլթիւն՝ ժողովրդային, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, երգուեցաւ մենակատարութեամբ Տիգրանուհի Տէր Խաչատուրեանի եւ Նուարդ Գաբրիէլեանի, որուն յաջորդեց Մուշեղ Գարագաշեանի կողմէ երգուած «Քաջ Աբոյի» երգը (Խոստան ասկեար), խօսք եւ երաժըշտուլթիւն՝ ժողովրդային, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ:

«Զինուորի մօր երգը» (Զարթիր որդեակ), խօսք՝ Պօղոս Վարդապետ Նաթանեան, երաժըշտուլթիւն՝ Մակար Եկմալեան, երաժըշտական եղափոխութիւն՝ ժողովրդային, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, երգուեցաւ Ռուպինա Քէօշկէրեանի եւ փոքրիկներ Վահէ Գաբրիէլեանի եւ Շանթ Յովակիմեանի կողմէ:

«Մենք անկեղծ զինուոր ենք» երգը, խօսք եւ երաժըշտուլթիւն՝ ժողովրդային, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, երգուեցաւ խանդավառութեամբ:

Պատմութիւնը շարունակուեցաւ «Վէրքերով լի»ով, խօսք եւ երաժըշտութիւն՝ սկզբնօրինակի հեղինակը՝ Աշուղ Ֆահրատ, մշակում եւ դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, երգեցին մենակատարներ Վարդան Գաբրիէլեանն ու Թալին Մազեանը, որմէ ետք ներկայացուեցաւ «Տըլէ եաման»ը, խօսք եւ երաժըշտութիւն՝ ժողովրդական, մշակում՝ Կոմիտաս Վրդ. Սողոմոնեան (1869-1935), դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ, մենակատար՝ Լենա Պէլլէրեան, ջութակի նուագակցութեամբ Սոնա Գալթակեանի:

Պատմութիւնը շարունակուեցաւ «Սարգարապատ»ով, խօսք՝ Պարոյր Սեւակի (1924-1972), երաժըշտութիւն՝ Էդկար Յովհաննիսեանի, որ երգուեցաւ նաեւ ժողովուրդին կողմէ, ինչպէս նաեւ «Մեր Հայրենիք»ը՝ Հայաստանի պետական օրհներգը, խօսք՝ Միքայէլ Նալպանտեանի (1820-1866), երաժըշտութիւն եւ դաշնաւորում՝ Բարսեղ Կանաչեանի (1885-1967):

Բայց համերգը շարունակուեցաւ ... «Կիլիկիա»ով, խօսք՝ Նահապետ Ռուսինեան, դաշնաւորում՝ Զարեհ Եպս. Ազնաւոր-

եան (1947-2004), երգուեցաւ խուճբին եւ ժողովուրդին կողմէ, մենակատարութեամբ Այտա Աթիկեանի:

Ապա, Յակոբ Բորբոսեան ներկայացուց «Գինի լից» երգը, խօսք եւ երաժշտութիւն՝ ժողովրդական, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ: Այս երգը մեծ խանդավառութիւն ստեղծեց, նոյն միջոցին բեմ եկած Թալաաթ Փաշային՝ Սողոմոն Թէճլիրեանի կողմէ սպանութեամբ:

Թատերական համերգը վերջ գտաւ «Արիւնոտ դրօշ» երգով, խօսք եւ երաժշտութիւն՝ ժողովրդական, դաշնաւորում՝ Մեղրիկ Ծ. Վարդապետ: Երգեցողութեան ընթացքին ժողովուրդին բաժնուեցան փոքրիկ ծաւալով եռագոյն դրօշներ:

* * *

Ուրբաթ եւ Շաբաթ, 25 եւ 26 Մայիսի ելոյթներուն ներկայ եղաւ Թալաաթ Փաշան սպաննող Սողոմոն Թէճլիրեանի որդին՝ Զաւէն Թէճլիրեան իր տիկնոջ հետ, որ յատկապէս եկած էր Միացեալ Նահանգներէն ներկայ գտնուելու համար սոյն ձեռնարկին: Արդարեւ, Շաբաթ իրիկուան վերջին ներկայացումէն ետք, չըջանիս հերթապահ Ընկ. Զօհրապ Թաթիկեան ոսկեայ զարդասեղով պատուեց յարգելի հիւրը:

Իսկ Ուրբաթ գիշեր, Ազգային Առաջնորդարանի Ազգային Վարչութեան որոշումով եւ Առաջնորդ Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի ձեռամբ, «Spirit of Armenia» շքանշանով պատուուեցաւ Գանատայի դաշնակցային կառավարութեան բազմամշակութային նախարար Ճէյսըն Քէնին, հայ ժողովուրդի մեծ բարեկամ եւ Գանատայի կառավարութեան կողմէ Հայոց Յեղասպանութեան ընդունման մեծ աշխատանք տանող պետական գործիչը:

Յարգելի նախարարը խօսք առնելով գնահատեց հայ ժողովուրդը ըսելով, որ ինք հպարտ կը զգայ «հայ ժողովուրդի բարեկամութեամբ, որովհետեւ հայ ժողովուրդը օրինակելի եւ մեծ մշակոյթի տէր ժողովուրդ մըն է, որ թէեւ իր պատմութեան ընթացքին տառապանք եւ ցեղասպանութիւն տեսած է, սակայն լուսաւոր ապագայ պիտի ունենայ անպայման: Հայ ժողովուրդը սրտիս մէջ յատուկ տեղ ունի եւ ես կը մտածեմ մականունս փոխել եւ «Քէնիեան» ընել»:

Ահաւաստիկ արագ նկարագրութիւնը մայիսեան այս թատե-

րական համերգին, որուն գաղափարը յղացած էր «Սողոմոն թէհլիրեան» Կոմիտէն: Իսկ երգչախումբը երկու ամսուան ընթացքին, գիշեր-ցերեկ աշխատանք եւ փորձեր կազմակերպելով, շուրջ 220 մեծ եւ պզտիկ դերակատարներ, երգողներ եւ օգնականներ կրցած էր հաւաքել եւ իրագործել գաղթաշխարհի մէջ չտեսնուած ելոյթներ:

Մեծապէս գնահատելի է Հայր Սուրբին եւ բոլոր մեծ ու պզտիկ երգողներուն եւ դերակատարներուն զոհաբերութիւնը եւ նուիրումը, այսպիսի սքանչելի ձեռնարկ մը յաջողցնելու համար:

Վարձքերնիդ կատար:

Փառք ու պատիւ Հայաստանի Մայիսեան Անկախութիւնը կերտած հերոսներուն:



«ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՀՈԳԻՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ

Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաժակ Ս. Արք. Յակոբեանի եւ կազմակերպութեամբ Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան, 4-30 Դեկտեմբեր 2009-ին, 18 անգամ շարունակաբար տեղի ունեցաւ «Սուրբ Ծննդեան Հոգին» երաժշտախառն թատրոնի ներկայացումը, Թորոնթոյի Հայ Երիտասարդական Կեդրոնի «Համազգային» թատերասրահին մէջ, որուն ներկայ գտնուող հայ եւ ոչ-հայ հանդիսականներ ապրեցան հոգեկան, կրօնական եւ ազգային ոգեհարազատ պահեր, որոնց մասին գրել, պատկերացնել եւ ներկայացնել պատշաճօրէն անկարելի է: Պէտք է տեսնել, քանի մը անգամ ներկայ գտնուիլ այդ կրօնաշունչ երաժշտական թատրոնի ներկայացումներուն, ըմբռնելու համար հոն կատարուող խորհուրդին պատգամն ու բխող քրիստոնէական ապրումներու իմաստը:

Արդարեւ, նման ձեռնարկ մը կազմակերպել եւ շուրջ 300 երկսեռ մանուկներ, պատանիներ, երիտասարդներ, երէցներ բեմ հանել հազիւ երկու ամսուան նախապատրաստական աշխատանքներէ եւ փորձերէ ետք, իսկապէս անհաւատալի կը թուի, մանաւանդ երաժշտութենէ եւ թատերգութենէ գաղափար ունեցող անձերու կողմէ:

Եւ որպէսզի Քրիստոսի ծնունդը պատկերացուի այդ օրերու բնակարանային կենցաղով, տեղի ունեցող եւ կատարուող երգեցողութիւններու ու այցելութիւններու կարգին բեմին վրայ տեղ գրաւած էին կենդանիներ՝ ոչխար, կով, հաւ, աքաղաղ, էջ, ուղտ, որոնք կը սողանցէին, բոլորն ալ ժամացոյցի կանոնաւորութեամբ՝ հլու-հնազանդ Յիսուսի ծննդեան աւետիսը լսող այցելուներուն:

Շուրջ 2:30 ժամ տեւողութեամբ Քրիստոսի ծննդեան եւ աստուածայատնութեան լոյսը տարածող այս սքանչելի եւ հիանալի ձեռնարկին անոնք որ ներկայ եղան, վայելեցին Քրիստոսի ծննդեան հոգեզմայլ եւ խանդավառիչ եղելութիւննե-

ըր, հրեշտակներուն երգեցողութիւնները, հովիւներու այցելութիւնները եւ երգեցողութիւնները, երեք մոգերու պաշտօնական այցելութիւնները՝ փառապանծ հանդիսութեամբ եւ դիւթականութեամբ, նաեւ հայերէն շարականներու, երգերու եւ պարերու, ինչպէս նաեւ անգլերէն, ֆրանսերէն, սպաներէն եւ արաբերէն կրօնաշունչ եւ ազգային երգերու մեկնաբանութեամբ եւ գործադրութեամբ, իսկ անոնք որ ինչ-ինչ պատճառներով չկրցան ներկայ գտնուիլ այս պատմական եւ հրաշալի ձեռնարկին, որուն նմանը տեղի չէ ունեցած սփիւռքեան իրականութեան մէջ, կորսնցուցին առիթը ըմբոշխնելու իրենց սիրտերը լուսաւորող քրիստոսաբաշխ լուսաւորումը եւ ազգային հպարտութեան զգացումը:

Յայտագրին բոլոր մասերը տպաւորիչ էին, որոնց մասին մանրամասն գրելը եւ առանձին-առանձին անդրադառնալը եւ վերլուծելը իրապէս դժուար է, նկատի առնելով որ բոլոր երգողներուն եւ պարողներուն անունները յիշատակելը կրնայ մոռացումներ ստեղծել: Սակայն, գլխաւոր երգիչներ՝ Ս. Աստուածածին եկեղեցուոյ կրտսեր դպրաց դասի ղեկավար Տիկին Լենա Պէյլէրեան եւ Ս. Աստուածածին եկեղեցուոյ նախկին դպրապետ Տիկին Այտա Աթիկեան, իրենց սքանչելի ձայնով քաղցրայորդ ապրումներ փոխանցեցին ունկնդիրներուն մօտ: Մեծապէս գրնահատելի էր դպիր Վարդան Գաբրիէլեանը, որ իր «պաս» ձայնով եւ կրօնաշունչ երգերով խանդավառեց մթնոլորտը:

Տեղի ունեցող հայկական պարեր՝ «Քոչարի» եւ «Վանթամար», պարերու ղեկավարներ՝ Խաժակ Աւագեան, Փաթիլ Տէմիրճեան եւ Շողիկ Մագեան, եւ արաբական «տապքէ» պարին երգիչն ու ղեկավարը՝ Մարսէլ Զօրեան, յաջողեցան սիրողականէն աւելի անցնելով խանդավառել ներկաները:

Կարելի է յիշել նաեւ «ճիպսի» պար պարող Անի Շիթիլեանը եւ «պալէ» պար պարող Նարինէ Մովսէսեանը: Անի Շիթիլեանը եւ Շահան Մաթոսեանը եւ Լարինէ Մովսէսեանը եւ Լեւոն Մովսէսեանը հանդէս եկան «վալս» պարով, մասնակցելով ներկայացուող խրախճանքին:

Ինչպէս ըսի, յայտագրի բոլոր մասնակցողներուն անդրադառնալ անկարելի է, սակայն, խոր գնահատանք կ'ուղղեմ բոլորին՝ վարձքերնիդ կատար, որ սիրով ստանձնեցիք ձեզի վրաստահուած դերերը եւ չձանձրացաք 18 օրերու ընթացքին:

Հոս կ'ուղեմ արդար գնահատանքով անդրադառնալ Ս.

Աստուածածին Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գե-
րապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի գործունէութեան,
որ այս ձեռնարկին պատրաստութեան համար զօրաշարժի են-
թարկեց բեմի պատրաստութեան եւ բեմական ներկայացումին
չուրջ 300 հոգի, ծրագրելով, բեմականացնելով, բոլոր երգերուն
ընդհանրապէս դաշնաւորումները եւ նուագախմբային պատ-
շաճեցումները կատարելով, դեկավարելով եւ հսկելով փորձե-
րուն, գիշեր-ցերեկ իր հանգիստը զոհելով յաջողեցաւ պատ-
ուաբեր այս ձեռնարկը շքեղօրէն յաջողցնել, ինչպէս որ անց-
եալին, նոյն գոհաբերութեամբ եւ տեսիլքով յաջողցուց «Երգե-
հոնային Նուագահանդէս»ը, 28 Յուլիս 2005-ին, «Խաղաղու-
թիւն Աշխարհի»՝ 27, 28, 29 եւ 30 Դեկտեմբեր 2006-ին, Նոր
Տարուան եւ Ս. Ծննդեան երաժշտախառն ներկայացումը,
«Մայիսեան Համերգ»ը՝ 23, 24, 25 եւ 26 Մայիս 2007-ին եւ
«Քրիստոսի Վերջին Օրերը» երաժշտական թատրոնը:

Այս գաղութին մէջ վերջին չորս տարիներուն ներկայաց-
ուած ազգային եւ կրօնաշունչ ձեռնարկները եկան փաստելու
Հայր Մեղրիկին երաժշտական, թատերական, բեմական, վար-
չական եւ տեսիլք ունեցող հոգեւորականի կարողութիւնները,
եւ այս բոլորէն ետք կ'ըսենք.—

Վարձքը կատար, սիրելի Հայր Սուրբ, Հայ Եկեղեցւոյ նը-
ւիրեալ եւ արժանաւոր եկեղեցական:

ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐԻ

*Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի Սուրբ Կոնդակով, 2011-րդ տարին հռո-
չակուած է «Հայ Մանուկի Տարի» եւ այդ Կոնդակը մեզի կը թե-
լադրէ մեր ուշադրութիւնը սեւեռել մանուկներուն վրայ, անոնց
ջամբելով հայեցի դաստիարակութիւն եւ կրթութիւն, այն խոր
համոզումով եւ գիտակցութեամբ, որ անոնք ապագային պիտի
յաջորդեն եւ երէցներու կողմէ թափուր մնացած պաշտօնները
պիտի ստանձնեն: Մանուկներուն լաւագոյն կրթութիւն տալը
նաեւ մեծ ուրախութիւն եւ գոհունակութիւն կը պատճառէ մա-
նուկներուն ծնողներուն, ապա, ազգային ղեկավարութեան,
ինչպէս նաեւ կրօնական եւ եկեղեցական հաստատութիւննե-
րուն, որոնք միշտ պէտք ունին զարգացած, հայկական տոհմիկ
սովորութիւններով սնած ղեկավարներուն:*

*Հին Կտակարանին մէջ մանուկներու դաստիարակութիւնը
կը նկատուի կարեւոր. «Կրթէ մանուկը իր նամբան սկսած
ատեն, որպէսզի իր ծերութեան ատեն անկէ չխտորի» (Առակ.
22.6):*

*Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Արամ Ա.,
«Հայ Մանուկի Տարի» յայտարարող իր Կոնդակին մէջ կ'ըսէ.—
Քրիստոս մանուկներուն ունեցած անմեղութիւնը նկատեց եր-
կրնփի արքայութիւն մուտփին նախապայման. «Զգեցէք որ մա-
նուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդ-
պիսիներուն է երկրնփի արքայութիւնը» (Մթ. 19.14):*

*Քրիստոս այնքան կարեւորեց մանուկին տեղը ընկերու-
թեան կեանքին մէջ, որ նոյնիսկ ժողովուրդին դիմաց մանուկ մը
գրկելով ըսաւ.— «Ով որ այսպիսի փոքրիկ մը իմ անունովս
ընդունի, զիս ընդունած կ'ըլլայ» (Մարկ. 9.36-37):*

*Պատմութեան ընթացքին, բոլոր եկեղեցիները իրենց մտա-
ծողութեան ու մտահոգութեան, դաստիարակութեան ու աւե-
տարանչութեան մէջ առաջնահերթ տեղ վերապահեցին մանու-
կին, զինք նկատելով եկեղեցւոյ հիմքը եւ ընկերութեան շարու-
նակութիւնը ապահովող ու ապագան երաշխաւորող հիմնական
տարրը:*

*Հայ Եկեղեցւոյ կեանքէն ներս եւս Հայ Մանուկը միշտ գը-
րաւեց կարեւոր տեղ: Մեր Եկեղեցւոյ ցուցաբերած բարձրագոյն*

աստիճանի հոգածութիւնը մանուկներու նկատմամբ, իր գործնական արտայայտութիւնը ունեցաւ յատկապէս ընկերային ծառայութեան եւ դաստիարակութեան ճամբով:

Հայ Մանուկները Հայ դպրոցին, կիրակնօրեայ դպրոցին եւ ծնողքին կողմէ ազգային եւ եկեղեցական գիտելիքներով եթէ դաստիարակուին, վստահ եղէք, որ անոնք ապագային ազգային եւ եկեղեցական իրենց ստացած դաստիարակութիւնը երբեք պիտի չմոռնան եւ իրենք եւս պիտի հետեւին իրենց ծնողներուն գծած եւ հետեւած ճամբուն, որովհետեւ մանկութեան տարիներուն ինչ որ սորված են, անոնք կը մնան իրենց յիշողութեան մէջ եւ երբեք չեն մոռցուիր: Մանաւանդ չեն մոռնար դպրոցական տարիներուն իրենց սորված երգերը եւ արտասանութիւնները եւ կիրակնօրեայ դպրոցէն սորված աղօթքները, շարականները, սաղմոսները եւ այլ եկեղեցական գիտելիքները:

Հայ Մանուկը տունը նստելով այս բոլոր գիտելիքներուն չի կրնար ծանօթանալ եւ սորվիլ: Անոր մայրը, ծնողքը, քոյրը եւ եղբայրը Հայ Մանուկը կ'առաջնորդէ եկեղեցի եւ կիրակնօրեայ դպրոց:

Ինչպէս վերը յիշեցի, Հայ Մանուկի դաստիարակութեամբ հետաքրքրուած են եկեղեցւոյ պաշտօնեաները եւ հովիւները, որոնք առիթներ կը ստեղծեն Հայ Մանուկին սորվեցնելու եկեղեցական գիտելիքներ:

Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ արժանաւոր, նուիրեալ եւ բազմաշնորհ հովիւ՝ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ հովուութիւնը ստանձնելէն ի վեր, դպրոցական տարեշրջանին ամէն Երեքշաբթի (կարելիութեան սահմանին մէջ) առաւօտեան ժամը 9:00-10:00, Ս. Եկեղեցւոյ մէջ հաւաքուած աշակերտներուն գնահատելի համբերութեամբ կը սորվեցնէ եկեղեցական աղօթքները, սաղմոսները, մաղթանքները, շարականները, ինչպէս նաեւ եկեղեցականներու աստիճանները եւ եկեղեցւոյ մէջ գործածուող եկեղեցականներու կողմէ ընդհանրապէս եւ պատարագի ընթացքին անոնց հազած զգեստներուն անունները: Այսպէս, անոնց մտքին մէջ քանդակելով իրենց մանկութեան սորված դպրոցական եւ եկեղեցական գիտելիքները:

Մեղրիկ Հայր Սուրբին աշխատանքներուն դրական մէկ

փաստը հետեւեալ մանուկն է, Հրաշք Մանուկը՝ փոքրիկն Իզապէլ Յակոբեան, զաւակը Տիգրան եւ Լենա Յակոբեաններուն, ծնած Թորոնթօ, 6 Մայիս 2005-ին:

Այս փոքրիկ աղջիկը Հայր Սուրբին եւ ծնողքին հետաքրքրութեան եւ քաջալերութեան շնորհիւ կրցած էր սորվիլ եղիշէ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» եւ Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ որդուն» քերթուածները եւ այդ քերթուածները մաքուր առողանութեամբ եւ ապրումով արտասանեց Շաբաթ, 26 Յունիս 2010-ին, ի պատիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի ի պատիւ կազմակերպուած ճաշկերոյթին, *In on the Park* պանդոկի սրահին մէջ, արժանանալով Վեհափառ Հօր գնահատանքին եւ ներկաներուն անդադրում ծափերուն:

Փոքրիկն Իզապէլ նոյն քերթուածները կրկին մեծ յաջողութեամբ արտասանեց 3 Մայիսին, «Մայրերու Օր»-ուան առթիւ, եկեղեցւոյ «Յովնանեան» Սրահին մէջ, արժանանալով ներկաներուն գնահատանքին եւ զարմանքին:

**

Այս տարի, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, 21-24 Փետրուար 2011-ին, հիւրընկալեց Ղեւոնդեանց Քահանայից Համագումար, մասնակցութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերու եւ Գանատայի Թեմի հոգեւորականաց դասուն:

Սոյն հանդիսութիւններու շարքին, Չորեքշաբթի, 23 Փետրուար 2011-ին, եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ սրբազան եւ հոգեւոր երաժշտութեան դաշնամուրահանդէս, ի պատիւ Ղեւոնդեանց Քահանայից Համագումարին մասնակցող հոգեւորականներուն:

Դաշնամուրահանդէսը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 8:00-ին, ի ներկայութեան երեք Թեմերու Առաջնորդներուն եւ քահանայ հայրերուն ու շուրջ 400 երաժշտասէր հաւատացեալներու:

Սրբազան եւ հոգեւոր երաժշտութեամբ հանդէս եկաւ համբաւաւոր դաշնամուրահար Վիքթոր Չանկ:

Սոյն հանդիսութեան կազմակերպումին, եկեղեցւոյ հոգե-

ւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան մեծ անակնկալ մը պատրաստած էր ներկաներուն: Վիքթորը Չանկի դաշնամուրային հոգեւոր երաժշտութեան բաժինը վերջանալէ ետք, բեմ հրաւիրուեցաւ փոքրիկն Իզապէլ Յակոբեանը, եւ Հայր Սուրբին առաջարկութեամբ եւ Հայր Սուրբին եւ փոքրիկին մօրը օգնութեամբ պատրաստած, ամենայն համարձակութեամբ եւ ապրումով, փոքրիկն Իզապէլ Յակոբեան ասմունքեց Սուրբ Գրիգոր Նարեկացիի Բան ՀԶ Աղօթքի Ա., Բ. եւ Գ. համարները:

Իսկ 3 Մարտ 2011, Հինգշաբթի երեկոյեան ժամը 8:00-ին, Թորոնթոյի Միջ-Յարանուանական Մարմնին կողմէ կազմակերպուած, Վարդանանց տօնակատարութեան հանդիսութեան փոքրիկն Իզապէլ Յակոբեան, որպէս Մանուկ Հրաշալի, ասմունքեց Ս. Գրիգոր Նարեկացիի Բան ՀԶ երկարաշունչ Աղօթքի Ա., Բ. եւ Գ. բաժինները, արժանանալով ներկաներուն որոտընդոստ ծափահարութիւններուն:

Ահաւասիկ Հայ Մանուկ մը, խոստումնալից ասմունքող աղջիկ մը, հազիւ 6 տարեկան, շնորհիւ Հայր Սուրբին հոգածութեան եւ մանուկին մօրը, հօրը եւ մեծ մօրը քաջալերութեան, կը քալէ ազգային եւ Աստուածահաճոյ ճանապարհով: Նման հրաշք մանուկներ երեւան կրնան գալ «Հայ Մանուկի Տարի»ին ընթացքին, եթէ անոնց ծնողները եւ հոգեւոր հայրերը որոնեն եւ գտնեն անոնց ժառանգած շնորհները եւ գնահատեն եւ քաջալերեն անոնց քայլերը:

Վարձքը կատար Հայր Սուրբ: Կ'աղօթենք, որ միշտ քաղես քու ցանած սերմերուն պտուղները:

* * *

2011 թուականը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Հայրապետին կողմէ «Հայ Մանուկի Տարի» յայտարարուելը, անձնապէս շատ գնահատելի կը գտնեմ եւ կը թեւադրեմ, որ մեր ժողովուրդին գաւակները, ծնողները, ուշադրութեամբ կարդան Վեհափառ Հայրապետին Սրբատառ Կոնդակը եւ տեղեակ ըլլան թէ ինչն^օւ «Հայ Մանուկի Տարի»ն իմաստ կ'ունենայ, եթէ Հայ մայրերը իրենց գաւակները փոքր տարիքէն սկսեալ իրենց հետ եկեղեցի բերեն, որպէսզի իրենց ականջները լեցուին եկեղեցւոյ հոգեպարար շարականներով եւ

եկեղեցական ժամերգութիւններով, արարողութիւններով ու աղօթքներով:

Հայ մայրերը իրենց փոքր զաւակները եկեղեցի բերելով անոնց կ'ուսուցանեն հաւատքով աղօթել, կապ ստեղծելով եւ պահելով Աստուծոյ եւ Աստուածորդի Յիսուս Քրիստոսի հետ:

Հայ մայրեր կան, որոնք մանկութենէ վարժուած են աղօթել եւ հետեւիլ եկեղեցւոյ արարողութիւններուն, որոնք իրենց ստացած դաստիարակութիւնը կ'ուզեն փոխանցել իրենց զաւակներուն: Անոնցմէ երիտասարդ մօր մը հանդիպեցայ Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ, Կիրակի, 10 Փետրուար 2008-ին:

Արտաքսման Կիրակի:

Պատարագին քարոզելու պարտականութիւնը ստանձնած էր Բարեշնորհ Կարօ Սարկաւազ Սարգիսեան, որ քարոզեց «Վերադառնալ Եդեսմական Կեանքին» բնաբանով, որուն գլխաւոր նիւթն էր Ադամին եւ Եւային արտաքսումը Եդեմի պարտէզէն: Աքանջելիօրէն պատրաստուած քարոզէն ետք, խօսք առաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, որ իր խօսքով գնահատեց Կարօ եւ Յովիկ Սարկաւազներու վերջին հինգ տարիներուն քարոզելու յառաջդիմութիւնը, ապա, շեշտեց աղօթելու կարեւորութիւնը:

«Տէր Ողորմեա»ն երգուեցաւ սարկաւազներու կողմէ, երգեհոնի ընկերակցութեամբ Հայր Սուրբին, յուզումնալից մըթնոլորտի մէջ:

Եկեղեցւոյ մուտքին աջ կողմի վերջին շարքի առաջին աթոռին նստած կը հետեւէի երգեցողութեան: Այդ միջոցին նկատեցի Հայ երիտասարդ մայր մը, որ ծունկի եկած էր եւ հագիւ երեք տարեկան աղջնակին թելադրած էր ծունկի գալ: Փոքրիկ աղջնակը մօր քով ծունկի եկած էր ձեռքերը իրար միացնելով եւ լրջօրէն կը հետեւէր «Տէր Ողորմեա»յի երգեցողութեան, մինչեւ վերջ:


Դիտելէ ետք հաւատացեալ մօր եւ հագիւ 3 տարեկան իր աղջնակին օրինակելի հետեւողութիւնը «Տէր Ողորմեա»յի երգեցողութեան եւ աւելի վերջ անոնց աղօթասացութեան, ուզեցի, որ եղելութիւնը «Շողակաթ Կրօնական Ամսաթերթ»ով յայտնեմ եկեղեցի յաճախող հաւատացեալներուն, ըսելով, որ եթէ բոլոր մայրերը վերոյիշեալ մօր նման մօտենան եկեղեցական արարողութիւններուն եւ իրենց փոքրիկ զաւակներուն

սորվեցնեն լուրջ հաւատքով աղօթելը, վստահաբար տարիներու ընթացքին այդ փոքրիկները կը դառնան իրենց ծնողներուն պատիւ բերող հաւատացեալներ:

Սիրելի ծնողներ,

Եթէ կ'ուզէք, որ ձեր զաւակները ըլլան ծնողասէր, ազգասէր, եկեղեցասէր եւ հայրենասէր, առաջնորդեցէք զանոնք եկեղեցի, կիրակնօրեայ դպրոց, որպէսզի սորվին հայ ազգային տոհմիկ սովորութիւններն ու բարքերը, եւ մեծնան տոգորուած հայկական ոգիով, եւ այս օտար ափերուն վրայ ապրելով, պատրաստ ըլլան պայքարելու հայ նոր սերունդներուն սպառնացող ուժացման վտանգներուն դէմ, օժանդակելով հայապահպանման աշխատանքներուն:

Եւ այն ատեն Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին «Հայ Մանուկի Տարի» յայտարարելը եւ հայ մանուկները հայեցի դաստիարակութեամբ մեծցնելը իր իմաստը կ'ունենայ, արդարացնելով հայ ազգային եւ կրօնական ղեկավարութեան ճիգերը եւ հայ ընտանիքներուն ու հայ մայրերուն զոհողութիւնները:



ԲԱՐԵՉԱՐԴՈՒԱԾ
ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿՈՒԱԾ
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ
ԲԱՑՄԱՆ ՓԱՌԱՀԵՂ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

1979-էն է վեր մեր միութիւններուն, կազմակերպութիւններուն, ՀՕՄ-ի «Պապայեան» մանկապարտէզի եւ «Գոլոլեան» նախակրթարանի աշակերտութեան կողմէ գործածուող Հայ Կեդրոնի գրեթէ բոլոր բաժինները թէեւ յաճախ նորոգուած, այլեւս նեղ կու գային միութիւններու գործունէութեան ու պահանջներուն: Ճաշարանի, եւ մանաւանդ սրահի հայ եւ օտար հաստատութիւններու, ընտանիքներու կողմէ գանազան առիթներով վարձուելու յարմարութիւններու չգոյութեան հետեւանքով, Հայ Կեդրոնի եկամուտը սկսած էր անբաւարար դառնալ՝ հաւասարակշռելու համար ծախսերը:

Այս դժուարին կացութենէն դուրս ելլելու համար նիւթական մեծ աղբիւրներու կարիքը կար: Հայ Կեդրոնի ղեկավարութիւնը կը փնտռէր նուիրատու մը, բարեգարդելու եւ ընդարձակելու համար Հայ Կեդրոնը:

Մեզի համար փնտռուած լոյսը ծագեցաւ Օթթաուայէն՝ 2010-ին:

Համաշխարհային տնտեսական տագնապի գոյութիւնը պատճառ հանդիսացաւ, որ Գանատայի Դաշնակցային եւ Նահանգային Կառավարութիւնները տնտեսական տագնապը թեթեւցնելու մտահոգութեամբ, որոշում կայացնեն՝ զուամարներ յատկացնելու երկրի համայնքային կեդրոնները բարեգարդելու եւ ընդարձակելու համար, ինչպէս նաեւ մեծ թիւով արհեստաւորներու եւ գործաւորներու աշխատատեղիներ բանալու համար:

Սոյն որոշումին որպէս հետեւանք, Թորոնթոյի Հայ Կեդրոնին յատկացուեցաւ երկու միլիոն տոլար, մէկ միլիոնը կեդրոնական կառավարութեան կողմէ եւ մնացեալ մէկ միլիոնը՝ նահանգային կառավարութեան կողմէ, այն պայմանով, որ հա-

մայնքը, այս պարագային Հայ Կեդրոնի ղեկավարութիւնը շինութեան աշխատանքներուն պիտի մասնակցի մէկուկէս միլիոն տոլարով:

Թորոնթոյի Հ. Յ. Դաշնակցութեան «Սողոմոն Թէ՛հլիրեան» Կոմիտէն, այս առաջարկը քննելու համար հարցը ներկայացուց ընդհանուր ժողովին եւ երկարատեւ ուսումնասիրութիւններէ ետք, որպէսզի չգրկուին երկու միլիոն տոլարի կառավարական յատկացումէն, համաձայն եղաւ ներկայացուած առաջարկին:

Կեդրոնի նորոգութեան համար կազմուեցան երկու յանձնախումբեր՝ շինութեան եւ հանգանակային: Ուսումնասիրուեցան շինութեան ծրագիրներն ու բաժինները եւ գործը յանձնուեցաւ շինարարական կապալառուի (contractor) եւ շինարարութիւնը անմիջապէս սկսաւ:

Ինը ամսուան դժուարին եւ մասնագիտական աշխատանքներէ ետք, վերջապէս յայտարարուեցաւ, որ ծրագրուած նորոգութիւններուն եւ ընդարձակումներուն մեծ մասը վերջացած է եւ որոշուած է բացման հանդիսութիւնը կատարել Հայաստանի Առաջին Հանրապետութեան 93-րդ տարեդարձին:

Ուրեմն, բարեզարդուած եւ ընդարձակուած կեդրոնի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Շաբաթ, 28 Մայիս 2011, երեկոյեան ժամը 6:30-ին, Հայ Կեդրոնի եւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շրջափակին մէջ հաստատուած բեմահարթակին եւ բարեզարդուած եւ ընդարձակուած Հայ Կեդրոնի շքեղ սրահին մէջ, ներկայութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաթակ Արք. Յակոբեանի, Ս. Աստուածածին Հայաստանեայց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի, Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ պատուական հովիւ Արժանապատիւ Տէր Արմէն Աւագ Քհնյ. Իշխանեանի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեանի, Վերապատուելի Եսայի Սարմազեանի, Գանատայի Հայոց Թեմի Երեսփոխանական ժողովի անդամներու, Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի, Հ. Յ. Դ. Թորոնթոյի «Սողոմոն Թէ՛հլիրեան» Կոմիտէի անդամներուն, Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն, իսկ Ս. Երրորդութիւն Հայոց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր

Զարեհ Ա. ՔՀՆյ. Զարգարեան շնորհաւորական գրութիւն մը ղրկած էր, այլ պարտականութեանց բերումով դուրս գտնուելով Թորոնթոյէն:

Ներկաները Հայ Երիտասարդական Կեդրոն հաւաքուած էին, ուստի «Հորովել» նուագախումբի առաջնորդութեամբ (խմբավար՝ Գէորգ Յարութիւնեան) հայկական տոհմիկ երգերու եւ երաժշտութեան ընկերակցութեամբ հաւաքուեցան Հայ Կեդրոնի մուտքին հաստատուած բեմին շուրջ, ուր ներկայ էին նաեւ ՀՄԸՄ-ի սկաուտներն ու դրօշակակիրները:

Փողովուրդին կողմէ երգուած Գանատայի եւ Հայաստանի պետական օրհներգներէն ետք, խօսք առաւ օրուան հանդիսավարը՝ ընկհ. Լոռի Սարգիսեան, որ բարի գալուստի խօսքերով ողջունեց ներկաները՝ ըսելով.՝

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Սողոմոն Թէ՛՛լիրեան» Կոմիտէին անունով բարի գալուստ կը մաղթեմ ձեր բոլորին, բարեգարդուած, ընդարձակուած եւ ամբողջապէս նորոգուած Հայ Կեդրոնի բացման հանդիսութեան ուրախ առիթով:

«Անցնող երեք տասնամեակներուն, Հայ Կեդրոնը եղած է այն փարոսը, որ լուսաւորած էր մեր բոլորին մտքերն ու հոգիները հայկականութեամբ, հայեցի դաստիարակութեամբ, միութեանական եւ ընկերային ծառայասիրութեամբ: Այսօր, Հայ Կեդրոնի համալիրին մէջ գործող ՀՕՄ-ի վարժարանին մէջ հասակ առնող պատանին, կը հաւատանք, որ պիտի դառնայ վաղուան ՀՄԸՄ-ի գայլիկն ու սկաուտը, պիտի դառնայ պատանեկան եւ երիտասարդական միութիւններու քաջասիրտ հայորդին ու պիտի դառնայ նուիրաբերող ՀՕՄ-ուհին եւ համազգայնականը, վառ պահելու համար հայոց մշակոյթն ու նուիրումի ոգին: Եւ վերջապէս, ան պիտի դառնայ իր երդումին հաւատարիմ կուսակցականն ու Հայ Դատի պահանջատիրական անտեղիտալի ոգին ներկայացնող հպարտ հայ մարդը: Այս ընդարձակուած եւ բարեգարդուած Հայ Կեդրոնը պիտի շարունակէ համախմբել նորահաս սերունդի մեր քոյրերն ու եղբայրները, իր արդիական եւ ապահով կառոյցին մէջ թրծելու եւ դաստիարակելու գանոնք մարդկային, ազգային եւ հոգեւոր ազնուագոյն սկզբունքներով, հայրենասիրական ջինջ ոգիով, պատիւ բերելու մեր ընտանիքներուն, մեր միութիւններուն, հայ ազգին եւ անկախ մեր հայրենիքին՝ Հայաստանին»:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Զարեհ Ազնաւորեան» երէցներու դպրաց դասը, որ ղեկավարութեամբ դպրապետ Անուշ Գալուստեանի, կատարեց «Սարդարապատ» եւ «Կիլիկիա» խմբերգները:

Բարեգարդուած Հայ Կեդրոնի ժապաւէնի հատումը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը, ապա տեղի ունեցաւ մայր դըրան մուտքին աղ ու հացի օրհնութիւնը, իսկ «Հորովել» նուագախումբը սրահը թնդացուց հայկական տոհմիկ երգերով եւ եղանակներով:

Հսկայ սրահը լեցուած էր շուրջ 800 ազգայիններով, որոնց համար կազմակերպուած էր ճոխ հիւրասիրութիւն:

Հ. Յ. Դաշնակցութեան «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէին խօսքը փոխանցեց Կոմիտէի հերթապահ ընկ. Վաչէ Գըլըպոզեան, որ շնորհակալութիւն յայտնեց ներկայ ժողովուրդին՝ կոմիտէութեան գործունէութեանց եւ ծրագիրներուն զօրավիգ կանգնելուն համար: Ապա, բեմ հրաւիրուեցան շինարարական եւ հանգանակային յանձնախումբերու ներկայացուցիչները:

Ընկ. Լեւոն Հասրըճեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց Գանատայի դաշնակցային եւ նահանգային կառավարական կառոյցներուն, որոնց նիւթական 2 միլիոն տոլարի յատկացումով կարելի եղաւ նորոգութիւններու սահմանափակ ծրագիրները ընդարձակել եւ ընդհանուր Հայ Կեդրոնի նորոգութեան եւ ընդարձակումին ձեռնարկել: Ընկ. Հասրըճեան ըսաւ.—

«Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք նիւթական ու բարոյական անսակարկ նուիրատուութեամբ իրականութիւն դարձուցին ամբողջապէս նորոգուած Հայ Կեդրոն մը ունենալու մեր բոլորին փափաքը: Շորհակալութիւն եւ վարձքը կատար բոլոր անոնց, որոնք գիտակցեցան, որ եթէ կ'ուզենք ազգային մեր նկարագիրը եւ ինքնութիւնը որոնել եւ մեր մշակոյթը վտանգող ազդեցութիւններէ հեռու մնալ, եթէ կ'ուզենք որպէս թորոնթոհայ գաղութ գոյատեւել ու հայկականութեան ջահը բարձր պահել, սերնդակիցներուն եւ գալիք նորահաս սերունդներուն պէտք է փոխանցենք արդիական կառոյցներ, որպէսզի անոնց մէջ բոլորս միասին հպարտութեամբ ծաղկինք եւ ծաղկեցնենք մեր մշակոյթն ու հայկական ավանդութիւնները, ինչպէս նաեւ մեր միութենական ու կազմակերպական զանազան ծրագիրներն ու աշխատանքները յաջողութեամբ մշակենք:

«Մենք կը հաւատանք, որ Հայ Կեդրոնը, այս փոքրիկ Հայաստանը, ինչպէս անցնող աւելի քան 32 տարիներուն, սատարեց մեր գաղութի վերելքին եւ ան դարձեալ պիտի շարունակէ մնալ մեր անշարժ խարխիսին ու միջնաբերդը օտարացնող հոսանքներուն դէմ ու մենք հպարտութեամբ ու անխախտ հաւատքով պիտի քալենք մեր նախահայրերուն եւ ծնողներուն օրինակով, պիտի քալենք դէպի լուսապայծառ ապագայ տանող ճամբաներէն, պատիւ բերելով մեր ազգին ու հայրենիքին:

«Այսօր հպարտօրէն կրնանք ըսել, որ այս արդիական կեդրոնը ամբողջ մը ըլլալէ անկախ՝ պիտի շարունակէ մնալ հայրենիքէն հեռու հայապահպանումի միջնաբերդ մը, որուն մէջ նոր սերունդներ աւելի ապահով, աւելի հպարտ եւ աւելի զօրացած պիտի պաշտպանեն Հայ Դատի արդար եւ անյետաձգելի իրաւունքները, պիտի նպաստեն մեր հողահաւաքին, մեր 1,5 միլիոն անշիրիմ նահատակներուն արեան հատուցման եւ ազատ, անկախ եւ ամբողջական հայութեամբ միացեալ Հայաստանի իրականացման»:

Ընկ. Լեւոն իր խօսքի աւարտին յայտարարեց, որ շինութեան կապալառուին հետ համաձայնած են, թէ մինչեւ Յունիս, Հայ Կեդրոնի բոլոր շինութիւնները պիտի վերջանան, լաւագոյն եւ արդիական շինարարական միջոցներով:

Խօսք առաւ նաեւ հանգանակային յանձնախումբի ներկայացուցիչ ընկ. Մհեր Առաքելեան, որ ներկայացնելէ ետք շինութեան ծախսերն ու ծրագրերը եւ այդ ուղղութեամբ առնուած ու առնուելիք որոշումները, շեշտեց յառաջիկայ երկուերեք տարիներու ընթացքին 1,5 միլիոն տոլար գոյացնելու անհրաժեշտութիւնը:

Իր հայրական խօսքն ու պատգամը փոխանցեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաթակ Արք. Յակոբեան: Իր խօսքին մէջ շեշտեց, թէ Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ իր հոգեւոր ծառայութեան տարիներէն մեծ հաւատք ունեցած է Թորոնթոհայ գաղութին նկատմամբ եւ վստահութիւն յայտնեց թէ գաղութը կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին պիտի կարենայ հանգանակել մէկուկէս միլիոն տոլարը: Սրբազանը նաեւ շեշտեց կարեւորութիւնը Հայ Կեդրոնին, Հայ Եկեղեցւոյ եւ Հայ Դպրոցին, որոնք մեծ դեր ունին Հայ ապագայ սերունդները հայ պահելու ուղղութեամբ: «Նորոգուած եւ ընդարձակուած Հայ Կեդրոնը Թորոնթոյի ղեկավարու-

Թեան վերջին ծրագիրը չի կրնար ըլլալ եւ մի զարմանաք, եթէ Հայ Կեդրոնի կողքի պանդոկն ալ գնելու եւ հայացնելու ծրագիր մը երեւան գայ: Այս բոլոր ծրագիրները յաջողցնելու համար կը խնդրեմ որ ձեր նուիրատուութիւնները ըլլան ձեր նախահաշիւներէն շատ աւելի, ձեր գրպանները ցաւցնելու աստիճան»:

Բեմ հրաւիրուեցաւ նաեւ հանգանակային յանձնախումբի ատենապետ ընկ. Յակոբ Ծանպաղեանը, որ ներկայացուց Հայ Կեդրոնէն ներս գործող միութիւններու, հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու նուիրատուութիւնները, կարգով բեմ հրաւիրեց միութիւններու ներկայացուցիչները, որոնք յանձնեցին իրենց վճարագիրները եւ հանգանակուած գումարը հասցուցին 635 հազար տոլարի:

Բոլոր միութիւններու ներկայացուցիչները բեմին վրայ մընալով, կտրեցին բացման հանդիսութեան կարկանդակը, որ նըւէրն էր «POLKA STUDIO» ընկերութեան (Սանտրա եւ Սիմա Գահուէճեաններ):

Պատկերիզով ցուցադրուեցաւ գեղանկարիչ Կարէն Պետրոսեանի գծած մէկ նկարը, որ հեղինակին կողմէ նուիրուած է Հայ Կեդրոնին: Այժմ տեղադրուած է մայր սրահի մուտքի ճակատին, որ արդիական արուեստի իւղանկար մեծ պաստառ մըն է:

Հանդիսութեան վերջաւորութեան հանդիսավար ընկերուհի Լոուի Սարգիսեան շնորհակալութիւն յայտնեց բացման հանդիսութեան յանձնախումբի բոլոր նուիրեալ եւ ժրջան անդամուհիներուն, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Զարեհ Ազնաւորեան» դպրաց դասի անդամներուն, «Հորովել» ժողովրդական եւ աշուղական երգերու նուագախումբին, գեղեցիկ ծաղկեփունջեր նուիրած Սալբի Սարգիսեանին, օրհնութեան հացերու նուիրատու՝ ARZ BAKERY-ին:

Հանդիսավարը յայտարարեց, որ սեղաններուն վրայ դրուած մշտադալար փոքրիկ ծառերը ՀՅԴ ԳԵՄ Թորոնթոյի «Քրիստափոր Միքայէլեան» մասնաճիւղի ընկեր-ընկերուհիները սիրայօժար պիտի տնկեն Հայ Երիտասարդական Կեդրոնի շրջափակին մէջ:

Խրախճանքը շարունակուեցաւ մինչեւ գիշերուան ուշ ժամերը:

ԴՊԻՐ-ԴՊՐՈՒՀԻՆԵՐՈՒ, ԿԻՍԱՍԱՐԿԱԽԱԳՆԵՐՈՒ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳՆԵՐՈՒ ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Համայնքը, Շաբաթ, 28 Մայիս եւ Կիրակի, 29 Մայիս 2011-ին, ներկայ գտնուելով Դպիր-Դպրուհիներու, Կիսասարկաւազներու եւ Սարկաւազներու ձեռնադրութեան հոգեպարար արարողութիւններուն, ձեռամբ Գանատայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի եւ խարտաւիչակութեամբ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի, հոծ թիւով հաւատացեալ ազգայիններու ներկայութեան, ապրեցաւ հոգեկան ցնծութեան պահեր:

Շաբաթ, 28 Մայիս 2011-ի երեկոյեան տեղի ունեցաւ Դպիր-Դպրուհիներու եւ Կիսասարկաւազներու ձեռնադրութիւնը:

Նախ տեղի ունեցաւ Դպիր-Դպրուհիներու ձեռնադրութիւնը:

Ձեռնադրող Սրբազանը նախ Սուրբ Սեղանին խնկարկեց եւ ընծայեալներու թափօրին հետ դուրս ելաւ, ապա եկեղեցւոյ դուռը փակուեցաւ, Սրբազանը բազմեցաւ դրան առջեւ դրուած գահին եւ իր շուրջ բոլորուեցան ընծայեալները:

Սարկաւազը ձայնեց.— «Ամէնքս միասնաբար մեր մարդասէր Աստուծմէն եւ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի աղաչեմք Իր ծառաներուն եւ աղախիններուն՝ Աբրահամեան Արամէին, Ալեքսանտրեան Նինէթին, Ապրամեան Մէտլիին, Գաթրնեան Լորիկին, Գասէմեան Նարեկին, Գէորգեան Մասիսին, Քէնէյեան Հոփսիմէին, Գորոյեան Զաւէնին, Գորոյեան Սիմոնին, Գրիգորեան Լեւային, Գունտաբեան Անդրանիկին, Թորոսեան Մանուէլային, Թորոսեան Մատիանային, Թուքիայեան Սոնային, Թոնամեան Միհրանին, Թոնամեան Նաթալիին, Խաչատուրեան Անդրանիկին, Կիտանեան Սարգիսին, Հալանեան Տարօնին, Մանուկեան Մանուէլին, Մանուկեան Ռիթային, Մու-

բատեան Դանիէլին, Մուրատեան Բալիկին, Յարութիւնեան Ատրիւնէին, Յարութիւնեան Արմէնին, Ներսէսեան Դաւարին, Սարգիսեան Ալիսին, Սարգիսեան Մարիամին, Կուսուզեան Առիւծին, Տէր Դաւիթեան Մարիամին, Տէր Դաւիթեան Նորիկին, Տէրտէրեան Ալիքին, Տէրտէրեան Լիային, Տէրտէրեան Տարօնին, որոնք սիրով փափաքեցան իրենց գլխուն մագերը կտրել, որպէսզի Իր Սուրբ Հոգին տայ ասոնց եւ բանայ աչքերը, որպէսզի հոգեւոր իմաստութեամբ ապրին երկրաւոր այս կեանքը եւ հասնին երկնային ողորմութեան քաղցր լոյսին: Ամէնակալ Տէր, փրկէ մեզ եւ ողորմէ մեզի: Պահպանէ քու ծառաներդ, որոնք Քու պաշտամունքիդ համար կարգուած են»:

Ապա, Սրբազանը ընծայեալներուն գլխու մագերէն խաչածեւ կտրեց: Յաջորդաբար Սրբազանը Սաղմոսագիրքը տուաւ անոնց ձեռքը, ապա, աւել մը՝ Աստուծոյ գաւիթին աւելածու ըլլալու, եւ եկեղեցւոյ բանալիները տալով ըսաւ.— «Պատրաստ եղէք եկողներուն առջեւ միշտ բանալու եկեղեցին եւ աղօթեցէ՛ք դուռը բանալու եւ գոցելու ատեն»:

Ձեռնադրեալները բանալիով դուռը բացին եւ եկեղեցի մըրտան: Գաւիթին մէջ իրենց տրուեցաւ ճաշոցը, Դասին մէջ՝ ջահընկալութեան եւ Սուրբ Պատարագի գինիի բաժակամանը լեցընելու պաշտօնը, որպէսզի Սուրբ Եկեղեցւոյ ջահերն ու կանթեղները վառեն եւ Սուրբ Սեղանին վրայ մատուցուող Սուրբ Պատարագի գինին մատակարարեն:

Դպիր-Դպրուհիներ Հայաստանեայց Եկեղեցւոյ հոգեպարար շարականներով եւ աղօթքներով ձեռնադրուեցան, ծառայելու համար Սուրբ Եկեղեցւոյ:

Այնուհետեւ, սկսան Կիսասարկաւագներու ձեռնադրութեան կարգն ու արարողութիւնները: «Դպիրները երգեցին «Ուրախ Լեր» շարականը: Առաջնորդ Սրբազան Հայրը խընկարկեց խորանին եւ ժողովուրդին, ապա, բազմեցաւ Դասին կեդրոնը դրուած աթոռին վրայ: Կարդացուեցաւ 121-րդ Սաղմոսը:

Հայր Սուրբը խնդրեց ըսելով.— «Սիրելի՛ եղբայրներ, Աստուծոյ աղաչեմք որ Իր ծառաներուն՝ Պետրոսեան Ռուբէնին, Զովաբեան Հերոսին, Թոնամեան Միհրանին, Գաբրիէլեան Վարդանին, Աբրահամեան Արամէին, Հալանեան Տարօնին, Գորոյեան Զաւէնին եւ Գորոյեան Սիմոնին Իր օրհնութիւնը տայ եւ զօրացնէ զիրենք Կիսասարկաւագութեան այս պաշտօն-

նին համար, որպէսզի հաւատով սպասաւորեն Իր ներկայութեան եւ հասնին այն վարձատրութեան, որ Իր սուրբերուն խոստացաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Փրկէ մեզ եւ ողորմէ մեզի»:

Նուիրեալները Դասին կեդրոնը ծունկի եկան եւ Սրբազանը ձեռքը նուիրեալներուն գլխուն դրաւ յատուկ աղօթքով:

Ապա, Սրբազանը նուիրեալներուն ձախ բազուկին դրաւ ուրարները եւ անոնց ձեռքը տուաւ դատարկ սկիհն ու մաղղման, պատարագի լման զգեստ մը, շուշփայ մը եւ խորհրդատետրը, տալով իր թեղադրութիւնները նուիրեալներուն:

Այնուհետեւ, Սարկաւագի, Սրբազանի աղօթքներու եւ Տէրունական Աղօթքով ամբողջացաւ Կիսասարկաւագներու ձեռնադրութիւնը:

ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐՈՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 29 Մայիս 2011-ին, առաւօտեան Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին տեղի ունեցաւ Սարկաւագներու ձեռնադրութիւնը, ձեռամբ Գանատայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի եւ խարտաւիլակութեամբ Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի:

Դպիրները երգեցին «Ուրախ Լեր» շարականը, մինչ Սրբազանը սկսաւ խնկարկել Սուրբ Խորանին: Երկու սարկաւագները կարդացին 15-րդ, 123-րդ եւ 91-րդ Սաղմոսները: Իսկ նուիրեալները Սաղմոսներու ընթերցումով ծնկաչոք խորան բարձրացան:

Սարկաւագներու կողմէ Սաղմոսներու արտասանութիւններէ ետք, Սրբազանը բազմեցաւ Խորանին վրայ տեղադրուած գահին:

Խարտաւիլակ Տէր Մեղրիկ Հայր Սուրբին եւ Խաժակ Սրբազանին կողմէ կատարուեցաւ գեղեցիկ հարցազրոյց մը, որուն կ'արժէ անդրադառնալ:

Խարտաւիլակ Հայր Սուրբ.— «Սրբազան Հայր, մեր Սուրբ Մայր Եկեղեցին կը խնդրէ ձեզմէ, որ սարկաւագ ձեռնադրէք

Հայկ Կիսասարկաւագ Ակորեանը, Գեորգ Կիս. Ալանանեանը, Ռուբէն Կիս. Պետրոսեանը, Ռաֆֆի Կիս. Տէմիրճին, Արթիւր Կիս. Սէրգիսը, Վահէ Կիս. Շաննագեանը, Դանիէլ Կիս. Ճապրայեանը եւ Հերոս Կիս. Զոլաբեանը»:

Խաժակ Սրբազան.— «Գիտէ՞ք իրենց արժանաւոր ըլլալը, համապատասխան կեանք կը վարե՞ն, սուրբ ամուսնութենէ՞ ծնած են կամ ունի՞ն անհրաժեշտ իմաստութիւնն ու սրբութիւնը»:

Խարտաւիչակ Հայր Մեղրիկ.— «Այնքան, որ մարդկային մեր տկարութիւնը մեզի կը թոյլատրէ ճանչնալ, գիտենք եւ կը վկայենք թէ ասոնք արժանի են այս աստիճանին լուծը կրելու, որովհետեւ ունին սրբութիւն եւ իմաստութիւն»:

Խաժակ Սրբազան.— «Աստուծոյ՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին շնորհով՝ Հայկ, Գեորգ, Արթիւր, Ռաֆֆի, Վահէ, Ռուբէն, Դանիէլ եւ Հերոս Կիսասարկաւագները Սարկաւագութեան պաշտօնին կը կոչենք: Հետեւաբար, աղաչենք մարդասէր Աստուծոյ, որ Իր սուրբ պարգեւներով պայծառափայլէ Իր այս ծառաները, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով, որուն կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:

Ապա, նուիրեալները ծունկի՝ յառաջացան Սրբազանին առջեւ:

Խարտաւիչակ Հայր Սուրբ.— «Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք, ընկալ կեցո՛ւ եւ ողորմեա՛ւ»:

Խաժակ Սրբազան.— «Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:

Խաժակ Սրբազան.— «Ամէնակալ Աստուծոյ աղաչենք Իր ծառաներուն՝ Հայկին, Գեորգին, Արթիւրին, Ռաֆֆիին, Վահէին, Ռուբէնին, Դանիէլին եւ Հերոսին համար, որոնք սարկաւագութեան կարգին պատրաստ են, որպէսզի արժանի ըլլան այս ձեռնադրութեամբ նախասարկաւագ եւ առաջին վկայ Ստեփանոսի պէս շնորհ ստանալու ամէնակալ Աստուծմէ: Փրկէ՛, Տէր, եւ ողորմէ՛ մեզի»:

Խաժակ Սրբազան իր աջը նուիրեալներուն գլխուն դրաւ եւ այսպէս աղօթեց.— «Տէր Աստուած ամէնակալ, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, Քու այս ծառաներդ՝ Հայկը, Գեորգը, Արթիւրը, Ռաֆֆին, Վահէն, Ռուբէնը, Դանիէլը եւ Հերոսը

մարմնով եւ հոգիով Քեզի հնազանդեցան, երկարէ Քու անբեւոյթ Աջդ եւ օրհնէ գիրեմք, որպէսզի արժանի ըլլան Սուրբ Եկեղեցւոյ սպասաւորութեան կոչումին եւ միւս սիրելիներուդ պէս ստանան շնորհներդ, որ սուսօրէն կը բաշխես հաւատացեալներուդ, որպէսզի իւրաքանչիւրը իր աստիճանով ծառայէ Քեզի՝ նշմարիտ Աստուծոյդ: Քու այդ պարգեւիդ արժանի ըրէ գիրեմք, որպէսզի ձգես ինչ որ երկրաւոր է եւ դառնան Քու ամէնառատ շնորհներուդ եւ դառնան խաղաղութեան Աւետարանիդ քարոզիչներ, Ամէնասուրբ Երրորդութեան՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին փառքին համար, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:

Դպիրներու կողմէ արտասանուած աղօթքէն ետք, դէպի արեւմուտք դարձան նուիրեալները, որոնք իրենց ձեռքերը վեր վերցուցին ակերը բաց, որպէս նշան աշխարհէն հրաժարելու:

Խաժակ Սրբազանը, խարտաւիչակ Հայր Սուրբը եւ Խորանի սպասաւորները այնքան գեղեցիկ երգեցին՝ երեք անգամ.— «Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ լընու գպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ՝ գՀայկ, գԳեորգ, գԱրթիւր, գՌաֆֆի, գՎահէ, գՌուբէն, գԴանիէլ, գՀերոս, ի դպրութեմէ եւ սարկաւագութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն, ըստ վկայութեան անձանց իւրեանց եւ ամենայն ժողովրդեան»: Ժողովուրդը յուզուած էր:

Վերջաւորութեան ընծայեալները դարձան իրենց տեղերը: Ապա, ձեռնադրիչը իր աջը դրաւ իւրաքանչիւրին գլխուն եւ իւրաքանչիւրին համար առանձին ըսաւ.— «Ես իմ ձեռքս կը դնեմ ասոր վրայ եւ դուք բոլորդ աղօթեցէք, որ արժանի ըլլայ սարկաւագութեան իր պաշտօնը անարատ կերպով կատարելու Աստուծոյ Սուրբ Սեղանին առջեւ»: Ապա, Սրբազանը, իր գահին բազմած, աղօթեց նոր ձեռնադրուած Սարկաւագներուն համար:

Այսուհետեւ եղան Աստուածաշնչական ընթերցումներ Կարօ Սարգիսեան եւ Յովիկ Թոզճեան Սարկաւագներուն կողմէ, ինչպէս նաեւ Աւետարանի ընթերցում՝ խարտաւիչակ Հայր Սուրբին կողմէ:

Պատարագը շարունակուեցաւ եւ երբ հասաւ «Ողջոյն տուր միմիանց»ին, Սրբազանը նստաւ գահին վրայ:

Խարտաւիչակ Հայր Մեղրիկ ձայնեց.— «Տիրոջմէ խաղաղութիւն աղերսեմք դարձեալ: Բոլորս միասին հաւատով աղա-

չենք մարդասէր Աստուծոյ, մեր Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տէր Խաթակ Սրբ. Արքեպիսկոպոսին համար, որպէսզի զայն արժանի ընէ իր եկեղեցիին մէջ երկար տարիներ ուղիղ դաւանութեամբ, հաւատով եւ առաքինի կեանքով հովուելու Տիրոջ ժողովուրդը, զոր Քրիստոս Իր արեան գինով փրկեց, որպէսզի սուրբ եկեղեցւոյ սպասաւորութեան համար արժանաւոր ձեռնադրութիւններ կատարելով՝ իր ամբողջ կեանքին ընթացքին կանգնի առանց խղճահարութեան եւ անմեղադրելի ըլլայ: Խնդրեմք նաեւ Հայկ, Գէորգ, Արթիւր, Ռաֆֆի, Վահէ, Ռուբէն, Դանիէլ եւ Հերոս Սարկաւագներուն համար, որոնք այս սեղանին սպասաւորութեան կոչուեցան, որպէսզի Սուրբ Սեղանին ծառայեն սրբութեամբ, առանց բամբասանքի առիթ տալու, եւ բոլոր սուրբերուն հետ ժառանգեն երկրնքի արքայութիւնը: Ամէնակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի: Օրհնեա՛ Տէր»:

Կրկին Սրբազանը ձեռքը նուիրեալներուն գլխուն դրաւ եւ աղօթեց:

Ապա, աղօթելով ուրարները նուիրեալներուն ձախ ուսին դրաւ եւ Աւետարանը անոնց տալով ըսաւ.— «Իշխանութիւն կու տամ Աստուծոյ եկեղեցիին մէջ այս Սուրբ Աւետարանը կարդալու, որպէսզի ողջերը լսեն եւ ննջեցեալները յիշուին»:

Ապա, նուիրեալները ոտքի կանգնեցան Խորանին ձախակողմը: Սրբազանը բուրվառը տուաւ անոնց ըսելով.— «Հրաման կու տամ պատարագի խորհուրդին որպէս սպասարկութիւն խնկարկելու եւ անոյշ հոտ բուրելու»:

Նուիրեալները մէկ առ մէկ բուրվառը բարձրացնելով ըսին.— «Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք, ընկալ կեցո՛ք եւ ողորմեա՛: Օրհնեա՛ Տէր»:

Ձեռնադրիչը օրհնելէ ետք, նուիրեալները խնկարկեցին Խորանին եւ ժողովուրդին, երեք անգամ:

Դպիր-Դպրուհիներու, Կիսասարկաւագներու եւ Սարկաւագներու պատմական ձեռնադրութիւնները հոգեւոր եւ հոգեգմայլ մթնոլորտի մէջ վերջ գտան Առաջնորդ Սրբազանին խորիմաստ եւ հաւատացեալները ոգեւորող քարոզով:

** * **

Այս ձեռնադրութիւններուն առիթով, բոլոր ձեռնադրուող Կիսասարկաւագներն ու Սարկաւագները հագած էին հայկական

արուեստով նոր կարուած շապիկներ, որոնց կնքամայրն էր Տիկին Աննա Եագուպեան, յայտարարեց Հայր Սուրբը, շնորհակալութիւն յայտնելով նուիրատուին:

Պատարագէն ետք, եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ ձեռնադրուող Դիր-Դպրուհիներուն, Կիսասարկաւագներուն եւ Սարկաւագներուն ժողովուրդին կողմէ շնորհաւորութիւններ եւ Առաջնորդ Սրբազանի Աջահամբոյր:

*
*
*

Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, 28 եւ 29 Մայիս 2011-ին, եկեղեցիին ծառայելու նուիրուած 35 Դպիր-Դպրուհիներու, 8 Կիսասարկաւագներու եւ 8 Սարկաւագներու ձեռնադրութիւնները մեծապէս զնահատուեցան ժողովուրդին կողմէ, փաստելով այն իրականութիւնը, որ մեր ժողովուրդը, հակառակ համայնակուլ եւ ուժացնող այս ամերու մթնոլորտին, կը շարունակէ մնալ տէրն ու տիրականը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի կողմէ քրիստոնեայ մկրտուած պապենական հաւատքին, որուն միջոցաւ, որպէս առաքինի եւ քաղաքակիրթ ժողովուրդ հասած ենք 21-րդ դար, երբ մեր պատմութեան սկիզբներուն մեզի դրացի եւ ժամանակակից բազում ազգեր պատմութեան անցած են:

Երբեք, երբեք յուսահատական եզրակացութիւններ եւ տրտունջներ պէտք չէ լսուին Սփիւռքի տարածքին տարածուած հայկական կազմակերպութիւններէն, մշակութային եւ մարզական միութիւններէն, մանաւանդ եկեղեցիներու ղեկավարներէն, որովհետեւ եթէ ունենան զաղափարապաշտ, նուիրեալ, անձնագոհ եւ յուսահատութիւն չճանչցող ղեկավարներ, մեր եկեղեցիները, միութիւնները եւ կազմակերպութիւնները կը բարգաւաճին եւ կը զարգանան: Մարդու զոյլութիւն չ'ունենար: Կարեւորը մարդու զոյլութիւն եւ պահելու քաղաքականութիւն որդեգրելն է: Նուիրեալներ միշտ կան, կարեւորը զանոնք գործի եւ պաշտօնի հրաւիրելն է:

Փաստը՝ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ 28 եւ 29 Մայիսին տեղի ունեցած ձեռնադրութիւններն են:

Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծուխին, եկեղեցի յաճախող ժողովուրդին բազմանալը,

նուիրեալ Դպիր-Դպրուհիներու, Կիսասարկաւազներու եւ Սարկաւազներու երիտասարդանալը, տօնական օրերուն եկեղեցին բերնէ-բերան, խուռներամ հաւատացեալներով լեցուիլը, Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին գնահատելի աշխատանքները, Երիտասարդաց Սուրբ Պատարագները եւ հարիւրաւոր երիտասարդ-երիտասարդուհիներու Սուրբ Գիրքի սերտողութեան ներկայ գտնուիլը, կու գան փաստելու, որ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնները, ինչպէս նաեւ յարակից մարմինները, իրենց լաւագոյն ծառայութիւնները կը մատուցանեն ժողովուրդին, այն խոր գիտակցութեամբ, որ այս ամերուն վրայ հայապահպանութեան գլխաւոր ազդակներն են Հայ Եկեղեցին, Հայ Դպրոցը եւ Հայ Կազմակերպութիւնները:

Վերոնշեալ խորհրդածութիւններուն առիթ տուաւ, երբ կարգացի Պօղոս Առաքեալի առաջին նամակին 5-րդ գլուխ 17-րդ համարէն ուղղուած Տիմոթէոսին, ուր կ'ըսէ.— Այն եկեղեցիները, որոնք լաւ վերակացութիւն կ'ընեն եկեղեցիին՝ կրկնակի վարձատրութեան արժանի թող նկատուին, մանաւանդ անոնք, որոնք կ'աշխատին թէ՛ քարոզելով եւ թէ՛ ուսուցանելով: Որովհետեւ Օրէնքի Գիրքը կ'ըսէ. «Կալին մէջ աշխատող եզին դունչը մի՛ կապեր»: Եւ «Մշակը իր վարձին արժանի է»:

Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը անձանձրոյթ նուիրուած է եկեղեցւոյ ամէնօրեայ ժամերգութիւններուն, տօնական եւ տաղաւարներու յատուկ պատարագներու գործադրութեան եւ պատարագներու ընթացքին խօսելով բովանդակութեամբ շինիչ, կրօնական եւ ազգային քարոզներ:

Մեր Հոգաբարձութիւնը, յոգնութիւն չգիտցող եռանդով, գիշեր ու ցերեկ իր մտածումները միշտ կը կեդրոնացնէ իր ծառայած եկեղեցիին բարգաւաճման, ծրագրելով եւ գործադրելով բազմաթիւ կրօնական եւ մշակութային ձեռնարկներ, որոնց կարգին թատերա-երաժշտական ձեռնարկներ Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ:

Ամէն Կիրակի լոյս կը տեսնէ եկեղեցւոյ շաբաթական «Եկեղեցի» թերթիկը 4-8-16 եւ աւելի էջերով, ուր ընթերցողները կը տեղեկանան մանրամասնութիւններ տօնական օրերու մասին, եկեղեցական լուրեր, եկեղեցական եւ ազգային բովանդակութեամբ յօդուածներ, Կիրակի օրուան հոգեհանգիստներու

ցանկը, մկրտութեան, պսակներու, նշանատուքներու եւ թաղումներու լուրերը եւ այլ յայտարարութիւններ:

Լոյս կը տենէ նաեւ «Շողակաթ» Կրօնական Ամսաթերթը, կրօնական, ազգային, թղթակցական, ուսումնասիրական եւ գրական բովանդակութեամբ:

Վերջին երեք տարիներէ ի վեր, Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ կեանքի կոչուեցաւ «Կիլիկիոյ Զայն» ռատիօժամը՝ ամէն Կիրակի երեկոյեան ժամը 8:00-11:00, 1690 FM ալիքով:

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի եւ Հոգաբարձութեան անձնուէր գործունէութեան շնորհիւ Ս. Աստուածածին Եկեղեցին կը բարգաւաճի հաւատացեալ ժողովուրդով եւ յատկապէս երիտասարդներով, օրինակ դառնալով Սփիւռքի Հայաստանեայց Եկեղեցիներու հովիւներուն եւ ղեկավարներուն: Եկեղեցւոյ ծառայողներ միշտ գոյութիւն ունին, ամէն տեղ, կարեւորը զանոնք եկեղեցւոյ մօտեցնել եւ սիրցնել գիտնալ, նուիրեալներ, անսակարկ աշխատողներ գնահատել, որպէսզի քաջալերուին եւ շարունակեն ծառայել, ցոյց տալու համար, որ Հայ Եկեղեցին պէտք ունի անձնագոհ ղեկավարներու եւ ազգայիններու, եկեղեցւոյ լոյսը միշտ անմար պահելու, լուսաւորելով հայ նոր սերունդներուն Աստուածահաճոյ ճանապարհները:

ՓԱՌԱՀԵՂ ԵՒ ՀԱՅԱԲՈՅՐ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Համազգային Հայ Կրթ-
թական եւ Մշակութային Միութեան «Գլաձոր» Մասնաճիւղին,
Կիրակի, 13 Նոյեմբեր 2011, երեկոյեան ժամը 6-ին, Հայ Երիտա-
սարդական Կեդրոնի «Համազգային» թատերասրահին մէջ տե-
ղի ունեցաւ Հայ գեղարուեստական փառահեղ եւ հայաշունչ ե-
րեկոյ մը, մասնակցութեամբ Թամար Տօնապետեանի (ասմունք),
Սոնա Գալթակեանի (ջութակ), Թալին Գըլըպողեանի (դաշնա-
մուր), Այլին Հերոսեանի (սոփրանօ), Մարիանա Թորոսեանի
(քանոն), Զիւլան Ստեփանեանի (տուտուկ), Լոուի Նաճարեանի
(պար) եւ Համազգայինի «Էրեբունի» պարախումբի, որուն ներ-
կայ գտնուեցան Հայ մշակոյթի արեւով ապրող շուրջ 300 հա-
յորդիներ:

Գեղարուեստական ճաշակով կազմուած յայտագիրը բաժ-
նըւած էր չորս մասերու.— Ա) Լեռներ Հայրենի, Բ) Հայաստան
Ասելիս, Գ) Եղեռն ու Վերածնունդ եւ Դ) Իմ Արմատները...:

Յայտագիրը գործադրութեան դրուեցաւ շնորհալի եւ տա-
ղանդաւոր ասմունքող Թամար Տօնապետեանի Պարոյր Սեւակի
«Բարեւ» խորիմաստ բանաստեղծութեան արտասանութեամբ,
ապա, Գէորգ Էմինի «Ա՛խ, այս Մասիսը» բանաստեղծութեան
արտասանութեամբ, (դաշնամուրի ընկերակցութեամբ Թալին
Գըլըպողեանի՝ «Քանի վուրջան իմ», «Սայաթ Նովա» եղանակ-
ներով, դաշնամուրի ձեւաւորում՝ Գ. Գարաջեանի), Յովհաննէս
Շիրազի «Հանճարեղ խելագարը» բանաստեղծութեան արտա-
սանութեամբ (դաշնամուրի ընկերակցութեամբ Թալին Գըլը-
պողեանի՝ CHORAL PRELUDE IN F MINOR — J. S. BACH):

Ապա, երկրորդ մասով, սքանչելի ասմունքող Թամար Տօ-
նապետեան յաջորդաբար ասմունքեց Համօ Սահեանի «Հայաս-
տան ասելիս», Եղիշէ Չարենցի «Ես իմ անոյշ Հայաստանի»
քերթուածները՝ ապրումով, հիանալի առողջանութեամբ եւ տը-
պաւորիչ արտայայտչականութեամբ:

Տաղանդաւոր ասմունքողը իր գեղարուեստական կենսագ-
րութեան մէջ կ'ըսէ.— «Սիրահարն եմ մեր մշակոյթին, յատկա-
պէս՝ մեր լեզուին ու գրականութեան: պատահական չէ այս մէ-
կը: Լուսահոգի հայրս՝ Գէորգ (Ճորճ) Տօնապետեան, մեծ ազդե-

ցուծիւն ունեցած է վրաս, թէ՛ որպէս դաստիարակ եւ թէ՛ որպէս Հայ լեզուի ու գրականութեան անդրդուելի նուիրեալ:

«Ամռնաքելու կարողութիւնս յայտնաբերած են ծնողքս, մեծ Հայրս՝ լուսահոգի Տիգրան Թոգմաքճեանը եւ շատ սիրելի վարժարանիս՝ Պէյրուծի Սուրէն Խանամիրեան Ազգային Գոլէճի մէջ դասաւանդող նուիրեալ ուսուցիչներս: Բոլորին ցկեանս երախտապարտ պիտի մնամ: Ընտանեկան միջավայրէս անդին, փոքր տարիքէս քաջալերանք ստացած եմ սփիւռքահայ մտաւորականութեան յայտնի դէմքերէն՝ Տոքթ. Բաբգէն Փափագեանէն, Սիմոն Սիմոնեանէն եւ ուրիշներէ: Մասնակցած եմ Պէյրուծի մէջ կազմակերպուած զանազան արտասանական մրցումներու եւ մրցանակներ շահած: Մանկութենէս նետուած եմ Հայապահպանման գործին՝ ՀՄԸՄ-ի, ՀՅԴ պատանեկան եւ երիտասարդական շարքերուն եւ եկեղեցւոյ ծառայելով: Պատանի տարիքէս, Սուրէն Խանամիրեան Ազգային Գոլէճը աւարտելէ ետք, ընտանեօք փոխադրուած ենք Թորոնթօ, ուր երկրորդական եւ Համալսարանական ուսումս ամբողջացուցած եմ, արժանանալով PUBLIC ADMINISTRATION & GOVERNANCE Պսակաւոր Արուեստից (B.A. HONOUR) եւ յետագային՝ Վարչագիտութեան Մագիստրոս (MBA) վկայականներուն: Հազիւ 18 տարիքը թեւակոխած, անդամակցած եմ Համազգայինի «Գլաձոր» Մասնաճիւղին: Պարբերաբար կ'աշխատակցիմ «Թորոնթոհայ» թերթին:

«Այս առիթով խորին շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք տարիներու ընթացքին նեցուկ կանգնած են ինծի, յանձինս ծնողքիս՝ ձորճ եւ Սեդա Տօնապետեաններուն, քրորջս՝ Ալինին, ամուսինիս՝ Յակոբին, ընտանեկան բոլոր պարագաներուս, ուսուցիչներուս, ինչպէս նաեւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող բոլոր միութիւններուն, մանաւանդ Համազգայինի «Գլաձոր» մասնաճիւղի անձնակազմին եւ վարչութեան, որ այս առիթը ընծայեց ինծի»:

Յայտագրի երկրորդ մասին էտկար Պաղտասարեանի «NOCTURNE»-ը (ցայգերգ) նուագեցին Սոնա Գալթակեան (ջութակ) եւ Թալին Գրլըպոզեան (դաշնամուր), Պարոյր Սեւակի «Հայաստան» բանաստեղծութիւնը ասմունքեց Թամար Տօնապետեան, դաշնամուրով ընկերակցութեամբ Թալին Գրլըպոզեանի՝ «PRELUDE» (նախերգանք) Առնօ Բաբաջանեանի:

Ապա, պարային դաստիարակ Լոուի Նաճարեանի բեմադրութեամբ «Տօնական Հայաստան» պարով հանդէս եկաւ Համազգայինի «Էրեբունի» պարախումբը:

Լոուի Նաճարեան Համազգայինի «Գլաճոր» Մասնաճիւղի պարարուեստի ուսումնարանին եւ «Էրեբունի» պարախումբին պարուսոյցն ու գեղարուեստական ղեկավարն է: Ծնած է Թորոնթօ: Փոքր տարիքէն հետեւած է պալէի եւ ճազի դասընթացքներու, ապագային վկայուած է որպէս դասատու նոյն մարզերուն մէջ: Հետեւած է Երեւանի պարարուեստի պետական ուսումնարանի դասընթացքներուն, մասնագիտանալով պալէի եւ հայկական պարարուեստի մէջ: Վերադառնալով Թորոնթօ, ուսուցչութեան Մագիստրոս (MASTERS) վկայականին արժանացած է: Որպէս մենակատար եւ ղեկավար մասնակցած է բազմաթիւ ձեռնարկներու, Գանատայի եւ Հայաստանի մէջ:

Իսկ Թալին (Արթինեան) Գլըպոզեան ծնած է Դամասկոս: Փոքր տարիքէն հետեւած է դաշնամուրի դասերու, իբրեւ խթան ունենալով ծնողքը: Հետեւած է Դամասկոսի պետական երաժշտանոցի դասընթացքներուն, ապա, մեկնած է Երեւան, կատարելագործելու համար իր երաժշտական մասնագիտութիւնը տեղւոյն Կոմիտասի անուան երաժշտանոցէն ներս, որու ընթացքը աւարտած է 1992-ին: Թորոնթօ հաստատուելէն ի վեր, մենահամերգով եւ բազմաթիւ այլ առիթներով հանդէս եկած է: Ներկայիս դաշնամուրի դասատու է:

Յայտագրի երրորդ մասը՝ «Եղեռն եւ Վերածնունդ», սկսաւ 10 վայրկեան դադարէ յետոյ:

Շնորհալի ասմունքող Թամար Տօնապետեան յաջորդաբար արտասանեց Սիամանթոյի «Խեղդամահը» քերթուածը եւ Դանիէլ Վարուժանի «Հայհոյանք» բանաստեղծութիւնը, ջուլթակով ընկերակցութեամբ Սոնա Գալթակեանի, որ նուագեց է. Յովհաննիսեանի «Յուշեր» կտորը: Ապա, Կոմիտասի «Քելէ, քելէ» երգի եղանակը նուագեցին ջութակով՝ Սոնա Գալթակեան եւ դաշնամուրով՝ Թալին Գլըպոզեան:

Ջութակահար Սոնա Գալթակեան ծնած է Երեւան: Ջութակի դասընթացքի սկսած է 6 տարեկանին, Չայքովսքիի անուան երաժշտանոցէն ներս, ապա, յաճախած է եւ աւարտած Կոմիտասի անուան երաժշտանոցը, արժանանալով Մագիստրոսի (MASTERS) վկայականին, որպէս համերգային կատարող եւ ուսուցիչ: Աշխատակցած է Կոմիտասի անուան երաժշտանոցին, նաեւ

Երեւանի պետական «RADIO-SYMPHONIC» նուագախումբին: 2006-ին հաստատուած է Թորոնթօ: Ներկայիս ջութակի դասեր կու տայ «ONTARIO CONSERVATORY OF MUSIC»-ի եւ «MELODY MUSIC SCHOOL»-ի մէջ, նաեւ կ'ընկերակցի զանազան նուագախումբերու, ներառեալ «PETERBOROUGH SYMPHONIC» եւ «ONTARIO PHILHARMONIC» նուագախումբերուն: Հանդէս եկած է բազմաթիւ առիթներով՝ Երեւանի եւ Օնթարիօ-յի մէջ:

Թամար Տօնապետեան բեմ գալով խոր ապրումով եւ դիտակցութեամբ ասմունքեց Վահագն Դաւթեանի «Հաւատում եմ քեզ» բանաստեղծութիւնը: Այնուհետեւ ցուցադրուեցաւ «Դէպի երկիր» բովանդակութիւն ունեցող տեսաերիզ մը, որ խոր տպաւորութիւն թողուց հանդիսականներուն վրայ, հայրենասիրութեան պատգամով եւ ներկայ Հայաստանի, Արցախի եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքները, վանքերը եւ մեր կորսւած հողերը ցուցադրելով...:

Յայտագրի չորրորդ մասը սկսաւ Թամար Տօնապետեանի կողմէ արտասանուած Սարմէնի «Ինձ մեր սարերն են կանչում» քերթուածով, շուրի ընկերակցութեամբ Զիւան Ստեփանեանի, որ նուագեց Կոմիտասի «Կաքաւիկ» կտորը:

Երիտասարդ Զիւան Ստեփանեան ծնած է Թորոնթօ, փոքր տարիքէն բազմաթիւ երաժշտական գործիքներ նուագած է, ներառեալ դաշնամուր եւ աւագափող: Հինգ տարիներէ ի վեր տուտուկ, շուրի եւ զուռնա կը նուագէ «Հորովել» խումբին մէջ: Աւարտական տարուայ աշակերտ է «Եորք» համալսարանին մէջ: Կը հետեւի երաժշտութեան եւ ուսուցչական զոյգ ճիւղերուն: Զանազան առիթներով իր մասնակցութիւնը բերած է բազմաթիւ ձեռնարկներու:

Խօսք՝ Աւետիք Իսահակեանի, «Բինկէօլ» երգը երգեց Այլին Հերոսեան, քանոնի ընկերակցութեամբ Մարիանա Թորոսեանի եւ տուտուկով՝ Զիւան Ստեփանեանի:

Քանոնահար Մարիանա Թորոսեան ծնած է Իրաք: Փոքր տարիքէն սկսեալ բազմաթիւ երաժշտական գործիքներ կը նրւագէ: Իր նախասիրած քանոնի կողքին, ներառեալ տաւիղը, դաշնամուրն ու ջութակը: 2006-ին հաստատուած է Թորոնթօ: Ներկայիս «Եորք» համալսարանին մէջ առաջին տարեշրջանի աշակերտ է, կը հետեւի երաժշտութեան ճիւղին: Մաս կը կազմէ «Հորովել» խումբին եւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական

Եկեղեցւոյ դպրաց դասին: Հանդէս եկած է բազմաթիւ առիթներով Իրաքի եւ Թորոնթոյի մէջ:

Խաչատուր Աւետիսեանի «Մախմուր աղջիկ» երգը քանոնով նուազեց Մարիանա Թորոսեան, ապա, Այլին Հերոսեան, իր սրտառուչ ձայնով երգեց «Քելէ լաօ» սասունցիներու իրենց կորսնցուցած երկրին կարօտը արտայայտող երգը, տուտուկով ընկերակցութեամբ Զիւլան Ստեփանեանի:

Որպէս երգչուհի ապագայ խոստացող Այլին Հերոսեան ծընած է Պարսկաստան: Պատանի տարիքին հաստատուած է Թորոնթօ: Համալսարանական ուսումը աւարտած է արժանանալով քիմիագիտութեան եւ կենսաբանութեան մէջ Պսակաւոր Գիտութեանց (B.Sc. HONOURS) վկայականին:

Զայնամարզութեան հետեւած է «ROYAL CONSERVATORY OF MUSIC»-է ներս: Ներկայիս մաս կը կազմէ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ դպրաց դասին: Զանազան առիթներով իր մասնակցութիւնը բերած է գաղութի ձեռնարկներուն:

Շնորհալի ասմունքող Թամար Տօնապետեան յուզումնաւար կշռոյթով, արմատներով սասունցիական զգացումներով ասմունքեց Սիլվա Կապուտիկեանի «Քելէ լաօ» բանաստեղծութիւնը:

Յայտագրի վերջին մասը՝ Գէորգ Էմինի «Սասունցիների պարը» բանաստեղծութիւնը ասմունքեց Թամար Տօնապետեան՝ հպարտութեամբ, խանդավառութեամբ եւ հրճուանքով, ընկերակցութեամբ Համազգայինի «Էրեբունի» պարախումբի երիտասարդ անդամներուն, մանաւանդ սասունցիական հերոսածին «Նարխուշտա» պարի հետեւողականութեամբ: Պարախումբի բեմադրութիւնը խոր հասկացողութեամբ եւ արուեստով ստանձնած էր պարուսոյց Լոուի Նաճարեան:

Յայտագրի վերջաւորութեան յայտագրի բոլոր մասնակցողները բեմ հրաւիրուեցան, արժանանալով ներկաներու բուռն ծափողջոյններուն:

Փակման խօսքով Հանդէս եկաւ ընկերուհի Արշօ Արապաթլեան եւ վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց յայտագրին մասնակցող բոլոր արուեստագէտներուն, ինչպէս նաեւ բեմայարգար Մատլէն Մովսէսեանին, յայտագրի ձեւաւորումը կատարող Արա Տէր Յարութիւնեանին, տեսաերիզը պատրաստող Յակոբ Գուզուլեանին, ձեռնարկը կազմակերպե-

լու օգնողներուն եւ մանաւանդ ներկայ ժողովուրդին, որոնք եկան պանծացնելու հայ մշակոյթը եւ քաջալերելու երիտասարդ արուեստագէտները:

Յայտագրին մասնակցողները արժանացան ծաղկեփունջերու:

Ներկաները գաւիթին մէջ հիւրասիրուեցան սուրճով եւ կարկանդակներով: Միեւնոյն ատեն դիտեցին Համազգայինի կերպարուեստի դասընթացքներուն հետեւողներուն ստեղծագործութիւնները:

Պէտք է հպարտութեամբ խոստովանիլ, որ ներկայ եղանք Համազգայինի առաքելութիւնը արդարացնող պատուաբեր գեղարուեստական ձեռնարկի մը, որուն կարօտը ունէինք երկար ատենէ ի վեր:

Շնորհաւորելի են կազմակերպիչները եւ յայտագրին մասնակից բոլոր արուեստագէտները, մանաւանդ շնորհալի ասմունքող Թամար Տօնապետեանը:

Վարձքերնիդ կատար Համազգայինի զինուորագրեալներ:



ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԷՐ ՄԵՂՐԻԿ
Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆԻ
ՈՐՊԷՍ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայ գրութեամբ նախ կ'ուզեմ արձանագրել Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի անձնական կարողութիւնները, եւ Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ 2002 թուականէն ի վեր ստանձնած հովիւի պաշտօնի ընթացքին անոր կատարած եկեղեցաշէն եւ դրական գործունէութիւնը:

Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծայրագոյն Վարդապետ եղած է միշտ համեստ եւ խոնարհ եկեղեցական մը, օժտուած աստուածային բազմաթիւ շնորհներով եւ տաղանդներով: Ան հայ մշակոյթին ծառայած է որպէս երաժշտագէտ, յօրինող, դաշնակահար, գրող, բանաստեղծ, հրատարակիչ, խմբավար ու կրօնական գիրքերու հեղինակ:

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ 12 տարիներու հովուութեան ընթացքին, որպէս բացառիկ տեսիլք ունեցող եկեղեցական, կազմակերպած է հոգեւոր բազմաթիւ ձեռնարկներ, զօրացնելով ժողովուրդին քրիստոնէական հաւատքը, հայ նոր սերունդի զաւակները մօտեցնելով Եկեղեցիին եւ Քրիստոնէութեան, կազմակերպելով նաեւ Սուրբ Գրոց սերտողութիւններ բոլոր տարիքներու համար, յատկապէս երիտասարդներու ու պատանիներու համար: Կիրակնօրեայ դպրոցի ազգային եւ կրօնական դաստիարակութեան կողքին, ամէն Երեքշաբթի առաւօտեան ժամը 9:00-11:00, ՀՕՄ-ի «Պապայեան» Մանկապարտէզի եւ «Գոլուեան» Նախակրթարանի մինչեւ երրորդ դասարանի աշակերտութեան սորվեցուցած է մեր եկեղեցական աղօթքները, շարականները, սաղմոսները եւ եկեղեցական սպասներու եւ եկեղեցականներու տարազներու անունները, ապա, առաւօտեան յատուկ արարողութիւններ՝ Հայ Կեդրոնի Երէցներու Ընկերակցութեան անդամներուն համար:

Բազմաթիւ գիրքերու կողքին, ամէն շաբաթ հրատարակած է Եկեղեցւոյ կիրակնօրեայ մտորումներու «Եկեղեցի» թերթիկը եւ բացառիկ բովանդակութիւն ունեցող «Շողակաթ» պարբերաթերթը:

ԻՐ ԱՍՏԱՐԱԿԱԾ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԳԻՐՔԵՐՆ ԵՆ.—

- 1.- «Անձինք Նուիրեալք», Երաժշտական, Անթիլիաս, 1990, 20 էջ:
- 2.- «Դաշնաւորեալ Շարականներ», Երաժշտական, Անթիլիաս, 1996, 120 էջ:
- 3.- «Հովիւին Ծաղկեալ Գաւազանին Հետքերով», Թորոնթօ, 2005, 204 էջ:
- 4.- «Կիլիկիայէն... Անթիլիաս, Ամայութենէ... Առաքելութիւն, Որբանոցէ... Դպրանոց», Թորոնթօ, 2005, 76 էջ:
- 5.- «Ոսկուն Լեռներու 40-ամեայ Ուխտաւորը», Թորոնթօ, 2008, 170 էջ:
- 6.- «Սրբալոյս Միւռոն», Թորոնթօ, 2008, 130 էջ:
- 7.- «Աստուածածին, Մեղա՛յ Քեզ», Թորոնթօ, 2008, 106 էջ:
- 8.- «Սուրբերուն Մտերմութեան Մէջ», Թորոնթօ, 2009, 99 էջ:
- 9.- «Միշտ Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամ», Թորոնթօ, 2009, 161 էջ:
- 10.- «Մա՞հ Թէ՛ Կեանք», Թորոնթօ, 2014, 188 էջ:

ՀՐԱՏԱՐԿԱԾ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

- 1.- «20-ամեակի Յուշ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ», Թորոնթօ, 2003, 52 էջ:
- 2.- «Խաչի Անդաստանի Թափօր»:
- 3.- «25-ամեակի Յուշ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ», Թորոնթօ, 2008, 100 էջ:
- 4.- «Աղօթքի Յօդեր, Նամակներ Աստուած Պապային», Թորոնթօ, 2011, 94 էջ:
- 5.- «Արարողութիւնք, Ս. Ղեւոնդեանց Քահանայից Համագումարի Առիթով», 2011, 94 էջ:
- 6.- «Օրհնութիւն եւ Օծում», Ս. Աստուածածին, Թորոնթօ, 2011, 60 էջ:
- 7.- «30-ամեակի Յուշ, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ», Թորոնթօ, 2013, 128 էջ:

- 8.- «45-ամեակ Գերաշնորհ Տէր Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի Քահանայական Ձեռնադրույթեան եւ Օծման», Թորոնթօ, 2013, 72 էջ:
- 9.- «Ազատութեան Փրկագիրներ», Հեղինակ՝ Խաժակ Սրբ. Արք. Յակոբեան, Թորոնթօ, 2013, 322 էջ:

ԻՐ ԱՏԱՐԱԿԱԾ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ

CD-ՆԵՐՆ ՈՒ DVD-ՆԵՐՆ ԵՆ.—

- 1.- «Երգեցէք Միշտ, Մանուկներ», CD, Զարեհ Եպիսկոպոս, Անթիլիաս, 2001:
- 2.- «Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան Երգեր», CD, Անթիլիաս, 2001:
- 3.- «From Darkness To Light», CD, Անթիլիաս, 2001:
- 4.- «Ս. Պատարագ Հայց. Առաք. Եկեղեցւոյ», 2 CD, Թորոնթօ, 2006:
- 5.- «Peace On Earth», Խաղաղութիւն Աշխարհի, CD, Թորոնթօ, 2006-2007:
- 6.- «Peace On Earth», Խաղաղութիւն Աշխարհի, DVD, Թորոնթօ, 2006-2007:
- 7.- «Մայիսեան Փառատօն», 2 CD, Թորոնթօ, 2007:
- 8.- «Մայիսեան Փառատօն», DVD, Թորոնթօ, 2007:
- 9.- «The Last Days of Jesus», Յիսուսի Վերջին Օրերը, 2 CD, Թորոնթօ, 2008:
- 10.- «The Last Days of Jesus», Յիսուսի Վերջին Օրերը, DVD, Թորոնթօ, 2008:
- 11.- «Գթա՛, Տէր», Լենա Պէյլէրեան, 2 CD, Թորոնթօ, 2009:
- 12.- «Spirit of Christmas», Ծննդեան Հոգին, 2 CD, Թորոնթօ, 2009:
- 13.- «Spirit of Christmas», Ծննդեան Հոգին, DVD, Թորոնթօ, 2009:
- 14.- «Sound of Heaven», Թորոնթօ, 2011:
- 15.- «Հայ Մանուկի Տարի», ասմունք, Իզապէլ Յակոբեան, Թորոնթօ, 2012:

Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, 25 տարիներ առաջ, որպէս կուսակրօն քահանայ օծման եւ ձեռնադրույթեան առիթով, (28-29 Մայիս 1988-ին), Հայր Սուրբին Հոգեւոր Հայ-

ըր՝ Երջանկայիշատակ Տէր Զարեհ Սրբ. Եպիսկոպոս Ազնաւորեան իր տուած քարոզին մէջ ըսած է, ի միջի այլոց. — «Ի վերջոյ այսօր նոր անուն մը ստացար: Այսօր կոչուեցար Տէր Մեղրիկ Քահանայ: «Մեղրիկ» անունը անունն է այն մեծ սրբակենցաղ վարդապետին (1045-1115)..., որ քեզի նման քսան տարեկանին կոչուած էր Աստուծոյ քահանայութեան եւ ինքզինք տուած էր ճգնական կեանքի, բայց մանաւանդ իր ժողովուրդի ուսուցողութեան եւ վարդապետութեան:

«Հիմնադրեց երկու կարեւոր վանքեր: Այդ վանքերէն առաջինը պիտի ըլլար մեծագոյնը կիլիկիան վանքերուն՝ «Դրագարկ»ի վանքը, որ պիտի դառնար ուսման եւ լոյսի կեդրոն մը, այն վանքը, որ ժամանակակից մատենագիրներու վկայութեամբ, պիտի դառնար «Տեղի Իմաստասիրաց եւ Գրասիրաց»: Այդ վանքի հիմնադրութենէն ետք զայն լեցուց իրեն նման հաւատաւոր վանականներով, զայն լեցուց «հին կարգերով, սեւ աւանդութիւններով» եւ այդ ձեւով Կիլիկիոյ նորակազմ հայկական պետականութեան եւ Սոոյ Կաթողիկոսութեան, ինչպէս նաեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ տուաւ իր ամբողջութիւնը կերտող վանական հաստատութիւններէն կարեւոր մէկ հատը: Իսկ իր հիմնած երկրորդ վանքը պիտի ըլլար «Խորին Անապատ»ը»:

Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ հովիւ՝ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, 25 տարի առաջ ընդունելով Գէորգ Վարդապետ Մեղրիկի անունը, իր նուիրեալ գործունէութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ վանքին մէջ զանազան պաշտօններ կատարելէ ետք, Վեհափառ Հայրապետին՝ Արամ Ա. Կաթողիկոսին որոշումով ղրկուեցաւ Թորոնթօ եւ ստանձնեց Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւի պաշտօնը:

Հայր Սուրբը հոգեւոր հովիւի պաշտօնը ստանձնած առաջին օրէն, ուխտելով Գէորգ Վրդ. Մեղրիկի գործունէութեան, իր անսպառ կարողութիւնները եւ Աստուածային շնորհները ի գործ դրաւ կազմակերպելով Աւետարանի սերտողութիւններ բոլոր տարիքներու համար, հրատարակեց կիրակնօրեայ հոգեւոր մտորումներու «Եկեղեցի» թերթիկը եւ «Շողակաթ» պարբերաթերթը:

Հայր Սուրբը յատուկ հոգածութեամբ զբաղեցաւ եկեղեցւոյ գոյգ դպրաց դասերով, որոնք կոչուեցան «Զարեհ Ազնաւորեան» դպրաց դասեր: Կազմակերպեց եկեղեցւոյ ծառայող

յանձնախումբեր: Նորանոր վարագոյրներով պայծառացուց եկեղեցւոյ խորանը: Եկեղեցւոյ գորգերը նորոգեց: Ժամանակի ընթացքին գունաթափած եւ մաշած եկեղեցւոյ պատերը, խորանը, գաւիթը, «Յովնանեան» սրահը, մեծ գումարներ հանգանակելով եւ ծախսելով նորոգել տուաւ: «Յովնանեան» սրահին մէջ գետեղուեցան Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիլիկիոյ կաթողիկոսներուն եւ Գանատայի Թեմի առաջնորդներուն նկարները:

Բացառիկ կերպով կազմակերպեց «Սիրոյ սեղաններ»՝ Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան, ինչպէս նաեւ տաղաւարներու եւ տօնական օրերու յիշատակութեան առիթներով, զանազան նրւէրներով միշտ գնահատելով բարեպաշտ ժողովուրդը: Պատարագի ընթացքին կրօնաշունչ, ազգայնաշունչ ու բարոյալից քարոզներով, քրիստոնէական շունչ եւ ոգի ջամբեց ժողովուրդին:

Հայ Օգնութեան Միութեան «Պապայեան» Մանկապարտէզի եւ «Գոլուեան» Նախակրթարանի մինչեւ երրորդ դասարաններու աշակերտներուն ամէն Երեքշաբթի առաւօտեան ժամը 9.00–11.00 սորվեցուց Հայաստանեայց Եկեղեցւոյ աղօթքները, շարականները, սաղմոսները եւ եկեղեցական սպասներուն անուններն ու եկեղեցականներուն տարազներուն անունները:

Յատուկ հոգածութեամբ զարկ տուաւ Կիրակնօրեայ Դպրոցի դասընթացներուն, միշտ գնահատելով ծառայող մանչերը եւ ուսուցիչները:

Եկեղեցւոյ առաքելութեան զարկ տալու առաջադրութեամբ, հաստատեց «Կիլիկիոյ Զայն» կրօնական ռատիոկայանը, որուն սփռումները տեղի կ'ունենան ամէն Կիրակի, երեկոյեան ժամը 8.00–11.00: Իսկ վերջերս սկսաւ հեռասփռուիլ հեռատեսիլային նոր ծրագիր մը: Շաբաթը երեք անգամ, ամէն Երեքշաբթի, Ուրբաթ եւ Կիրակի օրերը, երեկոյեան ժամը 8.00–9.00, եւ ամիսը անգամ մը՝ Ս. Պատարագի ամբողջական սրփռում:

Հայր Սուրբը որպէս երաժշտագէտ եւ խմբավար, կազմակերպեց եւ բացառիկ յաջողութեամբ ներկայացուց երեք համերգներ, շուրջ 150 մասնակցող երգիչներով: Առաջին համերգը՝ «Ծննդեան Համերգ», 2006 թուականին, երկրորդը՝ «Մայիսեան Համերգ»՝ 2007, «Յիսուսի Վերջին Օրերը»՝ 2008:

Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեվանքին 75-րդ տարեդարձին առիթով, Հայր Սուրբը կազմակերպեց երգեհոնային նուազահանդէս, անձնական դաշնամուրային ելոյթով, «Կիլիկիայէն... Անթրիաս, Ամայութենէն... Առաքելութիւն եւ Որբանոցէ... Դպրանոց» առաջադրութեամբ, որուն հասոյթը՝ \$100.000,00 (հարիւր հազար տուար) յատկացուեցաւ Դպրեվանքին բարգաւաճման:

Հայր Սուրբը յատուկ ճիգ եւ աշխատանք գործադրեց եկեղեցւոյ դպիրներուն եւ սարկաւագներուն թիւը բազմացնելու մանուկներով, պատանիներով եւ երիտասարդներով:

Կազմակերպեց դպիրներու, կիսասարկաւագներու եւ սարկաւագներու ձեռնադրութիւն, Կիրակի, 27 Ապրիլ 2003-ին, ձեռամբ Գանատայի Հայոց Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Խաժակ Սրբ. Եպիսկոպոս Յակոբեանի, տպաւորիչ եւ հիանալի աղօթքներով, շարականներով եւ յայտագրով, արժանանալով հաւատացեալ ժողովուրդին յարգանքին եւ գնահատանքին:

Հայր Սուրբը, որպէս հոգեւոր հովիւ Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, ինչպէս ապագային հոգեւոր տեսուչ Հարաւային Օնթարիոյ եւ Առաջնորդական Փոխանորդ Գանատայի Հայոց Թեմին, յաճախ, տօնական առիթներով գնահատած է բարեպաշտ ժողովուրդը զանազան նրւէրներով, գնահատագիրներով եւ ճաշկերոյթներով:

Մեծապէս գնահատելի էր նաեւ եկեղեցւոյ յատուկ խորհրդանշանով պատուելը Թորոնթոյի շուրջ 30 հայերէն եւ անգլերէն գրող հայ հեղինակներն ու գրողները, քաջալերելով հայ գրողները, որպէսզի շարունակեն ծառայել հայ մշակոյթին եւ գրականութեան:

Յատուկ գնահատանքի արժանացաւ մեր սիրելի սրբակենցաղ Հայր Սուրբը, որուն նախաձեռնութեամբ եւ գործակցութեամբ Թորոնթոյի քրիստոնեայ համայնքներու ղեկավարներուն, Հինգշաբթի, 9 Օգոստոս 2012, երեկոյեան ժամը 8:00-ին, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ միջ-համայնքային աղօթացասութիւն Սուրբիոյ խաղաղութեան համար, որուն ներկայ գտնուեցան համայնքային եկեղեցիներու հովիւներն ու հաւատացեալները, թիւով շուրջ 500 հոգի, որոնք եկած էին խմբային աղօթքներով

դիմել ամենակարող Աստուծոյ, որպէսզի խաղաղութիւն պարգեւէ Սուրբոյ ժողովուրդին:

Աղօթասացութեան ներկայ գտնուող հաւատացեալները կը զարմանային ձեռնարկը կազմակերպելու գաղափարը յղացող եւ այնքա՛ն յաջողութեամբ գործադրող եկեղեցականին, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին, որ իր այնքա՛ն ծանր եւ յոգնեցուցիչ հոգեւորական աշխատանքներու կողքին ինչպէ՞ս ժամանակ կը գտնէ նման եւ այլ ձեռնարկներ կազմակերպելու, զոհելով իր հանգիստը եւ գիշերային քունը:

Հայր Սուրբը իր քաղցր լեզուով, բարեհամբոյր բնաւորութեամբ եւ կենցաղով Ս. Աստուածածին Եկեղեցին հասցուց նիւթապէս եւ բարոյապէս օրինակելի եւ գնահատելի բարձրութեան: Իսկ Հայր Սուրբը միշտ յարգուեցաւ եւ սիրուեցաւ հայ ժողովուրդի երեք յարանուանութեանց զաւակներէն եւ այլ համայքներու ղեկավարներէն եւ ժողովուրդէն:

Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան իր մեղրանոյշ բնաւորութեամբ, բարեգործութիւններով, դպրոցական հանդէսներու, միութենական ձեռնարկներու իր աղօթքներով եւ պատգամներով, կ'աշխատի վառ պահել դպրոցականներու, ծնողներու եւ միութենական հայորդիներու սրտին մէջ հայկական խրոխտ ոգին եւ զգացումները, մեծապէս օգտակար դառնալով Հայ Դատին եւ հայապահպանման պայքարին:

Ամէն տարի, Ծաղկազարդի եւ Աւագ Շաբթուան օրերը բացառիկ պատրաստութեամբ կը տօնուէին Ս. Աստուածածին Եկեղեցւոյ կողմէ, մանաւանդ Աւագ Ուրբաթ օրուան եկեղեցական արարողութիւններն ու Յիսուսի դազաղը դպիրներու, սարկաւազներու, նուազախումբի ներկայութեամբ կազմուած ժողովրդային թափօրի շրջապայութիւնը եկեղեցւոյ յարակից պողոտաներէն եւ թաղերէն, խորապէս տպաւորելով դիտողները:

Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը՝ Վերափոխումն Սուրբ Աստուածածնի, ամէն տարի տօնուեցաւ յատուկ եկեղեցական արարողութիւններու, խաղողօրհնէքի եւ քերմէսի, երկու օրերու ընթացքին, հոծ հայորդիներու ներկայութեամբ եւ խանդավառութեամբ:

Հայր Սուրբը միշտ պատշաճօրէն ընդունած է մեր եկեղեցին այցելող կրօնական եւ աշխարհական բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնց կարգին Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, 2005 թրւականին: Այդ այցելութեան ընթացքին Վեհափառը «Կիլիկեան Իշխան»ի, «Կիլիկեան Ասպետ»ի, «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի Շքանշաններով պատուեց եկեղեցւոյ եւ Հայ մշակոյթին ծառայող կարգ մը հաւատացեալները:

Եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ կազմակերպուած Ս. Ծննդեան եւ այլ առիթներով, Հայր Սուրբին առաջարկով եւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի ձեռամբ գնահատուեցան եկեղեցւոյ ծառայող կարգ մը հաւատացեալներ:

Հայր Սուրբը քանի մը տարիներէ ի վեր գնահատելի գաղափարով եւ կազմակերպութեամբ դէպի Քրիստոսի ծննդեան, քարոզչութեան, խաչելութեան, թաղման եւ յարուստեան վայրերը ուխտագնացութիւններ կազմակերպեց, իր իսկ առաջնորդութեամբ: Բոլոր ուխտաւորները խոր գոհունակութեամբ վերադարձան, ծրագրելով յաջորդ տարի կրկին մաս կազմել ուխտաւորներու խումբին:

Որպէս «Հորիզոն» շաբաթաթերթի եւ այլ թերթերու թղթակից, եւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Եկեղեցւոյ «Շողակաթ» պարբերաթերթի աշխատակից, միշտ առիթ ունեցած եմ ներկայ ըլլալու Հայր Սուրբին հովանաւորութեամբ կազմակերպուած եկեղեցական արարողութիւններուն եւ ձեռնարկներուն, յաճախ գործակցելով եւ օգտակար դառնալով իր ծրագրներուն գործադրութեան, ունեցած եմ այն գաղափարը, որ մեր եկեղեցւոյ բազմաշնորհ հովիւր, շուրջ 12 տարի ծառայելով Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, իր միակ նպատակը եղած է օգտակար դառնալ իր օգնութեան կարօտ ծնողներուն, որոնք նիւթական անբաւարար եկամուտ ունենալով դիմած են Հայր Սուրբին եւ իմ ներկայութեամբ ան իր անձնական հոգածութեան առած է անկարող ինը աշակերտներու դպրոց արձանագրութեան վճարումները՝ շուրջ \$6.000,00 տոլար, այն խոր գիտակցութեամբ, որ հայկական դպրոց յաճախել ուզող աշակերտ մը նիւթականի պատճառով չստիպուի յաճախել պետական վարժարաններ: Նման բազմաթիւ բարեգոր-

ծուլթիւններ ըրած է Հայր Սուրբը, իր եւ հոգաբարձութեան միջոցներով:

Հայր Սուրբին անձնագոհ եւ նուիրեալ գործունէութեան մասին կարելի է գիրք մը գրել, մանրամասնօրէն թուելով իր կատարած ազգակերտ, հայադրոշմ եւ քրիստոնէավայել աշխատանքները:

Ներկայիս, պաշտօնական մարմիններէն տեղեկացած ըլլալով, որ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Վարչութեան եւ Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերաշնորհ Տէր Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի ղեմովներուն անսալով, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, գնահատելով Հայր Սուրբին մտաւորական կարողութիւններն ու 25 տարիներու ծառայութիւնը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան որպէս միաբան եւ հոգեւոր զինուորագրեալ, որոշած է Հայր Սուրբը եպիսկոպոս ձեռնադրել Կիրակի, 27 Ապրիլ 2014-ին, Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Այս որոշումը ինծի՝ 30 տարի Հալէպի մէջ ծառայած կիրակնօրեայ դպրոցներուն որպէս ուսուցիչ եւ տեսուչ, անցնելով դպրութեան 10 տարիներէն, ինչպէս նաեւ կիրակնօրեայի աշակերտութեան 12 տարիներէն, եւ վերջապէս, որպէս «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանակիր, մեծ ուրախութիւն պատճառեց, որովհետեւ «Հայաստանեայց Եկեղեցին օժտուեցաւ կարող, բազմաշնորհ եւ նուիրեալ իշխանով մը՝ ի փառս մեր ազգին եւ մեր Ս. Եկեղեցիին»:

Կանխայայտ շնորհաւորութիւններ նորած Գերաշնորհ Տէր Մեղրիկ Սրբ. Եպիսկոպոս Բարիբեանին:

ՈՒՍՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՆՃԱՐԵՂ
ԲԱՆԱՍՏԵՂԾ
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ
ԾՆՆԴԵԱՆ 115-ՐԴ
ՏԱՐԵԴԱՐՉԻՆ
ԱՌԹԻԻ

1898-2013

(Թէւ կարգ մը աղբիւրներ ծննդեան
թուականը 1897 կը համարեն)



Եկել – երկաթի երգ եմ՝ ձեզ առում
Ես – Կարմիր Պոէտ – Եղիշէ Չարենց:
Ե՛ս եմ նայիրցի մի հսկայ պոէտ:

Ո՞վ գիտէ արդեօք՝
Բերե՞լ է մէկը այսօր աշխարհում
Խառնելու ձեր մեծ ու հզօր երգին
Մի երգ – աւելի՛ ըմբոստ ու արի,
Քան իմ երգը մեծ – երգը՝ Նայիրի...:

Ո՞վ գիտէ արդեօք՝
Բերե՞լ է մէկը այսօր աշխարհում
Խառնելու հզօր, բոսոր ձեր սրտին
Մի սիրտ – աւելի՛ ըմբոստ ու արի,
Քան իմ սիրտը թէժ – սիրտը՝ Նայիրի:

Եւ ո՞վ, ո՞վ կ'ասի՝
Նետե՞լ է արդեօք մէկը աշխարհում
Այսօրուայ կարմիր, կարմիր ձեր երթին
Ողջոյն – աւելի՛ առնական, արի
Քան ողջոյնը՝ քո, երկիր արնաճամ, կարմիր՝ Նայիրի...:

Ծաղկի պէս կարմիր, հրասիրտ, զուարթ,
Բացուել է այսօր սիրտս նայիրեան

Աշխարհի սրտում
Թէժ, կարմիր սրտում վառուող աշխարհի:
Իմ հագա՛ր անգամ ու հագար սրով
Արնոտած, խոցուած սիրտը նայիրեան
Յուզում է հոգիս անհուն մի խնդում,
Խնդում մի հրէ

Եւ երգում եմ ես, անե՛ղ ու պայծառ,
Քո էն երգը մեծ, տիեզերական,
Երկիր Նայիրի...
Երգում եմ հիմա քո երգը էն մեծ,
Որ սրտիս տուեց տառապանքը քո,
Քո աշխատունակ, յաղթ ժողովրդի
Տառապանքը մեծ:

Ե՛ս, ե՛ս եմ նորից. —
Դարերից եկած անհուն մի պոէտ —
Եղիշէ Չարենց —
Նայիրի երկիր, քո երգիչը վառ,
Օրհնեբգուն պայծառ
Ու գաւակը մեծ...:

Այսքան հպարտ է պոէտի հոգին, այսքան խրոխտ՝ իր խօսքը եւ այսքան բարձր իր կարծիքը՝ Նայիրեան Աշխարհի «վառ երգիչի» մասին:

«Դարերից եկած անհո՛ւն, մի հսկայ պոէտ»՝ իր ժողովուրդին այս մեծ գաւակը:

Այս է Չարենցի կարծիքը իր անձին եւ քնարին մասին: Եւ իրաւունքով:

Ազգերը դիւրութեամբ Չարենցներ չեն կրնար ծնիլ:

Իր առոյգ եւ հզօր ոճով, մեր երկրին խրոխտ կատարներով, բուրումնաւէտ լանջերով եւ բեղմնաւոր դաշտերով նման իր շքեղ, պայծառ ու մարմար լեզուով, իր երգի ինքնատիպ ձեւով, իր խօսքի իմաստուն խորհուրդով եւ իր ցեղաշունչ քնարով ան կոչուած էր բացառիկ բանաստեղծ մը ըլլալու մեր գրականութեան մէջ:

Բանաստեղծին մէջ մշտապէս եղած է այն գիտակցութիւնը,

որ ինքը իբրեւ ստեղծագործող աշխարհ եկած է «պատմութեան թելադրանքով»:

«Եւ մեծ եմ ես, քանզի ինձ մեծ երթ էր նշուած պատմութիւնից», գրած է ան 1932-ին, «Երկեր»-ու անձնական օրինակին վրայ: Կարդալով այս գիրքը, ան նաեւ իր հանճարեղութեան զգացողութիւնն է ունեցած. —

Քո անունը Չարեց,
Աստուանս է «Արեւ»
Եւ բառն — «Հաննարեղ»:

...Պետութիւնն ամբողջ իր ապարատով՝
Ելել է ահա... մի պոէտի դէմ. —
Էլ ինչպէ՞ս ես ինձ ահով չդիտեմ,
Ու «չհիանամ» իմ «բիրտ» սփաթով, —
Եւ... գարիուրելի իմ ուժով հպարտ՝
Չբացագանչեմ — հերոս եմ ու մարդ...:

*
*
*

Աւագանի անունով Եղիշէ Սողոմոնեան, ծնած է Կարս 1898 թուականին:

Հայրը՝ զբաղումով գորգավաճառ: Եղիշէի մանկութիւնը անցած է իր ծննդավայրին մէջ, ուր տիրող միօրինակ ու սահմանափակ աւօրեայէն տաղտկացած կ'երեւի խանդավառ երազներով տոգորուած ապագայ բանաստեղծը:

Միշտ նորը յայտնաբերելու հետամուտ Եղիշէն աչքերը բացաւ Առաջին Համաշխարհային Պատերազմի թոհուբոհին ու հայ ժողովուրդի պատմութեան բախտորոշ տարիներուն, որոնց ազդեցութեան տակ մշուշուհիլ սկսան ազգի հեռանկարին թափանցել ուզող իր մարգարէական տեսիլները:

Նախնական եւ միջնակարգ ուսումը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք, 1915-ի Սեպտեմբերի վերջաւորութեան կը մեկնի Մոսկուա եւ կ'ընդունուի Շանեաւսկի համալսարանի պատմագրական բաժինը: Այստեղ իր ուսանողական տարիները կը բոլորուին տնտեսական լուրջ զրկանքներու յանձնառութեամբ:

1915-ին Երեւանի մէջ կը զինուորագրուի հայկական 6-րդ

կամաւորական գումարտակին եւ իր մասնակցութիւնը կը բերէ Վանի կռիւներուն:

1917 թուականի Մարտին կ'երթայ Կարս եւ կը զբաղուի ուսուցչութեամբ: 1918-ին կ'ընդունուի Համայնավարական շարքերը: 1918-1919 թուականներուն զինուոր է Կարմիր Բանակին:

1920-ի վերջաւորութեան կը վերադառնայ Երեւան, ուր աշխատանքի կ'անցնի Լուսաւորութեան Նախարարութեան մէջ, իբրեւ արուեստի բաժնին վարիչ:

Երեւանի մէջ կը ծանօթանայ Արփենիկ Տէր Աստուածատուրեանին հետ, որ յետագային կը դառնայ իր կողակիցը: Կ'ունենայ երկու աղջիկ՝ Արփիկ եւ Անահիտ եւ մէկ մանչ՝ Անդոկ: Իր աղջիկներէն մէկը Արփիկ կոչուելու առիթն ալ պատճառ կը հանդիսանայ, որ իր կնոջ անունը վերածուի Իզապելլայի:

Չարենցի երազն էր արտասահման ուղեւորուիլ եւ ծանօթանալ ժամանակակից լոյսի ու արուեստի ջահակիր կեդրոններուն: Փայփայտած այս երազը կ'իրականանայ 1924 թուականի Նոյեմբեր 21-ին, Ալեքսանդր Միասնիկեանի եւ Ա. Խանջեանի ջանքերով, որոնք միշտ կը գնահատէին եւ կը պաշտպանէին զինք:

ՉԱՐԵՆՑԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Չարենցի գրական առաջին փորձերը կատարուած են 1912-1914 թուականներուն:

1914 թուականին, տասնըվեցամեայ պատանի Չարենց գրեց «Երեք Երգ Տխրադալուկ Աղջկանս» գրքոյկը՝ իրապաշտ գոյներով, որ պսակադրումն է իգական սեռին:

1916-ին լոյս տեսաւ «Կապուտաչեայ Հայրենիք»ը՝ տեսլական խօսք հայ ժողովուրդի ճակատագրին եւ արհաւիրալի պատմութեան մասին:

1917-ին գրուած «Ծրածանն ու Պոէմ Յաւիտեանական»ը՝ որ կը հանդիսանայ գովքը պատկերազարդուած աղջիկներու:

Չարենց խորհրդապաշտ էր իր այս նախափորձերուն մէջ: Սիրահար՝ գեղեցիկ ձեւերու: Անձնական սիրոյ պատմութեան ձեւին տակ՝ յուզական եւ կիսաւարտ գոյներով պատկերներ:

«Դանթէական Առասպել»ը՝ 1915-1916 թուականներուն:

Աշխարհամարտի արհաւիրքներէն հաւաքուած տխրատեսիլ պատկերներ՝ բնութեան ու մարդկութեան տարածքով:

«Սոմա»՝ գրուած 1918-1920 թուականներուն: Երկը կը գատորոշուի գունագեղ պատկերներու տաղաչափական այլազանութեամբ եւ յատկանշական ինքնատպուլթեամբ:

«Ամբոխները Խելագարուած»՝ գրուած է 1918 թուականին: Հայրենասիրական շունչով յուզական եւ գեղարուեստական պերճութեամբ արժէքաւորուած գործ մը: «Ամբոխները Խելագարուած» պոէմը յեղափոխական շունչի չարենցեան պաշտամունքի դրուագն էր, ուր այլաբանութեան կը փոխարինեն ժողովրդական փոթորկածին դիւցազունները:

Այս պոէմին մէջ Չարենց Հայաստանը կը ներկայացնէ ոչ թէ հեռաւոր տեսիլքի պատկերով, այլ իբրեւ պատմական ճշմարտութիւն՝ իր նոր գոյութեան իրական սահմանագիծերու վրայ:

«Ամբոխները Խելագարուած» պոէմի ցայտուն տողերով ու ազգային վերածնութեան հրովարտակներով, Չարենցը 1919-ին Հիւսիսային Կովկասէն Հայաստան եկաւ, որ այդ ժամանակ ոչ միայն աւերակ էր՝ ասպատակողներու դաժան վայրենութիւններով, այլ՝ աշխարհագրական երեւոյթներով: Այսուամենայնիւ «հայրենի տան մոխիրներու տակ» ան տեսաւ այն կրակները, որոնք պէտք է բերէին լուսապսակ քրոջ՝ Հայաստանի փրկութիւնը:

Եթէ ուզեն՝ արեւներին նոր տեմպ կը տան ու նոր ուղի,
Եթէ ուզեն՝ արեգակներ կը շպրտեն երկինքն ի վե՛ր,
Եթէ ուզեն՝ վար կը բերեն երկինքներից արեգակներ....:

1921-1925 թուականներուն չարենցեան ստեղծագործութիւնները իրենց իմաստասիրական բովանդակութեամբ եւ գեղարուեստական յարաճուն յագեցուածութեամբ, կը համարուին այլապէս ուշագրաւ: Ընդհանրական նի՞ւթը՝ պսակագարդումը խիղճով պայծառ հոգիներու:

1930-ին լոյս տեսած է «Էպիքական Լուսաբաց»ը: Բանաստեղծութիւններու ժողովածու մըն է, գրուած՝ Լենինկրատի մէջ, 1929-ական թուականներուն: Գեղարուեստական օժտուածութեամբ այս գործերը ունին արուեստի եւ իրականութեան սերտացման մտահոգութիւնը:

«Գիրք Ճանապարհի»ն լոյս տեսաւ 1933-ին: Գեղարուեստական մակարդակ նուաճած գործ, չափածոյ տարազին տակ մուշկ պատկերներով, որոնք մտահոգութիւններ, խորհրդածութիւններ են ճակատագրով հարուածուած մեր ժողովուրդի լինելութեան մասին:

Չարենցը Յեղափոխութեան զինուոր եւ բանաստեղծ դարձաւ յանուն հայրենիքի ու ժողովուրդի, յանուն իր փայփայած վեհ նպատակներուն, բայց ան այն բանաստեղծն էր, որուն երկերուն մէջ գրեթէ միաժամանակ, կողք-կողքի կը դրսեւորուէին ազգային ողբերգութիւնն ու յեղափոխական խանդավառութիւնը: Քանի մը տարիներու ընթացքին իրար ետեւէն ծնուեցան «Տանդէական Առասպել»ն ու «Վահագն»ը, «Յարդգողի Ճամբորդներ»ն ու «Ողջակիզուող Կրակ»ը (1918-20), «Սոմա»ն ու «Ամբոխները խելագարուած»ը (1918), «Ամենապոէմ»ն ու «Մահուան Տեսիլք»ը (1920), «Տաղարան»ը (1920-21), որուն մէջ էր մեր ամէնէն ազգային ու հայաշունչ բանաստեղծական գոհարը՝ «Ես Իմ Անուշ Հայստանի»ն:

Բնական է, որ Չարենցի՝ 1920-30-ական թուականներուն գրական առաջնորդի եւ մեծագոյն հանճարի հանդէպ պիտի դրսեւորուէր երկակի վերաբերմունք, դաշնակցականները եւ բոլոր ազնիւ մտածողները պիտի գնահատէին անոր երկերուն բարձր արուեստը, հզօր թափն ու ազգային ոգին, իսկ Չարենցի հակառակորդներն ու բողջեւիկեան նեղմիտ քննադատութիւնը պետական յանձնարարութեամբ պիտի դատապարտէին անոր ազգային բովանդակութեամբ երկերուն եւ յատկապէս «Ես Իմ Անուշ Հայստանի» բանաստեղծութեան համար, որը գրուելէն անմիջապէս ետք տարածուած է ժողովուրդին մէջ եւ 1922-ին տպուած է Հ. Սարխաթեանի կազմած «Գրական Գոհարներ» գիրքին մէջ:

Չարենցի տաղանդը գնահատող եւ երեւան հանող անձերէն մէկը Նիկոլ Աղբալեանը եղած է: Ան Չարենցի մասին դասախօսութիւն մը տալով Երեւանի մէջ՝ «Մի Նոր Բանաստեղծ» վերնագրով, խորհրդարանի շէնքին մէջ եւ խուռն բազմութեան ներկայութեան, նոր բանաստեղծին անունը տարածուեցաւ եւ Չարենցը դարձաւ հռչակաւոր անուն:

Չարենցը անդրադառնալով Աղբալեանի դասախօսութեան, «Չարենց Նամէ» պոէմով կը գրէ.-

Էլ ինչո՞ւ ծիծաղէր հոգիս,
 Երբ Նիկոլ Աղբալեանը մի օր,
 Սարսելով դահլիճն ու ֆոյէն,
 Աւետեց ամբողջ աշխարհին,
 Որ ծնուել է մի մեծ պոէտ,
 Որ ծնուել է երգիչ մի վառ
 Ու բերել է երգեր հրէ.
 Յնձա՛, նայիրեան աշխարհ,—
 Յնձա՛, Եղիշէ Չարեցի:

Համահայկական ճանաչում գտած «Ես Իմ Անուշ Հայաստանի» քերթուածը բանաստեղծի վառ տարիքի ուշագրաւ գործերէն է, չարենցեան հոգիի արագ ու սահմանագերծ բունկումը: Ձեռով ու խորքով գերազանցապէս ազգային այս լայն կտաւի վրայ հիանալիօրէն իրար ամբողջացնող պատկերներու հոյլ մըն է, որ ժողովուրդ մը բնութագրելու կոչումով, ընթերցողը հազորդակից կը դարձնէ անոր անցեալ ու ներկայ տենչերուն, մտորումներուն, մշակոյթին: Այսպէս, իր ամբողջութեան մէջ պոէմը կենցաղի ու միջավայրի դիմանկարներով կը հանդիսանայ համայնապատկեր մը՝ մեր ժողովուրդի ազգային պատկանելութիւնը ցուցադրող: Այս գործը ունի իր ուսերէն, ատրըպէյճաներէն, վրացերէն, գերմաներէն, իտալերէն, չեխերէն, լեհերէն, սպաներէն եւ ֆրանսերէն թարգմանութիւնները:

Բանաստեղծութեան առաջին տողին մէջ «արեւահամ բառն եմ սիրում»ը, բազմաթիւ մտաւորականներ կը ճշդեն, որ արեւահամ «բառ»ը պէտք է ըլլայ «բար»ն եմ սիրում: «Բար» բառը պարսկերէնէ առնուած՝ պտուղ կը նշանակէ:

Չարենց Կոմիտաս Վարդապետի նկատմամբ ունեցած է արտակարգ սէր ու հիացում: Անոր աճիւնի Երեւան տեղափոխման առիթով գրած է երկարաչունչ պոէմ մը, խորագրուած «REQ-UIEM ALTERNAM»:

Չարենցեան կուսումներու բնական շարունակութիւնը եղան իր հրովարտակները՝ «Նայիրի Երկրից», «Դէպի Ապագան», «Բրոնզէ Թեւերը Կարմիր Գալիքի» ռատիօպոէմները:

1920 թուականի Մարտ-Յունիս ամիսներուն գրուած «Բոլորին, Բոլորին, Բոլորին» հրովարտակը վկայեց Չարենցի բացառիկ պայծառատեսութիւնը: Ռատիօպոէմներուն ան չդիմեց ո՛չ կրօնական կերպարներու, ինչպէս ժամանակի շատ բանաստեղծները:

տեղծներ, ոչ ալ դիցաբանական պատկերներու, այլ՝ յեղափոխութիւնը ներկայացնել իբրեւ ժողովրդական կեանքի բուն արմատներէն ծնուած երեւոյթ: Այսպէս ան իջաւ հրապարակ, աւետելու Կարմիր Յեղափոխութեան առաքելութիւնը.—

Եկել, երկաթէ երգ եմ ձեզ ասում,
Ես — կարմիր պոէտ — Եղիշէ Չարեց,
Ե՛ս եմ նայիրցի մի հսկայ պոէտ,
Ե՛ս, ե՛ս եմ նորից —
Դարերից եկած անհուն մի պոէտ —
Եղիշէ Չարեց —
Նայիրի երկի՛ր, քո երգերը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու գաւակը մեծ... .
Եկել եմ դարերից ու գնում եմ յաղթական,
Դէպի դարերը նորից՝ դէպի վառուող ապագան:
Եւ պինդ է ոգիս: Եւ ոչ մի ժանիֆ
Ինձ չի բաժանի Լեւինեան դարից,
Ինչպէս ոչ մի ուժ ինձ չի բաժանի
Իմ շոնդալից, պայծառ քնարից:

Օ՛ Հոկտեմբեր դու ազատարար,
Որ ջրերի պէս ելած յորդուն,
Կեանքի ըզձանքը քշեցիր դուրս
Եւ բերիւր մեզ կեանք մը լուսաւոր:

Անձնագոհութեամբ զօրավիզ ըլլալ հայրենիքի ճակատագրին — սա էր Չարենցի մարգարէութեան նոր կէտը՝ արտայայտուած «Մահուան Տեսիլ» (1920 թ.) բանաստեղծութեան նարեկացիական շիկացման հասած տողերով.—

Թող ոչ մի գոհ չպահանջուի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախադանին թող մօտ չգան,
Եւ թող տեսնեմ իմ աչքերի մէջ կախուածի,
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մէջ կախուածի
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագայ:

«Մահուան Տեսիլ»ին չափազանց հարազատ են «Ողջակիզուող Կրակ» շարքի «Իրիկունը», «Վերադարձ», «Առաւօտ» հատուածները, ուր երկու արժէքներ՝ մահն ու կրակը, հանդէս կու գան իբրեւ Հայաստանի ողջակիզման եւ վերածնութեան խորհրդանշաններ:

Մահէն՝ ողջակիզումէն մինչեւ կրակ՝ վերածնութիւն, ահա այն տարածութիւնը, ուր բանաստեղծը կ'որոնէր Հայաստանի գոյութեան խորհուրդը, կ'որոնէր նահատակներու արիւնով ու պայծառ յոյսերով, ինքնայրումներով ու երազի ջահերով, իր մոխիրներէն վերակենդանացող «փիւնիկ թռչունի» հնազարեան դիւցազներգութեան սկզբունքով:

Չարենցեան կուհուներու բնական շարունակութիւնը եղան իր հրովարտակները՝

Ահա կանգնել եմ ես
Լեռների վրայ իմ աւեր երկրի,
Կանգնել եմ հաստատ եւ երգ եմ ասում
Խնդասիրտ, արի՛ —
Եւ նետում եմ իմ երգը հողմաճայն
Ժողովուրդներին բոլոր կողմերի,
Բոլոր կողմերում տառապող մարդուն:
Եւ ասում եմ ես.
— Եկել եմ ահա,
Եկել հասել եմ դարերի մութից,
Անբոց մշուշից հեռու դարերի —
Եւ բերել եմ քեզ, կարմիր ձեր երթին
Սիրտը Նայիրի...:

Յեղափոխութիւնը Չարենցի ռատիօպոէմներուն մէջ ներկայացուած է ոչ միայն իբրեւ համաշխարհային պատմութեան շրջադարձային կէտ, ոչ միայն իբրեւ Նայիրեան Երկրի վերածրնութեան նախադրեալ, այլեւ նոր պոէզիայի ծննդեան աւագան:

Ասում եմ — նայիրցի մի հսկայ պոէտ —
Եկել եմ ահա դարերից հեռու
Ու հին մշուշից —
Մշուշի միջից անթիւ դարերի,
Եւ իմ ամենատես պայծառ աչքերով
Նայում եմ հեռուն:

Եղիշէ Չարենց իր «մահուան Տեսիլ» պոէմին մէջ անդրադարձած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հիմնադիրներէն Քրիստափոր Միքայէլեանին.

Մենք թողենք պարող գանձին եւ ուզմի շփորով մարդուն,
Եւ կրկին դանդաղ ֆայլերով ֆայլեցինք անտառի միջով. —
Եւ թնդաց յանկարծ անտառում մի երկինք հասնող դղրդիւն,
Եւ անտառը լցուեց ծայրէծայր բարձրաձայն լացով ու ճիչով:

Սարսափած՝ վազեցինք մենք առաջ ծառերի միջով անտառի,
Անպաշտպան կրծքերս նրանց ճիւղերի հարուածին բացած, —
Եւ այդպէս երկար վազելով — դուրս եկանք յանկարծ անտառից
Եւ փռուեց աչքերիս առջեւ — ամայի, ընդարձակ մի բացատ:

Ողողուած կարմրաւուն լոյսով — ձգուում էր բացատն ընդարձակ,
Ամայի, ինչպէս անապատ, անպտուղ, ֆարֆարոտ ու լուռ.
Այդ մռայլ բացատի մէջտեղում, հրաշքի նման բարձրացած,
Ցցուել էր ժայռերից կերտած մի կարմիր կոնաձեւ բլուր:

Ոլորուն մի ուղի էր տանում բացատով դէպ բլուրն այդ թեփ:
Քայլեցինք ուղիով այդ ոլոր, — եւ ահա, բլուրին չհասած,
Հանդիպեց, կտրեց մեր ուղին մի ինչ-որ կերպարանք անդէմ,
Մի, կարծես դժոխքից ելած, անսահման դժնի արարած:

Դա մա՞րդ էր, հրո՞ւ թէ մի դե՞ւ, — դժուար էր որոշել իսկոյն:
Նման էր հսկայ մառերի, շարժում էր թռիչքով թեթեւ.
Մնում էր մի պահ իր տեղում — եւ յանկարծ թռիչք է անում
Կարն, հատու, ինչպէս դաշտերում մորեխն է թռչում տեղից տեղ:

Այդպիսի թռիչքով հատու ծառացաւ երբ նա մեր առաջ —
Սկզբում տեսանք մենք միայն ոսկորի եւ մսի մի կոյտ.
Կարծես մէկը առել էր մի խուրձ ոսկորներ եւ խառնել էր իրար,
Իսկ յետոյ — իրարու կապել, խառնելով ազդրեր ու գլուխ:

Ներքեւից, ձախ ոտի մօտից, գլուխը նայում էր վերեւ՝
Աչքերից շանթեր թափելով, ատամները ֆսելով իրար,
Աջ ոտի մատներով մի պահ նա գունատ նակատը փերեց —
Եւ սապէս նա խօսեց՝ ներքեւից ցատումով նայելով մեր վրայ:

«Ո՛վ դուք, որ մտել էք ահա այս մոռյլ Անտառը Ահի —
«Նայեցե՛ք հատեալ կմախփիս եւ գլխիս՝ պոկուած իր տեղից —
«Աշխարհում որոնում էի ես խոհեր կոուի ու մահի,
«Եւ գլխի փոխարէն ունէի մեքենայ՝ շինուած թիթեղից — :

«Ես սրտի փոխարէն ունէի իմ կրծքում պողպատ զսպանակ,
«Անծանօթ էր կեանքում ինձ համար ամենայն վարանում ու ահ,
«Մեր երկը արի այրերից կազմեցի եւ մե՛ծ մի բանակ,
«Եւ մեր սեւ դրօշի վրայ գրեցի «Հայրենիք կամ Մահ»:

«Գնացին նոքա, այդ արի զինուորները, Երկիրն Աւետեաց,
«Տիրում էր այնտեղ բոնութիւն, ե՛ւ ոնիր, եւ կեանք անագատ,
«Գնացին նոքա՝ սրբելու մեր դէմքից նախատիւն ու լաց,
«Բայց երկիրն արեամբ ողողեց տագնապած Արքան այն գագան:

«Ես գլուխս դարձրի այնժամ դժոխփի մի գոռ մեքենայ,
«Բայց, դժբախտ փորձի ժամանակ, Արքայից հեռու նա պայթեց. —
«Եւ խփեց խորտակեց նա ինձ... իսկ Արքան կենդանի մնաց,
«Եւ իբրեւ դելի տրիտուր, նախնիրներ նիւթեց ու ջարդեց...:

«Եւ մնաց նա կենդանի ու կենդանի՛ մնաց... վա՛յ ինձ...
«Աշխարհից հեռացայ ես այսպէս՝ իմ ուխտը թողած անկատար...
«Եւ ո՛չ մի կաթիլ չիմած արիւնից այն Հրէշ Արքայի՝
«Ես կեանքից ընդմիշտ հեռացայ... եւ չունեմ հանգիստ ու
դադար...»:

Թռչկոտում էր նա խելայեղ, կատաղի դառնութեամբ վայում,
Դառնում էր օդում, ինչպէս հող, եւ ճիչեր արձակում ցաւի, —
Մենք դիտում էինք քարացած, սարսափած աչքերով նայում,
Երբ յանկարծ մօտեցան նրան երկու այր՝ դէմքերով կաւին:

Բուսնելով կարծես խաւարեց՝ մօտեցան նրան երկու այր,
Երկու մարդ սեւագգեստ, մոռյլ, կրծքերին պղնձեայ նշան,
Կմախփներ էին՝ զգեցած զգեստներ մթին ու մոռյլ,
Ձեռքերին ոսկորներ բոցած, ինչպէս գոռ մարտի դրօշակ:

Ելնելով կարծես խաւարից՝ մօտեցան նրանք այն հողին,
Որ ցատկում ու դառնում էր օդում եւ ճիչեր արձակում ահեղ, —

Եւ մէկը նրանցից, որ ունէր հայեացքներ՝ մոռյլ փայլով լի —
Սկըսեց ձեռքերով օդում, նրա շուրջը շարժումներ ընել:

Հիպնոսող բժիշկն է ինչպէս նորագոյող շարժումներ անում՝
Հիւանդի առջեւ շարժելով պսպղուն մի գունդ, կամ բիւրեղ —
Նա շարժում էր այդպէս մի ոսկոր, կրկնելով անյայտ մի անուն,
Յօնքերի տակից ցայտելով կրակներ կարմիր ու հուրեր:

Այդ մոռյլ կանչերի ներքոյ հոլատիպ մարդը ֆիչ-ֆիչ
Սկըսեց թուլանալ, հանդարտել. — Եւ ահա ընկաւ ուժասպառ.
Ցնցւում էր մի ֆանի վայրկեան իր գլուխը միայն ահագին,
Բայց նա էլ հանդարտուեց ահա... Եւ տիրեց լուռութիւն անբառ: —

Մենք նայում էինք ֆարացած պատկերին այդ մութ ու յոռի,
Եւ ուզում էինք հեռանալ, ընթանալ բացատով կրկին,
Երբ հնչեց բլուրի գլխից հոիւնդը ուղմի շեփորի,
Եւ լսուեց աղմուկ, ոտնաձայն — ներքեւից, անտառի խորքից:

Լսելով ձայնը շեփորի — վեր թռաւ տեղից հոլաձեւ
Այն կմախքը, կամ մարդը կրկին՝ ճակատին արնաթոր վերքերը. —
Մի ֆանի վայրկեան ֆարացած, ականջը շեփորին, նա լսեց, —
Եւ ֆամու նման սրընթաց — երեքով սլացան ներքեւ:

Շոիւնդը ուղմի շեփորի թնդում ու կանչում էր մինչդեռ,
Ձայնում էր բլուրի գլխից, ինչպէս կոչ, երթի աղաղակ, —
Եւ լսում էին ներքեւից, անտառից — նիչեր ու կանչեր,
Հաւաքում էր կարծես անտառում եւ երթի էր ելնում մի բանակ:

Վերեւից, բլուրի գլխից հնչում էր շեփորը, կանչում,
Տագնապով, ինչպէս ահագանգ, — Եւ ձայնին նրա զուգահեռ՝
Լսում էր հառաչ, ոտնաձայն, մի գանգ էր հեռուն ղօղանջում,
Եւ վառում էին անտառում բազմաթիւ կրակներ ու ջահեր...:

*Չարենցի գրչին տակ Քրիստափորը կը ներկայանայ իբրեւ
մէկը, որ ուխտած էր Հրէշ-Արքայի «արիւնից խմել մի բաժակ»,
ուխտ մը, որուն անկեղծութեան լաւագոյն ապացոյցը եղաւ իր
եղերական մահը, կը ներկայանայ իբրեւ մէկը, որուն «անձանօթ
էր կեանքում ամենայն վարանում ու ահ», հսկայ մը, որ «մեր*

երկրի արի այրերից կազմեց մի բանակ», շաղախեց ու միաձուլեց Դաշնակցութիւնը եւ անոր դրօշին քանդակեց՝ «Հայրենիք կամ Մահ»:

Եւ իսկապէս, բանաստեղծին ձեւափոխած նշանախօսքը աւելի հարազատ է Դաշնակցութեան հաւատամքին եւ գործին՝ «Հայրենիք կամ Մահ», քան այն ինչ որ մենք ունինք՝ «Մահ կամ Ազատութիւն»...:

Չարենց յուսահատեցաւ Խորհրդային Միութեան եւ Հայաստանի մէջ իշխող Համայնավար կուսակցութեան միահեծան եւ դաժանագոյն վարչաձեւէն, ուր դասակարգային մաքրագործումներ տեղի կ'ունենային առանց խղճահարուլթեան:

1937 թուականը կը դառնայ արեան խրախճանքի տարի: Ստալինը զոհերու նոր բանակ կը պահանջէ: Չախերը հաւասարակշռելու կու գայ աջ թեքումը՝ թիրախ ունենալով Բուխարինին, Ռիկալին, որոնց կը հեռացնեն կուսակցութենէն: Կը սկսի մահուան նոր շարժում մը՝ սեւ ցուցակներու մէջ նետելով նոր անուններ եւ նոր խմբաւորումներ:

Մարայեան պատմական նիստի որոշումներու կենսագործման եւ Ստալինի ցուցմունքներու անմիջական կատարման նըպատակով, 1937 Ապրիլի 17-21 կը հրաւիրուի հայ գրողներու ընդհանուր ժողով, նախագահութեամբ Իսահակեանի, Կիրպոտինի, Տապաղեանի, Աբովի, Գիւլիքեխեանի եւ Զօրեանի: Բացման խօսքով հանդէս կու գայ Աբովը՝ վերստին կրկնելով հին մեղադրանքները «երկերեսանի նացիոնալիստ-տրոցքիստ» թշնամիները՝ Բակունցը, Ալազանը եւ ուրիշներ, որոնք կարողացած էին իրենց շահատակութիւններու ասպարէզ դարձնել Գրողներու Միութիւնը: Խօսք առին նաեւ ուրիշներ, որոնք դատապարտեցին շեղում ունեցող ազգայնական գրողները:

Այնուհետեւ տեղի կ'ունենան Գրողներու Միութեան հերթական ժողովներ, ուր կը մեկուսացուին Չարենց եւ Բակունց:

Իսկ այդ օրերուն տեղի կ'ունենան արիւնոտ ողբերգութեան հերթական գործողութիւնները: 1937-ի Նոյեմբեր 28-ի առաւօտեան բանտի հիւանդանոցին մէջ, օրեր շարունակ տեւած անգիտակից վիճակէն հտք, բոլորէն լքուած ու անօգնական իր մահկանացուն կը կնքէ Եղիշէ Չարենց՝ ժամանակի եւ բոլոր ժամանակներու մեծագոյն բանաստեղծներէն մէկը:

Չարենց կը մեղադրուի յատկապէս «Ես Իմ Անուշ Հայաստանի» եւ «Պատգամ» բանաստեղծութիւնները գրած ըլլալուն

Համար, որպէս ազգայնական բովանդակութիւն ունեցող բանաստեղծութիւններ:

«Պատգամ» բանաստեղծութիւնը «Գիրք Ճանապարհի» գիրքին մէջ է: «Գիրք Ճանապարհի»ն բաղկացած է 70 բանաստեղծութիւններէ, եօթանասուն տարբեր խորագիրներով: Այս 70 խորագիրներուն մէջ չկայ մէկը այնքան ամբողջական խորհուրդով եւ բովանդակութեամբ, որքան «Պատգամ»ն է:

47 տողերէ բաղկացած բանաստեղծութիւն մը, ուր յայտնապէս ոչ մէկ իմաստ կայ, բայց հոն, հնարամիտ քողարկումի տակ, կայ Չարենցի քաղաքական կտակը իր ժողովուրդին: Բանաստեղծութեան ամէն տողի երկրորդ գիրը միացնելով միւս տողերու երկրորդ գիրերուն, կը կազմուի պատգամը՝ «Ով Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է» նախադասութեամբ: Կու տանք քերթուածը.—

ՆՈր լոյս ծագեց աշխարհին,
Ո՞Վ այդ արեւը բերեց. —

ԱՀա ոսկեայ մի արեւ՝
ՃԱռագումով իր հրէ՝
ԱՅգաբացի պուրպուրէ
ՆԺոյգների վրայ յեց՝
ՆՈր աշխարհին ու մարդուն
ՅՂում է լոյս գուարթուն:
ՆՈր աշխարհին ու մարդուն
Ո՞Վ բերեց լոյսն այս արթուն,
Օ՛, ՈՒ՛մ ձեռքով վառուեց, ո՞ւմ
ՀՐակարմիր, հրավարս,
ԱԴամանդեայ լոյսը այս: —

ԿՔան կեանքի բեռին տակ,
ԽՈր գերութեան ընդերքում,
ԻՄաստութեան մի գետակ
ՅԻմարութեան համերգում —
ՔԱնի՛ տարի, քանի՛ դար
ՎԿայեցիր անհերքում...

ԱՓերին այն խաւարտչին
ՈւՐ հայրենիքն էր մեր հին, —

ԶԿա՞ր արդեօք գետ մի յորդ,
ՈՐ գերութեան անհաղորդ՝
ԼՈՒրթ՝ հոսելով դարից-դար՝
ՄԹութեան մէջ այն յամառ
ԱՅս այգաբացն էր կրում,
ՀՈՒր այգաբացն է այս հեռու՝
ՀՆուց պահած իր ջրում
Օ՛ր Ըղձակա՛ն այս հեռուն...
ԿՔած կեանքի բեռի տակ՝
ՎՈգի՛ անկոր, հո՛ւր գետակ...

Ա.Հա վառում է մեր նոր
ՅԱղթանակի լոյսը բորբ,
ԼԻանում է նա հիմա
ՎԱռուող ոգին մեր անմահ,
ԶՔնաղ արե՛ւն այդ արի,
ՎԱռուած հրով աշխարհի...
ԶԿա՛յ ուրիշ արեւ է՛լ.
ՆԱ է միայն, որ դարեր
ԱՆմար՝ պիտի արեւէ՛...

ԼՈՒսով վառուած սակայն այդ
ՆԺարներից հիմա մենք
ՅԻմարութեամբ չթափենք
ԻՄաստութիւնն այդ արար. —
ՄԵր անցեալի խորամիտ
ԷՋն այն արդար ու ուամիկ՝
ՄԵծահանճար ու վարար...:

1933, 9 Մայիս

*
*
*

Երկու վկայութիւններ Չարենցի մասին.—

«Չարենցը հանճար էր, եթէ ան գրած լինէր միայն «Ես Իմ Անուշ Հայաստանի»ն դարձեալ բաւական էր, որ անցնէր մեծերի շարքը: Դա մեր հինաւորաց երկրի համապարփակ դիմանկարն է: Դա մեր վշտերի ու ձգտումների, պատմութեան դա-

ժան արհաւիրքներին դիմակալելու մեր տիտանական գորու-
թեան գեղարուեստական խտացումն է»:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ

«Զարեցր... Զարեցր... «ես իմ անուշ Հայաստանի արե-
ւահամ բառն եմ սիրում»: Անոր չհանդիպած՝ գիտէի արդէն իր
այս ֆերթուածը: Սկսած էի արտասանել Ամերիկայի մէջ: Ամէն
մէկ բառը բացատրել տուած էի ու գրեթէ գոց սորված: Զայն
մինչեւ այսօր կը նկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատ-
մութեան նուիրուած ամէնէն գեղեցիկ երգը, գովաբանական
աղօթքը, «Հայր Մեր»ին նմանող աղօթք մը»:

ՈՒՒԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ – 1966

*
*
*

*1915-ին կը կամաւորագրուի հայկական 7-րդ գունդին եւ
մարտերով կը հասնի Վան: 1918 թուականէն սկսեալ Զարեցր
կուսակցութեան անդամ եղած է, Կարմիր Բանակի շարքերուն
մէջ մարտնչած է Յարիցիւնի մօտ, Արարատեան հովտի բլուրնե-
րով եւ լեռներով ան մարտնչած է հարազատ ժողովուրդը ազա-
տագրելու: Ան սոսկ ականատես չէր, այլ ռազմիկ էր, մարտիկ,
գործօն մասնակից ե՛լ փառաւոր յաղթանակներու, ե՛լ ահեղ
ռազմարշաւներու, ե՛լ ժամանակի ծանր փորձութիւններու, ու-
րոնք մարդկութեան պատմութեան մէջ սկիզբ դրին նոր սոցիա-
լիստական դարաշրջանի: Եւ սովետական շրջանի ժողովուրդ-
ներու հոգեւոր արժէքներու գանձարանին մէջ կը շողշողայ
Զարեցի քնարերգութիւնը որպէս անզուգական, ինքնօրինակ,
շատ կարեւոր եւ շատ թանկագին արժէք ունեցող գրականու-
թիւն, որով հարստացած է նաեւ հայ գրականութիւնը:*

*Ապագային, սովետական անմարդկային քաղաքականու-
թիւնն ու հայ ժողովուրդի պատմական իրաւունքներու անտե-
սումը եւ գրական արժէքներու անտեսումը եւ ստեղծուած պայ-
քարը ազգային ուղղութիւն եւ գործունէութիւն ունեցողնե-
րուն դէմ, Զարեցը դուրս եկաւ կուսակցութենէն եւ պայքարե-
ցաւ անոր ապագային քաղաքականութեան դէմ՝ յայտնի եւ
անյայտ ճամբաներով եւ գրեց գաղտնիք պարունակող բանաս-
տեղծութիւնը՝ «Ով հայ ժողովուրդ քո միակ փրկութիւնը քո
հաւաքական ուժի մէջ է»:*

Իշխանութիւնները 1933-ին նախ հրատարակեցին «Գիրք Ճանապարհի»ն եւ ապա, ձերբակալութենէն յետոյ, նոր պայքար բացին բանաստեղծին դէմ եւ այն վարեցին աւելի քան երկու տարի, Չարենցէն եւ իր խմբակէն այդ գործի մասին հրատարակային հաշիւ պահանջելով ոչ թէ 1933-ին, այլ՝ 1935 Մայիս 11-ին:

Թէ ի՞նչ անցած-դարձած է 1933-էն մինչեւ 1935 Մայիս 11, կը մնար անյայտ: Անտարակուսելին այն է, որ պաշտօնաթերթի Մայիս 11-ի յայտարարութիւնը, յիշատակութեամբը Ստալինի անունին, ազդու արձագանգն էր մէկ խուլ եւ երկարատեւ պայքարի, որ եղած էր մինչեւ այդ թուականը:

«Գիրք Ճանապարհի»ն հրատարակուած էր ընտիր թուղթով, մաքուր տպագրութեամբ, նկարագարդուած խորհրդապատկերներով եւ բաղկացած էր 317 էջերէ:

Բովանդակութիւնը բաժնուած էր հինգ գլուխներու.—

1.- Պատմութեան Քառուղիներով (9 կտոր),

2.- Արուեստ Քերթողութեան (10 կտոր),

3.- Գիրք Իմացութեան (3 կտոր),

4.- Տաղեր եւ Խորհուրդներ,

5.- Ջանազան բանաստեղծութիւններ եւ թարգմանութիւններ (35 կտոր):

Այս 70 կտորներու մէջ ամէնէն հիմնականներն էին.— «Պատմութեան Քառուղիներով» եւ «Մահուան Տեսիլ»՝ «Պատմութեան Քառուղիներով» գլուխէն, «Պատգամ» եւ «HEINRICH HEINE» (Հայնրիխ Հայնէ)՝ «Ջանազաններ» գլուխէն:

Արդ, ինչո՞ւ «Գիրք Ճանապարհի»ն փոթորիկ ստեղծեց իր շուրջ, փոթորիկ մը, որ ոմանց գլուխները առաւ տարաւ:

Ամբողջ գիրքը կարգալով, կարելի է համոզուիլ, թէ երգիչը ինչպէ՞ս կրցած է դուրս գալ դժուարին կացութենէն, ընել այնպէս, որ ըստ առածի՝ «ե՛լ գայլը կուշտ, եւ գառնուկը մնայ ողջ»:

Այսինքն իր նոր գործով ե՛լ Չարենցի հատորը մնայ՝ ուր Չարենցը չկայ, ե՛լ չմնայ եւ նոր հատոր մը գրուի՝ ուր Չարենցը կա՛յ:

Չարենցը բոլշեւիկ է: Տեղ մը իր «Գիրք»ին մէջ ան կ'ըսէ.— «Շատ հարուստ խոհերով, յոյզերով ու հրով իմ դարը»:

Չարենց ինքզինքը երախտապարտ զգաց դէպի Հոկտեմբերը, որ փառք բերաւ իրեն.—

«Զիրք՝ քեզ Իրանը տուեց, խօսք՝ Նայիրին հնամեայ,
Բայց Հոկտեմբեր՝ը կոչեց քեզ հանճարեղ բանաստեղծ»:

Եղիշէ Չարենց բազմաթիւ բանաստեղծութիւններ ձօնած է
Լենինին եւ Ստալինին, այն խոր հաւատքով, որ անոնք պիտի
տէր դառնան եւ հովանաւորեն Հայաստանը եւ հայութիւնը,
սակայն, յուսահատելով, յառած է «դաշնակիզմ»ին, «Գիրք
Ճանապարհի»ին մէջ գաղտնաբար տալով իր հուշակաւոր
«Պատգամ»ը...:

Չարենցի հեղինակած գործերը եւ ժողովածուները.—

Բանաստեղծութիւններ՝ «Հրոյ Երկիր», «Տեսիլաժամեր»,
«Ծիածանը», «Ողջակիզուող Կրակ», «Էմալէ Պրոֆիլը Ձեր»,
«Տաղարան», «Ութնեակներ Արեւին», վիպերգներ՝ «Դան-
թէական Առասպել», «Կապուտաչեայ Հայրենիք», «Սոմա»,
«Ամբոխները Խելագարուած», «Երեք Ռատիօպոէմ», «Ամե-
նապոէմ», «Չարենց Նամէ», «Խմբապետ Շաւարշը», «Մաճկալ
Սաքոյի Պատմութիւնը», «Կապկազ Թամաշա», «Ստամբոլ»,
«Միւր Դէ Ֆեդերէ», «Դէպի Լեառն Մասիս», գեղօցներ՝ «Լե-
նինն ու Ալին», «Բալլադ Վլադիմիր Իլյիչի», «Մուշիկի եւ Մի
Ջոյգ Կօշիկի Մասին», «Իմ Ընկեր Լիպոն», «Բալլադ Գնդապետ
Թոմասին», «Կոմերիտ Տղի եւ Գործադուլի Մասին», «Բորիս
Ջնելաձէ», արձակ՝ «Երկիր Նայիրի», «Յիշողութիւններ Երե-
ւանի Ուղղիչ Տնիցս», երկու ժողովածուներ՝ «Երկեր» 2 հատո-
րով (1922), «Երկերու ժողովածու» 6 հատորով (1962-1968),
«Հատընտիրներ» (5 հրատարակութիւն):

Կրնա՞ք երեւակայել գրող մը, հայոց Մեծ Եղեռնի, Համաշ-
խարհային Առաջին Պատերազմի մթնոլորտին մէջ, քաղաքա-
կան, կուսակցական, տնտեսական անտանելի պայմաններու մէջ
կրնայ գրել եւ հրատարակել այսքան մեծ թիւով բանաստեղ-
ծական գործեր՝ մինչեւ մահուան թուականը՝ 1937, 39-40 տա-
րեկանին:

Կենդանութեան լոյս տեսած վերջին կարեւորագոյն ժողո-
վածուներն են՝ «Էպիքական Լուսաբաց» (1930), «Գիրք Ճանա-
պարհի» (1934):

- | | |
|--------------------------------|---------------|
| 1.- Երեք Երգ Տիրադալուկ Աղջկան | 1914-ին՝ Կարս |
| 2.- Հրոյ Երկիր | 1913-16 |
| 3.- Տեսիլաժամեր | 1915 |
| 4.- Ծիածան | 1917 |
| 5.- Կապուտաչեայ Հայրենիք | 1915 |

6.- Դանթեական Առսպել	1916
7.- Վահագն	1916
8.- Ազգային Երագ	1917
9.- Հատուած	1918
10.- Սումա	1918
11.- Ամբոխները Խելագարուած	1919
12.- Ողջակիզուող Կրակ	1918-1920
13.- Նայիրի Երկրից	1920
14.- Դէպի Ապագան	1920
15.- Բրոնզէ Թելերը Կարմիր Գալիֆի	1920
16.- Ամենապոէմ	1920-1921
17.- Էմալէ Պրոֆիլը Ձեր (Գալանտ Երգեր)	1920-1921
18.- Փողոցային Պչրուհուն	1920
19.- Տաղարան	1920
20.- Ութնեակներ Արեւին	1920
21.- Մահուան Տեսիլ	1920
22.- Ես Իմ Անուշ Հայաստանի	1921
23.- Չարենց Նամէ	1922
24.- Ի՞նչ Պէտք է Լինի Արդի Բանաստեղծութիւնը	1922
25.- Ռոմանս Անսէր	1922
26.- Կապկազ Թամաշա	1923
27.- Կոմալմանախ	1924
28.- Մանկալ Սաֆոյի Պատմութիւնը	1924
29.- Ասպետական	1922
30.- Երկիր Նայիրի 1922-1925	1921-1924
31.- Պոէմ Հերոսական	1925
32.- Խմբապետ Շաւարշ	1929
33.- Երեւանի Ուղղիչ Տնից	1928
34.- Էպիֆական Լուսաբաց	1930
35.- Լիրիֆական Անտրակտ	1927-30
36.- Գիրք Ճանապարհի	1934

Եւ բազմաթիւ բանաստեղծութիւններ 1935-37 շրջանին, որոնք նուիրուած են «Կոմիտասի Յիշատակին», «Նաւգրիկէ», «Իմ Լեւրան Աղօթքը», «Մի Ամայի Վայրում Չգիտեմ Որտեղ», «Պոէմ», «Հերոսի Հարսանիքը» չափածոյ թատերգութիւնը, «Դուճիկն

Նայիրեան» սոնատներու շարքը, «Հերիկոնը Մեր Երգի Ողջը Տարան Թիարան», եւ բազմաթիւ Ստալինի իրական կերպարը բնութագրող բանաստեղծութիւններ եւ պոէմներ:

Զբաղուած է նաեւ թարգմանչական գործունէութեամբ, Հայերէնի թարգմանելով Կէօթէի, Հայնէի, Հիւկոյի, Ուիթմէնի, Վերհառնի, Ռիլկէի, Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Կորգիի, Մայակովսքիի, Էսենինի եւ ուրիշներու գործերը:

Ան Հանրայայտ դպրոցներու համար կազմած է 14 դասագիրք, իմբազրած եւ հրատարակած է հայ բանահիւսութեան նմոյշներ եւ ժամանակակից գրողներու գիրքերը:

Հանճարեղ բանաստեղծ Եղիշէ Չարենց որպէս քաղաքական բանտարկեալ չարչարուելով Երեւանի բանտին մէջ կը մահանայ 29 Նոյեմբեր 1937-ին:

Չարենցի մահուան 77-րդ տարելիցը նաեւ կու գանք յիշատակելու 2014-ին եւ պիտի յիշատակենք յաւիտեան:



ԾՆՆԴԵԱՆ 80-ԱՄԵԱԿ
ՀԱՅՐԵՆԻ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ
ԱՐՁԱԿԱԳԻՐ
ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԵԱՆԻ
(1933-1980)



Բուն անունով Մուշեղ Մանուկեան: Արձակագիր, լրագրող: Ծնած է 19 Դեկտեմբեր 1933-ին, Թալինի շրջանի Կաթնաղբիւր գիւղը: 1957-ին աւարտելով Երեւանի Գիւղատնտեսական Ուսումնարանի այգեգործական բաժինը, մասնագիտութեամբ աշխատանքի կ'անցնի Մեղրիի շրջանին մէջ, այնուհետեւ Աշտարակի շրջանի Կոշ գիւղը, յետոյ կը տեղափոխուի հայրենի՝ Թալինի շրջանի «Արագած» նորաստեղծ սովխոզ:

1950-ական թուականներուն, Թալինի շրջանային թերթի խմբագիրը Մուշեղ Մանուկեանէն կը խնդրէ որեւէ նիւթով աշխատակցիլ թերթին: 1959-ին, շրջանի քանի մը գիւղերու մասին կը գրէ իր անդրանիկ քննադատական գրութիւնը: Մինչ այդ ան գրած էր շարք մը բանաստեղծութիւններ, խոհ-մտորումներ, որոնք յետագային ոչնչացուցած են:

Քանի մը տարի մասնագիտութեամբ աշխատելէ ետք, ան իր բնածին տաղանդով կը բռնէ լրագրական ասպարէզը՝ աշխատելով շրջանային, այնուհետեւ Աշտարակի եւ Հոկտեմբերեանի թերթերուն, իր խոհուն, սթափ ու թարմ շունչ ունեցող յօդուածներով:

1960-ական թուականներու սկիզբներէն «Աւանգարդ» երիտասարդական թերթի վաստակաւոր խմբագիր Լորիս Կրոյեանը, զգալով ու հետեւելով երիտասարդ լրագրողին, կը հրաւիրէ զայն խմբագրութիւն՝ աշխատելու, վարելով գիւղատնտեսութեան բաժինը, շրջելով համարեա ողջ Հայաստանը, մօտէն

ծանօթանալով աշխատաւորութեան, անոնց առօրեայ կեանքին եւ դժուարութիւններուն: «Աւանգարդ»եան տարիները Մանուկեան-Գալչոյեան յօդուածագրին ամէնաբեղմնաւոր ասորիները եղած են:

Գալչոյեանի, ունենալով գիւղատնտեսի մասնագիտութիւն, «Քեզ Վերելից Պէտք Ձէ Նայել» յօդուածներու ժողովածուն կ'ընդգրկէ իւրովի տեսած ու ապրած Գալչոյեան Հայաստանը, ուր կը տարրալուծուին հողը, մարդը, սէրը, կարօտը, հզօր կամքը, գտածն ու գտնուելիքը: Ան որքան մեծ անհանգստութիւն ապրած է, երբ հայ մարդը, լքելով տունն ու գիւղը, կը դառնայ քաղաքաբնակ կամ կը բռնէ օտարութեան ճանապարհը:

Անսահման է Գալչոյեանի սէրը դէպի Հայաստան աշխարհը: Երբ 1965-ին առաջին անգամ յիշատակուեցաւ Հայոց Մեծ Եղեռնի 50-ամեակը, ան իր սրտի խօսքն ըսաւ «Քեզ Վերելից Պէտք Ձէ Նայել» գիրքով: Ան հայրենասէրի մեծ մորմոք կ'ապրի, երբ ինքնաթիռի բարձրութենէն Հայաստանը ընդգրկուած կը տեսնէ իր տեսողութիւնով: Բայց եւ այնպէս ան յօդուածը կը վերջացնէ այսպէս.— «Ինքնաթիռում ես աւելի լաւ հասկացայ «Դու փոքր ու մեծ Հայաստան» բառերու իմաստը: Հասկացայ, որ դու սրտի չափ փոքր ես, աշխարհի չափ մեծ»:

Մուշեղ Գալչոյեան 1963-1969 կ'աշխատի «Գարուն» ամսագրի խմբագրութեան մէջ՝ իբրեւ բաժնի վարիչ: 1969-1971 կը յաճախէ Մոսկուայի Մաքսիմ Կորքի գրականութեան գրական բարձրագոյն դասընթացքները: 1971-1975՝ դարձեալ «Գարուն»ի խմբագրութեան աշխատակիցն է: 1975-1977 կ'աշխատի «Սովետական Գրող» հրատարակչութեան մէջ՝ իբրեւ գեղարուեստական գրականութեան բաժնի վարիչ:

Գալչոյեանը գրած է արձակ գործեր՝ պատմուածք, վիպակ, վէպ, ինչպէս նաեւ ֆիլմի սենարիոններ: Իր գործերուն հիման վրայ ստեղծուած են քանի մը ֆիլմեր («Զորի Միրօ»ն, «Բովտուն», «Հնաւանդ Թմբուկը»): Արժանացած է Մոսկուայի «Տրուժպա Նարոտով» գրական ամսագրի լաւագոյն պատմուածքի համար սահմանուած մրցանակին: 1981-ին, յետ մահու հրատարակուած «Մարութայ Սարի Ամպերը» ժողովածուն արժանացած է Հանրապետութեան ամէնամեայ գրական մրցանակին: Իր գործերը թարգմանուած են ուսուերէնի եւ այլ լեզուներու:

Մահացած է 15 Հոկտեմբեր 1980-ին՝ որսի ընթացքին՝ խորհրդաւոր պայմաններով, Կաթնաղբիւր գիւղի մօտ:

Իր հրատարակած գլխաւոր գործերը եւ ժողովածուներն են.— վէպ՝ «Բովտուն», վիպակներ՝ «Կածանի շամբորդները», «Զորի Միրօ», ժողովածուներ՝ «Կռունկ», «Ծաղկած Քարեր», «Ընծայագիր», «Մարութայ Սարի Ամպերը», «Ագռաւաքար», «Ծիրանի Ծառ», «Քեզ Վերեւից Պէտք Ձէ Նայել»:

Հայ ժողովուրդի ազատագրական շարժման բազմաթիւ նրւիրեալներէն, իր պապի՝ Գալչոյի Մանուկի անունը Մուշեղը դարձուց գրական անուն՝ Գալչոյեան: 1880-ին ծնած Յովհաննէսը (Հովէն) հինգ-վեց տարեկան էր, երբ Գալչոյի Մանուկը գինուորագրուեցաւ հայդուկային շարժման: Մասնակցեցաւ 1892-1894 թուականներուն տեղի ունեցող Սասունի ապստամբութեան, Բերդակի, Կարսի, Խասգիւղի, Առաքելոց Վանքի եւ այլ կռիւներուն: Մուշեղի եղբայրը՝ Մարգպետը յստակ կը վերյիշէ իր ծնողներուն պատմածը, թէ ինչպէ՛ս հայրը Մեծ Եղեռնի օրերուն կորսնցուցած է իր կինը, չորս երեխաները, Մուշեղի եղբայրը, թէ ինչպէս ամուսնացաւ իր մօր՝ տասնըչորսամեայ Հոռմէի հետ: Մայրն ալ կորսնցուցած էր հայրը՝ քաջ եւ յաղթանդամ Գրիգորը, զոր թուրքերը սպաննած էին խաբէութեամբ, իսկ գաղթի ճանապարհին մահացած էին երկու եղբայրներն ու մայրը: 1917-ին Հովէն Հոռմէին հետ նահանջող զօրքին հետ կ'անցնի Արեւելեան Հայաստան: Կազգուանի մէջ կը հանդիպին հօրը՝ Գալչոյի Մանուկին, զոր շատոնց չէին տեսած: Հայր եւ որդի կը մտնեն Փեթարա Մանուկի «Սասունցիներու Զօրաբաժինը»: Անոնք կը մասնակցին Բաշ Ապարանի, Կողբի, ներքին Թալինի մարտերուն, ինչպէս նաեւ Սարտարապատի հերոսամարտին: Սովետական կարգերու հաստատումէն ետք Գալչոյի Մանուկն ու Հովէն հրաժեշտ կու տան գէնքին եւ հրնարաւորութիւն կը ստանան խաղաղ աշխատանքով ապրելու: 1928-ին մահացաւ Գալչոյի Մանուկը, 1932-ին՝ Հոռմէն, 1977-ին՝ Հովէն:

Մուշեղի մայրը՝ Հոռմէն օժտուած էր ժողովրդական բանասացի ձիրքով: Ան ունեցաւ վեց աղջիկ եւ երկու տղայ:

Մուշեղ Հովէի Գալչոյեանը արկածահար մահացաւ 15 Հոկտեմբեր 1980 թուականին, երկփողանի հրացանի մէջ մնացած վերջին փամփուշտով:

Ի տարբերութիւն իր նախորդներուն, որոնք կեանքի մէկ

Հատուածը անցուցած էին Արաքսէն այն կողմ, կամ տեսած էին, որ Գալչոյեանը այն սերունդէն է, որոնք կորուսեալ երկիրը պատկերացուցած էին կա՛մ երեւակայութեան մէջ, կա՛մ հեռուէն տեսած, զրկուած իր բազմաթիւ գոյներէն, ներկուած միայն կապոյտով: Բայց ան օժտուած էր արտառոց երեւակայութեամբ, ինչ որ կը պատմէին ականատեսները՝ ան կրնար գեղարուեստական խօսքով կեանքի կոչել: Իր չտեսած միջավայրը, դէպքերը, մարդիկը ան կը նկարագրէր այնպիսի անմիջական յստակութեամբ, այնքան կենդանի, որ կը թուէր թէ գացած է Հայրենի երկիր, անցած տասնամեակներու տարածքով, թրծուած իրադարձութիւններու հնոցին մէջ եւ վերադարձեր անցեալի մասունքներու թանկագին բեռով, վերակառուցած այն ոչ թէ կտրտուած, պատառիկներով, այլ՝ համակողմանի ամբողջութեամբ: Եւ իր գիրքը աչքի կ'իյնայ ո՛չ միայն անցեալի վառ ու անմոռաց մանրամասնութիւններու դրուագներով, այլ՝ ընդհանրացուած-բովանդակալից վրձնահարուածներով:

«Մեղապարտը» պատմուածքի հերոսը կ'որոնէ պատճառներու պատճառը: Արձակագիրը հմտօրէն առաջ կը տանի պատմըւածքը, հարցաքննութիւնը դարձնելով հնար հերոսի ներքին քննութեան, ինքնաքննութեան, ժողովուրդի ճակատագրի կնճռոտ հարցերու խորասոյգ քննութեան: Երբեք ան չի մնար մակերեսի վրայ, որքան ալ ան գրաւիչ ըլլայ:

Եթէ գրականութիւնը բնորոշելով կարելի է օգտագործել խորք բառը, ապա աներկբայօրէն կարելի է ըսել, որ Մուշեղ Գալչոյեանը խորքի արձակագիր է. աւելին, ան կը ձգտի թափանցել խորքերու խորքը:

«Մարութայ Սարի Ամպերը» առաջին տպաւորութեամբ կրնայ տարբեր կերպարներու պատկերասրահ մը թուիլ: Բայց այդ կերպարները ոչ միայն կապուած են իրենց բախտով, հոգեւոր անդրադարձումներով, այլեւ՝ բոլորը կ'ընեն ժողովուրդի պատմութիւնը, կենսափիլիսոփայութիւնը, գործն ու ոգին: Այս իշխան գաղափարի մը ու նպատակի, միջավայրի մը ու պատմութեան ճշմարիտ գեղարուեստական համապատկեր է, հեղինակի հոգիին մէջ մարմնացած համապարփակ կերպարի մը ձեւափոխումներ: Բոլոր այդ կերպարները լիարիւն, յոյժ ինքնատիպ անհատականութիւններ են: Միաժամանակ, միասին կը ստեղծեն անսահման մարդկային հիմքի մէջ զարմանալի միասնական, դիւցազնային ոգի մը: Այդ ծերունի, կեանքէն հեռացող

կերպարներու ուժը որոշապէս անոր մէջ է, այդ ոգիի, անոնց արարքները պատմական նշանակալի իմաստներ կը ստանան, խորհրդանշական արժէք: Մարդ եւ բնութիւն ու հայրենիք, մարդ եւ պատմութիւն եւ ազատութեան պայքար: Ահա գիրքի էութեան առնչուող քանի մը խնդիրներ: Ասոնք մաշուած ծրագիրներ չեն, ուր կերպով մը կը պատասպարուին հեղինակի գուր ջանքերով իմաստունի դեր ստանձնող ծերուկներ, վերածուելով յետամնաց զանազան վտիտ մտքերու ու խրատներու տոպրակի: Գալչոյեանի ծերուկները կը քանդեն ժամանակներու շրջափոխան, յարակցելով ներկան ու անցեալը կենդանի միասնութեան մէջ: Անոնք տեսակ մը կը խտացնեն յարատեւութեան այն պայծառ գաղափարը, որ հանճարեղօրէն դրուած է հայ ժողովուրդի հերոսական դիւցազներգութեան հիմքին մէջ: Անոնք երկրի ուժը կրողներն են, ատոր համար ալ ներդաշնակ ձուլուածքով հանդէս կու գան մէկ կողմէն բնութեան, միւս կողմէն ժամանակներու հետ, մէկ աշխարհէն անցնելով միւսը, տեսիլքէն՝ իրականութիւն, անցեալէն՝ ներկան, գոյութեան մէկ ձեւէն՝ միւսը: Անոնց համար կարծես նոյնիսկ մահ չկայ: Ծովասարի Օհանը կը լսէ թուրքերու ձեռքով սպաննուած հօր ձայնը եւ կը պատրաստուի մեկնիլ հօրը մօտ՝ Ծովասար: Կը խօսի մահացած կնոջ.— «Պառաւ, էրկիր կ'երթամ... կը գարմանա՞ս...: Պատուհանէն փրթած լուսէ թել մը եկած է Դաւոյին երկինք տանելու...» կ'ըսէ հեղինակը: «Դաւօն ճամբորդ է», կը մտածեն Դաւոյի գէնքի ընկերները, իսկ ինքը՝ Դաւօն, ո՞ր կ'երթաս հարցումին մտքով, որովհետեւ հոգեվարքի մէջ խօսիլ չի կրնար, կը պատասխանէ. «Կուի է կ'երթամ, Պչուկ...»:

Մուշեղ Գալչոյեան իր գիրքին մէջ էջ առ էջ, դրուազ առ դրուազ զգացմունքային մեծ լարուածութեամբ, բանաստեղծական արտայայտութեամբ կը բանայ հայրենասիրութեան էութիւնը:

— Էլի վերցրու հրացան... Աղբիւր Սերոբը մեռնելու իրաւունք չունէր, նենգութեամբ սպանեցիմ... առասպելական հէֆեաթային հերոսութիւն... մէկը հագարի դէմ կուի... գերութեանէն դուրս գալու հաւատ... յոյս, սերունդէ-սերունդ փոխանցուող յոյս... յոյս... եւ այդ ամէնի արդիւնքը՝ մշուշով լեցուած մութ, խորհրդաւոր եւ որքան անստոյգ է մարդու ճակատագիրը...:

Ներկայացնելով հերոսներու արարքները, կարելի է յիշել

բազմաթիւ օրինակներէն մէկը՝ «Դաւօն» պատմուածքին մէջ, որքան հոծ եւ ցցուն է այն, թէեւ մի քանի տողով ան կը ստեղծէ անողոք իրականութեան ցնցող պատկերը: «Մարութայ Սարի Ամպերը» գիրքը այդպէս ցնցող է սկիզբէն մինչեւ վերջ թէ՛ բովանդակութեամբ, թէ՛ հմուտ, անբասիր կատարումով: Շատ գեղեցիկ գործ է ընդհանուր առմամբ նաեւ «Մուշ Քաղաքի Վերին Թաղի Տղան»:

Գրքի առաջին «Կանչը» եւ վերջին՝ «Մամբրէ Արքան» գրութեան մէջ, կ'ընդգծուին հայոց պատմութեան երկու գոյները: Առաջինը երազի գոյնն է, «...Այսպիսի կապոյտ ու փափուկ առաւօտ մը կար, կապոյտ աշխարհ, Մարութայ Սարը կապոյտ քօղը իր դէմքին, ձորերն ու կիրճերը կապոյտ երկինքով լեցուած, ծերպերուն ու ձորաբերաններուն թառած գիւղերու շունչը կապոյտ էր, սանձը կտրած Տալուրիկի հեւքէն ձորը լեցուած կապոյտը քլթքլթում էր...»: Միւսը արեան եւ պայքարի գոյնն է. «Հայոց տառերը կարմիր են... Քանզի Սուրբ Մաշտոցը իր սիրտէն հանած է լոյս: Եւ կարմիր են, քանզի թրծուած են արդար Արեգակով: Եւ կարմիր են, քանզի սրբազան կոիւններու մասնակից եղած են»:

Հայոց այբուբենի եւ զայն ստեղծողի մասին գեղարուեստական գանձերէն է «Մամբրէ Արքան»: Այս երկի հեղինակը կ'ամփոփէ, ի մի կը բերէ այն, ինչ ըսած է ամբողջ գիրքին մէջ որպէս գրչի զինուոր: Մաշտոցի իսկական աշակերտի իրաւունքով կ'երգնու. «...Մի օրուայ կեանք էլ ունենաս, այդ մէկ օրն ալ հարկ է, որ կուուես արգարութեան համար, ճշմարտութեան ու գեղեցիկին համար»: «Մամբրէ Արքան» ձեւակերպումն է նաեւ գրողի գերագոյն խնդրի, գիրերը գործածել այնպէս, որ հերոսանան, սրբագործուին, որ չբարոյալքուին, դառնան գող, դաւաճան, ստոր, ստրկամիտ, ինչպիսին գիրքին մէջ յայտնուող որոշ տիպերն են: Այդ տիպերը կարեւոր տեղ չեն գրաւեր, երբեմն կ'ուրուագծուին, սոսկ կը յիշատակուին կամ կ'երեւին ու կ'անցնին: Բայց մէկը միւսէն ցայտուն հետք կը ձգեն: Ահա անոնցմէ քանի մը հատը՝ շրջկոտպի նախագահ Վիրաբ Եգորիչը («Ներսէն»), նախագահը, քաղցր-մեղցր ժպիտով հովիւր («Դաշտապահը»), Վասիլեանը («Ձեռնքաղ Հերօն»), քննիչը («Մեղապարտը»), ոչխար գնող երիտասարդները («Շուկան»): Վերջին պատմուածքով կարճառօտ ուրուագծով Գալչոյեան կը ներկայացնէ հասարակական ողջ շերտի մը կերպարը՝ գէր,

կրկնակցակով, անգոյն, անտարբեր երիտասարդի միջոցով, որ ծերունիի երեսին կը շարտէ գողցած փողը.— «Առ գնա՛ ապրի»։ Երեք բառ, որ ամբողջովին կը մերկացնեն այլանդակ էութիւն մը, անոր բերած վնասները չեն չափուիր միայն կողոպտուած դրամի մեծութեամբ, բարոյական վնասները անհամեմատ մեծ, երբեմն ալ անդառնալի են։

«Փողփուշ Մելօն» պատմուածքով նկարագրուած է Հովէի եղբայր Իսրօն։ Մուշեղի հարցին թէ՛ «Իսրոյին նմանութիւն ունի՞մ», «Հայրս մտածեց-մտածեց եւ առանց ինծի նայելու ըսաւ.— Իսրոյի աչքերը նմանապէս կապոյտ են»։ Այս նուրբ ինքնահեգնանքը, որ պէտք է ընդգծէր իր եւ խիզախ հայդուկի խոր տարբերութիւնը, հոն կ'ընդգծուի Մուշեղի համեստութիւնը, քանզի անոր ստեղծագործութիւնը ոչ միայն վաւերացումն է նախնիներու հերոսականութեան, այլեւ կատարեալ սխրանք։

«Մարութայ Սարի Ամպերը» գիրքը կը բաղկանայ 20 պատմուածքներէ.— «Էս Հին Ու Նոր Օրերը», «Կանչը», «Քեռի Թորոսը», «Ներսէն», «Դաւօն», «Ծովասարի Օհանը», «Փողփուշ Մելօն», «Թաթօն», «Զեռնքաշ Հերօն», «Աղօրիք», «Գինարբ Ծաղիկ», «Պատրանք», «Խութեցի Ափրէն», «Շուկան», «Միայնակ Ծառը», «Դաշտապահ», «Մեղապարտը», «Մուշ Քաղաքի Վերին Թաղի Տղան», «Մամբրէ Արքան», «Կապոյտ Աշխարհ», «Էս Հին Ու Նոր Օրեր» պատմուածքը, որ տպուած է «Մարութայ Սարի Ամպերը», «Ծիրանի Ծառ» եւ «Հայրենի Ղօղանջներ» խորագրուած Սփիւռքի դպրոցականներու համար հրատարակուած գիրքին մէջ։

«Էս Հին Ու Նոր Օրերը» պատմուածքին մէջ Մուշեղ Գալչոյեան կը նկարագրէ իրենց ընտանեկան Նոր Տարին, ուր Գալչոյեան ընտանիքի անդամները՝ մեծ, պատանի, փոքր, աղջիկ-տղայ, հագուած-չքուած կը խուժեն իրենց մեծ հօր մօտ, իննսուն տարեկան Հովէի (Յովհաննէս), որ թեւերը իր ծունկերը ծալած, մշուշոտ հայեացքով կը նայի պատուհանէն դուրս։

Պապին թոռները «քո Նոր Տարին շնորհաւոր, պա՛պ» ըսելով կը մօտենան պապին։ Բայց մեծ հօր գիտակցութիւնը եւ միտքը իր ծննդավայր էրգրի մասին է եւ անոնց անունները կու տայ իր ընտանիքի անդամներուն, որոնցմէ շատեր զոհուած են Մեծ Եղեռնի շրջանին։

Խօսակցութիւններ թոռներու եւ իր միջեւ, յիշողութիւններ

անցեալի եւ ներկայի կեանքի մասին եւ պապին Հայրենասիրական զգացումներուն մասին:

Հայրենասիրական վառ զգացումներով եւ անցեալի յուշերով ապրող Զօրոյի եւ Ալէի մասին կը պատմէ Մուշեղ Գալշոյեան «Կանչը» պատմուածքին մէջ:

— Ալէէ՛... Ալէ, իմ հոգին, Ալէէէ՛, — ծերունին մահակին յենած՝ կը կանչէր երգեցիկ: Գառները շաղ եկած էին լեռնալանջին: Զօրօն գառնարած չէր, գիւղը ընդհանրապէս գառնարած չունէր, ամէն մէկը կը քչէր հօտը եւ այդ օրը Զօրոյի կարգն էր:

«Է՛, ե՞րբ էր, էլի գարուն, այսպիսի կապոյտ ու փափուկ մի առաւօտ կար, կապոյտ աշխարհ, Մարութայ սարը կապոյտ ֆօղն է դէմքին, ձորերն ու կիրճերը, կապոյտ երկնքով լեցուած, ծերպերին ու ձորաբերաններին թառած գիւղերի շունչը կապոյտ էր, սանձը կտրած Տալուրիկի հեւքից ձորը լցուած կապոյտը փթփթում էր...: Մարութայ սարի փէշերին փռուած գառներն ու ուլերը խշկոտած ծանօթանում էին աշխարհի ու գարնան հետ: Մատղաշները դունչ ու լեզուով, վախուրած հայեացքներով շօշափում էին ֆարերը, ֆարերի նախշուն մամուռները, հոտոտում էին հողի բոյրը, սեզերից ու չոր փշերից խրտնում, ննդողուկների ֆոռոցի վրայ ծփում ֆարից-ֆար...: Մատղաշները ծանօթանում էին աշխարհի ու գարնան հետ, իսկ Զօրօն՝ տասը-տասնմէկ տարեկան մի տղայ կար՝ այծի մագից գործած շալվարով, այծի մագից գործած մուկակով մի տղայ կար՝ Զօրօն, կանգնած կապտաժեռ վէմին՝ պարսատիկը թափով պտտում էր եւ վըրժժ-վըրժժ-վըրժժ եւ ֆարեր էր շպրտում դէպի ձորը... :

Բանջար հաւաքող աղջնակների նախշուն ֆայլքը վէտվէտում էր լանջն ի վեր: Նրանից մէկը, եօթ-ութ տարեկան պըստլիկ Ալէն, սեւ պլստան աչքերով ու շուխտակ բարակ ծամով Ալէն, բոպիկ ու նաշխուն գոգնոցով կրակի կտոր Ալէն, հենց իրենց թանիկ ուլի, հենց Զօրոյի խլրտուն մատղաշներից էն ներմակ սկանջներով ուլի պէս, ֆարից-ֆար էր թոչկոտում Ալէն... եւ Զօրօն անակնկալ հասկացաւ, զգաց, որ պստլիկ Ալէն... նա իր Ալէն է, ուրիշ ոչ մէկինը, իր Ալէն է ու կայ:

Այս կապոյտ աշխարհը իրենն է, այս դաշն առաւօտը, մետաքսաֆօղ Մարութայ սարը իրենն է, Տիրամայր վանքի գլխին որպէս լոյս իջած ներմակ ամպի պատառն իրենն է, Տալուրիկ ծուռ գետի գոչգոչունը, գիւղի գլխին բզկտուած ծուխը, այս

խլրտուն ու խլուշտ-մլուշտ ուլերն ու գառները իրենն են, արեւը, երկինքը, այս ծաղկած փայերը, ժայռը, որին կանգնած թափով պտըտում է պարսատիկը, վրժժ-վրժժ-վրժժ, այս խելառ պարսատիկը իրենն է, Ալէն... ծաղկեպսակը գլխին փարից-փար թռչկոտող պատլիկ Ալէն... ծաղկեպսակը գլխին փարից-փար թռչկոտող պատլիկ Ալէն իրենն է, ուրիշ ոչ մէկինը չէ, իրենն է ու իրենը»:

Ապագային, 55 տարիներ յետոյ հանդիպում՝ Ալէին հետ, Արարատեան Դաշտի գիւղերէն մէկուն մէջ, ուր Զօրօն իր տղուն ամուսնութեան առիթով գինի գնելու գացած էր: Կորսուած սիրոյ պատմութիւն՝ Սասունէն Արարատեան Դաշտ: Եղեռնէն ետք Հայոց Պատմութիւն...:

Ինչպէս նախապէս անդրադարձայ, Գալչոյեան իր «Մամբրէ Արքան» պատմուածքին մէջ կ'ուզէ հայերէն դաս տալ իր թոռնուհիին, որ այբուբենը կը սորվեցնէր իր եղբօրը, իբրեւ թէ կը նախապատրաստէր տղան, որ գալ տարի այբուբենը սերտած դպրոց երթայ:

Մամբրէ Արքան ուշադրութիւն կ'ընէ, որ թոռնուհին այբուբենը կը սորվեցնէ շուտասելուկի պէս — Ա-Բ-Գ- Դ եւ Զ — առանց հնչեցնելու, առանց ներդաշնակելու: Մամբրէ բարկացած իր թոռնուհիին, երկար վիճաբանելէ ետք բացատրեց այնպէս, ինչպէս ինք սորված էր: Այսպէս.—

Ա՛յբ, բե՛ն, գի՛մ,
 Ե՛լ, Յովակիմ
 Դա՛, ե՛չ, գա՛,
 Լծի՛ր եգան,
 Է՛, ը՛թ, թօ՛,
 Վե՛ր կաց, Թօթօ,
 Ժե՛, ինի՛, լի՛ւն,
 Կապի՛ր ֆո շուն,
 Խե՛, ծա՛, կե՛ն,
 Ո՛ւր է, Յակօն,
 Հօ՛, ձա՛, դա՛տ,
 Միիբան, Միիբդատ,
 Ճե՛, մե՛ն, յի՛,
 Կը գանգ հիմի:

Նո՛ւ, շա՛, ո՛,
 Պրծի, Շաւօ,
 Զա՛, պե՛, ջե՛,
 Ուշ է, Վաչէ,
 Ռա՛, սե՛, վե՛ւ,
 Ծագեց արեւ,
 Տի՛ւն, րե՛, ցօ՛,
 Մարդ Աստուծոյ,
 Հի՛ւն, փի՛ւն, ֆե՛,
 Քելէ, Սրբէ,
 Եւ օ՛, ֆե՛,
 Օ՛, ինչ գով է:

Այսպէս կը սորվեցնէր գիւղական ուսուցիչ Տէր Յարութիւնը:

Ապա, Առաջին Համաշխարհային Պատերազմի պատճառով Մամբրէ Արքայի ուսման վարժարանը կը փակուի եւ Հայ-թրքական-քրտական յարաբերութիւնները կը վատթարանան: Յետագային Մամբրէ գրաճանաչ դարձաւ եւ իր սորվածները սկսաւ սորվեցնել գիւղացիներուն:

Պատմուածքի վերջաւորութեան՝

— Օխաաշշ... — ծոծրակին մօտ այնպէս իրական պոռթկացաւ, ինչպէս, է՛, այն օրը, երբ ինքը Մեհրադըրիւրի մօտ Օսմանի նենգ լակոտ Օսմանին լաւ տրորեց, ապա ծնկեց՝ ջուրը դէպի իրենց շողգամի արտի կողմ շտկելու, իսկ նպոոպ լակոտը, այնուամենայնիւ թիկունքից ֆարով ջարդեց իր գլուխն ու փախաւ եւ ուսն ի ետ ֆարերի պէս շարտում էր, — Աթարունար... Աթարունար, — որպէս թէ՛ աղբիւրի անունը Մեհրէ չէ, այլ՝ Աթարունար, որպէս թէ՛ աղբիւրը ֆոնը չէ, այլ՝ իմը...:

— Օսման, ես ֆու հաւատը...:

Կոտորումն ու գաղթը վրայ տուեցին եւ Մամբրէի ու ֆո կոնը կիսատ մնաց: Եւ մնաց որքա՛ն ժամանակ, որքա՛ն ժամանակ, մինչեւ այսօր... Իսկ այսօր, հիմա, հենց այս գիշեր Մամբրէն ֆո նենգ հերը կ'անիծի... Ահա թէ ինչի համար, թէ ինչի համար Մամբրէն սովորեց հայոց գրերը... Եա՛ Մարաթուկ...:

Բայց մատները չէին ենթարկում, ձեռքը դողում էր եւ հենց առաջին տառը նդուեց:

— Քու անունը... Օսման:

Ոտքի ելաւ եւ յուզուած սկսեց ֆայլել... Հիմա, հիմա սիրտը կը հանդարտի, դողը հիմա կ'անցնի, աչքերը կը լուսաւորուին, կը հանդարտի: Սիրտը եւ Մամբրէն ֆու հարամ հերը կ'անիծի, նամբաների դարանակալ աւագակ... Ահա թէ ինչի համար Մամբրէն սովորեց հայոց գրերը: Համբերիր, հիմա, հիմա...:

Յետոյ ննջարանից բերեց որդու ծխախոտը, վրայ-վրայ ծխեց եւ փչեց դէպի սեղանը: Եա, Մարաթուկ...:

Ընտրեց տետրերից լաւագոյնը, մատիտներից՝ ամէնակարմիրը, թփոտեց մատիտն ու սկսեց.— «Օսման, ես ֆու հաւատը...»: — Ոչ, Սուրբ Մաշտոցի տառերով այդ հարամին հայհոյելը մեղք է: Եւ բացեց տետրի նոր էջ:

«Օսման, թալանչի Օսման...»: — Այ, այսպէս, հենց այսպէս

պէտք է սկսել, բայց անտէր աջը ինչն՞ է դողում: Նա ձախով խփեց աջին եւ բացեց նոր էջ:

«Օսման, թալանչի Օսման...»: — Ոչ, մատիտը, կարծես, ուզած կարմիրը չէ, հարկ է ընտրել վառ կարմիրը, այն գոյնով, որ վարժապետ Տէր Յարութիւնը տառերն էր գործում, այդ գոյնով պէտք է գրել՝ արնագոյնով: Եւ բացեց նոր էջ:

«Օսման, թալանչի Օսման...»: — Ոչ, տառերը, կարծես, փոքր ստացուեցին եւ ոչ այնքան զգաստ: Հարկ է գրել գլխատառերով եւ այնպէս շեշտ ու գգաստ: Հարկ է գրել գլխատառերով եւ այնպէս շեշտ ու գգաստ, որ աւարառուն գրի տեսքից իսկ դողայ եւ բացեց նոր էջ:

Լուսաբացին որդին հօրը գտաւ սեղանի մօտ մարած, նակատը սեղանին, սեղմուած բռունցքում մատիտը եւ նակատի տակ՝ կարմիր գլխատառերով գիրը:

«Օսման, թալանչի Օսման, ուրեմն որպէս աւագակ որ նամբին կանգնեցիր, էդ նամբէն ֆոնն է, հա՞: Քու թալանչի ձեռքն որ դրան դիպաւ, այդ տունը ֆոնն է, հա՞: Քու գիշատիչ աչքն, որ սարը տեսաւ, էդ սարը ֆոնն է, հա՞: Քու հարամ շունչն որ աղբերակին դիպաւ, էդ աղբիւրն ֆոնն է, հա՞...: Աթաբունար... Մամբրէն նար չունեցաւ, թէ քեզ տրորէր, տրորէր ու տրորէր, ու դու հասկանայիր, թէ Տալտրիկի սարերում ու ողջ Սասնոյ սարերում Աթաբունար հարամնուն աղբիւր չկայ: Աղբիւրի անունը Մեհրէ էր ու Մեհրէ կը մնայ՝ Մեհրաղբիւր: Պատմութիւն կայ, արարիչ կայ ու հնուց եկած գրոյց, Առիւծ Մեհրն էդտեղ, հենց էդ աղբրակի բխած տեղն է հանդիպել առիւծին ու ճղել գտիւծն ու, կամօք արարչի, տեղն ու տեղն աղբիւր է բխել: Եւ արարիչն ինքն է կնքել՝ Մեհրաղբիւր: Արարիչն է ծնել ու արարիչն է կնքել: Օսման, թալանչի Օսման, ես էլ մեռնեմ, դու էլ մեռնես, աղբիւրի անունը Մեհրէ էր ու Մեհրէ կը մնայ: Մամբրէ արքայ»»:

Մուշեղ Գալչոյեանի «Քեզ Վերելից Պէտք Ձէ Նայել» գիրքին մէջ Հետաքրքրական է «Ծիրանի Ծառ» գրութիւնը՝ ծիրանի ծառի մասին: Այսպէս.—

«Առաջին անգամ հայոց հողն է ծլարձակել ծիրանի ծառը: Ե՞րբ: Ինչպէ՞ս: Ո՞վ գիտի: Գալարուն գետից ա՞յս կողմ, ա՞յն կողմ, ո՞ր մասում, հայոց որտեղի՞ բուն հողն է առաջինը պըրտել ծիրանեանին: Գտնես, համբուրես: Ո՞վ է առաջինն անուանակոչել «ծիրանի ծառ», լաւ է կնքել:

Ծիրանի ծառը հայկական է: Սփռուել է աշխարհով մեկ: Մեծապես փոթորիկների ու հեղեղների միջոցով: Է՛, չգիտեմ՝ քանի-քանի անգամ այնպիսի փոթորիկ է եղել, որ հայոց հողից արմատախիլ է արել հասունացած պտուղներով ծիրանենին, ջարդուփշուր արել, ֆշել-կորցրել ու նիւղատարած պտղատու մի ծառից մեկ-երկու մաշուած, բզկտուած կորիզ է ազատուել՝ ընկել մի հողի վրայ, չգիտես աշխարհի որ մասում եւ յամառել, ծիլ տուել...:

Ծիրանի ծառը հայկական է, յամառ, դիմացկուն:

Սփռուել է աշխարհով մեկ:

Եւ այնքա՛ն նման են հայն ու ծիրանի ծառը»:

Մուշեղ Գալշոյեանի «Ազոռաւաքար» գիրքը լոյս տեսաւ 1990 թուականին, հետեւեալ բովանդակութեամբ.—

ԷՍՍԷՆԵՐ՝ 1.- «Ազոռաւաքար», 2.- «Լուսաւորչի Կանթեղը», 3.- «Ո՞ւր, Ծերուկ»: ԱԿՆԱՐԿՆԵՐ՝ 1.- «Օրիորդ Մարի», 2.- «Հանգրուանած Մի Երամ», 3.- «Աղանիւներ», 4.- «Բարին Ընէ Զեզ», 5.- «Լուսամփոփը Ճօճոււմ Է Օրօրոցի Պէս», 6.- «Օրազիր», 7.- «Գարնանամուտ», 8.- «Ծուխը», 9.- «Դնդնոց», 10.- «Դրուող Շեմեր», 11.- «Քարակերտ», 12.- «Վա՛յ, Սաքօ, Սաքօ», 13.- «Զի Այս Է Իշխանութիւն Եւ Փառք», 14.- «Օճախի Տէրը», 15.- «Մի Երկար Ու Մի Կարճ Պատմութիւն», 16.- «Աշնան Մի Երեկոյ», 17.- «Պարապ Օրը», 18.- «Զորանանց Տան Հարսը», 19.- «Ընծայագիր», 20.- «Անհանգիստ Մարդու Դիմանկարը», 21.- «Պորտալար», 22.- «Զեռքերը», 23.- «Երգը»:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ՝ 1.- «Բրաբրոն Ծաղիկ Որոնողը», 2.- «Խօսք՝ Դ. Դեմիրճեանի Մասին», 3.- «Սկզբունք Եւ Ելակէտ», 4.- «Պահերի Կեանքը», 5.- «Հացը Մերն Է, Իսկ Հողը՝ Չձնածներին», 6.- «Ի Տեղ Բաց Նամակի», 7.- «Յաւերժի Ճամբորդը», 8.- «Այսպէս Կոչուած Նացիոնալիզմի Մասին», 9.- «Տէրն Ենք Մեր Պատմութեան», 10.- «Կարէն Դեմիրճեանին», 11.- «Ազնէս Ղափլանեան — «Ազոռաւաքար»ի եւ «Պորտալար»ի Ստեղծագործական Պատմութիւնից»:

«Ազոռաւաքար»ի եւ «Պորտալար»ի մասին Ազնէս Ղափլանեան իր տպաւորութիւնը գրած է, որ տպուած է «Ազոռաւաքար» գիրքի վերջաւորութեան.—

«Մարդն ու բնութիւնն են Մուշեղ Գալշոյեանի ստեղծագործութիւնների հիմնական թեման: Գրողը խորապէս զգում էր մարդու եւ բնութեան փոխադարձ պայմանաւորուածու-

թեանն անհրաժեշտ կապը: Հայրենի բնաշխարհի պահպանման հարցերը միշտ էլ եղել են այն տարիներին դեռուս երիտասարդ հեղինակի ուշադրութեան կենտրոնում: Բնութեան իւրաքանչիւր օրէնքի խախտում անսահման խորք էր նրա մտածողութեանը, լինէր դա հողի անօգտագործելիութիւնն ու ֆայֆայուելը, ջրերի անտեղի հոսել-թափուելը, ջրամբարների ոչ յարմարաւէտ տեղերում կառուցելը, հանֆահարուստ սարերի ժամանակից շուտ դատարկուելը, ֆիմիական որեւէ գործարանի հիմնադրուելը, եւ վերջապէս նրան անըմբռնելի մնաց Հայաստանի սրտի մէջ աթոմակայանի գործարկումը: Սրանց կողքին՝ առաւել եւս չէր հաշուում արդիւնաբերական ֆաղափների զարգացմանը՝ գիւղական բնակչութեան հաշուին:

Ահա այս մտատանջող պրոպլեմներն են Մուշեղ Գալշոյեանի էսսէների ու ակնարկների բուն ասելիքը:

Լինելով «Գարուն»ի աշխատակից, 1969 թուականի Օգոստոսին գործուղուեց Ջանգեզուր: Տասնըվեցօրեայ ուղեւորութիւնից յետոյ, ցաւոտ ու տագնապալի նիւթերով վերադարձած արձակագիրը Սեպտեմբերին մեկնեց Մոսկուա՝ Գորկու անուան գրականութեան ինստիտուտի բարձրագոյն դասընթացներին մասնակցելու: Այնտեղ էլ հոգու մեծ տառապանքներով թղթին յանձնեց զանգեզուրեան խոհերն ու մտածումները: 1970 թուականի «Գարուն» ամսագիրը տպագրեց «Ջանգեզուրեան Աշուն» խորագրով ակնարկը, ուր գրողը տարբեր տարիների թիւերն ու փաստերը կողք-կողքի դնելով, բազմաթիւ մարդկանց հետ ունեցած զրոյցների, կատարած ուշադիր զննումների հիման վրայ իր անհանգստութիւնն էր յայտնում, թէ ինչո՞ւ Ջանգեզուրի մի շարք գիւղերում գնալով նուագում է երիտասարդ մարդկանց թիւը:

Այնուհետեւ գրողը անելի խորամուխ է լինում Սիւնեաց աշխարհի պատմութեան մէջ, կարդալով ու հարստացնելով իր իմացութիւնները, ակնարկը ընդարձակում ու վերնագրում է «Ագռաւաբար» եւ 1973-ին գետեղում է իր «Ծաղկած Քարեր» ժողովածուում:

Խորեմացուց մէջբերուած վկայութեամբ սկսում է էսսէն: ...Սիւսակը այնտեղ բնակուելով իր բնակութեան սահմանը լրցնում է շինութիւններով եւ երկիրն իր անունով կոչում՝ Սիւնիք:

Անառիկ է եղել Սիւնեաց երկիրը: Երկիրն իր յացող բերդերի ու անձաւների մէջ յարատեւող սիսաջան ցեղին ծնկի չի բե-

րել նոյնիսկ Լեոնկթիմուրը, որն այդ անպարտ ժողովրդի վրայ
ձեռքը յոգնած թափ է տուել ու հեռացել:

Կանգուն է մնացել Սիւնիքը, եկել ու անցել են դարեր, այն
որդոց որդի փոխանցուել է սրբութեամբ ու հասել մեզ:

Բոլորիս ֆաշածանօթ է դարասկզբին Օսմանեան Թուրքիա-
յի վարած ֆաղափականութիւնը. այն իր հաշիւներն էր լուծել
Արեւմտեան Հայաստանի հետ, բնաջնջելով միլիոն ու կէս հա-
յութիւն ու լինելու չլինելու հարցն էր կախել սիսաջան ցեղի
բնօրրանի վրայ: Ահա էս ժամանակների հրամայական պա-
հանջով ծնուած հայ ֆաշակորով ազդարարների՝ Ֆիդայիների
անձնուրաց պայքարի շնորհիւ կանգուն մնաց Սիւնեաց աշ-
խարհը:

Էսսէում եղած դաշնակ սպարապետը Գարեգին Նժդեհն է,
որի անունը տալու իրաւունքը չունէր հեղինակը, լնացման ա-
նողոք տարիների պատճառով:

Անսահման է գրողի մտահոգութիւնը Զանգեզուրի ճակա-
տագրի հարցում, եթէ այն պահպանուել է ու մեզ է հասել որպէս
հայոց հինաւուրց հող, ապա, այլ է իրավիճակը խորհրդային
խաղաղ պայմաններում: Ըստ ակնարկագրի, եթէ դատարկում
են զանգեզուրեան գիւղերը, ապա այդ վայրերին նրբանկատօ-
րէն «տէր» կանգնողներ կը լինեն: Ահա այս կարգի եւ նման
դատողութիւնների ծայրայեղ լինելը թողնում ենք ընթերցողի
դատին...:

Սրանց կողմին, հրապարակախօս գրողն ու ֆաղափացին չէր
կարող չապրել իր ժողովուրդի ձեռք բերած մեծ ու փոքր յաջո-
ղութիւններով: Երբ սկսուեց Արփա-Սեւան կառոյցը, այն մեծ
ոգեւորութեամբ ընդունուեց ե՛լ ժողովրդի ե՛լ գրողի կողմից:
Գալշոյեանը մօտիկից ծանօթանալով կառոյցին, զգալով նրա
աննկարագրելի դժուարութիւններն ու բարդութիւնները, ամ-
բողջացնելով իր խոհերն ու մտորումները, թղթին յանձնեց
«Պորտալար» ակնարկը: Հեղինակը եկաւ այն եզրակացու-
թեան, ինչպէս որ մեր հողն ու ջուրը միացնող պորտալար է
Արփա-Սեւան թունէլը, այնպէս էլ ռոմանտիկ Մանուէլին այս
աշխարհի հետ կապող պորտալար է կապոյտ երազը եւ այդ ե-
րազից բացակայ՝ պետը, սղաղուած ժպիտները, լացն ու մեր-
ժումը, իսկ կառոյցի պետ Բաբգէն Բարսեղովիչին առաւօտեայ
ու օրուայ հետ կապող ահագին բաներ կան... կտրուող ու կապ-
ուող ահագին պորտալարեր:

Ակնարկը 1967-ին տպագրուելու էր «Խորհրդային Գրականութիւն» ամսագրի 4-րդ համարում եւ արդէն պատրաստ էր համարի մեծագոյն մասը, սակայն անբացատրելի կերպով դադարեցուել էր ամսագրի տպագրումը եւ հանուել սոյն ակնարկը, տեղը զիջելով Մայակովսկեան մի շարքի:

Յետադարձ հայեացք ձգելով այդ ժամանակի վրայ, երբեք պէտք չէ գարմանալ, թէ ինչպէ՞ս կարող է տպագրուել մի նըշմարտախոհ ու անզիջում ակնարկ, ուր հեգնուում էին այն պաշտօնեաները, որոնց կողմից ոտնահարուում ու արհամարհուում էին մարդկային փոխ-յարաբերութիւններն ու ամենատարական իրաւունքները:

«Պորտալար» ակնարկը տպագրուեց 15 տարի յետոյ (1982-ին) ամփոփուելով «Բովտուն» ժողովածուի մէջ»:

«Տէրն Ենք Մեր Պատմութեան» վերնագրով, «Ազուաւաբար» գիրքէն, կու տանք կարգ մը մասեր բովանդակութենէն.—

«Մեր գաղափարախօսութեան սկիզբն էր սխալ: Մեր դեկավարները չհասկացան, թէ ի՞նչ է հարկաւոր անել ժողովուրդին փրկելու համար: Ամէնից կարեւորը ժողովուրդին ոգին էր հարկաւոր, իր երգը տալն էր հարկաւոր, իր պատմութիւնը տալն էր հարկաւոր, իր հերոսականութիւնն էր հարկաւոր: Հարկաւոր էր կազմել մեր ժողովուրդի պատմութեան ընտիր երկեր, հատուածաբար եւ բոլորը հերոսական, այն հերոսական դրուագները, որ մեր պատմութեան մէջ փայլատակում են: Նըման պարագայում կը շոյուէր ժողովուրդի ինքնասիրութիւնը, այն, որ ժողովուրդի մէջ ամրապնդում է ինքնավստահութիւնը, որ ինքը հերոսական անցեալ է ունեցել...:

Վարդանանց պատերազմը պայծառ էջերից մէկն է մեր պատմութեան: Նման ճակատամարտ է եղել Սարգարապատում: Այդպիսիները կարելի է ի մի բերել իրար յետեւից եւ ներկայացնել որպէս ժողովրդի պատմութիւն: Սրանով մեր ժողովուրդը կ'առնականանար, ինքնավստահութիւն ձեռք կը բերէր, որ ինքը էպոսի պատմութիւն ունի:

Կը գայ ժամանակը, եւ ինքը ժողովուրդը դէմքը կը յառնի իր պատմութեան վերջին շրջանի մի լուսաւոր շարժմանը՝ Ֆիդայական շարժմանը: Սա մի ոգեղէն շարժում էր, ուր տասը յաղթել է հարիւր-հարիւրների: Ինչո՞ւ: Որովհետեւ ծարաւի են եղել ազատութեան եւ անկախութեան եւ, ամէնից կարեւորը, ոգի են ունեցել ճշմարիտ ու արդարացի պայքարի:

... Եղաւ մի լաւ բան: Եթէ յանկարծ Դաշնակցական կուսակցութիւնը չկարողանար մի փոքրիկ հանրապետութիւն ըստեղծել, պետութիւն, անկախ մի պետութիւն, որ գոյութիւն ունեցաւ երկու տարի կամ աւելի պակաս, մենք առանձին հանրապետութիւն կոչուելու իրաւունք չէինք ունենայ, մենք կը լինէինք մարզ, աւտոնոմ հանրապետութիւն: Սահմանադրութեամբ միլիոնից պակաս ժողովուրդ ունեցողը առանձին հանրապետութիւն կոչուելու իրաւունք չէր ունենայ, եթէ նա պետութիւն չէր: Իսկ քանի որ կար այդ պետութիւնը, մենք դարձանք առանձին հանրապետութիւն: Ահա այն մեծ բանը, այն, ինչ որ կատարեց Դաշնակցական կուսակցութիւնը եւ իրաւ պետութիւն ստեղծեց, այն էլ 600 տարի յետոյ: Յուզիչ մի պետութիւն, որ Սիմոն Վրացեանը փէշը բռնած ման էր գալիս հայ գաղութներում, Ռուսաստանի տարածքներում, Նախիջեւանում եւ բիւշէ էր հաւաքում, ոսկի, նուիրատուութիւններ որ բիւշէ լինի»:

Մուշեղ Գալշոյեանը ոչ միայն տաղանդաւոր գրող-արձակագիր էր, այլ՝ նաեւ մեծ հայրենասէր եւ շնորհալի ղեւանագէտ: Ան 1975-ին սկսած լիբանանեան քաղաքացիական կռիւններու շրջանին նամակ մը գրած է այդ օրերու Խորհրդային Հայաստանի Համայնավար կուսակցութեան ընդհանուր ղեկավար Կարէն Դեմիրճեանին.—

«Յարգելի ընկեր Դեմիրճեան, թէ ինչպիսի՞ ոճրագործութիւն է կատարում քէյրութաբնակ հայերի նկատմամբ, ձեզ անկասկած աւելին է յայտնի, քան ինձ, քան ժողովրդին: Բայց անպաշտօնական կցկտուր լուրերը բաւական են ամբողջական պատկերացում կազմելու համար: Այնտեղ մի անմեղ ժողովուրդ է կոտորում, տասնապատիկ աւելի քան Արեւելեան Հայաստանի բնակչութիւնն էր Ռուսաստանի հետ միաւորուելու ժամանակ: Ենիշէրիների սուրը նորից պատեանից դուրս է եկել եւ նորից է յեսանում եւ նորից է փորձում անպաշտպան հայի պարանոցին:

... Բէյրութի տնակ, անարգուող ու սպանուող իմ ազգակիցները... նրանց ասպերին եւ իող ուղարկեմ: Այսպէս՝ ինչպէս Միջագգային Կարմիր Խաչի ընկերութիւնը: Իսկ վիրաւորներին արիւն ու դեղ տուող մարդասիրական այդ ընկերութեան անդամն է, կարծեմ, նաեւ Թուրքիան: Երակից դատարկուող արիւնը իողով չի կտրուի, այդ ե՛ս պէտք է բռնեմ եղբօրս բաց-

ուած երակը: Լիբանանում իմ եղբայրն է մորթւում, հօրս ա-
ռաջնեկը, — գուցէ Եղեռնից մազապուրծ, — հօրեղբայրս, հօրա-
ֆոյրս, մօրաֆոյրս, մօրեղբայրս (գուցէ եւ իմ ազգակիցներից եւ
ոչ մէկը չէ, իմ ազգակիցներն են) եւ ես ուզում եմ նրանց կող-
փին լինել:

Եւ լինել ոչ թէ նրանց փրկելու համար, — ուզում եմ այս
տխուր փաստին ուրիշ տեսանկիւնից նայել, — ոչ թէ նրանց
փրկելու, այլ իմ պատիւը պաշտպանելու, ոչ թէ նրանց, այլ իմ
արժանապատուութիւնը, Խորհրդային Հանրապետութեան, այդ
անճարների շուրթերին թրթռացող Մայր Հայրենիքի հեղինա-
կութիւնը:

Նրանք, բէյրութահայերը, սփիւռֆահայերը, — արմատախիլ
եղած, քամու բերան ընկած ծառ, — այլեւս փրկութիւն չունեն:
Եւ թող դառնան, թող դառնան հաբէշ, հնդիկ, պարսիկ, թող
թուրք դառնան... եւ որքան շուտ, այնքան լաւ իրենց համար, ո-
րովհետեւ եթէ շուճգլիներում էլ հրդեհ բռնկուի, առաջինը հա-
յի անպաշտպան տունն է այրուելու, որովհետեւ, աշխարհի բո-
լոր անկիւններում սաղիստը ուզած ժամանակ իր մոլուցքը կա-
րող է մեղմել հայի անպաշտպան պարանոցին: Եւ հիմա թող
սպանուեն բէյրութցի բոլոր հայերը, կոտորուեն ու վերջանան,
աւարտեն իրենց անտէր ու թափառիկ կեանքը: Բայց ամօթ է
ինձ: Ամօթ է այն պատմութեանը, որը հիմա, հենց այսօր գրը-
ւում է նաեւ իմ ձեռքով: Դա եղբօր ողբերգութիւնից օգուտ
կորզող մորթապաշտի պատմութիւնն է: Դա խոշտանգուող
եղբօրը հեռուից նայող վախկոտի պատմութիւնն է, դա կուշտ
ստամոքսով եւ դատարկ հոգով անտարբերի պատմութիւնն է:
Եւ ոչ մի միջազգային սիմպոզիում հայ արուեստին նուիր-
ուած, հայ կոթողների աւերակների վրայ (նաեւ՝ Բէյրութի), չա-
փուձեւուած հազարերորդ միջազգային սիմպոզիումը չի կա-
րող ինքնավստահութիւն, արժանապատուութիւն ու հպարտու-
թիւն ներշնչել այս խղճուկ պատմութիւնը ժառանգողներին:

Յարգելի ընկեր Դեմիրճեան, ես իրաւունք չունեմ (գուցէ
նաեւ դուք) պահանջելու, որ Խորհրդային Պետութիւնը զօրք
մտցնի Բէյրութ, պաշտպանելու Միութեան ժողովուրդներից
մէկի մի հատուածը, բայց անարգուող ու կոտորուող իմ եղ-
բայրների կողմին կանգնելու իրաւունքը իմն է: Բէյրութը սահ-
մանից այն կողմ է, թէ աշխարհի ծայրին, միեւնոյն է, այնտեղ
իմ եղբօրն են սպանում եւ ինձ իմ արիւնն ու արժանապատ-

ԼՈՒՔԻԼՆԸ պաշտպանելու իրաւունքից զրկելը անմարդկային կը լինի:

Չեմ կարծում, թէ ես միակն եմ այս ցանկութեամբ եւ արդար պահանջով:

Ժամանակակից արտայայտութեամբ՝ ես ոչ դէմագող եմ, ոչ պրովոկատոր, բայց եթէ դուք իմ նամակ-դիմումին որոշակի պատասխան տալ չէք կարող, ես կը փորձեմ դիմել...:

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԵԱՆ

Մուշեղ Գալշոյեան իր կարծիքը, մտածումները, վերլուծումները եւ պատգամները կու տայ ինչպէս Դաշտենցի գրական-նութեան եւ ազգասիրութեան մասին «Բրաբիոն Ծաղիկ Որոնողը» վերնագրով «Ագռաւաքար» գիրքին մէջ, տալով կարգ մը ճշմարտութիւններ Դաշտենցի «Խողեստան» եւ «Ռանչպարների Կանչը» գիրքերու բովանդակութենէն, Սասունցի Դաւիթի դիւցազներգութիւններէն մինչեւ Հայ Ֆետայական շարժման օրերը:

«Մոսէ Իմօն հասել է մինչեւ Ինգլիզ եւ ֆրիստոնեայ թագաւորից, ի տեղ օգնութեան, մի օրօրոց է ստացել նուէր: Այդ լեռների պատուիրակը աշխարհի հզօրներից հզօր թագաւորի դուռն էլ գնար, այդ օրօրոցը կը ստանար՝ օրօրի յոյսը:

Յոյսը դարձեալ հրաշքն է. պայթող աղբիւրի ակունքից յայտնուող Քուռկիկ Ջալալին, երկրի ընդերքից յայտնուող հրբեղէն ձին:

Այդ հրեղէն ձին Արաբօն էր:

Այդ հրեղէն ձին Աղբիւր Սերոբն էր, Սպաղանաց Մակարն էր, Գէորգ Չաւուշը, Անդրանիկը, Դժոխք Հրայրը, Սմբատը, Գալէն, Չոլօն, Մօրուք Կարօն, Արծիւ Պետօն, Սեւաբեցի Սաֆօն, Կայծակ Անդրէասը, Տէր-Քաջի Ադամը, Կոսո Յակոբը, Լանկանցի Արթնը, Առդա Զօրիկը, Ալատին Միսակը, Բրինդարը, Սէյդօ Պօղոսը, Արտոնֆա Ջնդօն, Բամբակու Մելօն, այդ հրեղէն ձին Շէնիքի Մանուկն էր, Փեթարա Մանուկը, Փեթարա Թադէն, Փեթարա Ախօն, Փեթարա Իսրօն...:

Պայթող աղբիւրի հրաշքը հայ ֆիդայիներն էին, հրեղէն շնչով այրեք, որոնք ապրեցին միայն հայրենիքի կեանքով եւ դեռ իրենց կենդանութեան ժամանակ դարձան պատմութիւն»:

Հայրենի գրող Մուշեղ Գալշոյեանի Հարազատ ընկեր Յով-

Հաննէս Մելքոնեանի «Յիշողութեան Դաշտ» եռագրութեան առաջին՝ «Ականատես Վկաներ» գրքի ճիւղերէն մէկը նուիրուած է գրող Մուշեղ Գալշոյեանին: «Հրացանի Օրը» հատուածէն առնելով հետեւեալ պարբերութիւնը, կը վերջացնեմ արմատներով իմ հայրենակից սասունցի Մուշեղ Գալշոյեանի մասին այս ուսումնասիրութիւնը.՝

«Ես գիտեմ, առաջին պահ, երբ դու, Մուշեղ, տեսար կրթփիցդ արեւի լոյսին ելնող արիւնդ...: Ես գիտեմ, դու հրճուանք ապրած կը լինես՝ ինքնաբաւ ու հոգիին երանութեան օտար հասնող հրճուանք, չէ՞ որ դու այդ պահին քո արիւնով զգում էիր՝ ինչպէս Գեորգ Զաւուշը զարկուեց Սուլուխի կուռում, ինչպէս կրծքից զարկուեցին հայդուկները եւ քո հօրեղբայր Իսօն: Ես գիտեմ, չասես էլ՝ գիտեմ, չխոստովանես էլ՝ գիտեմ, այն վայրկեանին, երբ հրացանդ գոռաց եւ քո սրտից ելած արիւնով ներկուեցին աշնան պաղ արեւի մի քանի շողեր, որ քո կրծքին էին ընկած, դու փա՛նք տուեցիր Աստծուն, որ դու քո սրտի ծակոցով զգացիր՝ ինչպէս են ծակել թուրք թշնամու գնդակից խոցուած հայդուկների սրտերը...: Ինչպէս են ծակել մայր ու մանուկներին, հայր ու որդիների սրտերը, որոնց դիպել է թուրք հրացանի գնդակը, թուրք եաթաղանի շեղբը, թուրք կացնի բերանը, թուրք պարանի օղակը...»:

Փա՛ռք ու պատի՛ւ Հայ տաղանդաւոր արձակագիր Մուշեղ Գալշոյեանի ծննդեան 80-ամեակին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՊԱՏՄԱԲԱՆ ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Սասուն Սերոբի Գրիգորեան ծնած է 15 Յունուար 1937-ին, Հայաստանի Թալինի շրջանի Ներքին Սասնաշէն գիւղը: Հայրը՝ Սերոբ Գրիգորի Թորոսեան, Սասնոյ Քաջենք (Քաշենք, Քաշքշենք) գիւղէն, իսկ մայրը՝ Զոզան Յակոբի Թորոսեան, Սասնոյ Մաղենք գիւղէն: Մեծ եղեռնէն հրաշքով փրկուելով, բռնազաղթըլած են Արեւելեան Հայաստան:



Միջնակարգ կրթութիւնը ստացած է իր ծննդավայրին մէջ, յետոյ տեղափոխուած է Երեւան, ուր ուսանելով աւարտած է Արնունդի Արդիւնաբերութեան Հիմնարկը ու Հեռակայ Մանկավարժական Հիմնարկութեան հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը:

Որպէս կրտսեր, աւագ եւ գլխաւոր խմբագրի տեղակալ, 1960-1992 աշխատած է Հայպետհրատի, Հայպետկինոկոմիտէի եւ «Սովետական Դպրոց» թերթի խմբագրութեան մէջ: 1968-1972 վարած է Խորհրդային Միութեան պետական թանգարանի տնօրէնի պաշտօնը, մինչ այդ Խորհրդային Հայաստանի «Գիտելիքներ» ընկերութեան վարչութեան մէջ աշխատած է արուեստի, գրականութեան եւ երիտասարդութեան ռազմա-հայրենասիրական դաստիարակութեան գծով: 1991-ին, խուճապ մը ընկերներու հետ հիմնած է Հայաստանի «Յեղասպանութեան Դէմ Պայքարի Միութիւն»ը, իսկ 1993-ին՝ Մեծ եղեռնի եւ հայոց ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկը: Իր նախաձեռնութեամբ, Արթուր Թարխանեանի նախագծով եւ ճարտարապետ Ս. Քալաշեանի գործակցութեամբ, 1994 Մայիսին Ծիծեռնակաբերդի մէջ սկսած է թանգարան-հիմնարկի շինարարութիւնը:

Սասուն Գրիգորեան գրել սկսած է դպրոցական տարիներէն: Իր գրութիւնները տպագրուած են Հայաստանի եւ Սփիւռքի բազմաթիւ պարբերականներու մէջ: 1965-ին լոյս տեսած է իր բանաստեղծութիւններու առաջին ժողովածուն՝ «Սասնոյ Պարը», այնուհետեւ հրատարակուած են «Լեռան Կարօտ», «Ոսկէ Երագ», «Խաւրձիլ», «Վայրի Մեղու», «Կարմիր Պանթէոն», «Քսանչորս Ժամ Պոլսում», «Դէպի Էրզիր» բանաստեղծական հատորները:

Որպէս գրականագէտ եւ պատմական ռեզիւմէտ, հրատարակած է «Նրանք Ինկան Երգը Շուրթերին» (1972), «Հայաստանի Կոմերիտմիութեան Ինտերնացիոնալ Կապերի Պատմութիւնից» (1972), «Յուշամատեան Սիրոյ Եւ Սխրանքի» (1975), «Մուսաները Չլուցին» (Ա. գիրք 1989), «Սասուն-Մուշ» (1993 օրացոյց), «Սասնայ Արծիւների Մի Երամը» (2000), «Գեներալ-Գնդապետ Գուրգէն Դալիբալթայեան» (2001), «Գեներալ-Մայոր Լեւոն Ստեփանեան» (2001, վերջին երկու գիրքերը հայերէն, ռուսերէն եւ անգլերէն լեզուներով) պատմափաստագրական աշխատութիւնները: 1999-ին հրատարակած է սփիւռքահայ գրող, հրապարակագիր եւ խմբագիր Սիմոն Սիմոնեանին նուիրուած «Բազմատաղանդ Երախտաւորը» մենագրութիւնը: Պատրաստ են հրատարակութեան «Սիրտս Պիտի Դատարկեմ» քառեակներու եւ անտիպ բանաստեղծութիւններու ժողովածուն, «Ադամ Միցկեւիչը Հայերէն», «Աֆղանստանում Ծառայած Եւ Ձոհուած Հայորդիք» հատորները: Կը շարունակէ աշխատիլ «Սասուն-Մուշ» հանրագիտարանի եւ «Յուներժացում» յուշատեղեկատուի վրայ:

Հրատարակած է նաեւ «Մուսաները Չլուցին» գիրքի առաջին հատորը, հրատարակուած 1989-ին, նուիրուած Հայրենական Մեծ Պատերազմի մասնակից եւ զոհուած հայ մշակոյթի գործիչներուն: Երկրորդ հատորը՝ հրատարակուած 2005-ին, կը ներկայացնէ հայ եւ աշխարհի գրողներու մասնակցութիւնը Հայրենական Մեծ Պատերազմին: «Մուսաները Չլուցին» երրորդ հատորը՝ «Քեզ Համար Արցախ», հրատարակուած 2010-ին, կը ներկայացնէ 1988-1995 Արցախեան ազատագրական մարտերուն զոհուած գրականութեան, գիտութեան, մշակոյթի, սպորթի մարզիկը, հոգեւոր գործիչները եւ օգաչուները:

Սասուն Գրիգորեան իր հրատարակած «Մուսաները Չլուցին» երեք հատորները պատրաստելու համար, առասպելական

Ջանքեր թափելով, շուրջ 30 տարի, գիւղ ու քաղաք շրջելով հաւաքած է նահատակուած գրողներու, նկարիչներու, դերասաններու, երաժիշտներու, լրագրողներու, գինուորներու անունները, եւ անոնց նկարներն ու կենսագրութիւնները արձանագրելու համար քրքրած է արխիւային հսկայ դէզեր, զոհուածներու հարազատներուն տուները գտեր, զոհուածներու ողջ մնացած ընկերներուն հասցէները փնտռելով նկարներ եւ կենսագրութիւններ հաւաքեր. նպատակը՝ խոր մարդկային եւ գերազնիւ, փրկել կորուստէն եւ մոռացութենէն այդ տաղանդաւորները, վերականգնել անոնց դիմանկարները, որոնց գրական-ստեղծագործական վաստակը պէտք է որ մինչեւ օրս հայ ընթերցողի եւ արուեստասէր հասարակութեան սեփականութիւնը դարձնէին Հանրապետութեան պատկան մարմինները:

Սասուն Գրիգորեանի «Յաւերժութեան Լուսամատեան» յուշատեղեկատու հանրագիտարանը (1955 էջ) գիտապատմափաստագրական եզակի աշխատութիւն է: Ան կ'ընդգրկէ հայ ժողովուրդի հանդէպ կիրառուած ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիոյ կողմէ 1878-1920 թուականներուն: Առանձին բաժիններ նուիրուած են խորհրդային տարիներուն Հայաստանի մէջ իրականացուած ստալինեան սպանութիւններուն եւ բռնութիւններուն, Երկրորդ Համաշխարհային Պատերազմին հայ ժողովուրդի մասնակցութեան, Աֆղանիստանի պատերազմին զոհուած հայ գինուորներուն, ինչպէս նաեւ խորհրդային իշխանութեան վերջին տարիներուն Արցախի եւ Ազրպէյճանի մէջ ապրող հայ ժողովուրդին հանդէպ կիրառուած զանգուածային սպանութիւններուն: Գիրքին մէջ առանձին ներկայացուած են Հայաստանի Հանրապետութեան ազգային հերոսներու յանուն ազատ ու անկախ Հայաստանի եւ Արցախի մարտնչած այսօրուայ հայ գինուորի ականաւոր դէմքերու համառօտ դիմանկարները: «Յաւերժախօս Պանթէոն» գլխուն մէջ անուն առ անուն լուսանկարներով ներկայացուած են Հայաստանի Հանրապետութենէն եւ Արցախէն զոհուած եւ անյայտ կորած հայորդիները: Յուշահանրագիտարանը ունի նաեւ տեղեկատու բաժին:

Գիրքի ամէնամեծ արժանիքներէն մէկը այն է, որ ընթերցողը հոն կը գտնէ ոչ միայն Մեծ Եղեռնի զոհ ռազմական եւ գիտամշակութային գործիչներու համառօտ դիմանկարները, այլեւ Հայրենական Մեծ Պատերազմին եւ Արցախի մէջ գէնքը ձե-

ոին կռուած ու զոհուած երիտասարդ գրողներու, նկարիչներու, դերասաններու, երաժիշտներու, գիտնականներու, մարզիկներու մասին ակնարկներ, նմոյշներ անոնց ստեղծագործութիւններէն: «Թուչէի Մտքով Տուն» ենթագլխուն մէջ հեղինակը ներկայացուցած է արցախեան հերոսամարտին զոհուած շուրջ 30 հայ օդաչուներու դիմանկարները: Զոհուած եւ յանուն ազատութեան եւ անկախութեան մարտնչած հայ դուստրերուն յուշահանրագիտարանի հեղինակը պատուաւոր տեղ տուած է:

«Յաւերժութեան Լուսամատեան»ի յուշատեղեկատու բաժնին մէջ ներկայացուած են Հայաստանի Հանրապետութեան նախագահի եւ կառավարութեան որոշումներն ու հրամանագրերը ազգային բանակ ստեղծելու, տարբեր զինուորական գործիչներ պարգեւատրելու, պաշտօններու նշանակուելու եւ այլ խնդիրներու վերաբերեալ: Հայ ժողովուրդի անցած ռազմամարտական համառօտագրութիւնը տրուած է նաեւ այս գլխուն մէջ: Մոռացութեան չեն մատնուած մեր կաթողիկոսները, որոնք ներկայացուած են ըստ իրենց գահակալութեան տարիներուն:

Կոթողային այս աշխատութիւնը մեծ դեր ունի երիտասարդութեան ռազմահայրենասիրական եւ ճանաչողական ոգիով դաստիարակելու գործին մէջ: Ան որպէս պատմագիրք-վկայութիւն կը թեթեւցնէ զոհուած մերօրեայ ֆետայիներու եւ ազատամարտիկներու հարազատներուն վիշտը, քանզի իրենց որդիները մեծանուն զօրավարներ եւ հայդուկապետեր Անդրանիկի, Սմբատի, Գէորգ Չաւուչի, Մակարի, Գալէի, Արաբոյի, Նիկոլ Դոմանի, Սեւքարեցի Սաքոյի, Նժդեհի, Գայի, Բաղրամեանի եւ մեր ժամանակներու Հայաստանի Հանրապետութեան տասներկու ազգային հերոսներու հետ ներկայացուած են նոյն գիրքին մէջ:

Սասուն Գրիգորեանը ունի իր ժանրը ռազմապատմագիտական գրականութեան մէջ: Ծանօթ ըլլալով իր կրտսեր բարեկամին սոյն աշխատութեան, անոր մասին տարիներ առաջ մեծապատակ գրագէտ Սերօ Խանգադեան գրած է.—

«Քիչ է ըսել, թէ սա գրականագեղարուեստական, պատմաբանասիրական գործ է: Ոչ միայն: Այստեղ պատմական անցեալներ կան, մատենագիտութիւն, գիտնականի ազնիւ ֆրտինգ, մեծ միջազգայնականութիւն եւ անձնուէր հայրենասիրութիւն: Ես կը պատկերացնեմ, թէ արխիւային ինչպիսի գանգուածներ

փրփրած է, զոհուածներու ֆանի հարագատներ գտած, զոհուածներու ողջ մնացած ընկերները խօսեցուցած, յաւերժութեան ֆանի փակ դուռ բացած է զոհուած հայ արուեստագէտներու առջեւ այս մատեանի հեղինակը: Մեզի համար երազային հրաշք տանար մը վերականգնած է զոհուած զինուորի որդի, Հայաստանի Գրողներու Միութեան ռազմա-հայրենասիրական գրականութեան յանձնաժողովի նախագահ բանաստեղծ Սասուն Գրիգորեանը: Այդ տանարը, կը խնդրեմ, մտէ՛ք ձեր գրակաները հանած, մաքուր ձեռքերով շօշափեցէ՛ք անոր նշխարները»:

Ակադեմիկոս, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի նախագահ, Գեներալ-Մայոր Ֆադէյ Սարգսեան կը գրէ.—

«Պէտք է ըստ արժանւոյն գնահատել ռազմական պատմաբան, բանաստեղծ, արձակագիր, գրականագէտ եւ մատենագէտ Սասուն Գրիգորեանի երկար տարիներու այս ազգանուէր վաստակը, որովհետեւ ան եզակի յուշակոթող է, սուրբ գիրք մը, որ միշտ դէպի իրեն կը մօտեցնէ ոչ միայն այսօրուայ հայ մարդը, հայ զինուորը, այլեւ բոլոր անոնք, որոնց համար սուրբ եւ թանկ են Հայաստանը, անոր հերոսական անցեալն ու ծաղկող ապագան»:

Հայրենի ծանօթ արձակագիր Հրաչեայ Մաթեւոսեան կը գրէ.—

«Սասուն Գրիգորեան ֆառորդ դարեայ նուիրումով, հազարումէկ նանապարհ անցնելով, ֆանի՛ տասնեակ երկիրներու, ֆաղաֆներու, գիւղերու եւ բնակավայրերու թանգարաններու մէջ ըլլալէ յետոյ, ստեղծած է շուրջ 125-ամեայ պատմութիւն ընդգրկող հանրագիտարան մը՝ «Յաւերժութեան Լուսամատեան»ը, շուրջ 2000 մեծադիր էջերով, ֆսան հազարէն աւելի լուսանկարներով, ակնարկ-դիմանկարներով: Ծանրակշիռ աշխատութիւն մը, որ ունի 5 ֆիլօ 130 կրամ (5,130 ֆկ.) ծանրութիւն: Բայց հեղինակը խելքի, մտքի, նուիրումի ծանրութիւն պէտք է ունենայ, որ նման կշռով յաւերժագնայ-մնայուն գիրք մը ստեղծէ: Այո՛, ծանրակշիռ գիրք, որուն պիտի նային ու փայփայեն մեր հոգիի ու սրտի աչքերով: Կոթողային այդ հանրագիտարանին մէջ մենք ենք, մեր թանկ մեռելներով, մեր ինքնահրկիզումներով, մեր արեան երակներու խաղով, մեր կարօտի հողի ձայներով: Այո՛, այսօրուայ համեստ յոբելեարը հայոց պատմութեան յաւերժութեան կ'ընծայէ կոթողա-

յին աշխատանք մը, որ կառուցած է իր արեան շաղախով, ուր կը խառնէ մեր պայքարի մշտանորոգ ոգին, սրտարթուն կարօտն է որ մեզ կը մղէ առաջ, մշտալոյս հաւատքը կը դառնայ բազկատարած աղօթք առ Աստուած:

Այս գիրքը կը վկայէ, որ հեղինակը մեր հերոսներու ուխտաւորն է Սասնայ լեռներէն մինչեւ Արցախի լեռները: Ստեղծելով հարիւրաւոր դիմանկար-ակնարկներ, հայ ժողովուրդի երախտապարտ գաւակը ջերմախիւղ երախտիքով կը յիշէ բոլոր անոնք, որոնք պաշտպանած են Հայ Դատը անցեալին եւ ներկայիս, իր հայդուկապետերով եղեռնուած ժողովուրդին նուիրուած էջերով: Մեծ Եղեռնի զոհերուն ու ազգային-ազատագրական պայքարի ուխտանուիրեալներուն թէ ի՛նչ ջերմութեամբ կը գուրգուրայ հեղինակը, պարզ կը դառնայ, երբ բանանք այս գիրքի դուռը, ինչպէս տան դուռը կը բանան, կը բանան եկեղեցւոյ դուռը»:

Սասուն Գրիգորեան, 8 Օգոստոս 2011-ին, Գայիանէ Պօղոսեանի Հետ ունեցած հարցազրոյցին եղած հետեւեալ հարցումին՝ «Ձեր առաջին բանաստեղծութիւններն էրգրի մասի՞ն էին», ան կը պատասխանէ.—

«Իմ ե՛ւ առաջին ե՛ւ վերջին բանաստեղծութիւններու ակունքը երգրում է, Սասունն է նրանց հոգին, էութիւնը: Երբ Խաչիկ Դաշտենցն ինձ ծանօթացրեց Աւետիք Իսահակեանի հետ, Վարպետի համար կարդացի մի քառատող.

Սասնայ լարն է իմ հոգին,
Սասնայ պարն է իմ հոգին,
Թող բարբառեմ ես անվերջ՝
Ծովասարն է իմ հոգին...

Վարպետին դուր եկաւ, նրա խրախուսանքը ոգեւորիչ էր ինձ համար»:

Գայիանէ Պօղոսեանի հետեւեալ հարցումին «Եթէ չեմ սըխալւում, դուք անդրադարձել էք նաեւ Եղեռնին եւ ռեպրեսիայի տարիներին», Սասուն Գրիգորեանը պատասխանած է.—

«Եղեռնի ժամանակ ես կորցրել եմ պապիս, հարազատներիս, հայրենիքս ու Հայոց Ցեղասպանութեան անդրադառնալը ոչ միայն հոգու պարտ էր ինձ համար, այլ արեան կանչ, վրէժի երդում, պատուի խնդիր: 95 թուականին հրատարակուեց իմ «24 Ժամ Պոլսում» պոէմը, իսկ «Յաւերժութեան Լուսամատ-

եան» հանրագիտարանի մի մեծ բաժին նուիրուած էր 15 թուականի ջարդերին: Փորձել եմ մոռացումից փրկել ինչ հնարաւոր է, հաւաքել եմ հարուստ փաստագրական նիւթ, որ հանրագիտարանը 2000 էջ է, հսկայածաւալ գիրք, որտեղ Եղեռնին վերապրող հատուածը ներառում է տեղեկութիւններ նախնիրներին զոհ դարձած հայ նշանաւոր ֆաշորդոց եւ գիտակրթական ու մշակութային եղեռնազոհ գործիչների մասին, յիշատակում են ինքնապաշտպանական մարտերը»:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳԻՐՔԵՐԸ

Բանաստեղծութիւններու ժողովածուներ.—

- 1.- «Սասնայ Պար», 1965
- 2.- «Լեռան Կարօտ», 1970
- 3.- «Ոսկէ Երազ», 1976
- 4.- «Խաւրժիլ», 1981
- 5.- «Վայրի Մեղու», 1987
- 6.- «Դէպի Էրգիր», 2002
- 7.- «Առօրեայ Ցաւերգեր», 2005
- 8.- «Սիրտս Պիտի Դատարկեմ», 2012

Պոէմներ.—

- 1.- «Կարմիր Պանթէոն», 1996
- 2.- «Քսանչորս Ժամ Պոլսում», 1995, 2009

Ռազմապատմափաստագրական գիրքեր եւ Հանրագիտարաններ.—

- 1.- «Նրանք Ընկան Երգը Շուրթերին», 1970
- 2.- «Հայաստանի Կոմերիտմիութեան Ինտերնացիոնալ Կապերի Պատմութիւնից», 1972
- 3.- «Յուշամատեան Սիրոյ Եւ Սխրանքի», 1975
- 4.- «Մուսաները Զլոնցին» (գիրք 1), 1989
- 5.- «Բազմատաղանդ Երախտաւորը», 1999
- 6.- «Սասնայ Արժիւների Մի Երամը», 2000
- 7.- «Ցաւերժութեան Լուսամատեան», 2002
- 8.- «Ցաւերժախօս Պանթէոն», 2004

- 9.- «Գեներալ Գնդապետ Գուրգէն Դալիբալթայեան», 2001
 10.- «Գեներալ Մայր Լեւոն Ստեփանեան»
 11.- «Գեներալ Մայր Աշոտ Պետրոսեան», 2004
 12.- «Քոնն Եմ, Հայրենիք», 2003
 13.- «Մուսաները Զլոնցի» (գիրք 2), 2006
 14.- «Հայավեհացման Ուխտանուիրեալը», 2009
 15.- «Մշեցի Արթիկցի Ազատամարտիկ Միրօն», 2009
 16.- «Մուսաները Զլոնցի, Քեզ Համար Արցախ» (գիրք 3),
 2010

Թարգմանութիւն.—

- 1.- Հ. Ռեգիստան, «Աստղերը Ձեան Մէջ», 1982

Սասուն Գրիգորեանի բանաստեղծական 8 գիրքերը կը պարունակեն ազգասիրական, հայրենասիրական, մարդկային, սիրային, կրօնական, ցաւակցական եւ սրտայոյզ բանաստեղծութիւններ, պոէմներ եւ քառեակներ:

Որպէս նմոյշ կ'արձանագրենք քանի մը բանաստեղծութիւններ.—

«Խաւրժիլ» գիրքէն՝

ՈՍԿԷ ՀՈՎԻՏ

Հոգիս անխօս լցուած այսօր բերնէբերան,
 Կարօտներիս ու խոհերիս երիվարները բաց թողած,
 Մի յոյժ ձգտում,
 Մի սուրբ երազ,
 Մի բուռ հրդեհ,
 Պահած անխօս կրծքիս ներքոյ՝
 Քեզ է գալիս
 Քեզնից ծնուած,
 Քեզնից սնուած,
 Իմ Տարօնն է ոսկէ հովիտ:
 Սիրտս հիմա
 Հազար տէգով, հազար տեղով,
 Հազար սրով, հազար սիրով,
 Խորախոցուած վերքեր ունի,
 Մեղրագետիդ ու Եփրատիդ

Արցունքն ստուած երգերն ունի,
 Բայց իր արեան երակներով
 Եւ իր անշէջ կրակներով
 Քեզ հետ է միշտ,
 Դիւցազների դու օրօրան,
 Առիւծամայր լուսաստինք,
 Իմ Տարօնի ոսկէ հէքեաթ,
 Տուրուբերան ոսկեհովիտ:
 Երազներիս ու կարօտիս երիվարները կուռ թամբած,
 Թուր կեծակին համբուրօծել շրթունքներիս թէժ կրակով,
 Աչքս յառած Մարաթուկիդ աստեղաբաշխ սուրբ գագաթին՝
 Քեզ եմ գալիս,
 Իմ ուխտատեղ,
 Իմ ուխտատուն,
 Իմ տենչերի սուրբ դարբնոց,
 Գալիս եմ, որ
 Նոր լոյս վառեմ
 Կտուրի տակ
 Քո ամէն տան,
 Որ բորբոքուն պահեմ հեռուով
 Օջախիդ հուրն յաւերժական,
 Որ միշտ մնաս՝
 Երազանքի դու Կաթնաղբիւր,
 Մշուշի մէջ վառուող նրագ,
 Արարատեան դաշտի դու քոյր,
 Հագած հրդեհ, կապած կրակ,
 Մեր սուրբ յոյսին դու գօրավիգ,
 Երազներին մեր յենարան,
 Իմ Տարօնի ոսկէ հովիտ,
 Ոսկէ աշխարհ Տուրուբերան:

ԹԱԼԻՆ

Դո՛ւ Արագածի լանջերին փռուած՝
 Հէքեաթային գորգ, հայրենի Թալին,
 Քանի՛ վայրենի ցեղեր սեւնախանձ
 Քո տանարները ոտնատակ տուին:

Բայց եթե յաւերժեց ոգիդ անասան,
Քարհատ ու մանկալ կեանք տուին քեզ,
Բերդեր շինեցին լեբան հաւասար,
Շէնքեր հիմնեցին, ջրանցք ու պարտէզ:

Քարակերտից մինչ Իրինդ, Մաստարա
Խոպաններդ լերկ՝ դարձան այգի,
Փառքդ Աշնակից Իտալիա տարան
Քո սեւ խաղողն ու պեռլիտը ոսկի:

Դու Ծովասարի լանջերից գաղթած,
Սասնայ ծոերին դարձար օթեւան,
Խաշնարած հայդուկ՝ Եղեռնից փրկուած,
Քո երկնքի տակ յարութիւն առան:

Երբ հնչեց փողը Մեծ Պատերազմի,
Ի գէն խոյացան որդիքդ անվեհեր,
Ձեռքի մէջ նոնակ, սրտերում՝ սպի,
Կերչից մինչ Բեռլին անցան աներեր:

Ծաղկել են նորից քո ագութները,
Քո ամէն գիւղում՝ անմահ յուշարձան,
Քո գիրկն են գալիս հայ պանդուխտները,
Հնչում է նորից քո դիտլ-գուռնան:

Թնդում է նորից սասունցու պարը,
Խինդ ու վերելք է քո ամէն տարին.
Թող յաւերժ կեցցեն քո բառն ու բանը,
Դու սիրոյ աղբիւր, դու կեանք ես թալի՛ն:

Սասուն Գրիգորեանի «Էրգիր» բանաստեղծութիւններու հատորը, հրատարակուած 1999-ին՝ Երեւան, կը բաղկանայ 640 էջերէ: Հայրենասիրութիւն, հայրենապաշտութիւն, հայապահպանութիւն, խաղաղութիւն, սէր, նուիրում, հաւատք եւ ազնիւ քաղաքացիութիւն, ասոնք են բանաստեղծ Սասուն Գրիգորեանի բանաստեղծութիւններու ժողովածուի հիմնական բովանդակութիւնը, հետեւեալ բաժիններով.— «Արցախեան Կրակներ», «Դէպի Էրգիր», «Իմ Եւ Քո Սէրը», «Ինքնայրում»:

«Մայր Հայաստանն է Կանչում» (քառեակներ) եւ «Սիրտս Պրտի Դատարկեմ» եւ պոէմներ:

«Դէպի Էրզիր» գիրքէն.—

Հեծած երազիս Քուռկիկ Ջալալին,
Ցաւն ու կորուստս թելում են էրզիր,
Վշտերս խուրձ-խուրձ փոել եմ կալին,
Երգ է բարձրանում կալսուած վերբից:

Ցաւն ու կարօտս ներմակ ձիաւոր,
Սուրբ Կարապետում իջել են ուխտի,
Գոնէ երազում լինեմ ուխտաւոր,
Մի քանի վայրկեան տէր դառնամ բախտիս:

Տե՛ս, Արածանին շշմել է մի պահ,
Խնուսագետը տրտինգ է տալիս,
Գրկները բացել Նեմրուք ու Սիփան,
Զիւնը ծնկներին մեր դէմ են գալիս:

Խարզանից մինչեւ Վարդոզ, Ֆոֆոիկ,
Սասնայ լեռները բռնել են շուրջպար,
Զուռնան չալում է մի նոր փափուռի,
Սերոբ Աղբիւրն է փեսիս թիկնապահ:

Նորից խնկահոտ, նորից ճառընտիր,
Մի մանչուկ կնքուեց անունը Մեսրոպ,
Արծուին Տարօնոյ, Հացեկաց մտիր,
Մառանում այն ի՛նչ թվանք ու խոփ...

Եփում են իմ մէջ երազ ու կարօտ,
Ցաւը ծխի պէս վեր է համբառնում,
Էրզի՛ր, երազով բա՞ւ չէ գամ քեզ մօտ,
Ա՛խ, ե՞րբ կը բացուեն հայոց բախտի դուռ:

1061 քառեակներէն երկու նմոյշ.—

Բա՛ւ է՝ դիմես պնակի,
Ժամանակն է, բանակուի՛ր,

Թէ հայրենիք ես ուզում,
Հողիդ վրայ բնակուիր:

* * *

Նիզակ ու տէգ եմ ես տեսել, թուրքի զնդան ու եաթաղան,
Տէր-Զօր, Սիրիր եմ ինձ fշել, Պոլսում հանուել եմ կախաղան,
Սումգայիթում ինձ այրել եմ, Բաբուում խաչել ու գցել ծով,
Ո՛վ արմատս դեռ չի տեսել, թող ճիւղերիս հետ չխաղայ:

Սասուն Գրիգորեանի «Սիրտս Պիտի Դատարկեմ» բանաստեղծութիւններու հատորը, հրատարակուած Երեւան 2002-ին, «Ուխտատուն» հիմնարկութեան կողմէ, կը բաղկանայ 1069 քառեակներէ, 12 ութեակներէ եւ շարք մը բանաստեղծութիւններէ, ընդամէնը՝ 346 էջ:

Նմոյշներ քառեակներէն.—

Գառնի՛, Գեղարդ, իմ Սեւա՛ն, ես ձեզանից եմ յառնում,
Իմ Արագա՛ծ, Արարա՛տ, ձեզմով եմ ջախս վառում,
Ախուրեանի հետ պղտորում, լուռ թափում եմ ես Արաֆս,
Իմ արցունքը խեղդելով, Բիւզէ՛տլ, կարօտս եմ առնում:

* * *

Քանի՛, քանի՛ մում եմ վառել եւ աղօթել ես վանքում,
Քանի՛ սրբի դուռ եմ բախել, դարձել անտես ժամերգու,
Իմ հաւատքին եւ ուխտին թէեւ գերի եմ եղել,
Բայց ամէնուր ինձ խաբել եմ եւ մարել լոյսն իմ հոգու:

Բանաստեղծ ու ռազմական պատմաբան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի տնօրէն եւ Գիտական Խորհուրդի նախագահ, միջազգային ռազմածովային ընկերակցութեան փոխ-նախագահ, հայ-լեհական բարեկամութեան վարչութեան անդամ, «Անդրանիկ Զօրավար» համազգային միութեան եւ Հայաստանի Հանրապետութեան պատերազմի, զինուած ուժերու եւ աշխատանքի վեթերաններու միութեան ռազմա-հայրենասիրական գրականութեան յանձնաժողովի նախագահ բանաստեղծ Սասուն Գրիգոր-

եանի հետ իմ ծանօթութիւնը կը սկսի 1997-էն, Հայաստան կատարած իմ առաջին այցելութեան շրջանին:

1987-ին, Թորոնթոյի մէջ իմ հրատարակած «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու գիրքս ղրկած էի Երեւան բնակող իմ զարմիկին՝ Մերուժան Գրիգորեանին, որ կը բնակէր Սասունի բնակած Թաղամասին մէջ: Զարմիկս իմ գիրքս ցոյց տրւած էր Սասունին, որ կարդալէ ետք գիրքս, գրախօսական մը գրած էր իմ գիրքիս մասին, եւ հրատարակուած Հայաստան հրատարակուող «Դաշնակցութիւն» թերթին մէջ Սեպտեմբեր 1991-ին:

Այնուհետեւ, Հայաստան ամէն այցելութեանս կ'այցելէի Սասունի աշխատասենեակը՝ 15 Աբովեան պողոտայ, թիւ 9 գրասենեակը, մտերիմ բարեկամութիւն հաստատելով իրեն եւ իր ընտանիքին հետ, միասին ներկայ գտնուելով Հայաստանի Գրողներու Միութեան առաջին, երկրորդ եւ երրորդ համաժողովներուն եւ գրական բազմաթիւ ձեռնարկներու, բարեկամական կապեր հաստատելով նաեւ բանաստեղծ գեներալ-մայոր Սամուէլ Սաֆարեանի, գնդապետ Արմենակ Մանուկեանի, բրժիշկ Սարգիս Տօնոյեանի, բանաստեղծուհի Ռուզան Ասատրեանի, բանաստեղծուհի Մետաքսէի, սասունցի բանաստեղծ Հովիկ Հովէեանի եւ այլ գրողներու հետ, մասնաւորաբար «Նոր Դար» ամսագրի խմբագիր Աբգար Ափինեանի հետ:

Սասուն Գրիգորեանի խմբագրութեամբ եւ «Ուխտատուն» հիմնարկութեան կողմէ Հայաստանի մէջ հրատարակուեցաւ իմ «Նուիրում» բանաստեղծութեան գիրքս՝ 2002 թուականին եւ Սասունի օգնութեամբ «Ճանապարհ» գիրքիս երկրորդ տպագրութիւնը տեղի ունեցաւ Երեւանի մէջ, 2007 թուականին:

Շնորհակալութեամբ կ'ողգեմ ընդգծել, որ Սասունի միջոցներով եւ կարգադրութեամբ Երեւանի մէջ տեղի ունեցան «Նուիրում» եւ «Ճանապարհ» գիրքերուս շնորհահանդէսները, ինչպէս նաեւ գրական գործունէութեանս 60-ամեակի եւ ծննդեանս 80-ամեակի պատուաբեր ձեռնարկները:

Սասուն Գրիգորեանի Հայաստանի մամուլին մէջ իմ մասին իր գրած բազմաթիւ գրութիւններէն առաջինը՝ «Կեանքս Դաժան է Արդէն» վերնագրով գրախօսականը «Սիրտը Ափին Մէջ» իմ բանաստեղծութիւններու առաջին գիրքիս հրատարակութեան առիթով, գրուած է Ներքին Սասնաշէն գիւղի իր բնակարանին մէջ 1 Սեպտեմբեր 1991-ին, որ լոյս տեսաւ Հայաս-

տանի «Դաշնակցութիւն» թերթին մէջ, իսկ երկրորդը՝ «Լուսատու շանապարհ» վերնագրով, «Շանապարհ» գիրքիս Հայաստանի մէջ երկրորդ տպագրութեան առթիւ, գրուած է 20 Օգոստոս 2007-ին եւ հրատարակուած Հայաստանի «Հայոց Աշխարհ» թերթին մէջ, նուիրուած իմ գրականութեան, հրատարակութիւններու եւ որպէս արմատներով սասունցի գրող ազգին եւ Հայրենիքին հանդէպ իմ ունեցած նուիրումիս մասին:

Սասուն Գրիգորեան որպէս բանաստեղծ, ռազմական պատմաբան, բանաստեղծական գիրքերով, Համաշխարհային Երկրորդ Պատերազմի եւ Արցախի ազատագրական մարտնչումներու ընթացքին զոհուած ու նահատակուած Հայ արուեստագէտներու եւ ազատամարտիկներու մարտական կեանքը իրենց գործունէութեամբ եւ նկարներով «Մուսաները Չլուցին» (Երեք Հատոր) եւ «Յաւերժութեան Լուսամատեան» շուրջ 2000 էջնոց եւ Հինգ քիլոյէն աւելի ծանրութեամբ պատկառելի գիրքով անմահացուցած է Հայ ժողովուրդի նահատակուած ու ապրող հերոսներու, Հայդուկներու, զինուորականներու եւ արուեստագէտներու կեանքը: Աշխատանք մը, որ պատիւ կը բերէ հեղինակին եւ զինքը ծնող ազգին:

Բանաստեղծ եւ ռազմական պատմաբան սասունցի Սասուն Գրիգորեանի կեանքին եւ գործին նուիրուած սոյն գրութիւնները մեր ընթերցողներուն հետ ուզեցի բաժնել, ցոյց տալու եւ փաստելու համար շնորհալի եւ տաղանդաւոր գրող-մտաւորական Հայրենակիցիս եւ գրչեղբորս Հայրենատրոփ, Ծովասարին, Մարաթուկին եւ Սուրբ Կարապետ վանքին հանդէպ ունեցած սէրը եւ անչափելի զոհաբերութիւնները, միշտ ունենալով հաւատքը Հայ ժողովուրդի ապագայ յաղթանակներու եւ յաջողութիւններու, այդ սրբազան յոյսն ու հաւատքը փոխանցելով նորահաս Հայ սերունդներուն:

ԴԵՊԻ ԷՐԳԻՐ

Դառնում եմ վրէժ,
Կրակ ու ցասում,
Երբ միտս էֆ գալիս
Ի՛մ Մուշ, ի՛մ Սասուն:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ



ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԿԵԱՆՔՍ ԴԱԺԱՆ Է ԱՐԴԷՆ

«Օտարի տունը քեզ հայրենիք չի դառնայ» — հանճարեղ Գէօթէի այս խօսքերն ես ակամայից մտաբերում, երբ ընթերցում եմ դեռ 1987թ. հեռավոր Տորոնտոյում լոյս տեսած «Աղբիւր» բանաստեղծութեան հետեւեալ տողերը.

Կեանքս դաժան է արդէն,
Ինչպէ՞ս ապրիմ ես հիմա,
Հայրենիքիս կարօտէն
Ես կը մեռնիմ, հաւատա՛:

Պիտի հիւծուիմ յուլօրէն,
Քանի կ'ապրիմ ես պանդուխտ,
Հեռու վանէն, Սասունէն
Ու լեռներէն մեր զմրուխտ:

Կարդում ես «Արմատներէս հօրենական» քերթուածը, եւ բանաստեղծ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ կենսագրականը յառնում է քո դէմ.

Արմատներս հօրենական կու գան երկրէն Տարօնի,
Ծնած, ապրած լեռներուն մէջ հերոսածին Սասունի...

Յետոյ էլ թէ՛

Իմ լեռնցի հայրս կու գար դիւցազնական այդ երկրէն,
Մակար, Գալէ ծնունդ տուած քաջ Սպաղանք աւանէն...

Հեռավոր արեան կանչն ու բանաստեղծական տողերում թաքնուած շեշտերը մատնում են իրենց հեղինակի ծնունդը եւ ծննդավայրը, 1927թ. Օգոստոսի 5, Հալէպ, թուրքական եաթա-

դանից հրաշքով փրկուած, Սուրբ Կարապետի նախկին սան, Սերոբ Աղբիւրի եւ Սմբատի նախկին զինուոր Հոթոյենց Ղազարի (Խարզօ) յարկի տակ: Մայրը՝ Մարիամը՝ առիւծամայր Սոսէի եւ սասունցի Շաքէի բախտաքոյրն էր, իր ամուսնու կեանքի ու զէնքի ընկերը: Յաւօք, երիտասարդը բաժանուեց կեանքից, որդու սրտում թողնելով ցաւի ու մորմոքի իր յաւերժակրակն ու որբութեան սեւ կնիքը, որոնք յետոյ վերածուեցին դառը վերյուշի եւ դարձան մխացող ցաւերգի:

Այսօր հոգիիս բուրաստանէն
Ես փունջ մը ծաղիկ կը փաղեմ հլու,
Տանելու համար գայն խունկի մը պէս,
Մօրս շիրիմին վրայ բուրելու:

Սրտիս ընդերքէն արձակած նիչով,
Դառնութիւն բուրող ձայնով ցաւատանջ,
Կ'անիծեմ բախտս, որ սեւ փայլով
Որբութիւն դրոշմեց նակտիս վաղաժամ...

Որտե՞ղ է ուսանել, ովքե՞ր են եղել բանաստեղծի ուսուցիչները, ի՞նչ է աշխատել, ի՞նչ նպատակներ ունի... եւ բազմաթիւ այլ հարցերի խտացումն է պոէտի «ՍԻՐՏԸ ԱՓԻ ՄԷՋ» ժողովածուի (Տորոնթօ, 1987թ.) ներածական այս ինքնածանուցումը. «Ծնած ու մեծցած Հալէպի հայահոծ գաղութի հայաշունչ մըրքնուրտին մեջ, սնուած ու դաստիարակուած նուիրեալ հայ ուսուցիչներու (սովորել է Սահակեան վարժարանում — Ս. Գ.), մտաւորականներու, խմբագիրներու եւ մանաւանդ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (եւ սա է պատհառը, որ բանաստեղծը մինչ օրս անյայտ է խորհրդահայ ընթերցողին — Ս. Գ.) հայակերտ հնոցէն ժայթփող հայաբոյր բոցերով, կեանքիս գըլխաւոր իմաստը եղած է կարողութիւններուս ներածին չափով ծառայել ազգիս, գաղափարիս եւ Հայ Մշակոյթի՞ն՝ ուսուցչական ասպարէզով, գրչով եւ այլազան պարտականութիւններու գործադրութեամբ...»: Միթէ այսպիսի սրբազան ուխտի չէի՞ն լծուել Համաստեղն ու Մուշեղ Իշխանը, Անդրանիկ Ծառուկեանն ու Ժակ Յակոբեանը, Սիմոն Սիմոնեանն ու Գրիգոր Հոթոյեանը, եւ տասնեակ այլ երախտաւորներ, որոնց գրական եւ ֆիզիկական ելումուտը Մայր Հայրենիք արգելուել էր ստալին-

եան բռնութիւնների տարիներին պետանվտանգութեան խորհրդարանին եւ Սփիւռքի վարձու գործակալների զրպարտիչ, կեղծ եւ ազգադաւ նախատուեալների պատճառով: Դպրոցական ուսումնառութիւնից յետոյ որպէս ենթասպայ Գրիգոր Հոթոյեանը Սիրիայում ու Լիբանանում ծառայել է ֆրանսիական բանակում: Զօրացրուելուց որոշ ժամանակ անց նա զբաղար էլ լրագրող էր «Արեւելք» (Հալէպ) օրաթերթում, ուր եւ լոյս են տեսել նրա առաջին քերթուածներն ու թղթակցութիւնները: Գր. Հոթոյեան ուսցչին եւ դպրոցի տնօրէնին այսօր էլ սիրով եւ երախտագիտութեամբ են յիշում Սիրիայի Հալէպ եւ Ռակկա քաղաքների հայկական վարժարանի նախկին սաները: Աշակերտական, մանկավարժական տարիներից մինչեւ օրս սասունորդի Գրիգորը մոռսայի գերին է: «Հայաստանի սիրտէն, Սասունի սրբազան լեռներէն ժառանգած սրտիս մէջ բոցավառուող կրակը զիս երբեք հանդարտ չէ ձգած եւ պիտի չձգէ մինչ մահ, որովհետեւ արմատներս կը սերին անձնագոհ ֆետայիներու այն փաղանգէն, որոնք իրենց կեանքը գոհաբերեցին հայ ժողովուրդի ազատութեան ճանապարհին»: Ազատութեան այդ ճանապարհի քաջարի մարտիկներից Գէորգ Չառլին, Սպաղանաց Կալէին եւ իզգիբցի Դրաստամատ Կանայեանին ձօնուած Գր. Հոթոյեանի մարտաշունչ եւ ազատամիտ տաղերը ընթերցողի մէջ պատուաստում են ոչ միայն հայրենանուիրուածութիւն եւ քաջութիւն, այլեւ ցասում եւ վրիժառութիւն, ազգային արժանապատուութեան եւ անկախութեան սուրբ իրէպալներ՝ յիշեցնելով, որ նման քաջորդիներ եւ ֆիդայիներ հայ ժողովուրդը նորից կը ծնի՝

Այն ազգը, որ քեզի ծնաւ, այլ հերոսներ դեռ կը ծնի...
(Գէորգ Չառլ)

Հայրենական եւ ազգային շնչով (բանաստեղծի ինքնորոշումներն են) գրուած Հոթոյեանի հայրենապաշտ ձօներն ու յեղափոխական երգերն ու ոգորումները, Հայոց Մեծ Եղեռնին, բնութեանը նուիրուած նրա սրտայոյզ եւ պատկերափայլ տաղերը բացայայտ հետապնդում են մէկ նպատակ.

Ուր որ երթաս, ուր որ ապրիս Սփիւռքի խորթ տարածքին,
Ոչ մէկ ատեն ազգդ, լեզուդ, եկեղեցիդ չմոռնաս...
(«Պատգամ Հայութեան»)

«Յեղափոխական Ոգորումներ» շարքի բանաստեղծութիւններում ոչ միայն հայ մտաւորականի, այլեւ հայոց համազգային ցաւով եւ ինքնայրումով տառապող մերօրեայ հայ մարդու խռովայոյզ ներաշխարհն է արտացոլուած՝ իր պատմական յիշողութեան անմոռաց ծալքերով, խուլ տուայտանքներով եւ համազգային մտածողութեամբ, մի ներաշխարհ, որն ամէն պահի քեզ սթափ է պահում եւ պահանջում:

Ուր որ երթաս, անհայրենիք կեանքը ունի վերջաբան.

Գաղթական ես, օտարական՝ ներմակ ջարդին ենթակայ...

Սեւ եւ ճերմակ ջարդ ... քանի՞ տարի նրանք հետապնդում են մեզ, հետապնդում անգամ պապենական հողի վրայ: Դրա համար էլ «Տարփողական Հայաստանի Անկախութեան», «Մայիսի օր մը՝ պայծառ ու չքնաղ», «Տարօն աշխարհ» եւ այլ քերթըրածների քնարական հերոսը այսօր հետապնդում է մէկ նրպատակ՝ Անկախութիւն եւ էրթալ հոն (էրգիր)՝ «Ուր մեր պապերուն գերեզմանները կը գտնուին»: Որքան, որքան արդիական են հնչում հեռաւոր կանադական երկնքի տակ 1975թ. մինչեւ օրս ապրող եւ հայուծացման դէմ պայքարի անվարձ նուիրեալ, սասնազարմ հայորդու Հայաստանի Անկախութիւնը տենչացող հրաշունչ տողերը: Կարծես թէ դրանք գրուել են այսօր Երեւանի Անկախութեան հրապարակում, գրուել են այսօր Արցախում եւ ոչ թէ՛ տասնամեակներ առաջ օտար ափերում:

Ես

Արիագարմ հայրդի մը աներեր, —

Խրոխտ կանգնած՝ հակատու վեր,

Կու գամ այսօր երկրպագել

Վեց դարերու ստրկութեան շղթաները բզկտող՝

Հայաստանի անկախութեան հառագայթող Արեւիկն...

Կա՞յ, կա՞յ արդեօք այսօր լուսնի տակ մի հայ, մի հայորդի, որ գիտակցաբար չերկրպագի «Հայաստանի անկախութեան ճառագայթող արեւին»: Դժուար թէ գտնուի նման մէկը:

Հայաստանը, հայն ու հայութիւնը պահպանող ամենագօրեղ միջոցը հայեցի ընտանիք կազմելն է, հայ աղջկայ հետ առնանանալը, իսկական հայորդի դաստիարակելը — սա է «Կոչ

Հայ երիտասարդութեան» ստեղծագործութեան կենտրոնաձիգ միտքը.

Հայ տան, հայ ազգին ակունքը վնիտ
Հայ մայրն է միայն կաթով անապակ,
Եթէ չբերես հայ կին քու տունիդ՝
Պիտի ուծանաս, որդի անժառանգ:

Գրիգոր Հոթոյեանի քառեակներն ու քառատողերը եւս Հայոց Համազգային ցաւից ու բաղձանքից ծնուած անմոռուկներ են.

Ազգիս ցաւը մշտանորոգ վերքի պէս
Կը հետեւի ամէնօրեայ քայլերուս,
Մղելով զիս ցասումներու սրտակէզ,
Զտեսնելով Արդարութեան ոչ մէկ յոյս:

Զնայած բանաստեղծը ֆիզիկապէս հեռու է Մայր Հայրենիքից, բայց ամէն վայրկեան նա շնչում եւ ապրում է Հայաստան աշխարհով, Արարատով ու Էջմիածնով, Սեւանով ու Արագածով, նա իր արմատները Հայոց հողում է տեսնում, երգումի պէս է հնչում նրա պոէտական խոստովանանքը ժողովածուի 46-րդ էջում.

Ծնած օտար երկնքի տակ, հասակ առած ինչպէս ծառ,
Սակայն արմատս հողիդ մէջն է, իմ պաշտելի Հայաստան,
Կ'ապրիմ մարմնով որպէս պանդուխտ, տառապելով անդադար,
Սակայն հոգիս հեւքիդ հետ է, հերոսական Հայաստան:

Ո՞վ է 20-րդ դարի այն Հայ բանաստեղծը, որն իր ատելութեան, ցասման եւ վրէժխնդրութեան կծու խօսքը չի ուղղել Հայոց Մեծ Եղեռնի կազմակերպիչներին եւ իրագործողներին: Զրկայ այդպիսի Հայ բանաստեղծ, չկայ այդպիսի Հայ, չկայ այդպիսի դաշնակցական: Գր. Հոթոյեանը եւս պարպել է մասամբ (լրիւ՝ անհնարին է) իր սրտում կուտակուած այդ մաղձը (տես գրքի «Եղեռնի հետքերով» շարքը): Եւ միթէ «Ապրիլի 24», «Զրոյց Եփրատի հետ», «Ցասում», «Եղեռնի յուշարձան» քերթըլածաների ծնունդը կը բաւէ՞, որ պարպուի, Հանգստանայ իր

հայրենի օջախից բռնագաղթուած, իր նախնեաց գերեզմանների եւ Մշոյ Սուրբ Կարապետի ճանապարհները կորցրած սիրիականադաւաճայ բանաստեղծի սիրտը: Իհարկէ՝ ոչ: Էլ ի՞նչ սփիւռքահայ, եթէ նա հայոց պահանջատիրութեան եւ Հայ Դատի ուխտեալ պաշտպան չէ: Էլ ի՞նչ բանաստեղծ (այն էլ սասունցի եւ դաշնակցական), որ իր ընթերցողին ի գէն չկոչի եւ թշնամուն չյիշեցնի:

Յստակ գիտցէք,
Ըմբռնեցէք.—
Ձեր մշտական,
Քարոզչական
Աշխատանքով,
Հերժումներով,
Մերժումներով,
Զինու ուժով,
Երկրի դիրքով,
Պաշտպաններով
Ձէք կամենար
Միշտ տեսարար

Բռնագրաւել,
Յաւէտ պահել
Հողը Հայկեան
Նուիրական:
Ձէք կարեւար
Ամօթահար
Թումբ կանգնեցնել
Պատուար դնել
Հայոց Դատին,
Իրաւունքին՝
Պապեմական
Ու պատմական...

«Յասում» բանաստեղծութեան բարոյա-քաղաքական նախատինքն ու լաւատեսութիւնը գալիս են մեր ժողովրդի ազնիւ մտածելակերպից, մեծահոգութիւնից եւ մարդասիրութիւնից, յագեցած են մի անտեսանելի ինտերանացիոնալիզմով եւ խաղաղապաշտութեամբ: Դրա համար էլ բանաստեղծը վստահ է, որ կը գայ Արդարութեան եւ Խաղաղութեան ժամը, եւ մեր գիշատիչ հարեւանը կ'ուղղի իր սխալը (հաւատա՞նք — Ս. Գ.):

Բայց ես կ'ըսեմ,
Հաւատով եմ,
Թէ պիտի տան
Եւ անպայման,
Երբ որ հնչէ
Ու փողփողէ

Ժամն հատուցման,
Արդարութեան,
Յանուն կորսուած
Եւ փնտռուած
Յաւերժական
Խաղաղութեան:

Սպասենք եւ յուսանք, թէ՞...
Եթէ Հոթոյեանի քաղաքացիական քնարերգութեանը բնո-

րոշ են սիամանթոյական շունչը, հրապարակախօսական կիրքն ու մարտական պաթոսը, որոնք իրենց զգացնել են տալիս նաեւ «Սրտալոյզ խոկումներ» շարքում, ապա «Բնութեան հետ» տաղարանն ու «Սիրային տազնապներ» շարքերը մեծարենցեան արեւագալով են ջերմացած, դուրեանական նուրբ ու խոր թախծի հետ շաղախուած է տէրեանական մի հեզուլթիւն, որն այդ բանաստեղծութիւններին հաղորդում է մի ուրոյն եւ անտեսանելի հմայք: Կարգա՝ «Ով ընկեր», «Խոկում՝ նոր տարուայ սեմին», «Միսաք Մեծարենց», «Թաթուլ Հուրեան» խոհալի, պատկերաշատ, վշտամրմուռ եւ ազգացաւ քերթուածները: Այնժամ նորովի կը կանգնի աչքիդ դէմ «հակախորհրդային, դաշնակ բանաստեղծը», սասունցի մի այր, որ հայրենի ցաւից սահմուկած ու գալարուած հեռաւոր Տորոնտոյում գիշերուայ աղօտ լոյսի տակ, ձախ ձեռքը ծնօտին յենած գրում է.

Նոր տարի է, եկէք խոկանք, փնտոենք դարման մեր դատին,
Եւ դարձնենք մեր աչքերը վերածնուած հայրենիք,
Հոնկէ է, որ պիտի բացուին դռները մեծ գալիքին,
Հոնկէ է, որ պիտի հասնինք Սասուն ու Վան գեղեցիկ...

Այսքան հայրենասիրութիւն, այսքան հայրենանուիրուածութիւն, Հայաստանով լուծուող Հայոց Հարց եւ Պահանջատիրութիւն... եւ դիմա՞ցը «մարքսիզմ-լենինիզմի լոյսին» գերի խորհրդահայ կոյր գրականագիտութիւն. ոչ մի խօսք, ոչ մէկ ակնարկ սփիւռքահայ այս բանաստեղծի մասին, քանզի նա դաշնակցական է: Այսպիսի պատճառաբանութիւն այսօր ծիծաղելի է, իսկ երէ՞կ, նախորդ օրը: Ո՞վ կը թողնէր Գէորգ Չառչին, Սպաղանաց Կալէիւն, Սուլուի ազատամարտերի անսասան մասնակից հայ Ֆիդայիներին եւ Բաշ Ապարանի ու Սարգարապատի քաջարի զօրավար Դրաստամատ Կանայեանին (Դրօ) ձօներգեր հիւսել, դրանք անցկացնել Գլավլիտի (գրաքննութեան, ասել է թէ ԿԳԲ-ի) քաղաքական մութ նեղանցքներից եւ «չարժանանալ սիբիրեան ճամբորդութեան»: Բայց գրել է, գրել է նրանց մասին Սիրիայում եւ Կանադայում Գրիգոր Հոթոյեանը, եւ դրանց մեծ մասը տպագրել «Սփիւռք»ում, «Հայրենիք»ում, տպագրել է «Ասպարէզ»ում, «Հորիզոն»ում, «Կանթեղ»ում, «Նոր Կեանք»ում, «Դիտակ»ում եւ Սփիւռքի այլեւայլ պարբերականներում, չիմանալով, որ Խ. Հայաստանում իրենից ջահել մէկ ուրիշ սաս-

նորդի՝ Գալչոյ Մանուկի թողը՝ Մուշեղ Գալչոյեանը, խորհրդա-
յին կարգերից յոգնած ու զգուած, մի օր բացայայտ հրապարա-
կելու է, թէ «կը գայ այն օրը, երբ մենք կը համբուրենք հայ
Ֆիդայիների սրբացած ճակատները»: (Կարդացէք «Մարութայ
Սարի Ամպերը»): Եկել է ժամանակը: Մեր ներսում բանտարկը-
լած Չաուշներն ու Անդրանիկները, Սմբատներն ու Կալէները
վերադառնում են իրենց յաւերժագնայ ու բացօթեայ օջախնե-
րը: Չես հաւատում, գնա՛ Ուջան ու Սասնաշէն, գնա՛ Աշնակ ու
Մաստարա, Սեւքար ու Գորիս... Այո, սեւքարեցի Սաքոյի եւ
Գարեգին Նժդեհի ցեղակրօն ինքնայրուժը այսօր վառում է մեր
հոգու մարած, բայց չյանգած պատրոյգը, լուսաւորում մեր
սրտի ու մտքի գալիք ճամբան՝ Մուշից Արցախ, Վանից Սիւնիք,
Ջաւախք ու Փայտկարան... «Բանաստեղծին ձայնը տիեզերա-
կան յարաբերութեան մը լարը պէտք է ըլլայ, բոլոր գոյութիւն-
ներու համադրական թրթռումովը աղցուն» մեծարենցեան այս
դաւանանք-պատգամին հաւատարիմ, գրական ուխտաւոր Գր.
Հոթոյեանը այսօր յիշեցնում է, որ «Բանաստեղծութիւնը բնու-
թիւնն ու կեանքը, ժողովրդին ոգին ու երազանքները կը ցո-
լացնէ ու կը պատգամախօսէ ժողովուրդին հասկնալի, գեղեցիկ
լեզուով ու պարզութեամբ, նոխացած՝ զգացումով, գաղափա-
րով, ապրումով ու երեւակայութեամբ»: Հաւատարիմ է, արդ-
եօք, գրական իր այս դաւանանքին բանաստեղծը, թէ՞ ոչ: Ահա-
ւասիկ իր ստեղծագործական նշանաբանը ապացուցող մի հատ-
ուած «Խոկում» նոր տարուայ սեմին» բանաստեղծութիւնից.

Նոր տարի է, բայց մե՞նք կ'ապրինք օտար ափեր ցանուցիր,
Պապե՛նական մեր հողերը դեռ կ'արտասուեն որբացած,
Կեռ մահիկի գարշապարը տրորած է գերդ բալխիր,
Հայուն կերտած մշակոյթի կոթողները լուսարծարծ:

Նոր տարի է, բայց մի՞նչեւ ե՞րբ յուսաբեկ ու դառնահամ
Նոր տարիներ պիտի անցնին իմ դալկահար հոգիէս,
Ախ, մի՞նչեւ ե՞րբ պիտի մնայ մեր երկիրը պատմական
Գերեվարուած ու ֆանդուած, ամայի ու սրտակէգ:

Նոր տարի է. մեծին, փոքրին խնդութեան օր երագուն,
Բայց իմ սիրտը կը մորմոքի, խոր ցաւերս որո՞ւ լամ,
Սփիւռքի մէջ տարուէ-տարի կը թառամի մեր լեզուն,
Ու կ'աղճատին ոգին հայոց ու բարբերը հայկական:

Հայկական ոգու եւ բարքերի աղճատման դէմ մղուող պայքարը Սփիւռքի հիմնահարցերից է: Այդ հիմնահարցի կազմումն սուրբ գործում իր վճռորոշ դերն ունի մշտնջենական սիրոյ եւ գուրգուրանքի արժանի Հայ մամիկը, Հայ կինը, Հայ աղջիկը: Նրանցից ո՞ւմը իր տղամարդկային սիրտը ափի մէջ չի բացել բանաստեղծ Հոթոյեանը: Տեսնես՝ ինչպիսի զգացում է ապրում Սիրիայում ծնուած եւ յոյժ Հայեցի դաստիարակուած Ալիս (Շաքէ) Վարդանի Հոթոյեանը, երբ ընթերցում է ամուսնու «Սիրածիս», «Չգիտցայ երբեք», «Դեռ կը սիրե՞ս զիս», «Ինչո՞ւ ինձմէ նեղացար» սիրային բանաստեղծութիւնները: Իր սիրային տաղերում, սոնետներում ու քառեակներում կանադահայ բանաստեղծը մինչեւ հոգու խորքը նորից պարզ է, բարի, սրտացաւ ու ջերմ: Նրա սէրը դիպուածի, երեւոյթի, հրապուրանքի արձագանգ չէ՝ պաղ եւ անյոյզ, այլ գեղեցիկի, առաքինու, վսեմի գովերգ, հոգու սրբազրում եւ ակամայ խոստովանանք, որն ակելի շուտ յարգարում է սիրոյ եւ ընտանեկան խութեբը, քան թէ «կրակի վրայ իւղ ակելացնում»:

Հազիւ ամիս մը հեռացած քեզմէ
Եւ ահա ինչքան կարօտցած եմ քեզ,
Տակաւին հոգիս կ'այրէ, կը տանջէ,
Վերջին գիշերուան լացդ աղեկեզ:

Կ'ուզէի գիտնալ. դուն ալ ինձի պէս
Մտահոգուած ես այս բաժանումով,
Մութ թախիծ մը լուռ արդեօ՞ք ինձի պէս
Պատած է հոգիդ մեր պարման սիրով:

«Առանձին էր» քերթուածը կարծես թէ ամփոփում է պոէտի սիրոյ փրկսոփայութիւնը եւ մարդ էակին յիշեցնում:

Առանց սիրոյ եւ գգուանքի կեանքը փուն է,
Եթէ ըլլաս նոյնիսկ հարուստ ու գեղեցիկ,
Առանձնութիւնն մարդու հոգին կը խաթարէ,
Առանց ընկեր՝ պիտի ապրիս ապերջանիկ:

Աւարտելով Գրիգոր Հոթոյեանի «Սիրտը Ափի Մէջ» սեւակեան համանման խորագրով Կանադայում հրապարակուած բանաստեղծութիւնների ժողովածուի ընթերցումը, կ'ուզենայի,

որ Մայր Հայրենիքում (կամ այլուր) հայեցի հրատարակչու-
թիւններից որեւէ մէկը կանաչ լոյս վառէր եւ քնարերգութեան
սիրահար մեր ընթերցողին ներկայացնէր ազգային ցաւից մխա-
ցող, Սիրիայում, Լիբանանում եւ Կանադայում հայոց համազ-
գային եւ կրթամշակութային կեանքին իր անբասիր նուիրումը
բերած բանաստեղծ Գր. Հոթոյեանի ստեղծագործութիւնների
ընտրանին եւ անտիպները: Ձէ՛ որ, ինչպէս պոէտն է ասում.
«Կեանքը գնալով դառնում է դաժան...»: Բանաստեղծների,
արուեստագէտների հանդէպ պէտք չէ դաժան լինել: Դա են ա-
պացուցում նաեւ Գրիգոր Հոթոյեանի տեքստերով, էդիկ Յով-
սէփեանի եւ այլ կոմպոզիտորների երաժշտութեամբ հիւսուած
«Ձօներգ Հայաստանին», «Գարնանային», «Ղարաբաղը կը
կանչէ», «Ձայն ազատութեան», «Խրիմեան Հայրիկ», «Սիրուն
աղջիկ» եւ տասնեակ այլ հայրենասիրական, խոհա-փիլիսոփա-
յական եւ սիրային երգերը, որոնք այսօր հնչում են Սփիւռքի,
յատկապէս Կանադայի հայկական բեմերից եւ ձայնասփիւռնե-
րից:

Գրիգոր Հոթոյեան բանաստեղծն ու հրապարակախօսը այ-
սօր Մոնթրէալում լոյս տեսնող «Հորիզոն» շաբաթաթերթի Տո-
րոնտոյի ներկայացուցիչն է եւ յաճախ է այս պարբերականում
հանդէս գալիս ոչ միայն թղթակցութիւններով, այլեւ տարբեր
յօդուածներով եւ քերթուածներով:

Վարձքդ ի կատար, հեռաւոր գրչեղբայր:

01.09.91 թ.

Թալին-Ներքին Սասնաչէն



ԱԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ (ԾՆՆԴԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ)

Հեռաւոր Կանադայի Տորոնտօ քաղաքում է ապրում նախ-
կին մանկավարժ, էրգրի կարօտով ապրող, բայց էրգիր չտեսած
սասնորդի բանաստեղծ եւ հրապարակախօս Գրիգոր Հոթոյեա-

նը՝ Սերոբ Աղբիւրի եւ Սմբատի նախկին զինուոր Հոթոյենց Ղազարի (Խարզօ) եւ Մարիամի որդին, քաջարի հայդուկապետներ եւ հայոց ազատագրական պայքարի ուխտանուիրեալներ Սպաղանաց Կալէի եւ Մակարի շառաւիղներէց մէկը: Ծնունդով (5.08.1927 թ.) Գրիգորը հալէպցի է: Կրթութիւնը ստացել է Հալէպի Սահակեան վարժարանում: Դպրոցն ավարտելուց յետոյ որպէս ենթասպայ Սիրիայում եւ Լիբանանում ծառայել է Ֆրանսիական բանակում: Զօրացրուելուց յետոյ գրաշար եւ լրագրող էր Հալէպի «Արեւելք» թերթում: Այստեղ են լոյս տեսել նրա առաջին թղթակցութիւններն ու գրական թոթովանքները:

Այնուհետեւ որպէս մանկավարժ-դաստիարակ, յետոյ էլ հայկական դպրոցի տնօրէն Գրիգոր Հոթոյեանը աշխատել է Սիրիայի Հալէպ եւ Ռակկա քաղաքներում:

Ուր որ երթաս, ուր որ ապրիս Սփիւռքի խորք տարածքին,
Ոչ մէկ ատեն ազգդ, լեզուդ, եկեղեցիդ չմոռնաս...

Դպրոցական տարիներից մինչ օրս սա է Գրիգոր Հոթոյեանի կեանքի նշանաբանը, եւ նա հաւատարիմ է իր ուխտին: Դա են վկայում դեռ 1975 թ. մինչ օրս Կանադայում ապրող եւ ստեղծագործող, «Հորիզոն» հայկական թերթի աշխատակից բանաստեղծ հայորդու «Սիրտը Ափի Մէջ» (1987 թ. Տորոնտօ) եւ օրերս Երեւանում լոյս տեսած «Նուիրում» (2002 թ.) ժողովածուները:

Կեանքս դաժան է արդէն,
Ինչպէ՞ս ապրիմ ես հիմա,
Հայրենիքիս կարօտէն
Ես կը մեռնիմ, հաւատա՛...

Հայրենի կարօտը 2002 թ. Մայիսին բանաստեղծին հայրենիք բերեց: Նա այստեղ մասնակցեց Հայ Գրողների Համահայկական Առաջին Համագումարին: Կանադահայ գրողներ Ռուբէն Մնացականեանի, Մարգար Շարաբխանեանի, Մանուէլ Քէօսէեանի եւ այլոց հետ ծանօթացաւ իր նորանկախ հայրենիքի առօրեային, եղաւ էջմիածնում, Օշականում, Ծաղկաձորում, Սեւանում, հոգեպէս եւ գաղափարապէս կիսուեց իր գրչեղբայրների եւ ընթերցողների հետ եւ Կանադա վերադառնալուց յետոյ ընդարձակ յօդուածներով անդրադարձաւ Գրողների Համահայկական Առաջին Համագումարին:

«Նուիրում»ը բաղկացած է «Իմ Երգարանը», «Որդիական» եւ «Նուիրում» բաժիններից: Թերթում ես ժողովածուի առաջին բաժինը եւ ծանօթանալով Գր. Հոթոյեանի երգատեքստերին եւ նրանց հիմա վրայ հիւսած երաժշտութեանը, չես կարող չուրախանալ, երբ տեսնում ես, թէ ինչպէս է հազարաւոր կիլոմետրերով Հայաստանից հեռու Կանադայում ծերունազարդ բանաստեղծը մենախօսում Արցախի հետ, այրւում հայաստանեան կարօտի հրից, ազատութեան եւ անկախութեան կոչում մայր հայրենիքում եւ սփիւռքում ապրող ողջ հայութեանը, վկայ նրա «Ղարաբաղը Կը Կանչէ», «Ազատատենչ Իմ Հայաստան», «Զայն Ազատութեան», «Երազներուս Ճանապարհով» բանաստեղծութիւնները, որոնց երաժշտութեան հեղինակը նորից Կանադայում ապրող կոմպոզիտոր Էդիկ Յովսէփեանն է:

Գր. Հոթոյեանի խոհա-փիլիսոփայական, սիրոյ եւ հայրենասիրական բազմաթիւ բանաստեղծութիւններ եւ երգատեքստեր շնորհիւ կոմպոզիտորներ Էդիկ Յովսէփեանի, Սարգիս Համպոյեանի, Յակոբ Մանուկեանի, Անահիտ Կուտսուզեանի, Արթուր Ռազգոյեւի, Գէորգ Յարութիւնեանի եւ դաշնամուրի բաժինը Գէորգ Անտոնեանի, իրենց քաղցրածոր մեղեդայնութեամբ, վառ հայրենասիրութեամբ եւ քնարականութեամբ յաճախ են հնչում ոչ միայն կանադահայ ռադիոյով եւ հեռուստատեսութեամբ, այլեւ զանազան դաշնակահարների նուագակցութեամբ յուզում են հայ դպրոցականներին, հնչում տարբեր բեմերից: «Նուիրում» ժողովածուում կան բազմաթիւ ձօներգեր նուիրուած մեր մշակոյթի հանճարեղ եւ անուանի դէմքերին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեանն ու ՀՄԸՄ-ին: Ուշագրաւ է յատկապէս «Մենք՝ Երէջներ Հայ Կեդրոնի» քայլերգը (երաժշտ. Գէորգ Յարութիւնեանի):

Մենք՝ երէցներ Հայ Կեդրոնի,
Կազմած փաղանգ երանելի,
Գաղափարով նուիրական
Կը ծառայենք ողջ հայութեան:

Ողջ հայութեանը այսօր էլ շարունակում է ծառայել բանաստեղծ, հրապարակախօս Գրիգոր Հոթոյեանը: Վկայ՝ Արցախեան հերոսամարտին նուիրուած նրա հրապարակումները Կանադայում լոյս տեսնող «Հորիզոն» թերթում: «Նուիրում» ժողովածուի «Որդիական» շարքի բանաստեղծութիւնները ըն-

*Թերցողիս, ակամայից ծանօթանում ես պոէտի ոչ միայն կենսագծին, այլեւ հաւատամքին, նրա հայեցի այրմանն ու հայդուկապաշտ խառնուածքին: «Ինչն՞ գրչի այս համեստ մշակը մինչեւ օրս անծանօթ է մայր հայրենիքում» – թէեւ հարցնիր ընթերցողը: Յիշեցնենք, որ նա ուխտեալ դաշնակցական է արմատներով: Իսկ ո՞վ Խորհրդային Հայաստանում կը թոյլատրէր ներկայացնել Գրիգոր Հոթոյեանին, երբ Մուշեղ Իշխանն էր արգելուած, Համաստեղն ու Ծառուկեանը: Փոխուել են ժամանակները: Այսօր մայր հայրենիքում արդէն կանադահայ դաշնակցական, սասունցի բանաստեղծ հայորդին ունի ե՛լ իր հրատարակիչը ե՛լ իր ընթերցողը: Շնորհաւորելով նրան իր ծննդեան 75-ամեակի եւ «Նուիրում» ժողովածուի լոյս ընծայման առիթով, ուզում եմ խօսքս վերջացնել, Գր. Հոթոյեանին տարիներ առաջ հասցէագրած Յակոբ Կարապենցի մի նամակի սուրբ տողերով. «...Այս որքա՛ն հարուստ ներաշխարհ ես ունեցել: Այդքան սէր ու կարօտ ինչպէ՞ս ես պարփակել սրտիդ մէջ: Սիրեցի թէ՛ հայրենասիրական երգերդ եւ թէ՛ սիրային տագնապներդ: Որքան բոցաշունչ եմ յեղափոխական երգերդ, նոյնքան տրամանոյշ եմ անձնական տուայտանքներդ: Ձեմ կարող ասել, թէ ո՞ր երգերը ասելի նախընտրեցի, որովհետեւ իւրաքանչիւր երգ ունի իր ուրոյն կառոյցը, տրամադրութիւնն ու յոյզը...
...Կեցցէ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել...»:*

Երեւան, 1 Օգոստոսի, 2002թ.



ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

(ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ-80)

Ոչ միայն Հայաստանում, Սփիւռքում եւս կան գրական, մշակութային եւ հասարակական գործիչներ, որոնք միայն եւ միայն ծառայում են իրենց ազգասուրբ ուխտին, մատաղ սե-

ըրնդի հայեցի դաստիարակութեանը, ազատ, անկախ եւ միացեալ Հայաստան ստեղծելու տարածքային եւ գաղափարական միասնութեանը: Նման ազգանուիրեալներից է 1975 թուականից Կանադայի Տորոնտո քաղաքում բնակուող բանասէր, բանաստեղծ, արձակագիր, մանկավարժ, լրագրող, հրապարակախօս, ազգագրագէտ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԸ, Սասնոյ Տալուորիկի շրջանի Սպաղանք գիւղից Մեծ Եղեռնի պատճառով Սիրիա գաղթած Ղազարի (Խարզօ) եւ Կիլիկեցի Մարիամի որդին, հայ ֆիդայուլութեան փառքերից Սպաղանաց Մակարի, Սպաղանաց Կալէի, Սպաղանցի քաջարի հայդուկապետ Հակէի (Յակօբի) շառաւիղը: Գրիգորը ծնուել է Հալէպում 1927թ. Օգոստոսի 5-ին: «Մենք ալ մանկութիւն չունեցանք» եւ «Բարեգործ հայրըս» իրապատումները, որոնք որպէս պատմուածքներ, զետեղուած են Կանադայում (Տորոնտօ) եւ Հայաստանում (Երեւան) 2007թ. հրատարակուած «Ճանապարհ» ստուարածաւալ յուշատեղեկատու ժողովածուում, ոչ միայն ունեն կենսագրական հենք, գաղթաշխարհում յայտնուած մի ընտանիքի պատմութիւն են, այլեւ՝ ցաւերգութիւն, հաւատքի խտացում սեփական ուժի՝ ազնուութեան, աշխատասիրութեան, բարութեան միջոցով վեհին, գեղեցիկին հասնելու նշանաբան, հոգեկերտուածքի եւ հայապահպանման ձօն:

Հալէպի Սահակեան ազգային վարժարանի եւ հայագիտական դասընթացների շրջանաւարտ սասնորդին 2-րդ աշխարհամարտի տարիներին ծառայել է Փրանսիական բանակի թընդանօթածիզ զօրամասում եւ իր համեստ ներդրումը բերել թուրքական Փաշիգմի գերմանացի հովանաւորների յետնորդներին ջախջախելու սուրբ գործում: Նա բանակից զօրացրուել է 1946թ. ենթասպայի զինկոչումով եւ նորից Հալէպում՝ «Նայիրի» տպարանում, անցել աշխատանքի: Եղել է գրաշար «Սեւան» տպարանում, թղթակցել սփիւռքահայ մամուլին: Որպէս սկսնակ գրող եւ ուսուցիչ տակաւին պատանի՝ արժանացել ըսփիւռքահայ տաղանդաւոր գրողներ Սիմոն Սիմոնեանի, Անդրանիկ Ծառուկեանի սիրուն եւ գուրգուրանքին: Ու թէեւ պարբերական մամուլում Գրիգորը հանդէս է եկել նաեւ բազմաթիւ բանաստեղծութիւններով նուիրուած Անդրանիկին, Գէորգ Չառչին, Սպաղանաց Կալէին եւ այլ ազգամեծերի, բայց իր չափածոյ քերթուածները նա տպագրեց, երբ արդէն 60 տարեկան էր (1987թ., Տորոնտօ) «Սիրտը Ափին Մէջ» խորագրով: Առաջին

գրքին հետեւեց «Նուիրում» բանաստեղծութիւնների եւ երգատեքստերի ժողովածուն (Երեւան, «Ուխտատուն», 2002թ.): 2005թ. նորից Տորոնտոյում ընթերցողն ստացաւ այս անգամ արդէն արձակագիր Գ. Հոթոյեանի «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը: Ամենակարեւորը, թէ՛ չափածոյում (ես այդ մասին գրել եւ տպել եմ) եւ թէ՛ արձակում Հոթոյեան ստեղծագործողը կարողանում է լինել անկեղծ, սրտաբաց, գրում է կրքոտ, գրում է, երբ չգրելը դառնում է անհնար: Պատկերաւոր մտածողութիւնը, յոյզը, սէրը, ցասումը, զայրոյթը, նուիրումը Հոթոյեանի գրչի տակ դառնում են քնարական բանաստեղծութիւն, ձօներգ, ռազմակոչ, կենսապատում, փրկարար խաչ, մեռնաբոյր եւ պատուախնդիր հայերգութիւն:

Առանց իրական եւ անկեղծ սիրոյ կեանքը մարդկային Ունայնութիւն է, տառապանք է լոկ, թախծալից ապրում...

Հաւատարիմ իր այս նշանաբանին, այսօր ընթերցողի սեղանին է 80-ամեայ սասնորդու «Ճանապարհ» պատմաբանասիրական, հրապարակախօսական, արձակ, ժուռնալիստական երկերի ընտրանին: Նրա յօդուածները, հրապարակումները, թղթակցութիւնները, տարբեր առիթներով, յատկապէս Սիրիայում եւ Կանադայում, հայ համայնքին եւ հայ մեծանուն ու վաստակաշատ դէմքերին, պետական, կուսակցական, քաղաքական գործիչների է վերաբերում: Դրանք երբեմն մեկնութիւններ են ու զրոյց-խորհրդածութիւններ, ճամբորդական տպաւորութիւններ: Հապա՞ Հոթոյեանի գրախօսականները, նրա հոգեւոր, գրական եւ պատմառազմական (Արցախեան ազատամարտը ներառեալ) գործիչներին նուիրուած մեկնութիւնները, դրանց ընթերցողը կը հանդիպի ոչ միայն «Ճանապարհ»ում, այլեւ «Արեւելք», «Հայրենիք», «Հորիզոն», «Շողակաթ», «Նոր Կեանք», «Մեր Կեանքը», «Դիտակ» եւ բազմաթիւ, բազմաթիւ այլ թերթերում ու պարբերականներում: Կարգում ես վաստակաշատ սպաղանցու հրապարակումները, մտօք տեղափոխւում 20-րդ դարի Միջին Արեւելք՝ Սիրիա, Լիբանան, հասնում Կանադա, Ամերիկա եւ այլուր: Եւ ամէնուր Գր. Հոթոյեան հրապարակախօսը յուշում է, որ «մշակոյթն է մեզ պահպան, հայ դպրոցը՝ լոյսի աղբիւր մեսրոպեան, մենք պէտք է Վարդանանց ուղիով գնանք, հայ գիրքն է ճանապարհն

հայուն»։ Հոթոյեանի յօդուածները կեանքաճանաչողութեան դասեր են՝ լոյսով եւ հաւատով լեցուն դէպի հայ մարդը, դէպի հայ սիրտն ու հայ ուղեղը, դէպի հայ հանճարն ու հայ եկեղեցին։ Հրապարակախօսութիւնը, այն էլ օրուայ մամուլում, մերկապարանոց ճառասացութիւն չէ, այն օրուայ պահանջ է, քըննադատութիւն եւ նպատակ յանուն ազգային վերելքի։ «Ճանապարհ» հատընտիրի մի բաժնում (էջ 145-205) գետեղուած Գր. Հոթոյեանի ուսումնասիրութիւնները նուիրուած են Դանիէլ Վարուժանին (գրել է 25 տարեկան հասակում), Արշակ Բ.-ի քաղաքականութեանը, Յովհաննէս Թումանեանին, «Անձինք նուիրեալք՝ Սպաղանաց Կալէին» եւ այլոց։

Մշա՛կ, ցանէ, յանուն տանըդ սեղանին,
Թեւիդ շարժումն անպարագիծ թող ըլլայ,
Վաղը՝ նետած ցորեններդ այդ կը թափին
Օրինութեան պէս, թոռնիկներուդ գլխուն վրայ։

Վարուժանական այս պատգամը եւ օրհնութիւնը Հոթոյեանի Անի դասերն ու Հոթոյեանի Քրիստափոր եւ Ստեփան-Արմէն թոռներին ենք մենք այսօր ուղղորդում, քանզի 80-ամեայ սփիւռքահայ-սասունցի մտաւորականի վաստակը նրանց խնայողութիւնների շնորհիւ է լոյս աշխարհ եկել եւ հասել մեզ։ Այդ նրանք են հովանաւորել «Ճանապարհ»ի ճանապարհորդելը, ապացուցելով, որ Սիրիայի եւ Կանադայի ազգային ամէնօրեայ, ամառային եւ կիրակնօրեայ վարժարանների տնօրէնը, մանկավարժ լինելուց զատ, կենսափորձով իմաստնացած բանասէր է, հայագէտ, Սփիւռքի եւ հայաստանեան պարբերական մամուլի համահայկական-ազգապահապան ուխտանուիրեալ։ Եթէ ընդհանուր հանրագումարի բերենք «Ճանապարհ»ում տպագրուած նիւթերի ցաւն ու բովանդակութիւնը, կը տեսնենք, որ սասունցի-հալէպցի-տորոնտոցի Գրիգոր Հոթոյեանը սիրիահայ եւ կանադահայ կեանքի մերօրեայ տարեգին է, տաղերգուն, բազմաքնար եւ բազմաժանր հայախօսը։ Բաւական է թերթել «Ճանապարհ» հատորեակի «Թղթակցութիւններ» եւ «Հարցազրոյցներ» գլուխները, եւ դուք կը ծանօթանաք մեծանուն կոմպոզիտորների, երգիչների, խմբավարների, կաթողիկոսների, գրողների, գեներալների, գիտնականների, սովորական եւ հռչակաւոր մահկանացուների հետ։ Ամենակարեւորը, դրանք լինեն առիթով գրուած զրոյցներ, մահախօսականներ,

Թէ ծանօթութիւններ, տպագրուած բոլոր յօդուածներում, դիմանկարներում Հոթոյեան լրագրողը, մեկնիչը մնում է իր խառնըլածքին հաւատարիմ՝ Ազնուութեան բարձունքին, չի կեղծում ոչ իրեն, ոչ դիմացիներին, անկախ նրանց մեծութիւնից, գլուխած դիրքից կամ պաշտօնից: Հոթոյեանի գրքի բոլոր հերոսները, անկախ իրենց ազգային պատկանելիութեան (արաբ, եգիպտացի, ֆրանսիացի, հոլանդացի) առաքիւնի են, մարդասէր եւ ամենակարեւորը գրչի, խղճի, վրձնի եւ հայապահ գէնքի ու խաչի ուխտանուիրեալներ են: Գրողը կարողացել է իր ամէն մի հերոսի հետ խօսել ողջերի լեզուով, լինի նա Մաշտոց, Թէ Գէորգ Չաւուշ, Անդրանիկ, Թէ Դրօ, Գարեգին Ա. Կաթողիկոս, Թէ Հիւսէի վարչապետ Ֆառէյ Սարգսեան, գեներալ-մայոր, Արցախի հերոս Սամուէլ Կարապետեան, Թէ 2-րդ աշխարհամարտում զոհուած բանաստեղծ Թաթուլ Հուրեան: Թէեւ, իր խօսքերով ասած՝ «Կեանքը գնալով դառնում է դաժան», բայց 80-ամեայ սասունցի, բազմաժանր, բազմատաղանդ, բազմամեծար Գր. Հոթոյեանը կեանքն ու աշխարհը դիտում է, գննում հոգու, մտքի, խղճի եւ սրտի աչքով: Գր. Հոթոյեանը ողջ կեանքում չի հետեւել գրական եւ ոչ մի ուղղութեան, նրա ուղին մէկն է. գրել պարզ եւ շիտակ, գրել ժողովրդի մասին՝ ժողովրդի համար: Նրա ցաւը հայացաւն է, խնդրութիւնը՝ հայեցի, ինքնայրումը՝ նայիրեան, ճանապարհը՝ դէպի էրզիր: Նա հայոց հին եւ գալիք քարտէզների միաձուլման, սահմանագծերի եւ գոյնի պահպանման է գրական եւ կեանքային մոդեռնից հեռու, ծառուկեանական, շիրազ-սեւակեան եւ Սիմոն Սիմոնեան, ինչպէս Դաշտենց ու Մուշեղ Գալշոյեան գաղափարագծի անխոտոր յետնորդ: Գրչի մշակ է Գր. Հոթոյեանը, հոգու, գաղափարի, սրտի եւ կամքի, հաւատքի եւ անշահ նուիրումի քայլող վկայութիւն: Ռազմածովագիրների (ուզմական գրողներ) միջազգային ընկերակցութեան անդամ, Տարօն-Տուրուբերանի եւ Սասնոյ հայրենակցական միութիւնների անդամ Գրիգոր Հոթոյեանը փառքի եւ գովեստների մուրացկան չէ: Իր սաների, իր ընթերցողների սէրը մեր գրչեղբօր ամէնամեծ շքանշանն են: Թէեւ նա արժանացել է բազմաթիւ շնորհագրերի, մեդալների ու շքանշանների, բայց նրա կուրծքը գարդարող «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը՝ շնորհուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմից, համարում է կեանքում իր ամէնամեծ ու ամէնասուրբ պարգեւը: Գր. Հոթոյեանի ոչ միայն հրապարակախօսութիւնը, արձա-

կը, չսփածոն, այլեւ նրա սիրերգութիւնը մարդագովք է: Բնութեան, հայրենիքին, ռազմական եւ յեղափոխական երեւելի դէմքերին ձօնուած նրա տաղերը սփիւռքահայ կոմպոզիտորներ՝ Էդուարդ Յովսէփեանի, Յակոբ Մանուկեանի, Գէորգ Յարութիւնեանի, Անահիտ Կուտուզեանի, Սարգիս Համպոյեանի եւ այլոց յօրինած երաժշտութեան շնորհիւ դարձել են հոգեբուխ երգ, սիրավառ սիրտ, հայեցի լոյս եւ ուղեկցում քեզ ոչ միայն բեմից, ռադիոյով ու հեռուստատեսութեամբ, այլեւ կեանքում: Թերեւս այս բոլորը նկատել եւ զնահատել են ոչ միայն նրա ընթերցողները, այլեւ գրչընկերներն ու բարեկամները, որոնք այսօր էլ կրկնում են մեծանուն Յակոբ Կարապենցի խօսքերը. « ... Կեցցէ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել »:

Այո՛, սիրելի գրչեղբայր, այսօր դու Ամենամեծ Սասունցին ես: Ամէն անգամ Հայաստան գալուց ուխտագնացութեան եւ մեկնում Աշնակ, Գէորգ Չառլշի տուն-թանգարան, խոնարհւում Ուջանում, Վ. Սասնաչէնում, Երեւանի Եռաբլուրում մեծն Անդրանիկի արձաններին, Ապարանում հանգչող Դրոյի յուշարձաններին եւ շիրիմներին ծաղիկներ դնում: Աչքերդ արցունքով են լցւում, երբ ձեռքիդ ծաղկունք՝ խոնարհւում ես արցախեան մերօրեայ հերոսներ, սասունցի-տարօնցիներ Գեղազնիկ Չառլշի, Թաթուլ Կրպէյեանի եւ Զիւան Աբրահամեանի յաւերժախօս շիրիմներին: Խոնարհւում ենք քո գրական վաստակի եւ մեծ «Ճանապարհի» քո մեծ ազնուութեան եւ 80-ամեակիդ առջեւ:

Ես՛ Սուրբ Կարապետ մեռնենք քո գօրութեանը, Սպաղանաց Գրիգոր Հոթոյեանի ուխտը անկատար չթողնես, նրան Ծովասարն ու Մարաթուկն են սպասում, Սպաղանաց հողն ու ջուրն են կանչում, Սպաղանցի Մակարն ու Կալէն, Տալուրիկն ու Արածանին են սպասում:

Ուխտդ ի կատար, իմ քաղցր գրչեղբայր:

20.08.2007թ.

Երեւան



ԱՅՍՕՐՈՒԱՅ ԱՄԵՆԱՄԵԾ ՍԱՍՈՒՆՑԻՆ

Ոչ միայն Հայաստանում, Սփիւռքում եւս կան գրական մշակութային եւ հասարակական գործիչներ, որոնք միայն եւ միայն ծառայում են իրենց ազգասուրբ ուխտին, մատաղ սերունդի հայեցի դաստիարակութեանը, ազատ, անկախ եւ միացեալ Հայաստան ստեղծելու տարածքային եւ գաղափարական միասնութեանը: Նման ազգանուիրեալներից է 1975 թուականից Կանադայի Տորոնտո քաղաքում բնակուող բանասէր, բանաստեղծ, արձակագիր, մանկավարժ, լրագրող, հրապարակախօս, ազգագրագէտ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԸ, Սասնոյ Տալուրիկի շրջանի Սպաղանք գիւղից Մեծ Եղեռնի պատճառով Սիրիա գաղթած Ղազարի (Խարզօ) եւ կիլիկեցի Մարիամի որդին, հայ ֆիդայուների փառքերից Սպաղանաց Մակարի, Սպաղանաց Կալէի, սպաղանցի քաջարի հայդուկապետ Յակէի (Յակոբի) շառաւիղը: Գրիգորը ծնուել է Հալէպում 1927թ. Օգոստոսի 5-ին: «Մենք ալ մանկութիւն չունեցանք» եւ «Բարեգործ Հայրս» իրապատումները, որոնք որպէս պատմուածքներ, զետեղուած են Կանադայում (Տորոնտո) եւ Հայաստանում (Երեւան) 2007թ. հրատարակուած «Ճանապարհ» ստուարածաւալ յուշատեղեկատու եւ բազմաթեւ ժողովածուում, ոչ միայն ունեն կենսագրական հենք, գաղթխարհում յայտնուած մի ընտանիքի պատմութիւն են, այլեւ՝ ցաւերգութիւն, հաւատքի խտացում սեփական ուժի՝ ազնուութեան, աշխատասիրութեան, բարութեան միջոցով վեհին, գեղեցիկին հասնելու նշանաբան, հոգեկերտուածքի եւ հայապահպանման ձօն:

Հալէպի Սահակեան ազգային վարժարանի հայագիտական դասընթացների շրջանաւարտ սասնորդին 2-րդ աշխարհամարտի տարիներին ծառայել է Ֆրանսիական բանակի թնդանօթածիք զօրամասում եւ իր համեստ ներդրումը բերել թուրքական ֆաշիզմի գերմանացի հովանաւորների յետնորդներին ջախջախելու սուրբ գործում: Նա բանակից զօրացրուել է 1946թ. սպայի զինկոչումով եւ նորից Հալէպում՝ «Նայիրի» տպարանում, անցել աշխատանքի: Եղել է գրաշար «Սեւան» տպարանում, թղթակցել սփիւռքահայ մամուլին: Որպէս սկսնակ գրող եւ ուսուցիչ տակաւին պատանի արժանացել սփիւռքահայ տղան-

դաւոր գրողներ Սիմոն Սիմոնեանի, Անդրանիկ Ծառուկեանի սիրոյն եւ գուրգուրանքին: Ու թէեւ պարբերական մամուլում Գրիգորը հանդէս է եկել նաեւ բազմաթիւ բանաստեղծութիւններով նուիրուած Անդրանիկին, Գէորգ Չառուչին, Սպաղանաց Կալէին եւ այլ ազգամեծերի, բայց իր չափածոյ քերթուածները նա տպագրեց, երբ արդէն 60 տարեկան էր (1987թ. Տորոնտօ) «Սիրտը Ափին Մէջ» խորագրով առաջին գրքին հետեւեց «Նուիրում» բանաստեղծութիւնների եւ երգատեքստերի ժողովածուն (Երեւան, «Ուխտատուն», 2002թ.): 2005թ. նորից Տորոնտոյում ընթերցողն ստացաւ, այս անգամ արդէն արձակագիր Գ. Հոթոյեանի «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը: Ամենակարեւորը, թէ՛ չափածոյում (ես այդ մասին գրել եւ տպել եմ) եւ թէ՛ արձակում Հոթոյեան ստեղծագործողը կարողանում է լինել անկեղծ, սրտաբաց, գրում է կրքոտ, գրում է, երբ չգրելը դառնում է անհնար: Պատկերաւոր մտածողութիւնը, յոյզը, սէրը, ցասումը, զայրոյթը, նուիրումը Հոթոյեանի գրչի տակ դառնում են քնարական բանաստեղծութիւն, ձօնբեզ, ռազմակոչ, կենսապատում, փրկարար խաչ, միռոնաբոյր եւ պատուախնդիր հայերգութիւն:

Առանց իրական եւ անկեղծ սիրոյ կեանքը մարդկային
Ունայնութիւն է, տառապանք է լոկ, թախծալից ապրում...

Հաւատարիմ իր այս նշանաբանին, այսօր ընթերցողի սեղանին է 80-ամեայ սասնորդու «Ճանապարհ» պատմաբանասիրական, հրապարակախօսական, արձակ, ժուռնալիստական երկերի ընտրանին: Նրա յօդուածները, հրապարակումները, թղթակցութիւնները, տարբեր առիթներով, յատկապէս Սիրիայում եւ Կանադայում, հայ համայնքին եւ հայ մեծանուն ու վաստակաշատ դէմքերին, պետական, կուսակցական, քաղաքական գործիչների մասին է, դրանք երբեմն մեկնութիւններ են ու գրոյց-խորհրդածութիւններ, ճամբորդական տպաւորութիւններ: Հապա՞ Հոթոյեանի գրախօսականները, նրա հոգեւոր, գրական եւ պատմառազմական (Արցախեան ազատամարտը եւս) գործիչներին նուիրուած մեկնութիւնները, դրանց ընթերցողը կը հանդիպի ոչ միայն «Ճանապարհ»ում, այլեւ «Արեւելք», «Հայրենիք», «Հորիզոն», «Շողակաթ», «Նոր Կեանք», «Մեր Կեանքը» եւ բազմաթիւ, բազմաթիւ այլ թերթերում ու պարբերականներում: Կարգում ես վաստակաշատ սպաղանցու՝

Գրիգոր Հոթոյեանի հրապարակումները, մտօք տեղափոխուում 20-րդ դարի Միջին Արեւելք՝ Սիրիա, Լիբանան, հասնում Կանադա, Ամերիկա եւ այլուր: Եւ ամէնուր Հոթոյեան հրապարակախօսը յուշում է, որ մշակոյթն է մեզ պահպան, հայ դպրոցը՝ լոյսի աղբիւր մեսրոպեան, մենք պէտք է Վարդանանց ուղիով գնանք, հայ գիրքն է ճանապարհն հայուն: Հոթոյեանի յօդուածները կեանքաճանաչողութեան դասեր են՝ լոյսով եւ հաւատով լեցուն դէպի հայ մարդը, դէպի հայ սիրտն ու հայ ուղեղը, դէպի հայ հանճարն ու հայ եկեղեցին: Հրապարակախօսութիւնը, այն էլ օրուայ մամուլում, մերկապարանոց ճառասացութիւն չէ, այն օրուայ պահանջ է, քննադատութիւն եւ նպատակ յանուն ազգային վերելքի: «Ճանապարհ» հատընտիրի մի բաժնում (էջ 145-205) գետեղուած Գր. Հոթոյեանի ուսումնասիրութիւնները նուիրուած են Դանիէլ Վարուժանին (գրել է 25 տարեկան հասակում), Արշակ Բ-ի քաղաքականութեանը, Յովհաննէս Թումանեանին, «Անձինք նուիրեալք՝ սպաղանաց եւ այլոց»:

Մշա՛կ, ցանէ՛, յանուն տանրդ սեղանին,
 Թելիդ շարժումն անպարագիծ թող ըլլայ,
 Վաղը՝ նետած ցորեններդ այդ կը թափին
 Օրհնութեան պէս, թոռնիկներուդ գլխուն վրայ:

Վարուժանական այս պատգամը եւ օրհնութիւնը Հոթոյեանի Անի դասերն ու Հոթոյեանի Քրիստափոր եւ Ստեփան-Արմէն թոռներին ենք մենք այսօր ուղղորդում, քանզի 80-ամեայ սփիւռքահայ-սասունցի մտաւորականի վաստակը նրանց խնայողութիւնների շնորհիւ է լոյս աշխարհ եկել եւ հասել մեզ: Այդ նրանք են հովանաւորել «Ճանապարհ»ի ճանապարհորդելը, ապացուցելով, որ Սիրիայի եւ Կանադայի ազգային ամէնօրեայ, ամառային եւ կիրակնօրեայ վարժարանների տնօրէնը, մանկավարժ իրնելուց զատ կենսափորձով իմաստնացած բանասէր է, հայագէտ, Սփիւռքի եւ հայաստանեան պարբերական մամուլի համահայկական-ազգապահպան ուխտանուիրեալ: Եթէ ընդհանուր հանրագումարի բերենք «Ճանապարհ»ում տպագրուած նիւթերի ցաւն ու բովանդակութիւնը, կը տեսնենք, որ սասունցի-հալէպցի-տորոնտոցի Գրիգոր Հոթոյեանը սիրիահայ եւ կանադահայ կեանքի մերօրեայ տարեգիրն է, տաղերգուն, բազմաքնար եւ բազմաժանր հայախօսը: Բաւական է

Թերթել «Ճանապարհ» հատորեակի «Թղթակցութիւններ» եւ «Հարցազրոյցներ» գլուխները, եւ դուք կը ծանօթանաք մեծանուն կոմպոզիտորների, երգիչների, խմբավարների, կաթողիկոսների, գրողների, գեներալների, գիտնականների, սովորական եւ հուշակաւոր մահականացուների հետ: Ամենակարեւորը, դրանք լինեն առիթով գրուած գրոյցներ, մահախօսականներ, թէ ծանօթութիւններ, տպագրուած բոլոր յօդուածներում, բարձունքին, չի կեղծում ոչ իրեն, ոչ դիմացիին, անկախ նրանց մեծութիւնից, գրուած ԴԻՐՔԻՅ կամ պաշտօնից: Հոթոյեանի գրքի բոլոր հերոսները, անկախ իրենց ազգային պատկանելիութեան (արաբ, եգիպտացի, ֆրանսիացի, հոլանդացի) առաքինի են, մարդասէր եւ ամենակարեւորը գրչի, խղճի, վրձնի եւ հայապահ գէնքի ու խաչի ուխտանուիրեալներ են: Գրողը կարողացել է իր ամէն մի հերոսի հետ խօսել ողջերի լեզուով, լինի նա Մաշտոց, թէ Գէորգ Չաւուշ, Անդրանիկ, թէ Դրօ, Գարեգին Ա. Կաթողիկոս, թէ ՀնՍՀ-ի վարչապետ Յարգեյ Սարգսեան, գեներալ-մայոր, Արցախի հերոս Սամուէլ Կարապետեան, թէ 2-րդ աշխարհամարտում զոհուած բանաստեղծ Թաթուլ Հուրեան: Թէեւ, իր խօսքերով ասած «Կեանքը գնալով դառնում է դաժան», բայց 80-ամեայ սասունցի բազմաժանր, բազմատաղանդ, բազմամեծար Գր. Հոթոյեանը կեանքն ու աշխարհը դիտում է, գննում հոգու, մտքի, խղճի եւ սրտի աչքով: Գր. Հոթոյեանը ողջ կեանքում չի հետեւել գրական եւ ոչ մի ուղղութեան. նրա ուղին մէկն է. գրել պարզ եւ շիտակ, գրել ժողովրդի մասին՝ ժողովրդի համար: Նրա ցաւը հայացաւն է, խնդութիւնը՝ հայեցի, ինքնայրումը՝ նայիրեան, ճանապարհը՝ դէպի էրզիր: Նա հայոց հին եւ գալիք քարտէզների միաձուլման, սահմանագծերի եւ գոյնի պահպանն է գրական եւ կեանքային մոդեռնից հեռու, ծառուկեանական, շիրագ-սեւակեան եւ Սիմոն Սիմոնեան, Խաչիկ Դաշտենց ու Մուշեղ Գալշոյեան գաղափարագծի անխտոր յետնորդ: Գրչի մշակ է Գր. Հոթոյեանը, հոգու, գաղափարի, սրտի եւ կամքի, հաւատքի եւ անշահ նուիրումի քայլող վկայութիւն: Ռազմածովագիրների (ուղղական գրողներ) Միջագային Ընկերակցութեան անդամ, Տարօն-Տուրուբերանի եւ Սասնոյ հայրենակցական միութիւնների անդամ Գրիգոր Հոթոյեանը փառքի եւ գովեստների մուրացկան չէ: Իր սաների, իր ընթերցողների սէրը մեր գրչեղբօր ամենամեծ շքանշանն են: Թերեւս նա արժանացել է բազմաթիւ շնորհագրերի, մեդալների

ու շքանշանների, բայց նրա կուրծքը դարդարող «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը՝ շնորհուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմից, համարում է կեանքում իր ամենամեծ ու ամենասուրբ պարգեւը: Գր. Հոթոյեանի հրապարակախօսութիւնը, արձակը, չափածոն, այլեւ նրա սիրերգութիւնը մարդագովք է, բնութեան, հայրենիքին, ռազմական եւ յեղափոխական երեւելի դէմքերին ձօնուած նրա տաղերը սփիւռքահայ կոմպոզիտորներ՝ Էդուարդ Յովսէփեանի, Յակոբ Մանուկեանի, Գէորգ Յարութիւնեանի, Անահիտ Կուստուզեանի, Սարգիս Համպոյեանի եւ այլոց յօրինած երաժշտութեան շնորհիւ դարձել են հոգեբուխ երգ, սիրավառ սիրտ, հայեցի լոյս եւ ուղեկցում քեզ ոչ միայն բեմից, ռադիոյով ու հեռուստատեսութեամբ, այլեւ կեանքում: Թերեւս այս բոլորը նկատել եւ գնահատել են ոչ միայն նրա ընթերցողները, այլեւ գրչընկերներն ու բարեկամները, որոնք այսօր էլ կրկնում են մեծանուն Յակոբ Կարապենցի խօսքերը.— «...Կեցցէ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել»:

Այո՛, սիրելի գրչեղբայր, այսօր դու Ամենամեծ Սասունցին ես: Ամէն անգամ Հայաստան գալուց ուխտագնացութեան ես մեկնում Աշնակ, Գէորգ Չաւուշի տուն-թանգարան, խոնարհուում Ուջանում, Վ. Սասնաչէնում, Երեւանի Եռաբլուրում, մեծն Անդրանիկի, Ապարանում հանգչող Դրոյի յուշարձաններին եւ շիրիմներին ծաղիկներ դնում: Աչքերդ արցունքով են լցւում, երբ ձեռքիդ ծաղիկները խոնարհւում ես արցախեան մերօրեայ հերոսներ, սասունցի-տարօնցիներ Գեղազնիկ Չաւուշի, Թաթուլ Կրպէեանի եւ Ջիւան Աբրահամեանի յաւերժախօս շիրիմներին: Խոնարհւում ենք քո գրական վաստակի ազնուութեան եւ 80-ամեակիդ առջեւ: Եա Սուրբ Կարապետ, մեռնենք քո գօրութեանը, Սպաղանաց Գրիգոր Հոթոյեանի ուխտը անկատար չըթողնես, նրան Շովասարն ու Մարաթուկն են սպասում, Սպաղանաց հողն ու ջուրն են կանչում, Սպաղանաց Մակարն ու Կալէն, Տալուրիկն ու Արածանին են սպասում: Ուխտդ ի կատար, իմ քաղցր գրչեղբայր:


ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ



ԳԵՈՐԳ ԱՃԷՄԵԱՆ

(Դիմանկարի էսքիզ՝ մահախօսակցանքի փոխարեն)

«Շահան Շահնուրի, Հրաչ Զարդարեանի, Զարեհ Որբունու վէպերէն ետք ժամանակագրական կարգով չորրորդ հայ վիպագիրն է Գէորգ Աճէմեանը...»: 1968 թ. Օգոստոսի 16-ին «Սփիւռք» թերթում տպագրած մեծատաղանդ Սիմ. Սիմոնեանի այս կարծիքը գրական-իրաւական հիմք ունէր, քանզի երիտասարդ արձակագիրն արդէն ընթերցողի սեղանին էր դրել «Անկարելի Պատմութիւն», «Օրերէն ետք», «Անորոշութեամբ եւ Մասամբ Նորին», «Անապահովութեան Փողոցներ» եւ «Պիտի Զարչարեմ Բառերը», իրօք, թէ՛ ձեւով, եւ թէ՛ բովանդակութեամբ ինքնատիպ գրքերը:



Ո՞վ է Գէորգ Աճէմեանը: Մայր հայրենիքում նրան ճանաչում են միայն «Անապահովութեան Փողոցներ» վէպով, որը լոյս տեսաւ Երեւանում 1968 թուականին՝ «Սփիւռքահայ Գրողներ» մատենաշարով՝ արժանանալով մեծ ուշադրութեան:

Գէորգ Աճէմեանը արմատներով գտարիւն սասունցի էր: Նրա հայրը՝ Վարդանը, որին ճակատագիրը դեռ առաջին աշխարհամարտից էլ առաջ (1912թ.) հասցրել էր Հալէպ, քաջ յայտնի էր սիրիահայութեանը Փուրթօ անունով: Մայրը՝ Ազնիւր, եւս շինական ընտանիքի դուստր էր: Արաբական երկնքի տակ, էրգիր վերադառնալու կարօտն ու ցաւը հոգում, Սիրիայում ժամանակաւորապէս բնակուած (բոլոր սասունցիներն այստեղ ջրաղացպան էին կամ փռապան) Փուրթօն էլ էր տենչում վերադառնալ Տալլորիկ, գտնել իր եղբօրը՝ Աւէին, չիմանալով, որ Մեծ Եղեռնը նրան չպրտել էր Հիւսիսային Կովկաս, յետոյ էլ՝ Թալինի շրջանի Շղարշիկ գիւղ, ուր միայն Մեծ Եղեռնից 30-40 տարի անց եղբայրներն իմացան միմեանց մասին: Փուրթօն «էրգիր վերադառնալու համար զինուոր է պէտք, շատ

ճիժ» մտածողութիւնն իրականացնելու համար Մարոյից յետոյ չորս արու որդիներ ունեցաւ՝ Գառնիկը, Յակոբը, Գէորգն ու Ազատը: Ու թէեւ արաբական հողն ու ջուրը զօրավիզ դարձան, մեծացրին տալևորիկցի Վարդան-Փուրթոյի ճժերին, յամենայնդէպս նրանց շուրթերը բացուեցին Սասնոյ բարբառով: Եւ որպէսզի «գէրգրի լեզուն չմոռանաք, մըր տունն էկող-կացող սասունցոց հետ մըր լեզուով կը ժղլիք», — պատգամում էր Փուրթօն իր որդիներին:

— Գէորգը եղբայրներէս երրորդն էր, — պատմում է տիկին Մարի Սիմոնեանը: — Ան ծնուած է 23 Մայիս 1932-ին Սուրիոյ Հալէպ քաղաքին մերձակայ Մումբուջ գիւղին մէջ: Նախնական կրթութիւնն ստանալէն ետք ուսումնառութիւնը շարունակած է Հալէպի Հայկազեան եւ Կիւլպէնկեան վարժարաններում, ետքը ընդունուած է եւ 1948-ին ավարտած է Հալէպի Ամերիկեան Քոլէջը...

1954-1958թթ. Գէորգ Աճէմեանը Բէյրութի Ամերիկեան Համալսարանի փիլիսոփայութեան մասնաճիւղի ուսանող էր: Հենց այդ տարիներից էլ թղթակցում էր սփիւռքահայ մամուլին, գրում ոչ միայն պատմուածքներ, այլեւ գրաքննադատական եւ հրապարակախօսական յօդուածներ: Եւ մի քանի տարի արաբական արեւելքի հայկական տարբեր դպրոցներում մայրենի լեզու եւ գրականութիւն, անգլերէն եւ հոգեբանութիւն դասաւանդելուց յետոյ, երիտասարդ սասունցին իրեն ամբողջապէս նուիրեց գրքին ու գրչութեան արուեստին: «Անկարելի Պատմութիւն» (1956թ.) եւ «Օրերէն Ետք» (1958թ.) ժողովածուների հեղինակ էր, երբ ոտք դրեց Բէյրութում նոր լոյս տեսնող (1958թ.) «Սփիւռք» շաբաթաթերթի խմբագրութիւն եւ «Սեւեան» տպագրատուն: Գ. Աճէմեանին «Սփիւռք»ի խմբագրապետը ջերմօրէն ընդունեց ոչ միայն նրա համար, որ երիտասարդ տալևորիկցին իր տիկնոջ եղբայրն էր, այլեւ տաղանդաշատ արձակագիր էր, գրականագէտ եւ գրական տեսաբան, անգլերէնի, արաբերէնի եւ ֆրանսերէնի փայլուն գիտակ: Եւ շահեց «Սփիւռք»ը: Յիշենք, որ Գ. Աճէմեանի թէ՛ գրական եւ թէ՛ տեսական ամենածանրակշիռ ստեղծագործութիւններն ու յօդուածներն այստեղ են առաջին անգամ լոյս տեսել, այստեղ են գրախօսուել, դրուատուել կամ քննադատուել:

Երեսուն տարիների մեր մտերմութիւնն ինձ այսօր նորից է ստիպում վերընթեռնել «Ակամայ Ծաղրածուն Եւ Այլ Դերասաններ» (1968թ.), «Միակ Լուծումը» (1972թ.), «Յաւերժական

Ճանապարհ» (1975թ.), «Ապագայի Հետքերով» (1982թ.), «Յարգողի ժառանգորդները» (1983թ.), եւ Բէյրութում (յատկապէս «Սեւան» տպարանում եւ «Ալթապրէս»-ում) տպագրած Գ. Աճէմեանի վէպերն ու վիպակները, խոհա-փիլիսոփայական էսսէներն ու ճամբորդական նոթերը: Որքան սէր, յոյզ, հայանուիրում, ազգային ցաւ ու համամարդկային հոգսեր ու խընդիրներ կան ամբարուած նրանցում, որքան ատելութիւն՝ հայոց դարաւոր թշնամու՝ Մեծ Եղեռնը իրագործողները դէմ: Յանուն Հայ Դատի եւ համագգային պայքարի եւ գոյատեւման ինչպիսի՛ ինքնայրում կայ եւ այն էլ՝ ինչպիսի լաւատեսութեամբ ու հաւատով: Եւ այս բոլորը կերտուած ոչ միայն հեղինակային խօսքի, այլեւ ստեղծած կերպարների սրտով, մտքով ու լեզուով: Յիշենք, որ անգլերէնի գերազանց իմացութիւնը պատճառ դարձաւ, որ սասունցի Գէորգ Աճէմեանը անգլիախօս ընթերցողին ներկայանայ իր «Աններդաշնակ Համանուագ» (1962թ.) անգլերէն գրած գրքով, ժողովածու, որը դրուատանքի արժանացաւ սփիւռքահայ մամուլում (գրախօսներ՝ Պ. Պարսամեան, Կ. Բարսեղեան, Յ. Ժամկոչեան եւ այլք):

Յետադարձ հայեացք գցելով Գ. Աճէմեանի անցած ճանապարհին՝ դժուար չէ կռահել, որ նա շնորհաշատ եւ ազգուխտեալ մանկավարժ լինելուց բացի նաեւ տաղանդաւոր արձակագիր, վիպասան, խմբագիր (յիշենք, որ Ս. Սիմոնեանից յետոյ նա է խմբագրել 1974-78թթ. «Սփիւռք» շաբաթաթերթը), հմուտ եւ խորաթափանց գրականագէտ էր, գրականութեան եւ մշակոյթի իրօք ազգային տեսաբան: Ասածիս իսկութեան ապացոյցը Գ. Աճէմեանի Բէյրութում 1962թ. հրատարակած «Տեսական Քննադատական Փորձեր» (գիրք Ա.) եւ 1980թ. լոյս տեսած նոյնանուն ժողովածուի Բ. գրքերն են: Դրանց մի մասը գրուած է «Սփիւռք» շաբաթաթերթում: «Ո՞ւր է Հայ Գրողի Հրատարակչական Տունը», «Գրականութեան Սահմանումը եւ Ակնարկ Սփիւռքի Հայ Գրական Զարթօնքի Վրայ», «Գրական Պանդոկի Վարձակալները», «Գրողը եւ իր Գրականութիւնը», «Մուսան Մեր Գրականութեան Մէջ», «Միտք եւ Գրականութիւն», «Վիպագրութեան Արուեստը», «Օտար Լեզուով Գրող Հայեր եւ Մենք» եւ այլն: Իւրօրինակ խորագրերով «Սփիւռք»-ում տրպագրած Գ. Աճէմեանի գրական եւ տեսական մեկնութիւնները իրենց շօշափած հարցերով ոչ միայն ազգային են եւ արդիական, այլեւ համամարդկային եւ խիստ գիտական: Ոչ թէ գովաբանել ճանաչուած մեծերին, այլեւ տեսնել, ներկայացնել հա-

մեստ լուսկեացներին եւ յանիրաւի տուժածներին — սա են ապացուցում Վ. Նորենցին, Ա. Տատուրեանին, Խ. Տէտէեանին, արտերկրում եւ մայր հայրենիքում ըստ արժանւոյն չզնահատուած տասնեակ այլ գրողներին նուիրուած Գ. Աճէմեանի զուսպ, հակիրճ եւ բնորոշ մեկնութիւններն ու գրական ելոյթները: Հապա՞ Վ. Սարոյեանին, Ծ. Շահնուրին, Յ. Շիրազին, օտարազգի տարբեր բանաստեղծներին ու արձակագիրներին նուիրուած Գ. Աճէմեանի ծանրակշիռ յօդուածները: Չկայ հայեցի մի բնագաւառ, պատմական, քաղաքական մի շրջան, ազգացունց մի երեւոյթ, որին անդրադարձած չլինի բէյրութաբնակ Գ. Աճէմեանը: Լիբանանեան պատերազմի ողջ տարիներին նա չլքեց բէյրութեան իր սեփական գրախանութիւնն ու տունը:

1998թ. Դեկտեմբերի 27-ին Յրանսիայի Լիոն քաղաք, իր ընտանիքին՝ Վերային եւ զաւակներին՝ Ազնիւին, Ծովինարին ու Վարդանին տեսութեան մեկնած գրողը յանկարծամահ եղաւ: Ոչ Սիրիայում (իր ծնողների կողքին), ոչ Լիբանանում, ոչ էրգրում, ոչ էլ Հայաստանում բախտ չունեցաւ անգամ յաւերժօրէն հանգչելու բազմաչարչար տարօնորդին:

Որքան էլ Խորհրդային Հայաստանում խառն էին իսկական արուեստագէտներին գնահատելու չափանիշները, բայց եւ այնպէս, յանուն ճշմարտութեան յաղթանակի, նրա մասին կիսաբերան գոնէ ինչ-որ խօսք ասուել է: Յիշենք, որ նրան առանձին տողեր են նուիրուել «Հայկական Սովետական Հանրագիտարան»ում (Ա. հատոր), Գ. Ստեփանեանի «Կենսագրական Բառարան»ում (Ա. հատոր), Գ. Սեւանի «Սփիւռքահայ Գրականութեան Պատմութեան Ուրուագծեր»ում (2-րդ գիրք) եւ գրականագիտական ու բանասիրական այլ աշխատութիւններում:

Ամանորեայ այս օրերին, սիրելի գրչեղբայր, խոնարհւում եմ քո թարմ շիրմի առջեւ եւ հաւատացած եմ, որ մի բարի օր քո ողջ գրական վաստակն ու սուրբ աճիւնը կը վերադառնան հայրենիք. չէ՞ որ այստեղ են քո հարազատները, քո մեսրոպատառ ընթերցողն ու այստեղ է, որ քո Կարօտի եւ Յասման գրականութիւնը վերընձիւղւում է, որ բռնի էրգրի ճամբան:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

«Հայաստանի Հանրապետութիւն»,
8 Յունուար 1999

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

1913-1989



Շնորհալի եւ տաղանդաւոր բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր, խմբագիր, հրատարակիչ Անդրանիկ Ծառուկեան ծնած է Կիւրին (Սեբաստիոյ նահանգ) 1913-ին:

1915-ի Հայոց Մեծ եղեռնին զոհուած է հայրը եւ որբացած, որբանոցներու մէջ ապրելով, տառապելով քարշ տուած է իր կեանքը Սուրբիոյ Հալէպ քաղաքին մէջ: Ան իր որբանոցային կեանքը ներկայացուցած է 1952-ին հրատարակած «Մանկութիւն Չունեցող Մարդիկ» գիրքով, որ ապագային թարգմանուած է ռուսերէնի, ֆրանսե-

րէնի եւ այլ լեզուներու:

Անդրանիկ Ծառուկեան 1928-ին աւարտած է Հալէպի Հայկազեան ազգային նախակրթարանը: 1930-1934-ին ուսանած է Պէյրութի Նշան Փալանճեան Ճեմարանին մէջ: 1935-1942 որպէս ուսուցիչ պաշտօնավարած է Հալէպի Զաւարեան նախակրթարանին մէջ: 1941 Նոյեմբերին Հալէպի մէջ հրատարակած է «Նայիրի» ժողովրդային ամսագիրը, որ մեր գրական մամուլի պատմութեան մէջ յիշատակութեան արժանի մակարդակ եւ ճաշակ ստեղծեց, դառնալով ոճի եւ լեզուի նմոյշ եւ օրինակ, շնորհիւ իր բանաստեղծ-արձակագիր խմբագրին:

1935-ին Պէյրութի մէջ հրատարակած է «Մոխրաման» գիրքը, 1939-ին՝ «Առագաստներ» բանաստեղծութիւններու հատորը, 1945-ին Հալէպի մէջ հրատարակած է «Թուղթ Առ Երեւան» պոէմը, 1944 թուականին Երեւանի մէջ Գէորգ Աբովի ստորագրութեամբ լոյս տեսած «Մենք չենք մոռացել» ոտանաւորին որպէս պատասխան: Ծառուկեան «Թուղթ Առ Երեւան» պոէմին ձեռագիրը 24 Դեկտեմբեր 1944-ին ուղարկած է Երե-

լան՝ Հայպետհրատ, հրատարակութեան խնդրանքով: 1946-ին Հալէպի մէջ անոր երրորդ տպագրութեան հետ լոյս տեսաւ Յակոբ Օշականի «Վկայութիւն Մը» վերնագրով վերլուծական հատոր մը, ուր Օշական չէր տատամսեր Ծառուկեանը կոչելու Սփիւռքի անդրանիկ եւ իրաւ բանաստեղծը: «Թուղթ Առ երեւան»-ը իր ազգային սրտայոյզ բովանդակութեան շնորհիւ արժանացած է հայերէն 10 տպագրութեան:

Եղեռնի բոլոր դառնութիւնները դժբախտաբար եղած են իր ճակատագիրը: 1915-ի սպանդէն միայն մայրը վերապրած է, միշտ տէր դառնալով եւ ծառայելով իր որբացած զաւակին, մինչեւ իր մահը:

Ծառուկեանի գրական սկզբնական էջերը հրատարակուած են 1931-ին, աշխատակցելով արտասահմանեան մամուլին: Առաջին գործը կ'ըլլայ «Եղերաբախտ Քերթողներ» հատորը, որ հրատարակուած է Վ. Խաթակ գրչանունով, իսկ «Մոխրաման» անուն վէպը՝ 1935-ին:

Անդրանիկ Ծառուկեան իր սերունդին ամէնէն տաղանդաւոր քերթող-արձակագիրներէն է: 1930-1980 յիսնամեայ շրջանի մեր գրական կեանքին մէջ կը յատկանշուի ստեղծագործական եւ վերլուծական ցայտուն շնորհներով, որքան գեղարուեստական որակի հասնող բանաստեղծութիւններով եւ արձակներով՝ նոյնքան եւ քննադատական, հաշուեյարդարական եւ իմացական շարժումներով, «Արեւելք» օրաթերթին 1946-47-48-ի թիւերուն մէջ իր գրած «Օրը-Օրին»ներով՝ «Պիծակ» ստորագրութեամբ եւ «Ճամբայ բացէք» եւ այլ խմբագրականներով:

1948, 10-20 Սեպտեմբերին, Շթորայի մէջ (Լիբանան) կազմակերպեց Արտասահմանի Հայ Գրողներու համագումարը, որ գրական մեծ շարժում մը ստեղծեց այդ օրերուն:

Անդրանիկ Ծառուկեան 1941-1949 Հալէպի մէջ հրատարակեց «Նայիրի»-ն, ապա, 1951-էն՝ Պէյրութի մէջ որպէս շաբաթաթերթ, ապրումի հարազատութեամբ, խորքի, պատկերներու գումարով եւ անխառնօրէն գրական յատկանիշներով, քերթուածէն եւ արձակէն մինչեւ յուշագրային կամ վերլուծական էջեր, գրախօսականներ եւ քննադատումներ: Սրատես, սրամիտ գեղագիտական ցայտուն հակումներով, պատմելու թէ թելադրելու հաւասար արժանիքներով, վերջին յիսնամեակի արտա-

սահմանեան գրականութեան մէջ եւ հրապարակագրային ճակատի վրայ արժէքի բարձրացած դէմք մըն է:

Ծառուկեան քառասուն տարիներ հրատարակեց «Նայիրի» ամսագիրն ու շաբաթաթերթը Հալէպի եւ Պէյրութի մէջ:

Եղաւ կուսակցական ղեկավար ու իր ժամանակի բոլոր յայտնի ղեկավարներուն հետ իր ժամանակները տրամադրեց արտասահմանի հայութեան ազգապահպանման, խօսելով ոչ միայն մեր ցաւերուն մասին, այլ տալով դարմանումի միջոցներ, ցոյց տալով Սփիւռքին հայեացքը ուղղել Հայրենիքին, պետական ինչ կարգ ալ տիրելու ըլլար հոն, որովհետեւ ան հաւատացած էր, որ բոլոր բարիքները կրնան ծլիլ հայրենի հողէն:

Ըմբոստ մըն էր ան եւ յեղափոխական մը: Երազ ունէր, բայց երբեւէ չհղաւ երազատես, որովհետեւ գիտցաւ իր խանդավառութեան ղեկը պահել մտածումի եւ ողջմտութեան առաջատին տակ: Գիտցաւ չտարուիլ պատահական քամիներէ, դաս առնելով հայոց հազարամեայ պատմութենէն, բարձր պահելով մարդու եւ այս պարագային հայ մարդու արժանապատուութիւնը: Հայութիւն, Հայ Գիր, Հայ Մշակոյթ, ահա այն բառերը, որոնք բարձր հնչեցին իր գրաւոր եւ բերանացի խօսքին կէսգարեան հոսքին մէջ:

Ծառուկեան երբեք չէ վիճած վիճելու սիրոյն: Վիճած է եզրակացութեան մը յանգելու համար, իր բառերը որպէս կշռաքար գետեղելով իրաւախոհութեան նժարին վրայ:

Ծառուկեանը ապրեցաւ Միջին Արեւելքի զոյգ գաղութներուն՝ Սուրիոյ եւ Լիբանանի ոչ միայն կազմաւորումին, այլ՝ նաեւ բարգաւաճման շրջանները: Ոչ միայն ապրեցաւ, այլ՝ եղաւ կեանքի ներկայացող այդ ընթացքին ղեկավարներէն մէկը, որ փոթորիկի օրերուն գաղութին նաւը ձգելով փախչողներէն չհղաւ, այլ ամուր բռնեց ղեկը նաւին ու քառասուն տարիներ իր «Նայիրի»-ով շեփորեց հայրենիքին կողքին ըլլալու գաղափարը ու ձգտեցաւ համախմբել մեր ժողովուրդը, բռունցքի վերածել մեր համայնքներուն տարտղնուած ուժերը՝ եկեղեցիով հանդերձ:

Գաղութէ-գաղութ ճամբորդութիւնները անձնական վայելքի վերածողը չհղաւ երբեք, այլ՝ ուր որ գնաց, Կիպրոս թէ Եգիպտոս, Ֆրանսա թէ Ամերիկա, ամէն տեղ փնտռեց մեր ցաւերուն տուն տուող պատճառները ու մանաւանդ ծանրացաւ ամ-

լուծեան դատապարտուած այն պայքարներուն շուրջ, որոնք տարամիտուածի կ'առաջնորդէին մեր կենսական ուժերը:

Ծառուկեան խորապէս ճանչցաւ Սփիւռքը իր բոլոր շերտերով, խմբաւորումներով, ահա թէ ինչո՛ւ անոր խմբագրած «Նախիրի»ն Սփիւռքի տարագրութեան շտեմարանը մնալու կոչուած է քառասնամեայ կեանքով:

Մեր մէջ քիչ անգամ պատահած է, որ անհատ մը յենելով միայն իր սեփական ուժերուն, կարենայ մամուլ հրատարակել ամբողջ չորս տասնամեակ ու անոր մասին վկայող պիտի մնան ոչ միայն «Նախիրի»ն, այլ՝ անոր հրատարակած գրական ստեղծագործութիւնները մէկ առ մէկ, ամբողջութեամբ, յատկապէս իր «Մանկութիւն Չունեցող Մարդիկ», «Թուղթ Առ Երեւան», «Երագային Հալէպը» գործերով, որոնք իրապաշտ իր գրիչին բարձրակէտերը եղան, թագադրուելով յետ մահու գիրքի վերածուած իր «Մեծերը Եւ Միւսները» գործով, ուր աղաղակող ճշմարտութիւն մը սիրտը կը բզկտէ:

Այս ցաւով գնաց Ծառուկեանը, որուն ամբողջ գրականութեան մէջ չէք հանդիպիր ոչ մէկ շինծու էջի: Գնաց, երթալ միանալու համար Սփիւռքի այն մեծերուն, որոնք գաղթական մեր ժողովուրդը կապեցին իրենց մայրենի լեզուին, կոմիտասեան երաժշտութեան, իր պատմութեան, մշակոյթին, իր հայրենի հողին եւ յաւերժական Հայաստանին, որուն մեր օրերու անկախանալը չտեսաւ Ծառուկեանը, բայց հոգևով կանխատեսեց յայտարարելով.— «Պիտի հասնի՛նք սրբազան լեռ կատարիդ...»:

Լիբանանի 15-ամեայ քաղաքացիական կռիւներու հետեւանքով «Նախիրի»ն դադրեցաւ 1983 Մայիսին: Ապա, Յրանսա փոխադրուեցաւ, փորձելով Փարիզի մէջ հրատարակել «Նախիրի»ն, բայց չյաջողեցաւ դժբախտաբար:

Փարիզի մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան, Շաբաթ, 20 Մայիս 1989-ին մահացաւ հայ ժողովուրդի մեծագոյն զաւակներէն, հայ գրականութեան գազաթններէն, բանաստեղծ-արձակագիր, հրապարակագիր, խմբագիր, հրատարակիչ, կուսակցական ղեկավար Անդրանիկ Ծառուկեան:

ԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳԻՐՔԵՐՈՒ ՑԱՆԿԸ

- 1.- Մոխրամանը
- 2.- Եղերեբախտ գրողներ
- 3.- Առագաստներ

- 4.- Մանկութիւն Զունեցող Մարդիկ
- 5.- Թուղթ Առ Երեւան
- 6.- Վերջին Անմեղը
- 7.- Հին Երազներ Նոր Ճամբաներ
- 8.- Երազային Հալէպը
- 9.- Սէր Մը Եղեռնին Մէջ
- 10.- Փառաբանութիւն Հայ Լեզուին
- 11.- Նոր Հայաստան Նոր Հայեր
- 12.- Ամերիկեան Կողմն Աշխարհի
- 13.- Սփիւռքի Տասնամեակները
- 14.- Առկայծող Հայեր Եւրոպայի Լոյսերուն Մէջ
- 15.- Մեծերը Եւ Միւսները
- 16.- Հայը Աշխարհի Ճամբաներուն Վրայ

**

Հալէպի «Արեւելք» օրաթերթը հրատարակուեցաւ հոգե-տան մէջ գտնուող «Նայիրի» տպարանէն, իսկ գրաշարատունը կը գտնուէր հոգետունին երկրորդ յարկին վրայ գտնուող սենեակի մը մէջ:

Այդ սենեակին մէջ աշխատող գրաշարներու կարգին, ես ալ, Հալէպի ուսուցչական տպարանին մէջ գրաշարութիւն սորված ըլլալով, դիմեցի նոր հրատարակուող «Արեւելք» օրաթերթի վարչութեան, մաս կազմելու համար «Արեւելք»-ի գրաշարական կազմին: Երբ «Արեւելք» օրաթերթը հոգետունէն Սալիպէ փոխադրուեցաւ եւ Տօնապետեան եղբայրները Պէյրուէէն գալով ստանձնեցին «Արեւելք»-ի գրաշարութիւնը, 1947-ին, Անդրա-նիկ Ծառուկեան զիս պահեց որպէս «Նայիրի»-ի գրաշար, ուր մնացի մինչեւ 1949:

1949-ին, Անդրանիկ Ծառուկեան Պէյրուէ փոխադրուելու պատճառով տպարան «Նայիրի»-ն ծախեց: Տպարանը գնող անձը զիս եւ տպագրիչ վարպետ Պր. Արմենակ Խնդիրեանը պահեց, որպէսզի տպարանը շարունակէ գործել:

Անդրանիկ Ծառուկեանի մահուան (20 Մայիս 1989) տարելիցին, յուշերս եւ ապրումներս արտայայտող ցաւակցական գրութիւն մը գրեցի, որ լոյս տեսաւ Լոս Անճելըս հրատարակուող «Նոր Կեանք» շաբաթաթերթի ԺԲ. տարի, թիւ 28, Մայիս 22 1990-ի թիւին մէջ, «Անդրանիկ Ծառուկեանի Անթառամ Յիշատակին (Յուշեր եւ Ապրումներ)» խորագրով:

Յարգելով սիրելի վարպետիս անմոռանալի յիշատակը, նոյն գրութիւնը կ'արտատպեմ այս առիթով:



ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ (Յուշեր եւ Ապրումներ)

Տարի մը առաջ, 20 Մայիս 1989-ին, սրտի խոր կսկիծով տեղեկացայ, Փարիզի մէջ պատահած անժամանակեայ եւ դառնադէտ մահը սիրելի վարպետիս՝ Անդրանիկ Ծառուկեանին: Ամբողջ տարի մը չարչարուեցայ, կարգացի իր մահուան առթիւ «Յառաջ»ի եւ «Նոր Կեանք»ի մէջ հրատարակուած յօդուածները, սակայն, չհաշտուելով կատարուած իրականութեան հետ, չկրցայ գրել եւ արտայայտուիլ այն անկեղծ զգացումները եւ անմոռանալի յիշատակները, որոնք անեղծ մնացած են մտքիս պաստառին վրայ այն քաղցր ու յուզիչ օրերէն, երբ ես որպէս գրաշար «Արեւելք» օրաթերթի, ապա՝ Նայիրի տպարանի եւ «Նայիրի» ամսագրի, գինք ունենալով որպէս գործակից եւ գործատէր, սակայն, որպէս մշակոյթի ծառայող գործատէր՝ ընկերական եւ եղբայրական զգացումներով թաթաւուն:

Թէեւ մեր գործակցութիւնը վերջ գտաւ 1949 թուականին, ինծի համար անակնկալ իր որոշումին հետեւանքով եւ Պէյրութ փոխադրուեցաւ, աւելի հայաշատ ու քաղաքականապէս ազատ քաղաք մը, ուր պիտի հաստատէր Հալէպի Նայիրի տպարանէն աւելի արդիական տպարան մը եւ «Նայիրի» ամսագրի փոխարէն պիտի հրատարակէր «Նայիրի» շաբաթաթերթը, որուն Հալէպ հասնող թիւերուն կը սպասէինք անհամբեր եւ կը լափէինք արժէքաւոր եւ ազգադրոշմ գրութիւնները:

1949-էն մինչեւ այսօր, իրմէ եւ իր բարեհամբոյր մօրմէն՝ տիկին Երանիկէն մնացած քաղցրաբոյր յիշատակները անջնջելի մնացած են հոգիիս խորը եւ աւելցած, այդ թուականէն ետք մեր ունեցած հանդիպումներով:

Անդրանիկ Ծառուկեանը ճանչցած եմ մանկութենէս, երբ

ինք Ձաւարեան վարժարանի ուսուցիչ էր, իսկ ես՝ Ազգային Սահակեան վարժարանի աշակերտ: Երկու դպրոցները միեւնոյն թաղամասին վրայ գտնուելով, յաճախ առիթը կ'ունենայինք զինք տեսնելու: Սակայն տարիներ ետք, երբ անդամագրուեցայ Հալէպի Նոր Գիւղ շրջանի Հ. Յ. Դ. «Ձաւարեան» Պատանեկան Միութեան եւ որոշ շրջանէ մը ետք մաս կազմելով «Ձաւարեան» գրադարանի անձնակազմին եւ միութեան վարչութեան, բախտը ունեցայ վայելելու զինք՝ որպէս միութեան վարիչ եւ ունկնդրելու իր խորիմաստ դասախօսութիւններն ու ճառերը:

Շուրջ երեք տարի Ազատ Ֆրանսայի Արեւելեան Բանակին ծառայելէ ետք որպէս ենթասպայ, 1 Մարտ 1946-ին, թնդանօթածիգ զօրամասի բարձր հրամանատարութիւնը ընդունեց հրաժարականս, պատճառաբանելով որ չեմ ուզեր Ֆրանսա մեկնիլ, Պէյրութէն վերադարձայ ծննդավայրս՝ Հալէպ, իրականութեան մէջ անսալով եւ տեղի տալով հօրս թախանձանքներուն, սասունցի լեռնականի մը մոլեռանդ հայրենասիրութեան թելադրանքներուն, որպէսզի շուտով Հայաստան ներգաղթենք:

Ընտանիքիս եւ հայրենիքիս հանդէպ ունեցած պաշտամունքս եւ սէրս ստիպեցին հրաժարելու փայլուն ապագայի ծրարադիրներէս եւ կեանքիս ուղին փոխելով, գտած ըլլալ կարծեցի հայրենիքին ծառայելու ճակատագրական առիթը: Սակայն, այդ օրերու ողբերգութիւններուն եւ խայտառակութիւններուն տեղեակ եղողները շատ լաւ կը յիշեն, թէ ինչպիսի՛ ծախուած մարդիկ կազմակերպեցին հայրենադարձութիւնը եւ ինչպիսի՛ պայմաններով ինչպիսի՛ մարդիկ ընդունեցին եւ արժանացան «Դրախտային Կարմիր Քարթին», քեզի տրուած թուին եւ մաս կազմել իրարայաջորդ կարաւաններուն: Գացողները գացին եւ արժանացան ստալինեան դրախտի վայելքին, իսկ մնացողները, տուն-տեղ ծախողները, չոր տախտակի վրայ մնալով, քաւեցին իրենց հայրենասիրութեան «մեղքերը»:

1946-1947 թուականներուն կազմակերպուած ներգաղթի շուրջ հոս, այս պահուս անդրադառնալը իմաստէ պիտի մերկանար, եթէ երեք Անդրանիկ Ծառուկեան, որ բոլոր հայրենասէր հայերու նման արձանագրուած էր Հայաստան ներգաղթելու, վերոյիշեալ պատկերին մաս կազմած չըլլար:

Իր դիմումին ընդառաջելով (հաւանաբար յետին մտածումով), Հալէպի ներգաղթի կոմիտէի «փարթամ» անդամները զինք կը հրաւիրեն իրենց կեդրոնատեղին՝ խորհրդակցութեան

Համար: Իրեն պաշտօնապէս կ'իմացուի, թէ այդ տարին (1946) կարելիութիւն չկայ իր դիմումը ընդունելու, խոստանալով յաջորդ տարին (1947) անպայման կարգադրութիւն մը ընել:

Ծառուկեան տպարան եկաւ «Աստուծոյ էլած», ջղայնացած, կծու բռներ գործածելով պատմեց եղելութիւնը այսպէս.—

«Երբ դիմումս չընդունեցին, ես իրենց հարց դրի, ըսելով.— «Գիտէ՞ք, մինչեւ յառաջիկայ տարի ես պիտի ապրիմ եւ ապրուստի մասին մտածեմ: Դերձակը իր արհեստով կ'ապրի, կօշկակարը եւ ատաղձագործը՝ նոյնպէս: Ես գրող եմ, գրելով կ'ապրիմ: Ինչպէս անցեալին, յառաջիկային ալ «Արեւելք»ի մէջ յօդուածներ պիտի գրեմ, ամսագիր պիտի հրատարակեմ: Գրութիւններովս կրնամ գնահատել կարգ մը երեւոյթներ, կրնամ ֆննդատել ապօրինութիւններ: Կրնամ Խորհրդային Միութիւնը նոյնիսկ ֆննդատել՝ միշտ գերադասելով հայ ժողովուրդի գերագոյն շահերը: Արդեօ՞ք իմ առօրեայ արտայայտութիւններս, կուսակցական կեանքս, գրած յօդուածներս պիտի չվնասեն ինծի արգելք հանդիսանալով իմ Հայաստան ներգաղթելու փափաքիս իրականացման»:

Ինծի պատասխանեցին.

— Դո՛ւն երբեք հոգ մի ըներ, շարունակէ գրել ինչ որ կամենաս: Շարունակէ աշխատանք մինչեւ որ քեզի պաշտօնապէս տեղեկացնենք մեկնումի թուականը: Գալ տարի անպայման կ'երթաս...»:

Ապա, Ծառուկեանի մտերիմներուն՝ Նշան Թիւյսիւզեանի, Կարապետ Աղճայեանի, Յարութիւն Պազարպաշեանի, ինչպէս նաեւ մեր զարմացական եւ առեղծուածային նայուածքներէն խթանուած, օդի մէջ կախուած մարդու Հոգեբանութենէն դուրս ելլելով աւելցուց.—

«Եղբայր, ես կը զարմանամ այս մարդոց դատողութեան եւ վարուելակերպին: Սուտերով եւ կեղծիքներով շարունած, իրենց պաշտօնը կը շահագործեն մարդիկ խաբելով եւ օրօրելով: Յիսուս, որ Աստուծոյ որդին էր, մարդոց մեղքերուն թողութիւն կու տար, սակայն ո՛չ մէկ անգամ ոեւէ մէկուն չըսաւ՝ կը ներեմ մեղքերդ, գնա՛ կրկին մեղանչէ, եկուր նորէն կը ներեմ քեզի: Այս մարդիկը Յիսուսէն աւելի բարեսիրտ եւ ներողամիտ են, կամ ալ՝ սատանայէն աւելի սատանայ»:

Եւ, այնուհետեւ, «Արեւելք»ի առաջին էջերուն աջ կողմի սիւնակը, շրջանակի մէջ եւ «Օրը-Օրին» խորագրով եւ Պիծակ

ստորագրութեամբ, Ծառուկեան քօղազերծեց Հայրենադարձութիւնը իրենց սեփական մութ Հաշիւներուն ծառայեցնող այդ սողուններու սանձարձակ ապօրինութիւններն ու խարդախութիւնները:

«Արեւելք»ի սիւնակներէն լուսարձակուած իր գրութիւններէն, պատմականօրէն անմոռանալի մնալու սահմանուած է «Զգուանքով» խմբագրականը, ուր Ծառուկեանի խայթող եւ խարազանող գրիչը, անզուսպ կատաղութեամբ եւ երգիծաբանութեամբ կը մերկացնէր Հայաստան ներգաղթելու որպէս պայման Դաշնակցութենէն եւ Հ. Մ. Ը. Մ.-էն հրաժարիլ պարտադրող ապագային «ներգաղթի կոմիտէին» զազրելի արարքներն եւ ողորմելի դաւադրութիւնները, օրինակ բերելով «Եփրատ» օրաթերթին մէջ հրատարակուած կարգ մը հրաժարականներ, որոնք ստորագրուած էին տարիներ առաջ երկրային կեանքէն հեռացած դաշնակցականներու եւ Հ. Մ. Ը. Մ.-ականներու կողմէ:

* * *

1946-ին, ես, 19-ամեայ երիտասարդ մը, որ դպրոցը աւարտելէ ետք շնորհքով եւ շահաբեր մասնագիտութիւն մը, սորվելու առիթը բանակին մէջ անցուցած ըլլալով, յատկապէս անձնաթուղթիս մէջ երկու տարի մեծ արձանագրուած (մահացած Գրիգոր եղբօրս ծննդեան թուականով) տարիքիս բերմամբ, պատանեկութենէս սորված դերձակութիւնը փորձեցի, սակայն, նկարագրիս ներհակ գտնելով հեռացայ: Ի՞նչ կրնայի ընել՝ ապրելու համար: Հօրս թելադրութեամբ եւ ընկերակցութեամբ մօտեցանք մեր սիրելի Հայրենակից Սիմոն Սիմոնեանին, որ այդ շրջանին կը վարէր Հալէպահայ Ուսուցչական Միութեան տրպարանը, որպէսզի առիթ տայ գիր ու գրականութիւն սիրող տղու մը, որպէսզի գրաշարութիւն սորվի:

Մոլեռանդ սասունցի Սիմոնեան, որ հօրս հետ երկարատեան վարչական եղած էր Սասնոյ Հայրենակցական Միութեան, «աչաց վրայ» ըսելով զիս գործի առաւ: Քանի մը ամիսներու ընթացքին սորվեցայ քսասյիւն գիրերուն տեղերը եւ քովքս բռնելով սկսայ շարել Մեսրոպեան Գիրերը, գնահատելի յառաջգի՜մութեամբ:

Այդ օրերուն, «Նայիրի» տպարանէն լոյս տեսաւ «Արե-

ւելք» օրաթերթը: Դիմեցի եւ ընդունուեցայ, բախտն ու առիթը ունենալով հայ մամուլին ծառայելու եւ ծանօթանալու ու մրտերմանալու Անդրանիկ Ծառուկեանին, Մինաս Թէօլէօլեանին, Օննիկ Մելիքսէթեանին, Միհրան Հերարտեանին, Արմէն Անոյչին, Գէորգ Աճէմեանին (ղպրապետ) եւ թերթի բոլոր աշխատակիցներուն եւ անձնակազմին:

«Նայիրի» տպարանը հաստատուած էր «Հոգեսուն»ին մէջ, Երուսաղէմի Պատրիարքութեան պատկանող կալուած մը, որ ժամանակին կը գործածուէր Կիլիկիայէն եւ Արեւմտեան Հայաստանէն Երուսաղէմ ուխտի գացող հայ կարաւաններուն որպէս օթեւան: Հոգեսուն բակին մէջտեղը գոյութիւն ունէր ջրհոր մը, բնակիչներուն կարիքներուն համար: Ունէր երկու դուռ, որ գիշերները կը գոցուէր: Դուռին մէկը կը գտնուէր Թիլէլ պողոտայի վրայ, իսկ միւսը՝ Սալիպէ թաղամասին:

Հոգեսուն կառուցուածքը երկու յարկանի էր, շրջանակուած խոշոր բակին բոլորտիքը: Երկրորդ յարկին վրայ գոյութիւն ունէին հայ չքաւոր ընտանիքներէ վարձուած սենեակներ, տանըմարքացի նշանաւոր հայասէր միսիոնար Միս Քարէն Եփփէի գործակից Պր. Քուչիկի հայ մայրերու գործ հայթայթող ասեղնագործ աշխատցուածքներու գրասենեակը, զոր կը վարէր Սուրիոյ գաղութի ղեկավար դէմքերէն Յարութիւն Չազրեան, իր ամբողջ կեանքը հայ ժողովուրդին նուիրած ուրփացի այդ մեծ հայր, որուն կեանքը վերջ գտաւ Սուրիոյ մէջ զէնքերու հարցով դաշնակցական ղեկավարներու կարգին իր ալ ձեռբակալութեան եւ իր վրայ գործադրուած խժողովութիւններուն հետեւանքով, բանտէն ելլելէն շրջան մը ետք շիջեցաւ, սուգի մատնելով Ծառուկեանը եւ ամբողջ հալէպահայութիւնը: Երկրորդ յարկին վրայ կը գտնուէր նաեւ «Տիգրիս» գրադարանը եւ «Արեւելք»ի գրաշարանոցը, ուր շարուած յօդուածները վարպէտք է իջեցնէինք էջադրուելու եւ տպագրուելու համար:

Այդ թուականին Հալէպի մէջ գոյութիւն չունէին արդիական տպարաններ: Նոյնիսկ արաբական թերթերը կը շարուէին կապարէ գիրերով եւ կը տպուէին նախնական, ժամական 1000-2000 օրինակ տպող մեքենաներով: Ներկայիս, այս ասիներուն վրայ ականատես ըլլալով տպագրական արդիական սարքերուն, մեր գրաշարութիւնը, էջադրումն ու տպագրութիւնը բեռնակրութեան պէս բանի մը միայն կրնամ նմանցնել: Սակայն, այդ շրջանին, մեր բոլորին սրտերուն մէջ գոյութիւն ունէր հայ մշա-

կոյթին եւ Հայ մամուլին ծառայելու ջերմեռանդ նուիրումը եւ մենք, օրինական ժամերէն շատ աւելի ժամանակ տրամադրելով, չնչին աշխատավարձով, հոգեկան մեծ գոհունակութիւն կը զգայինք, մեկնելով այն գիտակցութենէն, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պաշտօնաթերթին հրատարակութեան միջոցաւ կը ծառայէինք Հայ մշակոյթին ու Հայ ժողովուրդին:

Հոգետան հսկայ բակին վարի յարկին վրայ գոյութիւն ունէր հայկական փուռ մը, որ կը ծառայէր շրջանի բնակչութեան: Փուռին սեփականատէրերն էին հայաբոյր սասունցի Քեռի Յակօն եւ իր ազգականը Քեռի Սեդրակ: Ազատ ժամերուս կը սիրէի «ժղիլ» սասունցի հայրենակիցներուս հետ, որոնք ինծի կը պատմէին Սասունէն եւ Ֆետայիներու քաջագործութիւններէն: Իսկ Քեռի Սեդրակ, ցոյց տալով ոտքի սպին, կը պատմէր Հայաստանի Հանրապետութեան շրջանին խմբապետ Մուշեղի վաշտին հետ Հայաստանը հայացնելու համար մղուած կռիւններէն:

Առաջին յարկի վրայ էր նաեւ Փարիզ հաստատուած նախկին հալէպահայ բանաստեղծ Բիւզանդ Թոփալեանի հիմնած «Արաքս» տպարանը, որ անունը պահելով հանդերձ արաբ տրպազրոդի մը սեփականութիւնը դարձած էր: Տպարան «Արաքս»-ի ճիշդ քովը հաստատուած էր «Նայիրի» տպարանը:

Անդրանիկ Ծառուկեան իր մէկ տպաւորիչ պատմուածքին նիւթ դարձուցած էր հոգետան կեանքը՝ «Հոգետան Ասորի» վերնագրով, որուն ընթերցումը զիս տարաւ պտըտցնելու հոգետան աշխարհին մէջ:

«Արեւելք» օրաթերթի հրատարակութիւնները այլ տեղ փոխադրելէ եւ խմբագրատունը Հ. Մ. Ը. Մ.-ի ակումբը հաստատելէ ետք, Ծառուկեան զիս պահեց իր մօտ, տալով ինծի պատիւը շարելու «Նայիրի» ամսագիրն ու այլ հրատարակութիւններ:

Ամէնօրեայ մեր աշխատանքներուն առընթեր, օր մըն ալ նկատեցինք տպարանի կից, հոգետան Թիլէլի մուտքին վրայ գտնուող բակին վարձուորներէն պարպուիլը եւ անկէ ետք ձեռնարկուած նորոգութիւնները: Գաղտնիքը շրջան մը ետք լուծուեցաւ, երբ տպարանին եւ նորոգուող բնակարանին միջեւ դուռ մը շինուեցաւ:

Ծառուկեանն եւ իր համեստ, առաքինի եւ անձնուէր մայրը՝ տիկին Երանիկ, երանելի եւ իսկական հայուհի մը, փոխադրուած էին իրենց նոր բնակարանը, որուն անցքէն կ'երթեկէր

Ծառուկեան, իսկ մայրը ամէն օր բուրումնաւէտ հայկական սուրճով եւ քաղցր ժպիտով կը պատուէր մեզ:

Իր գրականութեան գլուխ գործոցը՝ «Թուղթ Առ Երեւան» երկը մինչ այդ քանի մը տպագրութիւններու արժանացած էր, լոյս տեսած էր նաեւ Յակոբ Օշականի «Վկայութիւն Մը» հատորը «Թուղթ Առ Երեւան»ին հետ, սակայն, կրկին պահանջը կը զգացուէր նոր հրատարակութեան: Բախտը ունեցայ շարելու «Թուղթ Առ Երեւան»ի 5-րդ հրատարակութիւնը, ինչպէս նաեւ գրական գոհար՝ «Մանկութիւն Զունեցող Մարդիկ»ը, որուն ձեռագիրները ժամէ ժամ, տան մէջ բանտարկուած հեղինակը, իր մօր՝ տիկին Երանիկին միջոցաւ կը հասցնէր ինծի՝ լոյս տեսնելու համար «Նայիրի» ամսագրի այդ ամսուան թիւին մէջ:

Յակոբ Օշականի ձեռագիրը տեսնողները կրնան վկայել, թէ ճանճի տատիկներով գրուած իր գրութիւնները շարելու համար գրաշարը զօրաւոր աչք եւ փորձառութիւն ունեցած պէտք է ըլլայ: Տառապանք է Օշականի ձեռագիրը կարդալ եւ շարել: Ես բախտը ունեցայ Օշականի վերջին ձեռագիրը շարելու:

Հայ գրականութեան գագաթներէն Յակոբ Օշական Հալէպ եկած էր իր յօրեկեանին առթիւ: Ան Հալէպ գտնուած միջոցին ամէն օր կ'այցելէր տպարան «Նայիրի» եւ հանդիպումներ կ'ունենար Ծառուկեանին հետ: Մեծապէս տպաւորուեցայ Օշականէն, մանաւանդ անոր հագուածքէն՝ բաց օձիքով, փափախը գլխուն, իր գրած պատմուածքներուն տիպարներուն օրինակով:

Բերած էր գրութիւն մը, իր էջերով 10-12 էջ, հրատարակելու համար «Նայիրի» ամսագրին մէջ: Զեռագիրը ձեռքս բռնած կ'ուսումնասիրէի: Ըսի.— Այս ձեռագիրը կարդալու համար խոշորացոյցի պէտք կայ: Շարեցի...:

Յաջորդ օր Օշական եկաւ, տուի շարուածքին առաջին փորձը, սրբագրեց, անունս հարցուց եւ ըսաւ.— Տղաս, գիտեմ Օշականի ձեռագիրը դժուար է շարել, ամէն գրաշարի գործ էջ, սակայն դուն նուազագոյն սխալներով շարած ես: Գնահատելի է:

Օշական չտեսաւ իր վերջին յօդուածին հրատարակութիւնը: Յաջորդ առաւօտ գոյժը տարածուած էր: Իջեւանած ըլլալով Գրիգոր Երէցեանի բնակարանը, հոն ալ մահացաւ: Ոչ եւս էր հայ մեծ գրագէտ եւ քննադատ Յակոբ Օշական, Անդրանիկ Ծառուկեանին ամէնէն մօտ գրագէտը:

Որպէս բանաստեղծ, գրագէտ, քննադատ, հրապարակագիր,

հրապարակախօս եւ խմբագիր Անդրանիկ Ծառուկեան իր դրոշմը եւ ոճը դրաւ հայ գրականութեան բոլոր ճիւղերուն վրայ: «Ուխտ Արարատին» քերթուածը, «Թուղթ Առ Երեւան»ը կամ «Մանկութիւն Չունեցող Մարդիկ» հատորները՝ առանձին առանձին, պիտի բաւէին զինք անմահներու շարքին դասելու...:

Իմ սրտի խօսքէս դուրս կը մնան Անդրանիկ Ծառուկեանի անձնական կեանքը, թերութիւնները, գաղափարական արեւելումներն եւ մարդկային հասկացողութիւնները: Ժամանակները կ'անցնին, շատ բաներ սերունդներու հետ կը փոխուին, կանգուն կը մնայ միայն գրագէտի մը արտադրած գրականութիւնը, որ իր արժէքով եւ որակով կրնայ երկար ճամբորդութիւններու դիմանալ եւ աւելի արժէքաւորուիլ:

Շատ քիչ մտաւորականներ եւ գրագէտներ ճանչցած եմ, որոնք ունեցած ըլլան շնորհալի գրագէտի եւ ճարտասան հրապարակախօսի համբաւ: Ծառուկեան աստուածատուր այդ երկու շնորհներէն աւելին ունէր:

Սիրելի եւ անմոռանալի վարպետիս հետ մեր գործակցութիւնը կարճ տեւեց, հազիւ երեք տարի: Իր Պէյրութ մեկնումին առիթով «Նայիրի» տպարանը ծախեց ելեկտրական ընկերութեան պաշտօնեայ վաշխառու հայու մը, իսկ տունը փոխանցեց այդ շրջանին Հալէպի Առաջնորդ, ապա՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս երանաշնորհ Ջարեհ Ա. Փայասլեանի ծնողքին: Երեք տարուան աշխատանքիս հատուցումը գանձած էի մեկնող վարպետէս: Այ գործ չունէի առանց Ծառուկեանի «Նայիրի» տպարանին մէջ: Հեռացայ, նուիրուելու համար ուսուցչական ասպարէզի:

Իրմէ փոխանցուած բազմաթիւ յիշատակներ անեղծ կը մընան եւ յաճախ մտածումներուս եւ խորհրդածութիւններուս առարկայ կը դառնան: Գիտէր, որ յաճախ «Արեւելք»ի մէջ գանազան ստորագրութիւններով յօդուածներ կը գրեմ, սակայն, երբ իմացաւ եւ կարդաց Գրիգոր Վարդգէս ստորագրութեամբ «Արեւելք»ի մէջ հրատարակուած առաջին քերթուածս, ուրախացաւ, գնահատեց, քաջալերեց եւ աւելցուց.

— Գրիգոր, գիտես, քերթուածդ կարդացի, քիչ մը աշուղական շունչ կար վրան:

Յաճախ մտածած եմ քերթուածներուս աշուղական «շունչ»ին մասին Ծառուկեանի բնորոշումին, բայց չեմ կրցած եզրա-

կացութեան յանգիլ, քանի ուրիշներէ նման վկայութիւն չեմ լսած:

Անդրանիկ Ծառուկեանը վերջին անգամ տեսայ Հալէպի մէջ, Գանատա գալէս քանի մը ամիս առաջ: Հալէպի մէջ կը տօնուէր իր յօբելեանը: Անկարելի է, որ ներկայ չգտնուէի: Կիրակի, 24 Նոյեմբեր 1974-ին, Սերքլ Կաթողիկի սրահը բերնէ բերան լեցուն է: Կը խօսուի իր մասին: Խօսք կ'առնէ յօբելեարը: Ձեռնարկէն ետք կը մօտենամ, կը շնորհաւորեմ զինք: Կ'առնէ ձեռքս խանդաղատանքով իր ափերուն մէջ եւ կ'ըսէ.

— Կ'ուզեմ որ միշտ գրես: Երանի անոր որ միշտ հայերէն կը գրէ:

Անկէ յետոյ, միշտ կը հետեւէի իր գրականութեան եւ վերջին տարիներուն անհամբերութեամբ կը կարդայի «Նոր Կեանք»-ի էջերէն իր հրատարակած սքանչելի գրութիւնները եւ իր վերջին գործը՝ Ռուբէն Սեւակի կեանքին նուիրուած:

Հազար ափսոս, պէտք է ապրէր եւ տեսնէր այսօրուան Հայաստանն ու հայ ժողովուրդի վերածնունդը: Հայկական Միասնականութիւնը: Հայ գրականութիւնը տակաւին շատ սպասելիքներ ունէր իրմէ, սակայն աւա՛ղ, Փարիզի այլամերժ մթնոլորտը մաշեցուց իր ջիղերը եւ իր հայու այդ սեւ աչքերը փակեց՝ հեռու իր սիրած Հայաստանէն եւ Լիբանանէն:



Ահա ներգաղթի օրերուն Ծառուկեանի խմբագրականներէն մէկը՝ «Ճամբայ քացե՛ք» վերնագրով, «Արեւելք» օրաթերթի Ա. տարի, թիւ 242, Կիրակի, 6 Ապրիլ 1947-ի թիւին մէջ տպուած:

ՃԱՄԲԱ՛Յ ԲԱՅԷՔ

Ուզեցին քայքայումը տեսնել այս միութեան: Հիմա պիտի տեսնեն անոր ո՛ւժը: Փորձեցին եղբայրը թշնամի դարձնել իր եղբօր: Հիմա պիտի տեսնեն հազարաւորներու եղբայրական սէրը, սիրտէ սիրտ, հոգիէ հոգի՝ անքակտելի որպէս կամուրջ: Ծիգ

չխնայեցին, մեր երիտասարդութեան կոնակը բերելու համար նուաստութեան գետիններուն: Հիմա պիտի տեսնեն աշտարակ- ուող անոր հասակը, յաղթ ու առնական անոր կերպարանքը, պիտի տեսնեն անոր ոգի'ն:

Քսան տարի, շարունակաբար եւ անընդմէջ, այս երիտասարդութիւնը կարմիր-հաւկիթ Ձատիկը վերածեց մեծախորհուրդ պատարագի: Քսան տարի, իր քրտինքով, իր եռանդով, իր հաւատքով՝ օտար ու վարձու հողի շերտ մը փոխակերպեց երազանոյշ հայրենիքի: Այդ հողին վրայ սերունդ մը աճեցաւ ու հասակ նետեց: Այդ հողին վրայ ուժի եւ յաղթանակի ծարաւ մեր աչքերը ցեղին Յարութիւնը ողջունեցին, Յարութեան բոլոր տօներուն: Այսպէս եղաւ՝ քսան տարի...

Բայց օտար հող մըն էր, վարձու հող մըն էր: Ու պատահեցաւ, որ քսանըմէկերորդ Ձատիկը դայ ու մեր տղաքը գտնէ առանց հողի: Պատահեցաւ, որ մեր վարձու դաշտին կորուստէն յետոյ եւ սեփական մարգավայրին գնումէն առաջ, անգամի մը համար մնանք առկախ եւ ստիպուինք դիմել ուրիշին: Ազնիւ ու ազնուական շարժումով մը, օտարը տրամադրեց իր գետինը, չուզելով խզուած տեսնել քսանամեայ մեր ճիգերուն ու կորովին ոսկի շղթան: Բայց ահա՛ ծուարած իր անկիւնէն դուրս սողաց մեր հարազատը եւ իր նախանձին թոյնով փորձեց խաթարել օտարին իսկ գուրգուրանքին ու հիացումին առարկայ մեր փառահանդէսը: Պաշտօնատունէ պաշտօնատուն, գրասենեակէ գրասենեակ, ականջէ ականջ՝ անիկա, — մեր հարազատը — քսութիւններով ու բամբասանքով, իր չունեցած արժանիքներուն ցնցոտին հակադրեց անվիճելի մեր իրաւունքին, քսան տարուան մեր քրտինքին, ու ճգնեցաւ մեր ձեռքերը թողուլ պարապին: Մեր հարազատը: Մեր «բարեկամ» հարազատը: Անգամի մը համար առիթ տրուեցաւ իրեն պարկեշտ ըլլալու, ուղիղ մնալու: Ափսո՛ս, չուզեց օգտուիլ այս վերջին եւ անկրկնելի առիթէն...

Թշուառ մարդիկ: Թշուառակա՛ն հոգիներ: Քիչ մը փոշի տեսան մեր ուսերուն, եւ կարծեցին թէ դիւրութեամբ կը յաջողին մեզ վերածել ջաղացպանի: Քսան տարին չբաւեց, որ հասկընաք վերջապէս, թէ ով էք դուք, ով ենք մե՛նք: Թո՛ղ ուրեմն այս քսանըմէկերորդը բանայ ձեր շլմորած աչքերը: Տեսէք ու սորվեցէք: Ու քանի որ անխոհեմութիւնը ունեցաք մեր ճամբուն վրայ տեղ բռնելու, կրեցէք հետեւանքը: Մոռցաք, թէ հէք-

եաթալին Հալէպ այս քաղաքին մէջ կայ աւանդական կանգուն մը: Մոռցաք, թէ հայ ժողովուրդին եւ օտարին կու տաք հազուադէպ պատեհճութիւնը, անսխալական չափոցով մը չափելու ձեր հասակը, մե՛ր հասակը: Դո՛ւք ուզեցիք, կրեցէք հետեւանքը:

Ու հիմա՝ տասնեա՛կ միութիւններով իրարու քով եկէք, որպէսզի հասնիք մեր կէ՛ս թիւին: Քանի մը հարիւրնոց ձեր խմբակներուն թուանշանին ետեւ քանի մը գէրօներ աւելցուցէք՝ որպէսզի շա՛տ երեւիք: Մեր շարքերէն դուրս չպրտուած փըշրանքները ձեզի դեկավար դարձուցէք, որպէսզի «փայլիք»: Քանի մը տարուան ձեր գոյութեամբ «քսանութամեակնե՛ր» տօնեցէք, որպէսզի հասակնիդ քիչ մը բարձր երեւայ: Յարութեան տօնը բարեկենդանի վերածեցէք կեղծ ու խարդախ թռուցիկներով, որպէսզի խնդաք, որպէսզի ամէն մարդ խնդայ: Ըրէք ինչ որ կ'ուզէք, շարժեցէք ինչպէս որ կրնաք, բայց ազատու՛մ չունիք: Պիտի չափե՛նք ձեր հասակը: Պիտի տեսնեն, պիտի տեսնէ ամէն մարդ, հայը, արաբը, բարեկամը, թշնամին — պիտի տեսնեն ձեր հասակը, մե՛ր հասակը: Դո՛ւք ուզեցիք որ այսպէս ըլլայ եւ լա՛ւ որ այսպէս եղաւ...

Ու երբ անցնին գինովութեան օրերը եւ մնաք դուք ձեզի հետ առանձին, մնաք ձեր թշուառութեան պատկերին դէմ ու մեր յաղթանակին շուքերուն տակ, պիտի հարցնէք անշուշտ, թէ ինչո՛ւ դուք այդպէս էք ու մենք այսպէս, ինչո՛ւ պայծառ է մեր տղոց ճակատը եւ մռայլ՝ ձերիններունը: Պիտի փնտռէք գաղտնիքը ու չգտնէք: Պիտի հարցնէք ու պատասխան չստանաք: Որովհետեւ չէք հասկնար, չէք ըմբռներ, չէ՛ք ուզեր սորվիլ: Քրսա՛ն տարի կանգնեցան մեր տղաքը ձեր առջեւ ու չտեսաք: Քսա՛ն տարի դաս տուին ձեզի ու չսորվեցաք: Թող այս քսանը՝ մէկերորդը գոնէ բանայ ձեր աչքերը: Սորվեցէ՛ք...

Սորվեցէք, թէ կազմակերպութիւն մը կ'ապրի եւ կ'ուռճանայ միայն ու միայն գաղափարով, ոգիո՛վ: Ոգին է որ կը ստեղծէ թիւը, որակը, կը ստեղծէ ո՛ւժը: Ոգին է որ հազարաւորները կը բերէ քով քովի, կը բազմապատկէ ու կը վերածէ հսկայական միաւորի մը, անխորտակելի պատնէշի մը: Ոգին, մե՛ր ոգին, Հ. Մ. Ը. Մ.ի ոգին: Այն ոգին, որուն դէմ մոլեգնեցան ամբողջ տարի մը, Երեւանէն մինչեւ Պէյրութ ու Հալէպ: Այն ոգին՝ որուն դէմ դարերէ ի վեր կը կաղկանձէ մեր յաւիտենական թշնամին: Այն ոգին՝ որ անմահ է որովհետեւ մե՛րն է, որովհետեւ հայուն

հարազատ ոգին է: Չէք հասկնար, ափսո՛ս: Ահա թէ ինչու դուք այդպէս էք ու մենք այսպէս...

Եթէ ըլլար այս ոգին ձեր մէջ, պիտի գիտնայիք թէ յաղթանակները ինչպէս կը խլուին, հրաշքները ինչպէս կը գործուին: Պիտի գիտնայիք, թէ ինչու համեստ բանուորը իր օրավարձքէն կը հրաժարի, դերձակը իր խանութը գոց կը պահէ — Զատկի՛ օրերուն... — ամբողջ շաբաթներ, բժիշկը իր դարմանատունը կը լքէ, պաշտօնեան գործէն կը խուսափի՝ հաւաքաբար ու քրտինքով կորզելու համար անհրաժեշտ դաշտը, քարքարուտ ամալութենէն: Չէք հասկնար, ափսոս: Աւելի գէշ ձեզի համար: Նաեւ մեզի: Պիտի ուզէինք որ դուք ալ ըլլայիք այսպէս: Դուք ալ ունենայիք մեր ոգին, հա՛յ ոգին: Չունիք: Ու հիմա պիտի չափուի ձեր հասակը: Պատերուն վրայ ցուցադրուած առասպելական թուանշանները չեն որ պիտի բարձրացնեն ձեր հասակը, սուտը, մեծխօսիկութիւնը, ծիծաղելի շարժուձեւերը չեն որ պիտի խոյանք տան ձեր ազագուն կազմակերպութեան. աջէն ու ձախէն մոլորացկանութեամբ փոխ առնուած դրօշները չեն որ պիտի ծփանք տան ձեր դրօշին: Եթէ կ'ուզէք ապրիլ, աճիլ, կ'ուզէք բարձրանալ՝ նա՛խ բարձրացուցէք ձեր ոգի՛ն: Զանացէք հասնիլ մե՛ր ոգիին...

Եւ ահա մեր տղաքը՝ հաւատարիմ իրենց քսանըմէկերորդ ժամադրութեան, աւելի քան երբեք հաւատաւոր, աւելի քան երբեք խուռներամ: Ահա՛ մեր աղջիկները, արծուիկները, արենոյշները, գայլիկները, կակուղ-թաթիկները: Հեռաւոր ու մօտիկ բոլոր քաղաքներէն ու գիւղերէն՝ ահա մեր գաղափարական սերունդը, որ կու գայ հպարտ ճակատով, խիզախ կերպարանքով: Ահա՛ եւ մեր ժողովուրդը, հա՛յ ժողովուրդը, որ տասնեակ հազարներով կը խլէ մուտքի տոմսերը Հ. Մ. Ը. Մ.ի երեք օրուան ձեռնարկներուն, մրցումներուն, հանդէսներուն: Ահա եւ ինքը, պայծառ ու հուժկու մեր ոգին՝ որ վերածուած կամքի, ուժի՛ եւ յաղթանակի, մեր սրտերը կը լեցնէ հպարտութեան ալիքներով: Քսան տարուան իր գոհաբերումին փառապսակն է որ կը խլէ այսօր Հ. Մ. Ը. Մ.ը. իրեն դէմ շղթայագերծուած բոլոր տմարդի պայքարներուն, քսութիւններուն, գա՛րջ ու աղտեղի սաղ-րանքներուն թաղո՛ւմն է որ կը կատարէ այսօր այս սերունդը: Եկէ՛ք ու տեսէք:

Հրճուեցէք՝ եթէ հա՛յ էք: Փորձեցէք զսպել ձեր խանդավառ յուզումին արցունքները, եթէ անաղարտ ու մաքուր կրցած էք

պահել ձեր հայու սիրտը: Գալարուեցէ՛ք ձեր նախանձէն ու խեղդեցէ՛ք ձեր հոգին մաղձի մէջ, եթէ չէք կրցած ազատագրուել հատուածական նեղ ու նեղմիտ հաշիւներէն, մանր-մունր կիրքերէն: Բայց ո՛վ ալ ըլլաք, ուրկէ՛ ալ ըլլաք՝ լա՛յն բացէք ձեր աչքերը եւ դիտեցէք, եւ հասկցէք, եւ պատմեցէք բարեկամին ու թշնամիին, հեռաւորին ու մօտիկին: Ու մանաւանդ, պատմեցէք Հայաստանին, քանի որ զարմանահրաշ մենաշնորհով մը, ձեզի՛ միայն տրուած է Հայաստանին հետ խօսելու իրաւունքը, պատմեցէք ե՛լ Հայաստանին, թէ ինչ արդիւնք տուին իր պատուիրակներուն ցանած սերմերը, հրաժարականները, սրսկուած թոյները, զգուանքո՛վ մեկնողները եւ ... մնացեա՛լը... շարունակուե՛լնը...

Եկէք, տեսէք, սորվեցէ՛ք:

Այսպէ՛ս կը ճառագայթէ սերունդ մը, որուն հոգիին մէջ հաւատքի ջահեր կան, այսպէս յաղթաքայլ ու հպարտ կ'անցնի երիտասարդութիւն մը, որուն սիրտը կը տրոփէ ցեղին համար ու ցեղին ուժով: Մենք շատ ենք, մենք ուժեղ ենք, մենք բա՛րձր ենք: Մենք գաղափարապաշտ ենք, հայրենասէր ենք, մենք յաղթակա՛ն ենք: Մեր դրօշին ծալքերուն հետ կը ծփայ մեր ոգի՛ն, մեր թոքերուն ընդերքներէն կշռոյթ կ'առնէ գաղափարի մեր երգը, մեր աչքերուն մէջ կը ծփայ յաւիտենական հայրենիքին անոյշ պատկերը: Մե՛ր հայրենիքին: Իրակա՛ն հայրենիքին, որուն հարազատները մե՛նք ենք ու կը մնանք, նոյնիսկ այս օտար հողին վրայ: Դուք կե՛ղծ էք, խեղճ էք ու ձեզի հետ կեղծած ու խեղճացուցած էք նաեւ ձեր հայրենիքը: Խեղաթիւրած ու ծաղրանկարի վերածած էք ձեր ոգին: Ահա թէ ինչո՛ւ դուք այդպէս պիտի մնաք ու մենք այսպէս: Ահա թէ ինչո՛ւ մեր տղաքն ու աղջիկները կ'անցնին խանդավառ ու խուռն շարքերով, ձեր թոյլ ու կարկամ խմբակներուն առջեւէն, կ'անցնին անտառներու խռովքով ու ծովերու փոթորիկով: Կ'անցնին յաղթակա՛ն ու դրդեացնելով հո՛ղը իրենց ոտքերուն տակ, կը գոչեն.

— Ծամբա՛յ բացէք, մե՛նք ենք ահա...

Ա. Ծ.

«Արեւելք», Ա. Տարի,
Կիրակի, 6 Ապրիլ 1947

ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆԵԱՆ

1914-1986

Բանասէր, պատմաբան, մատենագիր, խմբագիր, մանկավարժ, հրատարակիչ, հրապարակագիր եւ Սասնոյ Հայրենակցական Միութեան ցկեանս նախագահ, Սասնոյ Շատախի շրջանի Կերման գիւղը ծնած Օվէի եւ այնթապցի Մանուշի որդին՝ Սիմոն Սիմոնեան ծնած է Այնթապ, 24 Մարտ 1914-ին, եւ երկրային կեանքէն հեռացաւ կարծես Աստուծոյ նախախնամութեամբ 24 Մարտ 1986-ին՝ Պէյրութ, Լիբանան, որուն թաղումը տեղի ունեցաւ բազմահազար հայորդիներու ներկայութեամբ, որոնք եկած էին իրենց յարգանքի եւ գնահատանքի զգացումները յայտնելու հայ լեզուի եւ գրականութեան նուիրեալ սասունցի հերոսին:



Սիմոն Սիմոնեան տակաւին երախայ, 1920-ին, ֆրանսացիներուն Կիլիկիայէն անամօթաբար դէպի Սուրիա նահանջելէն ետք, իր ընտանիքին հետ կը հաստատուի Հալէպ քաղաքին մէջ, իսկ հայրը՝ Օվէն, կը շարունակէ իր արհեստը՝ ջաղացպանութեամբ զբաղելով Սուրիոյ լեռնային եւ քրտական շրջաններուն մէջ:

Սիմոն իր նախնական կրթութիւնը կը ստանայ այնթապցիներու յատուկ Հալէպի Կրթասիրաց Վարժարանը, ապա կը մեկնի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը: 1935-էն 1946 ուսուցչութիւն ըրած է Հալէպի Հայկազեան եւ Կիւլպէնկեան վարժարաններուն մէջ:

Հալէպի մէջ կը հիմնէ Հալէպահայ Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանը, հրատարակելով առեւտրական գործեր, Ուսուցչական Միութեան տպագրական գործերը, եւ յատկապէս հիմնելով «Սեւան» (1946, օրգան Հալէպահայ Ուսուցչական Միութեան) գրական պարբերականը (երկու թիւ), ապա

անցնելով Պէյրուլթ, կը հիմնէ «Սփիւռք» շաբաթաթերթը՝ 4 Ապրիլ 1958-ին եւ որուն խմբագիրը մնաց մինչեւ 1974-ի աւարտը: Նախապէս եղած ըլլալով խմբագիրը (1946-1955) Բաբգէն Կիւլէսէրեան երանաւէտ Վեհափառի հիմնած Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Հասկ» ամսագիրին եւ ապա խմբագիրը «Հասկ» հայագիտական տարեգիրքի 1948, 1950 եւ 1952 տարիներու թիւերուն: Միաժամանակ՝ ուսուցչութեան պաշտօն վարելով Պէյրուլթի Դարուհի Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան վարժարաններուն մէջ:

1965-ին լոյս տեսած է Սիմոնեանի «Կը խնդրուի ... Խաչածեւել» գիրքը եւ «Սիփանայ Քաջեր» երկու հատորները՝ 1967-ին, 1968-ին կը հրատարակէ «Լեռանականներու Վերջալոյսը», ապա, 1972-ին՝ «Լեռ եւ ձակատագիր» պատմուածքներու ժողովածուն, որուն հերոսներն են օտար երկիրներու տակ ապրող, հայրենիք կարօտցող սասունցիներ: «Էրզրի Կարօտով» ստեղծագործութիւններէն է «Խմբապետ Ասլանի Աղջիկը» հատորը՝ 1967, ինչպէս նաեւ «Անժամանգրոս» գիրքը՝ 1978-ին:

Սիմոնեան հեղինակ է հայոց պատմութեան եւ մայրենի լեզուի դասագիրքերու, բանասիրական ուսումնասիրութիւններու («Արեւելահայ Գրականութիւն» 1965 եւ «Արեւելահայ Գրողներ» 1965, «Հայ Մատենագիտութիւնը Որպէս Ենթահող Արդի Գրականութեան» 1975, «Նորայայտ Տաղասաց Մը՝ Ստեփան Դաշտենցի» 1981): 1955-ին Պէյրուլթի մէջ հիմնադրած է «Սեւան» տպարանը եւ նոյնանման հրատարակչութիւն, ուրտեղ տպագրուած են դասագիրքեր, գրական-գեղարուեստական, գիտաբանասիրական, թարգմանական, բառարանային եւ բազմաբնոյթ այլ գիրքեր, հրատարակած է թարգմանութիւններ:

Սիմոն Սիմոնեանի կեանքին ու գործին մասին հատորով գրած են հրապարակագիր, Սիմոնի դպրոցական աշակերտ Թորոս Թորանեան՝ «Սիմոն Սիմոնեան Երեւոյթը» վերնագրով, Լեւոն Վարդան՝ «Մարդեր՝ ձամբու Մայթերէն» հատորին մէջ եւ Հայաստանէն բանաստեղծ-պատմաբան սասունցի գրող Սասուն Գրիգորեան, որ գրած է «Բազմատաղանդ Երախտաւորը» վերնագրով գիրք մը՝ 1999-ին, ուր մանրամասնօրէն արձանագրուած են Սիմոն Սիմոնեանի կենսագրութիւնն ու հրատարակած գիրքերուն եւ ուսումնասիրութիւններուն վերլուծումները:

Սասունցի Օվէի ընտանիքը ունեցած է երեք մանչեր՝ Սի-

մոն, Գրիգոր, Յարուլթ: Իսկ Սիմոն ունեցած է հինգ զաւակներ՝ Յովիկ, Մարալ, Տարօն, Վարդան եւ Սասուն, որոնք կը հետեւին զանգան մասնագիտութիւններու եւ իրենց հօրը պատիւ բերող աշխատանքներու: Իսկ տիկինը՝ Մարին, սասունցի Բրդոյին աղջիկն է:

Սիմոն Սիմոնեան իր հեղինակած բազմաթիւ գիրքերու կարգին, սասունցի ուսուցիչ Օննիկ Սարգիսեանի հետ պատրաստեց եւ հրատարակեց հայոց պատմութեան Ա. եւ Բ. հատորները, ինչպէս նաեւ հայերէն լեզուի «Արագած» դասագիրքերու շարքը:

Իր հրատարակած «Սփիւռք» շաբաթաթերթին շուրջ հաւաքեց խումբ մը երիտասարդ գրողներ «Սփիւռք Գարուն» անուան տակ, որուն ի՛մ ալ մասնակցութիւնս բերի Պէյրութ այցելութեանս՝ Գրիգոր Սասունցի ստորագրութեամբ «Հայաստան» քերթուածով: Հոն հաւաքուած երիտասարդ գրողներու հանդիպեցայ՝ «Գարուն»ի անդամներուն, որոնց մէջ ինծի միակ ծանօթը անձնապէս Սիմոնին աներորդին՝ տաղանդաւոր մտաւորական-գրող ինծի հայրենակից եւ Հալէպէն ծանօթ Գէորգ Աճէմեանն էր, որուն հետ գործի բերմամբ մտերմացայ, երբ ես ստանձնած էի Հալէպի «Շիրազ» տպարանի ղեկավարութիւնը, ուր կը տպուէր Ամերիկեան Գոլէճի «Գրասէր» պարբերականը, ինչպէս նաեւ «Դէպի Երկիր» յառաջգիմական մտաւորականներու պարբերաթերթը:

Տպարան «Սեւան»ի հրատարակութեամբ «Սփիւռք» շաբաթաթերթի անձնակազմին եւ գարունականներու հետ ծանօթանալէ ետք, Գէորգ Աճէմեան զիս տարաւ իր հսկայ գրատունը, իր գրասենեակը, ապա՝ իրենց ընտանեկան բնակարանը, ուր կէսօրուան ճաշի հիւրը եղայ Գէորգին մօրը եփած սասնահամ ճաշերուն:

«Նկատի ունենալով հայոց նակատագիրին դար առ դար կրկնուիլը, այսօր եւս (կը գրէ Թորոս Թորանեան «Սիմոն Սիմոնեան Երեւոյթը» գիրքին մէջ) Սիմոն Սիմոնեանի մահէն 16 տարիներ ետք կը կրկնուի այդ նակատագիրը Հայաստանի պարպումով»: Սիմոնեանը օրինակով մը կը բացատրէ մութ ճակատագրին մութ գոյնը: Օրինակը կու գայ Սեբէոս Պատմիչէն.—

«Ահեղ ու իրերամարտ այդ օրերուն դարաւոր կոիւներէն յոգնած Մօրիկ կայսրը կը գրէ պարսից Խոսրով արքային (Սեբէոս, Զ. գլուխ, էջ 75). խօսիին բառացի թարգմանութիւնը.—

Խոստոր ու անհնազանդ ցեղ մըն են (հայերը) կեցած են մեր միջեւ եւ կը պղտորեն: Բայց եկուր, ես իմինները կը հաւաքեմ եւ Թրակիա կը հաստատեմ եւ դուն ֆուկինները հաւաքէ եւ հրամայէ Արեւելք տանիլ: Որովհետեւ եթէ մեռնին, թշնամիներն է որ կը մեռնին եւ եթէ սպաննեն՝ կը սպաննեն թշնամիները եւ մենք կ'ապրինք խաղաղութեամբ: Վասնզի եթէ անոնք իրենց երկրին մէջ մնան, մեզի հանգիստ ընել պիտի չըլլայ»:

Կը տեսնէ՞ք թէ թշնամիները Արեւելքէն եւ Արեւմուտքէն ինչպէ՛ս կ'ուզեն ոչնչացնել մեզ: Ահա պատմական թեմա մը, գոր մշակել կը թելադրէ Սիմոն Սիմոնեանը:

Մեր օրերուն, արդէն Բիւզանդիոնն ու պարսիկը չեն, որ մեզ տարագրել կ'ուզեն պարպելու համար Հայաստանը իր բնիկ տարրէն: Մեր զանգուածները իրենք իրենց յօժար կամքով կը լքեն երկիրը, որպէսզի հողը մնայ ուրիշներուն, որպէսզի մենք, որպէս անհնազանդ տարր, չխանգարենք մեր թշնամիներուն անդորրութիւնը:

Թուրքը իր Սուլթան Համիտով, Երիտթուրքերով եւ Քեմալով ամայացուց Արեւմտեան Հայաստանը իր բնիկ տարրէն: Մնացած է Արեւելեան Հայաստանը: Մե՞նք պէտք է ըլլանք երկիր հայրենին պարպողը՝ յուրախութիւն մեր դարաւոր թշնամիներուն, թէ մենք պէ՛տք է ըլլանք դարաւոր այդ ճակատագրին նոր հունաւորում մը տուողները, գոչելով.— Ա՛յս է մեր երկիրը, ա՛յս է մեր հայրենիքը Ուրարտուէն մինչեւ նորագոյն անկախութիւն, այլեւս ոչ մէկ քայլ հեռանալ մեր պաշտելի հայրենիքէն:

Սիմոն Սիմոնեանի այս փոքրիկ գրքոյկը կու գայ զինել մեզ մեր պատմութեամբ ու մատենագիտութեամբ, ըսելու համար.— Ամէ՛ն ինչ վասն ազգի տեւականացումին, զօրակոչի ենթարկելով մեր բոլոր ուժերը:

Հայաստանէն, վաստակաւոր բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր, միջազգային ռազմածովագիրներու փոխնախագահ Սասուն Գրիգորեան «Բազմատաղանդ Երախտաւորը» Սիմոն Սիմոնեանի կեանքին եւ գործին նուիրուած գործով (1999) կը գրէ.—

«1954թ. Դեկտեմբերին, Բէյրութում հիմնած Սիմոն Սիմոնեանի «Սեւան» տպարանն ու գրահրատարակչատունը, մինչեւ լիբանանեան պատերազմը (1975թ.), արտերկրի (Սիրիա,

Լիբանան, Իրան, Իրաֆ, Եգիպտոս, ԱՄՆ, Ֆրանսա, Աւստրալիա եւ այլուր) հայկական դպրոցներին առաջեցին իրենց տպագրած 55 անուն դպրոցական դասագրքերն ու 500-ից աւելի գրական-գեղարուեստական, պատմա-լուսաւորչական, գիտա-բանասիրական, թարգմանչական եւ բազմաբնոյթ այլ հրատարակութիւններ՝ զօրավիգ կանգնելով օտար երկնփի տակ հայութեան բեկորների գիտա-կրթական յաւերժակեցութեանը: Կազմել, գրել, խմբագրել, սրբագրել, համահեղինակել, տպագրել դասագրքեր, ելնելով սփիւոֆահայ դպրոցի շահերից եւ ոչ թէ փառասիրութիւնից, նանաչել տալ հայ գիրը, հայ ոգին, հայ միտքը, հայ կրօնը, հայոց ուխտը, հայ դատը — սա է Սիմոն Սիմոնեան մտաւորականի, գրողի, դաստարակ-մանկավարժի եւ տպարանատիրոջ կեանքի նշանաբանը: Հաւատարիմ մնաց նա իր ուխտին: Որպէսզի ընթերցողը ընդհանուր գաղափար կազմի բազմաբարխտաւոր այս անհատի մասին, մարդ, որ Լիբանանում կարողացել է շարունակել եւ ծաղկեցնել հայ տպագրութեան արուեստը, հաւատարիմ մնալով Յ. Մեղապարտի, Մ. Թոխատեցու, Ոսկան Երեւանցու, Միխարեանների ազգապահպանման ուխտին, պիտի ֆաջածանօթ լինի այն ներդրմանը, որով Սիմոն Սիմոնեանն ու իր «Սեւան» հրատարակչատունը հարըստացրել են հայոց Մեսրոպատառ Դպրոցն ու 1700-ամեայ ֆրիստոնէապաշտ գրադարաններն ու մատենադարանները՝ հայ մտքի, ոգու վեհութեան եւ ուժի կանառները:

Թէեւ իսրայէլեան ուումբերն աւերեցին Բէյրութում նաեւ «Սեւան» տպարանը, բայց տպարանատէր, գրող Սիմոն Սիմոնեան չլքեց ոչ արաբական հիւրընկալ արեւելքը, ոչ էլ իր տպարանը մնաց Բէյրութում եւ աշխարհի բոլոր ոսոխների դէմ մարտընչեց իր մեսրոպեան երեսունվեց զինուորների հետ, յաւերժ վառ պահելով հայ դպրութեան յաւերժասուրբ ջահը, զօրավիգ կանգնելով բազմաթիւ ձեռագրերի գրքային երկունքին»:

Սիմոն Սիմոնեան «20.000-էն Մէկը» պատմուածքով («Սիփանայ Քաջեր», Ա.) հատորով կը խօսի իր նորագիր մէկ «եղբօր» մասին, Արմէն Մուրատեան անունով, որ Պերլին նստած հեռուներէ շնորհակալական նամակներ կը ստանայ իր Բ. Համաշխարհային Պատերազմի տեւողութեան կատարած ազատարար դերին համար:

Ու ի՞նչ է այդ դերը. սովետահայ բազում գերիներ գնդա-

կահարութենէ ազատելու դերն է գերման բանակին մէջ բարձրաստիճան զինուորականի հանգամանքով:

Իր մօտէն անցած են 30.000 սովետահայ գերիներ: Ի՞նչ եղան այդ գերիները: Անոնցմէ մեծ խումբերով գերիներ յանձնուեցան Ստալինին: Ինչպէ՞ս վարուեցաւ մեծ առաջնորդը իւրայիններուն հետ: Քչեց Սիպիր...: Անոնք որ չինկան հիթլէրեան գնդակէ, ինկան եղբայրասպան գնդակներէ, քանի որ կարմիր բանակայինները իրաւունք չունէին գերի իյնալու, պէտք է ճողոպրէին թշնամիին որոգայթէն կամ ըլլային անձնասպան: Ի գուր չէ, որ խորհրդային անպատրաստ բանակը պատերազմի ընթացքին տուաւ աւելի քան քսան միլիոն զոհ, որուն աւելի քան քառորդ միլիոնը հայեր էին:

Պատմողը Արմէն Մուրատեանն է, արձանագրողը՝ Սիմոնեանը.—

«Լեւինկրատի համալսարանի դասախօս Եղուարդ Քէօֆե-
եանը գերի կ'իյնայ գերմանացիներու ձեռքը: Կարն հարցու-
փորձ: Դուն հրեայ ես, կ'ըսեն իրեն, ու ձեռնակապ մը դնելով
անոր ձեռքերուն, Պերլինէն ոչ հեռու տեղ մը երեսը պատին
դարձնել տալով կը պատրաստուին գնդակահարել: Խեղճ կար-
միր բանակայինը իր հայ ըլլալը կը յայտնէ: Ձեռն հաւատար, բայց կը կանչեն Հերր Մուրատեանը: Հայերէնով հարցուփորձէ մը ետք, կենդանի մեռեալ գերիին հայ ըլլալը կը հաստատուի եւ գերծ կը մնայ գնդակահարուելէ»:

Տարիներ ետք, նոյն Եղուարդ Քէօքճեանը, արդէն հռչակուած գիտնական Ամերիկայի մէջ, պատուիրակութեան մը գըլխաւորը, կու գայ Գերմանիա, կը գտնէ Արմէն Մուրատեանը եւ անոր ձեռքը կը համբուրէ երեք անգամ:

Ան էր իր կեանքը փրկողը: Նոյն Քէօքճեանը կ'ուզէ տեսնել այն վայրը, ուր զինք պիտի գնդակահարէին:

Չգնդակահարուած գիտնական դարձած հայը կը պատմէ իր ազատարարին, որ ինք անցեալ տարի պաշտօնական այցով մեկնած էր Թուրքիա, ճամբան երկարելով հասած է իր ծննդավայրը՝ Էրզրում: Յիշած է իր խաղացած փողոցները, ուզած է գտնել հօրը գերեզմանը եւ աղօթք մը մըմնջել անոր հողակոյտին վրայ: Հայոց գերեզմաններն իսկ կործանուած են:

Արմէնը խօսքը շեղելով կը խօսի Քէօքճեանի գիտական յաջողութիւններուն, հեղինակած 50-է աւելի գիրքերուն մասին:

Պերլինաբնակ հայը Եդուարդ Քէօքճեան գիտնականին հանդիպելով, ի միջի այլոց կ'ունենայ հետեւեալ խոհերը ու կ'ըսէ.—

«Սիրելի Եդուարդ, մեր միակ յոյսը, գիտե՞ս սիրելի գիտնական, գիտութիւնն է, հայ գիտնականներն են, որոնք օր մը պիտի ընեն մէկ, թերեւս մէկէ աւելի գիւտեր, որոնց շնորհիւ պիտի սրբագրենք հազարամեայ մեր տկարութիւնը, որ իր սկիզբը կ'առնէ Անիի պարիսպներուն առջեւէն... Մեր ժողովուրդին միակ փրկութիւնը հայ գիտնականներու գանկերուն մէջն է, սիրելի հայ գիտնական»...:

Այս բոլոր մտածումները պատմուածքին հերոսներունը ըլլալէ առաջ, մտածումներն են հեղինակին: Թէեւ տեղին, բայց պատմուածքին նոր արժեւորում մը չաւելցնող այս խոհերը գիշեր-ցերեկ եղած են սեփականութիւնը Սիմոն Սիմոնեանին, որ ատենին իր խմբագրած «Սփիւռք» շաբաթաթերթի էջերէն այնքան պանծացուց հայ գիտնական Ատոմեանցը, տալով անոր նոյն եզրակացութիւնը՝ թէ հայն ու Հայաստանը փրկողները պիտի ըլլան հայ գիտնականները: Համբերութեամբ կը սպասենք այդ օրուան:

Ջարմանալիօրէն, թերեւս որպէս սասունցի ազատասոհանձ, Սիմոն Սիմոնեանի հայրենակից, արմատներս կու գան Սասնոյ Տալուրիկի շրջանի Սպաղանք գիւղէն, Փետայիներ՝ Մակարի, Գալէի, Ակէի եւ այլ ազատասէր սասունցիներու խոհերէն, նոյն իմաստով՝ «Հայաստանի եւ հայ ժողովուրդի անվտանգութեան երաշխիքները» յօդուածով, որ լոյս տեսաւ 2013 թուականին Պէյրութի մէջ լոյս տեսնող «Դիտակ» ամսագրին մէջ: Նոյն յօդուածը մաս կը կազմէ նաեւ «Յօթներորդ Հանգրուան» գիրքիս: Արդեօք սասունցիներու ուղեղները զէնքէն աւելի գիտական ապահովութեա՞ն կը հաւատան...:

Սիմոն Սիմոնեանը տեսած եմ եւ կը յիշեմ, երբ տակաւին 9 տարեկան մանուկ մըն էի եւ կը յաճախէի Ազգային Սահակեան եկեօս վարժարանը: Մեր բնակարանը՝ Հալէպ, Նոր Գիւղ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ առջեւի դռնէն դիմացի թաղին ձախ կողմի վերջին տունն էր, երկրորդ յարկ: Սիմոն Սիմոնեանը ինչպէս իր «Սասունցիներու Վերջալոյսը» գիրքին մէջ յիշած է,

Հայրս՝ Ղազար (Խարզօ) Հոթոյեան, ուսանած ըլլալով Սասնոյ Ս. Կարապետ վանքը, Հալէպի Սասնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան Սիմոնէն գատ, որ աւարտած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, միակ Հայերէն գըրել-կարգալ գիտցողն էր: Սիմոնեան մեր տունը կու գար եւ կարգ մը ծանօթութիւններ կ'ուզէր Սասնոյ սասունցիներու կեանքէն, քրտերէն կարգ մը բառերու Հայերէն թարգմանութիւնները կը խնդրէր: Անոնք կը խօսէին Սասնոյ բարբառով եւ ես բան մը չէի հասկնար, մայրս Հայերէն չէր հասկնար՝ կիլիկեցի ըլլալով:

Ապագային, 1946-ին երբ Ֆրանսական բանակի ծառայութեան վերադարձայ, մասնաւոր արհեստ մը չունենալով, (միայն քանի մը ամառնային արձակուրդներ), Խան Հաճի Մուսայի Աճոյեանի դերձակատունը ամերիկեան ժաքէթները կը դարձնէինք եւ կրկին կարելով նորի պէս կը ծախէր վարպետութուք մաքսանենգներուն, ուր կ'աշխատէր նաեւ Մուրատ անունով Հայրենակից մը:

Քանի մը շաբաթ աշխատելէ ետք, զգուելով գարշահոտութեան, այդ գործը ձգեցի եւ դասընկերոջս՝ Կարապետ Պէրպէրեանի հովանաւորութեամբ դերձակատուն մը սկսայ աշխատիլ: Խանութին տէրը հրեայ մարդ մըն էր, Հալէպի հանրակառքի դէպի ներսի շուկայի գիծի վերջաւորութեան գտնուող խանութը, շաբաթը 5 սուրիական վարձքով: Հոն ալ քանի մը շաբաթ աշխատեցայ. մտածելով որ հազար ասեղ մտցնելով-հանելով Կարօն ի՞նչ կը շահէր, որ ես ինչ պիտի շահիմ՝ այդ գործէն ալ հրաժարեցայ:

Հայրս, տեսնելով իմ Հայ գիրքի եւ գրականութեան սէրս, ըսաւ.

— Գրիգոր տղաս, դուն Հայերէն գիրք-գրականութիւն կը սիրես, մարմնով ալ ճղճիմ ես, ծանր գործ չես կրնար ընել, քեզի տանիմ մեր Սիմոնին տպարանը (տպարան «Սեւան»՝ Հալէպի Ուսուցչական Միութեան, որուն պատասխանատուն էին Սիմոն Սիմոնեան եւ Լեւոն Պէրդուտեան: Տպարանը կը գտնուէր Հալէպի Ճիտէյտէ շրջանի ածխավաճառներու շուկային մօտ, քանի մը սենեակի մէջ):

Համաձայն եղայ եւ սկսայ աշխատիլ, նախ սորվելով կապարի Հայերէն գիրերու տեղը քասային մէջ, եւ պահանջուած գիրերը (գէորգեան, արամեան) փոքր բուճքօներով, ընդհանրա-

պէս 10-12 բունթօ գիրերով եւ 16, 24, 36 մեծութեամբ գլխագիր գիրերով, արհեստը սկսայ սորվիլ շաբաթական 10 ս. ոսկի շահելով:

Այդ օրերուն «Արեւելք» օրաթերթը լոյս տեսաւ եւ գրաշարի պէտք ունէին: Որպէս կուսակցական ընկեր անմիջապէս զիս գործի առին եւ 17 ս. ոսկի շաբաթականով սկսայ աշխատիլ երկար ատեն, մինչեւ «Արեւելք»ը հոգետունէն փոխադրուեցաւ Սալիպէ եւ ես մնացի գրաշար «Նայիրի» տպարանին մէջ մինչեւ 1949, Ծառուկեանի Լիբանան փոխադրութիւնը:

Այնուհետեւ մեր կեանքի ուղիները բաժնուեցան, սակայն կապ մը մնաց մեր միջեւ, մանաւանդ սրտամօտ գրող ընկերոջս ու հայրենակիցիս, յետագային «Սփիւռք» շաբաթաթերթի սեփականատէր Գէորգ Աճէմեանի եւ եղբայրներուն միջոցաւ:

Սիւմոնի հետ մեր նամակագրութիւններէն երկու նամակ մնացած է արխիւներու մէջ, որոնք պատմութեան համար կը գետեղեմ այս յօդուածին մէջ:

Շատ սիրելի իմ արիւնակից ու հարազատ
Գրիգոր Հոթոյեան,
Ողջոյն եւ համբոյր:

Մեծ ուրախութեամբ ստացայ սքանչելի գիրդ, 17 Նոյ. 1983 թուակիր, ձեռամբ մեր հարազատին՝ Արամ Առաքելեանին: Զգածուած եմ խորապէս: Կը հաւատամ որ մեր ժողովուրդի ամենէն ազնիւ զաւակներն են Սասունցիները, որքան հին նոյնքան նոր սերունդով, որուն արժանատրներէն մէկը դո՛ւն ես, սիրելի Գրիգոր, որդի Խարզոյի:

Նոյնքան սիրած եմ ու յարգած հանգուցեալ հայրդ, իբրեւ հարազատ Սասունցի, օժտեալ եւ բարի բնութեամբ: Անիկա եղած է իմ սիրելի հերոսներէն մէկը, ինքնատիպ եւ իւրայատուկ, որպէս թէ նուազ միամիտ քան իր արիւնակիցները: Կը խնդրեմ որ գրես մանրամասն՝ հօրդ մասին: Պէտք ունիմ: Ո՞ւր ուսուցչութիւն ըրած է:

Որքա՛ն կը փափաքէի քեզի հետ հանդիպիլ: Սրտի հիւանդութիւնս թոյլ չտուաւ աւելի յամենալ Ատլանտեանի ակերտուն: Յուսամ, եթէ ողջ մնանք, օր մը հանդիպիլ իրարու: Հոս կամ հոն:

Աւելի կանուխ պատասխանած պիտի ըլլայի նամակիդ եթէ Արամը մեկնելու ըլլար: Իրեն սպասեցի, բայց տեսայ որ դեռ շատ պիտի ուշանայ:

Այս նամակը կը ստանաս Աթենքէն՝ ապահովութեան:

Սրտագին ողջոյններս ազնիւ Տիկնօջղ եւ զաւակներուդ (քանի՞ հատ), ջերմ սիրով՝

Ս. Սիմոնեան

24 Ապրիլի 1984

Կը շարունակեմ արեղծագործել: ՍՍ.

ՄԵՆԱԼ

ՀՐԱՏԱՐԱԿԳՏԱԿԱՆ ՏՈՒՆ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՆԸ ՍՄՈՒՆԵՆՆԸ

ՎԱՄԱԿԱՏՈՒՊ 6651

☎ 23 74 33

ԶԵՆ. 23 74 33

MAISON D'ÉDITION
SEVAN

DIRECTEUR PROPRIÉTAIRE

SIMON SIMONIAN

REG. COM. 6549

RUE GHALGHOUL

B. P. 6651

BEYROUTH - LIBAN

Tél 237433

دار النشر
سيفان

صاحبها ومديرها سيمون سيمونيان

ص. ت. ب. 6651

شارع الغلغول - ص. ب. 6651

تلفون: 237433 بيروت

Հայ տեղե իմ արհեստը ու հայրենիքս

Գրիգոր Զարթույսե,

Ողբերգիկի համար:

Այդ արհեստագործի արհեստը սխալ է
գործ, 17 հունիսի 1983 թվական, ՅՄԿ-ի համար
Այդ արհեստագործի: Արհեստագործի խնամքով: Այդ
հայրենիքս ու իմ արհեստը: Այդ արհեստագործի
եղբայրս Աստուխյան, որտեղ էի արհեստագործ
արհեստագործի արհեստագործի ինչպես է, սխալ
Գրիգոր, որտեղ գործը:

ԳԸ Զարթույսեի արհեստագործի:

Արհեստագործի արհեստագործի
Արհեստագործի արհեստագործի Աստուխյան, սխալ
և արտիստի արհեստագործի: Այդ արհեստագործի
արհեստագործի ինչպես է, որտեղ էի արհեստագործի:
Այդ արհեստագործի արհեստագործի արհեստագործի:
Այդ արհեստագործի արհեստագործի արհեստագործի:
Այդ արհեստագործի արհեստագործի արհեստագործի:

Այդ արհեստագործի արհեստագործի արհեստագործի:
Այդ արհեստագործի արհեստագործի արհեստագործի:
Այդ արհեստագործի արհեստագործի արհեստագործի:
Այդ արհեստագործի արհեստագործի արհեստագործի:
Այդ արհեստագործի արհեստագործի արհեստագործի:

24 Ապրիլ 1984

Արհեստագործի

Իմ սիրելի հայրենակից
Գրիգոր Հոթոյեան,
որդի պատուական Խարզոյի,
ողջոյն եւ համբոյր:

Կը շնորհատրեմ մօտեցող Նոր Տարին եւ Ս. Ծնունդը եւ կը մատթեմ ամբողջ գերդաստանիդ՝ երջանկութիւն, առողջութիւն եւ յաջողութիւն իմ, Տիկնոջս եւ զաւակներուս կողմէ:

Քեզի գրած եմ, բայց պատասխան չեմ ստացած: Գուցէ պատասխանած ես, բայց մեր փոստը լաւ վիճակի մէջ չէ:

Սիրելի՛ Գրիգոր, Պրն. Անդրանիկ Կետիկեանին օրինակ մը դրկած եմ իմ պատրաստած ու հրատարակած «Պատմական եւ Յաւերժական Հայաստանի Քարտէս»էն: Եթէ սրտիդ խօսի, պիտի խնդրէի որ զայն տարածես շրջանիդ մէջ:

Պրն. Ա. Կետիկեանին գրած եմ պէտք եղածը:

Ինձի նամակ գրէ այս հասցէին,

SIMON SIMONIAN

Pharmacy MAR ELIAS

Antelias

Lebanon:

Լաւագոյն զգացումներով՝ քոյդ՝

Ս. Սիմոնեան

14 / Դեկտ.ի / 1984

ՍԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԳՅԱԿԱՆ ՏՈՒՆ

ՏԵՐ ԵՒ ՏԵՕՐԵՆ ՍՄԱՆԱՆ ՍԽՈՒՆԵՆ

ՆԱԽԱԿԱՏՈՒՓ 6651

☎ 92 82 81 82

ԷՆՈՒ 237433

MAISON D'EDITION

SEVAN

DIRECTEUR PROPRIETAIRE

SIMON SIMONIAN

REG. COM. 6549

RUE GHALGHOUL

B. P. 6651

BEYROUTH - LIBAN

Tel 237433

دار النشر

سيفان

صاحبها ومديرها سيمون سيمونيان

ص. ٥٠ ب. ٦٥٤٩

شارع الغلغول - ص. ٥٠ ب. ٦٦٥١

تلفون: ٢٣٧٤٣٣

Դ՛՛տ ստիճակ կայստեանցի
Օրվայր ճարտարաբան,
որի գլխավորը քաղաքացի է:

արդյոք ես կարող եմ
Ե՛ս շարժառիթ ընդհանուր ճանաչող
Ի՞նչ եմ և ի՞նչ եմ անում և ի՞նչ եմ անում
ճարտարաբանի՝ հիմնականում, առաջնությունը ես
դառնալիս եմ, ինչպես ես գլխավորում եմ:
Քիչ ժամ է, բայց գլխավորում
Ե՛ս անում եմ: Գրեցի գլխավորում եմ
Քոյ ի՞նչ կարող եմ անել ի՞նչ եմ:
Ստիճակ՝ Օրվայր, երբ, ինչպես
Չի՛հասկանալի օրվայր և՛ ի՞նչ էլ եմ անում
բացարձակ և՛ հարգանքներ և՛ երկարացում եմ
Չի՛հասկանալի ճարտարաբանի՝ ե՛ս:
Արժեքի համար, արժեքի համար որ արժեք
բանալի ընդհանուր է:
Այո, Ե՛ս չի՛հասկանալի ճանաչող
արժեքի համար:

Դե՛ր՛ս անում եմ արժեքի համար,
SIMON SIMONIAN
Pharmacy MARELIAS
Antelias
Lebanon:

14/11.11/1984

Այս ճանաչող արժեքի համար
Սիմոն



Սիրելի եւ բազմաշնորհ հայրենակիցիս Սիմոն Սիմոնեանի անժամանակեայ մահը մեծ կորուստ էր հայ գրականութեան, պատմութեան եւ մանաւանդ Սասնոյ Հայրենակցական Միութեան, որուն նախագահութիւնը կը նախընտրէր Միացեալ Նահանգներու նախագահութենէն: Սասունցի Օվէի որդի Սիմոն Սիմոնեանի մահուան քառասունփին առթիւ, ցաւալի զգացումներս գրեցի «Դուն էլ, Լասօ՛» վերնագրով 7 Մայիս, Զորեմշաբթի 1986-ին, «Հայրենիք» շաբաթաթերթին մէջ: Այսպէս.—

ՅԱՐԳԱՆՔԻ ԽՕՍՔԵՐ

ԴՈՒՆ ԷԼ, ԼԱՕ՛

(ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՍԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ
ԱՌԻԹՈՎ)

Դուն էլ, Լասօ՛, Օվէի տղայ Սիմոն, աճապարեցիր հեռանալ այս աշխարհէն, երթալ միանալու համար լեռնականներու հերոսածին փաղանգին, որոնց վերջալոյսը երգեցիր քու գլուխ գործոց՝ «Լեռնականներու Վերջալոյսը» գիրքով:

Կեանքդ ամբողջ եղաւ նուիրում եւ զոհաբերութիւն՝ ի խնդիր հայ մշակոյթի ծառայութեան եւ տարածման, որպէս ուսուցիչ, խմբագիր, պատմաբան, հրատարակիչ եւ գրող, որպէս Քրիստոս պաշտելով միայն Մեսրոպ Մաշտոցը՝ անհուն երկիւղածութեամբ ու հաւատքով:

Սակայն, հոգի՛դ մնաց մաքուր՝ Անտոքի, Ծովասարի, Գրբգուռի եւ Մարաթուկի ձիւներուն պէս, ամուր՝ Սասնոյ կրանիթեայ ապառաժներուն պէս, զօրեղ՝ Սասնոյ Պաթմանայ գետակին պէս: Եւ ո՛չ մէկ հողմ ու փոթորիկ կրցաւ ընկճել հոգիիդ մէջ խայտացող ծուռ սասունցիի անխորտակ սլացքը՝ հայրենասիրութեան ճանապարհներուն վրայ:

Այսպէս, Սիմոն աղբէր, անակնկալօրէն, առանց մնաս բարովի, հեռացար մեզմէ անդարձօրէն, հեգնելով 1983-ին Ամերի-

կայի մէջ տեղի ունեցած Յորելեանիդ առթիւ եղած առողջու-
թեան եւ արեւշատութեան մաղթանքները:

Ա՛խ, սիրտդ, սասունցիի ազնիւ եւ վճիտ սիրտդ չզիմա-
ցաւ...: Ինչպէ՛ս դիմանար, ծովերով հոգ եւ սրտմաշուք՝ կեան-
քի անբնական պայմաններուն ներքեւ: Ի՛նչ քարէ սիրտ պէտք
է ունենար Սիմոնեանի պէս անձ մը, որպէսզի կարենար արիւն
հասցնել մտքին եւ մատներուն, Ս. Մեսրոպի ջահը անմար պա-
հելու համար, հայ ազգին եւ հայ մշակոյթին օրը 24 ժամ ծառա-
յելու համար:

Սիրելի՛ հայրենակից Սիմոն, ամէն մարդ գիտէ, թէ օր մը
պիտի մեկնի այս աշխարհէն, բայց շատ քիչեր կան, որոնք ի-
րենց կարողութենէն աւելին տալով, գիշերը ցերեկին խառնե-
լով, անմահական գործեր արտադրելով եւ անմահութիւնը ի-
րենց կենդանութեան ժառանգելով կ'երթան, աչքերնին ետին
չպահելով:

Դուն հայ մշակոյթի բոլոր կալուածներուն մէջ դրիր մնա-
յուն քար մը, որուն որակը եւ տեսակը բարձրօրէն գնահատուած
է հայ ժողովուրդին կողմէ: Գիտէիր, որ պիտի մեկնիս, անոր
համար կ'աճապարէիր անաւարտ գործերուդ ամբողջացումին:
«Գերեզման չտարուելիք բաներ» տակաւին շա՛տ ունէիր, ո-
րոնք պէտք է թուղթին յանձնուէին:

Սատանան որոգայթը լարեց քանի մը անգամ: Փորձեց
հարուածել սրտէդ՝ քանի մը անգամ: Սակայն, դուն, ինչպէս
Սասունցի Դաւիթ Մսրայ Մելիքին դիմաց կուռի պահին, միշտ
յաղթական դուրս եկար, գոռալով՝ «Կե՛նդանի եմ»...:

Բայց այս անգամ չկրցար ազատիլ, խոր կսկիծով պատելով
մեր սրտերը:

Լեռնականները գրեթէ մեծամասնութեամբ գացին: Մարդ
չմնաց Հայաստանի սիրտէն՝ Սասունէն: Անոնց հոգիները ան-
հուն կարօտով կը սաւառնին իրենց պաշտելի բարձունքներուն
վրայ:

Կարգը եկաւ անոնց որդիներուն: Սասունը չտեսած, բայց
իրենց երակներուն մէջ կրող սասունցիներուն, որոնց աւագա-
գոյնն էր Սիմոն Սիմոնեան, որուն պատիւը եւ բախտը վիճակ-
ուեցաւ Հալպայ քաղաքին մէջ Սասնոյ Հայրենակցական Միու-
թեան վարչութեան ատենադպիր ըլլալը, ապրիլ ու գործել ա-
դամանդի նման փայլուն հոգիով փռապան եւ ջաղացպան սա-
սունցիներուն հետ, ուսումնասիրել անոնց հոգին եւ գրել գրա-
կան գոհարներ:

*Սակայն, ինչպէս գրած է Սիմոն Սիմոնեան իր «Լեոնական-
ներու Վերջալոյսը» գրքին «Երեք Օրակարգ» պատմուածքին
մէջ, նկարագրելով Հայրենակցական Միութեան վարչական մէկ
ժողովը, ուր կ'ըսէ.*

«Բոլորն ալ անգրագէտ ծերեր էին: Միակ գրել-կարդալ
գիտցողը ես էի եւ Տալուրիկցի Խարգօն: Երանի՛ թէ երկուքս ալ
գիտցած չըլլայինք Մեսրոպ կոչուած վիուկին կաթարդական
այս նշանները: Հագա՛ր երանի: Դիւրին երանի մը չէ ասիկա:
Սպասեցէք:

Փոխանակ բազմաթիւ օրակարգերով զբաղելու, Տալուրիկ-
ցի Խարգօն, ինձմէ ետք գրել-կարդալ գիտցող միակ վարչակա-
նը, երեւելի եւ սուրբ ֆիտայի Գալէի ազգականը, «խօսք կ'ու-
զեմ» ըսաւ եւ բացաւ իր բերանը՝ շատ թթուած դէմքով մը.

— Մե՛ծ սխալ մը գործեր է Օվէ-տղան...

Օվէ-տղան ես էի:

Սարսափով նայեցայ ֆիտայի Գալէի ազգականին սատա-
նայական դէմքին:

Ի՛նչ մեծ յանցանք գործած կրնայի ըլլալ... չէի գիտեր:

Ապա, Տալուրիկցի Խարգօն դարձաւ ինձի եւ որոտաց.

— Դնի չե՞ս ամէնար. մըքի քու մասխարա՞ն ենք:

— Խեր է, Խարգօ՛, հարցուց Կոզլուկլու Մակարը:

Խարգօն ոտքի ելաւ եւ գոռաց.

— Մըքի գրուելիք մարդիկ չենք: Մըքի արո՛ւն տեսեր իք...

Այդ օրերուն գրեր էի առաջին գրութիւններս սասունցիներ-
րուն վրայ եւ Խարգօն կարդացած էր զանոնք...

Ալեւոր ատենապետը՝ Կոզլուկլու Մակարը քիչ ետք յուզու-
մէն դողացող ձայնով հարցուց.

— ձի՞շղ է, Օվէ-տղայ...

Զուրացայ: Յատենի ժողովոյ ըսի՝

— Գրեցի...

— Օվէ-տղայ, — հարցուց Շեփէն, — օրէնքն՞ով գրեցիր...

— Օրէնքն՞ով, — ըսի: — Մարդ ի՛նչ կը գրէ իր «հօրեղբայրնե-
րուն» մասին...»:

*
*
*

*Սիրելի՛ Հայրենակից, Օվէ-տղայ Սիմոն,
Տալուրիկի Սպաղանք գիւղացի Խարգօն, քեզմէ ետք միակ*

գրել-կարդալ գիտցող վարչականը, որ Սուրբ Կարապետի վան-
քը ստացած է իր ուսումը եւ դեռ պատանի՝ ուսուցչութիւն ալ
ըրած Սասնոյ գիւղերուն մէջ, հայրս էր, որ 25 տարիներ առաջ
մեկնեցաւ այս աշխարհէն, միանալու համար իր հօրեղբորդի-
ներուն՝ Ֆետայիներ Գալէին եւ Յակէին, ինչպէս նաեւ իր ազ-
գականին ու կնքահայրին՝ դիւցազն Սպաղանաց Մակարին: Ա-
րիւն թափած Ֆետայիներու սերունդէն անձ մը՝ որպիսին էր
հայրս, այդ օրերուն ի՞նչպէս պիտի գնահատէր քու գրական
հանճարդ: Անոր միակ սկզբունքը՝ հայ ազատագրական պայ-
քարն էր, «Միայն գէնֆոլ կայ հայոց փրկութիւն» բնաբանով:
Ան իր հայրենասէրի միամտութեամբ կը կարծէր, որ «թուղթէ
չերեփ» կը պատրաստես...:

Բայց ես, այդ առաքինազարդ լեռնականներու որդիներուն
երկրորդ սերունդին պատկանող սասուցի արիւնակից մը, կը
ճշդեմ:

Վարձքդ կատար, Օվէ-տղայ Սիմոն, այդ գրութիւններով
լոյս աշխարհ սփռեցիր Սասունցի Լեռնականի անշահախնդիր
հայրենասիրութիւնը, խրոխտ ոգին, ազնիւ սիրտը եւ հայ գրա-
կանութեան գանձարանը հարստացուցիր գրական գոհարով մը:

Գրեցիր՝ «օրէնֆոլ», անմահացար եւ անհատ սասունցիներ
անմահացուցիր՝ «օրէնֆոլ»:

Քու հայեցողութեամբ եւ փափաքով ուղղութիւն տուիր
մտաւորական կեանքիս, 1946-ի սկիզբը զիս գործի ընդունելով
Հալէպի Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանէն ներս,
որ ինծի համար եղաւ թէ՛ ապրուստի միջոց, թէ՛ երկրորդական
դպրոց, մինչեւ Պէյրութ փոխադրուիլդ:

Այսպէս, եղար առաջին վարպետս՝ արհեստի եւ գրականու-
թեան ասպարէզներուն մէջ:

Խուսնկ եւ աղօթք շիրիմիդ՝ սիրելի Վարպետ, մահուանդ
քառասունքին առթիւ:

Հանգի՛ստ վաստակաբեկ ոսկորներուդ, մինչեւ այն օրը,
երբ ազատութեան արեգակը ծագի Սասնոյ լեռներուն վրայ եւ
ածիւններդ հանգչին հօրդ՝ Օվէի ծննդավայր Սասնոյ Կերման
գիւղի սարալանջին...:

ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕՉԱՆԵԱՆ

Սասնոյ Տալուորիկ գաւառի Սպաղանք գիւղի մօտ գտնուող Պաթմանայ գետին մէջ հօրս՝ Ղազար (Խարզօ) Հոթոյեանին լողալ սորվեցուցած է այդ օրերուն Սպաղանք գիւղին մէջ գումարուող Ֆետայիներուն ժողովին ներկայ գլուխը ուղղող ազգային հերոս Զօրավար Անդրանիկ Թորոսի Օզանեանը, մեծ խանդավառութիւն ստեղծելով հօրս, իր կրնքահօր՝ Մակարին եւ հօրեղբօր գաւակներուն՝ Գալէին, Յակոբին եւ Պետոյին մօտ:



Զօրավար Անդրանիկ ծնած է 25 Փետրուար 1865-ին Շապին Գարահիսար քաղաքին մէջ, իսկ մահացած է 31 Օգոստոս 1927-ին՝ Յրէզնօ (Մ. Ն.): Թաղուած է Փարիզի Փեր Լաշէզ գերեզմանատունը:

Հայ ազգային ազատագրական շարժման գործիչ եւ զօրավար: Ուսանած է իր ծննդավայրի Մուշեղեան վարժարանը: 14-15 տարեկանին ըմբոստացած է թրքական ընկերային եւ ազգային ճնշումներուն դէմ, որոնց համար բանտարկուած է: Ազատուելէն ետք կը մեկնի Կ. Պոլիս, ուր զբաղած է ատաղձագործութեամբ, ներգրաւուած է յեղափոխական շարժումներու մէջ: Թուրք իշխանութիւններու հալածանքներէն խուսափելով կը մեկնի Պաթում, ապա՝ Կարս: 1890-ականի կէսին, ապտիւհամիտեան ճնշումի սաստկանալու պայմաններուն հետեւանքով, ան կը նուիրուի հայկական ազատագրական գործին, անհաշտ պայքար ծաւալելով թրքական բռնակալութեան դէմ, դառնալով խիզախ ֆետայի: Աղբիւր Սերոբի խումբին հետ կը մարտնչի Տարօնի եւ Սասունի մէջ: Սերոբ Աղբիւրի զոհուելէն ետք, Անդրանիկ կը գլխաւորէ ինքնապաշտպանութեան շարք մը մարտեր: 1901-ի Նոյեմբերին, երբ Անդրանիկ իր փոքրաթիւ ջոկա-

տով Մշոյ Առաքելոց վանքը արիաբար մարտնչած է թուրք զօրքերու եւ քրտական հրոսակախուժներուն դէմ, ապա, ճեղքելով պաշարման դիժերը հեռացեր է վանքէն՝ տարածելով անուրանալի հերոսի հուշակը, արժանացած է ժողովրդային լայն ճանաչման: 1904-ին, Անդրանիկ թուրք բռնակալութեան դէմ նոր մարտեր կը մղէ Վասպուրականի մէջ: Այնուհետեւ կ'անցնի Պարսկաստան, ապա՝ Անդրկովկաս: Թիֆլիսի մէջ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի հետ կը քննարկէ հայ ազատագրական պայքարի խնդիրները: Զէնք հայթայթելու նպատակով, 1905-ին կը մեկնի Ժընեւ, ուր կը հանդիպի բանաստեղծ Սիւմանթոյին, ապա՝ Վիեննա, Ֆիլիպէ (Պուլկարիա):

Ընդհանրացնելով հայ ազատագրական պայքարի փորձը, 1906-ին այցելած է Ֆրանսա, Պելճիքա, Անգլիա, այնուհետեւ բնակած է Վառնա քաղաքին մէջ, սերտ կապեր հաստատելով պուլկար բազմաթիւ յեղափոխականներու հետ: Պալքանեան առաջին պատերազմին ժամանակ (1912-1913) ան իր կազմակերպած հայկական կամաւոր ջոկատով, որպէս վաշտի հրամանատար, պուլկար բանակի կազմով յաջողութեամբ մարտնչած է թուրք զօրքերու դէմ, արժանացած սպայի կոչումին եւ մարտական շքանշաններու:

1914-ին, Առաջին Համաշխարհային Պատերազմի սկիզբը, Անդրանիկ Թիֆլիսի մէջ նշանակուած է հայկական կամաւոր առաջին ջոկատի հրամանատար, բազմաթիւ անգամ նկատի առնուած մարտական սխրանքներով, դեկավարած շուրջ 20 յաղթական ռազմական գործողութիւն, մեծ դեր խաղալով Դիլմանի ճակատամարտին՝ 1915-ին:

Զինուորական համազգեստով Անդրանիկի տարբեր լուսանկարներուն մէջ իր կուրծքին կը տեսնենք հինգ շքանշաններ:

Իրականութեան մէջ Անդրանիկ իր խիզախութիւններուն եւ մարտականութիւններուն համար պուլկարական, ռուսական, յունական, ֆրանսական կառավարութիւններուն կողմէ արժանացած է մէկուկէս տասնեակէ աւելի մարտական տարբեր պարգեւներու, շքանշաններու, մետալներու եւ զինուորական աստիճաններու:

Ե՞րբ եւ ինչո՞ւ համար Անդրանիկ ստացած է այդ պարգեւները:

Առաջին անգամ Անդրանիկի կուրծքին շքանշան կը տեսնենք 1904-ին առնուած լուսանկարի մը մէջ: Անդրանիկ նստած

է սպիտակ ձիու մը վրայ, չորս շարք փամփշտակալները կուրծքին փաթթուած, կեռ, մեծ դաշոյնը կողմէն կախուած, խրոխտ կեցուածքով, կուրծքին զինանշան ամրացուած: Կարելի է ենթադրել, որ Անդրանիկը, հաւանաբար, լուսանկարուած է ինչ որ մէկու մը խնդրանքով, քանի որ այս լուսանկարէն բացի, այլեւս երբեք անոր շքանշանով չենք տեսներ:

Յայտնի է, որ Անդրանիկը մարտական առաջին շքանշանները ստացած է պալքանեան պատերազմի ժամանակ: Հապա ինչպէ՞ս է, որ դեռեւս 1904-ին անոր կուրծքին քշանշան կը տեսնենք:

Իրողութիւնը հետեւեալն է.— Աղբիւր Սերոբի եղբրական սպանութենէն յետոյ, սասունցի Ֆետայիները օր ու գիշեր կը փնտռէին մեծ Ֆետայի պետը թունաւորած, կիսամեռ վիճակի մէջ գլխատած քիւրտ աշիրաթապետ Պշարա Խալիլը, Սերոբի վրէժը առնելու համար:

Եւ ահա, աշանային օր մը, Անդրանիկի խումբը լուր կը ստանայ, որ Պշարա Խալիլը Մարանիկ կը վերադառնայ Մուշէն, ուր գացած էր Սուլթանին ուղարկած շքանշանը ընդունելու: Ֆետայիներու խումբը՝ Անդրանիկը, Աւօն, Գէորգ Չառուշը, Տօնօ Մակարը, Յարութիւնը, Գալէն եւ ուրիշներ կը փակեն Խալիլի ճանապարհը, ոչնչացնելով անոր 10-12 հոգինոց պահակախումբը եւ կը բռնեն Խալիլը: Ոտքի վրայ անոր հարցաքննութեան մասին Անդրանիկ իր յուշերուն մէջ հետեւեալը կը գրէ.—

— Պշարա Խալիլը դո՞ւն ես:

— Այո, — պատասխանեց:

— Դո՞ւն էիր, որ Սերոբ փաշան սպաննեցիր ու անոր գլուխը ձողի մը անցուցիր եւ Մուշի ու Պիթլիսի հրապարակներուն վերայ ցուցադրեցիր:

Լոու՞թիւն:

— Դո՞ւն էիր, որ Ալի փաշային հետ Սպաղանֆ գիւղին քսան եւ եօթ կիւն ու երեխաները Տէր Պետրոս քահանային հետ սպաննելէ ետք Ռէս Մակարի տան մէջ լեցնելով այրել տուիր:

Լոու՞թիւն:

Այն ատեն է, որ ձեռքս նետեցի եւ Խալիլի մագերը մատնե-րուս փաթթելով պոռացի:

— Դուն Սերոբ փաշային գլուխը մեռած ատեն կտրեցիր, ես քեզ ողջ բռնելով գլուխդ կը կտրեմ:

Այս ըսելով, Անդրանիկ կը գլխատէ աշիրաթապետը՝ վրէժ-խնդիր ըլլալով Աղբիւր Սերոբի եւ տանջահար սասունցիներուն համար: Գլխատուած Խալիլի ուսապարկին մէջ Ֆետայիները երբ մանր-մունր իրերու մէջ կը գտնեն նաեւ Սուլթանին կողմէ իրեն ուղարկուած այն շքանշանը, որով ան պարգեւատրուած էր Աղբիւր Սերոբը գլխատելուն համար: Ինչպէս կը վկայէ ա-կանատեսը, Ֆետայիներէն մէկը, առնելով այդ շքանշանը, կ'ամրացնէ զայն Անդրանիկի կուրծքին: Ահա այդ շքանշանն է, որ առաջին եւ միակ անգամ կը տեսնենք Անդրանիկի 1904 թը-լականի լուսանկարին մէջ:

Իր առաջին պարգեւները Անդրանիկը ստացած էր շատ աւելի ուշ՝ Պուլկարիա, պալքանեան պատերազմի ժամանակ թուրքերու դէմ մղուած կռիւներու ընթացքին անոր ցուցաբե-րած խիզախութեան եւ մարտական սխրանքին համար:

Պալքանեան առաջին պատերազմի նախօրեակին, պուլկա-րական կառավարութիւնը զօրահաւաք կը յայտարարէ: Շատ պուլկարահայեր կամովին կը մտնեն պուլկարական բանակին շարքերը: Անոնց համար հասած էր թուրքերէն վրէժխնդիր ըլ-լալու ժամանակը: Այդ կամաւորներէն բացի, Սոֆիայի մէջ կը կազմակերպուի հայ կամաւոր աշխարհագորայիներու առաջին զօրաշնչատը, որուն հրամանատար կը նշանակուի պուլկարա-կան բանակի սպայ Գարեգին Նժդեհը եւ փոխանորդ՝ Անդրանի-կը: 1912 Հոկտեմբեր 8-ին, Սոֆիայի Հայոց Ս. Աստուածածին Եկեղեցիին մէջ համախմբուած հայերու ու պուլկարներու խառն ամբոխին առջեւ թուրքերու դէմ անմնացորդ կռուելու երդում տալէ ետք, հայկական կամաւորական ջոկատը կը մեկնի ռազմաճակատ: Ճանապարհին, 229 մարտիկներուն կը միանան նաեւ 42 հայեր:

Ռազմաճակատին վրայ անոնք կը մտնեն գեներալ Գանեւի Մակեդոնա-Օրդինեան զօրամիաւորման կազմին մէջ: Հայկա-կան ջոկատը ունէր հայոց եկեղեցին օծուած, հայուհիներու կողմէ ասեղնագործուած դրօշ: Ռազմաճակատ մեկնելու առա-ջին իսկ օրէն, հայ մարտիկները կը ցուցաբերեն հերոսութեան եւ խիզախութեան բազմաթիւ օրինակներ:

Պալքանեան պատերազմին ընթացքին, պուլկարական բա-նակին տարած փայլուն յաղթանակներէն էր Մարիցա գետի ա-փին, Մերգել գիւղի մօտ 10 հազարնոց թրքական բանակին գե-

րուճը: Եւարի փաշայի գլխաւորութեամբ թուրք-պուլկարական կռիւներէն մէկուն ժամանակ, թրքական բանակի տասը հազարնոց զօրամասը կ'իյնայ պուլկարական բանակին աքցանին մէջ: Միակ ճանապարհը, որով թուրքերը կրնային դուրս գալ շրջապատումէն, Մարիցա գետի կիրճն էր: Թուրքերու ճանապարհը փակելը պուլկարական հրամանատարութիւնը յանձնարարած էր հայկական ջոկատին: Հայերը սրընթաց գրոհով կ'իջնեն դէպի կիրճը, դիրքեր բռնելով Մարիցա գետի ափին եւ փակելով թուրքերու շրջափակումէն դուրս ելլելու միակ ճանապարհը: Թուրքերու բոլոր գրոհները շրջափակման շղթան ճեղքելու՝ անյաջող կ'անցնին: Թրքական տասը հազարնոց բանակը ստիպուած գէնքը վար կը դնէ: Գերեվարուած թրքական բանակին մէջ, գեներալ Մուսթաֆա Եւարի փաշայէն բացի, կային նաեւ երեք գնդապետներ, 242 սպաներ: Ականատեսը ծաղրանքով կը նկարագրէ թուրք փաշային եւ բարձրաստիճան սպաներուն գունատ դէմքերու արտայայտութիւնը, երբ անոնք կը տեղեկանան, որ իրենց ճամբաները փակած են փոքրիկ խումբ մը հայեր՝ Անդրանիկի գլխաւորութեամբ: Նոյն ականատեսը կը պատմէ, որ երբ Եւարի փաշան կ'իմանայ եղելութիւնն ու կը տեսնէ Անդրանիկը, ընկճուած կ'ըսէ. — «Եթէ ես իմանայի, որ ճանապարհը փակողները բոլոր մը հայեր էին Անդրանիկի գլխաւորութեամբ, կը մեռնէի, բայց երբեք չէի յանձնուեր»:

Այս կռիւին ցուցաբերած անձնական խիզախութեան եւ ռազմական գործողութիւնները հմտօրէն ղեկավարելուն համար, Նժդեհն ու Անդրանիկը կ'արժանանան պուլկարական թագաւորի գովեստին եւ երկրի բարձրագոյն շքանշաններուն, իսկ հայկական զօրաջոկատի մարտական դրօշին կ'ամրացուի «Ռազմական Խաչ»ի շքանշան, որ կը նշանակէ թէ ջոկատի բոլոր զինուորները կը պարգեւատրուէին այդ շքանշանով: Իսկ Անդրանիկը կ'արժանանայ «Զինուորական Քաջութեան Ոսկիէ Խաչ»ին: Զայն ամրացնելով Անդրանիկի կուրծքին, գեներալ-մայոր Գանեւը, դիմելով շարքով կանգնած հայ զինուորներուն, կ'ըսէ. — « Դուք բոլորդ ալ կը կռուէիք որպէս առիւծներ, սակայն «Զինուորական Քաջութեան Ոսկիէ Խաչ»ը հազուադէպ շքանշան է, ան կը տրուի միայն քաջերէ աւելի քաջերուն»:

1913 Յունուար 16-ին, Պուլկարիոյ Յերտինանտ թագաւորին հրամանով Անդրանիկին կը շնորհուի պուլկարական բանակի սպայի՝ Վոյեվոդի աստիճան:

Երբ կը սկսի Առաջին Համաշխարհային Պատերազմը եւ Ռուսաստանը պատերազմի կը մտնէ Թուրքիոյ դէմ, Թիֆլիսի Հայոց Ազգային Բիւրօն Հայերէն կամաւորական գունդեր ստեղծելու կոչ մը կ'արձակէ: Կոչին կ'արձագանգեն Հազարաւոր Հայ երիտասարդներ, պատանիներ, նոյնիսկ՝ աղջիկներ: Շատ արագ կը կազմաւորուին Հայ կամաւորներու հինգ, ապա՝ երկու այլ գունդեր:

Լսելով Հայ կամաւորներու գունդեր կազմաւորուելուն մասին, Անդրանիկ Պուլկարիայէն Պաթումիի վրայով կը հասնի Թիֆլիս: Կովկասեան ճակատի հրամանատարութիւնը Անդրանիկը կը նշանակէ 1300-1500 կամաւորներէ կազմուած Հայերու առաջին գունդի հրամանատար: Անոր օգնականներն էին Մշոյ Առիւծը՝ Սմբատ Բարոյեանը եւ Սեպուհը:

1914 Հոկտեմբեր 19-ին, գունդը Թիֆլիսէն կը մեկնի ռազմաճակատ, թուրքերու դէմ կռուելու համար պարսկա-թրքական սահմանին վրայ: Թուրքերու հետ առաջին իսկ բախումներու ժամանակ, Անդրանիկ կրկին կը ցուցադրէ իր խիզախութիւնն ու մարտական կարողութիւնները:

Առաջին Աշխարհամարտի տարիներուն, թուրքերու դէմ ռուսական բանակներու տարած յաղթանակներէն էր Դիլմանի ճակատամարտը, որու ընթացքին կը փայլին հայկական կամաւորական գունդերը, առանձնապէս՝ Անդրանիկի գլխաւորած կամաւորական առաջին գունդը: Դիլմանի յաղթանակով կը փրկուի թուրքերու դէմ օրհասական կռուի մէջ գտնուող Վանի հայութիւնը: Այս ճակատամարտին մասին գեներալ Նազարբէկեանը գրած է.— «Անդրանիկը Դիլմանի ճակատամարտին, ինչպէս միշտ, խելագարութեան չափ քաջ էր, անոր մարտական նշանաբանն էր՝ «Յարձակում եւ միայն յարձակում»»: Այս ճակատամարտին աչքի ինկած հարիւրաւոր Հայ կամաւորներ կը պարգեւատրուին մարտական շքանշաններով ու մետալներով: Բարձր գնահատանքի կ'արժանանայ նաեւ Անդրանիկը: Ռազմաճակատի հրամանատար գեներալ-լէյտենանտ Մ. Ն. Պրժեւալսկին Անդրանիկին կ'ուղարկէ հետեւեալ հեռագիրը.— «Օգտըւելով ինձի տրուած իշխանութենէն, հայկական առաջին գունդի հրամանատար Պորուչիկ Անդրանիկ Թորոսի Օզանեանի Դիլմանի ճակատամարտին ցուցաբերած խիզախութեան եւ գերազանցութեան համար, կը պարգեւատրեմ զինք «Իշխան Վլա-

տրմիր»ի 4-րդ աստիճանի եւ «Սուրբ Սվեատոսլաւիա»յի շքանշաններով»:

Թէ՛ պատերազմի օրերուն եւ թէ՛ յետպատերազմեան տարիներուն, Անդրանիկ գրեթէ բոլոր լուսանկարներուն մէջ անբաժան է իր սուրէն ու առանձին հպարտութեամբ կը լուսանկարուի անով:

Իսկ ի՞նչ սուր էր այդ:

Ռուսական բանակի բարձր պարգեւներուն մէջ կար հատմը, որով կը պարգեւատրուէին բացառապէս զօրահրամանատարները եւ այն ալ՝ եթէ մարտական գործողութիւններու ընթացքին զօրավարական հմտութենէ բացի ցուցաբերէին նաեւ անձնական քաջութիւն եւ խիզախութիւն: Այդ բացառիկ մեծ պարգեւը «Գէորգիեւեան Քաջութեան Սուր»ն էր: Այդ սուրը կրողը ունէր մեծ արտօնութիւններ, իրաւունք ունէր ուղղակի մտնել ռուսաց կայսեր մօտ, առանց սուրը յանձնելու եւ պաշտօնական այլ ձեւակերպութիւններու: Այս սուրով պարգեւատրուածին զաւակներուն արտօնուած էր ձրի ուսանիլ երկրի ցանկացած համալսարանին մէջ, իսկ անոր ընտանիքի հիւանդ անդամը կրնար անվճար բուժուիլ ուզած հիւանդանոցը: Պարգեւատրուածը պետութեանէն ամսական կը ստանար 600 ռուբլի թոշակ:

1914-1915-ին ծաւալած մարտական գործողութիւններու ժամանակ ցուցաբերած զօրավարական տաղանդին եւ անձնական խիզախութեան համար, Անդրանիկը կը պարգեւատրուի «Գէորգիեւեան Քաջութեան Սուր»ով: Պարգեւը այնչափ կ'ուրախացնէ Անդրանիկը, որ յետագայ բոլոր տարիներուն, մինչեւ իր մահը, Անդրանիկ անբաժան մնաց այդ սուրէն: Կ'ենթադրուի, որ այդ ժամանակէն սկսեալ Անդրանիկը «Փաշա»յի փոխարէն կը սկսին մեծարել «Զօրավար» պատուանունով: Կովկասեան բանակի հրամանատար գեներալ Չերնոզուպովը Անդրանիկը կը հրաւիրէ Ջուլֆա, անոր կը յանձնէ բարձր պարգեւը եւ կուրծքին կ'ամրացնէ «Գէորգիեւեան Խաչ»ի 2-րդ աստիճանի շքանշանը:

1915 Յունիսին, Զեւիւնի բարձունքները գրաւելու ուղղութեամբ գեներալ Տորոխիւնի 2400 հոգինոց հեծելազօրին գրոհը թուրքերը ետ կը մղեն: Գեներալը կը հեռագրէ կեզրոն, յայտնելով, որ եղած ուժերով ու ռազմամթերքով անհնար է գրաւել Զե-

ւինի բարձունքները: Կեդրոնէն հրաման կը ստացուի զօրքերը ետ քաշել: Միշտ կարգապահ Անդրանիկը կ'ընդդիմանայ, ըսելով, որ կարելի է գրաւել բարձունքները եւ կը դիմէ միաւորի հրամանատարին՝ ռազմամթերքի խնդրանքով: Սակայն մերժողական պատասխան կը ստանայ.— «Ոչ այսօր, ոչ ալ վաղը, ոչ ալ միւս օրը փամփուշտներ չեմ կրնար դրկել: Ռազմամթերքը վերջացած է: Կը հրամայեմ նահանջել»: Չնայած ռուսական միւս ջոկատները կը նահանջեն, սակայն Անդրանիկ չ'ենթարկուիր հրամանին: Գիշերուայ ժամը 11-ին, Անդրանիկի ջոկատին ռազմամթերքը կը վերջանայ: Երբ թուրքերը արդէն կը տօնէին իրենց յաղթանակը, Անդրանիկ կ'ելլէ խրամատէն, դուրս կը քաշէ սուրը եւ հայկական ջոկատը կը տանի սուինամարտի: Յանկարծակիի եկած թուրքերը տալով բազմաթիւ սպաննուածներ, կը պարպեն Ձեւինի խրամատները: Գեներալ Տորոխինը ռազմաճակատի հրամանատարին կը հեռագրէ.— «Հայկական առաջին գունդը, Անդրանիկի գլխաւորութեամբ, թուրքերը դուրս չպրտեց Ձեւինի բարձունքներէն, հնարաւորութիւն տալով մեր 2400 հոգինոց հեծելազօրին վերադառնալ դիրքերը»:

Հերթական յաղթանակին համար Անդրանիկ կրկին կ'արժանանայ «Գէորգեան Խաչ»ի երկրորդ աստիճանի շքանշանի:

Ձեւինէն նահանջած թուրքերը կը դիրքաւորուին Սորբի մօտ: Հետապնդելով թուրքերը, հայկական առաջին կամաւորական գունդի կողակային հեծելազօրայինները կը հասնին թուրքերու դիրքերուն: Յունիս 28-ին սկսած ճակատամարտը կ'աւարտի յաջորդ օրը: Շտապօրէն ղրկուած զեկուցագրերէն մէկէն կը կարդանք.— «Ճակատի ամբողջ երկարութեամբ թըշնամին ջախջախուեցաւ: Մեր զօրամասերու ճնշման տակ թուրքերը, թողելով մեծաքանակ սպաննուածներ, գէնք, չորս հրանօթ, սարսափահար փախան: Մարտերուն յատկապէս փայլեցան հայ կամաւորներն ու կողակները»: Տեղեկացնելով այս մասին, զեկուցող գեներալը վերջաւորութեան իր դժգոհութիւնը կը յայտնէ, որ մարտերու ընթացքին աչքի ինկած հայ զինուորներուն մարտական պարգեւներ ներկայացնելու իր միջնորդութիւնը ուշադրութեան չէ արժանացած: Սակայն գեներալ-լէյտենանտ Տորոխինը ի գուր կը դժգոհէր: Իրականութեան մէջ, այս ճակատամարտին ցուցաբերած քաջութեան եւ խիզախութեան համար շատ հայ զինուորներ ու սպաներ արժանացած են մետալներու ու շքանշաններու: Իսկ անձամբ Անդրանիկը

Զեւիւնի ու Սորբի ճակատամարտերու ընթացքին անձնական քաջութեան, զօրքեր վարելու հմտութեան համար կը պարգեւատրուի երկու շքանշաններով: Առաջինը՝ «Գէորգիեւեան Խաչ»ի երկրորդ աստիճանի շքանշանն էր, որուն մասին նախապէս յիշեցինք: Շքանշանի ներկայացման միջնորդութեան մէջ ըսուած է.— «Անդրանիկ Թորոսի Օգանեանը, բոլոր ժամանակ գտնուելով ռազմական գործողութիւններու յառաջամասին մէջ, ժրջան կերպով կը ղեկավարէր զօրամասի բրոնզ, ցուցաբերելով անձնական խիզախութիւն, թշնամի կրակի տակ կ'երեւէր գրոհողներու առաջին շարքերուն, ստիպելով թուրքերուն հապշտապ թողուլ նախապէս ամրապնդած դիրքերն ու նահանջել»:

Երրորդ նոր շքանշանը, որուն այս անգամ արժանացաւ Անդրանիկ, «Ս. Սվեատոսլաւիա» երկրորդ աստիճանի շքանշանն էր:

Զեւիւնէն եւ Սորբէն ետք, Անդրանիկ հասած էր Պիթլիս: Խիստ ամրացուած այս բերդաքաղաքը յայտնի էր «Յամաքային Տարտանէլ» անունով: Զայն գրաւելու համար գեներալ Սպացիւնի հրամանը գեներալ Օգանովսքիին՝ մնաց անհետեւանք: Ծանօթանալով քաղաք-ամրոցին պաշտպանական ամրութիւններուն, գեներալ Օգանովսկին կը հեռագրէ.— «Անկարելի է գրաւել Պիթլիսը, ես կը նահանջեմ»: Իմանալով այդ մասին, Անդրանիկ կը յայտնէ ընդհանուր հրամանատարին.— «Գլխուս վրայ կ'երգնում, որ կարելի է Պիթլիսը գրաւել եւ անմիջապէս»: Անդրանիկի կը հրամայուէր գրաւել Պիթլիսը: Անակնկալ գրոհով, գրեթէ առանց զոհերու, ռուսական գունդը եւ հայ կամաւորներու ջոկատները կը գրաւեն Պիթլիսը: Յուցաբերած խիզախութեան եւ հմուտ ռազմավարութեան համար Անդրանիկ կը պարգեւատրուի «Ս. Սվեատոսլաւիա» շքանշանով:

Պահպանուած է Անդրանիկը պարգեւատրելու միջնորդագիրը, որմէ կը տեղեկացուի, որ Անդրանիկ պարգեւատրուած է նաեւ «Գէորգիեւեան» երրորդ աստիճանի երկու մետալներով, «Գէորգիեւեան» չորրորդ աստիճանի երկու մետալներով եւ «Գէորգիեւեան Խաչ» երրորդ աստիճանի շքանշանով:

Անդրանիկի գլխաւորած հայկական զօրագունդի գործողութիւնները մշտապէս գտնուած են կովկասեան ռազմաճակատի հրամանատարութեան ուղադրութեան կեդրոնը: Մեզի հա-

սած է կովկասեան ռազմաճակատի գլխաւոր հրամանատար գեներալ Եռւտենիչի Անդրանիկին ուղարկած հետեւեալ նամակը.—

«Ողորմած Պարոն Անդրանիկ,

Պատերազմի սկիզբէն դուք ներգրաւուած էիք կովկասեան ճակատի ռազմական գործողութիւններուն մէջ, ղեկավարելով հայկական առաջին ջոկատը: Դուք մասնակցած էք շարք մը մարտերու, որոնց ընթացքին ցոյց տուած էք նախասիրութիւն, կարող կերպով եւ հմտօրէն ուղղութիւն տուած մարտերուն:

Ինծի համար խղճի պարտք կը համարեմ գործողութիւններուն համար յայտնելու անկեղծ երախտագիտութիւնը եւ հաւաստիացումը ընդունեցէք, ինչպէս նաեւ իմ բացարձակ յարգանքը եւ նուիրուածութիւնը Ձեզի հանդէպ: «Գէորգիեւեան» երկրորդ աստիճանի շքանշանը, որով դուք կը պարգեւատրուիք, նամակին հետ ներփակ կ'ուղարկեմ քեզի»:

1915 Օգոստոս 25-ին, Անդրանիկ կը ստանայ հետեւեալ հեռագիրը.— «Կը յայտնեմ Ձեզի, որ Վանայ լճի հարաւը մըղուած մարտերուն ցուցաբերած քաջութեան եւ գերազանցութեան համար, դուք ներկայացուած էք «Սուրբ Աննա»յի երկրորդ աստիճանի շքանշանի վիզէն կախուելու համար: Շքանշանի ներկայացումը կատարուած է կովկասեան 4-րդ բանակի Օգոստոս 21-ի (թիւ 2473) հրամանագրով: Ձեր ջոկատի աւելի ցած աստիճանի զինուորներու պարգեւներու ներկայացման գեկուցագրերը կ'ուղարկուին Օգոստոս 26-ին»:

Յիշեալ շքանշանը Անդրանիկին հասաւ միայն 1917 Դեկտեմբերին: Անդրանիկը այդ նշանը շատ կը սիրէր: Պարգեւատրուելէն ետք, իր գրեթէ բոլոր լուսանկարներուն մէջ այդ շքանշանը կը տեսնենք Անդրանիկի վիզէն կախուած:

Անօրինակ էին Անդրանիկի ցուցաբերած խիզախութիւններն ու զօրավարական կարողութիւնները իրար յաջորդած միւս կռիւններուն: Ան մէկը միւսին ետեւէն կը նուաճէր նորանոր յաղթանակներ եւ կ'արժանանար նոր, առաւել բարձր շքանշաններու: Այդ յաղթանակներէն յիշարժան էր Դադիվան գիւղի մօտ տարած յաղթանակը: Անդրանիկի կամաւորներուն միացած Դրոյի ու Համազասպի զինուորները եւ 600 կողակներ Անդրանիկի գլխաւորութեամբ յարձակած են Դադիվանի ուղղութեամբ դիրքաւորուած թուրքերու վրայ: Մարտի ընթացքին



Թուրքերը խրամատներուն մէջ կը թողուն 350, ոմանց կարծիքով 400 սպաննուած ու կը փախչին: Մարտի ընթացքին ցուցաբերած անձնական խիզախութեան եւ մարտը հմտօրէն վարելու համար, ուսսական հրամանատարութիւնը Անդրանիկը կը պարգեւատրէ «Գէորգիեւեան Առաջին Կարգի Ոսկի Խաչ» շքանշանով: Անոր շնորհըւած է նաեւ ուսսական բանակի գեներալ-մայորի կոչում:

Առաջին Աշխարհամարտէն յետոյ ալ Անդրանիկ իր ծառայութիւններուն համար շարունակած է ստանալ մարտական պարգեւներ, շքանշաններ եւ մետալներ:

Յունաստանի կառավարութիւնը, հաշուի առնելով Անդրանիկի մարտական ծառայութիւնները ընդհանուր թշնամիին դէմ, 1920-ին գայն կը պարգեւատրէ յունական երկրորդ աստիճանի մարտական շքանշանով:

Յունաստանի կառավարութիւնը, հաշուի առնելով Անդրանիկի մարտական ծառայութիւնները ընդհանուր թշնամիին դէմ, 1920-ին գայն կը պարգեւատրէ յունական երկրորդ աստիճանի մարտական շքանշանով:

Անցնելով Եւրոպա, Անդրանիկ անդադրում կ'աշխատէր աշխարհով մէկ ցրուած հայ գաղթականներու մէջ՝ հայ որբերու հաւաքման եւ տեղաւորման գործը կազմակերպելու ուղղութեամբ: 1919-1922 քանի մը անգամ զինք կ'ընդունի Ֆրանսայի վարչապետ Քլեմանսօն: Ֆրանսական կառավարութեան անունով Քլեմանսօ, բարձր գնահատելով Անդրանիկի մարտական սխրանքներն ու ազգապահպանման գործին մէջ ցուցաբերած ջանքերը, գայն կը պարգեւատրէ Ֆրանսական կառավարութեան «Ասպետական Խաչ» մարտական բարձրագոյն շքանշանով:

1921-ին, Ամենայն Հայոց Գէորգ Ե. Վեհափառ Կաթողիկոս Սուրէնեանը, հայրենիքին ու ազգին համար կատարած ծառայութիւններուն համար, ազգային հերոսը կը պարգեւատրէ

*«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» հազուադիւս աղամանդեայ շք-
քանչանով:*

Սակայն Անդրանիկի տրուած այս բոլոր պարգեւներէն ամենաթանկը իրեն համար կը մնայ իր սիրելի ժողովուրդին այն անհուն սէրն ու պաշտամունքը, որով աշխարհասփիւռ հայութիւնը շրջապատած է զինք՝ իր սիրասուն զաւակին՝ Ամենայն Հայոց Անդրանիկին:

Հայ ժողովուրդի զաւակները բազմաթիւ երգեր յօրինած են հերոս Անդրանիկի յիշատակին, յայտնելով իրենց սէրն ու յարգանքը իրենց ազգասէր եւ հայրենասէր զաւակին: Ահա այդ երգերէն՝ «Անդրանիկին» եւ «Անդրանիկի Քայլերգը».—

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք, գետինք տենչավառ,
Սուրբ անունդ պիտի յիշուի դարէ դար,
Հսկայ լեռինք քեզ ապաստան, Անդրանիկ:

Քիւրտ ու տանիկ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտ' սողան իրենց բոյնը,
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Չըցամաքէ՛ մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն,
Քնքնու ձեռամբ քո նակատը պսակեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
Կեցցե՛ս յաւէտ դու անասան, Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար,
Անյադթ մնաս դու քաջ, կոուի սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրանիկ:

Այս երգը կիլիկեցի մայրս, որ հայերէն չէր գիտեր, մեզի երգել կու տար եւ մտիկ ընելով կու լար, որովհետեւ Պեհեսնիի մէջ հայերէն սորվեցնող դպրոցներ չկային եւ հայերէն խօսիլը արգիւրուած էր:

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՔԱՅԼԵՐԳԸ

Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն,
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում,
Անդրանիկը ֆաջ իր ընկերներով,
Կ'ուզէ պատերազմ, կը սպասէ գարնան:

Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայու խօսքը ֆաջ շուտով կը լսուի,
Հայերը անվախ հոգւով միացած,
Հրացան ուսերնին՝ ոտքի են կանգնած:

Խմբապետները հոգւով են երդուած,
Ֆետայիք ուժով գնում են յառաջ,
Առաջն է կանգնած Անդրանիկը ֆաջ,
Գոռում է, գոչում, կ'ուզէ պատերազմ:

Հերիք եղբայրներ, մենք շատ ֆնեցինք,
Բաւական չէ՞ մեզ այսֆան համբերել,
Մայր Հայաստանը ձեռքէ հանեցինք,
Հիմա ուժ ունինք, դարձեալ ետ կ'առնենք:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳ ԱՍԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՐԻՆ
ԳԵՐԱՇՆՈՐՀ
ՏԷՐ ԽԱԺԱԿ ՍՐԲ. ԱՐՔ. ՅԱԿՈՒԲԵԱՆԻՆ

Հագար ողջո՛յն արեւաշող ու տեսական,
Հայաստանեայց Եկեղեցւոյ որպէս իշխան,
Քառասունհինգ տարիներու ծառայութեան,
Կ'ուղղենք Ձեզի Գերաշնորհ Խաժակ Յակոբեան:

Դպրեվանդէն շրջանաւարտ գուլալ ուխտով,
Գործուղողութեամբ ծառայելու ժողովուրդին,
Կրօնական եւ հովուական խոր տեսիլով,
Եղար զինուոր հանապազօր հայ հաւատքին:

Քարոզներով, պատգամներով ու գրիչով,
Քրիստոսի Աստուածային հզօր կամփով,
Լուսաւորչեան պայծառ լոյսով ու հաւատքով,
Զօրացուցիր ժողովուրդին սիրտերը սիրով:

Որպէս առաջնորդ խրոխտ կամփով եւ հայեացքով,
Գանատական Հայոց Թեմը ինչ տեսիլով,
Զեռնարկեցիր կրօնաբոյր շինութիւններ,
Մշակոյթի եւ հայ լեզուի ամուր բերդեր:

Աստուածածին Եկեղեցին առհաւական,
Քեզի եղաւ Լուսաւորչեան շքանշան,
Քու ճիգերով մարմին առին կրօնական,
Տանարը սուրբ գմբէթներով նուիրական:

*
*
*

Այս պատմական վեհ առիթով ներանձնական,
Քեզի կը մաղթենք առողջութիւն եւ երկար կեանք,
Որ ծառայես Եկեղեցւոյն Հայաստանեայց,
Մինչեւ հասնիս Աստուածային երանութեան:

17 Մայիս, 2013

ՅԻՄՆԱՍԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ
ԳԵՐՅԱՐԳԵԼԻ
ՀԱՅՐ ԵՂԻԱ Ծ. ՎՐԴ. ԳԻՐԷՋԵԱՆ

Հագար ողջո՛յն յոբելեարին,
Եկեղեցւոյ ծառայողին,
Յիսունամեայ իր վաստակին՝
Մեր սիրելի Հայր եղիային:

* * *

Ո՛վ վարդապետ ազնուածին,
Աստուածային օրհնութիւնով,
Կրանիթեայ հզօր կամֆով
Եղար հովիւ հայոց հօտին:

Յիսուն տարի կեանքդ եղաւ
Քրիստոնեայ կեանքով ապրում,
Խոնարհ ու հեզ, սիրով անհուն՝
Քաղցրահնչիւն խօսքով անբաւ:

Քարոզներդ որպէս փարոս,
Լոյս սփռեցին ուղեկորոյս
Ու անհաւատ անհատներուն՝
Պատգամներով գեր-իմաստուն:

Որպէս հովիւ ու հիմնադիր,
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
Եկեղեցին շինել տուիր՝
Կաթողիկէ եւ գրաւիչ:

* * *

Այս առիթով որպէս մաղթանք.—
Ապրիս առողջ, ապրիս երկար,
Երջանկութեամբ ու խանդավառ.
Մենք ալ քեզմով ուրախանանք,
Մինչեւ հասնիս խոր ծերութեան:

ՄԻՐԵԼԻ
ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆԻՆ

Մերոյ Մաշտոցի աւիշով սնուած,
Դուն հանճարածին ժառանգ Մերոպեան,
Սուրբէն փոխանցուած օրհնութեամբ զինուած,
Ողջո՛յն արեւիդ՝ Ռոպէր Հատտէնեան:

Հայոց մեծասանց լեզուին ծառայող,
Անխոնջ ուսուցիչ Սահակ-Մերոպեան,
Անխախտ հաւատով, գրչով առիւնքնող,
Հայ լեզուի պահակ՝ Ռոպէր Հատտէնեան:

Ի վերուստ օժտուած խելով իմաստուն,
Հայ ժողովուրդի գաւակ խոհական,
Հպարտ ենք քեզմով, Մերոպահնչիւն
Կեանքովդ վսեմ՝ Ռոպէր Հատտէնեան:

Հայ թերթի, գիրքի, գրականութեան
Անձնուէր մշակ, աղբիւր անխափան,
Հայակերտումի շունչով նայիրեան,
Կը քալես ընդմիջտ՝ Ռոպէր Հատտէնեան:

Մեր քաղցր լեզուով, «Մարմարա» թերթով,
Յուշատետրերուդ շարքով պատմական,
Ազգային ոգին աննկուն կամքով
Արթուն կը պահես՝ Ռոպէր Հատտէնեան:

Աստուածապարգեւ տաղանդով ծնած,
Մանուկ հասակէն հայոց դպրութեան,
Թարգմանչաց ուխտով ոգեղինացած,
Մշտավառ կանթեղ՝ Ռոպէր Հատտէնեան:

Իմ տկար գրչով, խօսքով սրտագին,
Կը գովերգեմ քեզ ու կը հիանամ
Վաստակին բուրեան՝ չճնաղ ու անգին,
Հայ գիրի վարպետ՝ Ռոպէր Հատտէնեան:

Այժմ կ'աղօթենք, որ կեանքդ ըլլայ
Առողջ ու երկար, բոյրով, դիւթական,
Ազգաշէն միտքդ միշտ պայծառ մնայ,
Պանծալի գրող՝ Ռոպէր Հատտէնեան:

25 Ապրիլ, 2012



ՉՕՆ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾ
ՌԱԶՄԻԿ ԴԱՌՈՅԵԱՆԻՆ

Ողջո՛յն արեւիդ, ողջո՛յն ֆու կեանքին,
Ռազմիկ Դաւոյեան,
Շքեղ ֆանֆարով ֆերթող լուսածին՝
Ազգին Մեսրոպեան:

Ծնունդով բարի, գալուստով արի՝
Նուէր հայութեան,
Ողջո՛յն քեզ ծնող գիւղին Մեծ Պարնի,
Եւ Դաւոյեան տան:

Հայ մշակոյթի միւռոնով օծուած
Մշակ մեղուաջան,
Ողջո՛յն հայաշունչ ձայնիդ օրհնուած՝
Զրվէժ նայիրեան:

Ողջո՛յն վաստակիդ, տոհմաշունչ տենդով՝
Երգերուդ պայծառ,
Հայ հոգին պեղող բոսոր երանգով՝
Գրչիդ ոսկետառ:

Հայ ինֆնութեան հրեղէն բահով
Զինուած սերմնացան,
Ցանած սերմերդ արդար պայքարով
Ատո՛ք հասկ դարձան:

Քու տարեդարձդ Հայ Դատի ռազմիկ
Կը տօնենք այսօր,
Բարեկամներով անկեղծ, մտերմիկ,
Հարազատ ու խոր:

Երկար կեանք քեզի կը մաղթենք միայն
Ի խորոց սրտի,
Գրիչդ դալար մնայ յաւիտեան
Բերքերով յուրօրի:

ՍՈՒՐԻԱՅԻՆ

Արարական ազնիւ երկիր, չֆնադագեղ իմ Սուրիա,
Ուր ծնած եմ եւ անցուցած կեանք մը ամբողջ հայօրէն,
Քեզ կը սիրեմ սրտիս խորէն հպարտանքով հոգեղէն,
Ես՝ հայ որդիդ՝ երախտապարտ սէրս կու տամ քեզ ընծայ:

Ասպետական ոգիով հայ որբերուն եղար մայր,
Բացիր սիրտդ, պարուրեցիր հայ խլեակներ անհամար,
Տուիր արիւն երակներէդ, տուիր աւիշ կենարար,
Երբ գազաններ յօշոտեցին խաբուած ազգ մը հողմավար:

Դուն ալ մեզ պէս պայքարեցար ազգերուն դէմ գաղթարար,
Պատուհասուած տառապելով՝ անգթօրէն շղթայուած,
Բայց ոչ մէկ ոյժ կրցաւ բանտել երազներդ սրբացած,
Ազատութեան անմար ջահդ յաւերժօրէն մնաց վառ:

Քաղաքակիրթ անցեալդ վեհ դուն կը կրես որպէս թագ,
Հազարամեայ կոթողներդ վկաներդ են մեծ փառքիդ,
Կը ճանանչեն պատմութեան մէջ արեւները հանճարիդ,
Հալածելով մութ ստուերներ հորիզոնէդ անպարփակ:

Ազնուական ժողովուրդիդ գետանման ֆրոնինով,
Դուն կը կերտես երջանկութեան ուղիները դժնդակ,
Սիրտս սրտիդ զարկերուն հետ կը տրոփէ ներդաշնակ,
Ուրախ ըլլաս թէ վշտահար առօրեայիդ երկունքով:

Ես կը սիրեմ քու լեռներուդ վէս խոյանքը խելայեղ,
Ու դաշտերուդ անպարագիծ ակօսները բարերբեր,
Քու գետերուդ ու լիներուդ ջուրերը լուրթ, օրհնաբեր,
Զիս կը գերեն իրենց ցովքով հրապուրիչ ու ահեղ:

Ես կը սիրեմ քո արեւը՝ կեանքի աղբիւր վեհագոյն,
Ու գիշերդ դրախտային, նազելանեմ զեփիւռով,
Քու բանակդ հերոսական՝ արթուն պահակ անվրդով,
Հերոսական ժողովուրդիդ, ո՛վ իմ Սուրիա, բի՛ւր ողջոյն:

ՀԱԼԷՊ ՍԻՐԱՍՈՒՆ

Հալէպ սիրասուն, կաթնադրիւր ոստան,
Իմ ծննդավայր ֆաղաֆ պատմական,
Ես քեզ չեմ մոռնար եւ միշտ կը յիշեմ
Քու բարիքներդ, որոնք վայլած եմ:

Ես կարօտցած եմ քու հնադարեան
Բերդը տեսնելու սիրով անսահման,
Որ միշտ կը հսկէ արքայի նման,
Բնակիչներուն ապահովութեան:

Ես կարօտցած եմ անապատային
Զով գիշերներդ՝ լուռ, երազային,
Զեփիւռը գողտրիկ՝ շունչով հեշտագին,
Աչքերս ուղղած աստղով երկինքին:

Ես կարօտցած եմ իմ դպրոցական
Ուրախ օրերը, երբ կը սորվէինք
Հայերէն լեզուն եւ կը խօսէինք,
Կ'երգէինք երգեր յեղափոխական:

Ես կարօտցած եմ Քառասնից Մանկանց
Առաքելական Սուրբ Եկեղեցին՝
Դարերով կանգնած Սալիպէ թաղին
Հայաշունչ կողին եւ լուսաւորած:

Հալէպ կամ Բերիա ֆաղաֆ տարանցիկ
Կարաւաններու առեւտրական,
Բանուկ պահելով մետաքսի ճամբան,
Վաճառականներ՝ արար ու պարսիկ:

Բայց այս օրերուն, օտար, անհամար,
Վարձկան հրձիգներ, ծախուած անխիղճներ,
Անաստուած մարդիկ, վայրագ գազաններ,
Կ'աւրե՛ն, կը ֆանդեն Հալէպը պայծառ:

Սակայն թող գիտնան վայրագ, խառնածին
Ուժերը բոլոր, որ պիտ' չհասնին
Իրենց ծրագրած վատ նպատակին՝
Յաղթելու համար Սուրբոյ բանակին:

Հալէպը բերդ է անխորտակելի,
Զուտ արարական ֆրտինով շինուած,
Պիտ' մնայ ընդմիշտ կանգուն, ամրացած,
Մեր աղօթքներով ու հաւատով լի:



ԱՆԴՐԱՆԻԿ ՉԱԿԻՄ՝
ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Քու ծննդեան թուականէն, Անդրանիկ,
Տարիները եկան անցան ծովի պէս,
Կեանքդ եղաւ բուրումնաւէտ վարդի պէս,
Եւ միշտ եղար ծնողներով երջանիկ:

Արդէն եղար յիսունինը տարեկան,
Եւ միշտ եղար վարժով ազնիւ ու բարի,
Աստուածային օրհնութիւնով ցանկալի,
Որպէս որդի քաղաքավար ու արի:

Ծննդեանդ տարեդարձը տօնելով,
Որպէս ծնողք քեզ կը մաղթենք լաւ օրեր,
Առողջութիւն ու երկար կեանք քանքաբեր,
Հայու պայծառ իմաստութեամբ անվրդով:

Մենք բոլորս քեզ կը սիրենք սիրառատ,
Հպարտութեամբ քեզ կը գովենք ամէն օր,
Ընդգծելով ազնիւ ոգիդ փառաւոր,
Որպէս որդի ծնողասէր, անարատ:

Մենք կը ցանկանք ամէն ծնող հայկական
Տեսնեն իրենց զաւակները կրթուած,
Հայու տոհմիկ իմաստութեամբ օժտուած,
Պատիւ բերեն հայ անունին, հայութեան:

ՄԻՐԵԼԻ ԵՒ ԹԱՆԿԱԳԻՆ
ԱՂՋԿԱՍ՝ ԱՆԻԻՆ

Յիսուսն տարեկան եղար, Անի ջան,
Աստուածապարգեւ զաւակ անձնուէր,
Երկու մանչերդ արդէն իսկ մեծցան,
Պարգեւելով քեզ երջանիկ օրեր:

Մանուկ հասակէդ կը կարդայիր
Գիրքեր հայերէն, պատմական գիրքեր,
Որոնց խորհուրդէն օգուտ քաղեցիր
Անվհասութեամբ գիշեր ու ցերեկ:

Հայկական շունչով, Մեսրոպեան լոյսով,
Զոյգ զաւակներդ եղան ազգասէր,
Որպէս ազնիւ մայր սրտառուչ խօսքով
Զանոնք մեծցուցիր սրտով անվեհեր:

Դուն որպէս զաւակ խղճով քաղցրահամ,
Բիւրեղեայ սրտով սասունցիական,
Քու ծնողներուդ եղար միշտ պաշտպան,
Արժանանալով անոնց օրհնութեան:

Մենք որպէս ծնողք, թանկագին Անի,
Յիսուսամեակիդ ոսկեայ առիթով
Քեզի կը մաղթենք օրեր գեղանի,
Հարազատներով եւ ընտանիքով:

ՄԻՐԵԼԻ ԹՈՌՆԻԿԻՄ՝
ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Ազնուածին Քրիստափոր գեղեցիկ,
Բարի, ազնիւ, մեր թոռնիկը անուշիկ,
Աստուածային օրհնութիւնով սրբազան,
Եղար արդէն տասներինը տարեկան:

Աւարտելով երկրորդական վարժարան,
Հայոց լեզուով ուսանեցար անվարան,
Դպրոցական ընկերներով աննման,
Այցելեցիր Վենետիկ եւ Հայաստան:

Գացիր տեսար Արարատը հոգեթով,
Արագածը՝ Լուսաւորչի կանթեղով,
Բարձր թառած զմրուխտ լինը Սեւանայ,
Եւ ֆաղցրահամ աղբիւրները բիւրեղեայ:

Այժմ որպէս մաքրամաքուր հայորդի,
Դուն կը կրես վեհ արիւնը Սասունի,
Եղիր հպարտ սասունական ծնունդով,
Եւ պայքարիր հոգւով-սրտով անվրդով:

Այս առիթով, Քրիստափոր սիրելի,
Ընդունէ մեր մաղթանքները ցանկալի:
Ապրիր երկար, առողջ կեանքով թաթաւուն,
Իմաստութեամբ եւ աղօթքով աղցուն:

ՄԻՐԵԼԻ ԶՐԻՍՏԱՓՈՐ
ԹՈՌՆԻԿԻՍ

Սիրելի թոռնիկ, Քրիստափոր ջան,
Արդէն դուն եղար ֆսան տարեկան,
Թեւակոխելով երիտասարդի
Սահմանը գողտրիկ ֆաշութեամբ արի:

Հիմա որ դարձար խելահաս, խելօք,
Եւ կրնաս զատել ուղիներ, որոնք
Քեզի կը տանին դէպի բարձրունքներ,
Ու կրնաս առնել ֆայլեր պատուաբեր:

Բայց միշտ յիշելով որ դուն լաւ գիտես
Հայերէն գրել, հայերէն կարդալ,
Եւ պիտի չմոռնաս եւ ջանք պիտ' թափես՝
Հայերէն լեզուով գրել եւ կարդալ:

Այս վեհ առիթով քեզի կը մաղթենք
Երջանիկ օրեր եւ հանելի կեանք.
Ծրագիրներդ իրականան,
Եւ երազներդ միշտ ֆաղցր մնան:

Այսպէս, սիրելի Քրիստափոր ջան,
Քու տարեդարձիդ օրով դիւրբական,
Ընդունիր մեզմէ սիրոյ ողջոյններ,
Եւ Աստուածային բոքք օրհնութիւններ:

ՄԻՐԵԼԻ ԹՈՌՆԻԿԻՄ՝
ՍՏԵՓԱՆ-ԱՐՄԷՆԻՆ

Արդէն եղար եօթ տարեկան,
Շատ սիրելի Ստեփան,
Հասակ առիր, մարմնով մեծցար,
Մեր բոլորէն սիրուեցար:

Տարի մըն ալ անցաւ արագ,
Քու ծնունդէն երկնառաֆ,
Ուրախութեան բոյրը ֆնֆոյշ,
Մեզ կը բերէ ֆաղցր յուշ:

Ուրախ եմք, որ դպրոց կ'երթաս,
Ընկերներով միշտ կը խաղաս,
Իսկ դասերուդ պահը որ գահը,
Լրջութիւնդ իսկոյն կու գայ:

Գիտե՞ս որքան ֆեզ կը սիրենք,
Քու կենցաղով հպարտ եմք մենք,
Շնորհներով Աստուածային,
Դուն կը մնաս մեր սիրելին:

Այս առիթով ֆեզ կը մաղթենք,
Առողջութիւն եւ երկար կեանք,
Ապրիս, մեծնաս, Մեծ Մարդ դառնաս,
Ծնողներդ չմոռանաս:

ԳԻՏԵՄ ԴՈՒՆ,
ՎԱՐԱԳ ՊԱՊԵԱՆ

Գիտե՞ս դուն, վարագ, երբ մանուկ էիր,
Կը յանախէիր Հոթոյեաններուն
Մանկամտուրը՝ բարութեամբ գեղուն,
Ուր հօրքուր Շաֆէն քեզ կը խնամէր:

Երեք տարեկան տակաւին չեղած,
Դուն աւարտեցիր մանկամտութեան
Շրջանը բոլոր՝ կարօտով բուրեան,
Հասակով մեծցած, միտքով զարգացած:

Արժանանալով Հոթոյեաններուն
Մանկամտութի վկայականին,
Դուն հետեւեցար ուսումիդ կրկին,
Սորվելու համար հայերէն լեզուն:

Հ.Օ.Մ.ի Պապայեան մանկապարտէզի
Աշակերտ եղար՝ վարժով գովելի,
Ապա՝ Գոլուեան նախակրթարանի,
Միջնակարգի եւ երկրորդականի:

Ներկայիս դարձած հայութեամբ սնած
Երիտասարդ մը՝ հմայքով պայծառ,
Գործով, երազով, ապրումով վարար,
Ազգին ծառայող, ազգին նուիրուած:

Արդէն կը վարես ձեռնարկներ բազում,
Բացման խօսքերով՝ խորունկ, խոհական,
Պատշաճ պատգամներ կու տաս հայութեան,
Ազգասիրական խորքով աուլցուն:

ԱՆՑԵԱԼՍ ՏԵՈՒՐ

Իմ կեանքը անցաւ առանց մանկութեան,
Առանց ուշագրաւ վառ գարուններու,
Սիրտս նուաճող անկեղծ սէրերու,
Առանց վայելելու կեանք մը փաղցրահամ:

Տխուր կեանքս, օրերս դաժան,
Կ'ապրէի կարօտ մայրական սէրին,
Մայր չունենալու ահաւոր ցաւին,
Միշտ անիծելով բախտս տարածամ:

Ի գուր փորձեցի հեռանալ բախտէս,
Նոր միջավայրի մէջ կայք հաստատել,
Պայքարիլ ընդմիշտ եւ միշտ երազել,
Գտնելու համար սիրտ մը սիրակէզ:

Որո՞ւ բողոքեմ եւ սիրտս բանամ,
Ինչպէ՞ս համբերեմ տխուր վիճակիս,
Յիշելով անյոյս օրերը կեանքիս,
Ա՛խ, ինչպէ՞ս մոռնամ եւ ուրախանամ:

Ծնած ըլլալով Մեծ Եղեոն տեսած,
Գաղթականականի սեւ օրերը ապրած,
Թուրք գազաններու ջարդէն ազատած,
Հայ ընտանիքի յարկին տակ փաղցած:

Սակայն ժառանգած ոգին հայկական,
Ուխտած եմ ապրիլ սիրառատ կեանքով,
Մարդկային ազնիւ զգացումներով,
Հասնելու համար երազիս դրան:

5 Օգոստոս, 1945

Հալէպ

ՎԵՐԱԾՆՈՒՆԳ

Հազար ինն հարիւր տասնըհինգ թիւին,
Երիտասարդ Թուրքեր որոշում առին,
Միանգամընդմիջտ Թուրքիոյ տարածքին
Հայ ազգը համայն ջնջել փորձեցին:

Շուրջ երկու միլիոն անմեղ ժողովուրդ
Իրենց տուներէն, պատմական երկրէն,
Հազարամեակներ ապրած հողերէն
Քշուեցան դէպի անապատ,

Որպէսզի կիզիչ արեւէն այրին,
Անօթի-ծարաւ հիւծին ու մեռնին,
Ալ հայ չմնայ աշխարհի վրայ,
Տէր Զօրը անթաղ գերեզման դառնայ:

Բայց Հայկեան ոգին մնաց կենդանի.
Մեռած հայ ազգը յարութիւն առաւ,
Եւ յաղթանակով Սարտարապատի
Հայ ժողովուրդը վերածնուեցաւ:

Եւ հռչակուեցաւ անկախ պետութիւն
Քսանութ Մայիս մէկ ինը մէկ ութին,
Ունեցանք կրկին դրօշ հայկական,
Պետական բանակ եւ զինանշան:

ՁՕՆ՝ ԳԵՐԱՊԱՏԻՒՄ ՏԷՐ ՄԵՂՐԻԿ
Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆԻՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՒ

Հայ կրօնական երկնակամարին
Նոր աստղ մը փայլուն ծագեցաւ այսօր,
Եպիսկոպոս մը՝ Մեղրիկ Բարիքեան,
Մեղրի պէս քաղցր՝ հովիւ ընդոծին:

Սրտանց կ'ողջունենք օծումդ արդար,
Գերաշնորհ Տէր Մեղրիկ Սրբազան,
Քսանհինգ տարի անճնագոհութեամբ
Ծառայելով եպիսկոպոս դարձար:

Որպէս փոխանորդ Առաջնորդական,
Աստուածապարգեւ ջինջ իմաստութեամբ,
Նոր ուղի բացիր հոգեւորական,
Վարելով Թեմը սիրով անսահման:

Բարոյական վեհ օրինակներով,
Կրօնական ջերմ մօտեցումներով,
Լուսաւորեցիր հայ մանուկներու
Եւ տարեցներու սիրտերը յոյսով:

Եկեղեցական շարականներով,
Սաղմոսներով եւ աղօթքներով ու
Աստուածային սուրբ օրհնութիւններով,
Կեանքդ դարձուցիր կանթեղ մշտավառ:

Հոգեհարազատ ընթերցումներով,
Առակներով ու Յիսուսի կեանքով,
Լուսաւորելով հայ ուխտաւորներ,
Միշտ աղօթելով փրկեցիր կեանքեր:

Որպէս երաժիշտ, որպէս խմբավար,
Երգչախմբային խումբեր կազմեցիր,
Ազգային տօներ՝ Ծնունդ, Սուրբ Զատիկ,
Յիշատակուեցան համազգայնաբար:

Որպէս հովիւ ու մտաւորական,
Բանաստեղծ, գրող, հրատարակիչ,
Լոյս տեսան գիրքեր վերլուծական եւ
Պաշտօնաթերթեր եկեղեցական:

Որպէս շինարար հոգեւոր հովիւ,
Սիրուած, յարգուած բարերարներէն,
Սուրբ Աստուածածին մեր եկեղեցին
Հայկական ռնով պայծառացուցին:

*
*
*

Այս պատմական եւ ուրախ առիթով,
Մեղրիկ Սրբազան, երախտապարտի
Իմ որդիական ջերմ յարգանքներով
Եւ անհուն սիրով քեզի կը մաղթեմ
Առողջութիւն եւ արեւշատութիւն,
Եւ Աստուածային սէր ու օրհնութիւն,
Որ հայու շունչով ու սուրբ հաւատով,
Ընդմիշտ զօրանանք, բոցաբէս սիրով
Հայ լեզուն իշխէ մեր ազգի կեանքին,
Ապրինք Յիսուսի փառքով լուսածին:

27 Ապրիլ, 2014
Թորոնթօ

ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՐՄՆՑՈՒՑԻՆՔ ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐԵԱՆԸ



Ամսուն 13-րդ օրուան զուգադիպող Ուրբաթ օրը անբախտութիւն, անյաջողութիւն եւ արկածներու հաւանականութիւն պարունակելուն համար, Գանատայի ամբողջ տարածքին ընդունուած նախապաշարումին մենք՝ հայերս չենք հաւատար: Այդ թիւին հանդէպ ժողովուրդին համար ապահովութիւն ըստեղծելու նկատումով, Գանատայի բոլոր վերելակներուն մէջ թիւ 13 գոյութիւն չունի, զայն

փոխարինելով թիւ 14-ով:

Արդարեւ, Ուրբաթ, 13 Նոյեմբերի առաւօտեան, TORONTO HOSPITAL - GENERAL DIVISION-ի մէջ, 41 տարեկան գարուն հասակին, յետ երկարատեւ հիւանդութեան երկրաւոր կեանքէն կը հեռանար մաքրամաքուր եւ հաւատաւոր դաշնակցական, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ նուիրեալ ծառայ, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգաբարձութեան նախկին ատենապետ, ներկայիս Գանատայի Հայոց Թեմի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ազգային երեսփոխան, Հ. Յ. Դաշնակցութեան Գանատայի պաշտօնաթերթ «Հորիզոն» շաբաթաթերթի թղթակից եւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթի աշխատակից ընկեր Սարգիս Ղազարեանը, իոր սուգի մատնելով իր ընտանիքին անդամները, հարազատները, կուսակցական ընկերները եւ զինք սիրող բարեկամները:

Հանգուցեալ ընկերոջ տան կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 17 Նոյեմբեր 2009, երեկոյեան ժամը 7-9, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ: Դազաղը ծածկուած էր Հ. Յ. Դաշնակցութեան դբօջով:

Եկեղեցական արարողութիւններուն մասնակցեցան Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հո-

գեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Սէնթ Քաթրինզի Ս. Պողոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Գեղարդ Վրդ. Քիւսպէկեան, Քէմպրիճի Ս. Նշան Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Կոմիտաս Ա. ՔՀՆյ. Փանոսեան, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերայարգելի Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան եւ խումբ մը սարկաւազներ:

Եկեղեցական պատշաճ եւ տխուր արարողութիւններէ ետք, ննջեցեալ ընկերոջ կենսագրութիւնը կարգաց հայերէնով Գրիգոր Հոթոյեան, իսկ անգլերէնով՝ Ժան Պասմաճեան:

Սրտի խօսքով հանդէս եկան հանգուցեալին եղբայրը՝ ընկեր Շանթ Ղազարեան, այրին՝ տիկին Անի Ղազարեան, զաւակները՝ Իշխան եւ Արիանէ Ղազարեաններ եւ եղբօր զաւակները՝ Նանէ, Գառնի եւ Դուին Ղազարեաններ:

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաժակ Ս. Արք. Յակոբեանի ցաւակցական գիրը կարգաց Հոգեշնորհ Տ. Գեղարդ Վրդ. Քիւսպէկեան, Մոնթրէպլէն՝ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ պատուակալ հովիւ Արժանապատիւ Տ. Արմէն Աւագ ՔՀՆյ. Իշխանեանի ցաւակցական գիրը կարգաց Արժանապատիւ Տ. Կոմիտաս Աւագ ՔՀՆյ. Փանոսեան:

Սրտի խոր կսկիծով եւ յուզումով խօսք առաւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, եւ, որպէս տարիներով հանգուցեալին հետ գործակցած անձ, ընդգծեց անոր ունեցած հաւատքն ու նուիրումը Հայաստանեայց Եկեղեցւոյ, ազգին եւ հայրենիքին հանդէպ, թուելով անոր անձնուէր ծառայութիւնները հայ դատին եւ հայ գիրին ու գրականութեան:

Հանգուցեալ ընկերոջ տան կարգը իր լրումին հասաւ մեծ թիւով ներկաներուն կողմէ երգուած Տէրունական Աղօթքով:

ԹԱՂՍԱՆ ԿԱՐԳԸ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հանգուցեալ ընկեր Սարգիս Ղազարեանի թաղման եւ յուղարկաւորութեան եկեղեցական արարողութիւնները տեղի ունեցան Զորեքչաբթի, 18 Նոյեմբեր 2009, կէսօրէ առաջ ժամը

11-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ, ներկայութեամբ հոծ թիւով հարազատներու, կուսակցական ընկերներու եւ բարեկամներու:

Եկեղեցական արարողութիւններուն մասնակցեցան Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Սէնթ Քաթրինզի Ս. Պօղոս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տէր Գեղարդ Վրդ. Քրլսպէկեան, Քէմպրիճի Ս. Նշան Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Կոմիտաս Աւագ Քհնյ. Փանոսեան, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Զարեհ Աւագ Քհնյ. Զարգարեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերայարգելի Նղիա Ծ. Վրդ. Գիրէջեան եւ խումբ մը սարկաւազներ:

Եկեղեցական արարողութիւններու աւարտին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Կեդրոնական Կոմիտէի, Թորոնթոյի «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէութեան եւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու անունով խօսք առաւ ընկեր Յակոբ Ճանապարհեան եւ սրտի խօսքով ու դամբանականով անդրադարձաւ հանգուցեալ ընկերոջ ազգային եւ կուսակցական կեանքին, թուելով անոր մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան տարիներուն անոր ընծայումն ու նուիրումը Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարաբանութեան եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ առաքելութեան, ընդգծելով նաեւ անոր մտաւորական, ղեկավարի եւ գրելու կարողութիւնները:

«Հորիզոն» շաբաթաթերթի խմբագիր ընկեր Վահագն Գարագաշեան խօսք առաւ եւ «Հորիզոն»ի խմբագրութեան, անձնակազմին եւ ընթերցողներուն անունով ցաւակցական արտայայտութիւններ ունեցաւ, անդրադառնալով հանգուցեալ ընկերոջ տարիներէ ի վեր «Հորիզոն»ի բարգաւաճման համար կատարած աշխատանքներուն, մանաւանդ յայտարարութիւններ ապահովելու գծով, «Հորիզոն»ը ներկայացնելով Գանատայի միջ-համայնքային մամուլի համախմբումին եւ կատարած թղթակցութիւններով:

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ սարկաւազներէն Բարեշնորհ Կարօ Աւագ Սարկաւագ Սար-

գիսեան կարդաց հանգուցեալ Սարգիս Ղազարեանի կողմէ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին մէջ գրած «Յիսուսաբոյր պատանիին սիրտը» կրօնաշունչ եւ յուզիչ յօդուածը:

Ապա խօսք առաւ Գերապատիւ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան՝ անդրադառնալով հանգուցեալին կեանքին, զոհաբերուող ոգիին, հայրենասիրութեան, ազգասիրութեան եւ կրօնասիրութեան: Իր, Ազգային Իշխանութեան, հոգաբարձութեան, կանանց յանձնախումբին, երէց եւ կրտսեր «Ազնաւորեան» զըպրաց դասերուն ցաւակցութիւնները յայտնեց Ղազարեան եւ Պասմաճեան ընտանիքներուն:

Կրօնական արարողութիւններէն ետք, սգակիրներու ինքնաշարժները ուղղուեցան Նորթ Եորք գերեզմանատունը, ուր ընկերոջ դագաղը հողին յանձնուեցաւ կրօնական արարողութիւններէ եւ ներկաներու կողմէ երգուած «Վէրքերով լի ջան ֆիտայի» երգէն ետք:

Հանգուցեալ ընկերոջ դագաղը ծածկած Դաշնակցութեան դրօշը «Ս. Թէհլիրեան» Կոմիտէի հերթապահ ընկ. Գըլըպոզեանի ձեռամբ յանձնուեցաւ հանգուցեալ ընկերոջ տիկնոջ:

Թաղման կարգէն ետք, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ՝ հանգուցեալ ընկերոջ յիշատակին եւ հոգիին հանգստեան համար:

ԱՄՓՈՓ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Սարգիս Ղազարեան ծնած է 3 Նոյեմբեր 1968-ին, Պէյրուլթ, Լիբանան: Նախնական կրթութենէն ետք յաճախած է Պէյրուլթի Սուրէն Խանամիրեան Ազգային Գոլէճը եւ աւարտելէ ետք եղած է անոր Շրջանաւարտից Միութեան հիմնադիրներէն մէկը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին չէ կրցած իրագործել համալսարանական ուսման իր ծրագիրները եւ ընտանեկան ապրուստը ապահովելու համար նետուած է կեանքի ասպարէզ եւ ստանձնած է իր հօրը գործատեղիին պատասխանատըւութիւնը եւ իր ունեցած նոր գաղափարներով ընդլայնած եւ զարգացուցած գործատեղիին գործունէութիւնը, նուաճելով նորանոր յաջողութիւններ:

1989-ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմին, հայկական թաղամասերը պաշտպանելու ընթացքին զոհուած իր մօրեղբօր՝ Եղիկ Գայայեանի մահը պատճառ կը դառնայ, որ Ղազարեան ընտանիքը որոշէ հեռանալ Լիբանանէն եւ հաստատուիլ ապահով երկիր մը, այս պարագային՝ Գանատա, միանալով իրենց հօրեղբօր ընտանիքին:

Հանգուցեալ Սարգիս Ղազարեան Թորոնթօ (Գանատա) դալով, կրկին ստանձնեց իր ընտանիքին պատասխանատուութիւնը՝ աշխատանքի լծուելով, միեւնոյն ատեն հետեւելով արհեստի մասնագիտական դասընթացքներուն:

Յուլիս 1993-ին ան ամուսնացաւ Օր. Անի Պասմաճեանին հետ եւ անոնք բախտաւորուեցան երկու զաւակներով. 1995-ին ծնաւ Իշխանը եւ 2001-ին՝ Արիանէն, ստեղծելով հայկական տոհմիկ բոյն մը:

Սարգիս Ղազարեան, Լիբանանի մէջ, տասը տարեկանէն սկսեալ մաս կազմած է տեղւոյն Հ. Յ. Դ. Պատանեկան Միութեան, ապա՝ Հ. Յ. Դ. Երիտասարդական Միութեան, միեւնոյն ատեն եղած է գործօն անդամ Հ. Ե. Հ. Ո. Մ.-ին (Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդական Ուսանողական Միութիւն):

Փոխադրուելով Թորոնթօ, ան անդամակցած է Հ. Յ. Դ. «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէութեան շարքերուն: Մինչեւ իր ցաւալի եւ անժամանակ մահը, ան իր կարողութեան սահմաններուն մէջ ծառայեց հայ ժողովուրդին եւ հայ եկեղեցիին, ըստանձնելով զանազան պաշտօններ եւ պարտականութիւններ:

2003 թուականին, Գանատայի Ազգային Առաջնորդարանի Կրօնական Դաստիարակութեան կողմէ որպէս երիտասարդական ներկայացուցիչ մասնակցեցաւ Անթիլիասի մէջ տեղի ունեցած Հայ Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Համագումարին:

Եկեղեցական աշխատանքները իր սրտին մօտ ըլլալով, մաս կազմեց Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ երկու շրջան, 2003-2005 եւ 2005-2007, չորս տարիներ վարեց հոգաբարձութեան ատենապետի պաշտօնը: Իր հիւանդութեան պատճառով, ստիպուած, չկրցաւ շարունակել հոգաբարձութեան ատենապետի պաշտօնը, սակայն եկեղեցւոյ անդամական ընդհանուր ժողովը մեծամասնութեան ձայնով զինք ընտրեց որպէս Գանատայի Հայոց Թեմի ազգային երեսփոխան:

Հանգուցեալ Սարգիս ունէր գրական հակումներ եւ գրելու շնորհք: Ան կրօնաշունչ յօդուածներով եւ պատմուածքներով աշխատակցեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին, ինչպէս նաեւ որպէս աշխատակից, թղթակից եւ ներկայացուցիչ մաս կազմեց Հ. Յ. Դաշնակցութեան Գանատայի պաշտօնաթերթ «Հորիզոն» շաբաթաթերթին: Ան միեւնոյն ատեն ժամանակ տրամադրեց եւ մաս կազմեց Գանատայի Համայնքային մամուլի համախմբումին եւ իր անձնուէր գործունէութեան համար յատուկ գնահատագիր ստացաւ համախմբումի վարչութենէն:

Երկարատեւ եւ անողոք հիւանդութիւնը յաղթահարելու համար քաջբար դիմադրեց իր մարմնական ցաւերուն, միշտ ապրելով յոյսով եւ հաւատքով, մինչեւ այն օրերը երբ տակաւին արթուն էր: Սակայն սրտի գործողութեան եւ նոր սրտի մը տեղադրումէն ետք երբեք չարթնցաւ եւ մեկնեցաւ երկրային կեանքէն, միանալով իր սիրեցեալ հօրը եւ մօրը:

Խոնկ եւ աղօթք եւ լոյս մշտնջենական իր բարի հոգիին:



ՅԵՏ ՄԱՀՈՒ ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐԵԱՆԻՆ

Սիրելի Սարգիս,

Քու աննախատեսելի, անընդունելի եւ անժամանակ մահը խորապէս ցնցեց Թորոնթոյի հայ գաղութը եւ սրտաբեկ վիշտ ու ցաւ պատճառեց քու ընտանեկան պարագաներուդ, հարազատներուդ, ընկերներուդ, բարեկամներուդ, ինչպէս նաեւ գործընկերներուդ, յաճախորդներուդ եւ քու երիտասարդ տարիքիդ երկրաւոր կեանքէդ հեռանալդ ափսոսանքով լսողներուն, որոնք երբեք պիտի չմոռնան քու մարդկային զգացումներդ եւ ծառայութիւններդ հայ ազգային եւ կրօնական ասպարէզնե-

րուն մէջ: Ուր որ պէտք ունեցած են քեզի, միշտ «ներկայ» եւ «այո» ըսած ես, նիւթական եւ բարոյական օժանդակութիւն բերելով ազգային եւ կրօնական հաստատութիւններուն, նաեւ օգնելով անոնց, որոնք նման ծառայութիւններու մէջ են:

Քու բարի եւ ազնիւ հոգիդ, քու ունեցած յարգանքդ ու զնահատանքդ հայ եկեղեցականներու, հայ մտաւորականներու, կուսակցական ղեկավարներու եւ ընդհանրապէս հայ ազգային ծառայութեան նուիրուած անձերու, միշտ զնահատուած է եւ այդ բոլորը որպէս քու նկարագրիդ գլխաւոր յատկանիշները, իբրեւ պատուոյ շքանշան պիտի մնան քու անունիդ կուրծքին վրայ, որպէս յիշատակ անմոռացութեան:

Ինչպէ՞ս կարելի է մոռնալ քու գործատեղիդ՝ «Կուտերը» ընդարձակ գրասենեակը եւ սպասման սրահը, փոքրիկ Հայ Կեդրոնը, ուր գրեթէ ամէն օր կը հաւաքուէին, առնուազն կ'այցելէին հայ եկեղեցականներ հայկական երեք համայնքներէն, ազգային եւ կուսակցական ղեկավարներ եւ հայ մտաւորականներ եւ ուսուցիչներ, որոնք իրենց ինքնաշարժերուն նորոգութեան տրուած ժամանակամիջոցին կը գրուցէին ազգային եւ միջազգային հարցերու, հայ գրականութեան, հայ մամուլի վերջին նորութիւններուն եւ անկախացած հայրենիքի ժողովուրդին թերութիւններուն, յաջողութիւններուն եւ ապագայ հեռանկարներուն մասին, եւ այս բոլորէն ետք, անոնց ինքնաշարժի նորոգութեան ժամանակաշրջանի լրումէն ետք, երբ ենթակաները կը պատրաստուէին վճարել նորոգութեան գինը, դուն կ'ըսէիր «վճարուած է»: «Բայց ո՞վ վճարեց, Սազօ» ըսողներուն կ'ըսէիր՝ «ազգը, որուն ծառայութեան նուիրուած էք անհատոյց»: Այս կը փաստէր քու ազգային գիտակցութիւնդ եւ ազգին համար ծառայութեան նուիրուած անձերուն հանդէպ քու ունեցած զնահատական ոգիդ, նիւթական եւ բարոյական հասկացողութեամբ:

Քու նկարագրիդ ազգային եւ համամարդկային յատկանիշները թուել եւ արձանագրել իրենց իրական արտացոլումով եւ պատկերացումով՝ իրապէս դժուար է եւ նման խօսակցութիւններ երբեք քեզի հաճելի կրնան չթուիլ, նկատի առած քու հեզ, խոնարհ եւ իր անձին հանդէպ գովասանքներէ խուսափող անձնաւորութիւնդ, որ նուիրուած է իր ծնողքին, ընտանիքին, հարազատներուն, բարեկամներուն, ընկերներուն եւ իր օժանդակութիւնը խնդրողներուն՝ ամենայն զոհաբերութեամբ:

Հանգուցեալ Սարգիս Ղազարեանի մասին, մանաւանդ իր մահուան քառասունքին առթիւ իր մասին գրելը զիս լրջօրէն կը տառապեցնէր, որովհետեւ մինչեւ սոյն թուականը չեմ հաշտուած եւ հաւատացած իր կորուստին, միշտ այն ակնկալութեամբ, որ իր գործատեղին երթալով զինք պիտի տեսնեմ իր գրասենեակին մէջ կամ յաճախորդի մը հետ խօսակցութեան ժամանակ:

Սակայն իրականութիւնը կու գայ զիս համոզելու, որ իմ եւ իր լաւատեսութիւնները, բժշկական քիչ մը ուշացած օգնութիւնները, մեր բոլորին աղօթքները, սուրբերուն սրբասացութիւնները չկրցան փոխել մեր Երկնաւոր Հօր որոշումը: Հաւանաբար մեր Երկնաւոր Հայրը վերը պէտք ունի իրեն նման ազնւոգի երիտասարդ հայ որդիներու, իր կամքը եւ զգացումները տարածելու համար համայն մարդկութեան՝ քրիստոնէական սիրով եւ կեանքով: Այս առիթով մեր կրած ցաւը մեր գործունեայ եւ մաքրամաքուր ընկերներէն Վարուժան Պասթաճեանի, Վիգէն Աճէմեանի եւ Ենովք Եղիայեանի կորուստին առթիւ տակաւին չսպիացած, ահա նոր ցաւ մը, աւելի երիտասարդ հասակին՝ ընկեր Սարգիս Ղազարեանի, մեզ ձգելով անմխիթարելի կացութեան մը մէջ:

Ընկեր Սարգիսին ծանօթացայ հաւանաբար 1990-էն վերջ, Հայ Կեդրոնին մէջ: Ինծի մօտեցաւ շուրջ 20-22 տարեկան երիտասարդ մը եւ իր անունը տալէ ետք խնդրեց, որ 1987-ին իմ հրատարակած «Սիրտը Ափին Մէջ» գիրքէս ունենայ: Ուրախացայ եւ գնահատեցի զինք, որ տակաւին հայ երիտասարդներ գոյութիւն ունին, որոնք կը հետաքրքրուին հայ բանաստեղծութեամբ եւ գնել ալ կ'ուզեն:

«Հորիզոն» շաբաթաթերթի դարակէս հանցի գիրք մը եւ իր անունին մակագրելով ուզեցի նուիրել իրեն: Ընկերը ստիպեց, որ փոխարժէքը անպայման վճարէ եւ 40 տոլար վճարելով չորս գիրք ուզեց գնել: Երբ իրեն հարցուցի, թէ ինչո՞ւ չորս գիրք կ'ուզէ գնել, ըսաւ, թէ մնացեալ երեքը պիտի նուիրէ բարեկամներուն, ձեռով մը քաջալերելու համար բանաստեղծը եւ առիթ ստեղծելու իր բարեկամներուն, որպէսզի հայ բանաստեղծութիւն կարգան:

Այնուհետեւ իրարու աւելի մօտէն ծանօթանալով, ի յայտ եկաւ, որ իր հայրը կը կոչուի Ղազար եւ իմ հայրս ալ կը կոչուէր

Ղազար, իր մայրը կը կոչուի Մարիամ, իմ մայրս ալ կը կոչուէր Մարիամ: Աստուածային զուգադիպութեամբ՝ ծնողական անուանական նմանողութեամբ դարձանք եղբայրներ, թէեւ տարիքի մեծ տարբերութեամբ:

Իր գրասիրութիւնը, իր հանգուցեալ հօր՝ Ղազարին ազնուութիւնը, եղբայրներուն՝ Շանթին եւ Վարդանին ազգային եւ կուսակցական զգացումները զիս կապեցին այս ընտանիքին, տակաւին այն գիտակցութեամբ, որ ես իմ ուսանողական տարիներուս մինչեւ շրջանաւարտ ըլլալս Հալէպի Ազգային Սահակեան Վարժարանէն՝ կը կոչուէի Գրիգոր Ղազարեան, եւ վրկայականիս վրայ գրուած էր Գրիգոր Ղազարեան: Այս ալ նախախնամական կարգադրութիւն մը նկատելով եւ ընդունելով, Ղազարեան ընտանիքին հետ մեր յարաբերութիւնները եղան ազգականական, եւ այդ իմաստով, մեր ընտանիքը միշտ հրաւիրուեցաւ իրենց զաւակներուն մկրտութեան եւ խրախճանքներուն:

Երբեք չեմ մոռնար Ղազարեան եղբայրներուն հայ մշակոյթին եւ գրականութեան հանդէպ ունեցած սէրը եւ քաջալերանքը, որոնց կը հանդիպէի մեր խօսակցութիւններուն ընթացքին: Այդ տպաւորութեան տակ, Սարգիսին ըսի, որ Հայաստան այցելութեանս ընթացքին կրկին հանդիպեցայ մեծատաղանդ բանաստեղծ, պատմաբան, Հայոց Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» հիմնարկ-թանգարանի տնօրէն եւ գիտական խորհուրդի նախագահ Սասուն Գրիգորեանին, որ ինձմէ խնդրեց որ իրեն օգնեմ՝ Թորոնթոյէն մեկենաս մը գտնելու, որպէսզի հրատարակէ «Դէպի Էրզիր» բանաստեղծութիւններու 640 էջնոց հատորը: Ես ալ Սարգիսէն խնդրեցի, որ երեք եղբայրներ յանձն առնեն հրատարակել բանաստեղծ Գրիգորեանի այս հատորը, ի յիշատակ իրենց վաղամեռ մօրը յիշատակին:

Ուրեմն, Ղազարեան եղբայրներ, խորհրդակցելէ ետք, ինձի յանձնեցին խնդրուած գումարը՝ 1500 ամերիկեան տոլար: Այդ գումարը ես ընկեր Վրէժ Աւագեանի միջոցաւ ղրկեցի Երեւան եւ տպուեցաւ «Դէպի Էրզիր» պատկառելի բանաստեղծութիւններու, քառեակներու եւ պոէմներու գիրքը, որուն առաջին էջին վրայ, հանգուցեալ Մարիամ Ղազարեանի նկարին տակ տըպուած էր հետեւեալ գրութիւնը.— «Այս հատորը հրատարակուեցաւ մեկենասութեամբ Ղազար Ղազարեանի եւ իր զաւակներուն՝ Սագօ, Շանթ եւ Վարդան Ղազարեաններու, իրենց սիրելի

կնոջ եւ մօր՝ Հանգուցեալ Մարիամ Ղազարեանի անթառամ յիշատակին: Նկատի ունենալով, որ Հանգուցեալը Հայրենասիրական սուրբ զգացումներով տոգորած եւ մեծցուցած է իր զաւակները, անոնք իրենց վաղամեռիկ մօր յիշատակին իբր կնդրուկ եւ աղօթք կը ձօնեն Սասուն Գրիգորեանի «Դէպի Էրզիր» գրքի հրատարակութիւնը: Շնորհակալութիւն ազնիւ մեկենասներուն: Երեւան, 2000»:

Այնուհետեւ, Հանգուցեալ Սարգիս Ղազարեանէն, իր կուսակցական պարտականութիւններուն կողքին, խնդրեցի, որ «Հորիզոն» շաբաթաթերթին համար գաղութի կարգ մը ձեռնարկներու թղթակցութիւնները ինք ընէ, երկու նկատումներով: Առաջինը՝ իմ յառաջացեալ տարիքս նկատի առնելով, «Հորիզոն»ի համար պատրաստեմ երիտասարդ թղթակից մը, երկրորդ՝ գրելու իր ընդունակութիւնները զարգացնելով, մղել գինք, որպէսզի նաեւ յօդուածներ ստորագրէ «Հորիզոն»ին մէջ, պատրաստակամութիւն ցոյց տալով սրբագրութիւններ կատարելու՝ ի հարկին:

Ընկեր Սարգիս, մինչեւ իր հիւանդութեան ծանրագոյն աստիճանին հասնիլը, շարունակեց ծառայել «Հորիզոն»ին թղթակցութիւններով եւ առեւտրական ծանուցումներով:

Հանգուցեալ ընկեր Սարգիս չորս տարի ստանձնեց Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետի պաշտօնը եւ վարեց ձեռնահասութեամբ ու նուիրումով, ներդաշնակ աշխատանք ստեղծելով հոգաբարձութեան անդամներուն հետ, ապա, իր նոր սկսած անհանգստութիւնը նրկատի առնելով, չուզեց վերընտրուիլ հոգաբարձութեան, սակայն ընտրուեցաւ ազգային երեսփոխան:

Ան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ծառայութեան ընթացքին, իր յօդուածներով եւ պատմուածքներով աշխատակցութիւնը բերաւ եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին, որոնց մէջ արտայայտեց իր սէրն ու հաւատքը հայութեան եւ քրիստոնէութեան, իր կեանքով եւ գաղափարներով օրինակ դառնալով ուրիշներուն:

Ան իր երկարատեւ հիւանդութեան ընթացքին իր հաւատքը երբեք չկորսնցուց, որ իր առողջութիւնը պիտի վերագտնէ: Իմ հարցումներուս իր առողջութեան մասին, անձամբ եւ հեռաձայնով, միշտ կը պատասխանէր. — «Ես շատ լաւ եմ, դուն ինչպէ՞ս ես»: Եւ միայն մէկ անգամ, երբ վերջին անգամ հիւանդա-

նոց կը մտնէր, հեռաձայնեց ըսելով, որ «Ես հիւանդանոց եկայ այսօր, լաւ չեմ, երիկամներս չեն աշխատիր, քեզի նորէն կը ձայնեմ»:

Եւ վերջին անգամ, Նոյեմբեր 12-ի գիշերը, իր սքանչելի եւ նուիրեալ տիկինը՝ Անին զիս հրաւիրեց, որպէսզի հիւանդանոց գամ: Ես եւ Ժագ Վարպետեանը TORONTO GENERAL հիւանդանոցը հասանք: Հոն էին եղբայրները իրենց տիկիններով եւ զաւակներով: Շատ ցաւալի էր տեսնել սիրելի Սագօն զգայազիրկ, բազմաթիւ բժշկական գործիքներ վրան: Յուզուած տուն վերադարձայ, գիշերը ամբողջ անքնութեամբ տառապելով: Իսկ առտու՝ բօթը տարածուեցաւ ամէնուրեք, Ուրբաթ, 13 Նոյեմբեր 2009-ին:

*
**

Սիրելի Սարգիս, երբեք, երբեք պիտի չմոռնամ քեզ, քու որդիական, եղբայրական, ընկերական զգացումներդ ինծի եւ իմ ընտանիքիս հանդէպ: Դուն մեռած չես մեզի համար, քու յիշատակդ անթառամ պիտի մնայ մեր հոգիներուն մէջ, իսկ քու հոգիդ վստահօրէն իր տեղը ապահոված է դրախտին մէջ:

Լոյս մշտնջենական քու բարի հոգիիդ:

ՀԱՅ ԵՐԳԻ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ
ՆՈՒԻՐԵԱԼ ԳՈՐԾԻՉ
ԸՆԿ. ԷԴԻԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ
ՈՉ ԵՒՍ Է

Ուրբաթ, 9 Սեպտեմբեր 2011-ին, առաւօտեան ժամը 4:00-ին, Թորոնթոյի Նորթ Եորք հիւանդանոցին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան, իր երկրաւոր կեանքէն հեռացաւ Հայ երգի եւ երաժշտութեան նուիրեալ գործիչ, երաժշտագէտ, յորինող, խմբավար, ջութակահար եւ դաստիարակ ընկեր Էդիկ Յովսէփեանը, խոր յուզումի մատենելով իր ընտանեկան պարագաները, աշխարհասփիւռ իր աշակերտները, երաժշտագէտները, Հայ երգի եւ երաժշտութեան աղբիւրներէն ջուր խմող երաժշտասէրները եւ իր գործակիցները:



Եկեղեցական տան կարգը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 12 Սեպտեմբեր 2011-ին, երեկոյեան ժամը 7:00-9:00, Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ մէջ, ներկայութեամբ հոծ թիւով սգակիր հայորդիներու:

Եկեղեցական արարողութիւններու կարգին, Յովսէփեան ընտանիքներուն անունով անգլերէն լեզուով խօսք առաւ Անուշ Յովսէփեան, որ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք իրենց ներկայութեամբ մխիթարած էին Էդիկ Յովսէփեանի հարազատները:

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կողմէ խօսք առաւ Համազգայինի Շրջանային Վարչութեան անդամ ընկհ. Թամար Տոնապետեան, որ Համազգայինի բոլոր անդամներուն ցաւակցութիւնները յայտնելէ ետք, անդրադարձաւ Էդիկ Յովսէփեանի երաժշտական եւ խմբավարական կարողութիւններուն եւ երաժիշտին անձնական գոհաբերութեան շը-

նոր հիւ թորոն թոյի մէջ կազմուած 120 հոգիինոց «Գուսան» երգ-
չախումբի ելոյթներուն:

Պարսկաստանի «Արարատ» Մշակութային Միութեան ա-
նունով խօսք առաւ ընկերուհի Այտա Յրանքեան եւ իր ցաւակ-
ցական արտայայտութիւններէն ետք, անդրադարձաւ եւ զնա-
հատեց Պարսկաստանի մէջ երաժիշտին ունեցած դաստիարակ-
չական եւ երաժշտական անձնուէր գործունէութիւնը:

Էդրիկ Յովսէփեանի բարեկամներէն՝ բանաստեղծ Ռուբիկ
Մնացականեան, զնահատեց Էդրիկ Յովսէփեանի երաժշտական
կեանքն ու գործունէութիւնը, ցաւ յայտնելով հայ մշակոյթին
եւ հայ երաժշտութեան անխոնջ մշակին կորուստին համար:

Ընկեր Բաֆֆի Տէր Պօղոսեան, որ Պարսկաստանէն սկսեալ
աշակերտած է Էդրիկ Յովսէփեանին եւ մաս կազմած անոր երգ-
չախումբերուն, յատկապէս որպէս մեներգող, յուզումով ար-
տայայտուեցաւ Էդրիկի կորուստին առիթով ու պատմեց երգչա-
խմբային կեանքէն յիշատակներ: Ան այս առիթով յայտնեց
նաեւ թէ Էդրիկ Յովսէփեանի տարիներու վաստակին վերջին եւ
տակաւին չէր սեւորուած աւանդը երաժիշտին վաթսուն տարի-
ներու անզուգական աշխատանքին արխիւներն են, որոնք պի-
տի յաւերժացնեն իր վաստակը եւ պատմութեան յանձնեն ար-
ժէքաւոր ստեղծագործութիւններ եւ մշակումներ:

Տան կարգի եկեղեցական արարողութիւններու աւարտին
խօսք առաւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական
Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ.
Բարիքեան: Հայր Սուրբը դրուատեց Էդրիկ Յովսէփեանի երա-
ժշտական եւ ուսուցողական կարողութիւնները, ընդդէմով
այն իրողութիւնը, որ «Մարդուս գործն է անմահ»:

Էդրիկ Յովսէփեանի թաղման կարգը տեղի ունեցաւ Երեք-
շաբթի, 13 Սեպտեմբերին, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Ս.
Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

Եկեղեցական արարողութիւններէն ետք, Հայր Սուրբը
կարգաց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր
Խաթակ Արք. Յակոբեանի ցաւակցական գիրը՝ ուղղուած Էդրիկ
Յովսէփեանի ընտանիքի անդամներուն եւ հարազատներուն:

Խօսք առաւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելա-
կան Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գեր. Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բա-
րիքեան, որ կարգաց իր հեղինակած բանաստեղծաշունչ խօսքը,

նուիրուած Էդրիկ Յովսէփեանի անձին եւ անոր երաժշտական եւ խմբավարական տաղանդին ու գործունէութեան:

Էդրիկ Յովսէփեանի յուղարկաւորութիւնը եւ թաղման կարգը տեղի ունեցաւ Եորք գերեզմանատան 30-րդ Հայկական բաժնին մէջ, ծիսակատարութեամբ Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեանի, Արժ. Տէր Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեանի, սարկաւազներ Մանուէլ Շէհիրեանի եւ Կարօ Սարգիսեանի:

Հանգուցեալի յիշատակին հոգեճաշ կատարուեցաւ գերեզմանատան մատուռի շէնքին ճաշարանին մէջ, ուր բազմաթիւ բարեկամներ անդրադարձան Էդրիկի կեանքին եւ ստեղծագործութիւններուն ու պատմեցին գունագեղ յիշատակներ:

* * *

Հանգուցեալ Էդրիկ Յովսէփեան ծնած է 1928-ին, Պարսկաստանի Ինրուք քաղաքին մէջ: Ան մանուկ հասակէն ջուլթակ նուագած է: 14 տարեկանին հեռանալով ընտանեկան տաքուկ միջավայրէն, հաստատուած է Թեհրան, ուր ընդունուած է պետական երաժշտանոց եւ միաժամանակ անձնական դասեր առած է աշխարհահռչակ ջուլթակահարներէ:

Երաժշտանոցի 2-րդ տարուան աշակերտ եղած ընթացքին, նուագած է Թեհրանի սիմֆոնիկ նուագախումբին մէջ: Մեծ սէր ունենալով խմբավարութեան նկատմամբ, հետեւած է նշանաւոր երաժշտագէտ Ռուբէն Գրիգորեանի խմբավարական ցուցմունքներուն: Ան երկար տարիներ նուագած է Թեհրանի պետական սիմֆոնիկ նուագախումբի, ռատիոյի, օփերա-պալէի եւ պետական սենեկային նուագախումբերու հետ:

Պարսկաստանի թագաւորութեան 2500-ամեակին առթիւ, ղեկավարելով Քուշէշ եւ Մարիամեան հայոց միջնակարգ դպրոցներու երգչախումբերը, արժանացած է թագաւորական «Ռաստախիզ» շքանշանին: Ան իր բազմամեայ գործունէութեան ընթացքին զանազան առիթներով պարգեւատրուած է պարսիկ եւ օտար պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու կողմէ՝ շքանշաններով եւ պաշտօնական գնահատագիրներով:

Էդրիկ Յովսէփեան որպէս երգի եւ երաժշտութեան ուսուցիչ դասախօսած է պետական համալսարանի եւ հայկական բազմաթիւ վարժարաններու մէջ, հայ երգին եւ երաժշտութեան նկատ-

մամբ սէր ու յարգանք տարածելով: 1954-ին, Էդրիկ ընտրելով իր կեանքի ընկերուհին, ամուսնացած է Յասմիկ Ալլահվերտեանի հետ եւ բախտաւորուած է երկու զաւակներով՝ Արա եւ Արփի:

Պարսկաստանի յեղափոխութեան պատճառով, 1980-ի Դեկտեմբերին ընտանեօք հաստատուած է Թորոնթօ, ուր նոր եւուանդով եւ ոգեւորութեամբ իր աշխատանքը շարունակած է ՀՕՄ-ի ամէնօրեայ Գոլդեան վարժարանին մէջ, որպէս երգի եւ երաժշտութեան ուսուցիչ: Կրկին նոր երգչախումբ կազմելով, Յունիս 14 1981-ին, կը հնչեցնէ հայ երգը Համազգայինի 120 հոգինոց երգչախումբին միջոցաւ:

15 Յուլիս 1983-ին, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ. Տ. Գարեգին Բ.-ի, տեղի ունեցաւ երգչախումբի տարեկան համերգը, ուր Վեհափառ Հայրապետը Էդրիկը պատուեց Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանով:

1985-ին, Եղեռնի 70-ամեակին, Ուաշինկթընի մէջ, Համազգայինի երգչախումբի ելոյթը մեծ ոգեւորութիւն յառաջացուց ներկաներուն մէջ:

Էդրիկ Յովսէփեան ելոյթներ ունեցած է նաեւ Պոսթընի, Տիլթրոյթի, Մոնթրէալի, Համիլթընի, Սէնթ Քաթրինզի եւ Թո-



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառը
Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշանով կը պատուէ
Էդրիկ Յովսէփեանը 15 Յուլիս 1983-ին:



Զախէն աջ՝ Խաժակ Ծ. Վրդ. Յակոբեան,
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս,
Տէր եւ Տիկ. Էդիկ Յովսէփեան

րոնթոյի մէջ: Իր ղեկավարած Համազգայինի երգչախումբը, 24 Փետրուար 1990-էն սկսեալ, անդամ-անդամուհիներու քր-ւէարկութեամբ եւ յանձնախումբին եւ վարչութեան վաւերացումով կոչուեցաւ Համազգայինի «Գուսան» երգչախումբ:

Ընկեր Էդիկ Յովսէփեան, իր կեանքին վերջին տարիներուն, առողջական պատճառներով մեկուսացած կեանք կը վարէր: Համազգայինի երգչախումբի վերջին համերգը տեղի ունեցաւ Մայիս 1997-ին, երգչախումբի 15-ամեակին:

1990-ի Յունիսին, հովանաւորութեամբ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան, Թորոնթոյի Հայ Կեդ-րոնի սրահին մէջ հանգիսաւորապէս նշուեցաւ Էդիկ Յովսէփեանի 40-ամեայ երաժշտական գործունէութեան յոբելեանը, ո-րուն ներկայ գտնուեցան եւ յայտագրին իրենց մասնակցութիւ-նը բերին Գանատայի եւ Մ. Նահանգներու զանազան քաղաք-ներէն ժամանած երաժիշտին նախկին գործակիցներն ու երգչա-խումբերու նախկին անդամները:

Յոբելեանին առիթով, Թեհրանի Առաջնորդ Բարձրաշնորհ Արտակ Ս. Արք. Մանուկեան իր շնորհաւորական գրութեան մէջ հետեւեալը գրած էր. «Անխոնջ մշակը արժանի է իր վարձքին: Էդիկ Յովսէփեանը այն նուիրեալներից է, որ հայ երգի եւ երա-

ժըշտութեան միջոցով իր մասնակցութիւնն է բերած ազգապահպանման վսեմ գործին»:

Իսկ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Մեսրոպ Ս. Արք. Աշճեանը հետեւեալ ձեւով արտայայտած էր իր տպաւորութիւնները. «Թէեւ ծանօթ էի իրեն դեռ Իրանէն, բայց ինձի համար Էդիկը յայտնութիւն եղաւ Թորոնթոյի մէջ, երբ Ամերիկայի եւ Գանատայի մէջ չլսուած բան, 120 հոգի բեմ հանեց: Երեւակայեցէք պահ մը, որ մոգական ինչ ճպոտ ունէր Էդիկը իր ձեռքին, երբ որ կը յաջողէր այս ցամաքամասին վրայ իրարու քով բերել եւ հայ երգի հաղորդութեան մէջ դնել 120 հոգի: Տաղանդով միայն կարելի է բացատրել, ոչ անպայման: Շատ տաղանդաւոր խմբավարներ կան, որոնք չեն յաջողիր 40 հոգի բեմ հանել: Էդիկը ուրիշ գաղտնիք մը ունի: Մագնիսական զօրութիւն մը, անհուն բարութիւն հոտող աչքեր, որոնք երբեմն, սանկ կողմնակի կերպով կը խրին սրտիդ մէջ, կը լեցնեն հոգիդ անհուն ջերմութեամբ եւ կը մղեն քեզ, որ իր հետ խորանաս ձայնին ալիքներուն, եւ կապուիս անցեալի քաղցր օրերուն եւ հասնիս վաղուան հրաշք առաւօտին:

«Ահա Էդիկին արուեստը, յարգանք իրեն, իր վաստակին եւ ողջոյն վաղուան իր իրագործումներուն»:

Բարձրաշնորհ Տէր Խաթակ Ս. Արք. Յակոբեան, 1990 թուականին այսպէս արտայայտուած է երաժիշտին մասին. «Մարդը, Էդիկ Յովսէփեան, փորձեց ըլլալ երգի գանձարան ու զինովցաւ երաժշտութեան թովչութիւններովը, իր մարդկային ու ազգային լինելու կերպը գտաւ «դաստիարակ-խմբավար»ի իր կոչումին մէջ: Թեհրանէն մինչեւ Թորոնթօ, հայ իրականութենէն ներս եւ դուրս, մանուկէն մինչեւ ծերունիին համար ան եղաւ երգի ու երաժշտութեան անխոնջ վկայարանը: Իր ուսուցումներով, իր նուագած պահուն, իր խումբերուն հետ, իր ղեկավարած պահուն ան գերազանցապէս եղաւ ու մնաց բոլորին «Սիրելի ուսուցիչը»»:

*
*
*

Պարսկաստանի քաղաքական կացութեան պատճառով Թորոնթօ հասնելուն առաջին իսկ օրը, ընկեր Էդիկ Յովսէփեան, ականջալուր իր սրտի ձայնին, չվարանեցաւ Հայ Կեդրոն այցե-

լելու եւ իր պատրաստակամութիւնը յայտնելու՝ ղեկավարելու Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան երգ-
չախումբը:

Որպէս Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան այդ շրջանի վարչութեան ատենապետ, բախտաւորութիւնը ունեցայ ընդունելու ինծի համար արդէն անունով ծանօթ երաժշտագէտ-խմբավար Էդիկ Յովսէփեանը, եւ յառաջիկայ օրերու ընթացքին իրեն փոխանցելու վարչութեան որոշումը: Միաժամանակ, հանդիպում ունենալով ՀՕՄ-ի Ամէնօրեայ Վարժարանի ուսումնական մարմնի ատենապետ հանգուցեալ ընկեր Անդրանիկ Արթինեանի հետ, համաձայնութիւն գոյացուցինք Էդիկը դպրոց հրաւիրելու, որպէս երգի եւ երաժշտութեան ուսուցիչ:

1980-ին կազմուած Համազգայինի երգչախումբը, ղեկավարութեամբ վաստակաւոր երաժշտագէտ-խմբավար Էդիկ Յովսէփեանի, 17 տարիներու ընթացքին ունեցաւ բազմաթիւ ելոյթներ Գանատայի եւ Մ. Նահանգներու հայահոծ գաղութներու մէջ, մեծապէս գնահատուելով հայ երգի կարօտ հայորդիներու կողմէ:

Համազգայինի երգչախումբը ու անոր արժանաւոր ղեկավարը՝ ընկ. Էդիկ Յովսէփեան, մեր բոլորին գուրգուրանքին եւ հոգածութեան առարկան դարձան միշտ: Անհուն գոհաբերութիւններով, տարեկան համերգներով եւ տօնական զանազան առիթներով, հայ երգի քաղցրահնչիւն երաժշտութեամբ ջերմացուցին համայնակուլ այս ամերուն վրայ ծուարած հայ զանգուածները:

Այնուհետեւ, մինչեւ իր առողջական անտանելի եւ ցաւատանջ վիճակը, միշտ գործակցեցայ ընկեր Էդիկին հետ, որ իմ 20 բանաստեղծութիւններս եղանակաւորեց:

Էդիկ Յովսէփեան մինչեւ իր վերջին շունչը կապուած մնաց երաժշտութեան եւ միշտ ջութակը կողքին պահեց: Երբ իր մօտ այցելութեան երթայի, կ'ըսէր. «Շատ սիրուն եղանակ մը ունիմ, կրնա՞ս բանաստեղծութիւն մը գրել»:

Խոնկ եւ աղօթք քու հայու կոմիտասապաշտ հոգիիդ:

**ՇՆՈՐՀԱՎԱՍԴԷՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ,
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ
«ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»
ՀԱՏՈՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ**

ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔ

Արտասանուած, Ուրբաթ, 10 Յունիս 2011-ին,
«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»
գրքի շնորհահանդէսին առիթով

Կեանքի լոյս Յիսուս, լուսեղէն խորան,
Աստուծոյ որդի, փրկիչ մարդկութեան,
Մահապարտներու խաչովը դաժան,
Մահը գրկեցիր կամֆով անասան:

Խաչի խորհուրդով եւ հաւատամքով,
Մարդկային սիրտը սիրով ծովացաւ,
Սիրտէ-սիրտ կապը լոյսով զօրացաւ,
Խաչէդ արձակուող նառագայթներով:

*Այս տողերով կը յատկանշուի, կը մարմնաւորուի, եւ կ'ար-
ժեւորուի, իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէու-
թիւններուն համար, պետական եւ ազգային զանազան հաս-
տատութիւններէ բազմաթիւ զնահատագիրներու արժանացած՝
Գրիգոր Հոթոյեանը:*

*Այսօր, յանուն Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ Քրիստո-
նէական Դաստիարակութեան Յանձնախումբին եւ Եկեղեցոյս
Հոգաբարձութեան, հաճոյքով բարի գալուստ կը մաղթեմ բոլոր-
րիդ, Հալէպի մէջ ծնած, սասունցիական հպարտութեամբ իր ծե-
րութեան օրերը վայելող Գրիգոր Հոթոյեանի վերջին երկունքէն
ծնած «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» հատորի շնորհա-
հանդէսին եւ գինեձօնին:*

*Պարոն Հոթոյեանը պարզ եւ համեստ իր բնաւորութեամբ իր
մանկութեան օրերէն եղած է եւ մինչեւ այսօր կ'ապրի ծառա-
յութեան ոգիով:*

*Ես՝ որպէս Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ քարտուղարու-
հի, վկան եմ իր հոգեւոր եւ ազգային անկեղծ սիրոյն եւ ծառա-
յութեան:*

*Պարոն Հոթոյեանը որպէս անձ մենք կը սիրենք, որովհետեւ
իր մէջ տեսած ենք մարդկային առաքինութիւններու համա-
խմբումը:*

Պարոն Հոթոյեանը այսօր կը մեծարենք իր «ԱՆՑԵԱԼԻ

ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» հատորի շնորհահանդէսով, որովհետեւ սիրող սիրտ մը ունի, ինքնաքննութեան ուժը ունի, քաղցր է, ներող, խոնարհ, ազնիւ, գնահատող, ճշմարտախօս, օրինակելի, լեզուն՝ միշտ սանձուած եւ երախտապարտութեան հոգիով մեծ: Իր մէջ տեսած ենք համբերող մեծութիւնը, գոհունակ մարդը, զիջող հաւատացեալը, նեղութիւններու մէջ պարծող դաշնակցականը եւ սրտանց աշխատող հայրը:

Իրաւամբ, իր «ՃԱՃԱՆՁՆԵՐ» հատորի լոյս ընծայման առիթով ըսուած էր, թէ՛ Հոթոյեան գրողը, իր 80 եւ աւելի տարիներու բռնաւորուածութեամբ, իր լոյսն ու շողերը սփռած էր բոլոր անոնց վրայ, որոնք կը սիրէին կեանքը:

Իր գործերուն մէջ Հոթոյեան գրողին սիրտը կայ: Սիրտ մը, ո՛չ թէ մարմնին մէջ, սիրտ մը, մարմնէն դուրս՝ ակերուն մէջ, ընթերցողին մատակարարուելու:

Իր գործերուն մէջ նուիրում մը կայ, նուիրում հոս՝ այս աշխարհի վրայ, բոլոր անոնց, որոնք փափաք ունին ապրելու մա՛րդօրէն, մարդո՛ւ պէս եւ մարդավայե՛լ հերոսութեամբ:

Իր գործերուն մէջ բարոյական ճշմարտութեանց մունետիկ մը կայ, կանչով մը, զարմանալիօրէն մեղմ ձայնով, բայց, խորհրդաւոր եւ դաստիարակիչ մղում ունեցող ձայնով:

Իր գործերուն մէջ ճանապարհ մը կայ դէպի բարին առաջնորդող, դէպի գեղեցիկը տանող եւ դէպի վսեմը հասցնող ճանապարհ մը:

Այս մտորումներով, կ'ողջունեմ ձեր բոլորին ներկայութիւնը եւ կը յուսամ, որ այս գիշերը բոլորիս համար կ'ըլլայ հարստացուցիչ գիշեր մը, անցեալի յուշերով լեցուն գիշեր մը:

Թող այս շնորհահանդէսը ըլլայ յարգանքի նուագագոյն տուրք Պարոն Հոթոյեանին, որովհետեւ ինք արժանի է այս գիշերուան:

Այս առիթով կը յիշեցնեմ, որ գիրքին հասոյթը ամբողջութեամբ պիտի տրամադրուի Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին:

Բարի վայելում եւ բարի ճանապարհորդութիւն անցեալի յուշերով լեցուն այս գիշերուան մէջ:

ԱՐՄԻԿ ՍԱՖԱՐԵԱՆ

«Շողակաթ», Յունիս-Յուլիս 2011

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ
ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ
«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»
ԳՐՔԻՆ

Պրն. Գրիգոր Հոթոյեանի առաջարկը իր «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրուած գրքին գրախօսականը ընելու համար, իրօք անակնկալ մըն էր ինծի համար: Կինս՝ Արփիւնէն եւ Պրն. Գրիգորը պաշտօնակիցներ եղած են 1950-ական թուականներուն Հալէպի Կիրականօրեայ Դպրոցին մէջ: Բայց ես զինք ճանչնալու առիթը ունեցած եմ միայն Թորոնթոյի մէջ, վերջին 10-15 տարիներու ընթացքին: Պրն. Հոթոյեան ազնուութիւնը ունեցաւ իր գրած եւ հրատարակած վերջին երեք գիրքերը նրւիրելու, որոնց շնորհիւ պատեհութիւնը ունեցայ ծանօթանալու իր տաղանդներուն, իր մտածումներուն եւ գործունէութեան: Շնորհակալ եմ Պրն. Հոթոյեանին, որ ինծի վստահեցաւ իր վերջին գրքին գրախօսականը ընել:

Բայց նախքան բուն գրախօսականին անցնիլս, թոյլ տուէք որ պատմեմ երկու դրուագներ: Առաջին դրուագ: Օր մը, ութսուն տարիքը անց եւ հանգստեան կոչուած ծանօթի մը հանդիպեցայ: Քիչ մը դժգոհ նայուածքով հարցուց.— «Ինչպէ՞ս կ'անցընես օրդ»: Իրօք, տարիքը առած եւ գործէ քաշուած շատ մը անձերու մտահոգութիւնն է անվերջանալի եւ երկար թուող իրարայաջորդ օրերը զբաղեցնելը: Երբ Լիբանանի մէջ Պուրճ Համուտի փողոցներէն կը քալէի, մայթերու վրայ կը տեսնէի դէմ դիմաց նստած, տարիքը առած մարդիկ նարտ կը խաղային, կամ աթոռակի մը շուրջ բոլորուած չորս-հինգ հոգի թուղթ կը խաղային, այսպէս ըսած՝ ժամանակը անցընելու համար: Բայց եթէ հարցումը ուղղենք Պրն. Հոթոյեանին, թէ ինչպէ՞ս կը զբաղեցնէ ժամանակը, հաւանաբար պահ մը խորհելէ վերջ ան ըսէ.— «Տարօրինակ, օրս կարճ կու գայ, երանի օրս 25 ժամ ըլլար, կամ քիչ մըն ալ աւելի երկար»: Վերջին ինը տարիներու ընթացքին, երբ Պրն. Հոթոյեան 70-էն 80-ի սեմը կ'անցնէր, հրատարակած է հինգ գիրքեր, զուգահեռաբար իր միւս գրական եւ հասարակական բեղուն աշխատանքներուն, լաւագոյնս արժեւորելով իրեն շնորհուած ժամանակի իւրաքանչիւր րոպէն:

Երկրորդ դրուագ: Լիբանանի քաղաքացիական կռիւները սկսելէն չորս տարի ետք, մեր աշխատանքի հաստատութեան գլխաւոր հաշուապահը տեղեկացուց որ ստիպուած էր իր պաշտօնը ձգել, որովհետեւ Գանատա պիտի գաղթէր: Հարկաւոր էր գինք փոխարինել: Յետ թերթերու մէջ դրուած ծանուցումներու, պաշտօնին համար դիմող թեկնածուներուն մէջ կար 30-էն 35 տարիքի մէջ երիտասարդ մը, բարձրահասակ եւ գրաւիչ երեւոյթով: Երբ հարցուցի թէ ի՞նչ վկայականներ ունէր, սեղանին վրայ դրաւ պաքալորէայի վկայականը, ինչպէս նաեւ Լիբանանեան Համալսարանէն ստացած վաճառականական եւ հաշուապահական մասնագիտութեան վկայականները: Փափաքելով իր մասին աւելի ծանօթութիւն ունենալ, կարգ մը հարցումներ ուղղեցի, ի միջի այլոց՝ թէ ի՞նչ կը կարգար երեկոները: Պատասխանեց՝ «Ան-Նահար թերթը կը կարգամ»: Անոնք որոնք Լիբանան գտնուած են, անշուշտ ծանօթ են արաբերէն լեզուով այս որակաւոր օրաթերթին: Բայց պատասխանը զիս չգոհացուց: «Մասնագիտութեանդ վերաբերեալ ի՞նչ գիրքեր կը կարդաս» հարցուցի: Զարմացած երեսս նայեցաւ, ու քիչ մը ջղային շեշտով պատասխանեց.— «Ի՞նչ կ'ուզեք որ կարգամ, պէտք եղած գիրքերը արդէն դպրոցը կարդացի»: Այս երիտասարդին համար իր ուսումնառութիւնը աւարտած էր դպրոցին հետ: Բայց այդ պահուն մտքիս մէջ կար Ֆրանսացի նշանաւոր բանաստեղծ Լամարթինի պատմութիւնը: Երբ Լամարթին դպրոցը աւարտած է, իր ծնողքին նամակ գրած է, որու մէջ, ի միջի այլոց ըսած է.— «Դպրոցս աւարտեցաւ, ուսումս կը սկսի»:

Պրն. Գրիգոր Հոթոյեան բախտաւորութիւնը չէ ունեցած համալսարան յաճախելու, բայց երբ կը կարդանք իր գրութիւնները, յստակ կը տեսնենք, որ ազգային վարժարանի մը դասընթացքները բոլորելէ ետք, ան իր ուսումը աւարտած չէ նկատած: Ան շարունակած է ուսանիլ, ու կը շարունակէ մինչեւ այսօր, ամենայն համեստութեամբ եւ իմաստութեամբ: Իր ամբարած աշխարհագրական, պատմական, ընկերաբանական, գրական եւ այլ հարցերու վերաբերեալ գիտելիքներու պաշարը կրնայ ամօթով ձգել շատ մը համալսարանաւարտներ, որոնք քիչ առաջ յիշուած հաշուապահին նման պէտք չեն տեսներ շարունակելու իրենց ուսումնառութիւնը: Աւելին, այն ինչ որ ուշադրութիւնս գրաւեց մասնաւորապէս Պրն. Հոթոյեանի պարագային, իր հաղորդելիք պատմական դէպքերու, կամ աշխարհագրական տե-

ղեկուծիւններու ճշգրտութիւնը բժախնդրութեամբ ստուգելէ վերջ գրի առնելն է, գիտական միտքի մը յատուկ պարտաճանաչութեամբ:

Պրն. Գրիգոր Հոթոյեան հիմնովին գաղափարապաշտ մարդ մըն է: Ան իր գաղափարական տաճարի գմբէթը կառուցած է չորս հաստատուն մոյթերու վրայ, որոնք են՝ 1.- իր անդրդուելի հայկականութիւնը, 2.- իր հաւատաւոր պատկանելիութիւնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ, 3.- իր զգացական կապուածութիւնը սասունական արմատներուն եւ 4.- իր անխախտ հաւատարմութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան: Այս չորս աղբիւրներէն հոսած գաղափարները ողողած են Պրն. Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրուած գրքին պատմուածքները: Ան միայն պատմութիւն մը պատմելու սիրոյն չէ որ ձեռք առած է գրիչը: Իւրաքանչիւր պատմուածք կը հաղորդէ ազգասիրական, կրօնաբարոյական, պատուախնդրական, ընտանեկան մաքուր բարքերու վերաբերեալ օրինակներ եւ պատգամներ:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գրքին մէջ կը մտնենք գեղեցիկ եւ յուզիչ պատմուածքով մը, խորագրուած «Աղօթքի Զօրութիւնը»: Ան հոգեյոյզ պատմութիւնն է Պօղոս կոչեցեալ սասունցի պատանիի մը, որ 1915-ի պատերազմին բռնի կը զինուորագրուի թուրք զինուորականութեան կողմէ եւ բազմահարիւր այլ հայ պատանիներու եւ երիտասարդներու հետ կը տարուի ամայի նեղ կիրճի մը մէջ, ուր թուրք բարբարոսները կը ձեռնարկեն անոնց ամբողջական ջարդին: Արձակուած փափուշտներու տարափը հրաշքով կը խնայէ միայն Պօղոսը, որ կը պահուրտի խոշոր ծառի մը բունին մէջ բացուած խոռոչը, ուր ան յուզումով կը յիշէ ընտանիքէն բաժանման սրտաճմլիկ պահուն իր մօրը թախանձանքը՝ «Աստուած, Յիսուս Քրիստոս, Քեզի կը յանձնեմ իմ միակ որդիս»: Իսկ Պօղոսին ուղղելով իր արտասուլթոր աչքերը, ջերմօրէն կը թելադրէ որ երբեք չմոռնայ իր հաւատքն ու եկեղեցին, միշտ յիշելով որ ինք հայ քրիստոնեայ է: Եւ այն պահուն, երբ թուրք զինուորներ, որոնք բլուրին գագաթէն տեսած էին ողջ մնացած Պօղոսը ու վար իջած զայն սուինահար ընելու, Պօղոս, ծառի նեղ խոռոչին մէջ ծունկի եկած ջերմեռանդութեամբ կ'աղօթէր, արտասանելով Ներսէս Շնորհալիի «Հաւատով Խոստովանիմ»ի 24 համարները, ինչպէս որ մայրը յանձնարարած էր իրեն: Զինուորները բազմաթիւ անգամներ կ'անցնին ծառին առջեւէն, կը պոռան, կը կանչեն, սա-

կայն ի գուր: Անոնք չեն գտներ Պօղոսի թաքստոցը: Պօղոս իր փրկութիւնը կը պարտի աղօթքի գօրութեան, համոզումով կը պատգամէ Պրն. Հոթոյեան:

Կրօնաբոյր եւ հոգեպարար նման պատմուածքներ են «Փրկարար Խաչը», «Հաւատքի Զօրութիւնը», եւ տակաւին ուրիշներ, որոնք կ'արտայայտեն Պրն. Հոթոյեանի խորունկ կրօնասիրութիւնը: Որպէս իսկական քրիստոնեայ, ան կը խոստովանի.— «Հոգեկան այն վերացումը եւ գոհունակութիւնը զորս կը զգամ եկեղեցւոյ մէջ պատարագի ընթացքին, ուրիշ որեւէ տեղ չեմ գտներ, մանաւանդ երբ կ'ունկնդրեմ մեր հոգեզմայլ շարականները, որոնք թանկագին գոհարներ են միջագային գրականութեան մէջ, թէ՛ յօրինուածքով եւ թէ՛ երաժշտութեամբ»:

Քրիստոնէական բարոյականութիւնը նմանապէս տիրական տեղ ունի Պրն. Հոթոյեանի պատմուածքներուն մէջ: Օժտուած լաւատես խառնուածքով, իրեն համար կրօնական պատուիրաններուն հետեւողը, բարոյալից վարքով գործողը, անպայման իր վարձատրութիւնը կը ստանայ, մինչ անդարձ մեղաւորը կը գտնէ իր պատիժը: Այս անշրջելի սկզբունքներուն վրայ հիւսուած պատմութիւն մըն է դասընկերներ Մկրտիչի եւ Սարգիսի պարագան: Մինչ Մկրտիչ պարկեշտ պատանի մըն է, լրջօրէն նուիրուած իր դպրոցական եւ ընտանեկան պարտականութիւններուն, եւ Կիրակի օրերն ալ եկեղեցւոյ ծառայող որպէս դպիր, Սարգիս, ընդհակառակը, ծոյլ եւ անկարգ աշակերտ մըն է, որ ի վերջոյ կ'արտաքսուի դպրոցէն, եւ անտեսելով ծնողքին տուած խրատները, կ'որդեգրէ ապօրինի ընթացք մը: Մկրտիչ փայլուն կերպով կ'աւարտէ դպրոցը, կ'ուսանի իրաւաբանութիւն եւ տարիներու ընթացքին կը հասնի դատաւորի պաշտօնին: Իսկ Սարգիս կը միանայ աւագակախումբի մը եւ իր զբաղումը կ'ըլլայ գողութիւն, եւ նոյնիսկ ոճիր գործել: Ի վերջոյ Սարգիս կը ձերբակալուի եւ դառն ճակատագրի բերումով, ոճրագատ ատեանի մէջ իր նախկին ընկերոջ՝ այժմ՝ դատաւոր Մկրտիչի կողմէ կը դատուի ու կը դատապարտուի իր գործած ոճիրներուն համար: Դատապարտուած Սարգիսը, խօսքը ուղղելով դատաւոր Մկրտիչին, կը բացազանչէ.— «Սիրելի դասընկերս Մկրտիչ, հիմա այս պահուս կ'ըմբռնեմ քու խրատներուդ արժէքը եւ կը զղջամ: Ներկայիս ես օրինակ եմ ամէն անոնց, որոնք չեն սիրեր իրենց ծնողքը, ազգը, հայրենիքը, եկեղեցին, դպրոցը, եւ չեն

հետեւիւր իրենց ծնողներուն, ուսուցիչներուն եւ ընկերներուն խրատներուն: Ես հարստանալու անպարկեշտ ձեւին հետեւեցայ եւ հիմա կը քաւեմ մեղքերս»:

Այս եւ նման պատմուածքներով, Պրն. Հոթոյեան կ'ընդգծէ անփոխարինելի տեղը որ գրաւած են իր կեանքին մէջ, եւ որ պէտք է գրաւեն իւրաքանչիւր հայու կեանքին մէջ՝ ծնողք, ազգ, հայրենիք, եկեղեցի, դպրոց, ինչպէս նաեւ անխախտ բարոյականութիւն: Ասոնք կը կազմեն առողջ հաւաքականութեան մը հիմնական արժէքները:

Պրն. Հոթոյեան բուռն հաւատացող մըն է բարեգործութեան բարիքներուն: Բազմաթիւ պատմուածքներու մէջ դիպուկ օրինակներով ան կը ջատագովէ բարեգործութիւնը: Իր ամենագեղեցիկ օրինակներէն մէկն է դանիացի Միս Քարէն Եփփէի պարագան: 1903-ին, 27 տարեկան հասակին, ան կու գայ Ուրֆա քաղաքը, եւ մինչեւ իր մահը ամբողջական նուիրումով կը ծառայէ հայ ժողովուրդի բարօրութեան, հիմնելով որբանոց, դպրոց, գործատեղիներ, այս վերջին նախաձեռնութիւնը ըլլալով գաղթական հայուն հասութաբեր աշխատանք հայթայթելու տնտեսական առողջ քայլ մը:

Պրն. Հոթոյեան երախտագիտութեամբ կը յիշէ նաեւ Քարէն Եփփէ հիմնարկին ըրած նիւթական օժանդակութիւնը իրեն եւ բազմաթիւ ուրիշ աշակերտներու, դպրոցական տարեթոշակը կարենալ վճարելու համար:

Բարեգործութեան ուրիշ հետաքրքրական դրուագ մըն է «Մարդուս Կեանքը Կախուած Չէ Իր Ինչքերու Կուտակումէն» խորագրուած պատմուածքը, որու մէջ Պրն. Հոթոյեան կը պատմէ իր պատահական հանդիպումը Տիգրանուհի Սարգիսեան անունով տիկնոջ մը հետ: Տիկինը յուզումով կը տեղեկացնէ, թէ թէեւ իր հանգուցեալ ամուսինէն միլիոններ ժառանգած է, բայց դժբախտաբար յետ անբուժելի հիւանդութեան մը, բժիշկները իրեն միայն վեց ամսուայ կեանք մը նախատեսած են: Կարեկցութեամբ Պրն. Հոթոյեան իր ցաւը կը յայտնէ, եւ կը յորդորէ կարդալ աւետարանը, ի մասնաւորի Պօղոս Առաքեալի Առաջին Թուղթը ուղղուած Տիմոթէոսին՝ Յորդոր Հարուստներուն.— «Այս աշխարհի մեծատուններուն պատուիրէ, որ չհպարտանան եւ յոյս չընեն սնոտի հարստութեան վրայ, այլ՝ Աստուծոյ վրայ... Պատուիրէ որ բարիք գործեն, բարի գործերով հարստա-

նան... իրենց համար բարի հիմ դնելով հանդերձեալին մէջ, որ-
պէսզի ձեռք բերեն ճշմարիտ կեանքը»։ Եւ Պրն. Հոթոյեան խը-
րատ կու տայ տիկնոջ ըսելով.— «Խնդրէ մեր բոլորին Փրկիչ՝
Յիսուս Քրիստոսէն, որ քու հիւանդութիւնդ բժշկէ։ Աղօթէ՛ ամ-
բողջ հաւատքով եւ ամէն օր»։ Կը յորդորէ նաեւ ունեցած միլ-
իոնաւոր տողարներէն բաժին հանել ազգային հաստատութիւն-
ներուն, եկեղեցական կառոյցներուն, որբերուն, աղքատներուն։
«Այդ բարեգործութիւնները քեզ պիտի անմահացնեն եւ երկ-
նային անմահութեան արժանացնեն», կ'ըսէ Պրն. Հոթոյեան։
Ութ ամիս վերջ ան Տիկին Սարգիսեանէն կը ստանայ նամակ մը,
ուր տիկինը կը գրէր.— «Սիրելի բարեկամ, Պօղոս Առաքեալին
խօսքը սրտիս շատ խօսեցաւ։ Հարստութեանս մեծամասնու-
թիւնը նուիրեցի ազգային հաստատութիւններուն, եկեղեցիներ-
ուն, դպրոցներուն, աղքատներուն։ Ամէն օր հաւատքով աղօ-
թեցի, որ Փրկիչը իր հրաշագործ զօրութեամբ բուժէ հիւանդու-
թիւնս։ Վեց ամիս ետք բժիշկը զիս քննելէ ետք քաղցկեղի հետք
չգտաւ մարմնիս մէջ։ Ջարմանքով հարցուց, թէ ինչպէ՞ս բուժ-
ուեցայ։ Ըսի՝ "հաւատքով աղօթեցի մեր Փրկիչին եւ բոլոր սուր-
բերուն"»։ Այսպէս է հաւատքի զօրութիւնը։ «Եթէ մարդ իր
պարտականութիւնը կատարէ եւ վստահի Աստուծոյ, ոչ մէկ բա-
նէ կը վախնայ», կ'ըսէ Պրն. Հոթոյեան հաւատացեալի համո-
զումով, «Թէեւ երբեմն ամէն ինչ մութ ու չարագուշակ կը թուի,
սակայն Ան ամէն ինչ կը փոխակերպէ բարիքի»։

Պրն. Հոթոյեանի հայրենասիրական զգացումներն ալ կը
ցոլան գրքին գրեթէ բոլոր պատմուածքներուն մէջ։ Դարերով
իր գոյութեան եւ իր ազատութեան համար մարտնչած հայ ժո-
ղովուրդը ահաւոր ջարդի ենթարկուած էր 1915-ին, բայց յա-
մառօրէն պայքարելով ան յաջողած էր Առաջին Համաշխար-
հային Պատերազմի հետեւող թոհուբոհին մէջ կերտել անկախ
հայրենիք մը։ Ծնած եւ հասակ նետած այս ճակատագրական
դէպքերուն անմիջապէս յաջորդող տարիներուն, Պրն. Հոթոյ-
եանի սերունդը ապրած է այդ դէպքերուն պատճառած ըմբոս-
տացուցիչ եւ միաժամանակ ոգեւորիչ մթնոլորտին մէջ։

Ահա այս տարամէտ զգացումներն են որ կ'արտայայտուին
«Հայրենասէր Գուրգէնը» խորագրուած պատմուածքին մէջ։
Վան քաղաքի պատուական եւ յարգուած ընտանիքներէն մէկն
է Իշխանեան ընտանիքը, բաղկացած հօրմէն, մօրմէն եւ չորս
զաւակներէն, երեքը՝ մանչ, մէկը՝ աղջիկ։ 1915-ին ջարդարար

Թուրք եւ քիւրտ յորդաներու դէմ քաղաքի ինքնապաշտպանութեան ընթացքին հայրը եւ զաւակներէն երկուքը ճակատի վրայ գոհ կ'երթան իրենց հայրենասիրութեան: Բայց վանը կը փրկուի շնորհիւ իր հարիւրաւոր մարտիրոսներու զոհողութեան, եւ քաղաքը կ'ապրի երկու տարի խաղաղ ու ապահով: Երբ քաղաքին օգնութեան հասած ռուսական բանակը 1917-ին կը քաշուի դէպի Կովկաս, Իշխանեաններու երրորդ մանչ զաւակը՝ Գուրգէն կը յաջողի քաղաքէն գաղթող ժողովուրդին հետ մայրն ու քոյրը ողջ հասցնել Երեւան: Կրկին ռազմաճակատ վերադառնալէ առաջ, Գուրգէն կ'ուզէ իրագործել պատանեկան շրջանին կատարած ուխտ մը, այցելելով Սուրբ Էջմիածին վանքը: Բայց երբ հոն կը տեսնէ աղետար իսկ սրտաճմլիկ պայմաններու ներքեւ հաւաքուած գաղթական բազմահազար ժողովուրդը, արցունքը կը քարանայ Գուրգէնի աչքերուն մէջ, կ'ըսէ Պրն. Հոթոյեան, սիրտը կը բզքտուի անծանօթ ուժերէ: Ինչո՞ւ այս ժողովուրդը, այս հնադարեան մշակոյթով քրիստոնեայ ժողովուրդը կը մեռնէր: Ու ծունկի գալով Էջմիածնայ տաճարի խորանին առջեւ, ան կը վերանորոգէ իր ուխտը՝ մինչեւ մահ կատարելու իր հայրենասիրական եւ ազգասիրական պարտականութիւնները, մանաւանդ որ այդ միջոցին թշնամին մօտեցած էր Յիսուս Քրիստոսի իջեւանած տաճարին, հայ ժողովուրդի հաւատքի կեդրոնին: Մեր դարաւոր թշնամին, ամբողջ թրքահայութիւնը աքսորելէ եւ ջարդելէ ետք, կ'ուզէր Արեւելեան Հայաստանի հայութեան հաշիւն ալ մաքրել, հիմնայտակ կործանել մեր հաւատքի բերդը՝ Սուրբ Էջմիածինը:

Գուրգէն իր վանեցի մարտիկներուն հետ անձնուիրաբար կը կռուէր Ղարաքիլիսայի ճակատին վրայ, երբ օր մը, ահաւոր մէկ վայրկեանին, թշնամի դաւաճան ռումբ մը իր քով պայթելով ծանրօրէն վիրաւորեց Գուրգէնը: Հիւանդանոցին մէջ, բժշկական կազմի բոլոր ճիգերը հերոսին կեանքը փրկելու՝ ի դերեւ ելան: Գուրգէնի վերջին խօսքերը, ուղղուած իր արտասուող մօր, եղան. «Սիրելի մայր, ես կատարեցի իմ պարտականութիւնս իմ հայրենիքիս, իմ ազգիս եւ իմ հաւատքիս հանդէպ: Ես քալեցի հօրս գծած ուղիէն: Կ'ուզեմ որ դուն երբեք չտխրիս եւ չլսաս, այլ՝ հպարտ կանգնիս եւ քալես մեր անկախ հայրենիքի հողին վրայ, որովհետեւ դուն այն մայրն ես որ սնուցիր ու դաստիարակեցիր երեք մանչ զաւակներ եւ ամուսինովդ միասին զոհեցիր մեր հայրենիքի անկախութեան բազինին»:

Հոյակապ պատմութիւն մըն է այս, գրաւիչ եւ յուզիչ կերպով ներկայացուած Պրն. Հոթոյեանի կողմէ:

Իր պատմուածքներուն մէջ Պրն. Գրիգոր Հոթոյեան միշտ խոր գոհունակութեամբ կը յիշեցնէ, որ ինք հաւատացեալ հայ քրիստոնեայ է, երկար տարիներ հաւատարմութեամբ ծառայած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ որպէս դպիր, մանկութեան յաճախած է կիրակնօրեայ դպրոց, եւ ապա պաշտօնավարած է այդ դպրոցին մէջ որպէս ուսուցիչ եւ տեսուչ: Պրն. Հոթոյեան հրապարտութեամբ կը յիշէ նաեւ իր սասունական արմատները: Հայրը՝ Ղազար, այլ անունով՝ Խարզօ, ծնած ու հասակ նետած է Սասունի Սպաղանք կոչուած պզտիկ գիւղին մէջ: Իսկ Պրն. Գրիգորը, իր եղբայրներն ու քոյրերը, թէեւ ծնած են Սուրիոյ մէջ, բայց կազմաւորուած են իրենց հօր սասունցիի շունչին տակ: Պրն. Հոթոյեանի գրքին շատ մը պատմուածքներուն մէջ կը հանդիպինք սասունցի դերակատարներու: Սասունցիներէն շատեր արհեստով եղած են ջաղացպաններ ու փռապաններ, սակայն Սասուն տուած է նաեւ, կը յիշեցնէ Պրն. Հոթոյեան, արժէքաւոր մտաւորականներ, ինչպէս Սիմոն Սիմոնեանը, եւ ականաւոր քաղաքական գործիչներ՝ Կարօ Սասունիի նման:

Պրն. Հոթոյեան մասնաւոր հպարտութեամբ կը յիշէ նաեւ փոքր Սպաղանք գիւղի ծնունդ եղող հերոս Ֆետայիները, մէկը՝ Մակարը, Պրն. Գրիգորի հօր՝ Ղազարի կնքահայրը, եւ միւս երկուքը՝ Գալէն եւ Ակէն, Պրն. Ղազարի հօրեղբորորդիները: Կը յիշէ նաեւ Զօր. Անդրանիկը, Գէորգ Զաւուչը, Ռուբէնը եւ ուրիշ Ֆետայիներ, որոնք Սպաղանքի մէջ կը հաւաքուէին ծրագրելու եւ համադրելու համար իրենց Ֆետայական գործունէութիւնը:

«Պատուախնդիր Եւ Քաջ Սասունցին» խորագրով պատմուածքի մը մէջ, Պրն. Հոթոյեան հպարտութեամբ կը պատմէ թէ ինչպէ՞ս հայ սասունցի երիտասարդ մը հերոսաբար հայ աղջիկ մը կ'ազատէ թուրք ոստիկանի մը ճիրաններէն: Դէպքը պատահած է 1920-ին Քիլիս քաղաքին մէջ, Կիլիկիան ազատագրած Ֆրանսական բանակներու տիրապետութեան շրջանին: Ոստիկանը առեւանգած էր երիտասարդ ու գեղեցկադէմ աղջիկը եւ ձիաքարչ կառքով մը գայն կը տանէր արագավազ, անտեսելով խեղճ աղջկան բողոքի պողտուքները: Իսկ անցորդները, լսելով հանդերձ աղջկան օգնութեան կանչերը, կը մնային անտարբեր, տեսնելով թէ գործը թուրք ոստիկանի հետ է: Բայց Սասնոյ Սպաղանք գիւղէն յանդուգն եւ պատուախնդիր հայ ե-

ըրիտասարդ մը, վազելով կառքին ետեւէն, կը հասնի կառքին եւ թուրք ոստիկանին հարուած մը տալով, կը տապալէ զայն եւ հայ աղջկան կը պատուիրէ որ արագութեամբ հեռանայ: Երիտասարդը կը տարուի Փրանսական ոստիկանատուն, ուր երբ Փրանսացի սպան կ'իմանայ եղելութիւնը, կը շնորհաւորէ սասունցի երիտասարդը իր քաջութեան համար ու գովաբանական նպաստաւոր տեղեկագիր մը կը պատրաստէ:

Պրն. Հոթոյեանի հետաքրքրական պատմուածքներէն մէկն ալ խորագրուած է «Արաբական Առաքինութիւն», որու մէջ ան կը պատմէ Ուրֆա քաղաքի հայկական մեծ գաղութին պատկանող Սարգիսեան ընտանիքի պատմութիւնը, 1915-ի Մեծ Եղեռնին եւ անկէ վերջ: Ընտանիքին զաւակներէն որբ մնացած հինգ տարեկան Յակոբը կ'որդեգրուի ազնիւ եւ մեծոգի արաբ ընտանիքի մը կողմէ, ուր ան կը ստանայ հոգածութիւն եւ գուրգուրանք: Բայց երբ քանի մը տարի ետք արդէն արաբացած Յակոբի մեծ եղբայրները կը գտնեն իրենց փոքր եղբայրը, Յակոբը որդեգրող արաբը, որ Սուլթան աշիրաթի գլխաւորն էր, ազնուօրէն կը համաձայնի վերադարձնել պզտիկը իր եղբայրներուն, յարգելով ընտանեկան միութեան սրբութիւնը:

Պրն. Հոթոյեան չի սահմանափակեր իր գրութիւնը այս սրտաշարժ պատմութեան տեղեկագրութեամբ: Պատմուածքին որպէս ներածական, ան կու տայ Ուրֆա քաղաքի շատ համառօտ պատմականը Մեծն Աղեքսանդրի ժամանակէն սկսեալ, եւ կը նկարագրէ հոն գտնուող հոծ հայ գաղութին կացութիւնը 1915-ի Մեծ Եղեռնի նախօրեակին:

Պատմուածքներէն շատեր օժտուած են նման պատմական, աշխարհագրական, հասարակական նկարագրական ներածականներով: Նման պարագայ մըն է «Կարնեցի Հայ Ընտանիքի Մը Ողիսականը» խորագրուած պատմուածքը, որ կու տայ 1915-ի գաղթականութեան շրջանին Թոքաճեան ընտանիքին կրած տառապանքներուն նկարագրականը, բայց չի գոհանար յօդուածը սահմանափակելով միայն յիշեալ ընտանիքին ապրած ողիսականին, այլ պատմութիւնը կը տեղադրէ Կարին քաղաքի պատմական, ընկերային, կրթական եւ աշխարհագրական ճոխ տեղեկութիւններու շրջապատին մէջ:

Պրն. Հոթոյեանի այս կերպ շարադրուած վերեւ յիշուած եւ այլ բազմաթիւ պատմուածքներու պարագային, բարեբաստիկ մօտեցում մըն է, որ մեծապէս կ'աւելցնէ պատմուածքներու շահեկանութիւնը:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրով հատորը կը պարունակէ քանի մը պատմական դրուագներ ներկայացնող պատմուածքներ, ինչպէս է. դարուն արաբ էմիր Աղբուղանի ճակատումը Արգաւան հայ իշխանի հետ, կամ ԺԴ. դարուն Լենկ թիմուրի ունեցած փորձառութիւնը Իջեւանի շրջանի Գօշավանքին մէջ, եւայլն: Գիրքը կը պարունակէ նաեւ քանի մը հեքիաթային պատմուածքներ, ինչպէս ծպտուած թագաւորի մը հանդիպումը խելացի պատանի աշակերտի մը հետ: Սակայն պատմուածքներու մեծամասնութիւնը շատ հետաքրքրական ժամանակագրական պատկերներ են, ընդգրկելով 1915-էն մինչեւ մեր օրերը երկարող ժամանակաշրջանը, առաւելաբար հեղինակին մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան շրջանը: Աշխարհագրականօրէն պատմուածքները կ'ընդգրկեն Թուրքիան եւ Սուրիան, ի մասնաւորի Սասունը՝ Թուրքիոյ մէջ, եւ Հալէպը՝ Սուրիոյ մէջ, ինչպէս նաեւ Լիբանան, Եգիպտոս, Հայաստան, Ֆրանսա, Գանատա եւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները: Գրքին մէջ ականատեսի աչքով տրուած առօրեայ կեանքի համայնքային, հասարակական, տնտեսական, քաղաքական եւ այլ կարգի առատ լուրերը կրնան որպէս աղբիւր գործածուիլ ապագայ պատմագիրներու կողմէ:

Այս բոլորը գրուած են պարզ, շատ յստակ, բոլորին մատչելի խօսակցական արեւմտահայերէնով, առանց կնճռոտ դարձրուածքներու, կամ բարդ ոճաբանութեան: Բայց Պրն. Հոթոյեան գրած է խոր զգացումով, սիրտը ափին մէջ եւ իր զգացումները ընթերցողին փոխանցող հաղորդական լեզուով:

Գրքին վերջին պատմուածքը կը վերաբերի Պրն. Հոթոյեանի գրոյցին Կոմիտասի աշակերտ եւ շատ սիրուած երգահան Բարսեղ Կանաչեանի հետ: Պրն. Կանաչեան շատ յառաջացեալ տարիքի մէջ էր այդ ատեն եւ աչքերուն տեսողութիւնն ալ մեծ մասամբ կորսնցուցած: Երբ Պրն. Հոթոյեան կը հարցնէ իր որպիսութիւնը, Պրն. Կանաչեան կը պատասխանէ ա՛խ քաշելով.— «Տղաս, ինչպէ՞ս ըլլամ, անցեալի յուշերով կ'ապրիմ»: Պրն. Հոթոյեան կը շարունակէ իր պատմութիւնը, գրելով.— «Անհասկընալի թուեցաւ ինծի Պրն. Կանաչեանի պատասխանը, որուն իմաստը երիտասարդական տարիներուս չկրցայ ըմբռնել, մինչեւ որ ես ալ մտայ անցեալի յուշերով ապրողներու միութեան մէջ: Ես ալ ներկայիս «ինչպէ՞ս ես» հարցնողներուն իմ կարգին կը պատասխանեմ.— «Անցեալի յուշերով կ'ապրիմ»:

Բայց ո՛չ, Պրն. Հոթոյեան միայն անցեալի յուշերով չ'ապրիր: Այս պարագային, իր պատմուածքներու գիրքով ան կ'ապրեցնէ հին յուշերը, զանոնք կը վերակենդանացնէ, նոր կեանք կու տայ անոնց, փոխանցելու համար ապագայ սերունդներուն: Դուք, սիրելի Պրն. Հոթոյեան, միայն յուշերով չէ որ կ'ապրիք: Դուք տակաւին կը ծրագրէք այսօրը եւ յառաջիկայ օրերը: Դուք տարիքը առած գործունեայ երիտասարդ մըն էք, որ, ինչպէս ըսի այս զրոյցին սկիզբը, հաւանաբար փափաքէիք որ օրերը ըլլային աւելի երկար, կարենալ գործադրելու համար ձեր բոլոր ծրագրերները:

Պրն. Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» պատմուածքներու գիրքը օտուտուած է կուռ եւ գեղեցիկ յառաջաբանով մը, խմբագրուած Հոգեշնորհ Հայր Մեղրիկ Ծայրագոյն Վարդապետի կողմէ, ուր ան հանգամանօրէն կը գրուատէ Պրն. Հոթոյեանի ձիրքերն ու առաքինութիւնները:

Գիրքը իր վերջաւորութեան կը վերարտադրէ գրախօսականներու, գնահատականներու եւ վկայութիւններու հաւաքածոյ մը, վերաբերեալ Պրն. Հոթոյեանի «Ճաճանչներ» խորագրուած նախորդ գիրքին:

Գիրքը օտուտուած է նաեւ արուեստագէտ Պրն. Յակոբ Ճանպաղեանի կողմէ յղացուած եւ գործադրուած շատ գեղեցիկ կողքով մը, ուր Հալէպն ու Թորոնթօն իմաստալից կերպով եւ գրաւիչ գոյներով նրբօրէն զուգորդուած են իրենց յատկանշական յուշարձաններով:

Վերջապէս, կ'ուզեմ ջերմապէս շնորհաւորել Ժոլի ընտանիքը՝ Մայքըլը, Անին, Քրիստափորը եւ Ստեփան-Արմէնը, որոնք սիրով ստանձնած են գրքին մեկենասութիւնը: Պրն. Գրիգորը եւ իր կողակիցը՝ Տիկին Շաքէն բախտաւոր են որ ունին ձեզի պէս փեսայ, աղջիկ եւ թոռներ: Իսկ դուք ալ բախտաւոր էք, որ ունիք Պրն. Գրիգորին ու Տիկին Շաքէին նման ծնողներ: Իմ սրտագին մաղթանքս է, որ Քրիստափորն ու Ստեփան-Արմէնը միշտ ընթանան իրենց մեծ հօր ուղիով, եւ իրենց ուսումնառութիւնն ու մտաւորական աշխատանքը շարունակեն նոյնիսկ դպրոցի աւարտէն վերջ:

Սիրելի Պրն. Հոթոյեան, ձեզի ալ սրտանց կը մաղթեմ երկար, առողջ եւ տակաւին բեղմնաւոր տարիներ:

ՅԱԿՈՒ ԱԼԹՈՒՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԳԻՆԵՉՕՆ «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» ՀԱՏՈՐԻ

Կազմակերպութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, Ուրբաթ, 10 Յունիս 2011, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահը հաւաքուած էր գրասէր, մշակութասէր հասարակութիւն մը, ներկայ ըլլալու հեղինակ, հրատարակազիր, բանաստեղծ, թղթակից եւ գրող՝ Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորի շնորհահանդէս-գինեձօնին, որ կը հովանաւորէր Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեանը՝ բարեջան առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի: Գեղարուեստական յայտագրի կողքին հրաւիրուած էր ծանօթ մտաւորական Տիար Յակոբ Ալթունեան:

Երկու հանդիսավարներ՝ յանձին Արմիկ Սաֆարեանի եւ Սիւզի Գալթակեանի, փոխն ի փոխ վարեցին յայտագիրը:

Բացման խօսքով Տիկ. Արմիկ Սաֆարեան հակիրճ կերպով ներկայացուց հեղինակը, որ իր սասունցիական ոգիով հակառակ իր ալեւոր տարիքին, երկունքէն ծնած «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորով կու գայ գրասէր հասարակութեան հրամցընելու սիրող սրտի մը խոնարհ, ազնիւ, գնահատող, սահուն ու ճով եւ երախտապարտութեան մեծ հոգիով դաշնակցականի տիպարը: Իրաւամբ, ընդհանրապէս իր գրական գործերուն մէջ կայ սիրտ մը որ կը տրոփէ հայկականութեամբ եւ կրօնասիրութեամբ, պատրաստ՝ մատակարարելու ընթերցողի ճաշակին, կարդացողին վայելքի պահեր ըմբոշխնելով:

Տիկ. Սաֆարեան ներկաներու ուշադրութեան յանձնեց թէ գիրքերէն իբր պատուոյ գին եղած նուէրները ամբողջութեամբ պիտի տրամադրուին եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի ծրագիրներուն: Յուշերով լեցուն այս գիշերը վայելքի երեկոյ մը թող ըլլայ բոլորին:

Երգչուհի Այտա Աթիկեան մենբեզեց «Սիրուն Աղջիկը», խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի, երաժշտ.՝ Էդիկ Յովսէփեանի, գեղարուեստական գոհացում ընծայելով ներկաներուն:

Տիկ. Սիւզի Գալթակեան հաճոյքը ունեցաւ հեղինակը ներ-

կայացնելու: Գրիգոր Հոթոյեանի մասին ամփոփ տուած տեղեկութիւններէն դէմ յանդիման կու գանք մարդու մը, որ 84 տարիներու բեռան տակ չէ կըքած, մատները տակաւին զօրաւոր են գրիչ բռնելու ու միտքը արթուն անցեալի յուշերով ապրելու, ստեղծագործելու եւ փոխանցելու գալիքներուն:

Երիտասարդ տարիքին աշխատակցած է Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթերթերու: Իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէութիւններուն համար արժանացած է բազմաթիւ գնահատագիրներու պետական եւ ազգային հաստատութիւններէ: Շարքը երկար է. 1984-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Գիր Օրհնութեան եւ Գնահատաց», 2004-ին գրական գործունէութեան 60-ամեակին Հայաստանի Գրողներու Միութեան շնորհագրին, 2005-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի Թորոնթօ այցելութեան ընթացքին «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան Հայաստանի կազմին կողմէ կազմակերպուած ցերեկոյթին, արժանացած է «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի շնորհագրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեան:

Հեղինակը արտադրած է հետեւեալ գործերը.

1. «Սիրտը Ափին Մէջ», բանաստեղծութիւններ, 1987,
2. «Նուիրում», երգեր եւ բանաստեղծութիւններ, 2002,
3. «Ի Խնդիր Բարոյական Ծշմարտութեան», բարոյալից պատմուածքներ, 2005,
4. «Ճանապարհ», բերքահաւաք, 2007,
5. «Ճաճանչներ», երգեր եւ բանաստեղծութիւններ, 2010,
6. «Անցեալի Յուշերով Կ'ապրինք», ազգային եւ հոգեւոր բարոյալից պատմուածքներ, 2011:

Շարունակելով Տիկ. Գալթիական կարգաց վկայութիւն մը գրուած Բաբգէն Սասունիի կողմէ, ուր ի միջի այլոց կ'ըսէ. «Շատ հետաքրքրական գտայ յուշագրական բնոյթ կրող պատմները, որոնցմէ ամէն մէկը նոր երանգ մը կ'աւելցնէ սփիւռք դարձած մեր բեկորներու պատմութեան գունազեղ պատառին»:

Պատանի Արի Կարապետեան ապրումով ասմունքեց Հոթոյ-

եանի «Հայաստանեայց Եկեղեցի»ն, արժանանալով ներկաներու երկար ծափահարութեանց: Ապա դարձեալ Տիկ. Գալթակեանը Կարպիս Արմէնի վկայութիւնը կարդաց, ուր վերջին տողին մէջ կ'ըսէ. «Շարունակէ գրել ու կեանքը վայելել ազնիւ բարեկամս»:

Երգչուհի եւ երաժիշտ Անահիտ Կուտսուզեան երգեց «Երբ Զայնդ Լսեցի», խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի, երաժշտ.՝ Անահիտ Կուտսուզեանի, արժանանալով ներկաներու ջերմ ընդունելութեան:

Տիկ. Սիւզի Գալթակեան ներկայացուց օրուայ գրախօսը, որ իր հասուն տարիքին արժանաւոր ներկայացուցիչ մըն է հայ գրականութեան անդամատանին մէջ: Ծնած է Լիբանան, 1923-ին եւ ամուսնացած է Օրդ. Արփինէ Քիւրտեանի հետ, որոնք ազգին նուիրած են 3 մանչ եւ 1 աղջիկ: 1998-ին վերջնական կայք հաստատած է Թորոնթօ, ու իր դալար գրիչով, արթուն մտքով, յարատեւ պրպտումներով, զանազան պատմական, գրական, ազգային յօդուածներ գրած է, տարբեր առիթներով եւ տարբեր վայրերու մէջ զանոնք ներկայացնելով: Այսօր պատիւ եւ հաճոյք է ներկայացնել Պրն. Յակոբ Ալթունեանը:

Պրն. Ալթունեանը լաւ ուսումնասիրած էր «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորը, ու համեմուած մէջբերումներով կեանքի բերաւ հեղինակին ինքնութիւնը որ մօտաւորապէս 47 պատմուածքներով, 290-է աւելի էջերու վրայ փռուած են, կազմելով նկարագիրը որոնք քառագագաթօրէն կը ցցուին դիմացդ, մէջտեղ բերելով այն մարդը որուն հոգին ու սիրտը հայկականութիւն կը բուրէ, որ պարզ բայց տեսիլք ունեցող, զգալու եւ զգացուելու հոգի ունի:

Կը զգաս իր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պատկանելիութիւնը գիրքի պատմուածքներուն մէջ, իր հայրենասիրութիւնը, սկսած ծննդավայր Հալէպէն մինչեւ խիտ շարքերը այն գաղափարական կուսակցութեան՝ Հ.Յ.Դ.-ին, որուն աննահանջ գինուորը եղած է երկար տարիներ: Պրն. Ալթունեան գովեց հեղինակի փեսան ու աղջկան եւ թողներու հետ միասին նախաձեռնութիւնը հատորի հրատարակման մեկենասութեան ու մաղթեց որ թողները իրենց մեծ հօր քայլերուն հետեւին, հայութեան գրական անդամատանին մէջ իրենց հունտերը ցանելու:

Պրն. Ալթունեանը գեղագիտական հաճոյք պատճառեց

ներկաներուն. տեղ-տեղ ներկայացուց հայրենաբուխ եւ հայրենակարօտ գրութիւններու օրինակներ, որոնցմով ներկաները հաղորդական մեկնաբանութեամբ կրցան հեղինակի հոգևոյն խորը իջնել եւ երազները շոյել: Պրն. Ալթունեանը անտարակոյս գրականութեան սիրահար մըն է որ ոգեւորուած եւ ներշնչուած կրցաւ ներկաներու սիրտերուն հպիլ: Հոթոյեանի բառերով՝ «Հայութեան նոր գէնքը պէտք է որ ըլլայ հոգիի եւ մտքի լոյսը որպէս վերածնունդ սփիւռքահայութեան»:

Պրն. Ալթունեան հաճելի անհատականութեամբ հրաշալիօրէն ներկայացուց գիրքը, պատուաբեր ցնծութեան պահերուն ներկաները խանդավառութեամբ ծափահարեցին լաւ պատրաստուած այս գրախօսականին համար:

Այտա Աթիկեանը մեներգեց «Ինչո՞ւ Համար Սիրելիս», խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի եւ երաժշտ.՝ Էդրիկ Յովսէփեանի, գրաւիչ ձայնով հաճոյք պատճառեց ներկաներուն:

Տիկ. Սիւզի Գալթակեան ընթերցեց վկայութիւն մը եւս գրուած Զաւէն Սարգիսեանի կողմէ, ուր կ'ըսէ. «...Սիրելի ընկեր, բայց դուն հաճիս գրէ, որ մեր պաշարը չպակսի»:

Գրիգոր Հոթոյեանի գրած բանաստեղծութիւնը՝ «Սուրբ Կոմիտաս», ասմունքեց Արէն Մնացականեան, արժանանալով ծափերու: Սիւզին վկայութիւն մը եւս ընթերցեց, ուր Բաբգէն Թօփեանը կ'ըսէ. «Շարունակելով ընթեռնել գէմքերու եւ գէպքերու ձեր առինքնող յուշերը, երանի տալով կը մտաբերենք մեր պատանեկան, երիտասարդական տարիներուն ապրած կեանքին վայելքներն ու ձեռք ձգած փորձառութիւնները»:

«Անկեղծ Սէր» երգը ներկայացուց Անահիտ Կուտսուզեան, որ նոյն ատեն երաժշտական յօրինումը կատարած է Հոթոյեանի քերթուածին: Զերմ ծափերու արժանացաւ:

Հանդիսավարը հրաւիրեց մեծարեալը՝ Գրիգոր Հոթոյեանը, իր խօսքը ըսելու: Ան շնորհակալութիւններ յայտնեց բոլոր անոնց որոնք այս շնորհահանգէսին իրենց հովանաւորութեան, կազմակերպութեան, գեղարուեստական յայտագրի մէջ բաժին ունեցողներուն ու մասնաւորաբար Պրն. Յակոբ Ալթունեանին այնքան բծախնդրութեամբ պատրաստած գրախօսականին համար, ծխական խորհուրդին եւ հովիւ՝ Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեանին, իր ներդրումին եւ շնորհահանգէսի պրակի պատրաստութեան: Ներկաները երկարատեւ ծափերով յարգեցին հեղինակը:

Եկեղեցւոյ հովիւ՝ Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան հրաւիրուեցաւ փակման խօսքը ընելու:

Երկար տարիներու արգասիքը հանդիսացող գրութիւններու հատոր մըն է այս գիրքը: Պրն. Հոթոյեան 84 տարիներու բեղմնաւոր եւ երախտարժան հոգիով զարդարուած այս հայորդին, կարելի է գրուատել իր գրական ստեղծագործութիւններուն ընդմէջէն, որովհետեւ առանց ՄԱՐԴԸ ճանչնալու, կարելի պիտի չըլլայ թափանցել խորքը բարոյական ճշմարտութիւններուն: Շարունակելով ըսաւ թէ Գրիգոր Հոթոյեանը իր գրականութիւնը մշակած է առանց գրագէտ ըլլալու յաւակնութեան: Այսօր լսեցիք Պրն. Յակոբ Ալթունեանի գրախօսականը «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորի, որ այնքան բժախնդրութեամբ պատրաստած էր, ներկայացնելով գիրքն ու հեղինակը:

Հոթոյեանի լեզուն պարզ է, ան ցաւած է իր հերոսներուն հետ, լացած, աշխատած, պայքարած, խնդացած եւ տագնապած եւ որքան ալ որ հեռացած է իր ծննդավայրէն, հերոսներու աշխարհէն, լաւ պայմանները արգելք չեն հանդիսացած որ իր հերոսները մեռնին իր մէջ:

Ինք ուղղամիտ ապագայատեսիլ հայ է, հաւատարիմ հայ Յեղափոխական Դաշնակցութեան:

Թորոնթոյի հայոց պատմութեան վերջին շուրջ 35 տարիներու պատմութեան հեղինակը ինք է: Այբուբենի զինուորագրուեալ այս մարդը, այս ալեւոր ծերունին, կուսակցական եւ մշակութային առաքելութեանց հաւատացող մարդ է: Սասունցի այս մարդը կարծէք իր հողին վրայ կ'ապրի հպարտ հայրենասիրութեամբ:

Հոթոյեանը քրիստոնեայ եւ հաւատացեալ քրիստոնեայ գրող մըն է, ու ան հաւատարմօրէն ծառայած է հայ եկեղեցւոյ տարբեր բնագաւառներուն մէջ:

Ան ծնած է 1927-ին հալէպցիական հայկականութեամբ: Գանատա գաղթած հայորդիին նպատակը եղած է բարոյական ճշմարտութիւններու փնտռտուքը եւ անոր կիրարկումը:

Այս առիթով, ես կը մաղթեմ որ Գրիգոր Հոթոյեանի այս նոր հատորը՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք»ը ըլլայ հաճոյք ընթերցողին համար, որպէսզի իր հայրենիքէն հայութեան հաւատքին երախտապարտ այս ազնուահոգին ըլլայ երախտարժան:

Վարձքդ կատար, թող Աստուծոյ շնորհքը, սէրը եւ սրբա-
բար զօրութիւնը հետդ ըլլայ մինչեւ կեանքիդ վախճանը:

Եւ ձեզի գրասէր հայորդիներ բարի ընթերցման պահեր:

Ներկաները երկար ծափահարեցին:

Հայր Սուրբը ասմունքող երկու պատանիներուն մէկական
նուէր տուաւ: Ապա հրաւիրեց Պրն. Յակոբ Ալթունեանը, անոր
ալ յիշատակի նուէր մը տալու: Այս բոլորէն անմաս չմնաց Տիկ.
Շաքէ Հոթոյեանը. իրեն ալ խաչ մը նուիրեց եւ թելադրեց Պրն.
Հոթոյեանին չխանգարէ ու ձգէ որ գրէ:

Ապա կատարուեցաւ գինեձօն ու աղօթքով վերջացաւ երե-
կոն:

Ներկաներէն շատեր իբր գիրքի փոխարժէք, նուէրներ ձգե-
ցին մակագրուած գիրքէն օրինակ մը հետերնին տանելով:

Հիւրասիրութեամբ վերջացաւ երեկոն:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարա-
կութեան Յանձնախումբին այս ձեռնարկը գովելի էր եւ որա-
կաւոր: Ի տես այս երեկոյին, զմայլանքով ու հաւատքով կ'ըսեմ
բոլորիդ. ձեր վարձքը կատար:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

«Նոր Կեանք», Յունիս 17, 2011

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» ՀԱՏՈՐԸ

Շնորհակալութեամբ ստացած եմ Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» պատմուածքներու հատորը:

Գրիգոր Հոթոյեան իր երիտասարդական տարիներէն սկսեալ բանաստեղծութիւններով, յօդուածներով, թղթակցութիւններով եւ պատմուածքներով ծանօթ անուն մըն է, աշխատակցած ըլլալով մեր մամուլին, եւ իր հրատարակած եօթը հատորներով:

Ծնած Հալէպ, ան եղած է խմբագիր, ուսուցիչ եւ տնօրէն ազգային մէկնօրեայ, ամառնային եւ կիրակնօրեայ վարժարաններու՝ Սուրիա եւ Գանատա:

Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին մէջ լոյս տեսած այս պատմուածքները կը վկայեն տարօրինակ կենսունակութիւնը եւ խանդավառութիւնը մէկու մը, որ աւելի քան կէս դարէ ի վեր երիտասարդական աւիւնով կը ծառայէ մեր գրականութեան եւ արտասահմանի մամուլին, ըլլալով նաեւ ուշագրաւ ներկայութիւն մը մեր հանրային-հասարակական կեանքին մէջ:

Մեղուաջան աշխատանքի եւ անխոնջ ճիգի արգիւնք է այս հատորը, որ կը կարգացուի մէկ շունչով, հոգեկան բաւարարութիւն ընծայելով ընթերցողին: Հեղինակը այս հատորով գնահատելի ներդրում մըն է որ կատարած է հայ գրականութեան սուրբ խորանին:

Իր ներածականին մէջ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան հետեւեալ տողերով կ'ողջունէ հեղինակը. «Երեւակայական ստեղծագործութիւններով չէ որ կը հարստացնէ մեր գրականութիւնը, այլ ճշմարիտ եւ ապրուած կենդանի օրինակներով: Էականը իրեն համար յայտնել է ու արտայայտել այն հոգեվիճակը, զորս ինք կ'ապրի եւ կը սիրէ հաղորդակից դարձնել բոլոր անոնք, որոնք զգալու եւ զգացուելու սիրտ ունին»:

Արդարեւ, այս հատորը կը ներկայացնէ Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ամերիկայի՝ մասնաւորաբար Գանատայի հայ բեկորներու կեանքէն դրական եւ բացասական ապրումներ ու յու-

չեր: Սփիւռքի մէջ ապրուած կեանքի մը նօթագրութիւնն է այս՝ իր կեանքի ելեւէջներով եւ տազնապներով: Իր պարզ եւ հաղորդական ոճը դէմքերու եւ դէպքերու նկատմամբ հեղինակը կը դարձնեն սրտամօտ ընթերցողին:

Հոթոյեանի միտք բանին այդ է արդէն: Իր պատմուածքներու եւ օրը-օրին արձանագրած դէպքերու եւ դէմքերու ու եղելութիւններու ընդմէջէն փոխանցել ազգային, բարոյական եւ հոգեկան սկզբունքներ եւ արժէքներ: Իր պատմուածքները նաեւ դաստիարակչական բնոյթ կը կրեն անոնց մօտ, որ անհաղորդ մնացած են մեր ժողովուրդի պայքարունակ ոգիին եւ հարուստ վաստակին:

Գաղտնիք մը չէ, որ մեր ազգային ու մշակութային գործերը պարտադրուած են մեր մտաւորականութեան ուսերուն: Մեր մտաւորականութիւնը խորապէս ներշնչուած է մեր ժողովուրդի անցեալէն եւ մշակութային արժէքներէն: Հոթոյեան կու տայ այդ խոնարհ մարդոց կենցաղը եւ հոգեբանութիւնը: Ան հաւատացող է մեր մշակոյթի փառքին ու անսասանութեան:

Ան կ'արձագանգէ հոգեկան ապրումները եւ տառապանքները՝ առանց ընդհանրացումներ կատարելու: Իր պարզ ոճով եւ հասկնալի լեզուով կու տայ հայ բեկորներու կեանքը իրենց բոլոր երեսներով:

Հայու տիպարներ են իր հերոսները: Անոնք կը պատկանին այն փաղանգին, որ կարօտով ու յիշատակներով եւ իրենց ներաշխարհով կապուած են հայրենիքին:

Պատմուածքներու այս ծաղկեփունջը արգասիքն է Գրիգոր Հոթոյեանի մտքի եւ հոգիի երկունքին:

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ

«Նոր Հայաստան», Ապրիլ 13, 2011

«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ,
ՀԵՂԻՆԱԿ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ)

2011-ին Թորոնթոյի մէջ «Փոսթնեթ» հրատարակչութեան կողմէ լոյս տեսաւ քանատաճայ բանաստեղծ եւ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ պատմուածքներու հատորը՝ մեկենասութեամբ հեղինակի դուստրին եւ թոռներուն:

Գրական երկար ճանապարհ կտրած գրագէտն է Գրիգոր Հոթոյեան, որ ցարդ հրատարակած է հետեւեալ երկերը. «Սիրտը Ափին Մէջ» (1987), «Նուիրում» (2002), «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» (2005), «Ճանապարհ» (2007), «Ճաճանչներ» (2009) եւ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» (2011):

Հիմնականին մէջ սոյն ծաւալուն գործը կը բաղկանայ 304 էջերէ եւ կ'ընդգրկէ առհասարակ յուշագրական բնոյթ կրող այլազան բաժիններ:

Հատորին ընդհանուր մթնոլորտը կրօնաշունչ է, եւ այս երեւոյթը արդիւնք է այն իրողութեան, թէ Գրիգոր Հոթոյեան վաղ պարամանութենէն մինչեւ ծերունագարդ տարիքը ապրած եւ սնած է Հայց. Առաքելական Եկեղեցւոյ խնկաբոյր կամարներուն ներքեւ եւ ներշնչուած՝ շարականագիր մեր հայրապետներուն երկնահաճ աղօթքներով:

Այս յղացքով, հեղինակին պատմուածքները կը բովանդակեն դաստիարակչական խորք ու թելադրանք եւ կը տագնապին առաւելաբար արդարութեան փնտռտուքով:

Իր գրութիւններով Գրիգոր Հոթոյեան կը շեշտէ, թէ առաքինութիւնը յառաջ կու գայ բարիի եւ չարի հակադրութեամբ: Ըստ իրեն, առաքինութիւնն է, որ իբրեւ ծանրութեան կեդրոնը բարոյական կեանքի, կը պահէ իր հակակշռին տակ մարդոց նրկարագրածին տեսակարար յատկանիշները:

Այս իրողութեան ցայտուն օրինակն է «Մկրտիչ եւ Սարգիս» խորագրեալ պատմուածքը, ուր հեղինակը կը պատկերացնէ երկու դասընկերներու կեանքին ողբասականը: Անոնք կ'ապրին կենցաղական ներհակ ըմբռնումներով:

Արդարեւ, Հոթոյեան կ'ըսէ, թէ Մկրտիչ եւ Սարգիս մատուցող դասընկերներ էին, որոնք 1890-ական թուականներուն կը

յաճախէին Պոլսոյ Բերա թաղամասի Թարգմանչաց վարժարանը: Մկրտիչ աշխատասէր եւ հնազանդ աշակերտ էր, իսկ Սարգիս դասարանին ծոյլ եւ անփոյթ աշակերտներէն կը համարուէր: Մկրտիչ կը ծառայէր թաղի եկեղեցւոյ՝ իբրեւ դպրաց դասի անդամ, բայց Սարգիս չէր ուզեր հետեւիլ իր դասընկերոջ օրինակին: Մկրտիչ կը թախանձէր շարունակ, որ Սարգիս հետեւի հայ եկեղեցւոյ սրբակենցաղ հայրապետներու հոգեպարար պատգամներուն, սակայն օր մը Մկրտիչի յորդորաշունչ խօսքերը այն աստիճան զայրոյթ պատճառեցին Սարգիսին, որ անոնք ակամայ բաժնուեցան իրարմէ:

Շարունակելով սոյն պատմուածքը՝ Գրիգոր Հոթոյեան կ'ըսէ, թէ կ'անցնին տարիներ, Մկրտիչ կը ստանայ համալսարանական ուսում եւ կը վկայուի իբրեւ իրաւաբան: Շնորհիւ իր ջանքերուն կը տիրանայ բարձր տիտղոսներու: Իր համբաւը կը տարածուի ամէնուրեք՝ իբրեւ ոճրադատ ատեանի դատաւորի:

Իսկ Սարգիս կը միանայ աւագակախումբի եւ ապօրինի միջոցներով կը հարստանայ: Օր մը, տուն վերադարձին, կը ձերբակալուի ոստիկաններու կողմէ ու կը բանտարկուի: Յետ դատավարութեան, Պոլսոյ ոճրադատ ատեանը, իրաւաբան Մկրտիչի ներկայութեան, մահուան կը դատապարտէ Սարգիսը: Հեղինակը կ'աւարտէ սոյն յուզիչ պատմուածքը այն տխուր հաստատումով, թէ կախաղանին առջեւ մետասաներորդ ժամու գղջումն ու արտասուածքով պաղատանքները չեն կրնար մաքրաջրել ոճրապարտ Սարգիսին անքաւելի յանցանքները...:

Կարելի է ըսել, թէ Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ հատորը բարոյալից արժէքաւոր պատմուածքներու ժողովածու մըն է: Այս առումով, ուշագրաւ է «Բարեգործութիւն եւ ընկերային սէր» խորագրեալ պատմուածքը, ուր հեղինակը կը ստեղծէ հակադրութիւն՝ երկու ամբողիկահայ տիպարներու միջեւ: Կ'ըսէ, թէ յիշեալ տիպարներէն առաջինը՝ ձեք Ադամեան, կծծի հայ մըն է, որ կ'ապրի Միացեալ Նահանգներու Տիթրոյթ քաղաքին մէջ եւ ունի ընդարձակ գործարան, ուր կ'աշխատին բազմաթիւ գործաւորներ: Հակառակ մեծահարուստ ըլլալուն՝ նիւթական ո՛չ մէկ օժանդակութիւն կ'ընծայէ հայ ժողովուրդին:

Հեղինակը կ'ըսէ, թէ ձեք Ադամեան խորապէս կ'ընդվզի, երբ, օր մը, «Հայրենիք» օրաթերթէն կ'իմանայ, թէ նոյնպէս Տիթրոյթ քաղաքէն Հայկ Երէցեան անունով մեծահարուստ մը

կը նուիրէ իշխանական գումարներ Ամերիկայի հայկական բարեսիրական միութիւններու...

Այս հարցին շուրջ մանրամասն տեղեկութիւններ իմանալու համար ձեռք Ադամեան հեռաձայնով կը ժամադրուի Հայկ Երէցեանի հետ: Անոնք կ'ունենան քաղաքավարական հանդիպում մը, որուն ընթացքին Հայկ Երէցեան կը համոզէ Ադամեանը, թէ հայերս ո՛ւր որ ալ ըլլանք, ի՛նչ պայմաններու տակ որ ալ ապրինք, պէտք է սիրենք հայ ազգը, հայ եկեղեցին եւ մշակոյթը: Որովհետեւ, առանց հայ ժողովուրդի հոգեւոր ժառանգութեան, չենք կրնար անխախտ պահել մեր ազգային ինքնութիւնն ու դիմագիծը: Ձեռք Ադամեան, որ տասնեակ տարիներ հեռու ապրած էր հայկական միջավայրէ, իմանալէ ետք Հայկ Երէցեանէ շահեկան ծանօթութիւններ հայ ժողովուրդի մասին, կը խոստանայ օգնել «Հայ ազգի բոլոր կարօտեալներուն եւ հաստատութիւններուն»:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ պատմըւածքներու հատորին մէջ Գրիգոր Հոթոյեան կ'արծարծէ բազմաբնոյթ հարցեր, որոնք կը վերաբերին ազգային, գրական, եկեղեցական, մշակութային եւ հասարակական երեւոյթներու:

Ազգային, կրթական եւ ուսումնական իրականութեան մէջ, կ'ըսէ Գրիգոր Հոթոյեան, յատկանշական է հայ գիրքի ցուցահանդէսը, որ ամէն տարի յատուկ արժանաւորութեամբ կը սօնախմբուի Անթիլիասի մայրավանքի շրջափակին մէջ:

Ապա կ'անդրադառնայ Հալէպի Քարէն Եփփէ ազգային ճեմարանին, որ հիմնուեցաւ դանիացի բարերարուհի Միս Քարէն Եփփէի բարենպաստ ջանքերով եւ Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Զարեհ Սրբազան Փայասլեանի բարոյական զօրակցութեամբ:

Եզրափակելով «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ պատմութեան ճեմարանը՝ կ'ուզենք յայտնել, թէ Գրիգոր Հոթոյեան, հակառակ իր ալեհեր տարիքին, կը գործէ գրական միջնորդութի մէջ՝ մշտանորոգ ոգեւորութեամբ: Գրականութեան հանդէպ իր յարատեւ սէրն է, որ ո՛չ միայն կը շնչաւորէ իր անցելագեղ յիշատակները, այլ կը կենսաւորէ նաեւ իր հոգեմտաւոր ապրումները՝ վարակիչ զգացումներով...:

ՅԱԿՈՒՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մարտ 2011, Պէյրուք

Յարգելի դաստիարակս՝

Գրիգոր Հոթոյեան,

Ինձի շնայլած՝ «գեղեցկաբոյր» ածականը չեմ համարձակիր քեզի համար գործածել, քանի կը փորձեմ քայլերուդ հետեւիլ՝ իմ ալ գրած համեստ գիրքերուս մեկենասս փնտռելով շարունակ:

«Ճանապարհ»ի ընթերցումը հազիւ վերջացուցած, ստացայ նոր հրատարակութիւնդ՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք»: Գրտեմ թէ մեծ յաջողութիւն պիտի շնորհէ քեզի իր պարզ լեզուով, գիւրընթեռնելի, խորիմաստ եւ բարոյական պատմութիւններով, որոնց մէջ փոքրիկ «կողմնակցութիւն» մը գտայ հետեւեալին մէջ.—

«Յարգենք Մեր Տարեց Հայրերը» կը պատմէ անգութ թագաւորի մը անհաւատալի հրամանը՝ 60 տարիքը բոլորած իր հպատակները մահուան առաջնորդելու: Կը փրկուի միայն մէկը՝ իր զաւակին գաղտնի պահպանումով: Ու այդ 60-է վեր ծերը՝ 1000 վրաններու 7 ձողերուն մէկը որպէս վառելանիւթ գործածելով՝ բանակը կերակրելու իմաստուն լուծումը կը թելադրէ ու թագաւորը կը յաջողի յաղթել: Հասկնալով իր սխալը՝ տարեցներու խրատէն իր հպատակները զրկելու, կը հրամայէ ազատ ձգել բոլորը որ ապրին ու կեանքը մինչեւ իր բնական վերջը՝ վայելեն:

Հիացած այս պատմութեան իմաստէն, խորունկ շունչ մը առի եւ գիրքը գոցելով՝ ետեւի էջին վրայ կարգացի որ հեղինակը 1927-ին ծնած ըլլալով՝ 60-ի ճակատագրական տարիքը շատոնց անցեր է...

Շարունակէ գրել ու կեանքը վայելել ազնիւ բարեկամս:

ԿԱՐՊԻՍ ԱՐՄէՆ

Վանքուվըր

«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Երկար տարիներու արգասիքը հանդիսացող գրութիւններու հատոր մըն է այս հատորը եւ հեղինակութիւնը կը վայելէ մէկու մը, որ պարզունակ, բայց տեսիլք ունեցող եւ այդ տեսիլքը հոգեչնչող նիւթեղէն էակներու վերածող հերոս մըն է

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Ութսուն եւ առաւել տարիներու բեղմնաւոր ու երախտարժան հոգիով զարգարուած այդ հայորդին կարելի չէ դրուատել պարզապէս իր գրական ստեղծագործութիւններուն ընդմէջէն, որովհետեւ առանց ՄԱՐԴԸ ճանչնալու կարելի պիտի չըլլայ թափանցել խորքը բարոյական այն ճշմարտութիւններուն, որոնք քրիստոնեայ հաւատացեալի ապրելակերպին պատկերացումը կը բերեն մեզի:

Առանց ճանչնալու ՄԱՐԴԸ, կարելի պիտի չըլլայ համտեսել երկա՛ր ճանապարհորդութեան մը ճամբեզրին գտնուող քաղցրահամ ծառերու պտուղը, կարելի պիտի չըլլայ վայելել զանոնք, որովհետեւ Գրիգոր Հոթոյեան կոչուած այս մարդը երեւակայական ստեղծագործութիւններով չէ որ կը հարստացնէ մեր գրականութիւնը, այլ՝ ճշմարիտ եւ ապրուած կենդանի օրինակներով: Անոր համար ալ պէ՛տք է ճանչնալ այս մարդը, որ պէսզի կարելի ըլլայ ճանչնալ իր հերոսներուն հոգեկան ներկայութիւնը՝ գրական իր այս հատորին մէջ:

Այս առիթով կ'ուզեմ ընթերցողին յիշեցնել քանի մը ճշմարտութիւններ, որպէսզի նախ կարելի ըլլայ ճանչնալ 80-ամեայ երկար ճանապարհորդութեան բարի այս ճանապարհորդը եւ ապա հետեւիլ իր ոտնահետքերուն, որովհետեւ ամէն մէկ քայլափոխի ետին Գրիգոր Հոթոյեան կը ձգէ քաղցր, յուզիչ, երբեմն հոգեզուարճ, երբեմն հոգեխռով տիպարներ, որոնք կու գան մե՛ր կեանքէն, մե՛ր առօրեայ տազնապներով հրաբխացած, մե՛ր առօրեայ հոգերով ծանրաբեռնուած, յաղթանակներով՝ հրպարտութիւն առթող, եւ պարտութիւններով՝ դաստիարակութեան վերածուող:

1. Գրիգոր Հոթոյեան իր գրականութիւնը մշակած է առանց

գրազէտ ըլլալու յաւակնութեամբ: Կեանքի փորձառութիւնը, իր ազգին հանդէպ ունեցած նուիրուածութիւնը, բարոյական արժէքներու հետամուտ ըլլալու իր արտօրանքը, իր առջեւ բացած են ճանապարհ մը, որուն գրեթէ աւարտին երբ մարդ նայի անցեալէն եկող եւ ցարդ իր կատարած ճանապարհորդութեան, կը տեսնէ, որ այդ ճանապարհորդութիւնը եղած է ի շարս եկեղեցական եւ ազգային գործունէութեան, նաեւ գրական գործունէութեան ժամանակաշրջան մը:

Գեղագիտական, լեզուաբանական, արուեստագիտական ճախրող լեզու մը չունի այս պարզ գրողը, կարծէք ինք այդ բոլորով ալ հետաքրքրուած չէ, էականը իրեն համար յայտնել է ու արտայայտել այն հոգեվիճակը, զորս ինք կ'ապրի եւ կը սիրէ հաղորդակից դարձնել բոլոր անոնց, որոնք զգալու եւ զգացուելու սիրտ ու հոգի ունին:

Պարզ է իր լեզուն եւ ճիգ չի թափեր որպէսզի բառ գտնէ ու նախադասութիւն կազմէ: Անոր համար ալ իր հերոսները կարծէք իրենց պարզունակութեամբ, բայց բացարձակ յարգելիութեամբ մեզի կը ներկայանան:

Հալէպի մէջ ծնած, հալէպեան աւանդապահութեամբ սընուած, հոգեւոր հարուստ ներաշխարհով պարուրուած եւ ազգային արժանապատուութեան վառ գիտակցութեամբ ապրող գրիչ մըն է Գրիգոր Հոթոյեանը: Բառին ամբողջական հասկացողութեամբ մեծ պարզութիւն մըն է Պարոն Հոթոյեան, եւ այդ պարզութեան համար իր գրութիւնները սիրելի են բոլորին կողմէ, բայց մանաւանդ անոնց կողմէ, որոնք իրենց կեանքին մէջ ցաւ տեսած են, զրկանք, նախատինք, հալածանք, ընտանեկան սրբութեան պակաս, եւ ով որ Հոթոյեանի գործերուն մէջ փորձէ փնտռել գեղարուեստական գրականութիւն, կը նշանակէ որ զրկած կ'ըլլայ Հոթոյեանին արժէքը իր բուն արժէքէն:

Հոթոյեանը «տէարտով» գրող անձ է, որովհետեւ ցաւած է իր հերոսներուն հետ, լացած է իր հերոսներուն հետ, աշխատած է իր հերոսներուն հետ, պայքարած է իր հերոսներուն հետ, պարտուած է իր հերոսներուն հետ, յաղթանակած է իր հերոսներուն հետ, ինդացած է իր հերոսներուն հետ, տազնապած է իր հերոսներուն հետ, եւ որքան ալ որ հեռացած է իր ծննդավայրէն, իր հերոսներու աշխարհէն, ո՛չ ժամանակները, ո՛չ նիւթական լաւ պայմանները արգելք չեն հանդիսացած, որպէսզի իր հերոսները մեռնին իր մէջ:

2. Գրիգոր Հոթոյեան գրողը ուղղամիտ, ապագայատեսիլ եւ մանաւանդ անշահախնդիր հայ է: Որպէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հաւատարիմ զաւակ, պատանեկան հասակէն սկսեալ, ազգային գաղափարախօսութեամբ ճախրող եւ ազգային ինքնութեան պահպանութեան համար ջահակիր եղած է ոչ միայն խօսքով, այլ՝ գործով:

Երկա՛ր տարիներ, ոչ միայն իր անուանական մասնակցութեամբ, այլ՝ գործօն մասնակցութեամբ անուղղակիօրէն եղած է պատմութիւն հիւսող եւ պատմութիւնը կենդանի վկայութեան վերածող անձ մը:

Եթէ նկատի ունենաք միայն իր թղթակից ըլլալու հանգամանքը, պէտք է գիտնաք, որ Թորոնթոյի հայոց պատմութեան վերջին շուրջ 35 տարիներու պատմութեան հեղինակը ի՛նք է, եւ գաղութի մը հասարակական, մշակութային, եկեղեցական կեանքի պատմութեան գրառումը այնքան սիրով կատարած է Այբուբենի զինուորագրեալ այս մարդը, որ ապագային պատմագէտներ երախտագիտութեամբ եւ գերագոյն աստիճանի յարգելիութեամբ շնորհակալ պիտի ըլլան 80-ամեայ ալեւոր այս ծերունիին:

Որպէս ազգային, կուսակցական եւ մշակութային առաքելութեանց հաւատացող մարդ, երբ իր հետ խօսիք, ինք չէ որ ձեզի կը պատասխանէ, այլ՝ իր կեանքին գլխաւոր հերոսները: Հալէպի «Արեւելք» տպարանէն մինչեւ Պոսթոնի «Հայրենիք» եւ Մոնթրէալի «Հորիզոն», Անդրանիկ Ծառուկեանէն մինչեւ Համաստեղ, Կարապենցէն մինչեւ Թէօլէօլեան, Զարեհ Կաթողիկոսէն մինչեւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Արամ Հայկազէն մինչեւ Ռոպերթ Հատտէճեան: Եւ տակաւին, անօրինակ կերպով հպարտ սասունցի այս մարդը կարծէք իր հողին վրայ կ'ապրի: Սասունն է, որ իր մէջէն կը խօսի, ու հալէպցիութեամբ հպարտացող այս բարի մարդը կը խօսի անշահախնդիր, հանդարտութեամբ, խոհուն խորհողութեամբ եւ հպարտ հայրենասիրութեամբ:

Իրեն համար հայրենասիրութիւնը հող, քար, ջուր, Արարատ, Արաքս եւ Սարդարապատ չէ, իրեն համար հայրենասիրութիւնը անցեալէն եկող եւ ապագային նայող, անցեալը, ներկան եւ ապագան իրար զօդող հոգեկան այնպիսի զգացում մըն է, որ երբեք չի կործանիր, ու հայրենի հողին կու տայ յաւիտենականութեան սխրանք, Արարատին կու տայ ճախրող խոյանք

ու Սարդարապատին կու տայ սուրբ արիւնով նուիրագործուած հերոսներու արքայարանի վայելք: Ա՛յս է Հայաստանը պարտադրաբար Գանատա հաստատուած, բայց մահու աստիճան եւ հայրենիքը կեանքէն աւելի սիրող Հայ Հոթոյեանին համար:

3. Գրիգոր Հոթոյեանը քրիստոնեայ եւ հաւատացեա՛լ քրիստոնեայ գրող մըն է: Իր կեանքի վերջին շրջանին երբ առիթ ընծայուեցաւ իրեն Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ՇՈՂԱԿԱԹ ամսագրին մէջ յօդուածներ ստորագրելու, «Սասուն Գաւառում» չծնող այս մարդը, Հալէպի մէջ աղքատութեամբ մեծցած, բայց պատիւով ընտանեկան սրբութիւնը պահպանած այս գրողը, սկսաւ գրել հոգեթով այնպիսի պատմուածքներ, որոնք խորքին մէջ բարոյական ճշմարտութիւններու փնտրուտութիւնն է, որ կը կատարեն:

Աղօթքի զօրութեան հաւատացող սիրտ ունի երկա՛ր տարիներու Կիրակնօրեայ Վարժարաններու ուսուցիչ եւ տեսուչ եղած այս մարդը: Իր գրութիւններուն ընդմէջէն կ'ուզէ որ մարդիկ ուրախ ապրին, կ'ուզէ որ մարդիկ բարիք գործեն, երախտագիտութեամբ դրսեւորեն իրենք զիրենք, միւռոնաբոյր եւ օրինակելի կեանք մը ունենան, պատուախնդիր, քաջ, քրտնաչահ եւ ընտանեկան սրբութեան հետամուտ ըլլան:

Գրիգոր Հոթոյեանը Հայ Առաքելական Եկեղեցւոյ որպէս հաւատարիմ զաւակ, գերազանց նուիրուածութեամբ ծառայած է Հայ Եկեղեցւոյ՝ տարբեր բնագաւառներու մէջ եւ ցարդ, իր եկեղեցասիրութիւնը, քրիստոնէական հաւատքի վկայութիւնը միայն յարգանք կը պարտադրեն, կոկիկ, կարճահասակ, ժպտուն, պարզունակ այս պարզ եւ հանդարտաբարոյ մարդուն նկատմամբ:

* * *

Այսօր, երբ այս հատորով ձեր առջեւ կը բացուի վեցերորդ հատորը Գրիգոր Հոթոյեանի հեղինակութեամբ,

Գիտցէ՛ք, որ այս բարի մարդը իր կեանքի բոլոր օրերուն իր սիրտը դրած է ափին մէջ ու նուիրած ազգին, հայրենիքին եւ սուրբ հաւատքին:

Գիտցէ՛ք, որ 1927-ին ծնած եւ հալէպցիական հայկականութեամբ մեծցած այս մարդուն կեանքը եղած է միայն նուիրում:

Գիտցէ՛ք, որ Գանատա գաղթած Հայորդիին կեանքին նպատակը եղած է բարոյական ճշմարտութիւններու փնտռութիւնը եւ անոր կիրարկումը:

Գիտցէ՛ք, որ այս մարդուն ճանապարհը եղած է վարդալից, բայց միշտ փուշերով պարուրուած: Դո՛ւք ալ պիտի ցաւիք իր ցաւին հետ, դո՛ւք ալ պիտի հպարտանաք իր հերոսներու հաշ-ւոյն, եւ պիտի կարենաք ըմպել ու համտեսել ա՛յն բաժակին հա-մը, որուն մէջ լեցուած է ոչ միայն քաղցր գինի, այլ՝ դառն ու լեղի:

Այս առիթով ես կը մաղթեմ, որ Գրիգոր Հոթոյեանի այս նոր հատորը՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք», ըլլայ ոչ միայն հա-ճոյք, այլ՝ տազնապ իւրաքանչիւր ընթերցողի համար եւ կ'ու-գեմ մաղթել, որ մեր սիրելի Պարոն Հոթոյեանին սէրը, խնդու-թիւնը, խաղաղութիւնը, երկայնամտութիւնը, քաղցրութիւնը, բարութիւնը, հաւատարմութիւնը, հեզութիւնը, ժուժկալութիւ-նը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը ըլլայ յաւիտեան, որ-պէսզի իր հայրենիքին, հայութեան, հաւատքին երախտապարտ այս ազնուահոգին ըլլայ երախտարժան:

Վարձքդ կատար սիրելի Պարոն Հոթոյեան, թող Աստուծոյ շնորհքը, սէրը եւ սրբարար գորութիւնը հետդ ըլլայ, այսօր եւ միշտ, մինչեւ կեանքիդ վախճանը:

Եւ բարի ընթերցման պահեր ձեզի՛ գրասէր Հայորդիներ:

Օրհնութեամբ՝

ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆ

«Շողակաթ», Յունուար 2011

Սիրելի՛

Ընկ. Գրիգոր Հոթոյեան,

Հաճոյքով եւ հաճոյքով ստացայ եւ կարգացի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» վեցերորդ գիրքդ:

Խորագիրը՝ իսկ եւ իսկ բովանդակութիւնն է: Զրկանքներով ապրուած կեանքիդ կարեւոր մէկ հանգրուանը, զոր շնորհիւ բնութեանական լաւատեսութեանդ՝ փոխադրած ես ներկային մէջ անոր տալով յուշապատումին յատուկ անուշցած երանգները:

Ուսանելի շատ բաներ կան հոն...: Եթէ տարիքային կամ տարիներու թուահամարը պատճառ է որ գործնապէս ուսուցչութիւն չընես այլեւս, այսօրինակ գիրքը սակայն կու գայ փոխարինել քեզ այդ ասպարէզին մէջ: Պատանիներ, սկառտներ որքան պիտի սիրէին իւրովի ոճով տրուած Աւետարանական դրուագները, եւ ա՛յլ պատումներ, որոնց խորքին մէջ խտացուած են բարոյութեան բիւրեղ սկզբունքներ եւ թելադրելի գաղափարներ:

Այսուհանդերձ, մեր ժողովուրդի ամէնէն դժնդակ շրջանին մասնակից կեանքիդ յուշերը վստահաբար կը բերեն նաեւ արժէքաւոր ծանօթութիւններ եւ գիտելիքներ՝ տրուած ժամանակաշրջանի ընկերային-հասարակական մեր կեանքի վերականգնումին համար թափուած ճիգերուն կապակցութեամբ: Այդ տեսանկիւնէն՝ պատումներդ եւ յուշագրութիւնները կը նկատեմ կենդանի վկայութիւններ յետ-եղեռնեան կիսադարու հայ կեանքի մարտնչումներուն:

Ձերմ շնոհաւորութիւններս:

Բարի օրերու մաղթանքով՝

Սիրով՝

ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ռէսիտա, Գալիֆ.

Ապրիլ՝ 2011

Սիրելի՛ Ընկ. Գրիգոր՝

Քրոջս միջոցով ստացած եմ գիրքերդ:

Նախ ըսեմ որ զգացուած եմ, ապա, շատ շնորհակալութիւն նուէրիդ համար: Ընթերցանութեան պաշարս շատցուցիր: Թո՛ղ Ամենակարողը քու կեանքդ երկարէ որ իմ պաշարս չպակսի: Հաճոյքով կարդացած էի «Սիրտը Ափերուն Մէջ»-ը: Վստահ նոյնքան հաճոյքով կը կարդամ նաեւ ասոնք:

Կը զգաս չէ՞, որ հայ գրականութեամբ զբաղող տարրը, յատկապէս Սփիւռքին մէջ, թէե՛ւ Հայրենիք վիճակն ալ փայլուն չէ, հետզհետէ կը նօսրանայ: Դժբախտ է: Դժբախտ է յատկապէս հայրենի «Այրերուն» անտարբերութիւնը հանդէպ հայ լեզուի պահպանման, աճին ու զարգացման: Հանդէպ լեզուի ու Ազգի յատուկ ռազմավարութեան բացակայութեան... Արդիւնքը՝ այսօրն է:

Կ'ուզեմ լաւատես ըլլալ սակայն յոստալով որ օր մը կը սըրբագրուի: Յոսանք՝ որ այդ կ'ըլլայ կանուխ:

Սիրելի ընկեր, բայց դո՛ւն հաճիս գրէ, որ մեր պաշարը չպակսի:

Վարձքդ կատար:

*Քեզ սիրող ընկերդ
ԶԱԻԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ*

4 Մայիս 2011

Mr. Krikor Hotoyan
34 Leith Hill Rd., Apt. # 511
North York, Ontario, Canada M2J 1Z4

Սիրելի՛ հայրենակից Գրիգոր Հոթոյեան,

Ուրախութեամբ ստացայ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորդ: Ծանօթացայ քեզի եւ հետաքրքրութեամբ կարդացի պատմուածքներու հաւաքածոյէդ փունջ մը: Կ'ընդհատեմ ընթերցումս չուզելով աւելի ուշացնել սրտանց շնորհակալութիւններս:

Շատ հետաքրքրական գտայ յուշագրական բնոյթ կրող պատումները, որոնցմէ ամէն մէկը նոր երանգ մը կ'աւելցնէ սփիւռք դարձած մեր բեկորներու պատմութեան գունագեղ պատարառին:

Կարօ Սասունիի բնութագրումը գտայ ճշգրիտ եւ զգայուն: Տալւորիկի սպաղանաց Գրիգորի գրիչով Անտոք լերան գագաթէն ամպեր անցան...

Հայրենակցական լաւագոյն զգացումներով եւ սիրով՝

ԲԱՔԳԷՆ ՍԱՍՈՒՆԻ

Լոս Անջելիս



ՆՈՐԱՅՐ Ա. ԲՆՏՅ. ԲԱԹԱՆԵԱՆ
 ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՄԻՏՆԻՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅՈՅ
FATHER NORAYR PATANIAN
 PARISH PRIEST HOLY RESURRECTION CHURCH IN SYDNEY
 61 WICKS ROAD - NORTH RYDE 2113, N.S.W.
 SYDNEY - AUSTRALIA

CHURCH PHONE (02) 94198056
 CHURCH FAX 99048446

HOME PHONE (02) 98885190
 MOBILE PHONE 0409391047

Սիտնի, 4 Հոկտեմբեր 2011

*Մեծայարգ եւ սիրելի բարեկամս
 Տիար Գրիգոր Հոթոյեան
 Թորոնթօ - Գանատա*

Շնորհակալութեամբ եւ սրտի անհուն գոհունակութեամբ ստացայ ձեր հեղինակութեամբ լոյս տեսած «ՃԱՃԱՆՉՆԵՐ» եւ «ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» երկու գողտրիկ հատորները, զորս մեծ հրճուանքով կ'ընթերցեմ, տարուելով անցեալի յիշատակելի օրերու քաղցր յուշերով:

Մեծապէս կը գնահատեմ ձեզ, որպէս անխոնջ մշակ հայ գիրի ու գրականութեան անդաստանին մէջ, զորս անձանձրոյթ նուիրումով կը կատարէք, միշտ վառ պահելու հայ գիրն ու գրականութիւնը, ընթերցասէր հայ հասարակութեան առօրեայ կեանքին մէջ:

«ՃԱՃԱՆՉՆԵՐ» հատորը, որ իր բովանդակութեամբ կը պարունակէ հաւատքի, հայրենասիրութեան, յեղափոխական կեանքի, մարդասիրութեան, բնութեան գեղազարթումին եւ այլ բաժիններու նուիրուած, բանաստեղծական հատորի մը բոլոր ստորագելիները, կը ցոլացնեն ձեր սրտին ու հոգիին ներաշխարհի զգայնութիւնները, զորս դուք հոգեպէս նուիրուած էք այդ աշխատանքներու իրականացումին, ձեր մտասեւեռումին մէջ միշտ նպատակ ունենալով, ծառայելու մեր ժողովուրդի գաղափարապաշտութեան եւ անկեղծութեան, իրենց հանապազօրեայ կեանքի ընթացքին մէջ:

«ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» հատորը, հին յիշատակները կենդանացնելու եւ մարմնաւորելու գեղեցիկ յիշա-

տակարան մըն է, զորս շարունակականօրէն կ'ընթերցեմ, պահ մը տարուելով անցեալի այդ անվերադարձ օրերուն, որոնք անմոռաց յիշատակներ եւ անփոխարինելի արժէքներ են մեր անցեալի կեանքի յիշատակներուն եւ անջնջելի կերպով դրոշմուած են մեր սրտերուն ու հոգիներուն մէջ:

Մտքիս մէջ միշտ թարմ կը մնայ այն գեղեցիկ օրերու յիշատակը, երբ միասնաբար կ'աշխատէինք «ԱՐԵՒԵԼՔ»ի տպարանին մէջ:

Ձեզի կը մաղթեմ քաջառողջութիւն եւ բեղմնաւոր երկար տարիներ, որպէսզի նոյն անվհատ ու ձեռներէց հոգիով շարունակէք ձեր հայ գրականութեան նուիրեալ հոգին, մաղթելով որ ձեր գրիչը միշտ դալար մնայ: Բարեմաղթութիւններս ձեր ազնիւ տիկնոջ, որ քաջալեր կը հանդիսանայ ձեր գրական աշխատանքներուն, նոյնպէս զաւակներուն եւ թոռներուն, որոնց մեկենասութեան ու քաջալերութեան շնորհիւ կ'իրականանայ ձեր գրական վաստակը տեսնելու երջանկութիւնը:

Ձեզի կ'ողորկեմ մեր եկեղեցւոյ պաշտօնաթերթ ԼՈՅՍ ամսագիրէն օրինակներ, զորս երկար տարիներէ ի վեր լոյս կը տեսնէ իմ աշխատանքով ու պատասխանատուութեամբ:

Մօտալուտ ամանորեան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, իմ սրտագին աղօթքն ու մաղթանքն է, որ բարձրեալն Աստուած ձեզի շնորհէ քաջառողջ ու բարեբեր տարի մը լի՝ խաղաղութեամբ ու երջանկութեամբ:

Բարեկամական ջերմ սիրոյ
ողջունիւ

Աղօթարար՝

ՆՈՐԱՅՐ Ա. ՔՀՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, ՀԵՂԻՆԱԿ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

ԹՈՐՈՆԹՕ, 2011, 302 Էջ

Հրապարակի վրայ է Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ հատորը: Ան գիրքին անուանումը փոխ առած է Բարսեղ Կանաչեանի մէկ խօսքէն: Օր մը, Հոթոյեան Կանաչեանին որպիսութիւնը հարցնելուն՝ ստացած է հետեւեալ պատասխանը. «Տղաս, ինչպէ՞ս ըլլամ, անցեալի յուշերով կ'ապրիմ»:

Գրիգոր Հոթոյեան այս լոյս տեսած հատորը ձօնած է «Սասունի Տալուրիկ շրջանի Սպաղանք գիւղը ծնած, հայ յեղափոխական եւ ֆետայական շարժման հերոսներ Մակարի, Գալէի եւ Ակէի ազգական եւ զինակից հօրը՝ Ղարա (Խարզօ) Հոթոյեանին՝ սիրով եւ որդիական ոգեշունչ զգացումներով»:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորին մէջ ամփոփուած 47 պատմուածքները նախապէս հրատարակուած են Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին մէջ: Հատորին տպագրութեան ծախսը ստանձնած է Անի Հոթոյեան-Ժոլի ընտանիքը:

Գեր. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի հաւաստումով. «Գրիգոր Հոթոյեան կոչուած այս մարդը, երեւակայական ստեղծագործութիւններով չէ որ կը հարստացնէ մեր գրականութիւնը, այլ՝ ճշմարիտ եւ ապրուած կենդանի օրինակներով... Ան իր գրականութիւնը մշակած է առանց գրագէտ ըլլալու յաւակնութեամբ... Էականը իրեն համար յայտնել է ու արտայայտել այն հոգեվիճակը զորս ինք կ'ապրի եւ կը սիրէ հաղորդակից դարձնել բոլոր անոնց, որոնք զգալու եւ զգացուելու սիրտ ու հոգի ունին»:

Հատորին բովանդակած բոլոր պատմուածքներն ալ շնորհքով ներկայացուած են: Այդ յուշապատմաներու դէմքերն ու դէպքերը իրական պատահած եղելութիւններ են՝ շարագրուած ականատեսի վկայութեամբ: Ընթեռնելով զանոնք կը գիտակցինք, որ Պրն. Հոթոյեան իբր նախկին ուսուցիչ-տնօրէն իր գրութիւններով տակաւին կը շարունակէ մեզ կրթել իր հաւատացած եւ ընդգրկած կրօնական, ազգային ու հայրենասիրական բարձր ու վսեմ արժէքներով: Անոր բարելիւր մտահոգու-

Թիւնն է դաստիարակել ու բացայայտել քրիստոնէական բարոյականի, մարդկայնութեան ու իմաստութեամբ ապրուած կեանքի գաղտնիքները, որպէսզի այս աշխարհի մէջ ունենանք «առաւել կեանք»ը:

Պատմուածքներու ընթերցումը հեզասահ կ'ընթանայ որովհետեւ հեղինակին ոճը պարզ է ու լեզուն հաղորդական: Այլազան պատումներու ընդմէջէն կարդացողին կ'ընծայուի հաճելի ու շահեկան պահեր: Մարդկային նկարագրի ինքնուրոյնութեան ծանօթացումին ու մեկնութեան համար՝ կ'արժէ կարդալ հատորը, օգտուելու եւ անձնական կեանքի մէջ կիրառելու Գրիգոր Հոթոյեանի բանիմաց եւ իրատես պատմուածքներէն:

Հեղինակի հասցէն՝

Krikor Hotoyan
34 Leith Hill Rd. Apt. 511
North York, ON M2J 1Z4

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

Մոնթրէալ

*
*
*

Մոնթրէալ, 19 Փետր. 2011

Սիրելի Պր. Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր սիրելիութեան հեղինակած վերջին աչքառու հատորը, որ կը բովանդակէ 47 պատմուածքներ, արտատպուած Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթէն:

Ակնարկ մը նետելով «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքի պարունակութեան, Հալէպի մասին ձեր պատումները պահ մը զիս փոխադրեցին ծննդավայրս:

Օրինակի համար «Արեւելեան բաղնիք» ձեր գրութեան մէջ, նոյն փորձառութեան ես ալ ենթարկուած եմ շտէյտէի բաղնիքին մէջ...:

«Ամէն չարիքի տակ բարիք մը կայ» նկարագրութեան մէջ նշուած խան Հաճի Մուսան ուշքիս մէջ կարեւոր տեղ գրաւած է, որովհետեւ խանի ջրհորին ճիշդ դիմացը հօրս խանութն էր: Ամառուայ արձակուրդը գրեթէ հոն կ'անցընէի: Խանին բակին մէջ պարապոյ ժամերուն առեւտրականներ կը հաւաքուէին նարտ եւ թուղթ խաղալու՝ վայելելով սրճեփ Հրանդին սուրճն ու թէյը...:

Շարունակելով ընթեռնել դէմքերու եւ դէպքերու Ձեր առինքնող յուշերը, երանի տալով կը մտաբերենք մեր պատանեկան-երիտասարդական տարիներուն ապրած կեանքին վայելքներն ու ձեռք ձգած փորձառութիւնները:

Ձեր Սիրելիութեան մաղթելով քաջառողջ կեանք եւ արեւշատ օրեր, մնամ

Յարգանօք՝
ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

Մոնթրէալ

*
*
*

Մոնթրէալ, 22 Սեպտ. 2011

Սիրելի Պր. Հոթոյեան,

Խորին շնորհակալութեամբ ստացայ ու հաճոյքով կարդացի «Շողակաթ»ի Յունիս-Յուլիս համարը, որու մէջ տեղ գտած է «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորին ուշագրաւ շնորհահանդէս եւ գինեձօն ընդունելութեան տեղեկատուութիւնը: Ուրախ եմ որ զիս ալ մասնակից դարձուցիք Ձեր խնդակցութեան:

Շնորհաւորելի է նաեւ Ձեր խնամեալ ու կատարեալ նկարագրութիւնը Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ մէջ գործադրուած ձեռնադրութեանց արարողութեանց: Զայն կարդացողներ հասու կը դառնան ու կը գիտակցին օրուայ խորհուրդին:

Կրկին անգամ յայտնելով շնորհակալութիւնս, մնամ սիրալիր բարեկներով ու Քրիստոսաւանդ սիրով՝

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

Մոնթրէալ

Պատուարժան եղբայր՝
Գրիգոր Հոթոյեան.

Վերջերս հիւանդանոց փոխադրուեցայ սուր ոտքերու ցա-
ւերու պատճառով: Ամիս մըն է բժիշկէ բժիշկ կը ղրկեն զիս. քու
գիրքը «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» զիս ցաւերէ ամոքեց,
մոռցուց, ինծի ընկեր եղաւ, մէկ խօսքով ծայրէ ի ծայր կարդա-
ցի:

Կրօնաբարոյական, ընկերային ու ասպետական պատմը-
ւածքներ. Ս. Գիրքին կողքին ամէն տուն օրինակ մը պէտք է ու-
նենայ այս գեղեցիկ եւ համով հատորէն:

Արդարեւ, այս մեր վերջին 60-70 տարիներու Հալէպի եւ
չրջակայ քաղաքներու, գիւղերու ու ավաններու պատմութիւնն
է, գրուած գեղարուեստական ոճով եւ շատ պատկերաւոր, կար-
ծես շարժապատկերի մը նկարներն են, որոնք աչքիս առջեւ կը
տողանցեն: Գրող, բանաստեղծ, ուսուցիչ-տնօրէն, հասարական
գործիչ, Փրանսական եւ արաբական սպայակոյտի սպայ, գարե-
ջուրի գործարանի ելեկտրագէտ, վաղ հասակէն հօրը կողքին
ուսին շալկած բաճկոններ ծախող, եւ այս բոլորն լուռ ու հնա-
զանդ կերպով: Աստուած երբ մէկը կը սիրէ՝ կ'օգնէ անոր: Այո,
Աստուած ձեզ սիրած է, եղբայր Հոթոյեան. շատ ապրիս, գրիչդ
դալար, երկար կեանք կը մաղթեմ:

Այս առիթով Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ս. Գրիգոր Լու-
սաւորչի կանթեղին իւղագին կ'ուղարկեմ, առ ի գնահատանք
եւ որպէս շնորհակալութիւն:

Սիրով՝

ԽԱԶԻԿ ԹԱՇՃԵԱՆ

Լոս ԱՆՃԵԼՐԱ

ԲԱՐԵՒԱԳԻՐ

Մարտ 21, 2011

Յարգելի երէջ եղբօրս՝ Գրիգոր Հոթոյեանին.

Տողերուս սկսելէ առաջ, նախապէս կը հարցնեմ թանկագին կենացդ որպիսութիւնը, նաեւ՝ համեստուհի տիկնոջդ՝ Շաքէին, զաւակներուդ, թոռներուդ, բոլորիդ կը մաղթեմ քաջառողջութիւն: Ես ինձ հպարտ կը զգամ, որ ունիմ 4 զիրքերդ, կարգացեր եմ բոլորը, բայց վերջինը որ ստացայ՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորը, իսկապէս իւրաքանչիւր պատմուածք, էջեր՝ որ լեցուն են բարոյական, գիտակցական, տառապագին անցեալի, դէմքերու, դէպքերու, ապրած-գացած կերպարներու, որ կը տողանցեն էջերուն մէջ, թէեւ իմ ծնունդէս առաջ ապրած են անոնք, բայց իմ մանկութեան, պատանեկութեան օրերուն կ'ապրէին տակաւին: Գրքիդ ամէն մէկ էջը, այնտեղ ապրողներուն հետ գացի, ման եկայ, Հալէպի այնտեղերը, հոգետունը, Նոր-Գիւղը, ամենուրէք՝ հոն եմ ես, քայլ առ քայլ, պտոյտ կատարեցի անցեալին մէջ, Աճուր-Դարլան — իմ մանուկ օրերուս թաղերը, դաշտերը, մեր տունները, ուր հայեր կ'ապրէին մինչեւ 1946, առաջին ներգաղթ, դէպի հայրենիք. այն օրերու պատկառելի մեր սասունցի տարեցները, հայրդ՝ Խարգօն, Խոտետանը, Առաքելը, Ֆիլիբը, Խաչօն, Քիւչիւկ Մկրէն, Ղազարը, եւ դեռ շատեր, որ ամէն երեկոյ կը հաւաքուէին հօրս՝ Մկրտիչին-Քէնկոյին-Շարոյին փուռը, երեք «օրթախներ» ինչպէս իրենք կ'ըսէին, բոլորն ալ հասած էին աշունը աւարտելու սեմին, սակայն կ'ապրէին յիշելով հայրենի տունը, երազելով դաշտն ու այգին, ժայռոտ լեռները, զմրուխտ արտերը, այն օրերու պատանիներէն դարձած: Շարունակեմ, կեանքիս 28 տարիները անցան Աճուր-Դարլային մէջ, Թէքքէլեան անունը կրկին զիս տարաւ հոն, Նշան Շահէն, եղբօրս՝ Գրիգորին ընկերն էր, հայրը, Թէքքէլի Արթին կ'ըսէինք անոր, հացթուխ էր, վարպետ հացթուխ: Նշան Շահէնին հանդիպեցայ Լոս Անճելըս, 1989 թուականին՝ Հոլիվուտ, բարեկեցի՝ չի ճանչցաւ ինձի, երբ եղբօրս անունը տուի, պահ մը յուզուեցաւ, եւ յանկարծ փաթաթեց վզիս, եւ «վայ տիկին Մարի, որքան հեռուները տարիր զիս, հայրս, հայրդ, եղբայրդ, մեր ապրած թաղերը, վայ-վայ, այս ինչ գեղե-

ցրիկ հանդիպում»», եւ տեսայ, որ աչքերը տամկացեր էին: Մը-
խըրճուած եմ կրկին գրքիդ էջերուն մէջ, շարունակեմ գիրս,
կրօնաբարոյական, ազնիւ խրատականներով, անհաւատները
դարձի բերող պատմուածքներ, ամէն մէկ կարդացողը պիտի ը-
սէ.— Ահա մաքուր հայ քրիստոնեայ մարդ մը, որ արժանի է ամէն
գնահատանքի:

Հալէպի Բերիոյ Թեմի ղէմքերէն, պատկառելի եկեղեցական,
Առաջնորդ՝ Զարեհ Սրբազանը, յետագային Կաթողիկոս Մեծի
Տանն Կիլիկիոյ, քոյրը՝ Ռոզինը դերձակուհի էր, իմ օժիտիս բո-
լոր հագուստները ան կարեց, 1950 թուականն էր: Քարէն Եփփէ
Ազգային Ճեմարանը շատ լաւ կը յիշեմ, այդ օրերու որբանոցը,
հոն կ'ապրէին մեր ծանօթներէն ոմանք, ես շատ խաղացեր եմ
այդ մեծ տարածութիւն ունեցող բակին մէջ իմ տարեկիցներուս
հետ. յայտնեմ, որ հայրս մեզ Հալէպ բերած է 1938-ին, Սան-
ճագի պարպումին, Աճուր-Դարլա, իր հօրեղբօր տղուն՝ Ռաշօ
Պաղտասար Տօնոյեանին տունը, ան՝ Ռաշօն, ժառանգ չունենա-
լուն պատճառաւ, կալուածը, այսինքն ապրած տունը եւ փու-
ռին ունեցած բաժինը, կտակած էր եղբօրս անունին:

Սուրբ Գէորգ Եկեղեցին, կիրակնօրեայ դպրոցը եկեղեցւոյ
մէջ, ուր կը բաժնուէին դասարանները նստարաններով, որ մե-
զի՝ պատանիներուն ջամբէին ազգային, կրօնական դաստիա-
րակութիւն, ուսուցչուհիս անունը Օրիորդ Ովսաննա էր, իսկ
տնօրէնը՝ Պարոն Ռուբէն Տիրարեան. յուշեր, յուշեր, վայրեր,
տեղեր անցեալի, տխուր թէ ուրախ օրեր, սակայն միշտ յիշա-
տակելի. կրկին սլացայ Հալէպի փոշոտ փողոցները, քարքարոտ
դաշտերը, Նոր-Գիւղ-Աճուր-Դարլա իրար կապող «Նաւա-
սարդեան» դաշտը, ուր ամէն տարի Սասունի, Տարօն-Տուրու-
բերանի Հայրենակցական Միութիւնը կը կազմակերպէր եօթ-
նօրեայ «քէրմէս»ը:

Այժմու Հալէպը հսկայական փոփոխութիւն ունի անցեալի
Հալէպէն, սակայն երբ ես կ'երթամ հոն (ամէն տարի) երկու
դուստրերս եւ ընտանիքը տեսնելու, այնտեղ ես կը միանամ հի-
նին, իրար կապելով Հալէպ ատիմը Հալէպ նըտիտին հետ:

Այսպէս, յարգելի եւ սիրելի հայրենակից, ազիզ եղբայր,
քաջերու տոհմէն սերած հայորդի, հօրդ՝ Ղազարի, հօրս՝ Մկրո-
յի, անոնց հայութեամբ տրոփող այժմ դադրած սրտերը, անոնց
հոգիներուն համար ըսենք «հանգիստ յոգնատանջ ոսկորնե-
րուն, լոյս հոգիներուն իջնէ»:

Ինչպէս հռոմէացի զօրավարը ըսած է «վեցի, վիտի, վիչի» (եկայ, տեսայ, յաղթեցի), իսկ ես պիտի ըսեմ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորին համար՝ «ստացայ, անյազ կարգացի, յուշերով ապրեցայ»:

Գրիչդ, մատներդ դալար, միտքդ լուսապայծառ մնայ միշտ:

*Հալէպցիական, սասունցիական
անկեղծ, բարի, ջերմ
զգացումներով
եւ մեծ յարգանքով
ՄԱՐԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ ԳՐԱԼԵԱՆ*

Լոս ԱՆՃԵԼԻՍ



ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ Կ՛ԵՐԳԷ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՄԲ ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՄԲ

Մեր սեղանին վրայ է գանատահայ մտաւորական ու բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանի նոր գիրքը, որ մկրտուած է «Ճանչանք» անունով: Թորոնթոյի մէջ տպուած այս հաստափոր ու գեղատիպ հատորը կ'ընդգրկէ Հոթոյեանի վերջին չըջաններու բանաստեղծական վաստակը: Այս մէկը հեղինակին հինգերորդ գիրքն է: Եւ այս գիրքը մեզի կը բերէ Հոթոյեան մը, որ իր բանաստեղծութիւնը դրած է երկու շատ կարեւոր գործօններու ծառայութեան մէջ: Առաջինը երաժշտութիւնն է, երկրորդը հայրենասիրական ու ազգասիրական զգայնութիւններու գործօնն է:

Հետաքրքրական գիրք, որուն առաջին մասը յատկացուած է բանաստեղծութիւն-երաժշտութիւն գործակցութեան: Հոս եւս գործ ունինք նօթաներու հետ, երգի ու երաժշտութեան վերածուած տողերու հետ: Մեզի ծանօթ ու անծանօթ յօրինողներու խումբ մը կայ մեր դիմաց, որ յօրինած է Հոթոյեանի սա կամ նա բանաստեղծութիւնը: Այս խումբին մաս կը կազմեն Գրիգոր Փիտէճեանը, արդէն յայտնի անուն մը սփիւռքահայ գետնի վրայ, ապա Գէորգ Յարութիւնեանը, Էդիկ Յովսէփեանը, Անահիտ Կուտսուզեանը, Արթիւր Ռազգոյեանը: Այս յօրինողները Հոթոյեանի մէկէ աւելի գործերը վերածած են երաժշտութեան: Բայց Հոթոյեանի բանաստեղծական արուեստին բուն բնագաւառը, մեր կարծիքով, հայրենասիրական ու ազգասիրական զգացումներու բնագաւառն է: Գիրքին երկրորդ ու աւելի ընդարձակ մասին մէջ մենք այսպէս քով քովի կը տեսնենք բանաստեղծութիւններ, որոնք ուշադրութիւն կը գրաւեն ո՛չ այնքան բանաստեղծական բարձրաթիւզ գիւտերով ու գրական գեղարուեստական մագլցումներով, որքան՝ մեր ազգային ու մշակութային հարստութիւններէն շունչ առնող պոռթկումներով: Հայրենասիրական հզօր տողեր կան ասոնց մէջ եւ պէտք է զարմանալ որ Հոթոյեան վերջին տասնամեակներու ընթացքին արժանացած է բազմաթիւ շքանշաններու ու մետալներու, ո-

րոնք բնականաբար անոր կուրծքը կը զարդարեն առ ի գնահատանք անոր ազգասիրական այդ զեղումներուն: Ազգասիրական նմանօրինակ պոռթկումներու մէջ Հոթոյեան միշտ կը մնայ դասական սիրուած գծի մը վրայ, որ ժողովուրդին սրտին կը խօսի՝ Հայաստանի մէջ կամ Սփիւռքի: Ահա իրմէ քանի մը տող, «Պատգամ Հայութեան» խորագրեալ բանաստեղծութենէն.

Ուր որ երթաս, ուր որ ապրիս Սփիւռքի խորք տարածփին,
Ոչ մէկ ատեն ազգդ, լեզուդ, եկեղեցիդ չմոռնաս.
Հպարտութեամբ որպէս դրօշ վե՛ր բարձրացուր սրտագին,
Հայու պայծառ անունը վեհ ու պատիւը երկնահաս:

Ուր որ երթաս անհայրենիք կեանքը ունի վերջաբան.
Գաղթական ես, օտարական՝ ներմակ ջարդին ենթակայ,
Եթէ երբեք հոգիդ չօծես խորհուրդովը սրբազան՝
Էջմիածնի, Երեւանի ու Սեւանի հեռակայ...

Պատգամը յստակ է, եւ աւելի հրապարակագրական ու ազգասիրական է, քան թէ բանաստեղծական: Այո՛, պատգամը յստակ է եւ մեզի կ'ըսէ. «անհայրենիք մարդը վերջաբան է իր ժողովուրդին կամ ազգին համար», այլ խօսքով՝ Սփիւռքի իւրաքանչիւր հայը վերջաբան է ազգային տեսակէտէ՝ որքան ալ եկող գացողներով շարունակուի Սփիւռք կոչուած գոյակցութիւնը: Անկարելի է որ մենք ալ չձայնակցինք հեղինակին ու չտեսնենք այն վտանգը որ հայ մարդուն կը սպառնայ, եթէ այդ հայ մարդը կռնակ դարձնէ իր ազգային սրբութիւններուն, կամ Մեսրոպ Մաշտոցին.

Մեսրոպ Մաշտոց, ո՛վ առաջնորդ հոգեթով,
Հայ պատմութեան յաւերժական Արարատ,
Սուրբ երագիդ իրագործած խորհուրդով,
Հայոց լեզուն մնաց կայտառ, անարատ:

Հոթոյեանի բանաստեղծական վաստակին մեծ մասը այսպէս ուղղակի կամ անուղղակի կերպով նուիրուած է հայոց պատմութեան հարուստ պարունակին, որուն մէջ ան տեղ տրուած է նաեւ զանազան ազգային հերոսներու ալ անուններուն: Այս բոլորին մէջ մասնաւոր համ կը ստանան նաեւ որոշ բանաստեղծութիւններ որոնք իրենց ներշնչումը կ'առնեն սիրոյ կամ մարդկային այլ զգայնութիւններէ: Բանաստեղծը ինչո՞ւ

հեռու պիտի մնար բոլոր մարդոց սիրտն ու հոգին կրծող այդ սիրոյ զգացումներէն.

Յիշէ զիս գարնան գով առաւօտուն,
Յիշէ զիս ամրան խանձող օրերուն,
Յիշէ զիս աշնան թաց գիշերներուն,
Յիշէ զիս ձմրան ցուրտին սարսուռն,
Յիշէ զիս ամբողջ տարին անպայման,
Բայց լոկ ժպիտով՝ առանց տխրութեան:

*Որովհետեւ եթէ յիշելը դառնայ հառաչանքի, տխրութեան
ու բոցակէզ կարօտի կրակ, այն ատեն*

Երբեք, երբեք մի յիշեր, մոռցիր:

Հոթոյեանն ալ ծնած է Հալէպի մէջ: 1927-ի ծնունդ է: Շատ կանուխէն սկսաւ բանաստեղծութիւն գրել, բայց ան յատուկ ուշադրութիւն գրաւեց ազգային, եկեղեցական ու գրական իր աշխատանքներով, 2004-ին Հայաստանի Գրողներու Միութեան նախաձեռնութեամբ տօնուեցաւ անոր գրական գործունէութեան վաթսունամեակը: 2007-ին ալ իր ծննդեան ութսունամեակի առիթով ան հրապարակեց նախորդ գիրքը, որ կը կոչուէր «Ճանապարհ»:

Իր հին գիրքերը չենք տեսած, բայց այս նորը, Հոթոյեանի «Ճաճանչներ» գիրքը, մեզ կը մտերմացնէ հայոց գիրին, հայոց պատմութեան ու հայոց ազգային սրբութիւններուն հաւատարիմ մնացած գիրնուորի մը հետ: Այս գիրնուորը երջանիկ է այսօր աւելի քան ութսուն տարեկան հասակին մէջ, որովհետեւ կրցած է ազգասէր մարդու շունչ մը աւելցնել մեր ազգային ապրումներուն վրայ:

Ռ. Հ.

Այս գիրքով հետաքրքրուողներու համար կու տանք հեղինակին հասցէն.

Krikor Hotoyan
34 Leith Hill Rd. Apt 511
North York, Ontario, CANADA
M2J 1Z4

«Մարմարա», 15 Յուլիս 2011

ՋԱՐՄԱՆԱԼԻ ՄԱՐԴԸ

«Ո՛վ գարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
Չառնոյր Կարապետն ըզմկրտելն ի յանձն:
Յորդանան լըւեալ փախստական դառնայր,
Վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր»:

*Խօսք եւ երգ՝ Գրիգոր Գ. Կաթողիկոս Պաշլաուունի (ԺԱ. դար)
Դաշնաւորում՝ Կոմիտաս Վրդ. Սողոմոնեան*

* * *

«Ո՛վ գարմանալի...»

Այս տաղը կը սիրէ, որովհետեւ կեանքին խորհուրդը հո՛ն կը տեսնէ, 5 Օգոստոս, 1927-ին, կեանքին բացուած, արմատներով սասունցի այս մարդը:

«Ո՛վ գարմանալի...»

Այս տաղով կը մարմնաւորուի բանաստեղծութիւններով, յօգուածներով, պատմուածքներով եւ թղթակցութիւններով Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթերթերու աշխատակցած եւ Գրիգոր Վարդգէս գրական ծածկանունով ծանօթ այս մարդը:

«Ո՛վ գարմանալի...»

Այս տաղով կ'արժեւորուի իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէութիւններուն համար, պետական եւ ազգային գանազան հաստատութիւններէ բազմաթիւ գնահատագիրներու արժանացած այս մարդը:

«Ո՛վ գարմանալի...»

Այս տաղի ներշնչումով կ'երկնէ, 1984-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Գիր Օրհնութեան եւ Գնահատաց»-ին արժանացած, իսկ 1 Հոկտեմբեր, 2005-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի կողմէ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին արժանացած՝ այս մարդը:

«Ո՛վ գարմանալի...»

Այս տաղի ըմբռնչմամբ կ'ապրի, 14 Յուլիս, 2004-ին, իր

գրական գործունէութեան 60-ամեակին առթիւ, Հայաստանի Գրողներու Միութեան, Մեծ Եղեռնի, Հայոց Ազատամարտի եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան Հայաստանի կազմին կողմէ «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեան պատիւին արժանացած՝ այս մարդը:

«Ո՛վ զարմանալի...»

Այս տաղի անմիջական յուզականութեամբ կ'ապրի, ծրնրնդեան 80-ամեակին եւ «Ճանապարհ» գրքի հրատարակութեան առթիւ, 23 Օգոստոս, 2007-ին, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան ոսկեայ մետալով եւ թիւ 44 փաստատետրով եւ ապա «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան ոսկեայ մետալով ու միութեան ընտրեալ անդամի վաւերատետրով գնահատուած՝ այս մարդը:

* * *

Խորհրդաւոր այս կեանքին մէջ՝ Աստուածային հաւատքով, նուիրուածութեամբ, ծառայասիրութեամբ ի՛նչ մեծութիւններ աշխարհ կու գան:

«Ո՛վ զարմանալի...»

Այս աշխարհի վրայ երբեմն մարդիկ որովայնէ կ'ընտրուին, ոմանք մեծ կը ծնին, ուրիշներ մեծութիւնը կ'ապրին, իսկ շատեր մեծութիւնը երկունքի վերածելով գեղեցկութիւն, բարիք, շքնորհք ու սէր կը բերեն մարդկութեան: Այս վերջիններէն է կուկիկ, կարճահասակ, կեանքի իր պարտքը վճարած եւ այժմ հանգըստեան իր երգիքին տակ ստեղծագործող Գրիգոր Հոթոյեանը:

Համեստ բնաւորութեամբ այս մարդը զարմանալիօրէն վըտակ առ վտակ ինքզինք կերտեց որպէս գրող, հրապարակագիր, թղթակից, արձակագիր, բանաստեղծ, յուշագրող եւ բարոյական արժէքներու հետամուտ անձ:

Այսօր, այստեղ մեր գտնուելուն պատճառը Հոթոյեանի ՃԱՃԱՆՁՆԵՐ գրքի շնորհահանդէսն է: Շուրջ 400 եւ աւելի էջերու մէջ ներկայացուած բանաստեղծութիւններ, գրախօսականներ եւ վկայութիւններ մեր առջեւէն կը տողանցեն Հոթոյեան մարդուն ընդմէջէն: Զանազան առիթներով, բազմաթիւ մարդոց, որոնց շարքին հայրենիքին եւ հերոսներուն նուիրուած բանաստեղծութիւններով, Հոթոյեան գրողը իր յոյզերն ու զգացումները, տխրութեան թէ ուրախութեան, յաղթանակի թէ

պարտութեան մտորումները պարզ բառերով կը հրամցնէ ընթերցողին, որպէս առօրեայ մտահոգութիւն, յաւիտենական պարծանք, երախտագիտութիւն, փառք, պատիւ, սէր եւ երջանկութիւն:

Ահա՛ սէրը Հոթոյեանին.—

ՔԵԶ ՀՐԵՇՏԱԿ ԿԱՐԾԵՑԻ

Երածչ.՝ Անահիտ Կուստուզեան

Քեզ հրեշտակ կարծեցի,
Եւ սիրեցի խոր սիրով,
Շատ գիշերներ լուսցուցի,
Քեզ տեսնելու կարօտով:

Սիրելով քեզ իմ աղուոր,
Կեանքս դարձաւ ծաղկաբոյր,
Երագներով մեղրածոր,
Սէրս ցայտեց զերթ աղբիւր:

Սիրոյդ հեւքին անճնատուր,
Գինովցայ ես խենթ սիրով,
Տենչանքներով սիրաբոյր,
Օրերս անցան ըղձանքով:

Սակայն, աւա՛ղ, խարուեցայ,
Հաւատալով քու սիրոյն,
Արցունքներուդ բիւրեղեայ,
Տարփոտ սիրտիդ զարկերուն:

Աններելի գնացֆով
Դուն հեռացար անվրդով,
Մոռցած խոստում ու գորով
Եւ ապրումներ հոգեթով:

Տարիները լուռ անցան,
Չանիծեցի քեզ երբեք,
Յիշատակներ դալկացան,
Սէրս մնաց յուսաբեկ:

Առիթները միջոցներ են իրեն համար եւ այդ միջոցները գրիչով կենսաւորելու, հոգեղինացնելու գեղեցիկ պատրուակներ են:

Տարեդարձ, ծնունդ, կորուստ, թուականի մը կամ միուլթեան յաւերժացումը խորհրդանշող միջոցառում, այս բոլորը իր գրիչին մտերիմ բարեկամներն են, եւ այեհեր այս գրողը, խօսելու պէս հաղորդական եւ դիւրին իր ոճով, կեանք կու տայ իր մէջ թաքնուած տաղանդին:

Հալէպի մէջ ծնած, սասունցիական հպարտութեամբ իր ծերութեան օրերը վայելող Գրիգոր Հոթոյեանը, որպէս գրաշար, խմբագիր, կիրականօրեայ վարժարաններու ուսուցիչ, տնօրէն, բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթերթերու աշխատակից, եւ իր ազգային, գրական ու եկեղեցական գործունէութիւններուն համար բազմիցս զնահատուած, հայ իրականութիւնը կ'ապրի իր երգերով ու վէրքերով, ցաւերով եւ սխրագործութիւններով: Անոր համար ալ իր շուրջ պատած ՃԱՃԱՆՁՆԵՐՈՎ հաղորդակից կը դառնայ ե՛ւ ազգային գաղափարախօսութիւններով զեղուն մարդոց, ե՛ւ քրիստոնէական հոգիով պայծառացած հոգիներուն, ե՛ւ բոլոր անոնց, որոնք իրեն կ'երթան քիչ մը աւելի գեղեցկացած տեսնելու համար Հայաստանն ու Ղարաբաղը, Խրիմեան Հայրիկն ու Սայաթ Նովան, Սուրբ Խաչի ճամբան եւ ազատութեան ճայնը, կարօտը, քնքշութիւնը, սիրելիներու յիշատակը, եւ զարմանալիօրէն ուռճացած սէրը:

Ահա՛ իր խաչի ճամբան.—

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՃԱՄԲՈՎ

Կեանքի լոյս Յիսուս, լուսեղէն խորան,
Աստուծոյ որդի, փրկիչ մարդկութեան,
Մահապարտներու խաչովը դաժան,
Մահը գրկեցիր կամֆով անսասան:

Քու խաչելութեամբ խաչը փայտեղէն,
Պաշտելի դարձաւ Աստուծոյ կամֆով,
Մարդիկ մարդացան խաչիդ հմայֆով,
Լուսաւորուելով ջահով հոգեղէն:

Քու խաչելութեամբ խաչը օրհնաբեր,
Փառքդ հիւսելու նշխար մը դարձաւ,
Ծնար, ապրեցար եւ կեանքդ եղաւ
Մարդկութեան մեղքի քաւութեան նուէր:

Քու խաչելութեամբ Յիսուս մարդասէր,
Սրբացած խաչը դարձաւ կենարար,
Խաչիդ պարծանքը դարձաւ յուշարար,
Քու Աստուածային խօսքերուդ անմեռ:

Քու խաչելութեամբ լուսատու Յիսուս,
Մարդկութեան կեանքը լուսաւորուեցաւ,
Հաւատքով խաչը սիրով օծուեցաւ,
Սրտերը պատեց նառագայթող լոյս:

Փրկարար Յիսուս, սիրոյ բուրաստան,
Քու խաչելութեան տառապանքներով
Եւ խաչին վրայ թափած արիւնով,
Սուրբ խաչը դարձաւ հաւատքի խորան:

Խաչի խորհուրդով եւ հաւատամքով,
Մարդկային սիրտը սիրով ծովացաւ,
Սիրտէ-սիրտ կապը լոյսով զօրացաւ,
Խաչէդ արձակուող նառագայթներով:

Ազնիւ հայ ազգը դարերով անձայն,
Իր խաչը շալկած իր սուրբ հաւատքով,
Յիսուսի խաչին կառչած մնալով,
Կը քալէ անվերջ Յիսուսի նման:

*
*
*

*«Ի՞նչ զարմանալի...», որ բախտին հետ ճակատագրակից,
կեանքի ապրուստին հետամուտ, եւ առօրեայ հոգերով ծանրա-
բեռնուած այս գրողը միայն իր կեանքի վերջալոյսին կրցաւ ա-
ռաւել եւս ստեղծագործել, զգալ, որ ստեղծագործական աշխար-
հին մէջ գրիչի հանդէպ իր սէրը գերազանց սէրն է, անկորնչելի
սէրը, մնայուն եւ յաւիտենական սէրը:*

իր կեանքի բոլոր օրերուն, Գրիգոր Հոթոյեանը մնաց պարզ, համեստ, ծառայասէր հայ գրի եւ գրչութեան հանդէպ երկրպագու դառնալու աստիճան խոնարհ սպասաւոր:

Ճշմարիտ է, որ այսօր իր ՃԱՃԱՆՁՆԵՐ հատորի ներկայացման առիթով թերեւս պէտք էր անդրադառնալինք անոր պարունակութեան, թէ գիրքը քանի՞ էջ է, կողքը ի՞նչ գոյն է, քանի՞ բանաստեղծութիւն գրուած է, անոնցմէ քանի՞ն երաժշտութեամբ զգեստաւորուած են, բայց այդ բոլորը գիտնալն ու անոնց ծանօթանալը կը վերապահենք ընթերցողին, որովհետեւ այդ բոլորը տաքուկ եւ ջերմ սրտի մը բղխումն են: Եթէ սիրտը չճանչնանք, այդ սրտին տրոփիւնը չզգանք մեր ձեռքերուն մէջ, պիտի չկարենանք հասկնալ թէ ի՞նչ կ'ուզէ այս մարդը, ինչո՞ւ հայրենիքը կը սիրէ, նահատակները կը մեծարէ եւ քրիստոնէական բարոյախօսութեան հետամուտ ուղղութիւն մը ունի:

Ահա՛ հայրենասէրը.—

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դարե՛ր-դարե՛ր լոյս ու խաւար հայ փերթողներ երգեցին
Քու ցաւերդ ու փառքերդ, ազատութեան սէրդ հին,
Հերոսներուդ անանձնական նուիրումը բացառիկ,
Որոնք ինկան անմխիթար՝ հողիդ համար, հայրենի՛ք.
Ես ալ ահա անոնց նամբուն հետեւող մը անվարան,
Կը նուիրեմ քնարս քեզի, հերոսակա՛ն Հայաստան:

Կը նուիրեմ քնարս քեզի, հերոսակա՛ն Հայաստան,
Կ'ապրիմ քեզմով, քու անցեալով ու ներկայով ամէն ժամ,
Քեզ կը պաշտեմ ամբողջ հոգւով ու հաւատով խորարմատ,
Պատրաստ տալու կեանքս պարման, քեզ պահելու անարատ.
Դո՛ւն մեր փառքը կոթողական, անմեռ յոյսը ապագայ,
Նուիրական մայր սիրասուն՝ իմ Հայաստան հնամեայ:

Նուիրական մայր սիրասուն՝ իմ Հայաստան հնամեայ,
Կը հաւատամ օր մը պայծառ պիտի կրկին բարձրանայ,
Դրօշն հայոց աստանդական Արարատի գագաթին,
Զֆնադագեղ Տարօն ու Վան պիտի դառնան քու գրկին,
Եւ աշխարհացրիւ որդիներդ նոր աւիշով պիտի գան
Ակօսելու դաշտերդ խոպան՝ աւերակուած Հայաստան:

Ակօսելու դաշտերդ խոպան՝ աւերակուած Հայաստան,
Քանի հիմա հոն կը բուսնին տատասկ ու փուշ ընդունայն,
Հայ քրտինքը չորցած է հոն, անապատ է ամէն կողմ,
Վայրագ ու խօլ մարդ-գազաններ ժանիֆներով մթափօղ,
Քանդած-փշրած են խնկելի վանքերը մեր սրբազան,
Իմ Հայաստան լուսանանանչ, մշակոյթի օթեւան:

Իմ Հայաստան լուսանանանչ, մշակոյթի օթեւան,
Քեզմէ ծնած անգուգական հաննարները մարդկութեան,
Նարեկացին՝ աղօթասաց՝ քերթողութեան հսկայ բերդ,
Շիրակացին՝ մեծ գիտնական եւ Մեսրոպը՝ ազգակերտ,
Վարուժանը հրաշածին եւ Չարենցը բոցաշունչ,
Յարգա՛նք հողիդ ազնուական, իմ Հայաստան քաղցրահունչ:

Յարգա՛նք հողիդ ազնուական, իմ Հայաստան քաղցրահունչ,
Զիւնասպիտակ գազաթներով վէս լեռներուդ անմոռունչ,
Կարկաչահոս աղբիւրներուդ վնիտ ջուրին սառնորակ,
Արագավազ խոր գետերուդ հզօր երթին անպարփակ,
Անտառներուդ հմայագեղ եւ դաշտերուդ անսահման,
Կեանքս ու հոգիս մատաղ քեզի, դրախտային Հայաստան:

* * *

Ինչո՞ւ այս բոլորը:

Ինչո՞ւ ՃԱՃԱՆԱԶՆԵՐՈՒ այս գիրքը:

*Այս բոլորին պատասխանը գտնելու համար եկած ենք այս-
տեղ, քննելու, պեղելու եւ հասկնալու, թէ ինչո՞ւ Հայաստանը
Սասունին կապած, Սասունը Ֆետայիներով անմահացուցած,
Ֆետայիները Հայ Յեղափոխական Դաշնակցութեան փառքին
կամրջած, բայց միշտ պայծառ ու չքնաղ առաւօտեան մը կարօ-
տով ապրած է այս մարդը:*

Ահա՛ պատասխանը.—

ԿՈԶ՝

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Ո՛վ հայորդիներ, կոչս լսեցէ՛ք,
Հեռու մնացէ՛ք օտարի բոյրէն,

Ձեր արմատներուն ամուր կառչեցէք,
Որ չկորսուիք պատմութեան բեմէն:

Հայ տունը երբեք Մեսրոպ չի բուրբեր,
Երբ օտար հարս գայ՝ սեմէն ներս մտնէ,
Ծնունդ մանուկը «Կոունկ»ը չ'երգեր,
Երբ հասակ առնէ, զգայ եւ երգէ:

Թուրքին ուզածը ինչո՞ւ մեք ընենք՝
Մեր գաւակները մղելով ջարդին
Ճերմակ ու դեղին, եւ ամբողջացնենք
Կարմիրի դերը՝ երազը թուրքին:

Ինչպէ՞ս կը ցանկաք ապրիլ որպէս հայ,
Երբ սեր շրթներուն վրայ դաւաճան,
Հայոց սուրբ լեզուն լո՛ւն կը մահանայ
Եւ հայ բարբերը օթել կը դառնան:

Ինչպէ՞ս կ'ուզէիք տէր դառնալ կրկին,
Մեր հայրենական վեհ Արարատին,
Երբ սերունդները գալիք հայածին,
Պիտի աղարտէք յոյսով խառնածին:

Հայ տան, հայ ազգին ակունքը վնիտ,
Հայ մայրն է միայն կաթով անապակ,
Երբ չբերես հայ կին քու տունիդ,
Պիտի ուծանաս, որդի անժառանգ...:

*
*
*

Աչք պտըտցուցէք իր գրական գործերուն վրայ եւ առաւելաբար ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ վրայ: Հոն պիտի տեսնէք թաքուն, բայց լուսաւոր սենեակ մը, որուն մէջ անմահներ կ'ապրին, Գէորգ Չառուչէն սկսեալ մինչեւ Զօրավար Դրօ, Մեսրոպ Մաշտոցէն մինչեւ Միսաք Մեծարեհնց:

Պեղեցէ՛ք իր միտքը, հոն պիտի գտնէք թաքուն սենեակ մը, որուն պայծառակերպութեանը մէջ պայծառացած են մեր ազգային գոյատեւման բազմաթիւ օրրաններ, Կիլիկեան Դպրե-

վանքէն սկսեալ մինչեւ Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն, Հ.Մ.Ը.Մ.-էն մինչեւ Հ.Օ.Մ., մեր ժողովուրդի երէց սերունդէն մինչեւ նորածին մանուկը:

Պեղեցէ՛ք իր հոգին, գացէ՛ք մինչեւ խորերը իր ապրումներուն, հոն պիտի տեսնէք մեր լեզուին պաշտելիութիւնը, շուշանաբոյր գեղեցկութիւնը հայ իգականութեան, երազներու վերակենդանացումը բոլոր անոնց, որոնք Հայաստանէն դուրս Հայաստանին համար ապրեցան:

ՃԱՃԱՆՁՆԵՐ հատորին մէջ մենք կ'ուզենք մա՛րդը տեսնել՝ վաւերակա՛ն մարդը, կամքով հոօ՛ր մարդը, քրիստոնէական կրթութեամբ մեծցած եւ այդ կրթութիւնը ծառայութեան վերածած մարդը, ու տեսնելէ ետք, որպէս զինակից ընկեր, աշնանային բնութեան հետ, հոն՝ դաշտերու աղբիւրներու մօտ, անձրեւին տակ ցօղուըուիլ կ'ուզենք:

Գարնանային բացուած ծաղիկներուն բուրմունքը կ'առնենք ՃԱՃԱՆՁՆԵՐուն մէջէն:

Ձմրան տոկուն արմատներով ուռճացած ծառերուն յաւերժական տողանցքը կը տեսնենք ՃԱՃԱՆՁՆԵՐուն մէջ:

Անկեղծ սիրոյ խորհուրդը կը տեսնենք ՃԱՃԱՆՁՆԵՐուն մէջ:

Սիրող մը չունեցող, խոր թախծութեան մէջ ինկող եւ մենութեան մէջ գողտրիկ երազով ապրող մարդուն զարմանալի կամքը կը տեսնենք ՃԱՃԱՆՁՆԵՐուն մէջ:

Ճշմարիտ, բայց գաղտնի սիրոյ մը սրտակէզ ցաւին որոնումը կը զգանք ՃԱՃԱՆՁՆԵՐուն մէջ:

Կեանքի յուսալքման վերջալոյսին անուշ հովով մը երջանկութեան փարումը կը զգանք ՃԱՃԱՆՁՆԵՐուն մէջ:

Տեսիլքի, հաւատքի, խոստովանանքի եւ խորհրդաւոր աչքերու փայլատակումը կ'ապրինք ՃԱՃԱՆՁՆԵՐով:

ՅԻՇԱՏԱԿԴ ՍԻՐԵԼԻՍ

Երաժշ.՝ Սարգիս Համպոյեան

Յիշատակդ սիրելիս,
Պահած եմ ես սիրտիս մէջ,
Ինչպէ՞ս մոռնամ քեզ հոգիս,
Քեզ կը փնտռեմ ես անվերջ:

Յիշատակդ իմ անգին,
Մնացած է անթառամ,
Հին ապրումներ սրտագին
Քեզ յիշելով կ'արթնան:

Եկո՛ւր, եկո՛ւր սիրելիս,
Գիշերները ֆուն չունիմ,
Եկուր յոյս տուր երագիս,
Առանց ֆեզի կեանք չունիմ:

Երբ կը յիշեմ անցեալի
Մեր օրերը ֆաղցրահամ,
Քաղցր յոյգեր ըղձալի,
Սիրոյ աղբիւր կը դառնան:

Ես ֆեզ երբեք չեմ մոռցած,
Քեզ կը յիշեմ կարօտով,
Սիրոյս բոցը սիրարբած,
Միշտ կը վառի հոգեթով:

Եկո՛ւր, եկո՛ւր սիրելիս,
Գիշերները ֆուն չունիմ,
Եկուր յոյս տուր երագիս,
Առանց ֆեզի կեանք չունիմ:

*
*
*

Տակաւին բազմաթիւ ճամբաներով, բազմաթիւ ուղղութիւններով եւ բազմաթիւ վերլուծումներով երախտագէտ եւ հարազատի զգացումներով բաբախող բազկերակի մը գրգռանքն ու ուրախութիւնը կը տեսնենք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ:

Պարոն Հոթոյեան, իր 80 եւ աւելի տարիներու բեռնաւոր-ուածութեամբ, ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՄ իր լոյսն ու շողերը կը սփռէ բոլոր անոնց վրայ, որոնք կը սիրեն կեանքը:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ Հոթոյեան գրողին սիրտը կայ: Սիրտ մը, ո՛չ թէ մարմնին մէջ, սիրտ մը, մարմնէն դուրս՝ փերուն մէջ, ընթերցողին մատակարարուելու:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ նուիրում մը կայ, նուիրում հոս՝ այս աշխարհի վրայ, բոլոր անոնց, որոնք փափաք ունին ապրելու մա՛րդօրէն, մարդո՛ւ պէս եւ մարդավայե՛լ հերոսութեամբ:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ բարոյական ճշմարտութեանց մունե-տիկ մը կայ, կանչով մը, զարմանալիօրէն մեղմ ձայնով, բայց, խորհրդաւոր եւ դաստիարակիչ մղում ունեցող ձայնով:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ ճանապարհ մը կայ դէպի բարին ա-ռաջնորդող, դէպի գեղեցիկը տանող եւ դէպի վսեմը հասցնող ճանապարհ մը:

Ահա՛ ՃԱՃԱՆՁՆԵՐԸ:

*
*
*

«Ո՛վ զարմանալի...»

Ջարմանալի է Հոթոյեանը, ոչ թէ որովհետեւ մեծ խորհուրդ մըն է, այլ՝ որովհետեւ իր շրջապատը մեծ խորհուրդին տանող՝ Աստուծոյ տանող գեղեցիկ ճանապարհն է:

Ջարմանալի է Հոթոյեանը, որովհետեւ ճիգ չի թափեր գրող, բանաստեղծ ըլլալու համար, ոչ ալ որպէսզի մարդիկ իրեն հա-մար ըսեն թէ գրող է, այլ՝ կարծէք իր գրական ստեղծագործու-թիւնները իրեն համար են, ինք ուրախ է իր գրածներով, ինք ուրախ է մէկուն յաջողութեամբ, ուրիշի մը ծնունդով, մէկուն մարմնաւոր մահով, ուրիշին բժշկութեամբ, եւ ուրախութիւնը փոխանակ փունջ մը ծաղիկով արտայայտելու, դրամագլուխի վերածած է իր փոքրիկ ծաւալով թուղթերը, գրիչը եւ խճողուած սենեակին մէջ տեղադրուած փոքր գրասեղանը:

Հո՛ն են, այդ խճողուած սենեակին մէջ իր ընկերները, ամէ-նօրեայ իր մտերմութեան մէջ, որոնցմով կը սնուի տեւաբար:

Արդարեւ, ի՞նչ կարելի է սպասել մէկէ մը, որուն ընկերներն են Սիւսանթոն, Վարուժանը, Շիրազը, Թումանեանը, Ծառուկ-եանը, Թէօլէօլեանը...:

«Ըսէ ինձի ո՞վ է ընկերդ, ըսեմ քեզի ո՞վ ես դուն»:

Բացատրութեան կը կարօտի՞ այս նախադասութիւնը: Կըր-նա՞նք վերլուծել այս խօսքը:

Այո՛: Բացատրութեան մը պահանջքը կայ այստեղ:

Վերլուծումի կարօտ նախադասութիւն մըն է այս ճշմար-տութիւնը:

Բայց բացատրութիւնն ու վերլուծումը յստակացնելու, հասկնալու եւ ըմբռնելու համար, պէտք է կարդալ ՃԱՃԱՆՁՆԵՐը, անոր մէջ կը գտնուին Հոթոյեանին ընկերակցութեան բարի պտուղները:

Հո՛ս է Հոթոյեանին զարմանալիութիւնը:

ՃԱՃԱՆՁՆԵՐ գիրքը իր երկար տարիներու բանաստեղծական վաստակին արգասիքն է: Հոն մի՛ փնտռէք գեղարուեստական պատկերացումներով եւ երեւակայական նիրուանայելիութեամբ պատկերացուած մտածումներ, այլ՝ պարզ, կեանքով սնուած եւ կեանքէն լիցքաւորուած գեղեցիկ թելադրութիւններ, դաստիարակիչ խորհուրդներ, ե՛լ հայութեան, ե՛լ հայ ժողովուրդին պատիւ բերելու, ուրախութիւն բերելու, յաղթանակ բերելու, յաջողութիւն բերելու պատգամներ:

Ահա՛ ՃԱՃԱՆՁՆԵՐը իր բովանդակ իմաստով եւ պարունակութեամբ:

Կարդացէ՛ք զայն ու պիտի զգաք ջերմութիւնը մեր գրականութեան, տաքուկ յարաբերութիւնը մեր լեզուին եւ բորբ կրակը մեր մշակոյթին:

ՃԱՃԱՆՁՆԵՐը ճշմարտութիւններ են, կեդրոնական ճշմարտութենէ մը արտացոլացող, եւ այդ ճշմարտութիւնը Գրիգոր Հոթոյեան ի՛նք է, իր սրտէն բղխող, իր մտքէն ժայթքող եւ իր հոգիէն արտացոլացող ճշմարտութիւններ:

Բարի եւ երջանիկ ծերութիւն մաղթելու գոհունակութեամբ եւ աղօթքով, բեղմնաւոր ծերութիւն կը մաղթենք Գրիգոր Հոթոյեանին ու բանաստեղծին բառերով կ'ըսենք.

«Աստղերու պէս, ալիքներու պէս ցանկ՛:

Ծիտերն ի՞նչ փոյթ թէ հատիկներդ կ'աւարեն,

Տեղը Աստուած պիտի մարգրիտ սերմանէ»:

ԳԵՐՊ. Տ. ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆ

Բարեկեդան Յիսնակի Պահոց

21 Նոյեմբեր 2010

Թորոնթօ — Գանատա

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքին հրատարակութեան եւ շնորհահանդէսին առիթով, հեղինակին՝ Գրիգոր Հոթոյեանի շնորհակալութեան խօսքը. –

Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան,
Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան,

Յարգելի գրասէր եւ մշակութասէր ազգայիններ,

Փառք կու տամ Աստուծոյ, որ Իր օրհնութեամբ ինծի առիթ ընծայուեցաւ վայելելու եւ հասնելու ՏՅ տարիքիս եւ արժանանալու իմ գրական աշխատանքներուս արգասիք՝ Ծ-րդ գիրքիս հրատարակութեան առթիւ կազմակերպուած շնորհահանդէս-գինեձօնին:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» պատմուածքներու սոյն հատորի պատմուածքներէս մաս մը գրուած են Հալէպի եւ Ռազգայի կիրակնօրեայ դպրոցներու մէջ ուսուցչական պաշտօնավարութեան ընթացքին, բարոյալից պատմութիւններով օգտակար դառնալու համար կիրակնօրեայ դպրոցներու աշակերտութեան հայեցի եւ քրիստոնեայ նկարագրի կազմութեան:

Ապա, Թորոնթոյի մէջ, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բազմաշնորհ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի կողմէ հրատարակուող «Շողակաթ» ամսագիրը առիթ ընծայեց գրելու եւ հրատարակելու նոր պատմուածքներ:

Գրուած բոլոր պատմուածքները արժանացած ըլլալով ընթերցողներու գնահատանքին, որոշեցի հրատարակուած բոլոր պատմուածքները առանձին հատորով եւ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագիրով հրատարակել:

Մեր սիրելի Հայր Սուրբին նախաձեռնութեամբ եւ եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին կազմակերպութեամբ տեղի ունեցող սոյն շնորհակալութիւններս կը յայտնեմ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաթակ Ս. Արք. Յակոբեանին, որ սիրով ստանձնեց ձեռ-

նարկին հովանաւորութիւնը, Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին՝ իր կատարած բոլոր աշխատանքներուն եւ քաջալերութեան համար, Հոգաբարձութեան, Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, եկեղեցւոյ Կանանց Յանձնախումբին, օրուան հանդիսավար Տիկին Արմիկ Սաֆարեանին, հանդիսավար Տիկին Սիւզի Գալթակեանին, գիրքս ներկայացնող շնորհալի մտաւորական-բանասէր Պր. Յակոբ Ալթունեանին, գեղարուեստական յայտագրին սիրայօժար մասնակցութիւն բերող տաղանդաւոր երաժշտագէտ, յօրինող, դաստիարակ, խմբավար, երգչուհի Տիկին Անահիտ Կոլտսուղեանին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Զարեհ Ազնաւորեան» դպրաց դասի վաստակաւոր անդամ եւ նախկին դպրապետ, իր առինքնող ձայնով մեզ միշտ հմայող Տիկին Այտա Աթիկեանին, իմ հեղինակութիւններէս ասմունքողներ՝ Հ.Օ.Մ.-ի Ամէնօրեայ Վարժարանի 9-րդ կարգի աշակերտներ Արի Կարապետեանին եւ Արէն Մնացականեանին, որոնք օժտուած ըլլալով ասմունքելու Աստուածային շնորհներով, միշտ ընդառաջած են իրենց եղած հրաւերներուն:

Սրտագին շնորհակալութիւններ ձեզի, գրասէր եւ մշակութասէր հայորդիներ, որովհետեւ միայն ձեր քաջալերութեան շնորհիւ տակաւ նօսրացող հայ գրողները կը շարունակեն գրել եւ հրատարակել իրենց հեղինակութիւնները:

Աստուածային օրհնութիւնը միշտ ըլլայ առաջնորդ ձեր կեանքին ընթացքին: Ամէն:

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

ՅՈՒՆԵՍԿՈ

Գրիգոր Հոթոյեանը սփիւռքահայ ժամանակակից գրականութեան առաւել շնորհալի եւ ճանաչուած դէմքերից է: Նրա ստեղծագործութիւնները պատանեկան տարիքից տպագրուել են Միջին Արեւելքի, յետագայում՝ նաեւ Հիւսիսային Ամերիկայի եւ Եւրոպայի հայալեզու պարբերականներում: Հոթոյեանի քերթուածների գողտրիկ պատկերները եւ երաժշտականութիւնն իրենց վրայ են բեւեռել երգահանների ուղղորդութիւնը, իսկ նրա բառերով ստեղծուած երգերը հաւասարապէս սիրելի են թէ՛ մանուկների, թէ՛ երիտասարդների, եւ թէ՛ մեծահասակների համար:

Վերջին տարիներին Գրիգոր Հոթոյեանի գրական արուեստին հաղորդակից են դարձել նաեւ Հայաստանի ընթերցողները: Ինքը՝ բանաստեղծը 1997թ. եւ 2000թ. այցելել է հայրենիք եւ այս դժուարին պայմաններում աւելի սիրել եւ կապուել նրա հետ: Աւելին, Գրիգոր Հոթոյեանը հայ գրողներից եւ բանաստեղծներից շատերին օգնել է ներկայանալ Սփիւռքի ընթերցողին, միաժամանակ իր եւ իր բարեկամների սրտաբուխ նուիրատրուութիւններով հովանաւորել այսօր արդէն հայ ընթերցողների կողմից սիրուած մի քանի գրքեր: Հայրենիքից հեռու ձեւաւորուած, բայց խիստ աւանդապաշտ Հոթոյեանների ընտանիքի երրորդ սերունդն է շարունակում իր նախնիների պատգամած հայապահպանման սրբազան ուխտը Կանադայում: Արտերկրի հաւատացեալ, զգացմունքային եւ պահանջատէր հայութեանն իր անուրանալի վաստակը բերած բանաստեղծի փառապանծ յոբելեանին յղում ենք մեր բարեմաղթանքը՝ «Վարձքդ կատար, սիրելի Գրիգոր Հոթոյեան»:

Թ. ՄԱՆԱՍԵՐԵԱՆ
Տնտեսագիտութեան
Դոկտոր-Փրոֆէսոր

ԱՇՆԱՆԱՅԻՆ

Աշնանային հովեր տխրագին,
Կը փչեն յար անփոյթ սուլոցով,
Եւ հեռացող ամբան տենդագին
Ջերմութիւնը լուռ մահերգելով:

Ցրտահարուած սաղարթներ անհար,
Գոյն կը փոխեն, բազմերանգ դարձած
Կը հանանչեն արեւով պայծառ
Եւ սրտագրաւ տեսնով վեհապանծ:

Ձմեռուան ցուրտ օրերը կու գան,
Կը մօտենան դանդաղ ֆայլերով,
Մարգագետին, ծառ եւ անդաստան,
Կը ծածկուին հերմակ սաւանով:

«Առաւօտ», Ուրբաթ, 27 Յուլիս 2001





«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԹ»

Գործ՝ Յակոբ Կոջոյեանի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

● ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

- ԲԱՐԵԳՈՐԾ ՊԱՅՏԱՐԸ	17
- ՄՈՒՐԱՑԿԱՆԸ	22
- ԱՂՔԱՏԸ ԱՂՔԱՏԻՆ ՕԳՆԵԼՈՎ ՀԱՐՍՏԱՑԱԲ ...	26
- ԱՊՏԻԻԼ ԱՂԱՅԻ ԴՐԱԽՏԸ	31
- ՃԱՐՊԻԿ ՀՆԱԿԱՐԿԱՏԸ	36
- ԱՐԴԱՐՈՒԹԻՒՒՆ, ՔԵՉ ԿԸ ՍՊԱՍԵՆՔ	42
- ԽՈՇՈՐ ԿՂՊԱՆՔԸ	46
- ՈՒԺԻ ՆԵՐՇՆՉՍԱՆ ԱՂԲԻԻՐԸ	49
- ԱՊԵՐԱԽՏ ՋԱԲԱԿԸ	54
- ԴՐԱՄԻՆ ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՉՆԻԻ ՉԳԱՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ	59
- ՉՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ	65
- ՀԱՉԱՐԱՆ ՊԼՊՈՒԼ ՍՈԽԱԿԸ ԵՐԳԵԼՈՎ ԿԸ ԲՈՒԺԷ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿԱՅՍՐԸ	70
- ԹՈՐՈՆԹՈՅԷՆ ԵՐԵՒԱՆ, ԳՈՐԻՍ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ	75
- ՀԱԼԷՊԻ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ	84
- ԼԻԲԱՆԱՆԻ ԶՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆԷՆ ՀՕՐՍ ՀԵՏ ՀԱՍԱՆՔ ՍԱՍՆՈՅ ԼԻՃԵՐԸ ԵՒ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏԵՐ՝ ՄԱԿԱՐԻ, ԳԱԼԷԻ, ԳԷՈՐԳԻ ԱՉԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏՆՉՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԿԵԱՆՔԻՆ	94

● ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԼԻՆ ՀԱՅ ԼԵՉՈՒՆ Է	119
- «ԼԱԲ Է ՄԱՐԴ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՉ ՉՈՐ ՀԱՅ ՈՒՏԷ՝ ՔԱՆ ՕՏԱՐ ԱՇԽԱՐՀԻ ԹԱԳԱՒՈՐԸ ԸԼԼԱՅ»	127
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ	133

- ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.....	139
- ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ԿԵԱՆՔԸ ՀԱՅՈՒՆ.....	142
- ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ՌՈՊԷՐ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ.....	147
- ԿՐԿԻՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՄԻԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.....	153
- ՀԱԼԷՊԻ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԸ.....	163
- ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՐԻՓՈԼԻԻ ՄԷՋ.....	184
- ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԹՐԻՓՈԼԻԻ ՄԷՋ.....	188
- ԵՐԳԵՀՈՆԱՅԻՆ ԲԱՑԱՌԻԿ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ ԴՊՐԵՎԱՆՔԻ 75-ԱՍԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ.....	190
- ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ.....	196
- ԴՊՐԵՎԱՆՔԻ 75-ԱՍԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՋՈՅԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ.....	198
- ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՍԵՐԳ.....	200
- «ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՀՈԳԻՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ....	208
- ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐԻ.....	211
- ԲԱՐԵՋԱՐԴՈՒԱԾ ԵՒ ԸՆԴԱՐՉԱԿՈՒԱԾ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ՓԱՌԱՀԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ.....	217
- ԴՊԻՐ-ԴՊՐՈՒՀԻՆԵՐՈՒ, ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳՆԵՐՈՒ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐՈՒ ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ.....	223
- ՓԱՌԱՀԵՂ ԵՒ ՀԱՅԱԲՈՅՐ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ.....	232
- ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԵՐԱՊԱՏԻԻ ՏԷՐ ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆԻ ՈՐՊԷՍ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ	238

● **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- ՀԱՆՃԱՐԵՂ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴԵԱՆ 115-ԲԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ 249
- ԾՆՆԴԵԱՆ 80-ԱՍԵԱԿ ՀԱՅՐԵՆԻ ՏԱՂԱՆԴԱՌՈՐ ԱՐՁԱԿԱԳԻՐ ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԵԱՆԻ..... 269
- ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՊԱՏՄԱԲԱՆ ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ 288
- ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ 329
- ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆԵԱՆ 347
- ՉՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕՉԱՆԵԱՆ 364

● **ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ**

- ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԷՐ ԽԱԺԱԿ ՍՐԲ. ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆԻՆ 379
- ԳԵՐՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ ԵՂԻԱ Ծ. ՎՐԴ. ԳԻՐԷՉԵԱՆ 380
- ՍԻՐԵԼԻ ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆԻՆ 381
- ՉՕՆ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՌԱՉՄԻԿ ԴԱՌՈՅԵԱՆԻՆ.... 383
- ՍՈՒՐԻԱՅԻՆ..... 384
- ՀԱԼԷՊ ՍԻՐԱՍՈՒՆ..... 385
- ԱՆԴՐԱՆԻԿ ԶԱԿԿԻՄ՝ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ 387
- ՍԻՐԵԼԻ ԵՒ ԹԱՆԿԱԳԻՆ ԱԳՋԿԱՍ՝ ԱՆԻԻՆ 388
- ՍԻՐԵԼԻ ԹՈՌՆԻԿԿԻՄ՝ ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ..... 389
- ՍԻՐԵԼԻ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԹՈՌՆԻԿԿԻՄ 390
- ՍԻՐԵԼԻ ԹՈՌՆԻԿԿԻՄ՝ ՍՏԵՓԱՆ-ԱՐՄԷՆԻՆ 391
- ԳԻՏԵ՞Ս ԴՈՒՆ, ՎԱՐԱԳ ՊԱՊԵԱՆ 392
- ԱՆՅԵԱԼՍ ՏԽՈՒՐ..... 393
- ՎԵՐԱԾՆՈՒՆԴ 394
- ՉՕՆ՝ ԳԵՐԱՊԱՏԻԻ ՏԷՐ ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆԻՆ 395

● **ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- ԿՈՐՍՆՑՈՒՑԻՆՔ
ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐԵԱՆԸ 399
- ՀԱՅ ԵՐԳԻ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼ
ԳՈՐԾԻՉ ԸՆԿ. ԷԴԻԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՈՉ ԵՄՍ Է 410

● **ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ**

- ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔ 419
- ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ
«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ՛ԱՊՐԻՆՔ» ԳՐՔԻՆ 421
- ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ ԵՒ ԳԻՆԵՉՕՆ
«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ՛ԱՊՐԻՆՔ» ՀԱՏՈՐԻ 432
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ
«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ՛ԱՊՐԻՆՔ» ՀԱՏՈՐԸ 438
- «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ՛ԱՊՐԻՆՔ» 440
- ՆԱՄԱԿ՝ ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆԷ 443
- «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ՛ԱՊՐԻՆՔ»Ի
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ 444
- ՆԱՄԱԿ՝ ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆԷ 449
- ՆԱՄԱԿ՝ ԶԱԻԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԷ 450
- ՆԱՄԱԿ՝ ԲԱԲԳԷՆ ՍԱՍՈՒՆԻԷ 451
- ՆԱՄԱԿ՝ ՆՈՐԱՅՐ Ա. ԲՀՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆԷ 452
- «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ՛ԱՊՐԻՆՔ» 454
- ՆԱՄԱԿ՝ ԽԱՉԻԿ ԹԱՇՃԵԱՆԷ 457
- ԲԱՐԵՒԱԳԻՐ 458
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ
Կ՛ԵՐԳԷ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՄԲ
ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՄԲ 461
- ԶԱՐՄԱՆԱԼԻ ՍԱՐԴԸ 464
- ՀԵՂԻՆԱԿԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ 476
- ՅՈՒԲԵԼԵԱՆ 478

Հեղինակյին գործերը՝

1. «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՁ» 1987
2. «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՁ» (Բ. տպագրութիւն) 1990
3. «ՆՈՒԻՐՈՒՄ» (Երեսան) 2002
4. «ՆՈՒԻՐՈՒՄ» (Բ. տպագրութիւն, Թորոնթօ) 2003
5. «Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» 2005
6. «ՃԱՆԱՊԱՐՀ» 2007
7. «ՃԱՆԱՊԱՐՀ» (Երեսան) 2007
8. «ՃԱՃԱՆՉՆԵՐ» 2010
9. «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» 2011
10. «ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ» 2014

Ստանալու համար դիմել՝

Krikor Hotoyan
34 Leith Hill Rd., Apt. 511
North York, Ontario, Canada,
M2J 1Z4

Հեռաձայն՝ (416) 494-1921

Բջիջային՝ (416) 420-2524

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՍԱՍԻՆ



Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ, 5 Օգոստոս 1927-ին, արմատներով Սասունցի: Աւարտած է Հալէպի Ազգային Սահակեան վարժարանը, ապա հետեւած է Հայագիտական դասընթացքներու: Եղած է դրաշար, խմբագիր, ուսուցիչ եւ տնօրէն ազգային ամէնօրեայ, ամառնային եւ կիրակնօրեայ վարժարաններու մէջ՝ Սուրիա եւ Գանատա:

Երիտասարդական տարիներէն սկսեալ, բանաստեղծութիւններով (ընդհանրապէս Գրիգոր Վարդգէս գրական անունով), յօդուածներով (զանազան անուններով), պատմուածքներով եւ թղթակցութիւններով աշխատակցած է ըՄփիււքի եւ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթերթերու:

Իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէութիւններուն համար արժանացած է բազմաթիւ գնահատագիրներու պետական եւ ազգային զանազան հաստատութիւններէ, որոնց շարքին Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Գիր Օրհնութեան եւ Գնահատաց»-ին՝ 1984-ին:

Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի Թորոնթօ այցելութեան ընթացքին, 1 Հոկտեմբեր 2005-ին, արժանացած է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

14 Յուլիս 2004-ին, իր գրական գործունէութեան 60-ամեակին առթիւ, Հայաստանի Գրողներու Միութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան Հայաստանի կազմին կողմէ կազմակերպուած ցերեկոյթին, արժանացած է «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեան:

Գրիգոր Հոթոյեանի ծննդեան 80-ամեակին եւ «Ճանապարհ» գրքի հրատարակութեան առթիւ, կազմակերպութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան, Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան հայկական վարչութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի, «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան եւ «Աւետիք Իսահակեան» քաղաքային գրադարանին, Հինգշաբթի, 23 Օգոստոս 2007-ին, Հայաստանի Հանրապետութեան Գրականութեան Ակադեմիայի «Մանուկ Աբեղեան»-ի անուան Հասցիի մէջ կատարուած ձեռնարկին, Հոթոյեան գնահատուած է Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան ոսկեայ մետալով եւ թիւ 44 փաստաւետրով, ինչպէս նաեւ «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան ոսկեայ մետալով, միութեան ընտրեալ անդամի վաւերատետրով եւ Զօրավար Անդրանիկի եւ միութեան յուշանկարներով: